

ԺԻՐԱՅԻ ԱՆԱՆՅԱՆ

Պ Ի Ե Ս Ն Ե Ր

ԸՆՏՐԱՆԻ

Կազմեց՝ ԼԻՂԱ ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2008

ՀՏԳ 891.981-2
ԳՄԴ 84 Հ-6
Ա 573



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Ժիրայր Անանյան

Ա 573 Պիեսներ: Ընտրանի/Ժիրայր Անանյան.– Եր.: ԵՊՀ հրատ.,
2008, 432 էջ:

Գրքում ներկայացված է նշանավոր դրամատուրգ Ժ. Անանյանի պիեսների ընտրանին, որի նյութը մեր այսօրյա կյանքն է, ժողովրդին հուզող հարցերը:

Նախատեսված է ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի քաղաքական գործիչների և ընթերցող լայն շրջանակի համար:

ԳՄԴ 84 Հ-6

ISBN 978-5-8084-0981-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2008 թ.

© Ժ. Հ. Անանյան, 2008 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժիրայր Անանյանը ծնվել է 1934 թ. հուլիսի 14-ին Բերդ ավանում, ուսուցչի ընտանիքում: Գիտեր, որ նախնիները եկել են Արաքսի այն ափից և կարողացավ ճշտել, որ տոհմական ազգանունը եղել է Տեր Անանյան և ինքը կարսեցի տեր Անանիա քահանայի շառավիղն է, որն ապրել է մոտ 150 տարի... ափսոս, որ ինքը նրա կես տարիքն էլ չունեցավ:

Թե միջնակարգ և թե բանասիրական բարձրագույն կրթությունն ստացավ Երևանում: Երկար տարիներ աշխատեց հայկական հեռուստատեսությունում և ռադիոյում, ղեկավարեց գրականության և արվեստի բաժինը:

Մենք մոտ ընկերներ էինք և մի օր շատ վճռական ասաց.

1999 Չեմ աշխատելու: Դրամատուրգ եմ, նստելու եմ տանը պիես գրեմ:

Իսկ պիես սկսել էր գրել և բեմադրվել ուսանողական տարիներից: Այդ օրերին արդեն գրել էր նաև «Տաքսի, տաքսին», որը բեմադրվեց Երևանում, Արտաշատում, Ստեփանակերտում, Թբիլիսիում, Լոս Անջելեսում, Բեյրութում, Նյու Յորքի ինչպես հայկական, այնպես էլ անգլիական բեմում և այլն: Միայն Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում «Տաքսի, տաքսին» բեմադրվեց ավելի քան 500 անգամ: Ի դեպ 500-ից ավելի բեմադրվեց նաև նրա «Իմ տունը քո տունը չէ» պիեսը Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում: 1980-ական թվականներին Սունդուկյանի անվան թատրոնում միաժա-

մանակ խաղացանկում կար ժիրայր Անանյանի երեք պիեսները, բացառիկ երևույթ՝ թատրոնի պատմության մեջ:

Երբ անցավ զուտ ստեղծագործական աշխատանքի, շատ պիեսներ գրեց: Պիեսից պիես գրում էր ավելի ինքնատիպ ու թարմ: Պրոֆեսիոնալ դրամատուրգ էր. դրություններ ստեղծելն ու աշխույժ, կենդանի դիալոգ գրելն իր տարերքն էր: Բեմը, թատրոնը զգում էր, ինչպես ոչ ոք: Իսկ նյութը մեր առօրյա կյանքն էր ու ժողովրդին հուզող խնդիրները:

Սփյուռքից հրավեր ստացող ռեժիսորը Ժ. Անանյանից էր պիես խնդրում, թատրոնի ղեկավարը եթե ուզում էր դահլիճը լեփ-լեցուն լինի՝ ժիրայրի պիեսներն էր թերթում ... որոնք թարգմանվեցին ռուսերեն, անգլերեն, պարսկերեն ...

Վերջին պիեսը՝ «Մեր տան տերերը» բեմադրվեց Հ. Պարոնյանի անվան թատրոնում և ունեցավ մեծ հաջողություն: Հանդիսատեսը ոտքի վրա կես ժամ ծափահարում էր ու բղավում.

1999 Բռավո՞ր...

Երբ պրեմիերայի օրը ներկայացումից հետո դուրս եկանք փողոց, ասաց.

– Ջգացի՞ր, որ պիեսը գրել եմ Կարպ Խաչվանքյանի համար, մա պիտի խաղար գլխավոր դերը...

Իսկ Խաչվանքյանը տարիներ առաջ մահացել էր ... Բայց ոչ ժիրայր Անանյանի համար: Նրանց մտերմությունը ուրիշ բան էր ու դժվար է գնահատական տալ:

2004 թ. ընկերներով ու Հայաստանի թատերական գործիչների միության ղեկավարության հետ քննարկում էինք թե ժիրայրի ծննդյան 70-ամյակը ինչպես նշենք, ո՞ր պիեսներից հատվածներ խաղացվեն, ինչպե՞ս մեծարենք հորեյարին, ասաց.

– Ես բեմում նստողը չեմ, այդ մասին չխոսեմք, ուրիշ բան մտածեք:

Ուրիշ բան ինքը մտածեց ... ու 70-ամյակից մի քանի ամիս առաջ հրաժեշտ տվեց կյանքին ...

70-ամյա հոբելյանի առիթով առաջարկեցի կազմել պիեսների ընտրանի ... Չհասցրեց:

Սույն ժողովածուն կազմեց ժ. Անանյանի այրին՝ վաստակաշատ մանկավարժ, հայոց լեզվի հմուտ մասնագետ Լիդա Մանուչարյանը ...

Ու հիմա, երբ ժողովածուն պատրաստ է, էլ ավելի ցայտուն ուրվագծվեց ինքնատիպ ու տաղանդավոր դրամատուրգը՝ իր զվարթ և կենսուրախ, միաժամանակ թախճոտ ու հոգսաշատ դիմագծով:

ԵՊՀ հրատարակչությունը և Հայաստանի թատերական հասարակայնությունը իրենց երախտագիտությունն են հայտնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Զավեն Եկավյանին՝ ժողովածուի տպագրությունը հովանավորելու համար:

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԵՐՃ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Երկար տարիներ թատրոնում ոչ մի դեր չէի խաղում: Ինձ առաջարկում էին, բայց ես հրաժարվում էի: Հիշում եմ, հանգուցյալ Մարատ Մարիմոսյանը՝ մեր թատրոնի գլխավոր ռեժիսորը, երբ ինձ առաջարկեց որևէ մոր դեր խաղալ, ես ասացի՝ չեմ տեսնում այն պիեսը, որում կցանկանայի խաղալ: «Ուզու՞մ եք դրությունների կոմեդիա»,– ասաց մա և դարակից հանեց մի ձեռագիր, տվեց ինձ ու ասաց՝ կարդացեք: Դա ժիրայր Անանյանի «Տաքսի, տաքսի» պիեսն էր... Պրեմիերան եղավ

1978-ին: Եվ մինչև հիմա խաղում ենք աննախադեպ հաջողությամբ: Այն, որ նա, կարելի է ասել, հիանալի ձևով կարողանում է ստեղծել հետաքրքիր դրություններ իր կոմեդիաներում, դա փաստ է:

ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆ

Ես բախտ չեմ ունեցել ժիրայր Անանյանի պիեսներում խաղալու և ոչ էլ բախտ եմ ունեցել բեմադրելու: Բայց ես տեսել եմ նրա պիեսների բեմադրությունները և, բնականաբար, կարդացել գրեթե բոլորը: Ես ժիրայրին համարում եմ մեր ժամանակի խոշորագույն դրամատուրգը հայ իրականության մեջ: Ես չեմ վախենում այս որակունը տալուց, որովհետև, երբ ես կարդում էի նրա պիեսները, միևնույն ժամանակ կարդում էի ֆրանսիական ժամանակակից կատակերգությունները և ականա բաղդատում էի դրանք իրար հետ և անկեղծորեն կարող եմ ասել՝ ժիրայրի պիեսները ոչնչով չեն զիջում ժամանակակից ֆրանսիական կատակերգություններին:

ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Ժիրայր Անանյանը շատ լավ դրամատուրգ է, շատ ավելի լավ, քան նրան քննադատողներն են կարծում, շատ ավելի լավ, քան հանդիսատեսն է կարծում, նույնիսկ շատ ավելի լավ, քան կարծում է ինքը:

ԽՈՐԵՆ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ՏԱԲՄԻ, ՏԱԲՄԻ

Կատակերգություն երկու մասից

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

- ՓԻԼՈՅԱՆ – տաքսիների պարկի տնօրեն
ԶՎԱՐԹ – կինը
ԱԴԵԼԱԻԴԱ – աղջիկը
ԿՆՅԱԶ – վարորդ
ՌՈԶ – կինը
ՀՈՎԻԿ – տղան
ՊԱՅԾԱՌ – գոքանչը
ՆՈՒՆՈՒՖԱՐ – քարտուղարուհի

Գործողության վայրը՝ Երևան:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ա

ԿՆՅԱՋՆ իրեն կորցրած ընկնում է նախաբեմ՝ ձեռքին ինչ-որ ճամպրուկ:

ԿՆՅԱՋ – Դուք չտեսա՞ք որ կողմը գնացին, հը՞: Մեկը՝ երկարահասակ, մեկը՝ կարճահասակ, մեկն էլ՝ ոչ կարճահասակ, ոչ երկարահասակ, մեկն էլ՝ ոչ երկարահասակ, ոչ կարճահասակ: (**Դեստոյենն է նայում**) Կանչեցին՝ տաքսի, տաքսի, կանգնեցի: Ասացին՝ վարպետ, կտանե՞ս կայարան: Ասացի՝ նստեք: Նստեցին: Բերեցի հասցրեցի տեղ: Չէր անցել տասը-տասնհինգ րոպե, շուտ եմ գալիս, մեկ էլ տեսնեմ՝ սա թողել եմ մեքենայիս մեջ: Դուք չտեսա՞ք որ կողմը գնացին: Վայ, ես ձեր հերոն եմ անիծել, որ իմանայի՝ իսկի կկանգնեի՞: Չեր երկու ռուբլուն էի կարո՞տ: Ինչքան էլ ծանր է: Հիմա ես ի՞նչ անեմ, հը՞: (**Գնում է**):

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Տնօրենի աշխատասենյակն ավտոպարկում: Միջնորմով բաժանված մասում նստած է ՆՈՒՆՈՒՖԱՐԸ: Լսվում է գրամեքենայի տկտկոցը: Գալիս է ՓԻԼՈՅԱՆԸ՝ ձեռքին մի փունջ մեխակ:

ՓԻԼՈՅԱՆ – Շնորհավորում եմ ծննդյանդ օրվա առթիվ: (**Համբուրում է՝ սեղմելով ձեռքը**):

ԿՆՅԱՋ – (**Որ մտտեցել էր մուտքին**) Պահո՛... (**Ետ է քաշվում**):
ՆՈՒՆՈՒՖԱՐ – (**Վերցնելով մեխակները**) Շնորհակալություն, ընկեր Փիլոյան, ինչպես չեք մոռացել:

ՓԻԼՈՅԱՆ – Երբ ինձ զգուշացնում եմ, ես չեմ մոռանում: (**Անցնում է ներս՝ գրադեցնելով իր տեղը**):

Ժամանակ առ ժամանակ լսվում են պարկից ելումուտ անող տաքսիների ազդանշանները: Փիլոյանը սեղմում է զանգի կոճակը: Նունուֆարը ներս է գալիս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Լսում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Ինձ չեն հարցրել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ոչ, ընկեր Փիլոյան, միայն ներսից:

ՓԻԼՈՅԱՆ – Ես տեղում չեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Շատ լավ: (**Ետ է գալիս**):

Մտնում է Կնյազը:

ԿՆՅԱԶ – Բարև ձեզ:

Նունուֆարը շպարվում է:

ԿՆՅԱԶ – Նունուֆար ջան, բարև:

Ոչ մի ուշադրություն:

ԿՆՅԱԶ – **(Նրա ականջի տակ)** Հարգանքներս, ընկեր Նունուֆար:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Ոտքից գլուխ չափելով Կնյազին)** Տեղում չէ: **(Անմիջապես դեմքը շրջում է՝ շարունակելով շպարվել):**

ԿՆՅԱԶ – **(Կողմ)** Որտեղի՞ց են սրանց ճարում, այ մարդ. խոսելիս չեն նայում, նայելիս չեն խոսում: **(Շրջվելով)** Ո՞նց ես, Նունիկ ջան:

Հեռախոսի զանգ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Լսափողում)** Տեղում չէ: **(Ցած է դնում):**

ԿՆՅԱԶ – Դե լավ է, որ լավ ես:

Հեռախոսի զանգ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չգիտեմ:

ԿՆՅԱԶ – Ինչ մարդիկ են, տո, չեն թողնում խեղճ աղջիկը մի րոպե շունչ քաշի:

Հեռախոսի զանգ:

ԿՆՅԱԶ – Ի՞նչ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չեմ կարող ասել:

ԿՆՅԱԶ – Ընկեր Փիլոյանը ո՞նց է:

Չանգ:

ԿՆՅԱԶ – Ի՞նչ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ասացի՛ չէ:

ԿՆՅԱԶ – Դե որ պետք լավ է, մենք հո լավ ենք ու լավ:

Չանգ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Լսափողում)** Ուֆ...

ԿՆՅԱԶ – Նունիկ ջան, եկել էի, որ ասեմ...

Չանգ:

(Արագ վերցնում է լսափողը) Այ ընկերուհի, ձեզ հայերեն ասացին՝ ուֆ... Այո, ուֆ... **(Լսափողը ցած է դնում)** Չէ, Նունիկ ջան, քո գործն էլ դժվար է: Դե արի ու մեկ-մեկ պատասխանիր: Ո՞վ լինի, որ դիմանա: Կեցցե՛ս, լավ ես գլուխ հանում մասսայից: Ես մի րոպե մտնեմ պետի մոտ, դուրս գամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Ջղային)** Ասացի՛ տեղում չէ:

ԿՆՅԱԶ – Հա՞, չլսեցի, կներես: Շուտ կգա՞:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Լսիր, ընկեր, գործդ վերջացրիր՝ գնա:

ԿՆՅԱԶ – Տնաշենի աղջիկ, ե՞րբ սկսեցի, որ վերջացնեմ: Դ՞նեմ սեղանին ու դուրս գամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ի՞նչը, այ ընկեր:

ԿՆՅԱԶ – Դիմումս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ասացի՝ տեղում չէ: Քանի՞ անգամ կարելի է կրկնել:

ԿՆՅԱԶ – Ինքը տեղում չէ, սեղանը հո տեղում է, դ՞նեմ, դուրս գամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չփորձես:

ԿՆՅԱԶ – Լսիր, է՛, ճամպրուկ եմ թողել մեքենայիս մեջ, եկել եմ, որ պետին հայտնեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դա ինձ չի վերաբերում:

ԿՆՅԱԶ – (Մտտենում է Փիլոյանի առանձնասենյակի դռանը, նայում է բանալու անցքից) Լսիր, բա նա ո՞վ է, որ նստել է ընկեր Փիլոյանի աթոռին, ընկեր Փիլոյանը չի՞:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ոչ:

ԿՆՅԱԶ – Վայ, ինչքան նման է ընկեր Փիլոյանին, ոնց որ ինքը: Մարդ է՞լ մարդու էղբան նման լինի: Հա, էլի, մաքուր ինքն է. նույն քիթը, նույն աչքերը, նույն ակնոցները, նույն կոստյումը, նույն մազերը... Նույնուֆար: Գեղեցկուհի...

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Արագ քարձրացնում է գլուխը՝ նայելով հայելու մեջ) Ասա:

ԿՆՅԱԶ – Հիմա սա ընկեր Փիլոյանը չի՞: (Բղավելով դռան ետևից): Ընկեր Փիլոյան, դուք ընկեր Փիլոյանը չե՞ք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չմտնես:

ԿՆՅԱԶ – (Չարաճճի նենգությամբ) Լսիր, իսկ մի քիչ առաջ ո՞վ էր, որ եկավ մեխակները ձեռքին, քեզ համբուրեց: Գիտես թե չտեսա՞:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Սպառնալից) Ի՞նչ:

ԿՆՅԱԶ – Ոչ տեսել եմ, ոչ լսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չհամարձակվես:

ԿՆՅԱԶ – Այ աղջիկ, որ ասացի չեմ տեսել, ուրեմն չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Պիտի ապացուցես, հենց հիմա:

ԿՆՅԱԶ – Ախր որ չեմ տեսել, ո՞նց ապացուցեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դե երդվիր:

ԿՆՅԱԶ – Քո արև, չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Մտում ես:

ԿՆՅԱԶ – Ընկեր Փիլոյանի արև, չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Փղճկում է) Ստում ես, տեսել ես:

ԿՆՅԱԶ – Չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Տեսել ես:

ԿՆՅԱԶ – Չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Տեսել ես:

ԿՆՅԱԶ – (Հոգուն հասած, պոռթկալով) Այ աղջիկ, տեսնողը ես չե՞մ, ասում եմ՝ չեմ տեսել: Դե լավ, լավ, հանգստացիր, լաց մի լինի: Ես մի բռնակով մտնեմ ու դուրս գամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Ետևից, հիստերիկ ճիչով) Սպասեցեք, ընկեր...

Կնյազն զգուշությամբ դիմումը դնում է Փիլոյանի սեղանին և ետ է գալիս:

ՓԻԼՈՅԱՆ – Ետ դարձեք:

ԿՆՅԱԶ – (Մեկից շրջվում է՝ կարծես նոր միայն տեսնելով) Վայ, ընկեր Փիլոյանը... Բարև ձեզ, ընկեր Փիլոյան: (Նուռուֆարին) Բա ասում ես տեղում չի՞:

ՓԻԼՈՅԱՆ – Չեզ ո՞վ ներս հրավիրեց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Քանի անգամ զգուշացրի, չլսեց, ընկեր Փիլոյան:

ԿՆՅԱԶ – Դիմումս դրեցի սեղանին, որ դուրս գնամ:

ՓԻԼՈՅԱՆ – Հարգեցեք կարգուկանոնը, ընկեր: Ասում եմ՝ տեղում չէ, ուրեմն տեղում չեմ: Այ քեզ զարմանալի մարդիկ: Ազատ եք, հիմա կարող եք գնալ:

ԿՆՅԱԶ – Իսկ ե՞րբ գամ, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Երբ որ տեղում կլինեմ:

ԿՆՅԱԶ – Շնորհակալ եմ: (Հասնելով դռանը, ետ է դառնում) Հա, ընկեր Փիլոյան, նոր մեքենաներ եք ստացել, դրանցից մեկը Կնյազին չի հասնո՞ւմ:

ՓԻԼՈՅԱՆ – Գնա շնորհակալ եղիր, որ քո մեքենան էլ ձեռքիցդ չենք վերցնում:

ԿՆՅԱԶ – (Չարմացած) Ինչի՞ համար:

ՓԻԼՈՅԱՆ – Քաղաքացիներին կես ճանապարհին իջեցրել ես մեքենայից, ո՞վ է թույլ տվել:

ԿՆՅԱԶ – (Կարճատև դադարից հետո) Լավ եմ արել:

ՓԻԼՈՅԱՆ – Ո՞նց թե:

ԿՆՅԱԶ – Տո, նրանք մա՞րդ են, նստել են՝ տակ են փորում:

ՓԻԼՈՅԱՆ – Քեզ ի՞նչ, տակ են փորում, տակ չեն փորում, դու վարորդ ես, քո պարտականությունները կատարիր:

ԿՆՅԱԶ – Ասում եմ՝ ինչո՞ւ եք բացակա մարդուն բամբասում:
Ասում եմ՝ վայ, դու էլ ես էստե՞ղ, կներես, քեզ չէինք նկատել: Ասում
եմ, ուրեմն մեքենան ինքն իրեն է գնո՞ւմ, խելքի աշեցեք: Անցավ
երկու-երեք րոպե, էլի... Ասում եմ՝ ինչո՞ւ եք մարդու տակը փորում,
վաղը որ աշխատանքից հեռացնեն, ո՞վ է նրա ընտանիքը պահելու:
Ասում եմ՝ քո գործը չի, դու քշիր: Ո՞նց թե քշիր, մարդու պաշտոնի
վրա աչք են դրել, հետո էլ քշի՞ր: Բենզինս վերջացավ, իջեցրի:

ՓԻԼՈՅԱՆ – Գրավոր նկատողություն վերջին նախազուշա-
ցումով:

ԿՆՅԱԶ – Սպասեք, սպասեք, ի՞նչ նկատողություն, ինչի՞ հա-
մար:

ՓԻԼՈՅԱՆ – Որպեսզի մյուս անգամ չհամարձակվես խառնվել
ուղևորների խոսակցություններին:

ԿՆՅԱԶ – Տո էլ իսկի կխառնվե՞մ: Ասողի հերն էլ անիծած, լսո-
ղինն էլ հետը: Բայց ախր ո՞նց կլինի, է՛, ընկեր Փիլոյան, ներողու-
թյուն արտահայտությանս, մենք էլ մարդ ենք, չէ՞:

ՓԻԼՈՅԱՆ – Եվ դա դեռ բավական չէ, դրամի մանրն էլ չես
վերադարձրել:

ԿՆՅԱԶ – Էհ, թող վերցնեին, դրանց քսան կոպեկին եմ կա-
րո՞տ: Փոխանակ ես բողոքելու, իրե՞նք են բողոքել: Խնդրեմ, մեկն էլ
ճամպուրով է թողել մեքենայիս մեջ, ես մեղք ունե՞մ: Հիմա սա ի՞նչ
անեմ, ո՞ւմ հանձնեմ:

ՓԻԼՈՅԱՆ – Հանձնեք այնտեղ, որտեղ ընդունում են գտնված
իրերը:

ԿՆՅԱԶ – Գնացի, փակ էր:

ՓԻԼՈՅԱՆ – Տվեք դիսպետչերին:

ԿՆՅԱԶ – Չի ընդունում, ասում է՝ բացված է, միջից կարող է
բան են հանել: Ասում եմ՝ ո՞վ, ասում է՝ չգիտեմ: Ուրեմն ես ինձ թույլ
կտա՞մ, ընկեր Փիլոյան, ներողություն արտահայտությանս, մարդ
ենք, չէ՞:

ՓԻԼՈՅԱՆ – Ընկեր, ինչո՞ւ եք ժամանակ խլում: **(Նունուֆա-
րին)** Մեքենագրիր...

ԿՆՅԱԶ – **(Բռնում է Նունուֆարի ձեռքից)** Սպասիր,
սպասիր... **(Փիլոյանին)** Երեկ էլ մի ընկերուհի ու մի երիտասարդ
նստեցին: Ասացի՝ ոչինչ, ջախել են, թող մի քիչ իրենց ազատ զգան:
Բայց ես ինչքան չտեսնելու եմ տալիս, սրանք սահմանն անցնում են:
Վերջը չհամբերեցի, ասացի՝ այ ընկերներ, վերջացրեք, անհարմար է,
հայելու մեջ երևում եք: Արի ու տես, որ ես ամաչում եմ, իրենք չեն

ամաչում: Անցավ երկու-երեք րոպե, էլի... Ընկեր Փիլոյան, կարելի՞ է մի բան ասել:

ՓԻԼՈՅԱՆ – Ոչ, չի կարելի: **(Նունուֆարին)** Մեքենագրիք՝ գրավոր նկատողություն վերջին նախազուգուշացումով:

ԿՆՅԱԶ – Լավություն չես անում՝ չես անում, վատություն ինչի՞ համար ես անում:

ՓԻԼՈՅԱՆ – Չենք երկարացնում:

ԿՆՅԱԶ – Կողջաս, ընկեր Փիլոյան, հետո ուշ կլինի:

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ... Սպառնում էլ ես, հա՞... Ես թույլ եմ տալիս, գնա՛ ուր կցանկանաս, բողոքիք ում կուզես:

ԿՆՅԱԶ – Ախր դու չգիտես՝ ես ով եմ: Նունուֆար, մի րոպեով դուրս արի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Այդ էր պակաս:

ԿՆՅԱԶ – Գիտես չէ՞, որ չեմ տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ես հիմա միլիցիա կգանգահարեմ:

ՓԻԼՈՅԱՆ – Կարիք չկա, ցած դիր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չէ՞ որ դուք տեղում չեք, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Դա ոչ մի նշանակություն չունի, ասում եմ՝ ցած դիր, ուրմեմ ցած դիր: Եվ մի՛ մոռացիր, որ ես երբեք չեմ դադարում տնօրեն լինելուց:

ԿՆՅԱԶ – **(Լսափողը խլում է Նունուֆարի ձեռքից)** Այ ընկերուհի, որ ասում եմ ցած դիր, ցած դիր, էլի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դուրս գնա այստեղից, շուտ:

ԿՆՅԱԶ – Ախր ինչո՞ւ ես անհանգստանում, բերանս փակ մարդ եմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դա ինձ չի հետաքրքրում, դուրս գնա: **(Հըրում է):**

ԿՆՅԱԶ – **(Բախվելով Փիլոյանին)** Ներողություն, ընկեր Փիլոյան, հրեց:

ՓԻԼՈՅԱՆ – **(Կշտամբելով)** Նունուֆար...

ԿՆՅԱԶ – Բա... Կնոջն իշխանություն տվիր, էլ տերը չես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Միևնույն է, ես քեզ դուրս եմ հրավիրելու:

ԿՆՅԱԶ – Ախր համարյա թե բան չեմ տեսել, ինչո՞ւ ես իզուր տեղն անհանգստանում: Անկախ իմ կամքից դուռը բացեցի, որ ներս մտնեմ, մեկ էլ տեսա, այսինքն չտեսա, աչքիս երևաց. ընկեր Փիլոյանը եկավ, ձեռքի մեխակները տվեց քեզ, մի թեթև համբուրեց, ուրիշ ոչինչ: Ճիշտ չի՞, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Փիլոյանին հանգիստ թողեք, ի սեր Աստծո:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Կնյազիմ) Ես քեզ ասում եմ դուրս գնա:

ԿՆՅԱԶ – (Նունուֆարիմ) Ախր ինչի՞ համար, ընկեր Փիլոյան:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Փիլոյանն ո՞վ է:

ՓԻԼՈՅԱՆ – (Չբաղեցնելով իր աթոռը, զգաստանալով): Փիլոյանը ես եմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ներողություն, ընկեր Փիլոյան, այս մարդն ինձ հավասարակշռությունից հանել է:

ԿՆՅԱԶ – Լսեցի՞ք, ընկեր Փիլոյան, ինչ ասաց: Ասում է Փիլոյանն ո՞վ է: **(Նունուֆարիմ)** Ուրեմն դու չգիտե՞ս, թե ընկեր Փիլոյանն ով է, հա՞: Ընկեր Փիլոյանը մեր պարկի տնօրենն է, ընկեր Փիլոյանն ամենալավ մարդն է, ընկեր Փիլոյանը ընկեր Փիլոյանն է, ով է: **(Թափ է տալիս Փիլոյանի պիջակը):**

ՓԻԼՈՅԱՆ – Թող:

ԿՆՅԱԶ – Ինչի՞ համար եք հետս լարվել, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Չեմ լարվել, մինչև նկատողությունը չվերացնես, նոր մեքենա չես ստանա:

ԿՆՅԱԶ – Ո՞վ, ե՞ս չեմ ստանա, հա՞: Կստանամ, ընկեր Փիլոյան, դուք լավ մարդ եք:

ՓԻԼՈՅԱՆ – Երբ որ կստանաք, այն ժամանակ էլ կպարծեցանք:

ԿՆՅԱԶ – Բա եղա՞վ, ուրեմն ես պարծենկո՞տ եմ, որ պարծեցան: Դուք ինձ չեք ճանաչում, ընկեր Փիլոյան, ձեզնից առաջ եղած դիրեկտորներին հարցրեք, ոչ մեկը թող ձեզանից լավը չլինի, ասեք՝ Կնյազն ո՞վ է, նրանք կասեն. էլի, ես իմ մասին ինչ ասեմ, մի տեսակ գլուխ գովել կլինի: Գիշտ չե՞մ ասում: Հիմա ճամպրուկն ի՞նչ անեմ:

ՓԻԼՈՅԱՆ – Ինձ մի զբաղեցրեք, ընկեր:

ԿՆՅԱԶ – Ներողություն, ընկեր Փիլոյան, շատ ներողություն: **(Գնում է):**

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Հեծկառում է) Չեզ կհեռացնեն աշխատանքից:

ՓԻԼՈՅԱՆ – Ինչի՞ համար, այ աղջիկ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինչո՞ւ համբուրեցիք առանց թույլտվության:

ՓԻԼՈՅԱՆ – Եթե ես հարցնեի, թույլ կտայի՞ր:

Նունուֆարը բացասաբար տարուրերում է գլուխը:

ՓԻԼՈՅԱՆ – Այ, տեսնում ես, որ ճիշտ եմ վարվել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Միևնույն է, ձեզ կմեղադրեն:

ՓԻԼՈՅԱՆ – Ես միանգամայն անկեղծորեն, ուղղակի հայրաբար:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Մի կեղծեք, խնդրում եմ:
ՓԻԼՈՅԱՆ – Երդվում եմ:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Հայրս երբեք ինձ այդպես չի համբուրել:
(Փարվում է Փիլոյանին՝ պատեցնելով վալսի ռիթմով):

ՊԱՅԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Կնյազի բնակարանը: Ջնած է բազմոցին: Կողքը դրված է ճամպրուկը:

ՊԱՅԾԱՌ – (Մտնելով) Կնյա՞զ... (Չայն է տալիս): Ռ-ո՞զ, այ Ռ-ո՞զ, բաց-բաց քնել է, բա որ մրսի.:

Ռ-ՈՋ – (Մտնում է՝ երգելով: Նկատելով ամուսնուն՝ ձեռքն օղի մեջ տարուրերում է) Երնեկ ինձ. կամ տանը չի, կամ քնած է: (Մտնում է) Պա՛հ, պա՛հ, պա՛հ... (Դեմքը ծամածռում է):

ՊԱՅԾԱՌ – Հը՞, ի՞նչ պատահեց:

Ռ-ՈՋ – (Ուշքի չեկած) Օդանցքը փակիր, լուսամուտները բաց արա:

ՊԱՅԾԱՌ – (Խուճապահար) Գա՞զը...

Ռ-ՈՋ – Չէ, չէ, հոտը, էլի խմել է:

ՊԱՅԾԱՌ – Դե շուտ ասա, սիրտս տեղն ընկնի: Էլ ո՞նց կլինի, կարծես առաջին անգամն է:

Ռ-ՈՋ – Հիմա կտեսնենք՝ կքնի՞, թե՞ չի քնի: (Երգին զուգակցում է պարը):

ՊԱՅԾԱՌ – Նոր է փակել աչքը, մեղք է, թող մի քիչ հանգըստանա:

Ռ-ՈՋ – Դու սուս, քո գործը չի: (Շարունակում է):

ՊԱՅԾԱՌ – Բա որ հանկարծ արթնանա՞:

Ռ-ՈՋ – Իմ ուզածն էլ հենց դա է: Մի օր համբերեմ, երկու օր համբերեմ, երեք օր համբերեմ, մինչև ե՞րբ: Տղա ունի պսակելու, վաղը, մյուս օրը նշանդրեքն է, ասա իսկի պե՞տքն է: Մատանի է հարկավոր, ժամացույց է հարկավոր, տեսակ-տեսակ նվերներ են հարկավոր, մեկ-մեկ գրել եմ, տվել ձեռքը, ինչո՞ւ չի բերում, հը՞: (Չանչ է անում) Չունենամ քեզ, չունենամ:

ՊԱՅԾԱՌ – Դե, դե, բերանդ բարի բաց արա:

Ռ-ՈՋ – Տիկին Պայծառ, հը՞, չլինի՞ վախենում ես հանկարծ լսի:

ՊԱՅԾԱՌ – Իհարկե, դուք ցերեկը կկռվեք, գիշերը՝ կհաշտվեք, մեջտեղը էլի ես եմ վատամարդ դառնալու:

ՌՈՁ – Դու որ չլինեիր, ո՞վ էր սրա հետ ամուսնացողը: Գիտեիր, թե էլ ուզող չի՞ լինի, սրա՞ նմաններն էին քարշ գալիս աղջկադ հետևից: Բա սա մա՞րդ է: Տղամարդն օրը ցերեկով կքնի՞:

ՊԱՅԾԱՌ – Ուզում ես զուռնա-դիտլ նվագիր, որ քնեց՝ քնեց:

ՌՈՁ – Որ թողնող լինի, լավ էլ կքնի:

Մուտքի գանգ:

Մտնում է ՀՈՎԻԿԸ՝ ԱԴԵԼԱԻԴԱՅԻ ձեռքից բռնած բերելով ներս:

ՀՈՎԻԿ – Թույլ տվեք ներկայացնել:

ՌՈՁ – Համեցեք:

ԱԴԵԼԱԻԴԱ – Բարև ձեզ:

ՌՈՁ – Բարև, աղջիկս, առաջ արի: **(Հովիկի ակամջին)** Սա նա՞ է:

ՀՈՎԻԿ – **(Գլխով է անում)** Ծանոթացեք:

ՊԱՅԾԱՌ – Համեցեք, համեցեք:

Մեղմում են միմյանց ձեռք:

ՌՈՁ – Կներեք, ամուսինս հոգնած էր, պառկեց մի քիչ հանգրստանա:

ՀՈՎԻԿ – Աղելախոյ, մի ամաչիր, սա մեր տունն է:

ՌՈՁ – Ամաչե՞լ, ինչի՞ համար:

ՊԱՅԾԱՌ – Աղջկան երեսով մի տվեք, ամաչելը վատ բան չի:

ՀՈՎԻԿ – Մամ, մենք գնանք իմ սենյակը:

ՌՈՁ – Գնացեք, Հովիկ ջան, որտեղ ձեզ հարմար է:

ՀՈՎԻԿ – Աղելախոյ, արի: **(Աղջկան առաջնորդում է կից սենյակը: Վերադառնում է՝ ցույց տալով հորը)** Խայտառակեցիք, թողեցիք:

ՌՈՁ – **(Իրեն պատռտելով)** Այ տղա, ես ի՞նչ անեմ, որ քնած է:

ՀՈՎԻԿ – Լավ, է՛... **(Գնում է):**

ՌՈՁ – Հը՞, դո՞ւր եկավ:

ՊԱՅԾԱՌ – Շա՛տ... Հովիկս որ հավանել է, մենք կհավանենք ու կհավանենք:

ՌՈՁ – Սպասիր, մի տես ես հավանում եմ, հետո ասա: Քեզ ինչ կա, հետը դո՞ւ ես ապրելու: Հովիկիս նման տղա լինի, աղջիկ՝ ինչքան ուզես, թող գան էլ, գնան էլ: **(Դառնալով Կնյազին)** Սա դեռ քնած է: Կնյազ, այ Կնյազ...

ԿՆՅԱԶ – **(Զնաթաթախ)** Հը՞:

ՌՈՁ – Շուտ արա, վեր կաց, հարսնացուն եկել է:

ԿՆՅԱԶ – Լավ է արել: **(Շրջվում է կողքի):**

ՌՌՁ – Դե վեր կաց, ամոք է:
 ԿՆՅԱՁ – Հաշվիչը մայեք, հաշվիչը:
 ՌՌՁ – Ի՞նչ հաշվիչ, այ մարդ:
 ԿՆՅԱՁ – Բենգին...
 ՊԱՅԾԱՌ – **(Ռոզին)** Չեռքդ դիր ճակատին:
 ԿՆՅԱՁ – Չեռքդ:
 ՌՌՁ – Տա՞ք ես:
 ԿՆՅԱՁ – Ընկեր միլիցիոներ, ընկեր սերժանտ...
 ՌՌՁ – Չունենամ, չունենամ քեզ, մարդ էլ սեփական կնոջը
 միլիցիոների տեղ դնի: Հիմա գնամ էն աղջկան ի՞նչ ասեմ, ասեմ խել-
 քը թոցրե՞լ է: Կեղտոտ կոշիկներով էլ պառկել է: **(Հրում է):**
 ՊԱՅԾԱՌ – Երևի մոտե՛լ է, թեյնիկը դնեմ տաքանա:
 ՌՌՁ – **(Նկատում է ճամպուկը)** Տիկին Պայծա՞ռ, սա ի՞նչ է:
 ՊԱՅԾԱՌ – Ճամպուկ է, ինչ է:
 ՌՌՁ – Ո՞վ է բերել:
 ՊԱՅԾԱՌ – Ինչ իմանամ, երևի Կնյազը:
 ՌՌՁ – Կնյա՞զը... Լավ է, շատ լավ է, մշանդների համար բերել
 է, դրել ու քնել:
 ՊԱՅԾԱՌ – Այ դու ապրես, Կնյազ ջան, շատ ապրես:
 ՌՌՁ – **(Մեջտեղ քերելով ճամպուկը)** Գիտե՞ս ինչ ճաշակ ունի
 Կնյազս: Հիմա կիմանաս: **(Բացում է ճամպուկը՝ հերթով հանելով
 իրերը)** Կոշիկ, կոստյում, ջեմպր... Ի՛, տեղական է: **(Ջեմպրը
 օգնում է մի կողմ)** Ոսկե ականջօղեր... **(Յույց տալով Պայծառին, հրճվանքից
 թռչկոտելով)** Ոսկե, ոսկե... **(Օղային համբույրներ ուղարկելով
 ամուսնուն)** Ժամացույց՝ ոսկե շղթայով, իսկ իմ ուզածն է:
 ՊԱՅԾԱՌ – Արևդ անպակաս, Կնյազ ջան:
 ՌՌՁ – Խալաթ: **(Հագնում-հանում է)** Սա էլ քեզ, տիկին Պայ-
 ծառ, սա քեզ կազի: Չոքանչի համար խալաթ է առել: Տեսնո՞ւմ ես
 ինչ փեսա ունես, չես էլ հավանում Կնյազիս:
 ՊԱՅԾԱՌ – **(Հագնելով)** Ո՞վ չի հավանում, էդ խո՞սք է, որ
 ասում ես:
 ՌՌՁ – Բարով մաշես, մամ ջան:
 ՊԱՅԾԱՌ – Շնորհակալ եմ, ապրի Կնյազս:
 ՌՌՁ – Զնիք, քնիք, հանգստացիր, մարդ ջան: **(Կապոցներ է
 հանում)** Սրանք էլ երևի խնամիների համար են. պիժամա, կոշիկներ,
 կոստյումի կտոր... **(Ուրախությունից իրեն կորցնելով)** Մատանի՝
 բռլյանտի քարով:
 ՊԱՅԾԱՌ – Ո՞ր է, տեսնեմ:

ՌՌՁ – Տես, տես... **(Դառնալով Կնյազին)**: Զնիր, քնիր, հանգըստացիր, բռյանտ ջան: **(Համբուրում է)**:

ՀՈՎԻԿ – **(Վերադառնալով)** Չարթնացա՞վ:

ՌՌՁ – **(Իրերը դնելով մի կողմ)** Մեղք է, թող մի քիչ քնի, հանգըստանա: Արի, նստիր մի բռայե: Մամ, դու էլ նստիր: **(Հովիկին)** Դե հիմա ասա, ո՞վ է, ի՞նչ է անում, աշխատո՞ղ է, սովորո՞ղ է...

ՀՈՎԻԿ – Հարցաքննելու ժամանակ է, աղջկան թողել եկել եմ:

ՌՌՁ – Ոչինչ, չի փախչի: Ասա, շուտ արա:

ՀՈՎԻԿ – Մովորում է բժշկական ինստիտուտի վերջին կուրսում:

ՌՌՁ – Փառք Աստծո, իշիաս էլ ունեմ, ռադիկուլիտ էլ ունեմ, ռևմատիզմ էլ, դեռ մի բան էլ ավելին: Բայց ես քո մասին եմ մտածում: Ծնողներն ովքե՞ր են, կարգին մարդի՞կ են:

ՀՈՎԻԿ – **(Դժկամ)** Մարդ են, էլի:

ՌՌՁ – Բարեկամանում ենք, ուրեմն չիմանա՞նք ովքեր են մեր խնամիները:

ՀՈՎԻԿ – Հայրը տնօրեն է, մայրը՝ տնային տնտեսուհի:

ՌՌՁ – **(Երջանիկ)** Տնօրե՞ն:

ՊԱՅԾԱՌ – Իսկապե՞ս:

ՌՌՁ – Որտե՞ղ է տնօրեն:

ՀՈՎԻԿ – Ինչ կարևոր է, վերջացրեք, հիմա դրա ժամանակն է:

(Մոտենալով Կնյազին) Հայրիկ, վեր կաց:

ԿՆՅԱԶ – **(Դեռ քնի մեջ)** Աջ քաշեմ, կանգնե՞մ:

ՀՈՎԻԿ – Հայրիկ, վեր կաց, խնդրում եմ, անհարմար է:

ԿՆՅԱԶ – Ինչի՞ համար, ընկեր Փիլոյան:

ՀՈՎԻԿ – **(Տազնապով)** Մուս, աղջիկն այստեղ է:

ՌՌՁ – **(Անակնկալի եկած)** Ի՞նչ աղջիկ, Փիլոյանի աղջի՞կն է:

ՊԱՅԾԱՌ – Կնյազի ավտոպարկի տնօրենի՞:

ՀՈՎԻԿ – Հա, հա, հանգստացեք, ի՞նչ պատահեց:

ՌՌՁ – **(Ուրախացած)** Կնյազ ջան, սիրուն ջան, վեր կաց, տես ո՞վ է եկել:

Մուտքի զանգ:

Մտնում է Ջվարթը:

ՋՎԱՐԹ – **(Այլայլված)** Ո՞ր է, ո՞ր է: **(Աչք է ածում չորս բռնորդ)**:

ՌՌՁ – Ո՞ւմ եք ուզում, ընկերուհի:

ՋՎԱՐԹ – **(Արտասովախառն)** Մի՞թե ես այլևս չեմ տեսնելու նրան:

ՀՈՎԻԿ – Հանգստացեք, տիկին Չվարթ, Ադելաիդան մեզ մոտ է:

ՌՈՁ – Մա՞յրն է:

ՀՈՎԻԿ – (Գլխով հաստատական նշան է անում) Ադելաիդա՞ն...
Կից սենյակից դուրս է գալիս Ադելաիդան և ընկնում մոր գիրկը:

ՉՎԱՐԹ – Դուք բոլորդ պատասխան կտաք:

ՌՈՁ – Կներեք, մենք չգիտենք: (Հովիկին) Ինչո՞ւ չէիր ասում, այ տղա:

ՉՎԱՐԹ – (Ադելաիդային) Ինձ ասացին, որ դու այստեղ ես: Ինչպե՞ս ես համարձակվել առանց ծնողներիդ համաձայնության: Գնանք տուն, ես քեզ հետ հետո կխոսեմ:

ՀՈՎԻԿ – (Ադելաիդային) Չգնաս:

ՉՎԱՐԹ – Առաջ անցիր, շուտ արա:

ՌՈՁ – Ինչո՞ւ եք շտապում, նստեք, հիմա ամուսնուս կարթնացնեմ: Որ իմանար, իսկի կքնե՞ր:

ՉՎԱՐԹ – Տիկին, դուք արդեն խաղում եք իմ նյարդերի հետ:

ՌՈՁ – Ո՞վ, ե՞ս, որ տեսնեք էլ՝ չհավատաք: Ի՞նչ ունենք բաժանելու, իրենք լավ լինեն:

ՉՎԱՐԹ – (Ադելաիդային) Առաջ անցիր:

ԱԴԵԼԱԻԴԱ – Մամա, ինչո՞ւ ես եկել:

ՉՎԱՐԹ – Տանը, ամեն ինչ տանը: (Լացակումած) Քեզ խլում են ինձանից, դու հասկանո՞ւմ ես:

ԱԴԵԼԱԻԴԱ – Քեզ հուզվել չի կարելի, խնդրում եմ:

ՉՎԱՐԹ – Ես հիմա ուշագնաց կլինեմ: (Ուշագնացության նշաններ է ցույց տալիս՝ ընկնելով այն բազմոցին, որտեղ քնած էր Կնյազը):

ԱԴԵԼԱԻԴԱ – Մա՞-մա՞:

Իրարանցում:

Կնյազն արթնանում է՝ գրկելով Չվարթին:

ՌՈՁ – Թող, թող ձեռքդ, ինքը կնստի:

ԿՆՅԱԶ – Այ աղջիկ, թողնեմ ընկնի, պատասխան կտա՞ս:

ՌՈՁ – Թող, ասում եմ:

ՉՎԱՐԹ – (Մթափվելով) Ինչպե՞ս պետք է ապրեիր առանց ինձ, բալիկս: (Նկատելով Կնյազին՝ խայթվածի նման ճշում է, ազատվելով նրանից):

ՌՈՁ – (Աթոռ է մատուցում) Նստեք, տիկին Չվարթ:

ԿՆՅԱԶ – Էս կիճն ո՞վ է:
 ՀՈՎԻԿ – Հայրիկ, ծանոթացիր տիկին Չվարթի հետ:
 ՌՈԶ – Մոտեցիր, ծանոթացիր, Փիլոյանի կիճն է:
 ԿՆՅԱԶ – Փիլոյանի կիճն ի՞նչ գործ ունի մեր տանը:
 ՌՈԶ – (Կնյազի ականջին) Աչքդ լո՛ւյս, պետիդ աղջիկը տղա-
 յիդ հարսնացուն է:
 ՉՎԱՐԹ – Տիկին, գոնե շուկով խոսեք, որ մենք չլսենք:
 ՌՈԶ – Կներեք, ուրախությունից, ախր ընկեր Փիլոյանին մենք
 շատ ենք հարգում, տիկին Չվարթ:
 ՊԱՅԾԱՌ – Անչափ, անսահման:
 ԿՆՅԱԶ – (Ռոզին) Լսիր, լուրջ ես ասո՞ւմ, Փիլոյանի կի՞ճն է:
 ՌՈԶ – Հա, հա, գնա ծանոթացիր:
 ԿՆՅԱԶ – (Մոտենում է՝ ոգևորությամբ ձեռքի ասիերը շփելով
 իրար) Այ, հիմա գոհ եմ բախտիցս: Ծանոթանանք, տիկին Չվարթ:
 (Մեղմում է ձեռքը) Ասում էի՝ այ տղա, ում ուզում ես ուզիր, մենակ թե
 գոքանչդ սրտովս լինի: Պտուղը ծառից հեռու չի ընկնում, տիկին
 Չվարթ: Ոնց որ դուք՝ ձեզ պես էլ ձեր աղջիկը, ոնց որ ես՝ ինձ պես էլ
 Հովիկս:
 ՌՈԶ – Բա ե՞ս:
 ԿՆՅԱԶ – Ռոզ, ես քեզ ինձանից կանջատե՞մ, առանց քեզ
 կյանք ունե՞մ:
 ՀՈՎԻԿ – (Մաստոդ) Հայրիկ...
 ԿՆՅԱԶ – Դու սուս, ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Ընկեր Փի-
 լոյանի նման մարդ ոչ եղել է, ոչ կա, ոչ էլ կլինի:
 ՉՎԱՐԹ – Դուք որտեղի՞ց եք ճանաչում ամուսնուս:
 ԿՆՅԱԶ – Ո՞նց թե, ընկեր Փիլոյանը մեր պարկի տնօրենն է:
 ՉՎԱՐԹ – Ուրեմն դուք իմ ամուսնու աշխատողն եք, այո՞:
 ԿՆՅԱԶ – Բա իհարկե, մինչև ձեզ լավ չզգաք, բաց չեմ թողնի:
 Ռոզ, սեղան գցիր:
 ՉՎԱՐԹ – Մի՛ փակեք ճանապարհը:
 ԿՆՅԱԶ – Սպասեք, նստեք, գոնե մի բաժակ սուրճ խմենք, տի-
 կին Չվարթ: Ռոզ, մի՛ թող: (Չվարթին) Երկար չենք պահի, խնդրում
 եմ:
 ՉՎԱՐԹ – Ասացի՛ ոչ, մինչև այս հարցը պաշտոնական հողի
 վրա չդրվի, իմ աղջիկը չպետք է ոտք դնի այստեղ:
 ԿՆՅԱԶ – Բա ո՞նց, ամեն ինչ կարգուկանոնով, տիկին Չվարթ,
 մի անհանգստացեք, ինչ որ կասեք, էնպես էլ կանենք: Ընկեր Փիլո-
 յանի առաջ ես ոտքով-գլխով պատասխանատու եմ:

ՌՈՁ – Չէ, չէ, տիկին Ձվարթ, Հովիկս լուրջ տղա է, կբարեկամանք, հետո մեզ կճանաչեք: Այդ էր պակաս, թող մի փորձի...

ԿՆՅԱՁ – Ի՞նչ պիտի փորձի: (Մատը թափահարելով Հովիկի վրա):

ՉՎԱՐԹ – (Աղելախոյանին) Դուրս արի: Եթե մայրդ ասում է, դու պետք է լսես:

ԿՆՅԱՁ – Ռոգ, բաց չթողնես:

ՌՈՁ – Միշտ իմ դիակի վրայով:

Աղելախոյան դուրս է գնում, Չվարթը հետևում է նրան:

ԿՆՅԱՁ – Ապրես, Հովիկ ջան, լավ ճաշակ ունես: Գնա ճանապարհ դիր: (Հովիկի հետևից) Տաքսի կրոնես:

ԿՆՅԱՁ – Այ կնիկ, էս ի՞նչ նորություն էր, ուրեմն Փիլոյանի խնամին ենք դառնալով: Տա՛շ...

Պարում են:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Փիլոյանի բնակարանը: Հնչում է մուտքի զանգը:

ՉՎԱՐԹ – (Ընդառաջ գնալով) Մտեք:

ԿՆՅԱՁ – (Նոր զգեստ հագած, շյապայով) Բարև ձեզ:

ՉՎԱՐԹ – (Երևակայելով) Բարև ձեզ:

ՌՈՁ – Կարելի՞ է:

ՉՎԱՐԹ – Կարելի է:

ԿՆՅԱՁ – (Ռոզին) Կոշիկները հանենք: (Փորձում է հանել՝ ոտքը դնելով աթոռին):

ՉՎԱՐԹ – Ոչ, ոչ, պետք չէ:

ԿՆՅԱՁ – Ախր ձեր պարկետը...

ՉՎԱՐԹ – Ոչինչ, մաքրողը ես չեմ:

ԿՆՅԱՁ – Ախ, դուք չեք... (Իջեցնում է ոտքը):

ՌՈՁ – Ներս արի, Հովիկ ջան:

ԿՆՅԱՁ – Արի, կոշիկները չենք հանում:

Մտնում է Հովիկը: Բոլորի ձեռքին կապոցներ են:

ԿՆՅԱՁ – Էս ինչո՞ւ կանգնած մնացիմք:

ՉՎԱՐԹ – Համեցեք, նստեք:

Տեղավորվում են:

ՌՈՁ – Ինչպե՞ս եք, տիկին Ձվարթ:

ՉՎԱՐԹ – Մենք լավ ենք:

ԿՆՅԱՁ – Ընկեր Փիլոյանը ո՞նց է:

ՉՎԱՐԹ – Շնորհակալություն:

ԿՆՅԱԶ – Աղելախիդան տանը չի՞, տիկին Չվարթ:
 ՉՎԱՐԹ – Ոչ:
 ԿՆՅԱԶ – Այ, էդ մեկը լավ չեղավ:
 ՌՈԶ – Շուտ կգա՞:
 ՉՎԱՐԹ – Չգիտեմ:
 ՌՈԶ – Ո՞ր է գնացել:
 ՉՎԱՐԹ – Չի ասել:
 ԿՆՅԱԶ – Որ եկել ենք, պիտի սպասենք, հո չենք թողնի գնա:
 Ռոզ, լավ բնակարան է, չէ՞:
 ՌՈԶ – Այդ էր պակաս, որ ընկեր Փիլոյանն էլ լավ բնակարան չունենար:
 ԿՆՅԱԶ – Տիկին Չվարթ, բարձրությունն ինչքա՞ն է, երկուսու-
 յոթանասունհի՞նգ:
 ՉՎԱՐԹ – Երեք:
 ԿՆՅԱԶ – Ախ, երե՛ք: Մերը ցածր է:
Մտնում է Աղելախիդան:
 ԱԴԵԼԱԻԴԱ – Բարև ձեզ:
 ԿՆՅԱԶ – Բարև, այ, եկավ Աղելախիդան:
 ՌՈԶ – Բարև, Աղելախիդա ջան:
Կարճատև դադար:
 ՉՎԱՐԹ – Բա՞ն էիք ուզում ասել:
 ԿՆՅԱԶ – Չէ, առանձնապես ոչ հով է, ոչ էլ շոգ է, լավ սեն-
 յակներ են:
 ՌՈԶ – Ումի՞ց ես թաքցնում, պարզ ասա, իրենք էլ իմանան
 իրենց անելիքը, մենք էլ:
 ԿՆՅԱԶ – Նո՞ր չմտանք: Համբերիր, մի քիչ շունչ քաշենք,
 տնաշեն: Հո տեր-վռազը չես: Չե՞ս տեսնում, կամաց-կամաց մոտե-
 նում եմ, էլի: **(Չվարթին)** Բարձրությունն ինչքա՞ն է... Ներողություն,
 դա արդեն հարցրել եմ: Իսկ բարձրանալը դժվար չի՞, տիկին Չվարթ:
 ՉՎԱՐԹ – Ոչ, վերելակն աշխատում է, կարծեմ դուք ուրիշ բան
 էիք ուզում ասել:
 ԿՆՅԱԶ – Ուրի՞շ, ի՞նչ... Չեր առողջությունն ինչպե՞ս է, կա-
 րևո՞րդ դա է, եթե առողջություն եղավ, մնացածն ինքն իրեն կլինի:
 Ռոզ, համաձայն չե՞ս:
 ՌՈԶ – Չէ, համաձայն չեմ, եկել ենք, ասա ինչի համար ենք
 եկել:
 ԿՆՅԱԶ – Այ, հիմա կարելի է: Տիկին Չվարթ, որ սուտ չասեմ,
 եկել ենք բարի նպատակով:

ԶՎԱՐԹ – Այսի՞նքն:
ԿՆՅԱԶ – Այսինքն եկել ենք մեր երիտասարդների հարցով:
ԶՎԱՐԹ – Ախ, այդպե՛ս, էլ ինչո՞ւ եք իզուր տեղը երկարաց-
 նում:
ԿՆՅԱԶ – Կարգն է եղպես, տիկին **Զվարթ**:
ԶՎԱՐԹ – Իմ աղջիկը պետք է շարունակի ուսումը ասպիրան-
 տուրայում և առայժմ մտադրություն չունի ամուսնանալու:
ԿՆՅԱԶ – Մեր տղան էլ է սովորում, տիկին **Զվարթ**, դա չի
 խանգարում:
ԶՎԱՐԹ – Այդ արդեն թույլ տվեք մեզ իմանալու, աղջիկն աղ-
 ջիկ է, տղան՝ տղա:
ԿՆՅԱԶ – Իհարկե, աղջիկն աղջիկ է, տղան՝ տղա:
ԱԳԵԼԱԻԴԱ – Մամա, դու իմ փոխարեն մի՛ պատասխանիր:
ԶՎԱՐԹ – Չե՞ որ դու ինքդ այդպես ցանկացար:
ԱԳԵԼԱԻԴԱ – Մի՛ ասա:
ԶՎԱՐԹ – Որքան շուտ մեծացար, բալիկս: (**Համբուրում է**):
ԿՆՅԱԶ – Մերն էլ շատ շուտ մեծացավ, վերջերս շատ շուտ են
 մեծանում:
ՌՈԶ – (**Կնյազի ականջին**) Տեսնո՞ւմ ես՝ պետիդ կինը ոնց է
 քանկացնում:
ԿՆՅԱԶ – Աղջկան ուզում է պսակել, բա ո՞նց:
Մտնում է Փիլոյանը՝ աչքի անցկացնելով թերթը:
ԿՆՅԱԶ – (**Ամմիջապես ոտքի է կանգնում, շշուկով**) Փիլո-
 յանը... Փիլոյանը եկավ:
ՓԻԼՈՅԱՆ – (**Հանկարծակի նկատելով հյուրերին**) Բարև ձեզ:
ԿՆՅԱԶ – Հարգանքներս, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Հիմնարկության հարցերը տանը չեն լուծում:
ԿՆՅԱԶ – Բա եղա՞վ, ընկեր Փիլոյան, ես էդ տեսակ մա՞րդ եմ:
ՓԻԼՈՅԱՆ – Չենք խոսում, վերջ: Խախտում եք փողոցային
 երթևեկության կանոնները, չեք վերադարձնում դրամի մանրը, կոպ-
 տում եք քաղաքացիներին: Ի՞նչ նոր մեքենայի մասին կարող է խոսք
 լինել, երբ դրված է ձեր հեռացման հարցը, իզուր եք եկել, տանը ես ոչ
 մեկի չեմ ընդունում:
ԿՆՅԱԶ – Հեռացնում եք՝ հեռացրեք, ընտանիքիս մոտ ինչի՞ եք
 խայտառակում, ընկեր Փիլոյան:
ՌՈԶ – Ընկեր Փիլոյան, Կնյազը ձեզ շատ է հարգում, մենք
 գործով ենք եկել:

ՓԻԼՈՅԱՆ – Այդպիսի բաներ մի ասեք, ես կոչված եմ պաշտպանելու հիմնարկության շահերը, ինձ նշանակել են դրա համար:

ՌՈԶ – Ընկեր Փիլոյան, ամենից առաջ ես Կնյազի կինն եմ, եկել ենք, որ ձեզ հետ ծանոթանանք:

ՓԻԼՈՅԱՆ – Խնդրեմ, միայն թե չմիջամտեք:

ՌՈԶ – Ուրեմն Կնյազը վա՞տ աշխատող է:

ՓԻԼՈՅԱՆ – Տիկին, դուք ինձ անհարմար վիճակի մեջ եք դնում: Ես կուրեկտիվին պետք է պատասխան տամ իմ յուրաքանչյուր քայլի համար, ինչ է, դուք կարծում եք հիմնարկի պետը ինչ ուզի կարո՞ղ է անել, ոչ, չարաչար սխալվում եք. պետը միայնակ հսկում է բոլորին, բոլորը միասին հսկում են պետին:

ԶՎԱՐԹ – Գևորգ, ինչո՞ւ մինչև վերջ չես լսում մարդկանց:

ՓԻԼՈՅԱՆ – Կտրականապես արգելում եմ միջամտել:

ՌՈԶ – Ընկեր Փիլոյան, Կնյազն անընդհատ ձեր անունն է տալիս, գիտե՞ք ձեզ ինչքան է հարգում:

ՓԻԼՈՅԱՆ – Տիկին, հավատում եմ, բայց, ցավոք, չեմ կարող օգտակար լինել: Թույլ չեն տալիս մարդ գոնե տանը հանգստանա: Այ քեզ ժողովուրդ:

ԶՎԱՐԹ – Ո՞ր ես գնում, այ մարդ, մի իմացիր ինչի համար եմ եկել: Եթե դեմ ես, ասա՝ դեմ եմ, ինչո՞ւ ես թողնում հեռանում:

ՓԻԼՈՅԱՆ – (**Բռնկվելով**) Այո, դեմ եմ, դեմ եմ: (**Մտնում է կից սենյակը**):

Զվարթն ու Ադելաիդան գնում են հետևից:

ԿՆՅԱԶ – (**Զվարթի ետևից**) Նա չհասկացավ, թե ինչի համար ենք եկել, տիկին Զվարթ, դուք նրան բացատրեք:

ՌՈԶ – Հետաքրքիր է, պետդ ինչի՞ համար եկավ, ելույթ ունեցավ ու գնաց:

ԿՆՅԱԶ – Ուշադրություն մի դարձրու, ասում է, բայց սրտում բան չկա: Ախր ի՞նչ անի խեղճ մարդը, վերևից զանգահարում են, ներքևից մատերիալ են գրում, կողքերից փորում են... Հիմա կբացատրեն, կգա:

ՌՈԶ – Բո պատճառով ինչի՞ համար ես ամոթանք ստանամ, չի լինի՞ մի քիչ կարգին աշխատես:

ԿՆՅԱԶ – Միրտդ լեն պահիր, այ կին, մարդ է՝ կջղայնանա էլ, կհանգստանա էլ: Հետևից գնացին, հիմա կհամոզեն, կբերեն: Նստիր տեղդ:

ՌՈԶ – Չեմ նստի:

ԿՆՅԱԶ – Նստիր:

ՌՌՁ – Չեմ նատի:

ՀՈՎԻԿ – Անհարմար է, լավ, վերջ տվեք:

ՌՌՁ – Հովիկս որ չլիներ, կզմայի, նրա համար եմ սպասում, իմացա՞ր:

ԿՆՅԱՁ – Չէ, լավ չեղավ, եկանք մարդու տրամադրությունը փշացրինք:

ՌՌՁ – **(Դեպի կից սենյակը)** Հա է՛ հա, չէ է՛ չէ, մենք էլ թողնենք զմանք մեր գործին:

ԿՆՅԱՁ – Կամաց, մի գոռա, հո ինձ խայտառակ չես անելու պետիս տանը:

ՌՌՁ – **(Հարձակողական)** Տղան աղջկան է ուզում, աղջիկը՝ տղային, որ դեմ եղավ՝ ի՞նչ պիտի անի, ի՞նչ պիտի անի, է՛:

ԿՆՅԱՁ – Լավ, հասկացանք, հանգստացիր:

Մտնում է Փիլոյանը, հետևից՝ Չվարթը:

ՓԻԼՈՅԱՆ – Ներեցեք, խնդրում եմ, ես մի փոքր ուշացա: Նստիր, Կնյազ, ինչո՞ւ ես կանգնել:

ԿՆՅԱՁ – Նստելը կնստեմ, բայց թե հանգստանում էիք:

ՓԻԼՈՅԱՆ – Այդպիսի բաներ մի ասա, լավ եք արել, եկել եք:

ՌՌՁ – Ընկեր Փիլոյան, ճիշտն ասած, որ իմանայինք քնած եք...

ՓԻԼՈՅԱՆ – Տիկին, դա ինչ կարևոր է, պարզապես ինքս պետք է ներողություն խնդրեմ:

ԿՆՅԱՁ – Ի՞նչ անես, ընկեր Փիլոյան, դու հո քո մասին չես մտածում, հիմնարկի մասին ես մտածում: Ռոզ, գիտե՞ս, ընկեր Փիլոյանը եթե չլինի, պարկը ձեռքից կզնա:

ՓԻԼՈՅԱՆ – Եթե չեմ սխալվում, դուք Կնյազի կինն եք, այնպես չէ՞:

ԿՆՅԱՁ – Ռոզ, ընկեր Փիլոյանը գիտե՞ս ինչ հիշողություն ունի:

ՌՌՁ – Լավ հիշողություն ունեք, ընկեր Փիլոյան, ոնց էլ հիշեցիք: **(Ծիծաղում է):**

ԿՆՅԱՁ – Ընկեր Փիլոյան, Ռոզան ամեն անգամ ասում է՝ տուն հրավիրիր ընկեր Փիլոյանին, ես եմ անշնորհքը, ախր գործը թողնո՞ւմ է: Սա էլ տղաս է: Հովիկ ջան, արի ընկեր Փիլոյանի հետ ծանոթացիր:

Մեղմում են միմյանց ձեռք:

ՓԻԼՈՅԱՆ – Կեցցե՛ս, մեծ տղա ունես:

ՌՌՁ – Համալսարանն ավարտել է, ասպիրանտուրայում է սովորում, ընկեր Փիլոյան:

ԿՆՅԱԶ – Այ տղա, ինչո՞ւ ես գլուխդ կախել: Չէ, սա էսօրվա երիտասարդ չի, ամաչկոտ է, ընկեր Փիլոյան, ամաչկոտ, անպատմելի: Ես քեզ օրինակ ջահել ժամանակս:

ՓԻԼՈՅԱՆ – Տղա է, կրացվի կամաց-կամաց, երիտասարդին մի ամաչացրու:

ՌՌԶ – Ձեզ մոտ որ չամաչի, էլ ում մոտ պիտի ամաչի, ասեք՝ մենք չամաչենք նրա երեսից:

ՓԻԼՈՅԱՆ – Դե մոտեցեք սեղանին, տեղավորվեք ում որտեղ հարմար է:

ԿՆՅԱԶ – Ներդրություն մի կրեք, ընկեր Փիլոյան, մենք մեզ լավ ենք զգում, ոնց որ մեր տանը:

Տեղավորվում են սեղանի շուրջը:

ՓԻԼՈՅԱՆ – Դե, լսում եմ:

ՌՌԶ – (Արմունկով հրում է **ԿՆՅԱԳԻՆ**) Խոսիր:

ԿՆՅԱԶ – (Կանգնում է) Ընկեր Փիլոյան...

ՓԻԼՈՅԱՆ – (Ծիծաղում է) Ժողով հո չի՞, Կնյագ, նստիր:

ԿՆՅԱԶ – (Նստում է) Ընկեր Փիլոյան, ինչ ասեմ, մեր երիտասարդը փաստորեն խնդրում է ձեր համաձայնությունը՝ մեր Ադելաիդայի հետ ընտանիք կազմելու մասին... Ներողություն, համար... (Թեթևացած շունչ է քաշում) Ռոզ, հո չսխալվեցի:

ՌՌԶ – Չէ, լավ էր: Ասա, որ մենք էլ մեր կողմից համաձայն ենք:

ԿՆՅԱԶ – (Կրկնում է) Ասա, որ մենք էլ մեր կողմից համաձայն ենք: Ընկեր Փիլոյան, ինձ հուշում է, թե ասա, որ մենք էլ մեր կողմից համաձայն ենք: (Ռոզին) Որ համաձայն չլինեիք, չէիք գա, էլի: Ճիշտ չի՞, տիկին Չվարթ:

ՉՎԱՐԹ – Ես ոչինչ չեմ կարող ասել, թող ամուսինս ինքը որոշի՝ այո կամ ոչ:

ՓԻԼՈՅԱՆ – Դժվար հարց է, ընկերներ, ինձ նեղ վիճակի մեջ մի դրեք: Ադելաիդան ինքը պետք է ընտրի իրեն համապատասխան փեսացու, շտապելու կարիք չկա. ինչքան ուշ, այնքան լավ:

ՉՎԱՐԹ – Եվ հետո՝ ամեն ընտանիքից մենք փեսա չենք ընտրի և մեր աղջկան ամեն ընտանիք չենք ուղարկի:

ԿՆՅԱԶ – Է՛, եղա՞վ, տիկին Չվարթ, բա մենք վա՞տ ընտանիք ենք: Ռոզ, երեսուն տարվա կինս ես, ես քեզ երբևիցե մի թթու, մի մոու, մի կծու, մի աղի, մի դառը խոսք ասած կա՞մ:

ՌՌԶ – Ես քեզ ասե՞լ եմ, որ դու ինձ ասես:

ԿՆՅԱԶ – Խոսքի օրինակ եմ ասում, խենթ:

ՌՌՁ – Խենթը դու ես: Վայ, չէ, չէ, Կնյազը «ջանից» բացի ինձ ուրիշ խոսք չի ասել, մմանապես ես նրան, շատ սիրով ամուսիններ ենք, ընտանիքի կողմից հանգիստ եղեք:

ՓԻԼՈՅԱՆ – Տիկին Ռոզա, Ձվարթն ուրիշ բան էր ուզում ասել, դուք նրան չհասկացաք:

ՌՌՁ – Շատ լավ էլ հասկացա, ընկեր Փիլոյան, որ մեզ չհասկանալու ենք տալիս, ուրեմն անհասկացող ենք: Կնյազս, որ դիպում չունի, ումի՞ց է պակաս:

ԿՆՅԱԶ – Ո՞վ չունի... Կորցրել եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Այ ընկերներ, մենք հո չենք որոշողը:

ԿՆՅԱԶ – Այ դա ուրիշ հարց է: Ռոզ, Հովիկին ասա, թող առաջ գա:

ՌՌՁ – Հովիկ ջան, առաջ արի:

ԿՆՅԱԶ – Առաջ արի, այ տղա: Դե հիմա ասա: Լսում ենք:

ՀՈՎԻԿ – Խոստանում եմ արդարացնել ձեր հույսերը:

ԿՆՅԱԶ – Այ, հիմա հասկացա, ապրես, մի կողմ կանգնիր: Քո աշխատողը ես եմ, մնացածը դու ինձանից պահանջիր, ընկեր Փիլոյան:

ՌՌՁ – Տիկին Ձվարթ, շատ նստեցինք, Ադելաիդային էլ կանչեք, թողնենք գնանք:

ՁՎԱՐԹ – Ես գիտեմ, նա չի գա:

ԿՆՅԱԶ – Փորձեք, էլի, չի գա, էլի թող չգա:

ՓԻԼՈՅԱՆ – Անհարմար է, մարդկանց մի սպասեցրու:

ՌՌՁ – Ոչինչ, տիկին Ձվարթ, դու քո պարտքը կատարիր:

ՁՎԱՐԹ – Ախր ինչո՞ւ եք ստիպում, իմ աղջկան դուք ինձանից լա՞վ եք ճանաչում: (Չայն է տալիս) Ադելաիդա՛...

ԱԴԵԼԱԻԴԱ – (Անմիջապես մտնում է) Ասա, մամա:

ՁՎԱՐԹ – Ինչո՞ւ եկար:

ԱԴԵԼԱԻԴԱ – Դու կանչեցիր:

ՁՎԱՐԹ – Դե, իհարկե, նա կարո՞ղ է իմ խոսքը մերժել: Եկել են, որպեսզի խնդրեն քո ձեռքը: Ասա հորդ ներկայությամբ՝ համաձայն ես: Մի շտապիր:

Ադելաիդան գլխով հաստատական նշան է անում:

ՓԻԼՈՅԱՆ – (Ձվարթին) Աղջիկդ շատ շուտ համաձայնեց: Դե, նստեք: Իրար որ հասկացել են, մեր խոսելն ավելորդ է:

ԿՆՅԱԶ – (Մի շիշ կոնյակ դնելով սեղանին) Ընկեր Փիլոյան, էսօրվանից դու իմ գլխից, իմ ընտանիքի գլխից անպակաս լինես:

ՓԻԼՈՅԱՆ – Կնյազ, վերջացավ, էլ ընկեր Փիլոյան չկա, ասա՝
Գևորգ:

ԿՆՅԱԶ – Գևորգ... Ընկեր Փիլոյան, ախր ես ձեզ ո՞նց Գևորգ
ասեմ, լեզուս չի պտտվի:

ՓԻԼՈՅԱՆ – Կամաց-կամաց, միանգամից ոչինչ չի լինում:
Վերցրեք բաժակները:

ՌՌԶ – Շատ ներողություն, ընկեր Փի... Գևորգ եղբայր,
չովիկս ամենից առաջ թող մատանին դնի մեր Աղելախոյաչի մատին:

ԶՎԱՐԹ – Առանց զագսի թղթի՞:

ՌՌԶ – Տիկին Զվարթ, զագսի թուղթը դուք ինձանից ուզեք,
նշանդրեքն անենք, հետո՝ հարսանիքը, հետո թող գման ճանապար-
հորդության, Կնյազը տոմսերը կառնի, մի խոսքով, ամեն ինչ տեղը
տեղին, ճիշտ չե՞մ ասում, Կնյազ ջան:

ԿՆՅԱԶ – Բա ո՞նց: Հովիկ ջան, քեզ տեսնենք:

Հովիկը մատանին դնում է Աղելախոյաչի մատին:

ՌՌԶ – Սա էլ ժամացույցը, սա էլ ոսկե ապարանջանը, սա էլ
մյուս մատանին՝ ադամանդե քարով...

Կնյազը զարմանքով նայում է:

ՌՌԶ – Սա էլ ոսկե ականջօղեր: (Աղելախոյաչին) Կուզես կկա-
խես, չես ուզի՝ ես կկախեմ: Սրանք էլ մեր նվերները՝ տիկին Զվար-
թին, սրանք էլ մեր կողմից՝ ընկեր Փիլոյանին: (Դառնալով երիտա-
սարդներին) Շնորհավոր լինի, մի բարձի ծերանաք:

ՓԻԼՈՅԱՆ – Ես ողջունում եմ, բախտավորություն, խաղաղու-
թյուն, հաջողություն եմ ցանկանում և առաջարկում եմ խմել մեր երի-
տասարդների կենացը:

ԿՆՅԱԶ – Դուք հասաք ձեր նպատակին, մենք էլ հասնենք մեր
նպատակին:

Խփում են բաժակ-բաժակի՝ մտնելով շուրջպարի մեջ:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Պ Ա Տ Կ Ե Ր Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Նույն աշխատասենյակը ավտոպարկում: Փիլոյանը սեղմում է զանգի կոճակը: Մտնում է Նուրուֆարը:

ՓԻԼՈՅԱՆ – Ջուր:

Նուրուֆարը ջուր է բերում:

(Վերցնում է բաժակը՝ վերադարձնելով նրան) Խնդրեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Չի վերցնում) Շնորհակալություն:

ՓԻԼՈՅԱՆ – (Խմելուց հետո) Ապրես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Անուշ:

ՓԻԼՈՅԱՆ – Ազատ ես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Բազմանշանակ) Ընկեր Փիլոյան...

ՓԻԼՈՅԱՆ – Ասա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ամաչում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Ամաչելով ասա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Փղձկում է) Կնյազը բացբերան է:

ՓԻԼՈՅԱՆ – Ընկեր Նուրուֆար, ես ձեզ կարգի եմ հրավիրում:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինչո՞ւ եք ուզում, որ ասի, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Աշխատողներիս հասցեին վիրավորական խոսքեր չլսեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինձ մի դժբախտացրեք, խնդրում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ պատահեց քեզ, այ աղջիկ, դու հո երբազ չե՞ս

տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Տեսել եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Եվ ի՞նչ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դուք նստել էիք կապույտ մեքենայի մեջ, ինձ նստեցրել էիք ձեր կողքին և միասին թռչում էինք դեպի լուսին:

ՓԻԼՈՅԱՆ – Մեքենայո՞վ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Նոր ստացված:

ՓԻԼՈՅԱՆ – Թեկուզ նոր, մեքենայով ո՞նց կթռչես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չգիտեմ, թոչում էինք: Հետո ես ուզում էի ճանապարհին իջնել, դուք ինձ չիջեցրիք: Ասացի՝ անհարմար է, ընկեր Փիլոյան, կրամբասեն, ասացիք մյուս մոլորակներում մարդիկ հետամնաց են, բամբասանքի մասին զաղափար չունեն: **(Երազկոտ, ինքնամոռաց)** Հետո գնացինք աստղերի միջով, հետո անցանք ուրիշ մոլորակների վրայով, մեզ ձեռքով էին անում, թաշկինակներ էին քափահարում, և մենք էլի գնում էինք, գնում, գնում:

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ ես խոսում, բեմզին կդիմանա՞:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ուրեմն սո՞ւտ եմ ասում, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Վերջ տուր, երեխա՞ ես, ինչ է, գոնե մի տեղ պիտի իջնեիք, որ բեմզին լցնեիք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինչո՞ւ եք ինձ հարցնում, դուք էիք ղեկի մոտ:

ՓԻԼՈՅԱՆ – Այ ընկերուհի, ճիշտ է, ես էի ղեկի մոտ, բայց երազը դու ես տեսել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան, իսկ դուք ոչ մի անգամ ինձ չե՞ք տեսել երազում:

ՓԻԼՈՅԱՆ – Չէ, ես երազ չեմ տեսնում:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինչո՞ւ, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Կարծեմ մի անգամ տեսել եմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ո՞ւմ, ի՞նձ:

ՓԻԼՈՅԱՆ – Չէ, երազ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան, ինչո՞ւ եք իմ նկատմամբ փոխել ձեր վերաբերմունքը:

ՓԻԼՈՅԱՆ – Գուշակություններ մի արա, նստիր, հրամանները մեքնագրիր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Ցուցադրելով նոր զգեստը)** Ինչո՞ւ չեք շնորհավորում:

ՓԻԼՈՅԱՆ – Իսկապե՞ս, ճիշտ ես ասում, մի պտտվիր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Հաճույքով: **(Պտտվում է):**

ՓԻԼՈՅԱՆ – Լավ է, շատ լավ է, բոլոր կողմերից էլ լավ է, բարով մաշես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Շնորհակալություն:

ՓԻԼՈՅԱՆ – Անցիր գործիդ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան...

ՓԻԼՈՅԱՆ – Ասա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ի՞նչ եղավ իմ բնակարանի հարցը:

ՓԻԼՈՅԱՆ – Խոստացել եմ, ուրեմն կլուծեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Այ, եթե դա արեցիք...

ՓԻԼՈՅԱՆ – Անցիր գործիդ:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան...
 ՓԻԼՈՅԱՆ – Լսում եմ:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Իսկ եթե Կնյազն ասի՞:
 ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ պիտի ասի, այ աղջիկ:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Իմ ծննդյան օրը... Որ Կնյազը ներս մտավ...
 ՓԻԼՈՅԱՆ – Հասկացա, իմ ծննդյան օրն էլ դու ինձ կհամ-
 բուրես:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Այդքան ո՞ւշ: (**Հրամանները վերցրած, անց-
 նում է միջնորմի մյուս կողմը**):
 ՓԻԼՈՅԱՆ – Չէ, սրանից պիտի ազատվել:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – (**Բազմանշանակ**) Սպասիր մի բնակարան
 ստանամ... (**Սկսում է մեքենագրել**):
Մտնում է Կնյազը:
 ԿՆՅԱԶ – (**Պաշտոնակաճ**) Տեղո՞ւմ է:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Մի խանգարիր, տեսնում ես զբաղված եմ:
 ԿՆՅԱԶ – Լսիր, ի՞նչ ձևով ես խոսում ինձ հետ:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան, դուք հիմա տեղո՞ւմ եք:
 ՓԻԼՈՅԱՆ – Ո՞վ է հարցնում:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Կնյազը:
 ՓԻԼՈՅԱՆ – Տեղում եմ, իհարկե, տեղում եմ:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – (**Թոթովում է ուտերը**) Գնա:
 ԿՆՅԱԶ – Մենք քեզ կսովորեցնենք մեզ հետ խոսել: (**Մանելով
 աշխատասենյակ**) Բարև ձեզ, ընկեր Փիլոյան:
 ՓԻԼՈՅԱՆ – Ո՞ր ես, այ մարդ, չես գալիս, չես երևում, աթոռը
 մոտ քաշիր, նստիր:
Մեղմում են միմյանց ձեռք:
 ԿՆՅԱԶ – Գնացքի տոմսերը վերցրի ջահելների համար, լավ
 տեղեր են:
 ՓԻԼՈՅԱՆ – Սպասիր, սպասիր, տոմսերը նախ պիտի վերց-
 նեինք հարսանիքից հետո և երկրորդ՝ ախր ես էլ պիտի փող տայի:
 ԿՆՅԱԶ – Ի՞նչ եք ասում, ընկեր Փիլոյան, անհարմար է, ի՞նչ
 տարբերություն՝ իմ փողը, ձեր փողը:
 ՓԻԼՈՅԱՆ – Չեղավ, չեղավ, շատ ես առաջ անցնում:
 ԿՆՅԱԶ – Ո՞նց եք, ընկեր Փիլոյան:
 ՓԻԼՈՅԱՆ – (**Ուշադիր նայում է Կնյազին**) Այ քեզ նորություն:
 ԿՆՅԱԶ – Լա՞վ, թե վա՞տ:
 ՓԻԼՈՅԱՆ – (**Չարմանքով**) Լսիր, դու բեղ ես ունեցե՞լ:

ԿՆՅԱԶ – Բա ոնց, ընկեր Փիլոյան, եղավ քսան-քսանհինգ տարի:

ՓԻԼՈՅԱՆ – Չէ, կարգին տղամարդ ես:

ԿՆՅԱԶ – Բա որ առաջ տեսնեիք:

ՓԻԼՈՅԱՆ – Երևակայիր, լավ էլ սագում է: Հա, ուրեմն քեզ կանչել էի... Լսիր, քեզ ինչի՞ համար էի կանչել:

ԿՆՅԱԶ – Պետերը լավ բանի համար էլ են կանչում, մենք վատն ենք մտածում, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Իզուր, ուրեմն կարո՞ղ է պատահի ես քո նկատմամբ...

ԿՆՅԱԶ – Ի՞նչ, աչքովս էլ տեսնեմ, չեմ հավատա:

ՓԻԼՈՅԱՆ – Չէ, եթե աչքովդ տեսնես՝ հավատա: Իսկապես, ես քեզ ինչի՞ համար էի կանչել: Հա, հիշեցի: Լսիր, դու ինձ դիմում էիր տվել նոր մեքենա ստանալու համար, չէ՞:

ԿՆՅԱԶ – Եթե դա արեցիր, ընկեր Փիլոյան...

ՓԻԼՈՅԱՆ – Էլի՞ ընկեր Փիլոյան...

ԿՆՅԱԶ – Գևորգ...

ՓԻԼՈՅԱՆ – Այ այդպես: Մի անգամ էլ...

ԿՆՅԱԶ – Չէ, էլ չեմ սխալվի, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Ինձ ձեզանից մի հեռացրու, Կնյազ, ես քեզ համար ընկեր Փիլոյան չեմ, ես քեզ համար Գևորգ եմ:

ԿՆՅԱԶ – Ինչ լավ անուն ունես, ընկեր Փիլոյան: Երանի իմ անունն էլ Գևորգ լիներ:

ՓԻԼՈՅԱՆ – Կնյազն ի՞նչ պակաս է: **(Դիտելով քեղը)** Կնյազ, դու իսկական կնյազ ես եղել, ես չեմ իմացե՞լ:

ԿՆՅԱԶ – **(Զմծիծաղով)** Ինձանից կնյազ կլինի՞, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Կնյազն էլ ի՞նչ տեսակ է լինում, այ տղա, քո երկրի կնյազն էլ դու ես, էլի: Բանվոր դասակարգ չե՞ս:

ԿՆՅԱԶ – Բա ինչ եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Պրծավ գնաց, ուրեմն կնյազ ես, էլի: Որ կնյազ չլինեիր, բեղ կպահեիր:

ԿՆՅԱԶ – Հո ձեռ չես առնում, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – **(Բռնկվելով)** Ի՞նչ:

ԿՆՅԱԶ – Գևորգ:

ՓԻԼՈՅԱՆ – Չէ, շատ լավ է, եթե ճիշտն ուզում ես իմանալ, տղամարդուն բեղ է հարկավոր:

ԿՆՅԱԶ – Ուզո՞ւմ ես մեջտեղից վերցնեմ, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ, մյուս անգամ չլսեմ:
ԿՆՅԱԶ – Զո խաթրին:
ՓԻԼՈՅԱՆ – Հա, ուրեմն... Ի՞նչ էի ասում:
ԿՆՅԱԶ – Ես հիշեցնե՞մ, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Որ այդքան շատ ես ուզում, հիշեցրու:
ԿՆՅԱԶ – Ասում էիր՝ Կնյազ, դու ինձ դիմում էիր տվել նոր մեքենա ստանալու համար, դիմումդ մակագրել եմ, գնա մեքենան ստացիր:
ՓԻԼՈՅԱՆ – Լավ հիշեցրիր, ինչո՞ւ չես գնում ստանում, որ գալիս բողոքում եմ: Դիմումդ մակագրել եմ, սեղանին է, վերցրու:
ԿՆՅԱԶ – Շատ շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, ընկեր Փիլոյան: Ներողություն, Գևորգ ջան, իմ հին մեքենան ի՞նչ եք անելու, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Հի՞նը... Ինչ պիտի անենք, հինը դուրս կգրենք:
ԿՆՅԱԶ – Որ դուրս գրեք, կտա՞ք ինձ, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Էյ, դու... Երևակայիր վատ չի լինի: Մի չորս-հինգ հարյուր ռուբլով կարող ես գնել, և կդառնանք... Այսինքն կդառնաս սեփական մեքենայի տեր: Ստացար:
ԿՆՅԱԶ – Թող ճակատդ համբուրեմ, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – (Պոթկալով) Ի՞նչ:
ԿՆՅԱԶ – Ճակատդ:
ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ:
ԿՆՅԱԶ – Գևորգ:
ՓԻԼՈՅԱՆ – Այ, այդպես:
ԿՆՅԱԶ – (Համբուրելուց հետո) Շնորհակալություն, ընկեր Փիլոյան: (Գնում է):
ՓԻԼՈՅԱՆ – (Ետևից) Տես, հա, չխուզես:
ԿՆՅԱԶ – Չէ, Գևորգ ջան: (Դուրս է գնում՝ օդային համրույր-ներ ուղարկելով Փիլոյանին):
ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Ինքն իրեն, տարակուսած) Գևորգ ջա՞ն... (Արագ մտնում է Փիլոյանի աշխատասենյակը՝ ձեռքի թղթերը դնելով սեղանին) Ընկեր Փիլոյան...
ՓԻԼՈՅԱՆ – Լսում եմ:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Էլ չի ասի, չէ՞:
ՓԻԼՈՅԱՆ – Չէ, չէ, հանգստացիր:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Հրճվալից կախ է ընկնում Փիլոյանի վզից՝ ոտքերը կարելով գետնից) Դուք այդ բոլորն արեցիք ինձ համար: (Համբուրում է) Ես դա զգում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Իջիր:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չեմ իջնի: Ես շնորհակալ եմ ձեր հայրական հոգատարության համար:
 ՓԻԼՈՅԱՆ – Խնդրեմ, պատրաստ եմ կրկնակին անելու, միայն թե իջիր:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դուք ինձ փրկեցիք:
 ՓԻԼՈՅԱՆ – Այ աղջիկ, իջիր ներքև, ներքևում խոսենք:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ոչինչ, դուք մի անհանգստացեք, ես ինձ վատ չեմ զգում:
 ՓԻԼՈՅԱՆ – Ես եմ ինձ վատ զգում:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չեմ իջնի, դուք հրաշալի մարդ եք:
 ՓԻԼՈՅԱՆ – Ես հիմարի մեկն եմ, ուրիշ ոչինչ: Տեղն է, ինձ տեղն է, չիջնես:
 ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չեմ իջնի, ես երախտապարտ եմ ձեզ:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆՊԵՐՈՐԴ

Կնյազի բնակարանի նույն սենյակը: Հեռախոսի զանգ: Մտնում է Պայծառը:

ՊԱՅԾԱՌ – (Այս ու այն կողմ աչք ածելով) Ռոզ, այ Ռոզ, հեռախոսը:

ՌՈԶ – (Դրսից) Լավ, լավ, հասկացանք: (Մտնում է՝ վերցնելով լսափողը) Այլո, մենք լսում ենք: Կնյազ Պետրովիչի տանից: Վայ, Նունուֆար ջան, դո՞ւ ես: (Պայծառին) Նունուֆարն է, մեր քարտուղարուհին: Չէ, Կնյազը տանը չի: Ի՞նչ, միլիցիայի՞ց... Կնյազի՞ն...

Հեռախոսն անջատվում է:

Այլո, այլո, Նունուֆար, Նունուֆար... Անջատվեց... (Իրեն կորցրած, Պայծառին) Ասում է՝ միլիցիայից...

ՊԱՅԾԱՌ – Ռոզ, կարո՞ղ է Կնյազը ավտոն մի տեղ խփած լինի:

ՌՈԶ – Բերանդ բարի բաց արա: (Ողորալով) Կնյազ ջան, քեզ կտեսնե՞մ կենդանի:

ՊԱՅԾԱՌ – Էս ի՞նչ փորձանք բերեցիր մեր գլխին, Աստված: (Խփում է ծնկներին) Վա՛յ, վա՛յ...

Երգելով մտնում է Կնյազը:

ՌՈԶ – Երենկ քո տիրոջը:

ԿՆՅԱԶ – (Գինովցած) Գնացի՛նք, Ռոզ ջան, մեր սեփական ավտոյով գնացի՛նք՝ թը՛ռո... Սոչի, Կիսլովոդսկ, Ղրիմ... Փիլոյանը իմ հինը դուրս գրեց, ասաց՝ առ, սա քեզ սեփական, քշիր ու քեֆ արա, նոր ստացածներից մեկն էլ տվեց, ասաց՝ առ, սա էլ քեզ պետական, քշիր ու փող աշխատիր: Բախտո՞ւ սիրեմ, Կնյազ Պետրովիչ: Տեսնո՞ւմ ես ի՞նչ տղա եմ, հերթով ամեն ինչ կլինի: (Ձեռքը Ռոզի վզով զցած՝ պարելով) Պայծառ, ծափ տուր, ի՞նչ ես պարապ նստել:

ՊԱՅԾԱՌ – Ծափ տամ, Կնյազ ջան, ծափ տամ, ով քեզ նման փեսա ունենա, որ ծափ չտա: Գիտե՞ս չէ՛ քեզ ինչքան եմ սիրում:

ԿՆՅԱԶ – Գիտեմ, ո՞նց չէ, ինչքան ես եմ քեզ սիրում, էնքան էլ դու ես ինձ սիրում, հիմա մտքիդ մեջ ասում ես՝ չունենամ քեզ, չէ՞:

ՌՌԶ – Դե, դե, քեզ կարգին պահիր:

ԿՆՅԱԶ – Մի ժամ առաջ մի մարդ ու մի կին նստեցին: Մի կիլո-մետր չէի գնացել, մեկ էլ ես մարդը ոչ դես, ոչ դեն, բռնեց ես կնոջը ու օրը ցերեկով մի լավ...

ՌՌԶ

} – Ի՞նչ, ի՞նչ...

ՊԱՅԾԱՌ

ԿՆՅԱԶ – Պաչեց, ինչ...

ՌՌԶ – Ի՞նչ է, մարդն իր սեփական կնոջը համբուրելու իրավունք չունի՞: Չէ, քեզ նման...

ԿՆՅԱԶ – Տո ի՞նչ կին, սիրածն էր, սիրածը: Մա՞րդ էլ իր սեփական կնոջը համբուրի: Ճի՞շտ չեմ ասում, տիկին Պայծառ:

ՊԱՅԾԱՌ – Դու սխալ բան կասե՞ս, Կնյազ ջան:

ՌՌԶ – (Կշտամբանքով) Մա-մա՛...

ԿՆՅԱԶ – Չէ, իմ զոքանչը լավ զոքանչ է: Պայծառ Արամովնա, քեզ մի հարց տամ:

ՊԱՅԾԱՌ – Ասա, Կնյազ ջան:

ԿՆՅԱԶ – Չոքանչի լավը լինո՞ւմ է ընդհանրապես...

ՊԱՅԾԱՌ – Էլի սկսեցի՞ր: Աստված, երանի իմանամ, թե սա ինչ է ուզում ինձանից:

ՌՌԶ – Քեֆդ լավ է, գիտես թե ծովը ծնկների՞ցդ է: Քեզ էին հարցնում միլիցիայից, Նուրուֆարը զանգահարեց: Ասել են, եթե ինքը չգա, մենք կգանք նրա ետևից:

ԿՆՅԱԶ – (Սթափվելով) Միլիցիայի՞ց... Ո՞ւմ ետևից, ի՞նչ...

ՌՌԶ – Չէ, հարևաններիդ:

ԿՆՅԱԶ – (Ցնցվելով) Ո՞ւր է...

ՌՌԶ – Ի՞նչը:

ԿՆՅԱԶ – (Օղի մեջ ճամպրուկ է գծագրում) Ո՞վ է վերցրել:
 ՌՈԶ – Ճամպրուկը:
 ԿՆՅԱԶ – Հա...
 ՌՈԶ – (Ծիծաղելով) Էստեղ է: (Գնում քերում է մյուս սեն-
 յակից):
 ԿՆՅԱԶ – Ո՞նց էի մոռացել, քիչ մնաց սիրտս պայթեր:
 ՌՈԶ – Էհ, բան է մնացե՞լ մեջը, որ հարցնում ես: Սա ես եմ
 հագել, խալաթը մամայի հագին է, կոստյումն էլ Հովիկս հագավ
 զնաց:
 ՊԱՅԾԱՌ – Շատ լավ բաներ էիր առել, Կնյազ ջան, շնոր-
 հակալ ենք:
 ԿՆՅԱԶ – (Բռունցքով հարվածում է սեղանին) Հանեք:
 ՌՈԶ – Ինչի՞ համար, այ տղա:
 ԿՆՅԱԶ – Հանեք, հետո կիմանաք: Հանեք, ասում եմ:
 ՌՈԶ – Ո՞նց հանենք, ախր տակից էլ ենք հագել, ո՞ր մեկը
 հանենք:
 ԿՆՅԱԶ – (Կատաղությամբ) Հանեք, բոլորն էլ հանեք:
 ՌՈԶ – Այսինքն հանվե՞նք:
 ԿՆՅԱԶ – Լրիվ:
 ՌՈԶ – Ի՞նչ պատահեց քեզ, այ տղա: (Ծիծաղում է):
 ԿՆՅԱԶ – Ոչինչ էլ չի պատահել, հանվեք:
 ՌՈԶ – Հազարից մի անգամ նվեր ես առել, հիմա էլ հետ ես
 ուզո՞ւմ:
 ԿՆՅԱԶ – Շուտ արեք:
 ՌՈԶ – Խելքդ թոցրե՞լ ես:
 ԿՆՅԱԶ – Ինձ մի խոսեցրեք, թե չէ վատ կվերջանա: Հանվեք:
 ՊԱՅԾԱՌ – Որ ասում ես պիտի հանվեք, ճարներս ինչ: (Փոր-
 ծում է գնալ):
 ԿՆՅԱԶ – (Կտրուկ) Կանգնիր:
 ՊԱՅԾԱՌ – Ինչի՞ համար, Կնյազ ջան:
 ԿՆՅԱԶ – Հանվիր:
 ՊԱՅԾԱՌ – (Խալաթը հանում է) Դե թող գնամ, որ մնացածն
 էլ հանեմ:
 ԿՆՅԱԶ – Չշարժվես:
 ՊԱՅԾԱՌ – Վույ, քոռանամ ես, իմ տարիքի կինը տղամարդու
 մոտ շոր կհանի՞:
 ԿՆՅԱԶ – Молчать.
 ՌՈԶ – Գժվե՞լ ես, ինչ է, տկլորանա՞նք օրը ցերեկով:

ԿՆՅԱԶ – Իմ գործը չի. ոնց որ առանց հարցնելու հագել եք, էնպես էլ հանեք:

ՌՌԶ – Այ տղա, դե գոնե աչքերդ փակիր:

ԿՆՅԱԶ – Ինձ համբերությունից չհանեք:

ՌՌԶ – (Չզեատը հանելով՝ փաթաթվում է սփռոցով) Մա ի՞նչ դըժբախտություն էր, որ եկավ մեր գլխին:

Մտնում է Հովիկը:

ՀՈՎԻԿ – (Անակնկալի եկած) Ի՞նչ է պատահել:

ԿՆՅԱԶ – Հանվիր:

ՀՈՎԻԿ – (Շփոթված) Ինչի՞ համար:

ԿՆՅԱԶ – Հանվիր, հետո կիմանաս:

ՀՈՎԻԿ – Տաք ջուր են տվե՞լ:

ԿՆՅԱԶ – Հա, տաք ջուր են տվել:

ՀՈՎԻԿ – Դե լավ, թող իրենք լողանան, հետո՝ ես:

ԿՆՅԱԶ – Հանվիր, բոլորդ միասին եք լողանալու:

ՀՈՎԻԿ – Ի՞նչ է պատահել, է՛: (Հանում է պիջակը, դժգոհ) Առ:

ԿՆՅԱԶ – Շալվարը:

ՀՈՎԻԿ – Մա էլ պիտի հանե՞մ:

ԿՆՅԱԶ – Բա պիտի թողնե՞ս:

ՀՈՎԻԿ – Չեմ հասկանում:

Պայծառն ու Ռոզը մերս ու դուրս են անում՝ վերադարձնելով զգեստները:

ՊԱՅԾԱՌ – Կնյազ ջան, ինչքան հագանք, շնորհակալ ենք:

ԿՆՅԱԶ – (Գազազած) Շնորհակալ եք, հա՞, պատասխան կըտաք:

ՌՌԶ – Առ, քեզ լինի, չեմ ուզում:

ԿՆՅԱԶ – (Հավաքելով զգեստները) Որ տվող լինի, լավ էլ կուզես:

ՀՈՎԻԿ – Մա, ինչի՞ համար ենք հանվում:

ՌՌԶ – Ես գիտե՞մ, որ քեզ ասեմ:

ՀՈՎԻԿ – Տատ, դու չգիտե՞ս:

ՊԱՅԾԱՌ – Իրեն հարցրու:

ՌՌԶ – (Կնյազին) Հետաքրքիր է, դու ինչո՞ւ չես հանվում:

Գիտես թե հագիդ շալվարը քեզ համար նվեր են առե՞լ:

ԿՆՅԱԶ – Լո՞ւրջ ես ասում:

ՌՌԶ – (Բռունցքով հարվածում է սեղանին) Հանիր:

ԿՆՅԱԶ – (Հանելուց հետո) Ուրի՞շ:

ՌՌԶ – Պիջակդ, կոշիկներդ:

ԿՆՅԱԶ – Սրանք էլ ես նրա միջից հանե՞լ: **(Յնորված նայում է կնոջ դեմքին):**

ՌՌԶ – **(Հարվածում է սեղանին)** Շուտ արա:

ԿՆՅԱԶ – **(Մտնելով կից սենյակը)** Մենք իսկի շոր չե՞նք ունեցել:

ՌՌԶ – Ունեցել ենք, ինչքան ուզես:

ԿՆՅԱԶ – **(Չայնը դրսից)** Բա ո՞ր է:

ՌՌԶ – Լվացքի մեքենայի մեջ:

ԿՆՅԱԶ – Ինձ էլ միանգամից մտցնեիր մեջը, պրծնեիր, էլի:

ՀՈՎԻԿ – **(Զգեստափոխված)** Աղելաիդան չի՞ զանգահարել:

ՌՌԶ – Հիմա իմ աչքին քո Աղելաիդան է գալի՞ս:

ՀՈՎԻԿ – Տատ, չի՞ զանգահարել:

ՊԱՅԾԱՌ – Չանգահարում է, բայց որ ձայնդ չի լսում, չի խոսում:

Կնյազը վերադառնում է զգեստափոխված:

ՌՌԶ – Խմիչք, խմիչք ստեղծողի տունը քանդվի, որ մերը քանդեց:

ՀՈՎԻԿ – Հայրիկ, նոր կոստյումը տուր, գոնե մի ժամով հագնեմ:

ԿՆՅԱԶ – Молчать.

ՌՌԶ – Պահ, ռուսերեն խոսողիս տեսեք: **(Հովիկին)** Փիլոյանին կասես, այ տղա, թող ճանաչի իր աշխատողին:

ԿՆՅԱԶ – Ես նրա աշխատողը չեմ, նախ և առաջ ես նրա խնամին եմ:

ՌՌԶ – Դրա համար ես փեսային տկլորացրե՞լ:

ԿՆՅԱԶ – Փեսան ո՞վ է:

ՌՌԶ – Փեսան քո տղան է, ով է:

ԿՆՅԱԶ – **(Զգեստները դասավորելով ճամպրուկում)** Տղայի հերն էլ անիծեմ:

ՌՌԶ – **(Փռշտում է)** Տեսնո՞ւմ ես, չէ՞:

ՊԱՅԾԱՌ – Ուսերիդ մի բան գցիր, չմրսես:

ՌՌԶ – Թող, թող մրսեմ, թող հիվանդանամ, թող մեռնեմ, հետո իրա հետ կխոսեմ: **(Կնյազին)** Ամբողջ տունն ուզում ես գրիպ գցես, չէ՞: Փոխանակ մի բերան ասեր՝ բարով մաշեք, եկավ հանել տվեց:

ԿՆՅԱԶ – **(Հոգուն հասած, պոռթկալով)** Բարով մաշեք, հազարը մաշեք, հարյուր հազարը մաշեք, բայց ձերը մաշեք, է՛, ձերը, ուրիշի ապրանքը որ հագել եք, ո՞վ պիտի պատասխան տա:

ՌՌՁ

} – Ուրիշի՞...

ՊԱՅԾԱՌ

ԿՆՅԱՁ – Հա, ուրիշի... Թողել էին ավտոյիս մեջ, բերեցի, որ տերը գա, տաք իրեն, տանի: Նա էլ չի եկել, ուղիղ գնացել է միլիցիա: **(Շարունակելով դասավորել)** Ես դրա հերն եմ անիծել, դա էլ իմ լավությունը:

ՌՌՁ – Ձգուշացնեիր, մատներիցս հո՞տ էի քաշել:

ԿՆՅԱՁ – Ես ձեզ չասացի՞ ուրիշի ապրանք է, ձեռք չտաք:

ՌՌՁ – Խմած չէի՞ր եկել, դրել բազմոցի կողքին ու քնել:

ԿՆՅԱՁ – Արթնացնեիր:

ՊԱՅԾԱՌ – Չի ուզեցել քունդ խանգարի, Կնյազ ջան:

ԿՆՅԱՁ – **(Ընդգծված հակակրանքով, ծամածռում է դեմքը)**

Դու մի խառնվի, դու մի խառնվի:

ՌՌՁ – Որ ասած լինեիր, իսկի կողքովը կանցնեի՞:

ՊԱՅԾԱՌ – Չէ, չես ասել, Կնյազ ջան:

ԿՆՅԱՁ – **(Նույն ձևով)** Դու սուս, սուս: **(Ռոզին)** Ասեմք թե չեմ ասել, կրակն ընկա՞: Չի կարելի, չէ՞, Ռոզ:

ՌՌՁ – **(Ցույց տալով կոշիկները)** Հիմա սրանք է՞լ հանեմ, այ անխիղճ:

ԿՆՅԱՁ – Արագ, եթե սրա միջից ես հանել, էլ ժամանակ մի կորցրու, շուտ արա:

ՌՌՁ – **(Հանում է՝ հիստերիկ շարտում)** Առ, քեզ լինի, չեմ ուզում:

ԿՆՅԱՁ – Որ տվող լինի, լավ էլ կուզես:

ՀՈՎԻԿ – **(Ուրիշ կոշիկներ տալով մորը)** Հագիր:

ՌՌՁ – **(Հագնելով)** Ապրես, տղա ջան, դու հորիցդ խելոք ես:

ԿՆՅԱՁ – **(Կոշիկները տեղավորելով ճամպրուկում)** Ռոզ ջան, սրանից լավը կառնեմ:

ՌՌՁ – Մուս, դրանից լավը չկա:

ԿՆՅԱՁ – Տո սրանից լավն էլ կա, ամենալավից լավն էլ կա, դու իմ հարազատ կինն ես, բայց պատկերացրու, որ քեզանից լավն էլ կա: Բայց ես ուրիշի կնոջ վրա աչք կզցե՞մ, որ ուրիշի ապրանքին աչք զցեմ: Ներողություն արտահայտությանս, մարդ եմք, չէ՞: Որ ասում եմ կառնեմ, ուրեմն կառնեմ:

ՌՌՁ – Չեմ ուզում, ինչո՞ւ ասացիր ինձանից լավը կա:

ԿՆՅԱՁ – Լսիր, ես ասացի, դու էլ հավատացի՞ր: Օրինակի համար եմ ասում, խենթ:

ՌՌՁ – Երե ինձ չես հավանում, գնա ինձանից լավին գտիր:

ԿՆՅԱՁ – Ինձ համար քեզանից լավը չկա:

ՌՌՁ – (Ուտքը հատակին է խփում) Կա:

ԿՆՅԱՁ – Ռոգ, իմ արև, քո արև չկա:

ՌՌՁ – Կա:

ԿՆՅԱՁ – Չկա:

ՌՌՁ – Դրա համար ես գիշերներն ուշ գալիս, հա՞:

ԿՆՅԱՁ – Ես հո իմ գլխի տերը չեմ. քշիր՝ քշում եմ, կանգնիր՝ կանգնում եմ, ժողովրդին եմ սպասարկում, փող եմ բերում տուն, ուզո՞ւմ ես՝ չգնամ գործի:

ՌՌՁ – Չէ, գնա, բայց էլ մի արի:

ԿՆՅԱՁ – Խելա՞ն է... Բա Հովիկս:

ՌՌՁ – Հովի՞կը... Հովիկս քոնը չի:

ԿՆՅԱՁ – Ի՛, ո՞նց թե իմը չի: (Հարձակվում է կնոջ վրա):

ՀՈՎԻԿ – (Փակելով ճանապարհը) Հայրիկ:

ՊԱՅԾԱՌ – Ո՞ւմ աղջկա վրա ես ձեռք բարձրացնում:

ԿՆՅԱՁ – Պայծիկ, չխառնվես, թե չէ...

Իրարանցում:

ՀՈՎԻԿ – Հայրիկ...

ԿՆՅԱՁ – Молчать.

ՌՌՁ – (Մարտի պատրաստ) Թողեք գա, տեսնեմ ինչ պիտի անի:

ԿՆՅԱՁ – (Հևալով) Բայց լավ չես անում, Ռոգ:

ՌՌՁ – Երեկ գիշեր որտե՞ղ էիր:

ԿՆՅԱՁ – Երեկ գիշե՞ր: Երեկ գիշեր: Հա, հիշեցի: Տասներկուսին մոտ էր, թեքվեցի պարկի կողմը, տեսա ճանապարհին մեկն օրորվում է: Ասացի՝ քշեմ անցնեմ, մեկ էլ խիղճս տանջեց, կանգնեցի: Բարով, խերով չհանդիպեր: Նստել է, հասցեմ չի հիշում, մինչև տեղ հասցրի, հոգիս դուրս եկավ:

ՌՌՁ – (Ուտքը զարկելով հատակին) Սուտ է:

ԿՆՅԱՁ – Ո՞ր կինը կհավատա, որ դու հավատաս: Մա գո՞րծ է: Չեք բարձրացրին՝ կանգնում եմ, քշիր՝ քշում եմ, կանգնիր՝ կանգնում եմ: Օրը հազար տեսակ մարդ է մստում, դե արի բոլորի հետ լեզու գտիր: Որ ասացի կառնեմ, կառնեմ, էլի: Բայց լավ չես անում, Ռոգ: (Նախահարձակ է լինում):

Փակում են ճանապարհը:

Մուտքի զանգ:

ԿՆՅԱՁ – (Հովիկին) Գնա տես ով է:

ՀՈՎԻԿ – Չեմ գնում:
 ԿՆՅԱԶ – Գնա, այ տղա, դու շավարով ես:
 ՌՌԶ – Հը՞, վախեցար, հա՞: Եկել եմ որ քեզ բռնեն:
 ԿՆՅԱԶ – Նստիր տեղդ:
 ՌՌԶ – Չէ, պիտի ասեմ: Ուժդ մեզ վրա է պատռ՞ում: Դե հիմա
 գնա պատասխան տուր:
 ԿՆՅԱԶ – **(Կանգնած տեղից, վախեցած) Ո՞վ է:**
 ՌՌԶ – **(Հրում է) Գնա, թե չէ ներս կկանչեմ: (Դեպի դուռը) Հա-**
մեցեք: (Ծիծաղելով) Ժողովուրդ, մի էս վախկոտին տեսեք: Գնա,
գնա, թող բռնեն, որ խելքդ գլուխդ գա:
 ԿՆՅԱԶ – Կգնամ, կգնամ, որ պրծնեմ ձեզանից: **(Գնում է):**
 ՊԱՅԾԱՌ – Միլիցիայից են եկե՞լ:
 ՌՌԶ – Փեսայիդ հետևից ուրիշ էլ որտեղի՞ց պիտի գան:
 ՀՈՎԻԿ – Ինչի՞ համար:
 ՌՌԶ – Հորդ բռնած գործերը չզիտե՞ս:
 ԿՆՅԱԶ – **(Վերադառնալով) Բարեղամն էր, մեր տակի հարե-**
վանը, ասում է՝ չեմ ուզում խանգարել ձեր ուրախությունը, մենակ թե
պարողներին զգուշացրեք, թող ուժեղ չխփեն: Ասեցի՝ Բարեղամ եղ-
բայր, գլուխներս կորցրել ենք, ազնիվ խոսք, հիմա կվերջացնենք:
Ներողություն խնդրեցի, գնաց:
 ՌՌԶ – Իմ տունը չի՞, ինչ ուզեմ կանեմ: **(Աթոռը խփում է հա-**
տակին):
 ԿՆՅԱԶ – Ռոգ:
 ՌՌԶ – Քո գործը չի: **(Շարունակում է խփել):**
 ԿՆՅԱԶ – Անհարմար է, վերջ տուր:
 ՌՌԶ – **(Խայթվածի պես) Վա՛յ, վա՛յ...**
 ԿՆՅԱԶ – Ի՞նչ պատահեց:
 ՌՌԶ – Շորերը տարար, բա տասնհինգ գրամանոց մատանին,
 որ հարսի մատին դրեցինք, ադամանդե քարով մատանին, ոսկե ա-
 պարանջանը, ոսկե ականջօղերը, տիկին Չվարթի խալաթը, գիշերա-
 նոցը, Փիլոյանի պիժաման, կոշիկները, մնացած նվերները...
(Ծնկներին խփելով) Ետ կուզես, ո՞նց չէ:
 ԿՆՅԱԶ – **(Ուշքի չեկած) Դրանք էլ են սրա մեջ եղե՞լ:**
 ՌՌԶ – Դու ես բերել, դու չզիտես, ինձ ես հարցնո՞ւմ:
 ԿՆՅԱԶ – Լսիր, ես քեզ փող չէի տվե՞լ նշանդրեքի համար:
 ՌՌԶ – Բարով եկար, ուրեմն քո տված փողով էդքան ապրանք
 կառնե՞ս: Դե գնա առ, էլի:
 ԿՆՅԱԶ – Բա դու իսկի հոգեպահուստ չես ունեցե՞լ:

ՌՌՁ – Տվե՞լ ես, որ ունենամ:
ԿՆՅԱՁ – Ուզո՞ւմ ես ուտքով-զլխով գնամ կորչեմ:
ՌՌՁ – Չէ, տնով-տեղով խայտառակ լինենք:
ԿՆՅԱՁ – Ո՞ւմ էիր վատություն արել, Կնյազ: **(Երկու ձեռքով
բռնում է գլուխը):**

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

*Փիլոյանի բնակարանը: Փիլոյանը պառկած է բազմոցին:
Կողքը նստած է Չվարթը:*
*Պատշգամբից մերթընդմերթ լսվում են հնդկահավերի
ձայներ:*
ՓԻԼՈՅԱՆ – Երկու արկղ կոնյակ. մեկը բերել են, մեկն էլ կբե-
րեն: Խմիչքը կա: Իշխան:
ՉՎԱՐԹ – Կարելի է, եթե Սևանի ջրում եփած լինի:
ՓԻԼՈՅԱՆ – Հետաքրքիր կին ես, Սևանի ջուր որտեղի՞ց ճա-
րենք:
ՉՎԱՐԹ – Սևանից:
ՓԻԼՈՅԱՆ – Սևանում ջո՞ւր է մնացել, որ բերեն: Հետո ասում
են ցամաքում է, կցամաքի, բա:
ՉՎԱՐԹ – Եղածը ջուր չի՞:
ՓԻԼՈՅԱՆ – Ջուր է, բայց Սևանի ջուր է: Սևանի ջուրը հար-
կավոր է խնայողաբար օգտագործել:
ՉՎԱՐԹ – Ուրի՞շ, հո բան չենք մոռացել:
ՓԻԼՈՅԱՆ – **(Վեր կենալով)** Չէ, մնացածը կա, անցիր գործի:
ՉՎԱՐԹ – Դրանց ձայնից արյանս ճնշումը էլի բարձրացել է,
տեղեկություն ունե՞ս:
ՓԻԼՈՅԱՆ – Դիմացիր, քիչ մնաց:
ՉՎԱՐԹ – Հինգն էլ միասին են ձայն-ձայնի տալիս, դե արի ու
դիմացիր: Առավոտյան էլ հարևաններն էին բողոքում:
ՓԻԼՈՅԱՆ – Ես տարին տասներկու ամիս հարսանիք եմ ա-
նո՞ւմ, ինչ է, նրանց կարծիքով ուրեմն աղջկաս չպիտի ամուսնաց-
նե՞մ:
ՉՎԱՐԹ – Ախր ինչո՞ւ առաջինը սրանց բերեցիր. ամեն ինչ
կար, հնդկահավե՞րն էին պակաս: Անցյալ տարի էլ էիր բերել, ո՞վ էր
լսում նրանց ձայնը:
ՓԻԼՈՅԱՆ – Լսիր, սրանք առողջ, զարգացած հնդկահավեր
են, էն սատկածների հետ ես համեմատո՞ւմ:

Հնդկահավերճ արմկում են:

ՉՎԱՐԹ – Ըհը, սկսվեց: (**Մուտքի զանգ**): Խնդրեմ, չեն թողնում, որ մարդ գոնե զանգի ձայնը լսի:

*Մտնում են Կնյազն ու Ռոզը՝ ընկճված կերպարանքով:
Ճամպրուկը Կնյազի ձեռքին է, որ աննկատ դնում է մի կողմ:*

ՉՎԱՐԹ – Համեցեք, համեցեք:

ԿՆՅԱԶ – Բարև ձեզ:

ՓԻԼՈՅԱՆ – Հազար բարի, համեցեք:

ՉՎԱՐԹ – Լավ է, որ հիշել եք:

ՌՈԶ – Մենք իսկի ձեզ կմոռանա՞նք, տիկին **Չվարթ**:

ՓԻԼՈՅԱՆ – Նստեք:

Տեղավորվում են:

Հը՞, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

ԿՆՅԱԶ – (**Հոգոցով**) Է՛խ...

ՌՈԶ – Ա՛խ...

ՓԻԼՈՅԱՆ – Հը՞, ի՞նչ է պատահել:

ԿՆՅԱԶ – Է՛, ընկեր **Փիլոյան**: Մեռած ենք ու թաղված չենք:

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ է պատահել, է՛:

ԿՆՅԱԶ – Ո՞նց ասեմ:

ՓԻԼՈՅԱՆ – Մի ուշացրու: Կնյազ...

ԿՆՅԱԶ – Մի ստիպիր, ընկեր **Փիլոյան**, խնդրում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – (**Կշտամբանքով**) Է՛լի՞ ընկեր **Փիլոյան**:

ԿՆՅԱԶ – Գևորգ ջան, խելք է մնացե՞լ: Եթե հիմա հարցնես, իմ անունն էլ չեմ հիշի, թե որ հիշեցի, ասա՝ ամոթ քեզ, Կնյազ:

ՉՎԱՐԹ – Գևորգ, իսկ դու չես կարո՞ղ օգնել:

ՓԻԼՈՅԱՆ – Ինչու չէ, խնդրեմ, պատրաստ եմ, ինչպես միշտ:

ԿՆՅԱԶ – Չէ, տիկին **Չվարթ**, ընկեր **Փիլոյանից** շատ շնորհակալ եմ, սա ուրիշ գործ է:

ՉՎԱՐԹ – Չուր եք կարծում, ամուսինս մեծ շրջապատ ունի:

ԿՆՅԱԶ – Շրջապատն էլ չի օգնի, ոչ մեկն էլ չի օգնի, տիկին

Չվարթ:

ՓԼԻՈՅԱՆ – Մխալ բաներ մի ասա, աշխարհում ոչինչ չկա անհնար:

ԿՆՅԱԶ – Կա, ընկեր **Փիլոյան**, կա, նայած ում համար:

ՓԻԼՈՅԱՆ – Չեմ հասկանում, գուցե գաղտնի՞ք է:

ԿՆՅԱԶ – Ես քեզանից գաղտնիք կպահե՞մ, երանի չէր գաղտնիք լիներ: Անտերը վատ երազ էլ չէի տեսել, շառը որտեղի՞ց եկավ փաթաթվեց, չհասկացա: Ռոզ, դու տեսե՞լ էիր:

ՌՈՁ – (Թևաթափ) Որտեղի՞ց: Շատ հանգիստ քնել էի:
ԿՆՅԱՁ – Դուք տեսե՞լ էիք, տիկին Չվարթ:
ՉՎԱՐԹ – Ամբողջ գիշեր աչք եմ փակե՞լ այդ անհրավների
ձայներից: Անընդհատ ակնկույտ եմ, անընդհատ:
ԿՆՅԱՁ – Ովքե՞ր:
ՓԻԼՈՅԱՆ – Հնդկահավերի մասին է ասում: Վաղը, վաղը
վերջնականապես կլռեն: Կնյազ, լսում եմ:
ԿՆՅԱՁ – Մի ստիպիր, էլի, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Էլի՞ ընկեր Փիլոյան:
ԿՆՅԱՁ – Գևորգ ջան, ախր ինչ ասեմ, ես չէի՞ ուզում քո առաջ
պարզերես լինել:
ՓԻԼՈՅԱՆ – Լավ, էլ չեմ հարցնում:
ԿՆՅԱՁ – (Բռնկվելով) Ինչո՞ւ չես հարցնում, ընկեր Փիլոյան, էլ
ո՞վ ունեմ հարազատ, որ ձեզ չասեմ, ո՞ւմ պիտի ասեմ: Հը՞, ասե՞մ, թե
չասե՞մ:
ՓԻԼՈՅԱՆ – Ասա:
ԿՆՅԱՁ – Չէ, որ ասում ես՝ ասա, չեմ ասի:
ՓԻԼՈՅԱՆ – Լավ, մի ասա:
ԿՆՅԱՁ – (Պռոթկալով) Ինչո՞ւ չասեմ, պիտի ասեմ, ես իրա-
վունք չունեմ քեզ չասելու: Բայց ախր ո՞նց ասեմ, ընկեր Փիլոյան:
Հիշո՞ւմ եք, որ եկանք Ադելաիդային նշանելու... Ռոզ, կարո՞ղ է ինձ
մի բան պատահի:
ՌՈՁ – Պատահածը քիչ է, էլի՞ պատահի:
ՉՎԱՐԹ – (Չեռքերը կանթել-կանգնել է՝ հարձակողական կեց-
վածքով) Որ եկաք Ադելաիդային նշանելու... Հետո՞:
ԿՆՅԱՁ – Ինչի՞ համար ես նեղանում, տիկին Չվարթ, ես մեղք
ունե՞մ:
ՉՎԱՐԹ – Եթե իմ աղջկա անունը չհուլովվեր, չէի պահանջի:
Հիմա պետք է ասեք:
ՓԻԼՈՅԱՆ – (Լարված) Անպայման:
ԿՆՅԱՁ – Կասեմ, ես ասացի չեմ ասի՞: Կասեմ, տիկին Չվարթ,
կասեմ:
ՌՈՁ – Ադելաիդայի հետ, ախր, իսկի կապ չունի, ընկեր Փիլո-
յան:
ՓԻԼՈՅԱՆ – Ավելորդ ժամանակ եմք կորցնում:
ՌՈՁ – Դե դու էլ կարճ կապիր, ի՞նչ ես երկարացնում:
ԿՆՅԱՁ – Հա, որ եկանք Ադելաիդային նշանելու...
ՉՎԱՐԹ – (Կատաղությամբ) Հետո՞...

ԿՆՅԱԶ – Ախր ինձ մի ընդհատեք, տիկին Չվարթ, մտքիս թելը կտրում եք: Հա, ուրեմն, որ եկանք Ադելաիդային նշանելու... Դուք հոգեբան եք, ընկեր Փիլոյան, դուք ինձ կհասկանաք: Հա, ուրեմն, որ եկանք Ադելաիդային նշանելու... **(Հանդիմանանքով)** Ախ, Ռոզ, Ռոզ...

ՌՌԶ – (Լացով) Ասա, ասա, իմ մեղքը շատ է:

ԿՆՅԱԶ – Ախր դու ինչ անես, որ իմանայիր, իսկի մեջտեղ կհանեի՞ր: Կնյազի ձեռքը չոր քարի տակ էր մնացել: Մատանի չէի՞ կարող առնել, ոսկե ապարանջան չէի՞ կարող առնել, ոսկե ականջօղեր չէի՞ կարող առնել, տիկին Չվարթի համար խալաթ չէի՞ կարող առնել, ընկեր Փիլոյանի համար պիժամա չէի՞ կարող առնել, կոշիկ չէի՞ կարող առնել... **(Ռոզին, ցույց տալով Փիլոյանի կոշիկները)** Սրա՞նք են...

Ռոզը գլխով է անում:

Ի՞նչ, ի՞նչ չէի կարող առնել: Հենց դրանցից կառնեի՞: Ընկեր Փիլոյան, մեզ պիտի ներեք: Բարեկամները նեղ օրվան են հասնում:

ՉՎԱՐԹ – Կարծես մենք դեռ բարեկամներ չենք:

ՓԻԼՈՅԱՆ – Հարց է, կլինե՞նք, թե՞ չենք լինի: **(Դուրս է գնում):**

ԿՆՅԱԶ – Մեզ հետ դժբախտություն է պատահել, տիկին Չվարթ, խնդրում եմ, ասա իրեն, թող մեզ ների:

ՉՎԱՐԹ – Մենք հարսանիքի պատրաստություն ենք տեսնում, մարդիկ ենք հրավիրում, իսկ դուք գալիս հետ եք վերցնում նշանը: Ներե՞լ. ո՞ւմ ներել: Մա դատի գործ է: Ո՞վ է ձեզ ասել, որ իմ աղջիկը մի անգամ ամուսնացած է եղել, չարախոսներին եք հավատո՞ւմ:

ԿՆՅԱԶ – Ո՞վ է հետ վերցնում նշանը, տիկին Չվարթ, բա ես ինձ թույլ կտա՞մ, ներողություն արտահայտությանս, մենք էլ մարդ ենք, չէ՞:

ՉՎԱՐԹ – Աղջկաս բախտի հետ եք խաղում, հա՞, պատասխան կտաք: **(Հանում է խալաթը՝ շարտելով Կնյազի երեսին):**

ՌՌԶ – Կույտուրական կին ես, որ մի քիչ կամաց գցես, չի լինի՞:

ԿՆՅԱԶ – Կներես, տիկին Չվարթ: **(Խալաթը դնում է ճամպրուկի մեջ):**

ՉՎԱՐԹ – Ես ձեզ զրկում եմ ինձ հետ խոսելու իրավունքից:

ՓԻԼՈՅԱՆ – **(Վերադառնում է՝ ձեռքին քիչ առաջ հագած պիժաման և կոշիկները)** Խնդրեմ, կարող եք վերցնել:

ԿՆՅԱԶ – Ախր ո՞նց վերցնեմ, ընկեր Փիլոյան, ձեռքս չի գնում, է՞: **(Դնում է ճամպրուկի մեջ):**

ՓԻԼՈՅԱՆ – Ադելաիդա՞...

Մտնում է Աղեյախոյան:

Հանիր մատանին: Իսկույն ևեթ: **(Գագազած ետ ու առաջ է քայլում)** Ո՞ւմ ես սպասում:

ԶՎԱՐԹ – Վերադարձրու, բալիկս, նրանք արժանի չեն քեզ:

ՓԻԼՈՅԱՆ – Աղեյախոյան...

ԿՆՅԱԶ – Աղեյախոյան ջան, ես քեզ խոսք եմ տալիս, որ ամենալավն առնեմ, ամենաթանկը, որը որ սիրտդ ուզի: Ռոզ, ճիշտ չեմ ասո՞ւմ:

ԶՎԱՐԹ – Ուշ է, այլևս ուշ է, որ խնդրեք էլ, աղաչեք էլ, միևնույն է, մա ինքը չի դնի մատին: Իմ աղջիկն է, ես գիտեմ:

ՓԻԼՈՅԱՆ – **(Բռունցքով հարվածում է սեղանին):** Հանիր:

Աղեյախոյան արագ հանում է մատանին, պոկոտում է ականջօղերը՝ հանձնելով Կնյազին: Փղձկում է՝ փաթաթվելով հորը:

ԿՆՅԱԶ – **(Ռոզին)** Ապարանջանը մնաց:

ՓԻԼՈՅԱՆ – **(Հոխորտալով)** Ի՞նչ է ասում:

ԿՆՅԱԶ – **(Չեռփի վրա ապարանջան գծագրելով)** Ապա, ապա...

ՓԻԼՈՅԱՆ – Ի՞նչ՝ ապա, ի՞նչ՝ ապա...

ԿՆՅԱԶ – Ապարանջանը...

ԶՎԱՐԹ – **(Աղեյախոյանին)** Ապարանջանը մոռացար:

Աղեյախոյան հանում է ապարանջանը՝ վերադարձնելով Կնյազին:

ԿՆՅԱԶ – Ընկեր Փիլոյան, ախր հիշո՞ւմ եք էն ճամպրուկը...

ՓԻԼՈՅԱՆ – **(Ընդհատելով)** Սա ինչ-որ ճամպրուկ է ուզում, ճամպրուկ էլ տվեք, թող գնա: **(Գնում է):**

ՌՈԶ – Չէ, չէ, չի ուզում...

ԶՎԱՐԹ – Թյու, ամամոթներ **(Դուրս է գնում):**

Աղեյախոյան գնում է ետևից:

Կնյազը ճամպրուկը դնում է ուսին՝ մոլորված կանգնելով սենյակի կենտրոնում: Ըստ կարգի պտույտներ գործելուց հետո գնում է՝ հիշեցնելով թաղման արարողություն: Նրա ետևից գնում է Ռոզը՝ թաշկինակը սեղմելով աչքերին:

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Փիլոյանի աշխատասենյակն ավտոպարկում: Մտնում է Կնյազը:

ԿՆՅԱԶ – Հարգանքներիս հավաստիքը: Տեղում է:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Իհարկե, իհարկե, ձեզ համար միշտ էլ տեղում է:

ԿՆՅԱԶ – Բարև ձեզ, ընկեր Փիլոյան: Կարելի՞ է:

ՓԻԼՈՅԱՆ – Ոչ:

ԿՆՅԱԶ – (Դառնալով Նունուֆարին) Տեղում չի՞:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – (Մոտենալով) Տեղում չե՞ք, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Ոչ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Դուք ասացիք՝ Կնյազը երբ գա, միշտ տեղում եմ:

ՓԻԼՈՅԱՆ – Հիմա էլ ասում եմ՝ տեղում չեմ, պա՞րզ է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ – Չգիտեի, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Չգիտեիր, իմացիր:

ԿՆՅԱԶ – Դե լավ, որ եկել եմ, հարցնեմ, նոր գնամ:

ՓԻԼՈՅԱՆ – Ընկեր, մի խանգարեք:

ԿՆՅԱԶ – Գևորգ ջան, երկու բառ:

ՓԻԼՈՅԱՆ – Գևորգը դու ես, դուրս գնա:

ԿՆՅԱԶ – Ավտոյիս բանալին ձեռքիցս վերցրին, ո՞ր գնամ, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Հեռացված եք աշխատանքից, ընկեր, ազատեք սենյակը:

ԿՆՅԱԶ – Ի՛, լուրջ է ասում: Անմեղ տեղը գնալի նստեի՞:

ՓԻԼՈՅԱՆ – Անձնական հարցերը գնացեք տանը լուծեք, սա հիմնարկությունն է:

ԿՆՅԱԶ – Հեռացրել եք, լավ եք արել, պատճառը չիմանա՞մ, ընկեր Փիլոյան:

ՓԻԼՈՅԱՆ – Պատճառը քո մեջ որոնիր:

ԿՆՅԱԶ – Ախր եթե վատ աշխատող լինեմ, կասեմ՝ Կնյազ, վատ աշխատող ես, բայց ես լավ աշխատող եմ, ընկեր Փիլոյան, ինչի՞ համար եք հեռացրել:

ՓԻԼՈՅԱՆ – Երթևեկության կանոնները խախտելու, ուղևորներին կոպտելու, դրամի մանրը չվերադարձնելու, ղեկավարությանն անձնական վիրավորանք հասցնելու... Էլի՞ թվեմ, հա՞:

ԿՆՅԱԶ – Չէ, բավական է, հրամանիս պատճենը տվեք, գնամ:
ՓԻԼՈՅԱՆ – Պրոֆիտությունը մինչև իր համաձայնությունը չտա, պատճենը չեք ստանա:
ԿՆՅԱԶ – Ազնիվ խոսք, ես լավ աշխատող եմ, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Ձեզ նման լավ աշխատողներ մեզ պետք չեն:
Դուք պարկի հեղինակության հետ եք խաղում, ձեզ համար ոչ մի սրբություն գոյություն չունի, ոչ մի: **(Մեղմում է զանգի կոճակը):**
ԿՆՅԱԶ – **(Նստելով)** Այ, ինչ եմ ասել քննադատությանը, ինչ-քան ուզում եք քննադատեք, թե չընդունեմ, ասեք՝ ամոք քեզ, Կնյազ:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – **(Ներկայանալով)** Լսում եմ:
ՓԻԼՈՅԱՆ – Ընկերոջն ասեք ազատի սենյակը:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր, ազատեք սենյակը:
ԿՆՅԱԶ – Դու ինչի՞ համար ես ասում, թող ինքն ասի:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինքն զբաղված է, ես եմ ասում, դուրս եկեք:
ԿՆՅԱԶ – Դու գնա, ես կգամ:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան, դուրս չի գալիս:
ՓԻԼՈՅԱՆ – Իմ գործը չի, ասված է, ուրեմն դուրս հրավիրեք:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր, մի ստիպեք, որ ուրիշ միջոցի դիմեն:
ԿՆՅԱԶ – Թող ինքն ասի, գնամ:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ընկեր Փիլոյան, խնդրում եմ, դուք ասեք:
ՓԻԼՈՅԱՆ – Ինչո՞ւ անպայման ես, իսկ դուք ինչի՞ համար եք:
ՆՈՒՆՈՒՖԱՐ – Ինձ չի լսում:
ՓԻԼՈՅԱՆ – Ինչո՞վ եք համոզված, որ ինձ կլսի:
ԿՆՅԱԶ – Բա եղա՞վ, ընկեր Փիլոյան, որ դուք ասեք գնա մեռի, ես չեմ գնա՞: Ուրեմն մենք մի օրվա՞ համար ենք: Դե ասեք, դե ասեք, էլի, տեսեք գնում եմ, թե չեմ գնում: Գնա՞մ, ընկեր Փիլոյան:
ՓԻԼՈՅԱՆ – Գնա:
Կնյազը կտրուկ վեր է կենում, գնում է, անմիջապես վերադառնում:
ԿՆՅԱԶ – Ի՞, ուրեմն գնամ մեռնե՞մ:
ՓԻԼՈՅԱՆ – Արագացրեք: Ո՞ւմ եք սպասում, ընկեր:
ԿՆՅԱԶ – Կնյազը շատ բան գիտի, ընկեր Փիլոյան, հրամանս հետ վերցրեք, ձեզ համար եմ ասում:
ՓԻԼՈՅԱՆ – Յուրացրել ես ուղևորի ճամպրուկը, հանցագործ:
ԿՆՅԱԶ – Տարել հանձնել եմ, ընկեր Փիլոյան, ես գող չեմ, ես պատիվ կպահանջեմ, ներողություն արտահայտությանս, մենք էլ մարդ ենք, չէ՞:
ՓԻԼՈՅԱՆ – **(Նունուֆարին)** Չանգահարեք միլիցիա:

ԿՆՅԱԶ – Հա, հա, թող զանգահարի:
ՆՌԻՆՈՒՖԱՐ – (Վերցնում է լսափողը) Ալլո, միլիցիա...

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

*Կայարան: Հովիկն ու Ադելաիդան սպասում են գնացքին:
Նրանց առջև դրված են ճամպրուկներ:*

ՀՈՎԻԿ – Եթե փորձեն խանգարել:

ԱԴԵԼԱԻԴԱ – Երևի նրանք չեն գգում, որ մենք սիրում ենք
իրար:

ՀՈՎԻԿ – Ոչինչ, հետո կզգան:

ԱԴԵԼԱԻԴԱ – Նրանց թվում է, որ այդպես հեշտությամբ կա-
րող ենք բաժանվել, դրա համար էլ միջամտում են: Ախր ինչո՞ւ...

ՀՈՎԻԿ – Որովհետև նրանց այդպես է պետք:

*Չախից հայտնվում է Ռոզը, նրան հետևում է Կնյազը:
Աջից մտնում է Ջվարթը:*

ԿՆՅԱԶ – Կայարան եք եկել, հա՞:

ՋՎԱՐԹ – Ադելաիդա, աղջիկս: (Հեկեկում է՝ գլուխը հենելով
նրա կրծքին):

ԱԴԵԼԱԻԴԱ – Հանգստացիր, մամա:

ՌՈԶ – Այ տղա, Հովի՞կ, էդ ո՞ւր:

Հովիկը թոթվում է ուտերը:

Որ ես լաց չեմ լինում, ուրեմն ես սիրտ չունեմ, հա՞: (Սկսում է
աղեկատուր լացը՝ գլուխը հենելով տղայի կրծքին):

ԿՆՅԱԶ – Ռոզ, այ Ռոզ, անհարմար է, ժողովուրդը նայում է:

ՌՈԶ – Ինձ անհարմար է, նրան անհարմար չի՞: (Շարունակում
է լացը):

ԿՆՅԱԶ – Այ կին, ես նրա հետ ինչ գործ ունեմ, իմ կինը դո՞ւ ես,
թե՞ նա: Ռոզ, Ռոզ, կարո՞ղ է իսկականից ես լաց լինում:

Ռոզը գլխի շարժումով հաստատում է:

Լավ, բավական է, մի քիչ հանգստացիր: Ռոզ, քեզ հետ եմ:

ՌՈԶ – Մինչև ինքը չլռի, ես չեմ լռի:

ԿՆՅԱԶ – (Չվարթին) Ընկերուհի, ընկերուհի, խնդրում եմ դուք
լռեք, որ իմ կինը լռի: Ընկերուհի... Ես ձեզ կարգի եմ հրավիրում:

ՋՎԱՐԹ – Ավելի լավ է դուք ձեր կնոջը կարգի հրավիրեք:

ԿՆՅԱԶ – Մեր անկարգությունը ձեր անկարգությունից է գա-
լիս: Իմ կինը եթե լաց լինող չտեսնի, ինքը լաց չի լինի: Դուք եք ան-

հատական լաց լինում, նա խմբակային է լաց լինում: **Ճիշտ չի՞, Ռոզ:**
(Զվարթին) Ընկերուհի...
 ՓԻԼՈՅԱՆ – **(Մտնելով)** Ի՞նչ է, ընկեր:
 ԿՆՅԱԶ – **(Ոտքից գլուխ չափելով Փիլոյանին)** Ոչինչ, ընկեր...
(Հովիկին) Հետ դարձիր, քանի շուտ է:
 ՀՈՎԻԿ – Ինչի՞ համար:
 ԿՆՅԱԶ – Կգնանք տուն, կիմանաս:
 ՌՈԶ – Հորդ աշխատանքից հեռացրել է:
 ԿՆՅԱԶ – Ո՞վ է հեռացրել, նրա հեռացնելով է:
 ՌՈԶ – Առանց պրոֆմիթյան մարդ են հեռացնում, դատ կա,
 դատարան կա, գերագույն դատարան կա, ես կթողնե՞մ, որ քո մազին
 դիպչեն:
 ՓԻԼՈՅԱՆ – Տիկին, կայարանում տեսարաններ մի սարքեր:
 ՌՈԶ – **(Հովիկին)** Ուղիղ գնում ենք տուն, էլ չխոսես:
 ԿՆՅԱԶ – Միլիցիա էր կանչում, որ հորդ բռնել տա, խելքդ գլու-
 խըդ հավաքիր:
 ՌՈԶ – **(Նախահարձակ լինելով, Փիլոյանին)** Ո՞ւմ մարդու վրա
 ես միլիցիա կանչում: Համ հեռացնում ես, համ էլ միլիցիա ես կան-
 չո՞ւմ:
 ՓԻԼՈՅԱՆ – Տիկին...
 ՌՈԶ – Զո միլիցիան է, մեր միլիցիան չի՞:
 ԿՆՅԱԶ – Ռոզ, հազիվ եմ ինձ գսպում, Հովիկին համոզիր, թող
 չգնա:
 ՌՈԶ – Որ խնդրեն էլ, աղաչեն էլ, իմ տղան չի գնա:
 ԶՎԱՐԹ – Եթե կարծում եք, թե իմ աղջիկը կգնա, սխալվում եք:
(Հիստերիկ) Տրա-տա-տատա-տա:
 ՌՈԶ – **(Կնյազին)** Իրեն ասա՝ ես քեզ հետ խոսո՞ւմ եմ, որ դու
 ինձ հետ խոսում ես: **(Զվարթին)** Տրա-տա-տա-տա-տա...
 ԿՆՅԱԶ – Իմ կինը ձեզ հետ խոսո՞ւմ է, որ դուք իրա հետ
 խոսում եք: Տրա-տա-տատա-տա...
 ԶՎԱՐԹ – Ես նրա հետ չեմ խոսում, ես ձեզ հետ եմ խոսում:
(Դեպի Ռոզը) Տրա-տա-տա-տա-տա...
 ՓԻԼՈՅԱՆ – Դու ոչ մեկի հետ մի խոսիր, դու ինձ հետ խոսիր:
 ԶՎԱՐԹ – **(Աղելախոյախին)** Շտապիր, մենք տուն պետք է
 գնանք:
 ԱԴԵԼԱԻԴԱ – Դուք չեք ուզում, որ ես ասեմ այն, ինչ մտածում
 եմ:
 ԶՎԱՐԹ – Մենք հո քո վատը չենք ցանկանա, բալիկս:

ՓԻԼՈՅԱՆ – Աղելախոյ, սպասում ենք:
ԿՆՅԱԶ – (Հովիկի) Լսիր, աշխատանքից հեռացված մարդ
եմ, ես ավելորդ փող չունեմ, տոմսերը տար հետ տուր, չկորչեն:
ՀՈՎԻԿ – Չեն կորչի:
ՌՈԶ – Գնացքը շարժվելու վրա է, դու ասում ես չեն կորչի՞:
Շուտ արա:
ՀՈՎԻԿ – Հետ չեն վերցնի:
ՌՈԶ – Տուր, տուր մի տեսնեմ, ո՞նց չեն վերցնի, ինձանից չեն
վերցնի՞, չեն էլ խնդրի՞:
ԶՎԱՐԹ – Իմ աղջիկն է, ես գիտեմ, մինչև իրենց տղան չհեռա-
նա, նա չի գա:
Հովիկն ու Աղելախոյն աննկատ գնում են:
ԶՎԱՐԹ – (Անակնկալի եկած) Աղելախոյ...
ՌՈԶ – (Շփոթված) Հովիկ...
*Նկատելով, որ գնացել են, ձեռքերը թափահարելով վա-
զում են նրանց ետևից, ապա վերադառնում են հաշտված՝ թե-
վանցուկ, համբուրելով մեկը մյուսին:*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

1972 թ.

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝
ԵՐԿՈՒՄԻՑ
ՄԻՆՉԵՎ ՎԵՑԸ**

(Տրագիկոմեդիա՝ երկու մասից)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Չ Ի Ն Ք

Պայուսակով տղամարդ՝ չորս երեխայով, փոքրը՝ աղջիկ
Կաշվե բաճկոնով տղամարդ
Շլյապայով տղամարդ
Կապույտ վերնաշապիկով տղամարդ
Գլխահակ տղամարդ
Չսափրված տղամարդ
Միջահասակ կին
Քարտուղարուհի
Պատերազմի վետերան
Ծեր հայր
Ծեր մայր
Նրանց ավագ որդին
Կրտսեր որդին
Նրանց աղջիկը
Առաջին ամուսին
Նրա կինը
Երկրորդ ամուսին
Նրա կինը
Շիկահեր կին՝ տկարամիտ տղայի հետ
Երիտասարդ կին
Երիտասարդ
Թխադեմ տղամարդ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Ղեկավարի ընդունարանը՝ նրա առանձնասենյակի վրա բացվող մեծադիր դռնով: Կից՝ էլեկտրոնային ցուցատախտակ. «Ընդունելության օրը՝ ուրբաթ. ժամը 14.00–18.00-ը»: Դռան հարևանությամբ գրասեղան՝ Քարտուղարուհիով: Պատերի տակ շարված փափուկ աթոռներ և մի բազմոց, որոնք հիմնականում զբաղված են: Մի շարքում՝ Ծեր հայրը և Ծեր մայրը, Ավագ որդին, Միջահասակ կինը, Շիկահեր կինը և նրան հենված տկարամիտ տղան, որը շարունակ ծածանում է ձեռքի դրոշակը, Կապույտ վերնաշապիկով տղամարդը, Առաջին ամուսինը և նրա կինը:

Բազմոցին՝ Պայուսակով տղամարդը՝ չորս երեխաների հետ: Մյուս շարքում՝ Երկրորդ ամուսինը և նրա կինը, Չսափքրված տղամարդը՝ իրեն չափերով չհամապատասխանող հագուստով, աջ աչքի տակ՝ կապտուկ, Վետերանը՝ ձեռնափայտով, կուրծքը զարդարված մեդալներով և շքանշաններով, Գըլխահակ տղամարդը՝ աչքերը մեծ մասամբ փակ, Շյապայով տղամարդը՝ թղթապանակը սեղմած թևի տակ: Առանձին աթոռի վրա նստած է Թխադեմ տղամարդը, որը երբեմն-երբեմն հոտոտում է օդը: Մի կողմ քաշված, կանգնած է Երիտասարդ կինը, որ խաղում է ձեռքի պայուսակի շղթայի հետ, բերանում՝ ծամոն:

Գլխահակ տղամարդը հանկարծակի ցնցվում է՝ նայելով շուրջը: Խլրտում է անցնում շարքերի միջով: Կանգնում է, նորից նստում: Այցելուները աստիճանաբար հավաքում են իրենց:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Կապույտ վերնաշապիկով տղամարդուն) Ներեցեք, ձեզնից առաջ ո՞վ է:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ես եմ:

ՎԵՐՆԱՇԱՊԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ինքն է:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես ձեզնից հետո եմ:

Կապույտ վերնաշապիկով տղամարդը գլխի թեթևակի շարժումով հաստատական նշան է անում: Հեռախոսի զանգ:

**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Լսափողի մեջ) Ընդունելություն է: (Դը-
նում է լսափողը):**

*Իրեն կորցրած ներս է ընկնում Կաշվե բաճկոնով մի
տղամարդ. մղվում է դեպի դուռը: Այցելուները խառնվում են
հրաբ: Քարտուղարուհին փակում է նրա ճանապարհը:*

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մի բուպե, մի բուպե...

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Հևալով, անզիջում) Չէ՛, չէ՛, ես
պիտի մտնեմ, պիտի մտնեմ:**

ՎԵՏԵՐԱՆ – Թույլ չտաք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ոչ մի դեպքում:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Մարդիկ ցատած սպասում են:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հերթ գոյություն ունի:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մպասեք մի բուպե:

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Չնահանջելով) Չեմ կարող, չեմ
կարող:**

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Չի կարելի, ընկեր:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Հեո, հեո գնացեք:

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԴ – Չթողնեք:

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Հաստատակամ) Ոչ, պիտի մըտ-
նեմ:**

**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Իսկ ես ձեզ ասում եմ, որ չպիտի մտնեք,
պա՞րզ է:**

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ես էլ ասում եմ՝ պիտի մտնեմ:

**ԱՎԱԳ ՈՐԴԻ – (Տարակուսանքով թոթվելով ուսերը) Սա ի՞նչ
բան է:**

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Հիմա էլ էստե՞ղ...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մպասեք, ձեր հերթը կգա, կմտնեք:

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Հետո ուշ կլինի, ես հիմա պիտի
մտնեմ:**

**ՎԵՏԵՐԱՆ – (Բորբորված) Իսկ մենք էստեղ ինչի՞ համար ենք
ցատած:**

**ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Եթե ես հիվանդ երեխայիս հետ ցատել սպա-
սում եմ, դուք ինչո՞ւ պիտի մտնեք:**

**ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ուր գնում ես՝ նույն բանը... Այսինքն՝ չեմ
զարմանում:**

**ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Ակնարկելով Ծեր հորը և Ծեր մորը)
Այս մեծահասակ մարդիկ ցատած՝ դո՞ւք մտնեք:**

**ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – (Ցույց տալով Պայուսակով տղա-
մարդուն) Չե՞ք տեսնում, մարդը երեխաների հետ մտած սպա-
սում է:**

ՆՐԱ ԿԻՆԸ – Նստած սպասում է:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Չեմ էլ ամաչում: Այսինքն՝ ինչո՞ւ եմ
զարմանում, որ...

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Իրեն կտրատելով) Բայց դուք
չգիտեք, չգիտեք ես ինչի համար եմ մտնում:**

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Ինչի համար ուզում է լինի, չլսեցի՞ք,
հերք գոյություն ունի:

**ՆՐԱ ԿԻՆԸ – (Միշտ կրկնելով ամուսնուն) Հերք գոյություն
ունի:**

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Եթե մարդը իրեն թույլ է տալիս՝ ի՞նչ ասես,
ախր ի՞նչ ասես, ինքն իրեն պիտի թույլ չտա:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այսքան մարդիկ այստեղ մտած...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մեզ են արհամարհում:

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Կուրծք ծեծելով) Ես չեմ կարող
սպասել, ազնիվ խոսք, հետո ուշ կլինի, երդվում եմ:**

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Այդպիսի բան մի ասեք, ի սեր
Աստծո:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ի սեր Աստծո, այդպիսի բան մի ասեք:

**ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Խոսքը մեկը մյուսից խլելով) Ո՞վ է մե-
ղավոր:**

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ եմ մեզ ասում:

ԹԻՍԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԳ – Ինչո՞ւ պիտի ձեզ համար ուշ լինի,
մեզ համար ուշ չլինի: Չթողնեք...

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Ախր ի՞նչ ասես, ի՞նչ ասես, ինքն իրեն պիտի
թույլ չտա:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Այսինքն՝ ինչո՞ւ եմ զարմանում, որ...

**ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Այցելուներին) Բայց մենք չգի-
տենք, թե ինչ է պատահել:**

**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Գուռը պահպանելով) Ի՞նչ կարևոր է,
չպիտի մտնի և վերջ:**

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Հերք գոյություն ունի:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Այո, իհարկե:

ՎԵՏԵՐԱՆ – Հո՞ւ էդպես չի կարգը:

**ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – (Գառը հեզմանքով, միշտ դժգոհ)
Կարգ... Ի՞նչ կարգ...**

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Հետո ուշ կլինի, շենքը փլվում է, ես պիտի մտնեմ:

Խուճապ, ճիչ, հարայ-հրոց, փրկվելու բնազդով փախուստ դեպի դուրս:

ՎԵՏԵՐԱՆ – (Ոտքը քարշ տալով, գնալով դեպի մուտքը) Ո՞ւր է, որ փլվում է:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Խառնված) Հետ եկեք, հետ եկեք:

ԱՎԱԳ ՈՐԳԻ – (Դեպի դուրս ուղեկցելով ծեր ծնողներին)

Ինչո՞ւ մենք չենք գգում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Լացով) Տեղ տվեք՝ երեխասս անցնի:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Ընդհանուր աղմուկի մեջ քարծրացնելով ձայնը) Հետ եկեք, հետ եկեք, մի գնացեք, սա՛ չի փլվում, մեր շենքն է փլվում, մեր... Որտեղ որ ես բնակվում եմ՝ դա է փլվում:

Իրարանցումն աստիճանաբար դադարում է: Այցելումները վերադառնում են իրենց տեղերը:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – (Բաճկոնով տղամարդուն, հանդիմանալով) Դե էդպես ասեք:

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԳ – (Հարձակողական) Իսկ ինչո՞ւ եք ուրիշ բան ասում:

ՎԵՐԵԱՇԱՊԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Կանոնավորելով շնչառությունը, ինքն իրեն) Ինչ որ տեսել էի՝ մի անգամ էլ տեսա:

ԵՐԿՐՈՐԳ ԱՄՈՒՄԻՆ – (Բաճկոնով տղամարդուն) Դուք իրավունք չունեք մարդկանց ահաբեկելու, այստեղ երեխաներ կան:

ՆՐԱ ԿԻՆԸ – Այստեղ երեխաներ կան, դուք իրավունք չունեք ահաբեկելու:

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Ինչո՞ւ եք խուճապ առաջացնում ժողովրդի մեջ: Հայրիկ, նստիր: Մամ, նստիր:

ՎԵՏԵՐԱՆ – (Բաճկոնով տղամարդուն, նույն մոլեգնությամբ) Պրովոկացիաներ մի՛ սարքեք:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Դուք ինձ չհասկացաք, ես ի՞նչ մեղք ունեմ:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Իսկ ո՞վ ունի, եթե դուք չունեք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – (Քարտուղարուհուն) Ձեզ մոտ վոլեդոլ կլինի՞:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Կարգի բերելով իրեն) Որտեղի՞ց...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ես ներողություն եմ խնդրում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Այլևս ուշ է, ավելի լավ է՝ մի խնդրեք:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – (Չհանդարտվելով, հեզմալից) Ներողութիւն... Ի՞նչ ներողութիւն...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Եթե հիմա չմիջամտեն, հետո ուշ կլինի, երդվում եմ: Ես իմ ձայնն ում որ տվել եմ՝ նրանից պիտի պահանջեմ, քա ո՞ւմից պահանջեմ:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Մենակ դո՞ւ ես տվել:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Մենք չենք տվել, մենակ դո՞ւ ես տվել:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ո՞վ չի տվել, մենք չե՞նք տվել:

ՎԵՐՆԱՇՏԱՊԻԿՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Ես չե՞մ տվել...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Վերջացրեք, անհարմար է:

ՎԵՏԵՐԱՆ – Ե՛ս, ե՛ս, չե՞մ տվել:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ո՞վ չի տվել...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Մեր մեջ կա՞ մեկը, որ տված չլինի:

ՆՐԱ ԿԻՆԸ – Կա՞ մեկը, որ տված չլինի:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Անհարմար է, վերջացրեք, ասում եմ...

ԹԻԱԳԵՄ ՏՂԱՍՄԱՐԴ – Իմ տեղն էլ են տվել, իմ, իմ...

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Եթե տված չլինեինք, ի՞նչ գործ ունեինք էստեղ:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ո՞վ չի տվել, մենք չե՞նք տվել...

ԵՐԻՏԱՍՄԱՐԴ ԿԻՆ – Եթե տված չլինեինք, էլ ինչո՞ւ ենք եկել:

Ժխոր է առաջանում:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – (Բարձրացնելով ձայնը) Ես չասացի, թե դուք չեք տվել, ես իմ անունից եմ խոսում, իրավունք չունե՞մ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Ունեք, ո՞վ է ասում, որ չունեք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մի փոքր ցածր, ես խնդրում եմ, բոլորիդ եմ խնդրում:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Եթե հիմա չմտնեմ, հետո ուշ կլինի:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ինչո՞ւ պիտի փլվի:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ո՞վ ասաց, որ փլվում է:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Ես եմ ասում, վա՛յ...

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ինչո՞ւ եք միայն դուք եկել:

ՆՐԱ ԿԻՆԸ – Նրանք ինչո՞ւ չեն եկել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Բնակիչներից ինչո՞ւ ոչ ոք չի եկել:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Գուցե եկել են, ես չգիտեմ:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Եթե եկած լինեին՝ կիմանայինք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Պաշտոնական) Ոչ, չեն եկել:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Այստեղ չեն եկել, գուցե նրանք էլ ուրիշ տեղ են գնացել: Եթե հիմա չմտնեմ, հետո ուշ կլինի, փլվում է, ինչն՞վ երդվեմ, որ հավատաք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Տեղի տալով)** Մարդը երդվում է:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Հարձակողական)** Հետո ի՞նչ...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – **(Թերահավատությամբ)** Այ քեզ բան...

ՆՐԱ ԿԻՆԸ – Ի՞նչ կապ ունի...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բայց մենք բարոյական իրավունք չունենք չհավատալու:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – **(Վրա տալով)** Իսկ ո՞վ ասաց, որ չենք հավատում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Դա ի՞նչ հարց է...

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Ինչն՞ի պիտի չհավատանք:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ինչն՞ի պիտի չհավատանք, դրա՞ մասին է խոսքը:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բացառության կարգով թույլ տվեք մտնեմ, խնդրում եմ:

ՎԵՏԵՐԱՆ – Ի՞նչ բացառություն. եթե ես չեմ մտնում, դուք ինչն՞ի պիտի մտնեք:

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Բացառությունս ո՞րն է, բոլորս էլ սպասում ենք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Այցելուներին)** Ես խնդրում եմ, ոչ ոք թող չմիջամտի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Համենայնդեպս, մարդը խընդրում է:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Հանդիմանանքով)** Ես չեմ հասկանում, թե դուք ինչ եք ասում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ասում եմ, մարդը խնդրում է:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մի՛ ասեք: Թողեք աշխատենք: Հերթից դուրս ոչ ոք չպիտի մտնի:

ՎԵՏԵՐԱՆ – **(Ակնարկելով Շլյապայով տղամարդուն)** Ավելի լավ է ամեն մարդ իր գործով զբաղվի:

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Միշտ գտնվում է մեկը...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Հիմնական պատը ճաք է տվել, ազնիվ խոսք: Ես խնդրում եմ...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի, մի՛ խանգարեք:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ես չզիտեմ, թե ինչի համար է այս բռնությունը:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Տեսնում եք՝ սպասում ենք:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Տեսնում եք՝ սպասում ենք:
 ՎԵՏԵՐԱՆ – (Բաճկոնով տղամարդուն) Հանգիստ եղեք, հըս-
 կայական շենքն էդպես հեշտությամբ չի փլվի:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Եթե չդադարեցնեն, մյուս պատերն
 էլ կճաքեն: Քանդում են:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Չհասկացա՝ քանդո՞ւմ են, թե՞ փըլ-
 վում է:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Քանդում են: Եթե չքանդեին, չէի
 գա:
 ՎԵՏԵՐԱՆ – Դե եթե քանդում են, էլ ինչո՞ւ եք ասում՝ փլվում է:
 Ուրեմն քանդում են:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Կարծես նոր միայն ճշտելով) Ախ,
 քանդո՞ւմ են...
 ՆՐԱ ԿԻՆԸ – Դե թող այդպես ասի, էլ ինչո՞ւ է ասում՝ փլվում է:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Եթե չքանդեն՝ չի փլվի:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իզուր եք կարծում: Եթե վթարային
 շենք է՝ առանց քանդելու էլ կարող է փլվել: Քիչ է պատահում, ի՞նչ
 է...
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ոչ, վթարային շենք չի, հիմքի պա-
 տերը քանդում են, դարձնում են վթարային:
 ՎԵՏԵՐԱՆ – Ո՞վ է քանդում, ինչո՞ւ են քանդում, ինչո՞ւ պիտի
 քանդեն:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Շենքի նկուղային հարկն են ըն-
 դարձակում, որ ռեստորան բացեն: Պատերի հաշվին են ընդարձա-
 կում:
 ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Լսեք, մեր ի՞նչ գործն է, թե ինչ են
 անում:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Մեր ի՞նչ գործն է, թե ինչ են անում:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Իրենք միլիոններ դիզեն, իմ տունը
 փլվի՞:
*Պայուսակով տղամարդը ժամանակ առ ժամանակ խը-
 փում է ծնկին: Հասկացվում է, որ մտքում հայհոյում է:*
 ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Է՛, լավ, հարցրեք՝ ով ումից հետո է,
 ձեր հերթը կհասնի, կմտնեք:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Չեր հերթը կհասնի կմտնեք:
 ՎԵՏԵՐԱՆ – Ինչպես բուրբը, այնպես էլ՝ դուք: Եթե ես չեմ մըտ-
 նում, դուք ինչո՞ւ պիտի մտնեք, դա ինձ բացատրեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ասում է՝ հետո ուշ կլինի:
ՎԵՏԵՐԱՆ – (**Համբերությունից դուրս գալով**) Ես լսում եմ՝ ինչ է ասում, իմ լսողությունից ես դեռ չեմ բողոքում, հարգելի բարեկամ:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Քանդում եմ, ինչով ուզում եք երգ-վեմ:
ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ինչո՞ւ եք մեզ ասում:
ՆՐԱ ԿԻՆԸ – Ինչո՞ւ է մեզ ասում:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ես ոչինչ չեմ ասում, ես ուղղակի խնդրում եմ:
ՎԵՏԵՐԱՆ – Առանց թույլտվության ինչո՞ւ պիտի քանդեն, ուրեմն թույլտվություն ունեն:
ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Պարզ չի՞, որ ունեն:
ՆՐԱ ԿԻՆԸ – Պարզ չի՞...
ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Եթե չունենամ, չեմ քանդի:
ՆՐԱ ԿԻՆԸ – Չեմ քանդի, եթե չունենամ:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Այո, ունեն, փող եմ տվել, ամեն ինչ օրինական եմ անում:
ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Առավել ևս. եթե օրինական եմ անում, ինչո՞ւ պիտի քանդվի:
ՆՐԱ ԿԻՆԸ – Եթե օրինական եմ անում, էլ ինչո՞ւ պիտի քանդվի:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ասում եմ՝ փող եմ տվել:
ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչ որ չեք տեսել, մի ասեք:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Իսկ պարտադի՞ր է, որ տեսնեի:
ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դե, եթե չեք տեսել, ո՞վ կարող է ապացուցել:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Հարցը դա չի՝ կապացուցե՞մ, թե՞ չեմ ապացուցի: Ասում է՝ փլվում է:
ՎԵՏԵՐԱՆ – Ինչի՞ համար եմ այս պատմությունները:
ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ես չգիտեմ:
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (**Թոքվելով ուտերը**) Իսկ ո՞վ գիտի:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (**Քարտուղարուհուն**) Խնդրում եմ...
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Հետ գնացեք, իզուր տեղը մի խնդրեք:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Բայց մա չի կարող սպասել:
ՎԵՏԵՐԱՆ – Ի՞նչ եք առաջարկում, հետաքրքիր է:
ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԴ – Իսկ մենք կարո՞ղ ենք, որ սպասում ենք:
ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Ինչ մի հաճելի բան է...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես ասում եմ...

ՎԵՏԵՐԱՆ – (Ընդհատում է՝ բռնկվելով) Ի՞նչ եք ասում, ախր ինչն՞ի եք ասում...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Ակնարկելով Շյապայով տղամարդուն) Ինքն ո՞վ է:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Ինչն՞ի է խառնվում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դա ի՞նչ բան է:

ՎԵՐՆԱՇՈՒԿՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Շյապայով տղամարդուն) Շատ ներողություն, իսկ ես ի՞նչ ասեմ, որ Աստված քանդեց տունս:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Ընդհատելով նրան) Այդ էր պակաս, որ մտնի:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Երբեք:

ՎԵՐՆԱՇՈՒԿՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Շյապայով տղամարդուն, շարունակելով) Փայտից մի տնակ եմ ուզում, դա էլ չեն տալիս: Ասում են՝ դու մենակ մարդ ես, մի կերպ գլուխդ կպահես, ընտանիք ունեցողներին ենք տալիս: Իմ մեղքը ո՞րն է, որ կինս, երեխաներս զոհվեցին, ես մնացի:

ԲԱՃԿՆՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Դուք տուն եք ուզում, ես տուն չեմ ուզում:

ՎԵՐՆԱՇՈՒԿՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես տուն չեմ ուզում, ես մի քնելու տեղ եմ ուզում, տունն էլ իմ ինչին է պետք: Ամեն ինչ մնաց ներսը, հագիս ես մի վերնաշապիկով եմ մնացել:

ԹԻԱԴԵՄ ՏՂԱՄԱՐԴ – (Ակնարկելով Բաճկնով տղամարդուն) Անհարմար էլ չեն զգում:

ԲԱՃԿՆՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Լարված) Ազնիվ խոսք, հետո ուշ կլինի:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Ինչ որ ասելու եք, այնտեղ կասեք, մեզ ինչն՞ի եք ասում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Մեզ ինչն՞ի է ասում:

ԲԱՃԿՆՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Քարտուղարուհուն) Խնդրում եմ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Հարցրեք՝ ով է վերջինը, ձեր հերթը կհասնի, կմտնեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բայց նա չի կարող սպասել:

ԲԱՃԿՆՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Հրահրելով) Ասեք, խնդրում եմ, ասեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Քարտուղարուհուն) Եթե հիմա չդադարեցնեն, հետո ուշ կլինի:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Իմ ի՞նչ գործն է, քաղաքացի, դա՞ էլ է ինձ վերաբերում:

ՎԵՏԵՐԱՆ – (**Շյապայով տղամարդուն**) Գիտեք ինչ՝ եթե ձեզ համար այդքան հեշտ է, մի կարծեք, թե ուրիշների համար էլ նույնն է:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչ կա որ, երևի ինքը հարց չունի լուծելու:

ՆՐԱ ԿԻՆԸ – Այո, ըստ երևույթին չունի:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Եթե ունենա, այդպես չի խոսի:

ՆՐԱ ԿԻՆԸ – Եթե ունենա, ինչո՞ւ պիտի խոսի:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Իհարկե, չի խոսի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (**Առաջին ամուսնուն**) Ո՞վ չունի, ե՞ս... (**Փորձում է արձակել թղթապանակի թելերը, մատները դողում են**) Բացե՛մ, բացե՛մ ծանոթանաք: (**Մատների դողը գնալով սաստկանում է**):

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ոչ, ոչ, նեղություն մի կրեք, դրա կարիքը չկա:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (**Մի կերպ արձակելով**) Այդ ի՞նձ եք ասում, ի՞նձ... (**Թղթապանակից թղթեր է հանում, ցուցադրելով**) Իսկ սրանք ի՞նչ են, ի՞նչ են, գիտե՞ք: (**Թղթերը տեղավորում է թղթապանակում**) Այդ ի՞նձ եք ասում, ի՞նձ...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ես ձեզ ոչինչ էլ չեմ ասում, ես ընդհանրապես եմ ասում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Եթե հարց չունենայի, չէի գա, մեկը մյուսի հետ ի՞նչ կապ ունի:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Հիվանդ երեխայիս հետս քարշ եմ տվել, բերել: Եթե հարց չունենայինք, մենք ինչո՞ւ պիտի գայինք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Օրը ցերեկով մտել են բնակարանս, դուրս չեն գալիս, դրան ի՞նչ կասեք:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՍԱՐԴ – Թող իմ բնակարանը տան ինձ, ես ձեր բնակարանը տամ ձեզ: Թող տան, ինչո՞ւ չեն տալիս, թող տան:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ո՞վ տա, ե՞ս տամ: Փախստական եք, գնացեք ձեր հարցերը ինքներդ լուծեք:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՍԱՐԴ – (**Խոցված**) Ո՞վ է փախստական, տիկին, ինչո՞ւ եք վիրավորում:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Եկել մտել եք բնակարանս, դեռ ե՞ս եմ ձեզ վիրավորում:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՍԱՐԴ – (**Բորբոքված**) Ինչի՞ց ենք փախել, ինչի՞ց...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Առանց աղմուկի, ես խնդրում եմ:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՍՄԱՐԴ – **(Ինքն իր հետ, դառը հեզմանքով)**
Փախստակա՛ն... **(Մեկից ցատկում է՝ պարային շարժումներ անելով):** Ա՛յ, էսպես ինձ պարեցրել են իմ տան մեջ, հետո ես իրենց պարեցրի... Երանի չէ՞ր հորս փոխարեն ինձ սպանեին: **(Նույն ձևով)**
Փախստակա՛ն...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինքը ձեզ չէր ուզում վիրավորել, իզուր հուզվեցիք:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ուղղակի բառն է վիրավորական:

Բաճկոնով տղամարդը անհանգիստ գնում-գալիս է՝ երբեմն-երբեմն հոգոց արձակելով:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – **(Քարտուղարուհուն)** Ներեցեք, ժամը քանիսից քանիսն է ընդունելությունը:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Երկուսից վեցը: **(Չեռքը մեկնած ցուցատախտակի կողմը)** Գրված է...

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – **(Աչքի անցկացնելով ձեռքի ժամացույցը)** Շնորհակալություն:

ՊԱՅՈՒՍԱԿՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – **(Պայուսակից ուտելիք է հանում, տալիս երեխաներին, վերջում մատնացույց անելով տկարամիտ տղային)** Իրեն էլ տվեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Շնորհակալություն, նա դրանից չի ուտում:

ԾԵՐ ՄԱՅՐ – **(Ամուսնուն)** Չմրսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՍՄԱՐԴ – **(Չխաղաղվելով)** Փախստական էլ դառանք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Տղային, որ շարունակ ծածանում է ձեռքի դրոշակը)** Մի՛ արա, այ տղա, քամի ես անում:

Երեխաները շրջապատել են տկարամիտ տղային՝ հետաքրքրությամբ դիտելով նրան:

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՍՄԱՐԴ – **(Ցնցվում է՝ նայով շուրջը, կանգնում է)** Դեմոկրատիան ամենաթողությունն է: Անձի անձեռնմխելիություն, անպատժելիություն, օրենքի գերակայություն... Բանակը կպաշտպանի հարազատ ժողովրդին, ժողովուրդը՝ իր հարազատ բանակին: **(Նստում է՝ մի պահ իր վրա դարձնելով շփոթված այցելուների ուշադրությունը):**

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Տկարամիտ տղային շրջապատած երեխաներին)** Գնացեք, բալիկներ, գնացեք:

ՊԱՅՈՒՍԱԿՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Եկեք այստեղ, եկեք:

**ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Երկրորդ ամուսնուն) Սկզբում դո՞ւք
պիտի մտնեք, թե՞ մենք:**

**ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ առանձին-առանձին մտնենք,
միասին կմտնենք:**

**ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Մի թղթի կտորի համար մենք ինչո՞ւ
պիտի ձեզ հետ միասին մտնենք:**

**ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Միասին մտնենք, ես ապացուցեմ, որ
ձեր կնոջ ամուսինը ես չեմ, դուք եք:**

**ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ, ես առանձին կմտնեմ, ես կա-
պացուցեմ, որ ձեր կնոջ ամուսինը ես չեմ, դուք եք:**

**ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ պիտի դուք ապա-
ցուցեք, որ իմ ամուսինն ինքն է, դուք չեք:**

**ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ պիտի ձեր ամու-
սինն ապացուցի, որ իմ ամուսինը ձեր ամուսինը չէ:**

ԾԵՐ ՄԱՅՐ – Չմրսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Մամ, մի՛ անհանգստացիր, չի մրսի:

**ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Կանգ առնելով Քարտուղարուհու
դիմ-հանդիման) Մի բուպեից ավել չեմ մնա:**

**ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ոչ, սասցի: Տեսնում եք, չեմ համաձայ-
նում:**

**ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բոլորի մասին այդպես մի ասեք,
ի սեր Աստծո, մենք դեռ չզիտենք, այստեղ էլի մարդիկ կան, գուցե
նրանք կհամաձայնեն մի հոգու բացառություն անել:**

**ՎԵՏԵՐԱՆ – Մեկին բացառություն արեցիր, երկրորդին էլ
պիտի բացառություն անես, ինչո՞ւ եք դուք ձերն առաջ տանում:**

ԹԻՄԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Իհարկե:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Եթե միայն մեկը լիներ...

**ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Մեկի հարցը հեշտ է, երկրորդին ի՞նչ
պիտի ասես:**

ՆՐԱ ԿԻՆԸ – Երկրորդին ի՞նչ պիտի ասես:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Երկրորդ չկա, ազնիվ խոսք:

**ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Մի անհանգստացեք, իսկապես
չկա:**

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Ո՞վ ասաց, որ չկա:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ո՞վ ասաց:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես եմ ասում՝ չկա:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Հարցրեք, թող ասեն, չկա:
 ՎԵՏԵՐԱՆ – Չկա՝ կլինի:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Որտեղի՞ց պիտի լինի, եթե չկա:
 ԱՎԱԳ ՈՐԴԻ – Այո, հենց այդ է, որ չկա, բայց կտեսնեք,
 կլինի:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Կարծո՞ւմ եք, չէ, չի լինի:
 ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ի՞նչ երաշխիք ունեք, որ չի լինի:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ազնիվ խոսք, չի լինի:
 ՎԵՏԵՐԱՆ – Ես ձեր ազնիվ խոսքին հավատա՞մ, թե՞ ինձ, հո
 առաջին դեպքը չի:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Բայց իրոք չկա: **(Ակնարկելով**
Բաճկոնով տղամարդուն) Ճիշտ է ասում:
 ՎԵՏԵՐԱՆ – Մենք էլ ենք ճիշտ ասում, մենք հո՞ ուրիշ բան
 չենք ասում:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Այո, բայց առայժմ փաստորեն
 չկա:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այ, տեսա՞ք, տեսա՞ք, ինքներդ ասա-
 ցիք՝ առայժմ չկա:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Ինքներդ ասացիք:
 ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Իրոք, առայժմ չկա:
 ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Առայժմ չկա, որովհետև չկա, իսկ
 հետո կլինի:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Իսկ հետո կլինի:
 ՎԵՏԵՐԱՆ – Ես մի բան գիտեմ, չէ՞, որ ասում եմ:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Չի էլ կարող չլինել: Եթե չլինի էլ՝
 կլինի:
 ՎԵՏԵՐԱՆ – Իսկ ձեր կարծիքով իմ ասածն ի՞նչ էր:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ճիշտ եք ասում, բայց առայժմ
 չկա:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ դուք ի՞նչ գիտեք՝ կա՞, թե՞ չկա:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Փաստորեն՝ չկա:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այո, փաստորեն չկա, բայց չկա, որով-
 հետև ինքներդ ասացիք, որ առայժմ չկա, իսկ հետո կլինի:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Բայց մենք չգիտենք՝ կլինի՞, թե՞
 չի լինի, փաստորեն առայժմ չկա:
 ՎԵՏԵՐԱՆ – Նույն բանն ենք ասում, բայց իրար չենք հասկա-
 նում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Լարվելով, ընդգծված) Բայց առայժմ փաստորեն չկա:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այո, փաստորեն առայժմ չկա, իսկ հետո կլինի:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ եթե լինի՞:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Մտախոգ) Եթե լինի...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Վրաս տալով) Ես ձեզ հարց եմ տալիս՝ իսկ եթե լինի՞: Խնդրում եմ, դուք իմ հարցին պատասխանեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Արգելակված) Դե եթե լինի...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ոչ, ոչ, կողմնակի բաներ մի ասեք, խնդրում եմ, դուք իմ հարցին պատասխանեք:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Ոտ ու ձեռ ընկած) Չկա, չկա, եթե լինեք՝ կլինեք:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ես էլ գիտեմ, որ չկա, դուք իր փոխարեն մի պատասխանեք, ես իրեն եմ հարց տալիս:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Հոգուն հասած) Էլի եմ ասում չկա:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ եթե լինի՞:

ՎԵՏԵՐԱՆ – Նրան, նրան ի՞նչ պիտի ասեք: Եղա՞մ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – (Իրեն կորցրած) Բայց մենք չգիտենք՝ կլինի՞, թե՞ չի լինի:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Դուք չգիտեք, իսկ ես գիտեմ:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ես էլ գիտեմ:

ՎԵՏԵՐԱՆ – (Շյապայով տղամարդուն) Այո ինչպե՞ս է, որ բոլորը գիտեն, դուք չգիտեք: Դուք էլ գիտեք:

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Իհարկե, գիտի:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Իսկ ո՞վ չգիտի, նորություն է, ի՞նչ է...

ՎԵՏԵՐԱՆ – Ինչո՞ւ պիտի մեկին բացառություն անես, իսկ մյուսին՝ ոչ:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Եթե մեկին բացառություն ես անում, մյուսին չես կարող չանել:

ՆՐԱ ԿԻՆԸ – Անխոս:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Քամահրանքով) Ինչի մասին է խոսքը:

ՎԵՏԵՐԱՆ – Ավելորդ է անգամ այդ մասին խոսելը:

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Իսկ եթե մեկին չես անելու, մյուսին ինչո՞ւ անես:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Բա մեր ասածն ի՞նչ է, մեր ասածն էլ
դա է:

ՆՐԱ ԿԻՆԸ – Մեր ասածն էլ դա է:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – (Կուրծք ծեծելով) Բայց ես չեմ
ասում, թե չի լինի: Ախր ինչո՞ւ չեք ուզում ինձ հասկանալ: Ես ասում
եմ՝ առայժմ չկա:

ՎԵՏԵՐԱՆ – (Բորբորվելով) Հենց այդ է, որ առայժմ չկա, բայց
հետո կլինի: Ոչ մի երաշխիք չկա, որ չի լինի:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԳ – (Չեռից գնալով) Չի լինի:

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – Կլինի...

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Իզուր տեղն ինչո՞ւ եք ջուր ծեծում:

ՎԵՏԵՐԱՆ – Իրեն ասեք, ինձ մի ասեք:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԳ – (Երես թեքելով այցելուներից,
Քարտուղարուհուն) Խնդրում եմ... Ես գիտեմ, չի լինի...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Այդ դուք եք ասում, որ չի լինի: Այս մե-
ծահասակ մարդիկ այստեղ մտած, ինչո՞ւ պիտի ձեզ բացառություն
անեն:

ՎԵՏԵՐԱՆ – Մարդ ուղղակի անհարմար էլ է զգում, որ նրան-
ցից առաջ մտնի:

ԵՐԿՐՈՐԳ ԱՍՈՒՄԻՆ – Վերջապես խիղճն էլ լավ բան է:

ՆՐԱ ԿԻՆԸ – Գոնե մարդկանց տարիքը հարգեն:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Այսինքն ինչո՞ւ եմ զարմանում, որ...

ՎԵՏԵՐԱՆ – Եթե բացառություն անենք՝ նրանց պիտի անենք,
ուրիշ էլ ո՞ւմ:

ԱՎԱԳ ՈՐԳԻ – Շնորհակալություն: Անկողնուց եմ հանել
բերել:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Ինչո՞ւ եք ասում, չի՞ երևում, ինչ է:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չմրսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Ես հո չեմ ասում, որ նրանք
չմտնեն: Քանդում են, ես չեմ կարող սպասել, ի՞նչ անեն:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – (Դառնալով պայուսակավոր տղամար-
դուն) Այս քաղաքացին երեխաների հետ մտտի սպասի, դո՞ւք մտնեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մեծահասակներին չենք հարգում, երեխա-
ներին հո պարտավոր ենք հարգել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ եք դա ասում: (Ակնարկելով
Շիկահեր կնոջը) Իսկ այս կինն ի՞նչ ասի: Ներողություն, տիկին... որ
տղայի հետ է եկել:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ի՞նչ անեմ, նրան չեմ կարող մենակ թողնել:
Թուրք է ուտում:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Հանգստացեք, ինչն՞ է եք հուզվում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ինչն՞ է եք հուզվում, հանգստացեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Վերջին հարյուր դրամս կերավ: (Փղճկում է)
Հիմա ես՝ ե՞ս եմ... Առաջ էի ես... Հիմա ես՝ ես չեմ... Թողե՞ց, որ ես՝
ես լինեմ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Դրամ է հանում ծոցագրպանից,
մեկնելով կնոջը) Վերցրեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Շնորհակալություն, հարկավոր չէ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես խնդրում եմ, ազնիվ խոսք,
վերցրեք: Ավելի կտայի, եթե լինեք...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Շնորհակալություն: Չէ, չեմ վերցնի, մի
ստիպեք: Դուք ինձ վիրավորում եք: Ես այդ կինը չեմ... Ես՝ ե՞ս եմ...
Ես՝ ես չեմ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բայց ես խնդրում եմ:

Շիկահեր կինը բացասաբար օրորում է գլուխը:

*Փոքրիկ աղջիկը փսփսում է Պայուսակով տղամարդու
ականջին: Պայուսակով տղամարդը նրան դուրս է տանում՝
ձեռքով նշան անելով, որ մյուս երեխաները մնան:*

*Բաճկոնով տղամարդը անհանգիստ գնում-գալիս է, եր-
բեմն-երբեմն կանգնում՝ խոր շունչ է քաշում:*

ԾԵՐ ՄԱՅՐ – Չմըսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մըսում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – (Հորը) Տաքությունդ հո չբարձրացա՞վ, չէ՞...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի՛ արա, այ տղա, քամի ես անում:

ՎԵՏԵՐԱՆ – (Ավելի շատ ինքն իրեն) Եթե մտնելու լինի՝ ես
կմտնեմ: Ես եթե իմ իրավունքներից չեմ օգտվում, ուրիշն ինչն՞ է պի-
տի օգտվի: (Ակնարկելով կապույտ վերնաշապիկով տղամարդուն)
Մարդը քնելու տեղ չունի, եկել՝ ինչ եմ ասում... Եղա՞վ...

ՎԵՐՆԱՇԱՊԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Քնելու տեղ եմ ուզում, բայց
հո քնելու համար չեմ ուզում: Ինձ էլ քնել չկա: Հենց որ աչքերս
փակում եմ՝ կինս ու երեխաներս գալիս են, մինչև լույս ինձ հետ են:
Առավոտ շուտ աչքերս բացում եմ՝ էլի թողնում, գնում են, որ գիշերը
զան: Թողնո՞ւմ են, որ քնեմ: Գալիս, հարցնում են՝ ի՞նչ եղավ, տնակ
ավի՞ն, որ տան՝ մենք էլ կզանք: Ասում եմ՝ չէ, դուք էլ չեք գա, ես
կզամ: Ասում են՝ չէ, դու մի արի, դու մնա, որ մենք զանք: Դու որ
չլինես, մենք էլ չենք գա, էլ զանք ի՞նչ անենք, էլ ո՞ւմ մոտ զանք:

Երկու անգամ ասել եմ՝ հա, տվին, արդեն տվել են, դե եկեք, ինչո՞ւ չեք գալիս, բա ասում էիք՝ գալու ենք: Ասում են՝ սուտ ես ասում, չեն տվել, խաբում ես, գնա ասա, թող տան: **(Պայուսակով տղամարդը վերադառնում է աղջկա ձեռքը բռնած)** Ես չեմ եկել, նրանք են ինձ ուղարկել: Գիտեմ, որ ստանամ էլ՝ չեն գա, բայց ես հո ինձ համար չեմ ուզում ստանամ, իրենց համար եմ ուզում, որ տեսնեմ հիմա ինչ պիտի ասեն:

Երեխաներից մեկը հատակին խաղալիք-ավտոմեքենա է տանում-բերում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Բալիկ, չի կարելի, դա պահիր՝ դրսում...

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Չեռքից վերցնելով)** Տուր, տուր ես կպահեմ:

Փոքրիկ աղջիկը փորձում է շրթհարմոն նվազել:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Չեղավ, չեղավ, հիմա պիտի կանչի, ինձ դիտողությամբ անի:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Աղջկան)** Տուր, տուր դա էլ պահեմ:

Վերցնում է շրթհարմոնը, դնում պայուսակում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Երեխաներին ինչո՞ւ են բերում հետները, չեմ հասկանում: Թող դուրս գան, դրսում սպասեն:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Դուրս եկեք, միջանցքում սպասեք, ես կգամ: **(Երեխաները կառչում են հորից):**

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Թողեք մնան, էլ չեն անի:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Դե խելոք մնացեք, թե չէ դուրս կանեն: **(Երեխաները ձեռքները մտցնում են պայուսակի մեջ)** Չլսեցի՞ք՝ ինչ ասացի:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չմրսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հայրիկ, վա՞տ ես զգում, չէ՞...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա, քամի ես անում:

Երեխաները նորից հավաքվում են տկարամիտ տղայի շուրջը: Մտնում է մի երիտասարդ: Երիտասարդ կինը, դադարեցնելով ծամելը, մեջքով շրջվում է, որ չմոտենա իրեն:

ԵՐԻՏԱՄԱՐԴ – **(Կնոջ քիկունքից, ականջի տակ, գրեթե շշուկով)** Մի բոպե դուրս արի, բան եմ ասում: **(Կինն անհաղորդ է)** Քեզ հետ եմ, դուրս արի մի բոպեով:

ԵՐԻՏԱՄԱՐԴ ԿԻՆ – **(Չուսպ)** Չեմ գալիս:

ԵՐԻՏԱՍԱՐԳ – Արի, ասում եմ:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Ասացի՛ չէ:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Չմտնես:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Իզուր ես նեղություն կրել: Պիտի մտնեմ:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Ցածր...
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Գնա:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Չմտնես:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Ասացի՛ պիտի մտնեմ:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Ես ուզում էի ամուսնանալ, չէի՞ ուզում, տե-
 սար՝ հորս ինֆարկտ խփեց:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Ի՞նչ պատճառով, թե՞ քո:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Դեմ է, ասում է՝ մեջտեղը երեխաներ կան,
 կնոջիցդ չպիտի բաժանվես:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Երեխաներն ի՞նչ կապ ունեն:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Մայրս էլ է դեմ, ասա, ի՞նչ անեմ:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Իսկ մի տարի առաջ չզիտեի՞ր, որ երե-
 խաներ ունես:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Իսկ դու չզիտեի՞ր:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Գիտեի:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Փո՞ղ էր պետք... Չհամաձայնեիր:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Զեզ չզիտեի: (Փղճկում է) Զեզ թվում է,
 թե ես ծնողներ չունե՞մ: Եթե չունենայի, չէի վերցնի... Հորդ քեզ հա-
 մար չի ինֆարկտ խփել, ոչ էլ՝ երեխաներիդ: Նա միշտ ապրել է՝
 ինչպես ինքն է ցանկացել, հիմա էլ է ուզում ապրել այնպես, ինչպես
 ինքն է ցանկանում: Նա քո մասին չի մտածում, ոչ էլ քո երեխաների
 մասին է մտածում: Նրան խաղաղություն է պետք օր ծերության, նրա
 անդորրը ոչ ոք չպիտի խանգարի, թույլ չի տա, որ խանգարեն: Ինքն
 ապրել է ուզում, մենք չե՞նք ուզում: Ինքն արդեն ապրել է իր կյանքը,
 թող թույլ տա, որ հիմա էլ ուրիշներն ապրեն: Իհարկե, մայրդ էլ դեմ
 կլինի: Հիմա նրանք միայն իրար են պետք: Նրանք քո կնոջը չեն
 սիրում: Զեզ թվում է, թե միայն դու չես սիրում: Եթե սիրես՝ կթողնեն,
 որ բաժանվես: Չես սիրում՝ դրա համար էլ չեն թողնում: Նրանց
 պետք է, որ դու հենց այդպիսի կին ունենաս: Ունես, նրանց էլ ի՞նչ է
 պետք՝ ոչինչ: (Հանկարծակի շրջվելով) Ինչո՞ւ ես եկել, հիմա ի՞նչ ես
 ուզում ինձնից:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Փող է պետք՝ տվել եմ, էլի կտամ... Դուրս
 արի՛ դրսում խոսենք:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Ես գիտեմ ինչ ես ասելու: (**Հանկարծակի աղաղակելով**) Ես մարմնավաճառ չեմ, ես մարմնավաճառ չեմ, ես ծնողներին եմ ուզեցել պահել: Ես մարմնավաճառ չեմ: Քեզ իմ մարմինն է պետք, ես պետք չեմ: Քո ուզածը չի լինի, չի լինի: Նա պիտի ծնվի:

ԵՐԻՏԱՍԱՐԳ – Ասում եմ՝ դուրս արի, դրսում կխոսենք: (**Դուրս է գնում**):

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – (**Պայուսակից հանում է ծխախոտի տուփը, ծխում է**) Չեմ գա...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ընդունաբանում մի՛ ծխեք, այստեղ արգելվում է ծխելը:

Երիտասարդ կինը հանգցնում է ծխախոտը:

ՇԻԿԱՆՆԵՐ ԿԻՆ – (**Տկարամիտ տղային շրջապատած տղաներին**) Գնացեք, բալիկներ, գնացեք:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Եկեք, եկեք ինձ մոտ:

ԲԱՃԿՆՆՈՎ ՏՂԱՍԱՐԳ – (**Դադարեցնելով քայլերը, Քարտուղարուհուն**) Մինչև հիմա ես մտել, դուրս էի եկել:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Չեր հերթը կհասնի՝ կմտնեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Բայց նա չի կարող այդքան սպասել, քանդում են, պիտի կարգադրություն անեն, որ դադարեցնեն:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Գիտեմ, ինչո՞ւ եք ինձ ասում, ես ի՞նչ կարող եմ անել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Նորից նույն պատմությունը:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Ես ձեզնից ոչինչ չեմ պահանջում: Կարծում եմ ես այդքան իրավունք ունեմ, որ իմ հերթը զիջեմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Եթե նրան ուզում եք բոլորից առաջ զցել, միայն դուք չպիտի զիջեք, ովքեր ձեզնից առաջ են նրանք էլ պիտի զիջեն:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ուրիշ կերպ չի էլ կարող լինել:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ոչ մեկի համար էլ հաճելի չէ այստեղ ժամերով սպասելը:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Բայց նրա հարցն ուրիշ հարց է:

ՇԻԿԱՆՆԵՐ ԿԻՆ – Իսկ դուք ի՞նչ գիտեք, մեր հարցն ինչ հարց է:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Բայց նրանը ժամանակի հետ է կապված:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Իսկ ո՞վ ասաց, որ մերը ժամանակի հետ չի կապված:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Առանց աղմուկի, ես խնդրում եմ, հիմա պիտի կանչի, ձեր փոխարեն ինձ դիտողություն անի:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չքնես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ քնում:

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – **(Լարված, հեզմանքով)** Ջիջե՞մ... Ո՞ւմ զիջեմ... Հինգ տարի է տնից-տեղից կտրված, թողել, գնացել եմ շան օրի աշխատել, որ ամեն ամիս փող ուղարկեմ ընտանիքս ապրի: Եկել եմ, տեսել իմ տան գրանցումից ինձ հանել են: Երեխեքս էլ են խորթացել, էլ մոտ չեն գալիս: Ասում են՝ քո վրայից հոտ է գալիս: Մոր ասածն են ասում: **(Կանգնելով, ձեռքերը տնկած)** Քած, իմ վրայից չի գալիս, քո վրայից է օտար տղամարդու հոտ գալիս:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Մաստող)** Քաղաքացի՛...

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – **(Շարունակելով շնչակառուր կռիվ տալ կնոջ հետ)** Նրա ընտանիքն էլ ես դու պահել իմ ուղարկած փողերով: Երեխեքիս բերանից կտրել ես, նրանց ես տվել, է՛գ...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Նույն ձևով)** Քաղաքացի՛...

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – **(Անցնում է մտածների առջևով՝ դիմելով սրան-նրան)** Իմ վրայից հո՞տ է գալիս... Ասեք, էլի, ասեք...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի, վերջացրեք...

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – **(Շարունակելով շրջանցումը):** Գալի՞ս է, հո՞տ է գալիս... Ասե՛ք, ասե՛ք, ինչո՞ւ չեք ասում... Գալիս է... **(Նստածները քացասաբար տարուրերում են գլուխները):**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի, որտե՞ղ եք գտնվում...

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – Բա ինչո՞ւ է ասում, որ հոտ է գալիս: Ասեք, էլի, ասեք...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Դուք ինձ ստիպում եք, որ ես ձեզ դուրս հրավիրեմ:

ԹԽԱԳԵՄ ՏՂԱՍԱՐԳ – Էմտեղ իմ տնից են ինձ հանում, դուք էլ էստեղից եք ինձ հանում, բա ես ո՞ւր գնամ: **(Նստելով իր տեղը)** Ներողություն, էլ չեմ խոսի, ըհր՛... **(Ափով փակում է քերանը):**

ԾԵՐ ՄԱՅՐ – Չքնես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ քնում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հայրիկ, չքնես:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Ինչո՞ւ են այսքան երկար մնում ներսում, չեմ հասկանում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա, քամի ես անում:
ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Կարգ... Ի՞նչ կարգ...
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Գնացեք, բալիկներ, գնացեք:
ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Եկեք այստեղ, եկեք:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Ինքն իր հետ, անհաշտ) Համե-
նայնդեպս, այդպես էլ չի կարելի:

*Կաշվե բաճկոնով տղամարդը գնում-գալիս է իրեն կորց-
րած՝ մերթ արագացնելով, մերթ դանդաղեցնելով քայլերը: Երե-
խաներն իրար հրմշտելով ձեռքները մտցնում են պայուսակի
մեջ:*

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ես խնդրեցի, չէ՞, թող դուրս գամ, դրսում
սպասեն: (Ցույց տալով Գլխահակ տղամարդուն) Նրան չեմ կարող
դիտողություն անել, ձե՞զ էլ չեմ կարող: Ինչո՞ւ եք ուզում, որ ինձ վրա
խոսեն:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Դուրս եկեք, դուրս եկեք՝ դրսում
սպասեք:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Երեխաներ, ապա՝ շուտ դուրս եկեք:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Եկեք: (Գնում է՝ ետևից երե-
խաներին տանելով դուրս):

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – (Առաջին ամուսնուն) Եթե չեք ուզում
միասին մտնենք, առաջինը դուք մտեք:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ պիտի մենք առաջինը մտնենք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ինչո՞ւ պիտի մենք մտնենք:

ՆՐԱ ԿԻՆԸ – (Առաջին ամուսնուն) Դուք ապացուցեք, որ ես
ձեր կինը չեմ, ինչո՞ւ պիտի ես ապացուցեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ինչո՞ւ պիտի ես ապացուցեմ, որ
դուք իմ կինը չեք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Դուք չեք ուզում մտնել, թող
ձեր կինը մտնի:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ ես պիտի ապացու-
ցեմ, որ դուք իմ ամուսնու կինը չեք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Իսկ ինչո՞ւ ես պիտի ապացու-
ցեմ, որ դուք իմ ամուսնու կինը չեք:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Որովհետև ես իմ կինն եմ, իսկ ձեր
ամուսինը նրա ամուսինը չէ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Առավել ևս... Եթե ես ձեր կնոջ ամու-
սինը չեմ, ձեր կինն իմ կինը չէ:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Եթե իմ կինը ձեր կինը չէ, ձեր կինն ինչն՞ի պիտի իմ կինը լինի:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Դա ինձ մի ասեք, ում որ թուրք է պետք՝ նրան ասեք:

Պայուսակով տղամարդը վերադառնում է՝ զբաղեցնելով իր տեղը:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Համենայնդեպս, մի հոգու կարելի է բացառություն անել:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴ – Եկել եմ՝ ընտանիքս եմ բնակարանից հանում, ինչի՞ մասին է խոսքը:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Թող ձեզ չհանեն, ինձ բնակարան տան:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ անեի, որ չմտնեի: Տեսա ազատ բնակարան է՝ մտա:

Երեխաները մի առ մի վերադառնում են:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չքնես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա, քամի ես անում:

Հեռախոսի զանգ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Լսափողի մեջ) Մխալ եք զանգահարել:

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՄԱՐԴ – (Ցնցվում է՝ նայելով շուրջը, ինչպես միշտ՝ հանդիսավոր, կանգնած) Հայտարարում եմ՝ ընդհակառակը... (Եստույն է՝ այլևս առաջվա պես ուշադրություն չգրավելով իր վրա):

Մտնում են Կրտսեր որդին և Աղջիկը:

ԱՂՋԻԿ – (Այցելուների մեջ գտնելով ծնողներին) Այստեղ եմ:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Ես գիտեի, չէ՞: Հայրիկ, վեր կաց: Ինչն՞ի եք եկել:

ԱՂՋԻԿ – (Ակնարկելով Ավագ որդուն) Չեն եկել, բերել է:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – (Ընդգծված) Այո, բերել եմ, ումի՞ց եմ քաքցում: Ինչքան ձեր ծնողներն են, այնքան էլ՝ իմ:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Դու եկել ես՝ իրենց ինչն՞ի ես քարշ տվել-բերել:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Կմտնեմ ներս, ներսում կասեմ, ձեզ ինչն՞ի պիտի ասեմ:

ԱՂՋԻԿ – (Լալկան) Մամ, վեր կաց:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, վեր կաց, գնում ենք տուն, ձեզ հետ լուրջ խոսելիք ունենք, ազնիվ խոսք:

ԱՂՋԻԿ – Մամ, վեր կաց:

Ծնողները բացասաբար օրոքում են գլուխները:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Չեն ուզում, նրանք գիտեն, թե ինչի համար եք եկել, չեն ուզում: Ժամանակին համոզելիք, մարդկանց տունը վաճառեցիք, փողը երկուսով կիսեցիք, կերաք, ինչո՞ւ իրենց չպահեցիք: Որովհետև իրենք ձեզ էլ պետք չէին, պետք չէին: Հիմա են պետք, որ համոզեք, ձեզ հետ տանեք Ամերիկա, Ամերիկայում իրենց թոշակով ապրեք: Նրանք հիմա էլ ձեզ պետք չեն, իրենց թոշակն է ձեզ պետք:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – **(Զրոշը)** Լսո՞ւմ ես՝ ինչ է ասում:

ԱՂՋԻԿ – Թող ասի, իրեն թվում է, թե մարդիկ պիտի հավատան:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Առանց աղմուկի, ես խնդրում եմ:

ԱՂՋԻԿ – Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞: Փող է ուզում, թող պարզ ասի՝ փող է պետք, փող տանք: Մամ, վեր կաց:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, վեր կաց:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Չեն ուզում, չեն գա, իզուր եք նեղություն կրել:

ԱՂՋԻԿ – Եթե ես ծնողներիս չտանեն-պահեն, քո կի՞նը պիտի պահի:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Տունը վաճառելուց հետո ընդամենը երկու ամիս դու պահեցիր, երկու ամիս՝ նա: Պահող էիք՝ էն ժամանակ պահեիք, բա ինչո՞ւ չպահեցիք:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Մխալ բաներ չխոսես, քեզ հավատացող չկա:

ԱՂՋԻԿ – Մխալ բաներ չխոսես, ժամանակավոր էի թողել, որ հորս եղբայրս տանի: Լսողն էլ պիտի հավատա, դա է ցավը: **(Լեզվով ծլծլծափում է):**

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դուք նրանց մասին չեք մտածում, լսողների մասին եք մտածում, թե նրանք ինչ կմտածեն:

ԱՂՋԻԿ – Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞: Չի էլ ամաչում: **(Շարունակում է լեզվով ծլծլծափել):**

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, վեր կաց: Ես գնամ՝ տաքսի բերեմ:

ԱՂՋԻԿ – Մամ, շուտ արա, գնում ենք տաքսի բերենք: Պատրաստ եղեք, որ չսպասենք: **(Դուրս են գնում):**

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Որ գնում-գալիս է, հանկարծակի բռնկվելով)** Ես պիտի մտնեմ: **(Մղվում է դեպի դուռը):**

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Փակելով նրա ճանապարհը)** Չփորձեք:

Ընդհանուր աղմուկ:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Պիտի մտնեմ:
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի, մի՛ ստիպեք, որ ուրիշ մի-
 ջոցների դիմեմ:
ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄՆՈՒ ԿԻՆ – Թույլ չտաք:
ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Դուք ումի՞ց եք ավել, հետաքրքիր է:
ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Փլվում է, չե՞ք հավատում:
ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ո՞վ ասաց, որ չենք հավատում:
Կամ ինչո՞ւ պիտի չհավատանք:
ՆՐԱ ԿԻՆԸ – Տարրական քաղաքավարություն է պետք, ուրիշ
 ոչինչ:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – **(Ընդհանուր աղմուկի մեջ բարձ-
 րացնելով ձայնը)** Հայրենակիցներ...
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Աղաղակելով)** Մի՛ ասեք, խնդրում եմ, ոչինչ
 չասեք:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Բայց դուք չգիտեք, թե ես ինչ եմ
 ասելու:
ԹԻԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԳ – Գիտենք...
ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Չեզ է թվում, որ չգիտենք:
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Պայտասկով տղամարդուն)** Երեխա-
 ներին դուրս տարեք, խնդրում եմ:
ՎԵՏԵՐԱՆ – **(Համբերությունը հատած, Բաճկոնով տղամար-
 դուն, մախահարձակ լինելով)** Դե դուք էլ բավական եղավ, ետ քաշ-
 վեք: **(Արմունկով հրում է)** Դուք չպիտի մտնեք, ես պիտի մտնեմ:
*Քարտուղարուհին մարմնով փակում է առանձնասեն-
 յակի դուռը:*
ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Թույլ չտաք:
ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հերթ գոյություն ունի:
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Հետ, հետ... Ես խնդրում եմ, հետ գնա-
 ցեք, ոչ մեկը չպիտի մտնեք:
ՎԵՏԵՐԱՆ – Պիտի մտնեմ, ես իրավունք ունեմ:
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Առաջ մղվելով)** Ո՞վ ասաց:
ՎԵՏԵՐԱՆ – **(Պարզելով ծոցագրպանից հանած վկայականը)**
 Ես եմ ասում:
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Հրելով վկայականը)** Տարեք էն կողմ, ի սեր
 Աստծո, հերիք եղավ ամեն տեղ աչքներս խոթեք:
ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Դա էստեղ չի անցնում, տարեք ուրիշ
 տեղ ցույց կտաք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ամեն տեղ սրանք...

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Ուր գնում ես՝ նույն բանը, հիմա էլ էստեղ...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Սրանք դեռ կա՞ն...

ՎԵՏԵՐԱՆ – Մխա՞լ ենք արել, որ կովել ենք հայրենիքի համար:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Ես շա՞տ գիտեմ կովել են, թե չեն կովել:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Հայրենիքի համար չեք կովել, ձեզ համար եք կովել:

ՎԵՏԵՐԱՆ – (Չեղքն առաջ պարզած) Ձեզ համար եմ կովել, ձեզ, ձեզ...

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Էդ ո՞նց է կովել, որ ողջ է մնացել:

ՎԵՏԵՐԱՆ – (Բռնկվելով) Ո՞վ չի կովել, ե՞ս...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չթողնեք մտնի:

ՎԵՏԵՐԱՆ – Ես մեղավոր եմ, որ ողջ եմ մնացել:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ոչ էլ մենք ենք մեղավոր:

ՎԵՏԵՐԱՆ – Չկովեի՞նք, չհաղթեի՞նք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Չհանդարտվելով) Ո՞վ է հաղթել, դո՞ւք եք հաղթել:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Որ հաղթեցիք՝ ի՞նչ... Որ ի՞նչ, է՛, ի՞նչ...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Լավ է հաղթեցիք...

ԹԵԱԴԵՄ ՏՂԱՍՄԱՐԴ – (Քարտուղարուհուն) Չթողնեք, չթողնեք մտնի:

ՎԵՏԵՐԱՆ – Ես իրավունք ունեմ:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ձեր էլ իրավունքն էստեղ չի անցնում:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Էստեղ բոլորս էլ համահավասար քաղաքացիներ ենք, եղպիսի բան չկա:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Մի բռայե, խնդրում եմ...

(Աղմուկի մեջ խլանում է ձայնը):

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չթողնեք, չթողնեք մտնի:

ՎԵՏԵՐԱՆ – Պիտի մտնեմ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Չպիտի մտնեք, հետ, հետ գնացեք:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Չթողնեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – (Բղավելով) Մի բռայե, խնդրում եմ...

ՔԱՆԿՈՆՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – (Վետերանին) Ես պիտի մտնեմ, ես չեմ կարող սպասել:

ՎԵՏԵՐԱՆ – Էս ի՛նչ է ասում: Ես չմտնեմ, դո՞ք մտնեք:

Խառնակ վիճակ, քաշքշուկ, այցելուները վեր են կենում տեղերից, աղմուկ-աղաղակ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Բարձրանալով արթոն) Անհարմար է, ես ամաչում եմ ձեր փոխարեն, ես ամոթից գետինն եմ մտնում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ո՞ւմ եք ասում, ո՞ւմ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Բոլորիս եմ ասում: (Իջնում է արթոնից):

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Իրենց ասեք, բոլորիս մի ասեք:

ՆՐԱ ԿԻՆԸ – Բոլորիս մի ասեք, իրենց ասեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մեղավները կպցրել, եկել է:

ՎԵՏԵՐԱՆ – Ստացել եմ, կպցրել եմ:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Չի ստացել, տվել են:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չքողնեք մտնի:

ՎԵՏԵՐԱՆ – Բացե՞մ, բացե՞մ տեսնեք: (Վեր է քաշում շավարի փողը, վիրավոր ոտքը ցուցադրելով) Մինչև հիմա արճիճ եմ հանում, ո՞վ չի կռվել: Հիմա ո՞ւմ դեմ կռվեմ, հիմա... Էն ժամանակ զիտեի, թե ում դեմ եմ կռվում, հիմա ո՞ւմ դեմ կռվեմ: (Անցնելով մյուս ոտքին) Սա՞ էլ բացե՞մ, բացե՞մ: (Երկու ձեռքով բռնում է պրոթեզ-ոտքը, ամբողջ ուժով հարվածելով հատակին): Ո՞վ չի կռվել, ո՞վ չի կռվել:

Վետերանն անխնա պոկոտում է շքանշաններն ու մեղալները՝ ցփնելով սրահով մեկ: Ուզում է հենվել ձեռնափայտին՝ շրմփոցով փռվում է հատակին: Փորձում են բարձրացնել, նորից է ընկնում: Երեխաները հապշտապ հավաքում են մեղալներն ու շքանշանները: Դրսից արձագանքվող ժխորից դժվար չէ կռահել, որ պատլամենտում օրենքների քննարկում է ընթանում: Անհաղորդ են ընդունարանի կենտրոնում ընկած Վետերանը և իր արթոնն միայնակ նստած Գլխահակ տղամարդը: Ծեր մայրը խաչակնքում է՝ մրմնջալով Տերունական աղոթքը:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Նույն ընդունարանը: Այցելուներն զբաղջրել են իրենց տեղերը՝ բացի Վետերանից, որ բացակա է:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Մա ի՞նչ բան է, մտնում են, ժամերով մնում ներսում:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մինչև վեցն ահագին ժամանակ կա, բոլորիդ էլ հերթ կհասնի, ինչո՞ւ եք անհանգստանում, համբերություն է պետք, ուրիշ ոչինչ:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – **(Ակնարկելով ես ու առաջ քայլող Բանկոնով տղամարդուն)** Մեզ մի ասեք, ում որ պետք է՝ նրան ասեք:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դրա համար էլ կարգ ու կանոն չկա:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չի էլ լինի:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – **(Փնփնփալով)** Կարգ... Ի՞նչ կարգ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Համենայնդեպս, այդպես էլ չի կարելի...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Խնդրեմ, թող ոչ մեկը մյուսի հաշվին լավություն չանի:

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՍԱՐԴ – **(Յնգվելուց հետո)** Ուշադրություն. հրամայված է խաղաղ ցուցարարների վրա չկրակել առանց հրամանի: Բանակն իր ժողովրդի հետ է: **(Նստում է):**

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – **(Շարունակվելով ընդհատված խոսակցությունը)** Դուք մի զիջեք, իմ հերթը կհասնի, ես կզիջեմ:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դա բոլորովին ուրիշ հարց է, խնդրեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ոչ, ոչ, սխալվում եք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ինչո՞ւ:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Դուք եք զիջում, իսկ ուլքեր ձեզնից հետո պիտի մտնե՞ն... Նրանց էլ պիտի հարցնեք, միայն ձեր զիջելով չի լինի:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ի՞նչ, երբեք...

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – **(Գազազած)** Ժամերով սպասում ենք...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – **(Նույն ձևով)** Ոչ, այդպիսի բան չկա:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Դա չի լինի:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ոչ մի դեպքում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Դա իմ իրավունքն է, կարծեմ ես ոչ մեկի չեմ խանգարում:

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Չեզ է թվում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Երբ որ ձեր հերթը հասնի, այն ժամանակ
զիջեք:

ԱՌՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ոչ, մենք արհեստականորեն հետ կընկ-
նենք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ, ես եմ զիջում, ես ինքս ես
կընկնեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ոչ, ոչ, հասարակ թվաբանություն է:
Դա նշանակում է, որ նոր մարդ է ավելանում, և մի-մի մարդով նա
մեզ ես է գցում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Իհարկե:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Մի՞թե պարզ չէ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Տարակուսած) Չեմ հասկանում:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ներեցեք ինձ, այդտեղ ի՞նչ կա չհաս-
կանալու, որ չեք հասկանում: Եթե դուք ես եք ընկնում, նշանակում է,
որ ձեզմից հետո եկողն էլ է ես ընկնում, նրանից հետո եկողն էլ է ես
ընկնում, մեկին զիջելով՝ մյուս եկողներն էլ են ես ընկնում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Դա լինելու բան չէ, վերջացրեք, ի սեր
Աստծո:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Չեմ հասկանում, ես իմ հերթը
զիջելու իրավունք չունե՞մ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ունեք, ո՞վ է ասում, որ չունեք:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Այդպիսի բան մի ասեք, չունի:

ԹԻԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Իհարկե չունի:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Իսկ ո՞վ է ասում, որ ունի: Մինչև վերջ
լսեք, ես ուրիշ բան եմ ասում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Ուրիշ բան է ասում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ինչո՞ւ է ուրիշ բան ասում: Ուրիշ բան մի՛
ասեք:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Լսեք՝ հետո...

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ԿԻՆ – Տեսնում եմք, թե ինչ պիտի ասեք:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ես էլ ձեր ասածն եմ ասում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ոչ, դուք մեր ասածը չեք ասում, դուք ուրիշ
բան եք ասում:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ես ուրիշ բան չեմ ասում, ես նույն
բանն եմ ասում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դուք նույն բանը չեք ասում, հիմա եք ձեր
խոսքը փոխում:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ես իմ խոսքը չեմ փոխում, բոլորովին:
ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Թող ոչ ոք միջնորդի դեր չխաղա:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չզվեցրին արդեն, քիչ է մնում մարդ թքի, բողմի գնա:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Բարեկամներ, ինչն՞ մինչև վերջ չեք լսում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Իսկ ի՞նչ եք ասում, որ լսենք կամ չլսենք:
 ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ես ասում եմ...
ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – **(Ընդհատելով նրան)** Ինչն՞ եք ասում, մի՛ ասեք:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ասեմ վերջացնեմ, հետո ասեք՝ մի ասեք:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ինչ-որ պետք էր՝ դուք արդեն ասացիք:
ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Իր ասելով է, ինչ է...
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Առանց աղմուկի, ես խնդրում եմ, բողեք աշխատենք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Մեզ ո՞ւմ տեղն են դրել:
 ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Թույլ տվեք ասեմ՝ հետո...
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Շնորհակալ եմք, ինչ որ պիտի ասեիք՝ մի ասեք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Մենք արդեն գիտենք, թե ինչ պիտի ասեք:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Չգիտեք, ես էլ նույնն եմ ասում:
ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դուք նույնը չեք ասում, դուք ուրիշ բան եք ասում:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ուրիշ բան եմ ասում, բայց նույն բանն եմ ասում, մինչև վերջ լսեք, հետո ասեք՝ դեմ ենք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Այո, դեմ ենք:
 ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Իսկ ո՞վ է կողմ, որ դուք դեմ լինեք կամ չլինեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Առաջ մղվելով)** Հիվանդ երեխայիս քարշ եմ տվել, բերել այստեղ՝ ինչի՞ համար:
ԱՎԱԳ ՈՐԴԻ – Եթե լռում ենք՝ դա դեռ ոչինչ չի նշանակում:
ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Հո՞ չի կարելի մարդկանց հիմարի տեղ դնել:
ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ամեն մեկին թվում է, թե միայն ինքն է հասկանում:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Չզիտի, որ իր իմացածը մենք էլ զիտենք:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Իսկ ո՞վ է ասում, որ չզիտեք:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Մարդուն հնարավորություն տը-
 վեք, թող խոսի: Ես իմ հերթը զիջելու իրավունք ունեմ:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այո, ունեք, բայց...
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Տեղումտեղն ընդհատելով) Ո՞վ ասաց, որ
 ունի...
 ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – (Հարձակողական) Ո՞վ ասաց...
 ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Իր ասելով է, ի՞նչ է...
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ինչո՞ւ չեք թողնում ավարտեմ խոսքս:
 ՆՐԱ ԿԻՆԸ – Ինչո՞ւ չեք թողնում...
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այո, ունի, բայց...
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – (Ընդհատելով) Չունի:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ունեմ:
 ԹԻԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Չունեք:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ունի, բայց ինքը պիտի հերթից դուրս
 գա: Վահ, ինչո՞ւ մինչև վերջ չեք ուզում լսել:
 ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Խնդրեմ, դա բոլորովին ուրիշ հարց է:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Անակնկալի եկած, աչքերը լայ-
 նացել են) Ես ինչո՞ւ պիտի հերթից դուրս գամ:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Պիտի դուրս գաք:
 ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – Այո, պիտի դուրս գաք:
 ԱՎԱԳ ՈՐԴԻ – Անպայման:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ...
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Մի՞թե պարզ չէ: Դուք պիտի դուրս
 գաք, որովհետև ուրիշին եք զիջում ձեր հերթը:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ձիջում եմ, որ ինքն ինձնից ա-
 նաջ մտնի:
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ոչ, այդպիսի կարգ չկա, ես բացատրե-
 ցի... Եթե ձեզնից առաջ է մտնում, դա հո՞ չի նշանակում, որ միայն
 ձեզնից է առաջ մտնում: Ովքեր ձեզնից հետո սպասում են, նրանցից
 էլ առաջ է մտնում:
 ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հապա ի՞նչ էիք կարծում:
 ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ո՞վ կհամաձայնի:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ոչ ոք:
 ԹԻԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Այդ էր պակաս...
 ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Հասարակ տրամաբանություն է՝ եթե
 մեկը զիջում է, մյուսներն էլ պիտի զիջեն, պարզ չի՞:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ոչ մի դեպքում:
ԱՎԱԳ ՈՐԴԻ – Անկարելի բան մի ասեք:
ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ես ձեզ չեմ ասում, ես իրեն եմ ասում:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ընդամենը մի հոգու հարց չի՞:
ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ոչ, ասացի, ովքեր ձեզնից հետո են,
ստիպված պիտի լինեն առաջվանից ավելի շատ սպասել, որպեսզի
մտնեն:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Ոչ մի վայրկյան չեմ սպասի, ոչ մի...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ասե՛ք թե ես սպասեցի, **(Ցույց տալով ծնող-
ներին)** իրենք ինչպե՞ս սպասեմ:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ոչ մեկի մտքով թող չանցնի, թե
կսպասեմ:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Էլ ի՞նչ կուզեք, իբր քիչ ենք սպասել, էլի
սպասե՞նք: Երեխայիս նպաստն են կտրել օրը ցերեկով, ինչի՞ մասին
է խոսքը... Ո՞վ սպասի, ե՞ս...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Առանց աղմուկի, խնդրում եմ: Ոչ ոք ա-
ռանց հերքի չի մտնի, ինքներդ որոշեք ով ումից հետո է, ինչն՞ է եք
խառնվել իրար:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Ինչպե՞ս որոշենք, հետաքրքիր է, երբ
մարդն ինձնից հետո է, ասում է՝ դուք եք ինձնից հետո:

ՆՐԱ ԿԻՆԸ – **(Առաջին ամուսին)** Մեզ հետ մտեք, դուք ապա-
ցուցեք, որ ես ձեր կինը չեմ, ինչն՞ պիտի ես ապացուցեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Իսկ ինչն՞ պիտի ես ապացուցեմ, որ
դուք իմ կինը չեք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Իսկ ինչն՞ պիտի ես ապացուցեմ, որ
ես ձեր կնոջ ամուսինը չեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Որովհետև նա իմ կինն է, իսկ դուք
նրա ամուսինը չեք:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Առավել ևս, եթե ես ձեր կնոջ ամու-
սինը չեմ, ուրեմն ձեր կինն իմ կինը չէ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆՈՒ ԿԻՆ – **(Երկրորդ ամուսնուն)** Եթե ձեր
կինը իմ ամուսնու կինը չէ, իմ ամուսնու կինն էլ ձեր կինը չէ, այդտեղ
ի՞նչ կա ապացուցելու:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Ես ոչինչ չեմ ուզում ապացուցել,
իրենք են ուզում, իրենց ասեք:

*Մտնում է Վետերանը՝ պարենամթերքի ցանցով, թևատա-
կին՝ ստվարաթուղթ՝ քայլերն ուղղելով դեպի առանձնասենյակի
դուռը:*

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Վեր է թռչում տեղից) Ո՞ր, ո՞ր, մի րոպե... (Պահպանում է դուռը):

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Թույլ չտաք:

ՎԵՏԵՐԱՆ – (Ցուցամատով քարճրացնում է ցանցը՝ պահելով օդում, խոցված) Սրա՞ համար եմ կովել, սրա՞... (Գցում է սեղանին):

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ինչո՞ւ գցեցիք, վերցրեք:

ՎԵՏԵՐԱՆ – Ով ուզում է՝ թող վերցնի, ես չեմ վերցնի: **(Ցույց տալով առանձնասենյակի դուռը)** Տարեք տվեք իրեն: Դուք չտաք՝ ես կմտնեմ կտամ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Մի րոպե, քաղաքացի... **(Փակում է ճանապարհը):**

ՎԵՏԵՐԱՆ – Դե դուք տարեք: Տարեք, ինչո՞ւ չեք տանում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Վերցրեք, չի կարելի այստեղ դնել, պիտի տեսնի, ինձ նկատողություն անի:

ՎԵՏԵՐԱՆ – (Դատարկում է ցանցի պարունակությունը՝ գանգառն առնելով, փաթեթներ) Չեմ վերցնի: Ինձ իրենց օգնությունը պետք չի...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Հանվածը տեղավորում է ցանցի մեջ՝ դնելով գետնին) Վերցրեք:

ՎԵՏԵՐԱՆ – Չեմ վերցնի, ինձ պետք չի, վերջացավ, վերջ... **(Աթոռ է քաշում մի կողմ, առանձնաձևում բոլորից՝ նստելով առանձնասենյակի դռան դեմ-հանդիման՝ վզից կախելով ստվարաթուղթը՝ «հացադուլ» մակագրությամբ):**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ի՞նչ եք անում, այստեղ դրա տեղը չէ:

ՎԵՏԵՐԱՆ – Կնստեմ էստեղ, ոչ մի տեղ չեմ գնա, օրերով կնքստեմ, ամիսներով կնստեմ, չեմ գնա:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ինչ որ անում եք, գնացեք դրսում արեք, այստեղ ավելորդ տեսարաններ մի՛ սարքեք: Հիմա դուրս կգա, կտեսնի, կգան՝ ձեզ էստեղից կհանեն:

ՎԵՏԵՐԱՆ – Թող գան, թող գան ինձ էստեղից հանեն, տեսնեմ ով պիտի հանի: Թող գան էլի, թող գան: Ո՞վ պիտի գա, ո՞վ, ո՞վ...

Մտնում է երիտասարդը: Երիտասարդ կինը, իր սովորության համաձայն, շրջվում է՝ երես առ երես նրան չհանդիպելու համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴ – (Ինչպես միշտ՝ Երիտասարդ կնոջ ականջի տակ) Չմտնես: Մայրս թողեց գնաց տնից, ետևից գնում եմ, որ բերեմ, չի գալիս:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – (Նույն դիրքում) Չի գա: Նա քեզ ծնել է իր համար, նա քեզ չի ծնել քեզ համար: Իր, իր համար, միայն իր... Քեզ համար նա չէր գնա իր տնից, իր համար է գնացել: Իր և իր ամուսնու: Նա չի ուզում, որ դու իրենց հոգս պատճառես: Ուզում է անես այն, ինչ միայն ինքն է ցանկանում, ինքն ու իր ամուսինը: Նա չի ուզում իր կյանքը նորից սկսել, քեզ ինչո՞ւ պիտի թողնի:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չմրսես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ քնում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – (Երիտասարդին) Նա իր ամուսնու համար է անում այդ բոլորը, հայրդ էլ անում է իր կնոջ համար: Նրանք քեզ միշտ երեխայի տեղ են դնելու: Իրենց երեխա է պետք:

Հեռախոսի զանգ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Լսափողի մեջ) Նա զբաղված է, չի կարող վերցնել:

ԵՐԻՏԱՍԱՐԳ – Ինչ որ զինդ էր՝ տվել եմ, էլ ի՞նչ ես ուզում ինձնից, ի՞նչ...

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – Հիմա ես էլ ոչինչ չեմ ուզում: Պիտի ծնվի: Իմ ծնողները իրենց տնից չեն թողնում զնում, ինձ են իրենց տնից հանում՝ իրենց միակ կերակրողին: Ես մարմնավաճառ չեմ, ես մարմնավաճառ չեմ: Մարմնավաճառ չեմ դառնում, մարմնավաճառ դարձնում եմ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Անհարմար է, ես գետիցն եմ մտնում ձեր պատճառով, վերջ տվեք:

ԵՐԻՏԱՍԱՐԳ – (Գլանակ վառելով) Արի դուրս, դրսում խոսենք:

Երեխաները լցվում են մերս:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Էլի սրանք եկա՞ն: Դուրս եկեք, շուտ:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Դուրս եկեք, ինչո՞ւ եկաք: **(Երեխաները փախչում են այս ու այն կողմ: Մեկին դուրս է հանում, մյուսն է մտնում)** Դուրս եկեք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Արագացրեք:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ինձ էլ չեն լսում, ես ի՞նչ անեմ: **(Երեխաների ետևից ընկած)** Դուրս եկեք, շուտ արեք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Ուտերը թոթվելով) Հետաքրքիր մարդ է... Որ ձեզ չեն լսում, ի՞նձ պիտի լսեն:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Դուրս եկեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Երեխաներ են, ի՛նչ կա որ, թողեք հանգիստ նստեն՝ մինչև կմտնեք, դուրս կգաք, հո՞ ժամերով չեք մնալու ներսում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Գոնե դուք այդպես մի՛ խոսեք: **(Համբերությունը հատած)** Որտե՞ղ նստեն, ինչո՞ւ նստեն:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Ո՞ւմ են խանգարում:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Դե իհարկե, ձեզ համար ի՛նչ... Պիտի կանչի, ինձ դիտողություն անի: Ես չգիտեմ, ոչ մեկին երեխայով ներս չեմ թողնելու: Իմ պարտքն է զգուշացնել, զգուշացնում եմ: Հետո չասեք՝ չի ասել:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Իրենք ներս չեն մտնելու, ես եմ մտնելու:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Թեկուզ... Թող դուրս գամ, դրսում սպասեն, մանկապարտեզ հո չի՞: Ի՛նչ մարդիկ են...

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Դուրս եկեք, դուրս եկեք՝ դրսում սպասեք:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Երեխաներին ինչո՞ւ են բերում հետները, չեմ հասկանում:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – **(Բռնկվելով)** Եթե տանը կին լիներ, ինչո՞ւ պիտի բերեի:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Լսեք, դա ինձ վերաբերո՞ւմ է:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Բա ո՞ւմ է վերաբերում, ո՞ւմ, է՛, ո՞ւմ... Թող իր փոխարեն ինձ տանեին նստեցնեին, գլխներին լիներ, պահեր: Հիմա նրա՞ն պատժեցին, թե՞ ինձ: Թող հարկադիր տային, թող պայմանական տային, թող տուգանեին, մարդ ու կին գիշեր-ցերեկ աշխատեինք, տայինք: Սա անելու բա՞ն է, որ անում են:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի, ինչո՞ւ եք ինձ ասում:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԳ – Բա ո՞ւմ ասեմ: Մրանց ինչի՞ համար որբացրին, սրանք ի՞նչ մեղք էին գործել: Մարդ ու կին աշխատեն, չկարողանա՞ն երեխա պահել: Ամիսներով աշխատավարձ չեն տալիս, որ ապրես, հետո բռնում են, ասում են՝ գող ես: **(Երեխաները շրջապատել են տկարամիտ տղային):**

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՄԱՐԳ – **(Ցնցվելուց հետո)** Իրավական դաշտ, բարեփոխումներ, հարկեր, վարկեր, կեր, կեր՝ հանուն ժողովրդի բարօրության և նրա կենսամակարդակի էլ ավելի բարձրացման: Խուճապի չմատնվել: **(Նստում է):**

Կաշվե բաճկոնով տղամարդը կանգնում է Քարտուղարուհու առջև՝ հարցական նայելով նրան:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Հիստերիկ) Ես ի՞նչ կարող եմ անել:
(Բաճկոնով տղամարդը հեռանում է) Էս ընդունելության օրը որ
գալիս է, մարդ քիչ է մնում գլուխն առնի, փախչի էստեղից:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չքնես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մրսում:

Թխադեմ տղամարդը վեր է կենում տեղից՝ մոտենալով

Քարտուղարուհուն:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Պաշտպանվելու համար քարձրացնում է ձեռքերը, վանվելով) Հեռու, հեռու... Չմոտենաք, չմոտենաք... Մի մոտեցեք ինձ...

ԹԻՍԱԴԵՄ ՏՂԱՍԱՐԴ – (Անցնելով նստածների առջևով) Իմ վրայից հո՞տ է գալիս... Ասեք, էլի, ասեք... **(Նստածները քացասաքար տարուրերում են գլուխները)** Բա ինչո՞ւ է խուսափում... Ասեք, էլի, ասեք... Իմ վրայից հո՞տ է գալիս... Ասե՛ք...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Քաղաքացի՛...

ԹԻՍԱԴԵՄ ՏՂԱՍԱՐԴ – (Նստելով տեղը) Ներողություն, էլ չեմ խոսի, ընդ՛... **(Ափով փակում է բերանը):**

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ԿԻՆ – (Աչքի անցկացնելով ժամացույցը) Ամեն մեկը որ մտնի, ժամերով մնա ներսում, մենք ե՞րբ պիտի մտնենք, հետաքրքիր է:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա:

Մտնում են Կրտսեր որդին և Աղջիկը:

ԱՂՋԻԿ – (Ծնողներին, գործնական) Պատրաստ եք: Մամ, գնացինք, տաքսին սպասում է:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, վեր կաց:

ԱՂՋԻԿ – Մամ, քեզ հետ եմ, գնացինք:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Գալիս են՝ թող գան, ուզում են՝ թող գան:

ԱՂՋԻԿ – Մամ, գնացինք, տաքսին սպասում է:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, վեր կաց:

ԱՂՋԻԿ – Մամ...

Ծերերը քացասաքար օրորում են գլուխները:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ...

ԱՂՋԻԿ – (Լալկան) Մամ...

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – (Ավագ որդուն) Դ-ո՞ւ ես ասել, որ չգան:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հա, ես եմ ասել: Եթե իմ ասելով չեն գալու՝ թող չգան:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Ո՞նց թե՛ չգան:

ԱՂՋԻԿ – Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞: (**Գառնալով դեպի առանձնասենյակի դուռը**) Հիմա կմտնենք, ինչ որ պետք է՝ իրեն կասենք:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Արի:

Երկուսով մտնում են առանձնասենյակի դռանը:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (**Տեղից վեր թռչելով**) Ո՞ր, ո՞ր... (**Փակելով նրանց ճանապարհը**) Սպասեք, ո՞ր եք գնում:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Թույլ չտաք:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ձեր կարծիքով մենք ինչի՞ համար ենք էստեղ սպասում:

Կրտսեր որդին և Աղջիկը ետ են գալիս ծնողների մոտ:

ԱՂՋԻԿ – Մամ, գնանք, երեխաները կարոտել են:

ԾԵՐ ՄԱՅՐ – (**Լացակումած**) Բա ես չե՞մ կարոտել:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, մորս վերցրու, գնանք, տաքսին սպասում է ներքևում:

ԱՂՋԻԿ – Մամ... (**Ծերերը բացասաբար օրորում են գլուխները**):

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – (**Ավագ որդուն**) Ես գիտեմ, թե ինչի համար ես դա անում... Որ խանգարես, չգնանք... Առանց մեզ սրանք էս երկրում ո՞նց պիտի ապրեն, մտածե՞լ ես...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Նրանք առանց ձեզ էստեղ կապրեն, դուք առանց նրանց էնտեղ չեք կարող ապրել:

ԱՂՋԻԿ – (**Կրտսեր որդուն**) Մարդիկ էլ հանկարծ կհավատան, զիտե՞ս...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ժամանակին ես չեմ եկել իրենց ձեր տնից բերել իմ տուն, իրենք են իրենց ուտքով եկել: Ինչո՞ւ հանկարծ հիմա հիշեցիք իրենց... Ամերիկա չգնայիք, հիմա էլ չէիք հիշի...

ԱՂՋԻԿ – (**Կրտսեր որդուն**) Լսո՞ւմ ես՝ ինչ է ասում... Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞: Մամ...

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Այ հեր, վեր կաց, մորս վերցրու, գնանք:

ԾԵՐ ՀԱՅՐ – (**Ափերը շփելով իրար**) Չունեմ, չունեմ, ինչո՞ւ եք եկել, ինչ որ կար՝ բոլորը տվել եմ ձեզ, էլ ոչ մի կոպեկ չունեմ:

ԱՂՋԻԿ – Անհարմար է, հայրիկ, այդ ինչե՞ր ես ասում: Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞:

ԾԵՐ ՀԱՅՐ – (**Խոցված**) Եկաք ուզեցիք, թաղմանս փողերն էլ տվի, որ գնաք, էլ ի՞նչ եք ուզում:

ԾԵՐ ՄԱՅՐ – (**Քաշելով թևից, լացակումած**) Բալեքիս մի նեղացրու: Իրենք էլ մեղք չունեն:

ԱՂՋԻԿ – Լավ էլի, հայրիկ... Մամ, էս ի՞նչ է ասում մարդկանց
ներկայությամբ:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – (Ակնարկելով Ավագ որդուն) Ինչ որ ասել է՝
ասա, դա է ասում:

ԱՂՋԻԿ – Վիրավորական է, չէ՞, չի կարելի, չէ՞:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – (Ավագ որդուն) Դու տեղ ունե՞ս էս մարդ-
կանց պահելու, որ չես թողնում մեզ հետ տանենք: Մենք քո մասին էլ
ենք մտածում, է՛, մեռակ իրենց մասին չենք մտածում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Գալիս են՝ թող գան, իրենց ձեռքը բռնող չկա,
չեն գալիս՝ ոնց որ էսքան տարի պահել եմ, էլի իմ տանը կպահեմ, ինչ
է եղել որ...

ԱՂՋԻԿ – Դու տուն չունես, դու միսեմյականոց բնակարան
ունես:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Մնան, որ խոհանոցո՞ւմ քնեցնես:

ԱՂՋԻԿ – (Չայնը քարձրացնելով) Ես թույլ չեմ տա, որ իմ
ծնողներին որտեղ ուզի՝ էնտեղ քնեցնի, թույլ չեմ տա:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Կարգի հրավիրելով) Տիկի՛ն, տիկի՛ն,
որտե՞ղ եք գտնվում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հանգիստ եղեք, նրանք խոհանոցում չեն քնի,
ես ու կինս ենք քնում խոհանոցում:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Դու և կինդ մինչև ե՞րբ պիտի խոհանոցում
քնեք: Կտեսնես, որ կինդ էլ գոհ կլինի:

ԱՂՋԻԿ – Մամ, եթե հիմա չեք գալիս, մենք գնանք, տաքսին
ներքևում կանգնեցրել ենք, եկել:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Հայրիկ, մենք գնանք, էլի կգանք:

ԾԵՐ ՀԱՅՐ – Էլ մի՛ եկեք:

ԾԵՐ ՄԱՅՐ – (Քաշելով ամուսնու քկից) Մի՛ ասա:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Չէ՛, չէ՛, կգանք:

ԱՂՋԻԿ – Մամ, կգանք: (Դառնալով Ավագ որդուն) Չի կարելի,
չէ՞, վիրավորական է, չէ՞: Մենք իր մասին մտածում ենք, ինքը մեր
մասին չի մտածում: Եթե մնացին էստեղ՝ ի՞նչ պիտի անեն... Դու քո
զլուխը չես կարողանում պահել, իրենց ո՞նց պիտի պահես:

ԿՐՏՍԵՐ ՈՐԴԻ – Արի: (Ավագ որդու նկատմամբ ոխով) Հետո,
հետո կխոսենք: (Գնում են: Ավագ որդին նրանց ետևից թափ է
տալիս ձեռքը):

ՊԱՅՈՒՄԱՆՎԱԿՆՎ ՏՂԱՄԱՐԴ – (Թխվածք է հանում պայուսա-
կից, տալով երեխաներին) Իրեն էլ հյուրասիրեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Շնորհակալություն, մի տվեք, չի ուտի: Ինչ որ տալիս եմ, թարմ չեղավ՝ չի ուտում: Միս է սիրում, ես սրան որտեղի՞ց միս տամ: Առանց աշխատանքի ո՞նց ապրեմ՝ օդո՞վ: (**Փղճկում է**) Հիմա ես՝ ե՞ս եմ... Ես՝ ես չեմ...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (**Այցելումների**) Թողեք մտնեմ, խնդրում եմ, խնդրում եմ, բոլորիդ եմ խնդրում: Ես չեմ կարող սպասել:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Հերթ գոյություն ունի, չլսեցի՞ք...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ինչո՞ւ եք ասում, ինքը չգիտի՞...

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՄԱՐԴ – (**Ցնցվելուց հետո**) Ուշադրություն, ուշադրություն... Գործի դնել ընտրակաշառքները՝ չընտրվելու դեպքում ընտրվելու համար: Ժողովուրդը կընտրի իր պառլամենտը, պառլամենտը՝ իր ժողովրդին (**Նստում է**):

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (**Կարճատև դադարից հետո, ավելի շատ ինքն իր հետ**) Ես այդպես էլ չեմ հասկանում, մի՞թե չի կարելի մի հոգու բացառություն անել:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ձեր հերթը կհասնի, ինքներդ կանեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Այո՛, կանեմ: Եթե մենք իրար չզիջենք, ոչ որ մեզ չի զիջի:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Խնդրեմ, եթե համաձայն եք, որ ինքը ձեզնից առաջ մտնի, այդ դեպքում դուք չեք կարող մտնել:

ՆՐԱ ԿԻՆԸ – Իհարկե, չի կարող:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ, ես իրենից հետո կմտնեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Ո՛չ, ո՛չ, դուք այլևս չեք կարող մտնել, որովհետև ինքը ձեր փոխարեն պիտի մտնի:

ՆՐԱ ԿԻՆԸ – Դուք զիջում եք ձեր հերթը:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Այո, զիջում եմ, բայց ինչո՞ւ պիտի ես չմտնեմ:

ԹԽԱԴԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Որովհետև զիջում եք, պարզ չի՞:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ձիջում եմ, որ ինձնից առաջ մտնի:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Բայց ինքներդ տեսաք՝ չեմ համաձայնում, որ հերթում նոր մարդ ավելանա:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դուք զիջում եք, բայց ձեզ չեն զիջում:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Հետևաբար դուք չպիտի մտնեք, ձեր փոխարեն ինքը պիտի մտնի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Լսեք, ես պիտի մտնեմ, ես չեմ կարող չմտնել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Խնդրեմ, այդ դեպքում ինքը չի կարող մտնել:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Կամ՝ դուք, կամ՝ նա, երկուսիցդ մեկը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Ինքներդ որոշեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Իրեն կորցնելով) Բայց ես, ես պիտի մտնեմ:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Դե գիտեք ինչ՝ և՛ նա եք ասում, և՛ նա: Պիտի մտնեք՝ մտեք, ո՞վ է ձեզ խանգարում:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Եթե այն քաղաքացին պիտի մտնի՝ ինքը չի կարող մտնել, այդ ի՞նչ եք ասում:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Այո, չի կարող, ես էլ դա եմ ասում:

ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Չի կարող:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Իհարկե, չի կարող:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պիտի մտնեմ, անպայման:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ոչ, դուք չպիտի մտնեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Եթե չեմ մտնելու, ինչո՞ւ եմ եկել:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Մենք չգիտենք, թե դուք ինչու եք եկել, դուք պիտի իմանաք, թե ինչու եք եկել:

ՆՐԱ ԿԻՆԸ – Եթե կարող էիք և չգալ՝ չգայիք:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Դե ուրեմն առանձնապես կարևոր հարց չունեք լուծելու:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞վ չունի, ե՞ս, իսկ սա ի՞նչ է ձեր կարծիքով: (Փորձում է քացել թղթապանակը, նորից բռնում է մատների դողը) Այդ ի՞նձ եք ասում, ի՞նձ... (Մի կերպ քացելուց հետո, մի առ մի հանելով զանազան թղթեր, որոնք թափահարվում են մատների դողից) Նայեք, նայեք, սա նայեք, նայեք... Ո՞վ հարց չունի լուծելու, ե՞ս... երկու անգամ հիվանդանոց եմ ընկել սրանց պատճառով, հաշմանդամության երկրորդ կարգ եմ հանել: Այդ ի՞նձ եք ասում, ի՞նձ... (Շարունակելով հանել անվերջանալի թվացող թղթերը, որոնք օդում փողփողում են ինչպես քամուց) Նայեք, նայեք... (Թղթերը թափվում են հատակին) Նայեք, նայեք... (Ոտքերի տակ անխնա տրորելով, նորերն է հանում) Նայեք... (Երեխաները հավաքում են ցրիվ տրված թղթերը):

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ի՞նչ եք անում, քաղաքացի, ինչո՞ւ եք կեղտոտում հատակը:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Ինքնամոռաց) Նայեք, նայեք... (Մի կողմից հանում է, մյուս կողմից տրորում ոտքերի տակ) Նայեք... (Սկսելով կակազել) Նննայեք... Այդ ի՞նձ եք ասում, ի՞նձ...

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Մենք ձեզ ոչինչ չենք ասում, մենք ձեզ կարգն ենք բացատրում:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – **(Իր սովորական փնթփնթոցով)** Կարգ... Ի՞նչ կարգ... **(Փղճկում է):**

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴ – Գնանք, գնանք ազատեմ բնակարանը:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – Ազատեք՝ ո՞ր գնաք, ութսուն տարեկան կնոջն ամենք՝ ո՞ր տանեք, հինգ-վեց տարեկան երեխային ո՞ր տանեք, հղի կնոջն ո՞ր տանեք:

ՉՍԱՓՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴ – Կգնամ ընտանիքս կբերեմ, այ, էստեղ թող մնան: Ցերեկն իրենցն է, գիշերն էլ թող տան մեզ՝ քնելու տեղ ունենանք:

ՎԵՐԵԱՇՈՒԿՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Ինքն իր հետ, էքստազի մեջ, միանգամից պայծառանալով)** Եկա՛ն, եկա՛ն, եկա՛ն...

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – **(Որ մտած է մրա կողքին, անակնկալի եկած, ակնապիշ նայելով շուրջը)** Ո՞վ եկավ:

ՎԵՐԵԱՇՈՒԿՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Աչքերը տրորելով):** Չէ, չեկան, էլի հետ գնացին: Աչքս մի բռպե փակվեց, ինձ թվաց, թե կինս ու երեխաներս եկան:

Առաջին ամուսինը տարակուսանքով թոթվում է ուտերը:

ՊԱՅՈՒՄԱԿՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Երեխաներին, որ իրար հրմըշտելով ձեռքները մտցրել են պայուսակի մեջ և ինչ-որ բան են ուզում հանել)** Ի՞նչ եք ուզում, այ լակոտներ, ի՞նչ եք ուզում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Մի հուզվեք:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Էլի էս երեխաները եկա՞ն:

ՊԱՅՈՒՄԱԿՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես ներս չեմ մտնի, թող իրենք գնան իրենց մորն ուզեն: Ինձնից են ուզում:

Երեխաներին հավաքելով իրար գլխի՝ մոտեցնում է առանձնասենյակի դռանը:

ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ի՞նչ եք անում, ես արդեն զգուշացրել եմ՝ երեխայով ոչ մեկին ներս չեմ թողնելու: Ասում եմ, որ հետո չասեք՝ չի ասել:

ՊԱՅՈՒՄԱԿՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ես չեմ մտնում, թող իրենք մըտնեն: **(Մոլորված երեխաներին)** Գնանք, ներս մտեք: Մտեք, դե մըտեք... **(Երեխաները լացուկոծ են դնում՝ փաթաթվելով հորը):**

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Երեխաներն ի՞նչ մեղք ունեն:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞վ ունի, ո՞վ, ե՞ս... Չե՞ք մըտնում: Չեզ թողնում եմ գնամ: **(Հեռացնելով իրեն կառչած երեխաներին)** Դե մտեք, մտեք...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Հիստերիկ) Քաղաքացի, ի՞նչ եք անում... Ես ձեզ դուրս եմ հրավիրում: (Չեղքերով հարվածելով սեղանին, ոտքերով՝ հատակին) Դուրս եկեք, դո՛ւրս, դո՛ւրս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ընկերուհի, հանգստացեք: Ընկերուհի...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Նույն ձևով) Դուրս, դուրս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ընկերուհի...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Գազազած) Ի՞նչ է, ի՞նչ եք ասում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացեք: Մարդ էր, զայրացավ, հետո՞... Այդպես էլ չի կարելի:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ԿԻՆ – (Քարտուղարուհու հասցեին) Իհարկե, ինքն իր համար հանգիստ նստած, իրեն ի՞նչ կա...

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ո՞վ է հանգիստ նստած, ե՞ս, դուք կմըտնեք, դուրս կգաք, կզնաք, ձեր պատճառով ինչո՞ւ ինձ վրա խոսի:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Դուք ձեր պարտականությունն եք կատարում՝ բարի եղեք կատարել, ձեզ ի՞նչ է եղել:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Չհանդարտվելով) Ինձ ոչինչ էլ չի եղել, ձեզ թվում է, թե միայն ձեզ է եղել: Մենք մարդ չենք, միայն իրենք են մարդ: **(Աչքերը ցվում են)** Եթե դուք իմ տեղը լինեիք, հիմա այստեղ չէիք լինի: **(Թաշկինակը տանում է աչքերին)** Իսկ դուք ի՞նչ գիտեք, թե ինձ ինչ է եղել: **(Հեկեկում է):**

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Անցավ, լավ, հանգստացեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացեք, ոչ ոք չէր ուզում ձեզ վիրավորել:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Բոլոր դեպքերում դրա կարիքը չկար:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՄԻՆ – Պետք չէր վիրավորել աղջկան:

ՆՐԱ ԿԻՆԸ – Իհարկե, պետք չէր:

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՄԻՆ – Նա իր գործն է անում:

ՆՐԱ ԿԻՆԸ – Աշխատանքի մեջ է վերջապես, նրան էլ կարելի է հասկանալ:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – (Մրբելով աչքերը, հավաքելով իրեն) Ներեցեք:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – **(Տկարամիտ աղային շրջապատած երեսասներին)** Գնացեք, բալիկներ, գնացեք:

ԾԵՐ ՄԱՅՐ – Չքնես:

ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ մըսում:

ՎԵՐՆԱՇՆԱԳԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Դեմքի հանկարծակի պայծառացումով, նորից էքստազի մեջ)** Եկա՛ն, եկա՛ն...

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Ո՞վ եկավ, այ ընկեր:

ՎԵՐՆԱՇՆԱԳԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Կինս ու երեխաներս եկան:

(Գուրգուրանքով) Թողեք, թողեք սիրեմ բալիկներիս:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – **(Ցնցում է նրան)** Ընկեր, ընկեր...

ՎԵՐՆԱՇՆԱԳԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Մթափվելով)** Չէ, չեմ քնել, մի բռպե աչքերս փակեցի, էլի եկան:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – Դուք ձեր աչքերը չեք փակել, ձեր աչքերը բաց են:

ՎԵՐՆԱՇՆԱԳԻԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Բաց ժամանակ էլ եմ մեկնել գալիս, ի՞նչ անեմ:

ԵՐԻՏԱՄԱՐԴ – **(Մտնելով, թիկունքով դեպի ինքը շրջված երիտասարդ կնոջը)** Չմտնես:

ԵՐԻՏԱՄԱՐԴ ԿԻՆ – Պիտի մտնեմ:

ԵՐԻՏԱՄԱՐԴ – Պիտի մտնես, որ ի՞նչ ասես... Ասա, էլի, ասա, իմանամ...

ԵՐԻՏԱՄԱՐԴ ԿԻՆ – Ինչ որ ասելու եմ՝ ներսում կասեմ... Էստեղ ի՞նչ ասեմ... Ինչ որ պետք է՝ ներսում կասեմ...

ԵՐԻՏԱՄԱՐԴ – Ինչո՞ւ պիտի ես քո գոհը դառնամ:

ԵՐԻՏԱՄԱՐԴ ԿԻՆ – Կարծեմ այդ նույն հարցը ես կարող եմ քեզ տալ:

ԵՐԻՏԱՄԱՐԴ – Չես կարող: Իմ փոխարեն կարող էր և մի ուրիշը լինել, դու էլի դու էիր լինելու: Ինչո՞ւ հանկարծ որոշեցիր ինձ վրա կանգ առնել: Այդ ի՞նչն էր, է՛, ի՞նչը, որ իմ մեջ քեզ այդքան մատչելի թվաց, դա չեմ հասկանում: Մտնում ես՝ մտիր: **(Քաշում է թևից՝ փորձում է մտնեցնել առանձնասենյակի դռանը)** Մտիր, դե մտիր:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – **(Հանդիմանանքով)** Չեղավ, այդ արդեն չեղավ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – **(Երիտասարդին)** Չի կարելի, ձեզ չի սազում:

ԵՐԻՏԱՄԱՐԴ – **(Շարունակում է քաշել երիտասարդ կնոջ թևից)** Մտիր, դե մտիր:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՈՒՄԻՆ – Անհարմար է, ձեր հարցերը դրսում կլուծեք:

ՆՐԱ ԿԻՆԸ – Երիտասարդ, մա կին է...

ԵՐԻՏԱՍԱՐԳ – Մտիր, դե մտիր:
 ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Նրա հերթը չի, ինչպե՞ս մտնի:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ – Կմտնես: **(Թափ է տալիս ձեռքը, բորբոքված դուրս է գնում՝ ոտից գլուխ չափելով երիտասարդ կնոջը):**
Երիտասարդ կինը նրա ետևից ոչնչացնող հայացք ձգելով, պայուսակից գլանակ է հանում, վառում է՝ խորը ներս քաշելով ծուխը:
 ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ես խնդրում եմ ընդունարանում չծխել, քանի՞ անգամ կարելի է զգուշացնել:
 ԵՐԻՏԱՍԱՐԳ ԿԻՆ – **(Հանգցնում է)** Չեմ ծխի: **(Ծամոն է տանում քերանը):**
 ԾԵՐ ՄԱՅՐ – Չմրսես:
 ԾԵՐ ՀԱՅՐ – Չէ, չեմ քնում:
 ԾԵՐ ՄԱՅՐ – **(Խաչակնքելով)** Տեր, ողորմեա, Տեր, ողորմեա,
 Տուր աշխարհիս
 խաղաղություն...
 Տեր, ողորմեա, Տեր, ողորմեա...
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Մի արա, այ տղա, քամի ես անում:
 ՊԱՅՈՒՍԱԿՈՎ ՏՂԱՍԱՐԳ – **(Չեռքները պայուսակի մեջ խոթած երեխաներին, պայթելով)** Հիմա ի՞նչ եք ուզում, տվի, էլ չկա՛, չկա՛: Կերեք, հիմա էլ ինձ կերեք, կերեք:
Տկարամիտ տղան դրոշակը ծածանելով գնում է դեպի առանձնասենյակի դուռը:
 ԱՎԱԳ ՈՐԴԻ – Գնա՛ց, գնա՛ց, մի թողեք, հանկարծ ներս կմտնի:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չի մտնի, մի անհանգստացեք:
 ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – **(Տկարամիտ տղային)** Հետ գնա, գնա նստիր տեղը:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Դուք մի ասեք, նա ինքը կգա: **(Տղային)** Արի, հետ արի: **(Տղան վերադառնում է)** Ես մեղավո՞ր եմ, որ նա այսպես է ծնվել:
 ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Տիկին, ես ձեզ բա՞ն ասացի: Բերել եք, զոնե ուշադրություն դարձրեք: Չեր երեխային ե՞ս պիտի հսկեմ:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Նա ոչ մի անկարգ բան չի անի:
 ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ – Ես չգիտեմ, դուք գիտեք՝ կանի, թե չի անի: Ես խնդրում եմ, հետներդ հանկարծ ներս չտանեք: Ասում եմ, որ հետո չասեք՝ չի ասել:
 ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Չեմ տանի:

ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՄԻՆ – (Քարտուղարուհուն) Հերթից դուրս ոչ մեկին... Ես խնդրում եմ:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Եթե դիմացիներն չեն հարգում, թող իրենք իրենց հարգեն:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Բացառություն, ի՞նչ բացառություն...

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Եթե մենք էստեղ մատած, ամեն մեկը գա ու մտնի, ո՞ր կհասնի:

ԳԼԽԱՀԱԿ ՏՂԱՄԱՐԴ – (Յնգվելուց հետո) Մենք մեր ուղուց չենք շեղվի... Մենք կմեռնենք, սոցիալիզմը կապրի...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Գազազած, մղվելով դեպի առանձնասենյակի դուռը) Ես պիտի մտնեմ:

Քարտուղարուհու ճիչը: Խառնակ վիճակ: Վեր են կենում տեղերից:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Թույլ չտաք:

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ոչ մի դեպքում:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Երբեք:

Բաճկոնով տղամարդը բացում է դուռը՝ տեղնուտեղն ընկրկելով:

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ր է... Մարդ չկա:

Այցելուները պաշարում են առանձնասենյակի դուռը:

ՊԱՅՈՒՄԱԿՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞նց թե...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – Ո՞վ չկա...

ԱՎԱԳ ՈՐԴԻ – Ոչ ոք չկա:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Սեղանը կա, աթոռը կա, ինքը չկա:

Քարտուղարուհին անտեղյակ թոթվում է ուտերը, որ այնպես էլ մնում են վեր քաշված:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆ – Ո՞նց չկա...

ԲԱՃԿՈՆՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Չկա... Մարդ չկա...

Տեսնելով առանձնասենյակի տիրոջ թափուր աթոռը՝ այցելուները ապշանքից քարացել են: Մեկից շրջվում են անշարժանալով՝ հայացքներն ուղղած հանդիսատեսին:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

1990, 2000 թթ.

ԿԱՐՈՒՍԵԼ

Կատակերգություն երկու մասից

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՇՄԱՎՈՆ

ՀՐԱՆՈՒՇ

ԲԵՆԻԿ

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ

} – տարբեր միջխտրությունների

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ պատասխանատու աշխատողներ

ՎԱՐՈՍՅԱՆ – ավտոպարկի տնօրեն

ՔԵՐՈԲՅԱՆ – միավորման գլխավոր տնօրեն

Գործողությունը՝ Երևանում:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Սուփրիկյանի աշխատասենյակը: Հեռախոսի զանգ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այլո...

ՏՂԱՄԱՐԳՈՒ ՉԱՅՆ – Ես ընկեր Սուփրիկյանին եմ խնդրում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես եմ, Սուփրիկյանն է, ասեք, լսում եմ:

ՉԱՅՆ – Ընկեր Սուփրիկյան, Եփրեմյանն է: Ցուցակները կազմել ենք, բայց այդքան զումար չունենք, որ վաթսուն հոգու պարզևհավելում տանք քառասուն ռուբլու չափով:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Հանդիմանանքով) Եփրեմյան, Եփրեմյան, ինչո՞ւ եք խառնվել իրար, ի՞նչ է պատահել, մարդիկ աշխատել են, պիտի վարձատրվեն, ինչի՞ մասին է խոսքը: Բարոյական խրախուսանքի ձև գոյություն ունի, մի մասին էլ պատվոգրեր տվեք անբասիր աշխատանքի համար:

ՉԱՅՆ – Քանի՞ հոգու:

ՇՄԱՎՈՆ – (Անհամարձակ, զգուշությամբ մտնելով) Կարելի՞ է, ընկեր Բալաբեկյան: (Մնում է դռան տակ կանգնած):

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Ուշադրություն չդարձնելով, կարծես չնկատելով էլ, որ մարդ մտավ) Ես չգիտեմ, դա արդեն դուք որոշեք:

ՉԱՅՆ – Մե՞նք...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այո:

ՇՄԱՎՈՆ – (Կարծելով «այոն» իրեն է վերաբերում) Կարելի՞ է, ընկեր Բալաբեկյան:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այո, դուք... Եթե փողը չի բավականացնում, երեսուն հոգու պարզևհավելում տվեք, երեսուն հոգու՝ պատվոգիր կամ հակառակը...

ՉԱՅՆ – Պատվոգիր չեն ուզում, փող են ուզում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մեղավորը դուք եք, գաղափարական-դաստիարակչական աշխատանք չեք տանում մարդկանց հետ: Իրենց ուզելով է...

ՉԱՅՆ – Պատվոգրերն էլ են վերջացել, մի քանի հատ է մնում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մարդ ուղարկեք ինձ մտտ, թող զա մինիստրոսթյունից տանի: (Լսափողը դնելուց հետո: Շմավոնին) Լսում եմ:

ՇՄԱՎՈՆ – (Պարտադրված երկյուղածությամբ, հարգալից) Բարև ձեզ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բարև... Ասեք:

ՇՄԱՎՈՆ – (Հավատով) Ես եմ, եկել եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Լավ ես արել, որ եկել ես, հետո՞...

ՇՄԱՎՈՆ – (Դռան կողմը նայելով, վախվորած) Շատ ներողություն... (Ծրար է հանում ծոցագրպանից, դնում սեղանին):

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Անակնկալի եկած, մեկից բղավելով) Ընկեր, ի՞նչ եք անում...

ՇՄԱՎՈՆ – (Առաջին իսկ հնչյունից վեր է թռչում, ընկրկելով) Կներեք... Մխավեցի...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Կշտամբանքով) Ինչո՞ւ եք դնում սեղանին:

ՇՄԱՎՈՆ – (Նոր միայն հասկանալով նրան, մտերմիկ) Որտե՞ղ դնեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չեմ հասկանում...

ՇՄԱՎՈՆ – Ես եմ, եկել եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տեսնում եմ:

ՇՄԱՎՈՆ – (Պատրաստակամ) Չեզ հետ խոսել եմ, դուք եք ասել, որ զամ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Հա, բայց չեմ բերում ու այդպես միանգամից դնում սեղանին:

ՇՄԱՎՈՆ – Ներողություն... (Շփոթված) Չգիտեի:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Ծրարը դնելով դարակում) Ոչինչ... Ես արդեն խոսել եմ, գնացեք, կանի...

ՇՄԱՎՈՆ – (Կերպարանափոխվելով, քեթևացած) Շատ, շատ շնորհակալ եմ, հոգաչափ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Թեև ցանկացողները շատ են, մինիստրի մակագրությամբ էլ դիմումներ կան, դա էլ ասեմ:

ՇՄԱՎՈՆ – (Թրթռացող կասկածանքով) Կարո՞ղ է հանկարծ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, արդեն որոշված է: Ուրիշ թեկնածու չի մնացել, դու ես:

ՇՄԱՎՈՆ – (Հուզված) Շատ, շատ շնորհակալ եմ, հոգաչափ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մյուսների գործերը հետ են տվել տարբեր պատճառներով: Բնավորություն է՝ խոսք եմ տվել, պիտի անեմ: Կգընաս, հենց այսօր էլ հրամանդ կտան:

ՇՄԱՎՈՆ – (Աչքերը փայլում են ուրախությունից) Կտա՞ն...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Իսկ ինչո՞ւ պիտի չտան: (Ակնարկելով ծրարը) Լրիվ չէ՞ր:

ՇՄԱՎՈՆ – Լրիվ էր:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բա էլ ինչո՞ւ ես կասկածում:

ՇՄԱՎՈՆ – (Ձարմացած) Ուրեմն կարո՞ղ է պատահի... Ուզո՞ւմ եք, հաշվեք, նոր գնամ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Անհարմար չե՞ս զգում, հիմա ես պիտի նըստեմ փող հաշվե՞մ: Ինձ ինչի՞ տեղ ես դրել:

ՇՄԱՎՈՆ – Չէ, չէ, հաշվեք, էլի, խնդրում եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Վերջացրու, ասում եմ... Եթե մարդկային հավատն էլ վերացավ, էլ ինչո՞ւ ենք ապրում:

ՇՄԱՎՈՆ – (Կաշկանդվելով) Ախր... Ամոք էլ է ասելը...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ է պատահել: Ասա, ինչո՞ւ ես քաշվում: Օգնել է պետք՝ օգնենք:

ՇՄԱՎՈՆ – (Ամոթից կախելով գլուխը) Ընտանիք չեմ կարողանում պահել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Զմծիծաղով) Իբր մենք կարողանո՞ւմ ենք... Հիմա կպահես:

ՇՄԱՎՈՆ – Երկու տեղ եմ աշխատում, որ երկուսը միասին մի աշխատավարձ դառնա:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Անհաղորդ) Պարզ է:

ՇՄԱՎՈՆ – Գիշերները տանը չեմ, ցերեկներն էլ զալիս եմ քնում, էլի թողնում գնում գործի:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Անհաղորդ, նույն ձևով) Հասկանալի է:

ՇՄԱՎՈՆ – Մի օր չի, երկու օր չի...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Նույն ձևով) Դժվար է, իհարկե:

ՇՄԱՎՈՆ – Կինս... լավ կին է, բայց խեղդում է:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բոլոր կանայք էլ խեղդում են, ուշադրություն մի դարձրու:

ՇՄԱՎՈՆ – Ասում է՝ մի կարգին տեղ էլ դու աշխատիր, որ մենք էլ ապրենք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Կանայք ինչ որ ասում են՝ ճիշտ են ասում: Տղամարդու գործն է դժվար: Դե գնա, էլ մի՛ ուշացրու:

ՇՄԱՎՈՆ – Ուրեմն հարյուր տոկոսով հանգիստ լինե՞մ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Երկու հարյուր տոկոսով: Ես ինչ որ անում եմ, անում եմ իմ հոգեկան բավականության համար նախ և առաջ: Բոլոր դեպքերում մարդը պիտի մարդ մնա: Դա էլ ասեմ:

ՇՄԱՎՈՆ – (Երջանիկ) Շատ, շատ շնորհակալ եմ, հոգա-
չափ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տեղյակ կպահես, իմանամ ինչ եղավ:

ՇՄԱՎՈՆ – (Լրջանալով) Կարո՞ղ է...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, այ մարդ, ասում եմ, ուրեմն՝ վերջ:

ՇՄԱՎՈՆ – Ներողություն...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բայց եթե հանկարծ որևէ հարց ծագի...

ՇՄԱՎՈՆ – (Տազնապով) Ի՞նչ հարց...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ոչ մի հարց... Օրինակի համար եմ ասում...

Եթե ծագի, թող ինձ զանգահարի:

ՇՄԱՎՈՆ – Կծագի՞ր որ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, չէ, չի ծագի, հանգիստ գնա: Ասել է՝
ժամը մեկին լինես իր մոտ:

ՇՄԱՎՈՆ – Որ ժամին որ ասեք... Մեկին է պետք, մեկին
լինեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ազատ ես, կարող ես գնալ:

ՇՄԱՎՈՆ – Ներողություն, մի բան էլ հարցնեմ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Հարցրու:

ՇՄԱՎՈՆ – Հետո էլի հետ գա՞մ ձեզ մոտ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Եթե պետք լինի, արի:

ՇՄԱՎՈՆ – Բայց պետք չի լինի, չէ՞...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, հեռախոսով տեղյակ կպահես:

ՇՄԱՎՈՆ – Շնորհակալ եմ, շատ, շատ, հոգաչափ... (Ինքն
իրեն) Փրկվեցի... (Գնում է):

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Հետևից, տնկելով մատը) Ի՞նչ մարդու հա-
մար ասես միջնորդում եմ: (Վեր է կենում, գնում է ներսից բանալիով
կողպում դուռը: Վերադառնալով իր տեղը՝ դարակից հանում է ծրա-
րը, սկսում հաշվել): Այս մանր փողերը որտեղի՞ց է հավաքել բերել...
Սա ձեռ է առնո՞ւմ ինձ... (Շարունակում է հաշվել):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Վարոսյանի աշխատասենյակը ավտոպարկում:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Դեպի սելեկտորը) 01-61-ի վարորդին ասեք
պարկից դուրս չգա: Ժամը երկուսին՝ ինձ մոտ... Տուժած
քաղաքացու հետ միասին:

Մտնում է Շմավոնը:

ՇՄԱՎՈՆ – Կարելի՞ է:
 ՎԱՐՈՍՅԱՆ – (Առանց գլուխը քարձրացնելու) Ասեք:
 ՇՄԱՎՈՆ – Բարև ձեզ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Բարև... Լսում եմ:
 ՇՄԱՎՈՆ – (Համարձակություն ձեռք քերելու մղումով) Ինչ-
 պե՞ս եք:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Շնորհակալություն: Ասեք, լսում եմ:
 ՇՄԱՎՈՆ – Դիսպետչերի տեղի համար...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Այսի՞նքն...
 ՇՄԱՎՈՆ – (Նույն հավատով) Ես եմ, եկել եմ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Չհասկացա:
 ՇՄԱՎՈՆ – (Մտածելով, որ չի կենտրոնանում, մտերմաբար,
 ասես գլխի զցելով) Դիսպետչերի տեղի համար...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Ի՞նչ եք ուզում, այ ընկեր, պարզ ասեք, հասկա-
 նամ:
 ՇՄԱՎՈՆ – (Նույն ձևով, ավելի ընդգծված) Դիսպետչերի
 տեղի համար...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Դիսպետչերի տեղի համար՝ ի՞նչ...
 ՇՄԱՎՈՆ – (Մտածելով, որ ուր որ է հիմա կհասկանա) Ես եմ,
 եկել եմ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Բայց դուք ո՞վ եք:
 ՇՄԱՎՈՆ – (Չարմացած, որ դեռ չի կռահում) Ես եմ...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Էլի ասում է՝ ես եմ... (Բռնկվելով) Ես էլ ես եմ,
 հետո՞...
 ՇՄԱՎՈՆ – (Իրեն կորցրած) Ասում եմ՝ ես եմ, եկել եմ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Տեսնում եմ, որ դու ես, բայց դու ո՞վ ես:
 ՇՄԱՎՈՆ – (Հուսահատ) Ասում եմ՝ ես եմ, ընկեր Վարոսյան:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Մարդ կխելագարեցնի այս մարդը... Գիտեմ,
 որ դու ես, բայց դու ո՞վ ես:
 ՇՄԱՎՈՆ – (Մոլորված) Շմավոնն եմ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Ո՞ր Շմավոնը:
 ՇՄԱՎՈՆ – Գինոսյան:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Գինոսյան Շմավոնն ո՞վ է:
 ՇՄԱՎՈՆ – (Շվարած) Ես եմ...
 ՎԱՐՈՍՅԱՆ – (Համբերությունը հատած) Այ ընկեր, այ ընկեր,
 գիտեմ, որ դու ես, բայց դու ո՞վ ես:
 ՇՄԱՎՈՆ – (Հլու-հնազանդ) Գինոսյան Շմավոնը...

ՎԱՐՈՍՅԱՆ – (Կատաղություն) Ինձ անուն-ազգանուն-հայր-անուն մի ասա, դրանք ինձ պետք չեն: Գինոսյան Շմավոն, Գինոսյան Շմավոնն ո՞վ է...

ՇՄԱՎՈՆ – (Ասես ինքն իրենից վերացած) Ես եմ...

ՎԱՐՈՍՅԱՆ – (Փրփրած) Այս մարդն ի՞նչ է ուզում ինձանից... Ի՞նչ եք ուզում ինձնից: Ներկայացեք, տեսնեմ ով եք... Ինչո՞ւ եք գրադեցնում ավելորդ տեղը:

ՇՄԱՎՈՆ – (Թևաթափ) Ասում եմ՝ Գինոսյան Շմավոնը ես եմ...

ՎԱՐՈՍՅԱՆ – Լավ, հասկացա, դու ես, բայց ի՞նչ ես ուզում ինձնից, ինչո՞ւ ես եկել:

ՇՄԱՎՈՆ – Ժամը մեկն է, եկել եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Նախ և առաջ մեկին հինգ է պակաս, բայց դա ի՞նչ կապ ունի...

ՇՄԱՎՈՆ – Իմ ժամացույցը կարո՞ղ է սխալ է: Գնամ, հինգ րոպեից գա՞մ: **(Մոտենում է դռանը):**

ՎԱՐՈՍՅԱՆ – Սպասեք, ո՞ր եք գնում, ես պայմանավորվածություն չունեմ ձեզ հետ:

ՇՄԱՎՈՆ – Իմ մասին խոսել եմ, ասել եք՝ ժամը մեկին թող գա:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ասել եմ գաք, որ ի՞նչ անեմ:

ՇՄԱՎՈՆ – Դիսպետչերն անհանգիստ է, աշխատեմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Հարվածելով սեղանին) Վերջ տվեք... Բոլորը անազնիվ, հեշտ աշխատանքի եք վազում:

ՇՄԱՎՈՆ – (Կարկամելով) Խոսել եմ, ազնիվ խոսք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Մի դիսպետչերի տեղ է, օրը հարյուր մարդ է գալիս:

ՇՄԱՎՈՆ – Ես չեմ եկել, դուք եք կանչել ժամը մեկին:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ես ոչ ոքի չեմ կանչել: Ես գիտեմ ձեր ուզածն ինչ է... Որ նստած տեղը ամեն մի վարորդ մի ռուբլի խոթի ձեր գրպանը:

ՇՄԱՎՈՆ – Ես դրա համար չեմ եկել, ինձ ցերեկային աշխատանք է պետք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ասացի՛ ես տեղ չունեմ:

ՇՄԱՎՈՆ – Քսանհինգ տարի գիշերային հերթապահ եմ տարբեր հիմնարկներում, մեկի փոխարեն երկու տեղ եմ աշխատում, որ երկուսը միասին մի աշխատավարձ դառնա:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ինձ կենսագրություն մի՛ պատմեք:

ՇՄԱՎՈՆ – (Լարված) Մի գիշեր մի տեղ եմ, մի գիշեր մի տեղ եմ... Տան երես չեմ տեսնում, տաք անկողնու կարոտ եմ, ազնիվ խոսք, ամոթ էլ է ասելը...

ՎԱՐՈՍՅԱՆ – Ինչի՞ համար եմ այդ պատմությունները, չեմ հասկանում:

ՇՄԱՎՈՆ – Բա ո՞ւմ ասեմ... Կինս կռվում է ինձ հետ, լաց է լինում, գոռում է, բղավում է, ասում է՝ մի գիշեր տանը պիտի մնա՞ս, թե՞ չէ...

ՎԱՐՈՍՅԱՆ – Էհ, մնա...

ՇՄԱՎՈՆ – Ո՞նց մնամ, որ գիշերներն եմ աշխատում: Որ հնարավորություն լինի, բա չեմ մնա՞: Եթե իմ կնոջ տեղը ձեր կինը լինի, կարծում եք, թե կտանի՞: Շատ ներողություն, երկուսով ենք, դրա համար եմ ասում, ամոթ էլ է ասելը, ազնիվ խոսք, երկուսս էլ տղամարդ ենք. եթե մարդը կնոջ մոտ չքնի, էլ ի՞նչ ամուսին... Երկուսով ենք, դրա համար եմ ասում: Մարդ ենք, ախր մի անգամ ենք աշխարհ գալիս: Երկրորդ անգամ եկողի հերն եմ անիծել:

ՎԱՐՈՍՅԱՆ – Վերջացրի՞ք:

ՇՄԱՎՈՆ – (Չհանդարտվելով) Բա ամիսը մի գիշեր էլ տանս չքնե՞մ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Էհ, քնիր...

ՇՄԱՎՈՆ – (Հուզմունքից կերկերվող ձայնով) Ո՞նց քնեմ, որ գիշերներն եմ աշխատում:

ՎԱՐՈՍՅԱՆ – Անհարմար է, քեզ տղամարդու պես պահիր, ինչո՞ւ ես հուզվում:

ՇՄԱՎՈՆ – Չեմ հուզվում, լացս է գալիս... Ամոթ էլ է ասելը, ազնիվ խոսք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Գինոսյան, բայց դու հետաքրքիր մարդ ես, գիտե՞ս:

ՇՄԱՎՈՆ – Հետաքրքիր չեմ, վիճակս վիճակ չի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Չէ, հետաքրքիր ես, ես հետաքրքիր մարդկանց սիրում եմ: Բայց հենց որ տեսնում եմ՝ մարդն անազնիվ է, գալիս է միայն փող փախցնելու համար, դառնում է իմ անձնական թշնամին: Եթե քեզ իսկապես ցերեկային աշխատանք է պետք, արի բանվոր ընդունեմ, ավտոմեքենա լվա: Դժվար գործ չի:

ՇՄԱՎՈՆ – Հիվանդության երկրորդ կարգ ունեմ, ախր ես ո՞նց բանվոր աշխատեմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Իմ հնարավորությունը դա է, ես ուրիշ ազատ տեղ չունեմ:

ՇՄԱՎՈՆ – Ունեք, ես իմացել եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ումից որ իմացել ես, սխալ ես իմացել: Տնօրենը ես եմ, ասում եմ՝ չունեմ:

ՇՄԱՎՈՆ – Ունեք, ինձ ձեր դիսպետչերն է ասել, որ երկու օր առաջ աշխատանքից դուրս է եկել: Բա ինչն՞ է եք ասել, որ ժամը մեկին գամ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ես այդպիսի բան չեմ ասել: (Հարվածելով սեղանին) Ո՞վ է այդ ստորը, ո՞վ է այդ խաբեբան, որ իմ անունից խոստումներ է տալիս:

ՇՄԱՎՈՆ – (Ցնցվելով) Ո՞նց թե... Ո՞նց թե... (Գլուխը բռնած՝ դուրս է գնում):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԳ

Շմավոնի բնակարանը: Մտնում է՝ ընկճված կերպարանքով:

ՀՐԱՆՈՒՇ – (Ընդառաջ գնալով, անհամբեր) Ի՞նչ եղավ, դե ասա...

Շմավոնը լռում է:

Հը՞, թեզ հետ եմ... Ասա, շուտ արա, սիրտս կանգնում է:

ՇՄԱՎՈՆ – Ուղարկեց, գնացի, չընդունեց, ասում է՝ ազատ տեղ չունեմ:

ՀՐԱՆՈՒՇ – (Անակնկալի եկած) Չե՞ս տվել:

ՇՄԱՎՈՆ – Տվել եմ:

ՀՐԱՆՈՒՇ – Որ տվել ես, ո՞նց չունի:

ՇՄԱՎՈՆ – Ասում է՝ դու ես եկել, ես չեմ կանչել, ո՞վ է այդ խաբեբան, որ իմ անունից խոստումներ է տալիս:

ՀՐԱՆՈՒՇ – (Ասշած) Բալաբեկյանի՞ մասին էր ասում:

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ իմանամ... Բա էլ ո՞ւմ...

ՀՐԱՆՈՒՇ – Բալաբեկյանն իմացա՞վ:

ՇՄԱՎՈՆ – Աշխատանքի վերջն է, վաղն առավոտ կգնամ, կասեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Իրենց ձե՞ն են առել: Հիմա պիտի գնաս:

ՇՄԱՎՈՆ – Հիմա ուշ է, վաղը կգնամ:

ՀՐԱՆՈՒՇ – (Ոտքը զարկելով գետնին, լացակումած) Չէ, չէ, հիմա պիտի գնաս: Գժվե՞լ ես... Գնա, իմացիր, ինչ է եղել: Տարել

տվել ես, հիմա էլ չե՞ս ուզում գնաս: Տանը մի կռպել չկա, քանի՞ հոգուց եմ պարտք արել, տվել ձեռքդ, որ տանես տաս, դու գիտե՞ս:

ՇՄԱՎՈՆ – (Չայրացկոտ) Չանեիր:

ՀՐԱՆՈՒՇ – Հիմնարկ թողեցի՞ր, որ չմտնես... Քանի՞ տարի խաբեցին, տարան ու բերին: Ինչո՞ւ չարեցին... Առանց փողի գործ չեն անում, չեն անում, չհասկացա՞ր:

ՇՄԱՎՈՆ – Չեն անում, թող չանեն... Մինչև հասնեցի տվեցի իրեն, կես մարդ դառա:

ՀՐԱՆՈՒՇ – Պիտի տայիր, հո չէիր թողնելու:

ՇՄԱՎՈՆ – Բա որ չվերցնե՞ր...

ՀՐԱՆՈՒՇ – Ինչո՞ւ պիտի չվերցնեիր: Հիմա չվերցնող կա՞: Բա ուրիշները ո՞նց են անում...

ՇՄԱՎՈՆ – (Բռնկվում է՝ խայթվածի պես վեր թռչելով) Էլի ուրիշները... Ուրիշների հերն էլ անհծած, ուրիշների հետ ես ի՞նչ գործ ունեմ: Այդքան փողը որտեղի՞ց ես տալու, մտածե՞լ ես...

ՀՐԱՆՈՒՇ – Գործդ թող լինի, գիշեր-ցերեկ կաշխատեմ, կտամ:

ՇՄԱՎՈՆ – (Հեզմանքով) Լավ էլ կտաս...

ՀՐԱՆՈՒՇ – Հա, կտամ... Սա կյա՞նք է... Գիշերները տանը չես, ցերեկներն էլ գալիս ես քնում, էլի թողնում գնում: Էն տունը տուն չի, որտեղ գիշերը քնած տղամարդ չկա: Մի գիշեր տանդ պիտի մնա՞ս, թե՞ չէ... **(Լացով) Ո՞վ կտաներ... Ո՞ր կինը կտանի, որ ես այսքան տարի տանում եմ:**

ՇՄԱՎՈՆ – Էդպես արեցիր, էլի, որ տարա տվի: Ես էդ բանն անո՞ղ էի, որ արեցի:

ՀՐԱՆՈՒՇ – (Արցունքները սրբելով) Սովոր ես, որ ամեն ինչ ես անեմ: Գնա, շուտ արա, գնա իմացիր...

ՇՄԱՎՈՆ – Մի վայրկյան աչք չեմ փակել, գոնե կես ժամ քնեմ, գնամ:

ՀՐԱՆՈՒՇ – Ասացի՛ չէ... Հիմա պիտի գնաս:

ՇՄԱՎՈՆ – Գնամ, բայց ախր... շշմած եմ:

ՀՐԱՆՈՒՇ – Ինչո՞ւ եկար, ուղիղ գնայիր Բալաբեկյանի մոտ:

ՇՄԱՎՈՆ – Եկա, որ քեզ ասեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Ինձ որ ասացիր, ես ի՞նչ պիտի անեմ:

ՇՄԱՎՈՆ – Ախր ինչո՞ւ ինձ գցեցիր դրանց դռները... Ո՞նց գնամ...

ՀՐԱՆՈՒՇ – Տղամարդը դո՞ւ ես, թե՞ ես...

ՇՄԱՎՈՆ – (Մինչև հոգու խորքը վիրավորված) Ես եմ, ես եմ... Ինձ նման տղամարդու հերն եմ անիծել... Ես եմ...

ՀՐԱՆՈՒՇ – Երեխաներիդ, թռռներիդ մասին դեռ չեմ խոսում, վաղը, մյուս օրը թռչակի ես անցնելու. աշխատանքիդ տեղը չփոխե՞ս, որ գոնե մի քանի ռուբլի ավել ստանաս:

ՇՄԱՎՈՆ – Չէ... Թռչակի էլ չեմ գնա, իրենց լինի իրենց տված թռչակը, չեմ ուզում:

ՀՐԱՆՈՒՇ – Բա ինչո՞ւ այդքան փող պարտք արեցի, տվեցի ձեռքդ, որ գնաս, գաս, ասես՝ էլի չեղա՞վ...

ՇՄԱՎՈՆ – Որ չընդունեց, ես ի՞նչ անեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Դե դու էլ գնա, Բալաբեկյանին ասա՝ չընդունեց:

ՇՄԱՎՈՆ – Վաղն առավոտ կգնամ, հիմա ուշ է:

ՀՐԱՆՈՒՇ – Ուշ չի, դեռ մի ժամ կա... Գնա... (Լացով) Այ, իմացիր, ես քեզ հետ չեմ ապրի, չեմ ապրի...

ՇՄԱՎՈՆ – Լավ, լավ, գնում եմ: (Դուրս է գնում):

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Սուփրիկյանի աշխատասենյակը:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Հեռախոսով) Զերոբյան, իմ ուղարկած մարդը եկա՞վ, հրամանը տվի՞ր:

ԶԵՐՈԲՅԱՆԻ ՉԱՅՆԸ – Չէ, չի եկել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Տարակուսանքով) Չի եկե՞լ... Ասել եմ՝ ուղիղ ժամը մեկին լինի քեզ մոտ: Կարո՞ղ է պատահի տեղում չես եղել, եկել, գնացել է:

ՉԱՅՆ – Չէ, ընկեր Սուփրիկյան, մի բուպե չեմ բացակայել: Այդ տեղի համար քանի հոգի եկավ՝ բոլորին հետ տվի: Ո՞ր է, բա ինչո՞ւ չի գալիս:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տեղո՞ւմ ես:

ՉԱՅՆ – Հիմա դուրս եմ գալիս: Եթե կարող է, թող կես ժամից գա:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Լավ: (Դնում է լսափողը):

Մտնում է Շմավոնը՝ այլաշված կերպարանքով:

ՇՄԱՎՈՆ – (Հևալով) Կարելի՞ է:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Արի, հենց նոր քո մասին էի խոսում: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես գնացել:

ՇՄԱՎՈՆ – (Շնչառութիւնը կանոնավորելով, զարմացած) Ո՞վ չի գնացել... Իր մտտից եմ գալիս...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Ակնապիշ) Ի՞նչ է խոսում... Մարդն ասում է՝ չի եկել, դու ասում ես՝ իր մտտից եմ գալիս:

ՇՄԱՎՈՆ – Իր մտտից եմ գալիս: (Ասշած) Վա՛յ...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մի րոպե... (Հեռախոսի համար է հավաքում) Չկա... Դուրս եկավ... Քարտուղարուհին ո՞ր է, նա էլ չի վերցնում... Ալլո... Չէ, դուրս եկավ... (Դնում է լսափողը): Որ գնացիր, ի՞նչ ասաց:

ՇՄԱՎՈՆ – Ասում է՝ ես ազատ տեղ չունեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մտող ուրիշ մարդ կա՞ր:

ՇՄԱՎՈՆ – Չէ, մենակ էր: Ասում է՝ ուզո՞ւմ ես՝ բանվոր ընդունեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Զմծիծաղով) Չի իմացել, որ դու ես:

ՇՄԱՎՈՆ – Ո՞նց չի իմացել, գնացի, ասացի ում համար որ խոսել եմ, այդ մարդը ես եմ, եկել եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ժամը քանիսի՞ն ես իր մոտ եղել:

ՇՄԱՎՈՆ – Մեկին հինգ էր պակաս:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես քեզ չասացի՞ ուղիղ մեկին լինեմ:

ՇՄԱՎՈՆ – Ասացի՞ ուզո՞ւմ եք դուրս գամ, հինգ րոպեից հետո գամ: Ասաց՝ չէ, ես քեզ հետ պայմանավորվածություն չունեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չի ճանաչել:

ՇՄԱՎՈՆ – Ասում եմ, ախր դուք եք կանչել: Ասում է՝ ես ոչ մեկի չեմ կանչել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, չի ճանաչել: Այդ տեղի համար ով եկել է՝ բոլորին հետ է տվել, որ քեզ ընդունի: Պարզ ասեիր, որ ես եմ ուղարկել:

ՇՄԱՎՈՆ – Թողե՞ց, որ ասեմ: Չեքքը սեղանին խփեց, ասաց՝ ո՞վ է այդ ստորը, ո՞վ է այդ խաբեբան, որ իմ անունից խոստումներ է տալիս:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ասում եմ՝ չի ճանաչել:

ՇՄԱՎՈՆ – (Դժվարանալով) Չէ, եթե...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ...

ՇՄԱՎՈՆ – Եթե չի լինելու...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչը չի լինելու...

ՇՄԱՎՈՆ – Իմ գործը...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ո՞նց չի լինելու...

ՇՄԱՎՈՆ – (Բազմանշանակ) Չէ, եթե չի լինելու... Ամոթ էլ է ասելը, ազնիվ խոսք...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Վերջացրու, խա՞ղ ենք անում... Չի իմացել, որ դու ես...

ՇՄԱՎՈՆ – (Բռնկվելով) Եթե խոսել եք, ո՞նց չի իմացել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ուրեմն կասկածո՞ւմ ես... Ես իմ հեղինակությամբ հետ եմ խաղո՞ւմ:

ՇՄԱՎՈՆ – (Հույսը կորցրած) Չէ, եթե չի լինելու, ես գնամ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ո՞ւր գնաս:

ՇՄԱՎՈՆ – Տուն գնամ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տուն գնաս, ի՞նչ անես:

ՇՄԱՎՈՆ – Դե որ չի լինում...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ասում եմ, չի իմացել, որ դու ես: Կարծել է, թե դու չես:

ՇՄԱՎՈՆ – (Կռիվ տալով) Ո՞նց է կարծել, որ մտա ասացի՝ ես եմ, եկել եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ախր դու ո՞վ ես, է՛, որ իմանար դու ով ես... Հետո ի՞նչ, որ ասել ես... Պարզ ասելիք ով է ուղարկել, որ մարդն իմանար:

ՇՄԱՎՈՆ – Էլ ի՞նչ ասելի, որ ասում է՝ ինձ հետ ոչ ոք չի խոսել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Իսկ ինչո՞ւ պիտի ասեր՝ խոսել են, եթե չգիտի դիմացինն ով է: Հաշվետո՞ւ է: Մեղավորը դու ես: Հիմա կգնաս, կտեսնես, որ մարդը ներողություն կխնդրի:

ՇՄԱՎՈՆ – Էլի գնա՞մ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այո:

ՇՄԱՎՈՆ – Ախր...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ «ախր»... Ասում եմ՝ քիչ առաջ իր հետ խոսեցի, չէ՞:

ՇՄԱՎՈՆ – Ախր ես էլ եմ խոսել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Խոսել ես, բայց քո խոսելը քանի՞ կոպեկ արժի, երբ մարդը չի իմացել դու ես: Նա ուրիշ թեկնածու չունի, բոլորին հետ է տվել, քեզ էլ է հետ տվել, որ քեզ ընդունի: Հարգանք կա, բան կա, հո հենց էնպես չի: Գնա, էլ ժամանակ մի կորցնի: Մինչև դու գնաս, նա եկած կլինի:

ՇՄԱՎՈՆ – (Ավելի շատ ինքն իր հետ) Գլուխ չեմ հանում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դա հասարակ հարց է, ախր ինչո՞ւ ես բարդացնում:

ՇՄԱՎՈՆ – (Պայթելով) Տուն չեմ կարողանում պահել, ընտանիքս քայքայվում է, բա դա հասարակ հա՞րց է: Եթե սա էլ չեղավ, բաժանվում եմք, բա ամոթ չի՞, իմ տարիքում մարդ կբաժանվի՞:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դու այդ քայլին չես դիմի, դու այդպիսի մարդ չես:

ՇՄԱՎՈՆ – Ես չեմ դիմի, է՛, կինս կդիմի:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Նա էլ չի դիմի, հանգիստ եղիր: Դե էլ մի ուշացրու:

ՇՄԱՎՈՆ – (Շաղված) Ո՞նց գնամ, է՛, այսր ո՞նց գնամ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Վա՞տ ես զգում:

ՇՄԱՎՈՆ – Չէ... Քսանհինգ տարի, որ գիշերները չեմ քնել, ցերեկներն եմ քնել, չեմ դիմանում: Շշմած եմ... (Դուրս է գնում):

Մուփրիկյանը խառնված՝ հեռախոսի համար է հավաքում:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վարոսյանի աշխատասենյակը:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Դեպի սեղևառորդ) Արագացրեք, արագացրեք... Հարյուրի փոխարեն քսանչորս մեքենա է դուրս եկել երթուղի: Արագացրեք, ես չզիտեմ...

Մտնում է Շմավոնը:

ՇՄԱՎՈՆ – Կարելի՞ է:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ոչ:

ՇՄԱՎՈՆ – (Չարմացած) Ընկեր Վարոսյան, ես եմ...

ՎԱՐՈՍՅԱՆ – Ես ձեզ մի անգամ արդեն ընդունել եմ:

ՇՄԱՎՈՆ – Բայց չեք իմացել, որ ես եմ...

ՎԱՐՈՍՅԱՆ – Շմավոն Գինոսյանը չե՞ք...

ՇՄԱՎՈՆ – Գինոսյան Շմավոնն եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Էլ ինչո՞ւ եք ասում, որ չզիտեմ:

ՇՄԱՎՈՆ – Չէ, զիտեք, բայց չզիտեք, որ ... զիտեք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Համառ մարդ ես երևում, Գինոսյան:

ՇՄԱՎՈՆ – Համառ չեմ, ընկեր Վարոսյան, վիճակս վիճակ չի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ընկեր, միաժամանակ երկու տեղ գիշերային հերթապահ չես աշխատո՞ւմ:

ՇՄԱՎՈՆ – Աշխատում եմ, ես եմ...

ՎԱՐՈՍՅԱՆ – Երկու տեղից քնելու համար աշխատավարձ ես ստանում, էլ ի՞նչ ես ուզում:

ՇՄԱՎՈՆ – Հեռախոսները կողքս դրած, ժամը մեկ Մեյիքսերթ-
յանը գալիս ստուգում է, կթողնե՞ն, որ մի բուսի քնեմ: Զսանհինգ
տարի է գիշերները չեմ քնում, ցերեկներն եմ քնում: Գալիս եմ տուն,
տանն եմ քնում:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ցերեկային քնի վարժված մարդ ես, չեմ հաս-
կանում, ախր դու ինչպե՞ս կարող ես դիսպետչեր աշխատել: Ըն-
դունեմ, որ աշխատանքի ժամին քնե՞ս:

ՇՄԱՎՈՆ – Չեմ քնի, ինչով ուզում եք երդվեմ... **(Իրեն կտրա-
տելով)** Չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Կքնես:

ՇՄԱՎՈՆ – Չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Կքնես:

ՇՄԱՎՈՆ – Չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Հիմա ե՞ս գիտեմ, թե՞ դու...

ՇՄԱՎՈՆ – Դուք գիտեք, բայց չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Որ ասում եմ՝ կքնես, կքնես, էլի... Ինչո՞ւ ես
վիճում:

ՇՄԱՎՈՆ – Չեմ վիճում, ազնիվ խոսք: Բայց ախր ինչո՞ւ պիտի
աշխատանքի ժամին քնեմ: Երեխա՞ եմ: Աշխարհում ինչքան գիրք
կա, կարդացել եմ, ուրեմն ես այդքան բան չեմ գիտակցո՞ւմ, որ
աշխատանքի ժամին քնեմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Գիտակցության հետ կապ չունի: Անկախ քո
կամքից կքնես, ես գիտեմ:

ՇՄԱՎՈՆ – Չեմ քնի, ազնիվ խոսք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Մեկին էլ քեզ նման ընդունել էինք, շատ էլ
գիտակից մարդ էր, քեզ նման ամբողջ համաշխարհային գրակա-
նությունը մարսել էր, իրեն պատռտում էր, որ չի քնի, բայց նստած
տեղը անընդհատ գլուխը կախում էր:

ՇՄԱՎՈՆ – Ես չեմ կախի, ընկեր Վարոսյան:

ՎԱՐՈՍՅԱՆ – Եկան բողոքեցին, որ դիսպետչերը քնում է:
Մարդը տեսավ, որ անհնար է, իր ուժերից վեր է, ազնիվ, ինտելիգենտ
մարդ էր, դիմում տվեց, էլի գնաց գիշերային աշխատանքի:

ՇՄԱՎՈՆ – Չեմ քնի, ընկեր Վարոսյան:

ՎԱՐՈՍՅԱՆ – Քունը որ ընկավ գլուխը, դիմադրել կլինի՞, աչ-
քերդ իրենք իրենց կփակվեն, ի՞նչ ես խոսում: Պայմանական ռեֆ-
լեքս գոյություն ունի:

ՇՄԱՎՈՆ – Գիտեմ, գիտեմ, բայց ես չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Քսանհինգ տարի շարունակ ցերեկները քնել ես, հիմա ինչպե՞ս կարող ես չքնել, չեմ հասկանում:

ՇՄԱՎՈՆ – (Հոգուն հասած) Մի թուղթ տվեք, էլի, խնդրում եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Անկարելի բան է, Շմավոն, մի՛ վիճիր:

ՇՄԱՎՈՆ – Չեմ վիճում, ազնիվ խոսք, մի թուղթ տվեք, էլի, խնդրում եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Թուղթն ի՞նչ ես անում:

ՇՄԱՎՈՆ – Գրեմ, տակն էլ ստորագրեմ... Մի թուղթ տվեք, էլի, խնդրում եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Վերջացրու, այ տղա:

ՇՄԱՎՈՆ – Բա ի՞նչ անեմ, որ հավատաք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Զո ուզելո՞վ է, որ չքնես:

ՇՄԱՎՈՆ – Հիպնոսացնեն էլ, չեմ քնի, չեմ քնի:

ՎԱՐՈՍՅԱՆ – Կքնես թե չես քնի, դա ինձ չի հետաքրքրում:

Վերջացնենք: Հիմա ես ազատ տեղ չունեմ:

ՇՄԱՎՈՆ – Եթե ազատ տեղ չունեք, ինչո՞ւ եք զանգահարել, ասել՝ չի եկել, սպասում եմ, թող գա:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Խստանալով) Հեքիաթներ ես պատմում, ընկեր...

ՇՄԱՎՈՆ – Հիմա էլ հո եկել եմ: Չեմ եկե՞լ, դե ասեք:

Հեռախոսի զանգ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Այո...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՉԱՅՆ – Վարոսյան Ենգիբարյանն է:

ՎԱՐՈՍՅԱՆ – Լսում եմ, ընկեր Ենգիբարյան:

ՉԱՅՆ – Կանգառներում մարդիկ ժամերով սպասում են, ինչո՞ւ եք դժգոհություն առաջացնում բնակչության մեջ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Բենզին չկա, ընկեր Ենգիբարյան, ի՞նչ կարող եմ անել:

ՉԱՅՆ – Կանգառներում սպասողներին բոլորովին չի հետաքրքրում՝ կա, թե չկա: Մարդիկ պիտի ժամանակին աշխատանքի հասնեն: Հարյուր մեքենայի փոխարեն քսանչորս մեքենա է պարկից դուրս եկել: Ո՞վ պիտի պատասխան տա:

ՎԱՐՈՍՅԱՆ – Բենզին չկա, ի՞նչ անեմ:

ՉԱՅՆ – Պահանջիր, թող տան:

ՎԱՐՈՍՅԱՆ – Պահանջում եմ, չկա, չեն տալիս:

ՉԱՅՆ – Չեն տալիս՝ զեկուցագիր գրիր մինիստրին: Շտապ...

ՎԱՐՈՍՅԱՆ – (Լսափողը դնելուց հետո) Գրել եմ, էլի, քանի՞ անգամ գրեմ: (Եկատելով նստած տեղը քնած Շմավոնին): Մա՞ էր,

որ ասում էր՝ չեմ քնի: Արթնացեք, ընկեր, սա ձեզ համար ննջասենյակ չի: Ընկեր, այ, ընկեր... Ընկեր... Գինոսյան... Գինոսյան Ընկեր...

ՇՄԱՎՈՆ – (Չեռքը տանելով ականջին) Այո, ես եմ, ընկեր Մելիքսեթյան:

ՎԱՐՈՍՅԱՆ – Քնած ես, այ ընկեր...

ՇՄԱՎՈՆ – (Չեռքը դեռ ականջին) Չէ, չէ, քնած չեմ, ընկեր Մելիքսեթյան: (Չեռքը թուլացած կախ է ընկնում):

ՎԱՐՈՍՅԱՆ – Գինոսյան... Ընկեր... Գինոսյան Ընկեր...

ՇՄԱՎՈՆ – (Վեր է թռչում՝ փաթաթվելով Վարոսյանին) Չեմ քնել, ընկեր Մելիքսեթյան, ազնիվ խոսք: (Աչքերը լայն բացելով, տեսնելով իր առջև կանգնած Վարոսյանին): Էս որտե՞ղ եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Լուսնի վրա...

ՇՄԱՎՈՆ – Ներողություն, ես որտե՞ղ եմ:

ՎԱՐՈՍՅԱՆ – Դե՞ռ էիր, որ ասում էիր՝ չեմ քնի:

ՇՄԱՎՈՆ – (Մթափվելով) Աչքերս էի փակել, ես քնած չէի, ընկեր Վարոսյան:

ՎԱՐՈՍՅԱՆ – Թուղթ էիր ուզո՞ւմ, հա՞, որ գրես, տակն էլ ստորագրես:

ՇՄԱՎՈՆ – Հեռախոսով խոսում էիք, լսում էի, ասում էիք՝ քնզին չկա:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ազատ ես, գնա:

ՇՄԱՎՈՆ – Ախր չեմ քնել, ինչի՞ համար...

ՎԱՐՈՍՅԱՆ – Իզուր ես երկարացնում:

ՇՄԱՎՈՆ – Հիմա ինձ դիտարկելու չե՞ք ընդունում:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ոչ, ես ազատ տեղ չունեմ:

ՇՄԱՎՈՆ – Ունեք, Բալաբեկյանն է ինձ ուղարկել:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Անակնկալի եկած) Ո՞վ...

ՇՄԱՎՈՆ – Բալաբեկյանը...

ՎԱՐՈՍՅԱՆ – Եթե Բալաբեկյանն ուղարկել, ինձ կանգահարեր:

ՇՄԱՎՈՆ – Չանգահարեց, տեղում չէիք:

ՎԱՐՈՍՅԱՆ – Ես միշտ տեղում եմ եղել:

ՇՄԱՎՈՆ – Չե՞ք հավատում՝ իրեն զանգահարեք:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Համար հավաքելուց հետո) Ընկեր Բալաբեկյան, Վարոսյանն է անհանգստացնում... Բարև ձեզ:

ՉԱՅՆ – Բարև:

ՎԱՐՈՍՅԱՆ – Դուք ինձ մոտ մարդ եք ուղարկե՞լ դիսպետչեր աշխատելու համար:
 ՉԱՅՆ – Ոչ, ինչո՞ւ ես հարցնում:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Ինչ-որ մեկը եկել է...
 ՇՄԱՎՈՆ – (Հուշում է) Ասեք՝ Գինոսյան Շմավոնը...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Գինոսյան Շմավոնը... Ասում է, դուք եք իրեն ուղարկել դիսպետչերի տեղի համար:
 ՉԱՅՆ – Ո՞վ է այդ աֆերիստը...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Ներեցեք, խնդրում եմ:
 ՉԱՅՆ – Վարոսյան, դու չգիտե՞ս, եթե ես ուղարկեի, քեզ կասեի, հո առաջին անգամ չի՞:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Իհարկե, ես էլ զարմացա:
 ՉԱՅՆ – Պարզիր, ո՞վ է այդ տիպը, որ շահագործում է անունս:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Շատ լավ, ներեցեք: (Լսափողը դնելուց հետո)
 Ուրեմն Բալաբեկյանն է քեզ ուղարկել, հա՞...
 ՇՄԱՎՈՆ – Այո, Բալաբեկյանը:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Հիմա ես միլիցիա եմ զանգահարում:
 ՇՄԱՎՈՆ – (Ահաբեկվելով) Ինչի՞ համար:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Մարդն անտեղյակ նստած, եկել ես նրա հեղինակության հետ ես խաղո՞ւմ:
 ՇՄԱՎՈՆ – (Խառնված) Ո՞վ ասաց... Ո՞վ ասաց... Իր մոտից եմ գալիս, ինչով ուզում եք երդվեմ: Ինքն ասաց, որ ասեմ Բալաբեկյանն է ուղարկել:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Լսիր, հենց նոր ես ո՞ւմ հետ էի խոսում:
 ՇՄԱՎՈՆ – Չեմ հավատում, չեմ հավատում... Թողեք ես զանգահարեմ, չեմ հավատում:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Հանգիստ, հանգիստ նստիր տեղդ:
 ՇՄԱՎՈՆ – Չէ, պիտի զանգահարեմ:
 ՎԱՐՈՍՅԱՆ – Դու գիտե՞ս, որ քրեական օրենսգրքում խարդախության համար հատուկ հոդված կա:
 ՇՄԱՎՈՆ – (Իրեն պատռտելով) Ինչո՞վ երդվեմ, որ հավատաք... Ինչո՞վ երդվեմ...
 ՎԱՐՈՍՅԱՆ – Լսիր, քո ներկայությամբ ես ի՞նչ հետ չեի խոսում... (Հեռախոսի համար է հավաքում) Այլո, միլիցիա...
 ՇՄԱՎՈՆ – (Իրեն կորցրած) Քի՞չ եմ ավել... Դրանից ավելի ես հնարավորություն չունեմ... (Կուրծք ծեծելով) Չունեմ, չունեմ... (Գնում է դեպի դուռը):

ՎԱՐՈՍՅԱՆ – (Հետևից) Ընկեր, հետ դարձեք... Հետ դարձեք...

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Շմավոնի բնակարանը:

ՀՐԱՆՈՒՇ – (Հեռախոսով) Ներողություն, որ ուշացնում եմք... Շմավոնն ախր նոր է տարել տվել... Էսօր... Հենց գործի ընդունվեց, կտանք... Ազնիվ խոսք... Չէ, չէ, մի անհանգստացեք, չենք ուշացնի... Անպայման, անպայման... (Դնում է լսափողը):

ՇՄԱՎՈՆ – (Մտնում է՝ հեռավար) Վայ, ես ձեր հերն եմ անիծել...

ՀՐԱՆՈՒՇ – Ի՞նչ եղավ, հրամանդ տվի՞ն:

ՇՄԱՎՈՆ – (Բորբորված) Հա, տվին... Միլիցիա էր կանչում, որ բռնել տա:

ՀՐԱՆՈՒՇ – Ինչի՞ համար:

ՇՄԱՎՈՆ – Չանգահարեց Բալաբեկյանին, Բալաբեկյանն ասաց՝ ես քեզ մոտ մարդ չեմ ուղարկել, պարզեք դա ով է, որ եկել ձեզ խաբում է իմ անունից:

ՀՐԱՆՈՒՇ – (Ապշահար) Ո՞վ, Բալաբեկյանը...

ՇՄԱՎՈՆ – Հա, Բալաբեկյանը...

ՀՐԱՆՈՒՇ – Նրան չե՞ս տվել:

ՇՄԱՎՈՆ – Բա ո՞ւմ եմ տվել:

ՀՐԱՆՈՒՇ – Ինքը չե՞ր ուղարկել:

ՇՄԱՎՈՆ – Բա ով էր ուղարկել:

ՀՐԱՆՈՒՇ – Բա ինչո՞ւ էր ասում՝ չեմ ուղարկել:

ՇՄԱՎՈՆ – Շատ գիտե՞մ...

ՀՐԱՆՈՒՇ – Փողը վերցնեն, գործը չանեն և դեռ միլիցիա կանչեն, բռնել տա՞ն...

ՇՄԱՎՈՆ – (Պոռթկալով) Հա, թող բռնել տան... Ինձ տեղն է, տեղն է, թող բռնել տան՝ գնա՛մ, գնամ հանգստանամ... Քանի անգամ ասացի՝ պետք չի, պետք չի, մենք էդ մարդը չենք, պետք չի, չլսեցիր... Թող տանեն նստեցնեն, որ խելքդ գլուխդ գա:

ՀՐԱՆՈՒՇ – Ի՞նչ ես արել, է՛, ի՞նչ ես արել, որ նստեցնեն:

ՇՄԱՎՈՆ – Կաշառք եմ տվել, էլ ի՞նչ անեի... Իբր չզիտես...

ՀՐԱՆՈՒՇ – Թող չվերցնես...

ՇՄԱՎՈՆ – Որ տալիս եմ, ո՞նց չվերցնի...

ՀՐԱՆՈՒՇ – Նա վերցնի՝ քե՞զ դատեն... Էս ո՞ր երկիրն է, գլխներինգ ձե՞ռ են քաշել... Բոլորին մեկ-մեկ նստեցնել կտամ... Բոլորին... Գնա ասա՝ դո՞ւ չես ինձ ուղարկել, որ ասում ես՝ ես չեմ ուղարկել:

ՇՄԱՎՈՆ – (Վանվելով) Ի՞նչ... Ե՞ս գնամ...

ՀՐԱՆՈՒՇ – Դու տվել ես, ե՞ս գնամ:

ՇՄԱՎՈՆ – Չէ, ես էլ չեմ գնա... Չեմ գնա... Իմացիր...

ՀՐԱՆՈՒՇ – Գժվե՞լ ես, տվածդ փողը գնա կորչի՞...

ՇՄԱՎՈՆ – (Ցասկոտ) Հա, թող կորչի...

ՀՐԱՆՈՒՇ – (Տարակուսանքով) Ի՞նչ է ասում... Խեղճ հո չե՞ս բռցրել: Ո՞ւմ փողը կորչի, մենք փող ունե՞նք, որ կորչի... Պարտքատերերդ իրար հետևից ձայն-ձայնի տված զանգահարում, ուզում են, տեղեկություն ունե՞ս... քիչ առաջ էլ Հռիփսիկը զանգահարեց...

ՇՄԱՎՈՆ – Դու վերցրել ես, դու էլ տուր:

ՀՐԱՆՈՒՇ – Որտեղի՞ց տամ... Ի՞նձ համար եմ վերցրել, որ տամ... Գործդ չի լինում, գնա փողը հետ ուզի, բեր տանեմ տամ մարդկանց:

ՇՄԱՎՈՆ – Ո՞նց հետ ուզեմ, է՛, ո՞նց...

ՀՐԱՆՈՒՇ – Ոնց որ տվել ես, էնպես էլ գնա ուզի:

ՇՄԱՎՈՆ – (Երդվյալ) Չէ՛, չէ՛, ես էլ չեմ գնա...

ՀՐԱՆՈՒՇ – Դու ինչի՞ց ես վախենում, թող իրենք վախենան: Ասում եմ՝ մարդիկ ուզում են... Գնա, շուտ արա... (Լացով) Այսքան տարի ո՞նց եմ քեզ հետ ապրել... Էլ չեմ ապրի, չեմ ապրի, կբաժանվեմ: Գնա, շուտ արա...

ՇՄԱՎՈՆ – (Վառված) Չէ, չեմ գնա...

ՀՐԱՆՈՒՇ – (Արցունքները սրբելով, հատու) Դու չես գնա՝ ես կգնամ... (Գնում է):

ՇՄԱՎՈՆ – (Տեղավորվելով քազմոցին՝ բարձր դնելով գլխի տակ) Ես ձեր հերն եմ անիծել... (Ականջը ձայնի՝ թվում է դուռն է) Ո՞վ է, ո՞ւմ եք ուզում... (Ինքն իր հետ) Ես ձեր հերն եմ անիծել, քունս փախցրին... (Վեր թռչելով, ձայն է տալիս դեպի դուռը) Ո՞վ է, ո՞ւմ եք ուզում...

Բալաբեկյանի աշխատասենյակը:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – **(Հեռախոսով)** Բալաբեկյանն է... Ի՞նչ եղավ, Վարդայան, ես սպասում եմ:

ՎԱՐՈՍՅԱՆԻ ՉԱՅՆԸ – Ձանգահարում էի միլիցիա, գնաց, ընկեր Բալաբեկյան:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Իզուր ես բաց թողել, պիտի ուղարկեիր ինձ մոտ, տեսնեի դա ով է, որ այդքան համարձակություն ունի: **(Դնում է լսափողը):**

Մտնում է Հրանուշը:

ՀՐԱՆՈՒՇ – **(Հարձակողական)** Բալաբեկյանի աշխատասենյակը սա՞ է:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Այո:

ՀՐԱՆՈՒՇ – Դո՞ւք եք Բալաբեկյանը:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ես եմ:

ՀՐԱՆՈՒՇ – Բա դուք չեք ամաչո՞ւմ, որ դուք եք Բալաբեկյանը:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Այդ ի՞նչ ձևով եք խոսում, տիկին:

ՀՐԱՆՈՒՇ – Իսկ ի՞նչ ձևով էիք ուզում, որ ես խոսեմ ձեզ հետ:

(Սպառնազին պարզելով ձեռքը) Տուր, տուր...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ի՞նչ տամ:

ՀՐԱՆՈՒՇ – Ինչ որ վերցրել ես, դա տուր:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ի՞նչ եմ վերցրել:

ՀՐԱՆՈՒՇ – Դու գիտես, թե ինչ ես վերցրել: Տուր, շուտ արա, թե չէ հենց հիմա բարձրանում եմ մինիստրի մոտ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Տիկին, դուք ո՞վ եք:

ՀՐԱՆՈՒՇ – Տուր, ասում եմ... Հետո կիմանաս՝ ով եմ... Տուր...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – **(Անհանգիստ)** Ես չգիտեմ, թե դուք ինչ եք ուզում:

ՀՐԱՆՈՒՇ – Ամուսինս ծրարով ինչ որ տվել է, դա եմ ուզում:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – **(Ներքուստ խուճապի մեջ)** Չեր ամուսինն ո՞վ է:

ՀՐԱՆՈՒՇ – Դու չգիտե՞ս իմ ամուսինն ով է, ինձնի՞ց ես ուզում իմանալ: Փողը տուր, փողը...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ի՞նչ փող...

ՀՐԱՆՈՒՇ – Որ տվել է քեզ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – **(Իրեն կորցնելով)** Տիկին, ցածր, կլսեմ...

ՀՐԱՆՈՒՇ – (Լարված) Դու ուղարկում ես նրա մոտ, նա ուղարկում է քեզ մոտ, նա ուղարկում է քեզ մոտ, դու ուղարկում ես նրա մոտ... Տուր, տուր...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ես ոչ մեկից ոչինչ չեմ վերցրել:

ՀՐԱՆՈՒՇ – Վկա չի եղել, հրաժարվո՞ւմ ես:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ես այդ մարդը չեմ, ում որ տվել է, գնացեք նրանից ուզեք:

ՀՐԱՆՈՒՇ – Ես չգիտեմ, մինչև չստանամ, այստեղից գնացողը չեմ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ես ձեզ ասում եմ, որ չեմ վերցրել, ես այդ մարդը չեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Դատի կտամ, դատարանով կառնեմ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Լսեք, ձեր ամուսինն է տվել, թող նա էլ գա, ում տվել է, նրանից վերցնի:

ՀՐԱՆՈՒՇ – Նա չի ուզում ձեր երեսը տեսնել, չի ուզում: Հենց հիմա բարձրանում եմ մինիստրի մոտ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Ընկրկելով) Տիկին, մի բուպե...

ՀՐԱՆՈՒՇ – Չէ, պիտի բարձրանամ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Փակելով ճանապարհը) Մի բուպե...

ՀՐԱՆՈՒՇ – Ճանապարհս չփակես:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Մի բուպե... (Ծոցազրպանից ծրար է հանում): Վերցրեք...

ՀՐԱՆՈՒՇ – (Վերցնելով) Լրի՞վ է:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Իրեն կորցրած) Ուրեմն ես ինձ թույլ կտա՞մ...

ՀՐԱՆՈՒՇ – Հավատ չեք թողե՞լ, որ հավատամ... (Գնում է):

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Հեռախոսի համար է հավաքում, խուճապի մեջ) Բարև, Բենիկ... Ես եմ, Բալաբեկյանն է...

ԲԵՆԻԿԻ ՉԱՅՆԸ – Բարև ձեզ, ընկեր Բալաբեկյան, ինչպե՞ս եք:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Շատ լավ... Ես քեզ չասացի՞, որ գործը ձգձգվում է, բայց անպայման պիտի լինի, անպայման: Չասացի՞:

ՉԱՅՆ – Ասացիք:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Չհավատացի՞ր:

ՉԱՅՆ – Հավատացի:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Էլ ինչո՞ւ էիր կնոջդ ուղարկում ինձ մոտ:

ՉԱՅՆ – Ո՞վ է ուղերկել... Ե՞ս...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ինչ որ տվել էիր, եկավ տարավ:

ՉԱՅՆ – Ե՞րբ...
ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Հենց նոր:
ՉԱՅՆ – (Չարմացած) Ի՞նչ... Իմ կինն արտասահմանում է, ընկեր Բալարեկյան:
ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Լսափողն ընկնում է ձեռքից) Բա այդ կինն ո՞վ էր, այ մարդ...

Ե Բ Կ Բ Ո Բ Գ Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԳ

Մուփրիկյանի աշխատասենյակը: Մտնում է Շմավոնը:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Արի, ես էլ քեզ էի սպասում:
ՇՄԱՎՈՆ – (Ծոցագրպանից դրամ է հանում՝ դնելով սեղանին, վիրավորված արժանապատվությամբ) Շատ ներողություն, էս հինգ հարյուր ռուբլին մեզ պետք չի...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Անակնկալի եկած) Ի՞նչ հինգ հարյուր ռուբլի...
ՇՄԱՎՈՆ – Հաշվեցիք, ավել էր...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ հաշվեցիք, ի՞նչն էր ավել...
ՇՄԱՎՈՆ – Փողը:
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ փող...
ՇՄԱՎՈՆ – Որ հետ եք տվել կնոջս...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Ուշքի չեկած) Ի՞նչ կին... Ո՞վ է հետ տվել...
ՇՄԱՎՈՆ – Գուք... Կինս եկել է ուզել, հետ եք տվել: Հաշվեցիք, հինգ հարյուր ռուբլին ավել էր:
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ հինգ հարյուր ռուբլի, ի՞նչ կին, ինձ մոտ կին չի եկել: Վերցրու այս փողն, ի սեր Աստծո... Վերցրու...
ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ վերցնի... Շատ ներողություն, մեզ ավել փող պետք չի:
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես ոչ մեկի փող չեմ տվել: Վերցրու, անհարմար է: Վերցրու, մարդ կմտնի հանկարծ... Վերցրու...
ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ վերցնի:
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Իրեն կորցրած) Վերցրու, ասում եմ:

ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ վերցնի:
ՍՈՒՓՐԻԿՅՅԱՆ – Վերցրու...
ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ վերցնի... (Գնում է դեպի դուռ):
ՍՈՒՓՐԻԿՅՅԱՆ – Սպասիր... Ես ոչ մեկի փող չեմ տվել, ինձ մոտ ոչ ոք չի եկել: Հավատա, երդվում եմ: (Թերթով ծածկում է փողը):
Վերցրու, ծածկեցի, որ չերևա:

ՇՄԱՎՈՆ – Ո՞նց վերցնեմ, որ ավել է: (Արագ դուրս է գնում):
ՍՈՒՓՐԻԿՅՅԱՆ – (Խառնված, հեռախոսի համար հավաքելուց հետո) Պահակին... Հովսեփ, մաշված կանաչ շլապայով մարդուն չթողնես դուրս գնա շենքից, չթողնես: Սուփրիկյանն է... Հետ կուղարկես ինձ մոտ, շտապ...

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Բալարեկյանի աշխատասենյակը: Բալարեկյանը նստած է գլուխն առած ափերի մեջ:

ԲԵՆԻԿ – (Փքուն) Հիմա ես ի՞նչ պիտի անեմ, ընկեր Բալարեկյան:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Համբերիր: Եթե ազնվություն ունենա, կվերադարձնի:

ԲԵՆԻԿ – Դժվար...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Իմ պրակտիկայում սա առաջին դեպքն է:

ԲԵՆԻԿ – Ախր իմանայիք ով է, նոր տայիք:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ես որտեղի՞ց իմանայի, որ քո կինն արտասահմանում է:

ԲԵՆԻԿ – (Պարծենկոտ) Իբր որ էստեղ լինեք, իմ կինն եղախիքի քան կանե՞ր... Ի՞նչ... Իմ կինը...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Քեզ ճանաչում եմ, կնոջդ չեմ ճանաչում:

ԲԵՆԻԿ – Եթե ինձ ճանաչում եք, ուրեմն կնոջս էլ եք ճանաչում:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Դեռ հավատում եմ մարդկանց, Բենիկ, հավատում եմ: Մեկն էլ գնացել է պարկ, իմ անունից ասել՝ ինձ Բալարեկյանն է ուղարկել: Անազնիվ մարդիկ քիչ կա՞ն: Կարծում ես բոլորը քեզ նմա՞ն են: Դու ես մեղավոր, դու, բարձր աշխատավարձով տեղ ուղարկեցի, չգնացիր:

ԲԵՆԻԿ – Ես ցածր աշխատավարձով տեղ եմ ուզում: Ի՞նչ...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Մի տեղ էր, տեսար, մինիստրը մարդ ուղարկեց: Առայժմ ազատ տեղ չկա, ի՞նչ անեմ:

ԲԵՆԻԿ – Չկա՝ չկա... Աշխարհի վե՞րջն է...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Քեզնից եմ անհարմար զգում:

ԲԵՆԻԿ – Եղա՞վ...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Մարզիկ տղա ես, դու ինձ կհասկանաս:

ԲԵՆԻԿ – (Ձարմանքով) Ընկեր Բալաբեկյա՞ն... Ի՛... Արժի՞
դրա համար տրամադրություն փչացնեք:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ներող եղիր, էլի, խնդրում եմ:

ԲԵՆԻԿ – Ինչի՞ համար... Ի՞նչ է եղել որ...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Գործը շատ ձգձգվեց:

ԲԵՆԻԿ – Ինչ անենք... Սպասել եմ՝ էլի կսպասեմ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Բայց դու մի անհանգստացիր, քո գործը կլինի:

ԲԵՆԻԿ – Չեմ անհանգստանում, թեկուզ չլինի... Ի՛...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Չի լինի՝ իմ գրպանից կվերադարձնեմ:

ԲԵՆԻԿ – Ես ձեր փողը կվերցնե՞մ... Ի՛...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Դու ի՞նչ մեղք ունես:

ԲԵՆԻԿ – (Նորից զարմանքով) Ընկեր Բալաբեկյա՞ն... Ի՛...

Ինձ փող պետք չի, գործս պիտի անեք: Կանեք՝ կանեք, չեք անի՝ դուր
ողջ լինեք: Ես գնացի: (Գնում է):

Հեռախոսի զանգ:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Այո...

ՉԱՅՆ – Բալաբեկյան, մինիստրի մոտ...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Իրեն կորցրած) Եկա...

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Սուփրիկյանի աշխատասենյակը: Մտնում է Շմավոնը:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Շնչառությունը կանոնավորելով) Նստիր, ասեմ... Քո տված փողն ինձ մոտ է, ես ոչ մեկի չեմ տվել: Եթե պետք է, հիմա հանեմ տամ: Քո բերած հինգ հարյուր ռուբլին էլ առայժմ դնենք մի կողմ: Բոլոր դեպքերում մարդը պիտի մարդ մնա: Ի՞նչ եղավ, ասա դա իմանամ, հրամանդ տվե՞ց:

ՇՄԱՎՈՆ – Չզանգահարե՞ց ձեզ հետ խոսեց:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Ձարմացած) Ոչ, ինձ հետ ոչ ոք չի խոսել:

ՇՄԱՎՈՆ – Բա ո՞ւմ հետ էր խոսում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մի բռպե... **(Հեռախոսի համար հավաքելուց հետո)** Ես եմ, Ռաֆիկ, այս ի՞նչ խաղ ես խաղում:

ՔԵՐՈՒՔՅԱՆԻ ՉԱՅՆԸ – Ի՞նչ է պատահել, ընկեր Սուփրիկյան:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մարդուն երկրորդ անգամ եմ ուղարկում, ասում ես՝ ազատ տեղ չունեմ: Չունեիր, ինձ ասեիր:

ՉԱՅՆ – Այդպիսի բան չի եղել, չի եղել, երդվում եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Հրամանն ինչո՞ւ չես տվել:

ՉԱՅՆ – Իսկ ո՞վ է եկել ինձ մոտ, որ չեմ տվել...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մարդը երկրորդ անգամ է գալիս, դու ասում ես՝ ինձ մոտ մարդ չի եկել: Դա էլ նո՞ր մեթոդ է, Ռաֆիկ:

ՉԱՅՆ – Չի եկել, էլի եմ ասում՝ չի եկել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մարդը առաջս կանգնած, ասում է՝ զնացել եմ, դու ասում ես՝ չի եկել... Հիմա ես որի՞նչ հավատամ:

ՇՄԱՎՈՆ – Ինձ, ինձ...

ՉԱՅՆ – Չի եկել, ինձ մոտ մարդ չի եկել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դե լավ, լավ, հասկացանք:

ՉԱՅՆ – Ամբողջ օրը նստած իրեն եմ սպասում, ես ուրիշ գործ չունեմ, քարտուղարուհուն էլ եմ զգուշացրել, չի եկել:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Լավ բան չի, մի խոսքով...

ՉԱՅՆ – Հիմա ձեզ մո՞տ է, մեքենաս ուղարկում եմ, թող գա, իրեն բերի:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Կարիք չկա:

ՉԱՅՆ – Չէ, չէ, հենց հիմա ուղարկում եմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մի՛ ուղարկի, ինքը կգա: **(Դնում է լսափողը):**

ՇՄԱՎՈՆ – Ո՞վ, ե՞ս գնամ... Չէ, ես էլ չեմ գնա:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Կարո՞ղ է պատահի իրեն չես տեսել, տեղակալի մոտ ես մտել:

ՇՄԱՎՈՆ – **(Դժգոհ)** Ուրեմն ես իրեն չեմ ճանաչո՞ւմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մեքենան ուղարկեց, 60-05 համարն է, սպիտակ «Վոլգա» է: Կնստես, կգնաս, նույն մեքենայով էլ քեզ կբերեն, հետ կգաս:

ՇՄԱՎՈՆ – Ե՞ս գնամ... Չէ, էլ չեմ գնա...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դու ինձ լսիր, նա իմ ասածը չի կարող չանել, իրավունք չունի: Ինչո՞ւ ես ստիպում, որ ամեն ինչ պարզ ասեմ:

ՇՄԱՎՈՆ – **(Հոգուն հասած)** Դեռ չպրծա՞...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես քեզ շատ եմ խնդրում, հեղինակությամբ հարց է...

ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ գնա:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այս անգամ քեզ համար չես գնում, ինձ համար ես գնում:
 ՇՄԱՎՈՆ – (Հուսահատ) Չեմ ուզում, չեմ ուզում... Չեմ ուզում այդ մարդու երեսը տեսնել, չեմ ուզում:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դու չես ուզում, նա է ուզում քեզ տեսնել:
 (Դուրս նայելով) Իջիր, մեքենան եկավ...
 ՇՄԱՎՈՆ – Չէ, ես նրա մեքենան չեմ նստի:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Հո նրանը չի, պետական մեքենա է, ի՞նչ է եղել:
 ՇՄԱՎՈՆ – Էն ժամանակ ձեզ զանգահարեց, դուք էլ ասացիք, որ ես այդպիսի մարդ չեմ ուղարկել: Հիմա նորից ուղարկո՞ւմ եք:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այդպիսի բան չի եղել, չի եղել, հավատա: Գնա, արի, կպարզենք: Գնա, խնդրում եմ, մեքենան սպասում է, 06-05, սպիտակ «Վոլգա» է...
 ՇՄԱՎՈՆ – Գնամ, բայց ախր ո՞նց գնամ:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Հետևից) Փողը... Հինգ հարյուր ռուբլին... Փողը վերցրու:
 ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ վերցնի: (Գնում է):
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Սա ի՞նչ պատմությունն է:

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

Քերորյանի աշխատասենյակը:

ՇՄԱՎՈՆ – (Ընկնելով ներս, հուզված) Չեր վարորդն ի՞նչ է ուզում ինձնից: Ասում եմ՝ կանգնիր, իջնեմ, կանգնիր, չեմ գալիս, էլի քշում է:
 ՔԵՐՈՐԲՅԱՆ – Ախ, այդ դուք եք, հա՞... Առաջ եկեք, առաջ եկեք, կիմանաք:
 ՇՄԱՎՈՆ – Բարև ձեզ:
 ՔԵՐՈՐԲՅԱՆ – (Ակնապիշ) Բարև ձեզ: Ես առաջին անգամ եմ ձեզ տեսնում:
 ՇՄԱՎՈՆ – Ես էլ...
 ՔԵՐՈՐԲՅԱՆ – Իսկ ինչո՞ւ եք գնացել ասել՝ երկրորդ անգամ եմ գնում, մերժում է: Ես ձեզ մերժե՞լ եմ, սիրելի ընկեր: Ես ձեզ երբևէ տեսե՞լ եմ:
 ՇՄԱՎՈՆ – (Շփոթված) Չեք տեսել:

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Դե որ չեմ տեսել, ինչո՞ւ եք այդպիսի բաներ ասում:

ՇՄԱՎՈՆ – Ես ձեր մասին չեմ ասել, ես Վարոսյանի մասին եմ ասել:

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Կարծեմ ես Վարոսյանը չեմ, ես Քերոքյանն եմ... Չի կարելի, չէ՞, ես էլ ամբողջ օրը նստած ձեզ եմ սպասում, որ ուղարկեմ բաղնիք:

ՇՄԱՎՈՆ – Ի՞նձ...

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Այո, ձեզ, բա էլ ո՞ւմ...

ՇՄԱՎՈՆ – Բաղնի՞ք...

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Այո, բաղնիք, բա էլ ո՞ւր...

ՇՄԱՎՈՆ – Ինչի՞ համար...

ՔԵՐՈՒՔՅԱՆ – **(Հեզմանքով)** Լողանալու... Այնպես եք հարցնում՝ ինչի համար, կարծես չգիտեք: Կոլեկտիվն սպասում է:

ՇՄԱՎՈՆ – **(Լրիվ մոլորված)** Ի՞նձ...

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Այո, ձեզ...

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ կոլեկտիվ...

ՔԵՐՈՒՔՅԱՆ – 116-ի, իմ ամենահարմար օբյեկտն է: Կզնաք և կտեսնեք, որ գոհ կլինեք:

ՇՄԱՎՈՆ – Ինչի՞ց պիտի գոհ լինեմ:

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Ամեն ինչից... Ե՛վ սպասարկող անձնակազմից, և՛ մաքրությունից... Չեր բախտից էլ նորոգումը նոր ենք ավարտել: Ինչքան փտած խողովակ կար՝ բոլորը, բոլորը փոխել ենք: Դժգոհելու առիթ չեք ունենա, մնում է, որ ձեզ արդարացնեք:

ՇՄԱՎՈՆ – **(Հավասարակշռությունից դուրս գալով)** Ախր ես ի՞նչ գործ ունեմ բաղնիքում, ի՞նչ պիտի անեմ, որ ինձ արդարացնեմ կամ չարդարացնեմ... Իմ տանը բաղնիք չկա՞... Էս ո՞ւր են ինձ բերել, այ մարդ... **(Դուրս է գնում):**

ՔԵՐՈՒՔՅԱՆ – **(Հետևից)** Ընկեր, հետ դարձեք... Չթողնեք գնա... Այդ ընկերոջն ասեք, թող հետ գա... Հետ եկեք, ընկեր, հետ եկեք... Չթողնեք գնա...

ՇՄԱՎՈՆ – **(Վերադառնալով, համբերությունը հատած)** Ի՞նչ եք ուզում ինձնից:

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Ընկեր, դո՞ւք չեք, որ ուզում եք բաղնիքի վարիչ աշխատել:

ՇՄԱՎՈՆ – Չէ, ի՞նչ վարիչ, ես կուսակցական չեմ:

ՔԵՐՈՒՔՅԱՆ – Նշանակություն չունի, հիմա կարելի է: Կզնաք և հանգիստ կաշխատեք: Հենց հիմա հրամանը տալիս եմ:

ՇՄԱՎՈՆ – (Դադված) Չեմ ուզում, չեմ ուզում, ի՞նչ բաղնիք, ի՞նչ վարիչ... Ես դիսպետներ եմ ուզում աշխատել... Դիսպետ-չեր...

ՔԵՐՈՔՅԱՆ – Ի՞նչ դիսպետ-չեր... Բաղնիքում դիսպետներն ի՞նչ գործ ունի...

ՇՄԱՎՈՆ – Ես բաղնիքի անուն չեմ տվել, ես բաղնիքում չեմ ուզում աշխատել:

ՔԵՐՈՔՅԱՆ – Բաղնիքի վարիչ չես ուզում, դիսպետչե՞ր ես ուզում...

ՇՄԱՎՈՆ – Այո, դիսպետներ եմ ուզում...

ՔԵՐՈՔՅԱՆ – Դե որ դիսպետներ ես ուզում, էլ ինչո՞ւ ես եկել ինձ մոտ:

ՇՄԱՎՈՆ – Չեմ եկել, բերել եմ, բերել եմ, Բալաբեկյանն է ուղարկել:

ՔԵՐՈՔՅԱՆ – (Անակնկալի եկած) Բալաբեկյանն ո՞վ է...

ՇՄԱՎՈՆ – (Ձարմացած) Բալաբեկյանը...

ՔԵՐՈՔՅԱՆ – Հա, բայց ո՞վ է...

ՇՄԱՎՈՆ – Բալաբեկյանը...

ՔԵՐՈՔՅԱՆ – Ի՞նչ Բալաբեկյան, Բալաբեկյանն ո՞վ է, ինձ հետ Սուփրիկյանն է խոսել:

ՇՄԱՎՈՆ – (Հագիվ տիրապետելով իրեն) Ի՞նչ Սուփրիկյան, Սուփրիկյանն ո՞վ է...

ՔԵՐՈՔՅԱՆ – (Ձարմացած) Սուփրիկյանը...

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ Սուփրիկյան...

ՔԵՐՈՔՅԱՆ – Ուրեմն դուք չգիտե՞ք՝ ով է Սուփրիկյանը...

ՇՄԱՎՈՆ – Որ դուք չգիտեք Բալաբեկյանն ով է, ես որտեղի՞ց իմանամ Սուփրիկյանն ով է:

ՔԵՐՈՔՅԱՆ – (Համար հավաքելուց հետո) Այլո, ընկեր Սուփրիկյան...

Շմավոնը դուրս է բռչում:

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ

Շմավոնի բնակարանը: Մտնում է՝ հոգնածի կերպարանքով:

ՀՐԱՆՈՒՇ – Տվի՞ր:

ՇՄԱՎՈՆ – (Գազազած) Հա, տվի... Ասում է՝ քո կինն ինձնից փող չի վերցրել, ինձ մոտ կին չի եկել, քո տված փողն ինձ մոտ է:

Հինգ հարյուր ռուբլին հետ էր տալիս, ինչ արեց, չարեց, չվերցրի, ասացի՝ չէ, մեզ ավել փող պետք չի:

ՀՐԱՆՈՒՇ – Վախեցել է:

ՇՄԱՎՈՆ – Ձանգահարեց, ես էլ իմացա, թե Վարոսյանի հետ է խոսում: Գնացի, մեքենա նստեցրի, քշեցին տարան ուրիշ մարդու մոտ:

ՀՐԱՆՈՒՇ – Ո՞ւմ մոտ:

ՇՄԱՎՈՆ – Չիմացա... Նա էլ ասում է՝ ամբողջ օրը նստել քեզ եմ սպասում, որ ուղարկեմ բաղնիք:

ՀՐԱՆՈՒՇ – Բաղնիք ուղարկի, որ ի՞նչ անես...

ՇՄԱՎՈՆ – (Բորբորված) Լողանամ... Շատ գիտե՞մ, ինչ անեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Բոլորին մեկ-մեկ կլողացնեմ, իրենց ձեռք են առել:

ՇՄԱՎՈՆ – Վարիչ էր ուզում ուղարկի, ի՞նչ լողանալ...

ՀՐԱՆՈՒՇ – Բաղնիքի վարի՞չ:

ՇՄԱՎՈՆ – Բա էլ ինչի՞...

ՀՐԱՆՈՒՇ – Դիպպետչեր չի կարողանում նշանակել տա, հիմա էլ բաղնիք է ուղարկո՞ւմ: Ի՞նչ ասացիր:

ՇՄԱՎՈՆ – Ասացի, ուրեմն Բալաբեկյանը ինձ դրա՞ համար է ուղարկել: Ասում է՝ Բալաբեկյանը ո՞վ է...

ՀՐԱՆՈՒՇ – Ո՞նց թե՛ Բալաբեկյանն ով է... Բա որ չգիտեր Բալաբեկյանն ով է, ո՞նց էր վարիչ նշանակում:

ՇՄԱՎՈՆ – Ասում է՝ ինձ հետ Սուփրիկյանն է խոսել:

ՀՐԱՆՈՒՇ – Ի՞նչ Սուփրիկյան, Սուփրիկյանն ո՞վ է:

ՇՄԱՎՈՆ – Շատ գիտե՞մ ով է...

ՀՐԱՆՈՒՇ – Բա որ չգիտես, ո՞նց է խոսել:

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ իմանամ...

ՀՐԱՆՈՒՇ – Կարո՞ղ է ուրիշ ավտո ես նստել:

ՇՄԱՎՈՆ – Չէ, Բալաբեկյանի ասած ավտոն էր՝ 06-05...

Համարը նայեցի, նոր նստեցի, սպիտակ «Վոլգա» էր:

ՀՐԱՆՈՒՇ – Բան չեմ հասկանում:

ՇՄԱՎՈՆ – Ես հասկանո՞ւմ եմ, որ դու հասկանաս:

ՀՐԱՆՈՒՇ – (Գլուտ արածի պես) Լսիր, կարո՞ղ է պատահի էդ Սուփրիկյանը Բալաբեկյանն է:

ՇՄԱՎՈՆ – Բա Բալաբեկյանն ո՞վ է:

ՀՐԱՆՈՒՇ – Սուփրիկյանը...

ՇՄԱՎՈՆ – Բալաբեկյանը Սուփրիկյանն է, Սուփրիկյանը՝ Բալաբեկյանը...

ՀՐԱՆՈՒՇ – Չէ, Սուփրիկյանն է Բալաբեկյանը, Բալաբեկյանը չի Սուփրիկյանը:

ՇՄԱՎՈՆ – Ես Սուփրիկյանի հետ ի՞նչ գործ ունեմ, ես Սուփրիկյան եմ ճանաչո՞ւմ, ես Բալաբեկյանի մոտ եմ գնացել:

ՀՐԱՆՈՒՇ – Հա, էլի, Սուփրիկյանի մոտ ես գնացել:

ՇՄԱՎՈՆ – Էլի ասում է՝ Սուփրիկյանի մոտ ես գնացել... Բա դու փողն ումի՞ց ես հետ վերցրել:

ՀՐԱՆՈՒՇ – Բալաբեկյանից:

ՇՄԱՎՈՆ – Բա ումի՞ց պիտի վերցնեիր:

ՀՐԱՆՈՒՇ – Սուփրիկյանից:

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ Սուփրիկյան, Բալաբեկյանին եմ տվել, Բալաբեկյանից էլ պիտի վերցնեիր:

ՀՐԱՆՈՒՇ – Բալաբեկյանին չես տվել, է՛, Սուփրիկյանին ես տվել:

ՇՄԱՎՈՆ – Ես Սուփրիկյան եմ ճանաչո՞ւմ, որ Սուփրիկյանին փող տամ:

ՀՐԱՆՈՒՇ – Այսքան բացատրում եմ, էլի չես հասկանո՞ւմ: Փոխանակ Բալաբեկյանի մոտ մտնես, մտել ես Սուփրիկյանի մոտ, կարծել ես, թե Բալաբեկյանը նա է, նրան ես տվել: Դու Բալաբեկյանի երես չես տեսել: Ես եմ գնացել Բալաբեկյանից փողը հետ վերցրել:

ՇՄԱՎՈՆ – Եթե ես Բալաբեկյանին փող եմ տվել, Բալաբեկյանն ինչո՞ւ պիտի քեզ տար:

ՀՐԱՆՈՒՇ – Չէր տալիս, ասացի՝ բարձրանում եմ մինիստրի մոտ, վախեցավ, տվեց:

ՇՄԱՎՈՆ – Եթե ինձնից փող չի վերցրել, ինչո՞ւ պիտի վախենար:

ՀՐԱՆՈՒՇ – Էլի չի հասկանում: Նա էլ քեզնից չի վերցրել, ուրիշից է վերցրել:

ՇՄԱՎՈՆ – Ումից վերցրել է, նրա կնոջը կտար, քեզ ինչո՞ւ պիտի տար:

ՀՐԱՆՈՒՇ – Իմացել է, թե եղ ուրիշի կինը ես եմ: Հիմա իմացա՞ր ինչու էր հինգ հարյուր ռուբլի ավել...

ՇՄԱՎՈՆ – Ուրեմն ես ում մոտ որ գնացել եմ, դա Բալաբեկյանը չի՞ եղել:

ՀՐԱՆՈՒՇ – (Խառնված) Չէ, չէ՛... (Ծնկներին խփելով): Հիմա ի՞նչ պիտի անենք:

ՇՄԱՎՈՆ – (Գլուխը բռնելով) Անցավ գլուխդ ինչո՞ւ ցավի տակ դրեցիր, Շմավոն:

ՊԱՏԿԵՐ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԳ

Սուփրիկյանի աշխատասենյակը: Մտնում է Շմավոնը:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Գնացի՞ր, եղա՞վ:

ՇՄԱՎՈՆ – Գնացի, բայց սխալ տեղ տարավ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ի՞նչ է նշանակում՝ սխալ...

ՇՄԱՎՈՆ – Ուրիշ մարդու մոտ տարավ: Նա էլ ասում է՝ ամբողջ օրը նստել, սպասել եմ, որ քեզ ուղարկեն բաղնիք: Ասացի՞ ի՞նչ բաղնիք, ուրեմն ընկեր Բալաբեկյանը դրա՞ համար է ձեզ հետ խոսել: Ասում է՝ Բալաբեկյանն ո՞վ է:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բալաբեկյանն ո՞վ է...

ՇՄԱՎՈՆ – (Օտարոտի, կասկածանքով) Ընկեր Բալաբեկյան...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ասում եմ, Բալաբեկյանն ո՞վ է, ի՞նչ Բալաբեկյան:

ՇՄԱՎՈՆ – Ընկեր Բալաբեկյան, դո՞ւք չեք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բա որ Բալաբեկյանը ես եմ, Սուփրիկյանն ո՞վ է:

ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ Սուփրիկյան, Սուփրիկյանն ո՞վ է: Ընկեր Բալաբեկյանը դո՞ւք չեք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ոչ:

ՇՄԱՎՈՆ – Բա որ դուք չեք, ինչո՞ւ չեիք ասում, որ դուք չեք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Իսկ դու ե՞րբ ես ինձ Բալաբեկյանով դիմել, որ ես ասեմ՝ ես չեմ:

ՇՄԱՎՈՆ – Մոռացե՞լ եք, ընկեր Բալաբեկյան...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Բորբորված) Էլի Բալաբեկյան...

ՇՄԱՎՈՆ – Մոռացե՞լ եք, ընկեր Սուփրիկյան... Առաջին անգամ որ մտա ձեզ մոտ, չհարցրի՞ կարելի՞ է, ընկեր Բալաբեկյան: Դուք էլ ասացիք՝ ասեք...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ընկեր, ես հեռախոսով չեի խոսո՞ւմ, երբ դուք մտաք:

ՇՄԱՎՈՆ – Խոսում էիք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դռան տակ մնացել էիք կանգնած, հեռախոսային խոսակցությունն ավարտեցի, ասացի՝ ասեք: Քանի՞ մարդու ես կարող էի միաժամանակ լսել: Խոսում էի, չէ՞...

ՇՄԱՎՈՆ – Հա, խոսում էիք...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դե ուրեմն չեմ լսել, պարզ չի՞, մարդը եթե մտել է ինձ մոտ, կանգնել, սպասում է, ուրեմն ինձ մոտ է եկել: Ի՞նչ իմանայի, որ Բալաբեկյանին ես ուզում:

ՇՄԱՎՈՆ – Բա դուք ո՞վ եք, ընկեր Բալաբեկյան... Ներողություն, էլի Բալաբեկյան ասացի...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ընկեր, ես Սուփրիկյանն եմ: **(Ուտքով հարվածում է հատակին)**: Բալաբեկյանը տակն է, երրորդ հարկում: Այս շենքում երեք մինիստրություն կա: Իմացեք որ դուռն եք բացում, հետո բացեք: **(Հանում է փողը, գրեթե նետելով)**: Վերցրեք: Սա էլ ձեր հինգ հարյուր ռուբլին: Ումից վերցրել եք, դա էլ նրան տվեք:

ՇՄԱՎՈՆ – Ինչո՞ւ եք նեղանում: **(Հաշվում է փողը)**:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – **(Անհանգստացած)** Դրեք ձեր գրպանը, ի՞նչ եք անում:

ՇՄԱՎՈՆ – Հաշվում եմ:

ՀՐԱՆՈՒՇ – **(Մանելով)** Դռները մեկ-մեկ բացում եմ, որ քեզ գտնեն: Իրե՞ն ես տվել:

ՇՄԱՎՈՆ – Հա... Թող հաշվեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Վերջացրեք, ընկեր:

ՇՄԱՎՈՆ – Հիմա...

ՀՐԱՆՈՒՇ – Բա որ Բալաբեկյանը չէր, ինչո՞ւ էիք տալիս:

ՇՄԱՎՈՆ – Էն ժամանակ չի ասել, որ ինքը Բալաբեկյանը չի, հիմա է ասում:

ՀՐԱՆՈՒՇ – Հաշվիր, հանկարծ պակաս չլինի: Բալաբեկյանի հինգ հարյուր ռուբլին էլ տվե՞ց:

ՇՄԱՎՈՆ – Հա... **(Շարունակում է հաշվել)**:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Անհարմար է, ընկերներ, դրսում կհաշվեք:

ՀՐԱՆՈՒՇ – Վերցնելիս չեք ամաչում, հետ տալիս եք ամաչո՞ւմ: **(Շմավոնին)** Հաշվիր:

ՇՄԱՎՈՆ – Հաշվում եմ... Ախր խոսում եք, սխալվում եմ, նորից եմ հաշվում:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տարեք, տանը կհաշվեք:

ՀՐԱՆՈՒՇ – Պակաս լինի, հետո ումի՞ց ստանամ: **(Շմավոնին)** Հաշվիր...

ՇՄԱՎՈՆ – Թողնում եք, որ հաշվեմ... Էլի հաշիվը կորցրի, պիտի նորից հաշվեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ընկերներ, ես ձեզ ուղղակի խնդրում եմ... Այստեղ փող հաշվելու տեղ չէ:

ՀՐԱՆՈՒՇ – Դուք եք առանց հաշվելու վերցնում, մենք պիտի հաշվենք, նոր վերցնենք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ինչ որ տվել եք, նույնությամբ վերադարձնում եմ, չե՞ք վստահում:

ՀՐԱՆՈՒՇ – Չէ, փողը հաշվել է սիրում: **(Շմավոնին)** Հաշվիր...

ՇՄԱՎՈՆ – **(Բռնկվելով)** Լավ, էլի, խառնեցի, պիտի նորից սկսեմ:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – **(Անհանգիստ ետ ու առաջ է քայլում)** Արագացրեք...

ՀՐԱՆՈՒՇ – Հը՞, պակաս էր...

ՇՄԱՎՈՆ – **(Ականջին)** Չէ, ավել է...

ՀՐԱՆՈՒՇ – Ինչքա՞ն...

ՇՄԱՎՈՆ – Երկու հարյուր...

ՀՐԱՆՈՒՇ – Երկու հարյուր... **(Իրար են նայում):**

ՇՄԱՎՈՆ – Հա...

ՀՐԱՆՈՒՇ – Գնա՞նք...

ՇՄԱՎՈՆ – Եսին:

ՀՐԱՆՈՒՇ – Դե վեր կաց...

ՇՄԱՎՈՆ – **(Կասկածանքով)** Գնա՞նք...

ՀՐԱՆՈՒՇ – Դու ասա...

ՇՄԱՎՈՆ – Դու ասա...

ՀՐԱՆՈՒՇ – Չէ, դու ասա...

ՇՄԱՎՈՆ – Գնա՞նք...

ՀՐԱՆՈՒՇ – Դե որ հաշվեցիր պրծար, պիտի գնանք, հո չե՞նք մնալու... Դե մենք գնացինք, ընկեր Բալա... **(Շմավոնին)** Ազգանունն ինչյա՞ն էր...

ՇՄԱՎՈՆ – Սուփրիկյան...

ՀՐԱՆՈՒՇ – Դե մենք գնացինք, ընկեր Սուփրիկյան: Շնորհակալ ենք...

ՇՄԱՎՈՆ – Շնորհակալ ենք... Գնացինք... Ցտեսություն...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Հաջողություն... Ներեցեք, խնդրում եմ, թյուրիմացության համար, ես էլ մեղք չունեմ:

ՀՐԱՆՈՒՇ – Ոչինչ, պատահում է...

ՇՄԱՎՈՆ – **(Հրանուշին)** Գնացինք...

ՀՐԱՆՈՒՇ – Գնացի՞նք...
 ՇՄԱՎՈՆ – Դե դուրս արի...
 ՀՐԱՆՈՒՇ – Չէ, առաջ դու դուրս արի, հետո ես...
 ՇՄԱՎՈՆ – **(Պայթելով)** Ախր ես ո՞նց դուրս գամ, որ ոտքս
 ոտքիդ առաջ չեմ կարողանում դնել: Ես հարամ փող կուտե՞մ...
 ՀՐԱՆՈՒՇ – Ո՞վ կուտի, որ դու ուտես... Քեզ թվում է, թե ես
 կուտե՞մ...
 ՇՄԱՎՈՆ – **(Մուփրիկյանի՞ն)** Վերցրե՛ք էս երկու հարյուր
 ուրվի՞ն:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – **(Չարմացած)** Ինչի՞՞ համար...
 ՇՄԱՎՈՆ – Ավել էր...
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չի կարող պատահել...
 ՀՐԱՆՈՒՇ – Հազարից մեկ պատահում է, վերցրե՛ք:
 ՇՄԱՎՈՆ – Վերցրե՛ք, հանգիստ խղճով թողնենք, գնանք:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ինչ որ տվել եք, ես նույնությամբ վերա-
 դարձնում եմ: Գուցե դո՞ւք եք տվել ավել:
 ՀՐԱՆՈՒՇ – Մենք ավել փող ունե՞նք, որ ավել տանք: Վերց-
 րե՛ք:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Չէ, ես չեմ վերցնի, տվել եք, վերադարձ-
 նում եմ:
 ՇՄԱՎՈՆ – Չեք վերցնի, մենք էլ չենք գնա:
 ՀՐԱՆՈՒՇ – Հա, չենք գնա...
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես ձեզ հավատացնում եմ, որ ինչպես տվել
 եք, այնպես էլ վերադարձնում եմ: Ավել թող լինի, չեմ ուզում:
 ՇՄԱՎՈՆ – Մենք էլ չենք ուզում:
 ՀՐԱՆՈՒՇ – Չի վերցնի, կդնենք սեղանին, կգնանք:
 ՇՄԱՎՈՆ – Ըհը, դրեցի...
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Մի բուսի սպասեք, սպասեք մի բուսի: Ախր
 նորից հետ եք գալու... Վերցրե՛ք, ի սեր Աստծո...
 ՀՐԱՆՈՒՇ – **(Շմավոնի՞ն)** Լսիր, կարո՞ղ է դու ես սխալ հաշվել:
 ՇՄԱՎՈՆ – Հարյուր անգամ չհաշվեցի՞...
 ՀՐԱՆՈՒՇ – Չեմ հավատում, չեմ հավատում, եթե պակաս
 չտա, ավել չի տա: Մի անգամ էլ հաշվիր:
 ՇՄԱՎՈՆ – Կարող է ուրիշի փողերից է խառնվել:
 ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – **(Հանդիմանաճառով)** Ինչե՞՞ր եք խոսում, ին-
 չե՞՞ր եք խոսում, չի կարելի, չէ՞...
 ՀՐԱՆՈՒՇ – **(Շմավոնի՞ն)** Հիմա քեզ համար դժվա՞ր է, մի
 անգամ էլ հաշվիր:

ՇՄԱՎՈՆ – (Հոգուն հասած) Ինչքան ուզում ես հաշվեմ՝ ավել
է, ավել է... Երկու հարյուր ռուբլի ավել է: (Սկսում է հաշվել):
ՀՐԱՆՈՒՇ – Կարգին հաշվիր...
ՇՄԱՎՈՆ – (Հաշվելով) Չխոսես...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ընկերներ, ընկերներ, ախր ինչո՞ւ չեք ուզում
հավատալ:
ՀՐԱՆՈՒՇ – Ո՞ւմ հավատանք, քե՞զ հավատանք: (Շմավոնին)
Հաշվիր...
ՇՄԱՎՈՆ – Հաշվում եմ...
ՀՐԱՆՈՒՇ – Չշփոթվես...
ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ շփոթվի...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ավելորդ ժամանակ եք կորցնում...
ՇՄԱՎՈՆ – Էհ, էլի շփոթվեցի...
ՀՐԱՆՈՒՇ – Ես քեզ չասացի՞ չշփոթվես...
ՇՄԱՎՈՆ – Մի ասա, մի ասա, որ ասում ես՝ չշփոթվես, ավելի
եմ շփոթվում: Չխոսես...
ՀՐԱՆՈՒՇ – Լավ, էլ չեմ խոսի:
ՇՄԱՎՈՆ – Դե չխոսես:
ՀՐԱՆՈՒՇ – Չեմ խոսում, դու հաշվիր:
ՇՄԱՎՈՆ – Բա որ չես խոսում, ինչի՞ տես խոսում:
ՀՐԱՆՈՒՇ – Վերջ, ասում եմ, էլ չեմ խոսի...
ՇՄԱՎՈՆ – (Բռնկվելով) Թյու, էլի սխալվեցի. խելք եմ թողե՞լ
զլխիս...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Անհարմար է, այ ընկերներ, անհարմար է:
ՀՐԱՆՈՒՇ – Հաշված ավել եմք, հաշված էլ պիտի ստանանք,
անհարմարս ո՞րն է: (Շմավոնին) Հը՞, ճիշտ էր:
ՇՄԱՎՈՆ – Ոնց որ թե՛ չէ... Հարյուր հիսուն պակաս է:
ՀՐԱՆՈՒՇ – (Հարձակողական) Ի՞նչ, ինչքա՞ն...
ՇՄԱՎՈՆ – (Մոլորված) Հարյուր հիսուն...
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Այդ ի՞նչ եք ասում, ի՞նչ պակաս... Ինչպե՞ս
կարող է պատահել...
ՀՐԱՆՈՒՇ – Մի կռպեկ չեմ թողնի, մի կռպեկ... (Մուփրիկ-
յանին): Տուր, տուր, հարյուր հիսուն ռուբլին տուր:
ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Տիկին, ես լրիվ վերադարձրել եմ, թող նորից
հաշվի:
ՀՐԱՆՈՒՇ – (Շմավոնին) Հաշվիր, շուտ արա:
ՇՄԱՎՈՆ – Ի՞նչ հաշվեմ. մի անգամ ավելանում է, մի անգամ
պակասում: (Սկսում է հաշվել):

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դուրս եկեք, խնդրում եմ, դուրս եկեք, դրսում կհաշվեք, ես ուշանում եմ...

ՀՐԱՆՈՒՇ – Մինչև չհաշվենք, ճիշտը չիմանանք, մենք այստեղից գնացողը չենք:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Բայց ես ուշանում եմ:

ՀՐԱՆՈՒՇ – Ոչինչ, կսպասեք:

ՇՄԱՎՈՆ – (Վեր քռչելով) Էլի խառնեցի:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Դուրս եկեք, դուրս եկեք, դուք իմ նյարդերի հետ եք խաղում: Դուք չեք գնա, ես կգնամ: (Դուրս է գնում):

ՀՐԱՆՈՒՇ – (Հետևից) Սպասիր, ո՞ր ես գնում, սպասիր... Որ պակաս եղավ, ումի՞ց ստանանք: (Շմավոնին): Հետևից հասիր, գնաց...

ՇՄԱՎՈՆ – (Վազելով հետևից) Ընկեր Բալաբեկյան... Ընկեր Սուփրիկյան... Ընկեր Բալաբեկյան...

Գնում են:

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Միջանցք: Մտնում է Սուփրիկյանը: Դիմացից՝ Շմավոնը:

ՇՄԱՎՈՆ – Սպասիր, է՛, ո՞ր ես գնում, ընկեր Սուփրիկյան:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Խառնված) Մի՛ փակեք ճանապարհս...

ՀՐԱՆՈՒՇ – (Մտնելով) Չթողնես... Չթողնես գնա...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Համբերությունը հատած) Տիկին, ի՞նչ եք ուզում ինձնից... Ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ եք միջանցքում մարդկանց հավաքում ձեր գլխին:

ՀՐԱՆՈՒՇ – (Շմավոնին) Չթողնես գնա...

ՇՄԱՎՈՆ – Չէ, չեմ թողնի...

ՔԵՐՈՒՅԱՆ – (Մտնելով, անակնկալի եկած) Ընկեր Սուփրիկյան...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Գալիս եմ...

ՔԵՐՈՒՅԱՆ – Ի՞նչ եք ուզում այս մարդուց, ընկերներ...

ՇՄԱՎՈՆ – (Հրանուշին) Սա էր, այ... Սա էր ինձ բաղնիք ուղարկողը:

ՀՐԱՆՈՒՇ – Հա... (Առաջ մղվելով, Քերոյանին) Իմ ամուսինը բաղնիքի կարիք չունի... Չեզ պիտի ուղարկեն, ձեզ...

ՔԵՐՈՒՅԱՆ – Ի՞նչ է պատահել, ընկեր Սուփրիկյան...

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – (Հևալով) Չգիտեմ, ինչ-որ Բալաբեկյանի հետ եմ ինձ շփոթել:

ՀՐԱՆՈՒՇ – Քեզ չենք նրա հետ շփոթել, է՛, նրան ենք քեզ հետ շփոթել: Բոլորիդ մեկ-մեկ դատարան եմ քարշ տալու, բոլորիդ...

ՔԵՐՈՔՅԱՆ – Ընկերներ, բայց նա Սուփրիկյանն է, նա Բալաբեկյանը չի:

ՀՐԱՆՈՒՇ – Նշանակություն չունի, բոլորն էլ Բալաբեկյան են...

ՔԵՐՈՔՅԱՆ – Բայց ո՞վ է այդ Բալաբեկյանը:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Մտնելով) Բալաբեկյանը ես եմ...

ՀՐԱՆՈՒՇ – Բա որ Բալաբեկյանը դու ես, Բալաբեկյանն ինչո՞ւ չի ասել, որ ինքը չի Բալաբեկյանը... Ներողություն, Սուփրիկյանն ինչո՞ւ չի ասել, որ ինքը չի Բալաբեկյանը:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Հիմա համոզվեցի՞ք, տիկին, որ ես եմ Բալաբեկյանը:

ՎԱՐՈՍՅԱՆ – (Մտնելով) Շնորհակալ եմ... Ընկեր Բալաբեկյան, այ, այս ընկերն էր եկել ձեր անունից...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Գիտեմ: (Ցույց տալով Սուփրիկյանին) Այ, այս ընկերն է նրան ուղարկել իմ անունից:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Ես ձեր անունից չեմ ուղարկել, որտեղ որ պետք է, ես իմ անունից եմ ուղարկել, ինքն է գնացել ձեր անունից...

ՇՄԱՎՈՆ – (Հոգուն հասած, պտոթկալով) Ախր որ վերցնում եք, իմացեք ումից եք վերցնում, նոր վերցրեք:

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Ախր որ տալիս եք, իմացեք ում եք տալիս, նոր տվեք:

ԲԵՆԻԿ – (Մտնելով, խոժոռված) Ընկեր Բալաբեկյան...

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – Տիկին, վերադարձրեք իրեն:

ՀՐԱՆՈՒՇ – (Վերադարձնելով) Քեզնից վերցրել եմ, իրեն տա՞մ:

ԲԵՆԻԿ – (Ծրարը դնում է գրպանը, ոտքից գլուխ չափելով Հրանուշին) Սա այն կի՞նն է, որ կարծել եք, թե իմ տիկինն է:

ՇՄԱՎՈՆ – Նա ոչ մեկի տիկինն էլ չի, նա իմ կինն է:

ԲԵՆԻԿ – Դո՞ւ ում էիր տվել, որ կինդ Բալաբեկյանից էր հետ վերցրել:

ՇՄԱՎՈՆ – Բալաբեկյանին... Ներողություն, Սուփրիկյանին:

ՍՈՒՓՐԻԿՅԱՆ – Պրովոկացիաներ մի՛ սարքեք:

ԲԵՆԻԿ – (Հարձակողական) Ումի՞ց ես փող վերցրել... (Հայացքը Շմավոնին և Հրանուշին, խղճահարություն) Սրանցի՞ց... (Ապտակում է Մուփրիկյանին):

ԲԱԼԱԲԵԿՅԱՆ – (Ցնցվելով) Բենի՛կ...

ՔԵՐՈՒՅԱՆ – (Ընկնելով մեջտեղ, ահարեկված) Ի՞նչ եք անում... Ի՞նչ եք անում...

ՎԱՐՈՍՅԱՆ – (Խառնված, սաստելով) Չեղա՛վ... Դա արդեն չեղա՛վ... Չեղա՛վ...

Խուճապ, իրարանցում: Մուփրիկյանը դեմքը բռնած դուրս է գնում: Մյուսները հետևում են նրան: Մնում են Շմավոնն ու Հրանուշը՝ շվարած, անօգնական: Հրանուշը բարձրացնում է գլուխը, նայում է Շմավոնին, ուզում է ինչ-որ բան ասել: Ձգալով, որ պահը հարմար չէ, կախում է գլուխը:

Մտնում է Բենիկը:

ԲԵՆԻԿ – (Շոգազրպանից հանում է քիչ առաջ իրեն վերադարձված ծրարը, փորձում է տալ Շմավոնին, մտերմիկ) Շատ ներողություն... Չե՞ս նեղանա...

ՇՄԱՎՈՆ – (Առանց մայելու) Կնեղանամ...

ԲԵՆԻԿ – (Բարձրացնում է ձեռքերը՝ հանձնվելով) Ես ներողություն... (Գնում է):

ՇՄԱՎՈՆ – (Կարճատև դադարից հետո) Դե ես գնացի...

ՀՐԱՆՈՒՇ – Ո՞ր...

ՇՄԱՎՈՆ – Բա որ ասում էիր...

ՀՐԱՆՈՒՇ – Ե՞ս... Ես բաժանվե՞մ... Մինչև հիմա երկու տեղ ես աշխատել... Ոչինչ, ոչինչ... (Գտնելով ելքը) Սրանից հետո մի տեղ դու կաշխատես, մի տեղ՝ ես...

Մնում են անշարժացած, ասես անհաղորդ:

ԴԱՆԴԱՂ ՓԱԿՎՈՒՄ Է ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

1987 թ.

ՄՐԲԱՊԱՏԿԵՐ

Սատիրա՝ ընդմիջումով կամ առանց ընդմիջման

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Չ Ի Ն Ք

ՄԻՆԻՍՏՐ

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ

ԳԼԽԱՎՈՐ ԻՆժԵՆԵՐ

ԱՐՏԱԳՐԱՍԱՍԻ ՊԵՏ

Գործողությանը մասնակցում են մինիստրի կինը, վարչության պետի կինը և մի կին:

Մինիստրի ընդարձակ առանձնասենյակը: Երկարավուն սեղանի շուրջ տեղեր են զբաղեցրել մինիստրության բարձրաստիճան պաշտոնյաներ: Գլխամասում՝ մինիստրը:

ՄԻՆԻՍՏՐ – Ընկերներ, ահագանգ է ստացվել, որ քաղցրավենիքի ձեռնարկությունում տեղի են ունենում առանձնապես խոշոր չափի հափշտակումներ: Թող ուտեն ինչքան ուզում են, բայց առանց փաստաթղթերի ձևակերպման ավտոմեքենաներով դուրս չհանեն պատրաստի արտադրանքը: Նկատվում են նաև կաշառակերության փաստեր: Այո, այո, մի զարմացեք: Կաշառակերն իմ անձնական թշնամին է, երկրի համար մեկ թշնամին է այսօր: Ոչ մեկի չեմ խնայի, իմացեք: Կպատժեմ ամենախիստ ձեռքով: Չեմ պատճառով ինչո՞ւ պիտի մինիստրի անունը հոլովվի, ո՞ր մեղքիս համար: Առաջարկություն կա ստեղծել յոթ հոգուց կազմված հանձնաժողով՝ մինիստրի տեղակալ ընկեր Ենգիբարյանի ղեկավարությամբ: Տասնօրյա ժամկետում ստուգման արդյունքները ներկայացնել մինիստրության կոլեգիայի քննարկմանը: Ուրիշ առաջարկություններ կա՞ն: Չկան: Ազատ եք: (Հրավիրվածները դուրս են գնում: Անցնում է իր զրասեղանի մոտ: Հեռախոսի զանգ): Այո, լսում եմ:

ԿՆՈՋ ՉԱՅՆ – Ես եմ: Մարդ կա՞ մոտդ, բան եմ ուզում ասել:

ՄԻՆԻՍՏՐ – Չկա, ասա:

ԿԻՆ – Քիչ առաջ մեկը եկավ, զանգը տվեց, դուռը բացեցի: Ասաց՝ կարելի՞ է: Ասացի՝ համեցեք:

ՄԻՆԻՍՏՐ – Արագ, արագ, ես այդքան ժամանակ չունեմ:

ԿԻՆ – Մտավ ներս, ասաց՝ միլիցիայի աշխատող եմ:

ՄԻՆԻՍՏՐ – Ի՞նչ էր ուզում, ինչո՞ւ եք ամեն մեկի առաջ բացում դուռը:

ԿԻՆ – Հանեց վկայականը, ցույց տվեց, գնաց կանգնեց սրբապատկերի առաջ:

ՄԻՆԻՍՏՐ – Հետո՞...

ԿԻՆ – Հետո շուռ եկավ, ներողություն խնդրեց, որ անհանգրստացնում է: Ասացի՝ ոչինչ, ասեք, ի՞նչ է ձեզ հետաքրքրում: Ասաց՝ ուզում եմ իմանալ, թե սա որտեղից եք ձեռք բերել:

ՄԻՆԻՍՏՐ – Դա ի՞նչ հարց է: Հետո՞...

ԿԻՆ – Ասացի՝ ամուսնուս ծննդյան օրն եմ բերել: Հարցրեց՝ ո՞վ... Ասացի՝ ճիշտն ասած, հիմա չեմ հիշում, ահագին ժամանակ է անցել: Ասաց՝ համենայնդեպս, փորձեք հիշել, ես խնդրում եմ: Ասացի՝ գուցե ամուսինս հիշի, բայց դա ինչի՞ համար եք հարցնում: Ասաց՝ գողացված է:

ՄԻՆԻՍՏՐ – (Ակամա վրա բերելով) Ի՞նչը...

ԿԻՆ – Սրբապատկերը:

ՄԻՆԻՍՏՐ – Ո՞նց թե...

ԿԻՆ – Ներողություն խնդրեց, դուրս եկավ: Երևի գա քեզ մոտ: Հարցրեց՝ քաղաքո՞ւմ է, ասացի՝ այո:

ՄԻՆԻՍՏՐ – Դիր լսափողը, տեսնեմ դա ինչ պատմություն է:

ԿԻՆ – Կզանգահարես՝ իմանամ...

ՄԻՆԻՍՏՐ – (Դնում է լսափողը, շրջվելով դեպի սելեկտորը) Տեղո՞ւմ ես:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – Այո:

ՄԻՆԻՍՏՐ – Արի մի բռնեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Եկա:

ՄԻՆԻՍՏՐ – (Ինքն իր հետ) Այ քեզ բան...

ՏԵՂԱԿԱԼ – (Մտնելով) Լսում եմ:

ՄԻՆԻՍՏՐ – Նստիր:

ՏԵՂԱԿԱԼ – Շնորհակալություն:

ՄԻՆԻՍՏՐ – (Բազմանշանակ) Իմացա՞ր ինչ է եղել...

ՏԵՂԱԿԱԼ – (Լարված) Ի՞նչ...

ՄԻՆԻՍՏՐ – Հիշո՞ւմ ես, մի երկու տարի առաջ, դեռ մինիստրի տեղակալ չէիր, իմ ծննդյան օրը կնոջդ հետ որ եկար, մի սրբապատկեր էիր բերել, Ենգիբարյան:

ՏԵՂԱԿԱԼ – (Թեթև քնծիծաղով) Այո, բայց ինչի՞ համար եք հարցնում:

ՄԻՆԻՍՏՐ – Զիչ առաջ կինս զանգահարեց... Ինչ-որ մեկը միլիցիայից եկել է, ասել է՝ դա գողացված է եղել:

ՏԵՂԱԿԱԼ – (Աաշած) Եթե գողացված լիներ, ինչո՞ւ պիտի վաճառեիր:

ՄԻՆԻՍՏՐ – Որտեղի՞ց էիր առել:

ՏԵՂԱԿԱԼ – Ես չեմ առել, կիմս է առել, բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Մի՞թե իրենց թույլ կտան այդպիսի բան անել:

ՄԻՆԻՍՏՐ – Հարցրու, իմացիր որտեղից է առել, խնդրում եմ: Անհարմար բան չստացվի հանկարծ:

ՏԵՂԱԿԱԼ – **(Շվարած)** Հարցնեմ, բայց չեմ կարծում... Մխալ հասցեով եմ եկել:

ՄԻՆԻՍՏՐ – Համենայնդեպս, իմանալը չի խանգարում:

ՏԵՂԱԿԱԼ – Հենց հիմա զանգահարեմ: Թյուրիմացություն կարող է լինել, ուրիշ ոչինչ:

ՄԻՆԻՍՏՐ – Մի խոսքով, ինձ տեղյակ կպահես:

ՏԵՂԱԿԱԼ – Կիմս հիմա ո՞նց պիտի զարմանա... **(Գուրս է զնում):**

Մինիստրի տեղակալի առանձնասենյակը:

ՄԻՆԻՍՏՐ – **(Համար է հավաքում, ազդանշանները հնչում են, վերցնող չկա)** Չէ, չի պատասխանում, ուրեմն տանը չի: **(Լսափողը դնելուց հետո, դեպի սելեկտորը):** Ստեփանյան, եթե ազատ ես, մի փոքր հարց կա, անցիր ինձ մոտ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՉԱՅՆԸ – Այս բուպեին:

ՏԵՂԱԿԱԼ – **(Ինքն իրեն)** Մարդկանց եմ դնում անհարմար վիճակի մեջ, ցավը դա է:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ – **(Մտնելով)** Կարելի՞ է:

ՏԵՂԱԿԱԼ – Առաջ արի: Մոտ նստիր:

ՊԵՏ – Խնդրեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ստեփանյան, դու մի անգամ մի սրբապատկեր էիր բերել իմ ծննդյան օրը, հիմա եկել, ասում եմ՝ գողացված է եղել:

ՊԵՏ – **(Չարմացած)** Ո՞վ է ասում:

ՏԵՂԱԿԱԼ – Միլիցիայից:

ՊԵՏ – **(Իրեն կորցնելով)** Եթե գողացված լիներ, ինչո՞ւ պիտի դնեին խանութում, վաճառեին: Ո՞նց կարող է այդպիսի բան լինել:

ՏԵՂԱԿԱԼ – Որտեղի՞ց էիր առել:

ՊԵՏ – Ես չեմ առել, կիմս է առել:

ՏԵՂԱԿԱԼ – **(Մի պահ ընկրկելուց հետո)** Հիշում ես, չէ՞, դա մոտավորապես երբ էր: Դեռ վարչության պետ չէիր, հետո դարձրինք:

ՊԵՏ – Ուրեմն կարո՞ղ է պատահել, որ ես դա չհիշեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Հիմա մնում է, որ կինդ հիշի, թե որտեղից է առել:

ՊԵՏ – Իսկ ինչո՞ւ չպիտի հիշի, քանի՞ տարի է անցել, որ չհիշի:

ՏԵՂԱԿԱԼ – Ինձ էլ է թվում: Եթե ինքն է առել՝ կհիշի, ինչն՞
չպիտի հիշի:

ՊԵՏ – Երբ որ ուզում ենք մի տեղ գնալ, նվերի հարց է լինում,
միշտ էլ կինս է առնում: Կանայք ճաշակի հարցում ավելի ճիշտ են
կողմնորոշվում, քան տղամարդիկ:

ՏԵՂԱԿԱԼ – Բն կարծիքով մեր տանն ո՞վ է առնում: Մեր
տանն էլ կինս է առնում: Դե զանգահարիր, մի իմանանք որտեղից է
վերցրել:

ՊԵՏ – Խնդրեմ, բայց ի՞նչ անհարմար բան է ստացվել: **(Գնում
է դեպի դուռը):**

ՏԵՂԱԿԱԼ – Ո՞րն էս գնում, այստեղից զանգահարիր:

ՊԵՏ – Չեզ չե՞մ խանգարի: Գնամ, իմ սենյակից ազատ խոսեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ինձ չես խանգարում, այստեղից զանգահարիր:

ՊԵՏ – **(Մտտենում է հեռախոսին: Համար հավաքելուց հետո)**

Չի միանում: Ոչինչ, ես հիմա կզնամ իմ սենյակից կզանգահարեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Չէ, մի գնա, նորից փորձիր:

ՊԵՏ – **(Խուսանավելով)** Ի՞նչ տարբերություն, գնամ իմ սեն-
յակը, իմ սենյակից զանգահարեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ասացի՛ չէ: Այստեղից զանգահարիր:

ՊԵՏ – Ճիշտն ասած, չեմ ուզում իմանա, որ ձեր մոտից եմ
զանգահարում, հիմա էլ կինս պիտի իրեն վատ զգա:

ՏԵՂԱԿԱԼ – Նա ի՞նչ պիտի իմանա, թե դու որտեղից ես զան-
գահարում:

ՊԵՏ – Չայնիցս կիմանա:

ՏԵՂԱԿԱԼ – Չայնիցո՞ւ ո՞նց կիմանա:

ՊԵՏ – Կանանց չգիտե՞ք... Իմանում են:

ՏԵՂԱԿԱԼ – Չեմ հասկանում, ինչն՞ չես ուզում զանգահարել:

ՊԵՏ – Ուզում եմ, ո՞վ է ասում, որ չեմ ուզում, ընկեր Ենզի-
բարյան:

ՏԵՂԱԿԱԼ – Դե որ ուզում ես՝ զանգահարիր:

ՊԵՏ – Չանգահարեմ, ես ասացի՞ չեմ զանգահարի: Տեսաք՝
չմիացավ:

ՏԵՂԱԿԱԼ – Մի անգամ էլ փորձիր: **(Հեռախոսի զանգ):** Մի
րոպե, մինիստրն է: **(Վերցնում է լսափողը):** Լսում եմ:

ՄԻՆԻՍՏՐԻ ՉԱՅՆԸ – Ի՞նչ պարզվեց, խոսեցի՞ր:

ՏԵՂԱԿԱԼ – Չէ, չհաջողվեց, տանից դուրս է եկել: Ջգուշացրել
եմ՝ հենց որ գա, ինքն ինձ կզանգահարի:

ՄԻՆԻՍՏՐ – Բարի:

ՏԵՂԱԿԱԼ – (Լսափողը դնելուց հետո, սպասողական) Ստեփանյան...

ՊԵՏ – Դուք իմ բնավորությունը չգիտե՞ք, ընկեր Ենգիբարյան, ինչո՞ւ եք ուզում պարզ ասեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Եթե գաղտնիք չկա, ասա, ումի՞ց ես քաքցում:

ՊԵՏ – Ոչ մի գաղտնիք էլ չկա, ես ձեզանից ի՞նչ գաղտնիք պիտի ունենամ:

ՏԵՂԱԿԱԼ – Չկա՝ ավելի լավ, դե գանգահարիք, իմանանք, շատ ես երկարացում:

ՊԵՏ – Չեմ կարող, ընկեր Ենգիբարյան, մի ստիպեք, ուրեմն մի բան կա, էլի, որ չեմ ուզում այստեղից գանգահարել: Չեք ներկայությամբ ճնշվում եմ, ախր ո՞նց հարցնեմ: Կինս էլ պիտի վատ զգա: Ուղղակի երևույթն է տգեղ: Ամեն ինչի վրա թող կասկածեն, սրբապատկերի վրա ինչո՞ւ եմ կասկածում: Խանութից չառնենք, գնանք որտեղի՞ց առնենք:

ՏԵՂԱԿԱԼ – Ասա, ասա համարը, ես հավաքեմ: Ո՞րն էր՝ 04-06, թե՞ 06-04...

ՊԵՏ – Ուրեմն դուք իմ տան հեռախոսի համարը մոռացե՞լ եք, ընկեր Ենգիբարյան:

ՏԵՂԱԿԱԼ – Չեմ մոռացել, ասա 04-06, թե՞ 06-04:

ՊԵՏ – Դե որ գիտեք, էլ ինչո՞ւ եք ինձ հարցնում:

ՏԵՂԱԿԱԼ – Ասա, համարը հավաքեմ, տեսնեմ ոնց չի միանում:

ՊԵՏ – Ախր շատ վիրավորական վիճակ է, ես ձեր ասածից դեռ ուշքի չեմ գալիս: Եթե կինս իմանա, նրա հետ ինչ կկատարվի, պատկերացնո՞ւմ եք:

ՏԵՂԱԿԱԼ – Իսկ եթե միլիցիայից նորից գան, իմ կինն ի՞նչ պիտի ասի, դու էլ դա պատկերացրու:

ՊԵՏ – (Լեզվով ծլթծլթացնելով) Ի՞նչ անհարմար բան է եղել...

ՏԵՂԱԿԱԼ – (Չեռքը հեռախոսին) Հը՞... Արագացրու:

ՊԵՏ – Չեմ կարող, ընկեր Ենգիբարյան, մի ստիպեք, խնդրում եմ, թողեք ուշքի գամ:

ՏԵՂԱԿԱԼ – Այստեղից չես գանգահարում, դե գնա քո սենյակից գանգահարիք, այ ընկեր:

ՊԵՏ – Գնամ, մենակ թե կինս տանը լինի: (Դուրս է գնում):

ՏԵՂԱԿԱԼ – (Նրա գնալուց հետո) Իրեն թվում է, թե հետո չեմ իմանալու՝ գանգահարել է, թե չի գանգահարել:

Վարչության պետի առանձնասենյակը:

ՊԵՏ – (Համարը հավաքելուց հետո, լսափողի մեջ) Ոսկերչ-
 յանին...

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՉԱՅՆԸ – Ես ձեզ սիրով լսում եմ:

ՊԵՏ – Քարտուղարուհիդ ո՞ր է, որ դու ես վերցնում:

ՏՆՕՐԵՆ – Արձակուրդում է, արտասահման եմ ուղարկել: Ին-
 չն՞վ կարող եմք ծառայել հայրենիքին:

ՊԵՏ – Ոսկերչյան, ես քեզ խնդրում եմ շտապ գաս ինձ մոտ,
 եթե զբաղված չես, իհարկե:

ՏՆՕՐԵՆ – Ի՞նչ նշանակություն ունի, ամեն ինչ թողնեմ, գամ,
 բայց ի՞նչ հարց է: Ներողություն, որ հարցնում եմ: Հո նորից նույն
 պատմությունը չի՞:

ՊԵՏ – Չէ, չէ, հանգիստ եղիք, հեռախոսով ասելու բան չի,
 կգաս, կասեմ: Միայն թե՛ արագ...

ՏՆՕՐԵՆ – Հինգ րոպեից ձեզ մոտ եմ:

ՊԵՏ – (Դնում է լսափողը, հետո նորից վերցնում: Համար հա-
 վաքելուց հետո) Այլն...

ԿՆՈՋ ՉԱՅՆԸ – Ասա:

ՊԵՏ – (Խառնված) Ես եմ:

ԿԻՆ – Չանգիցդ իմացա, որ դու ես: Ասա:

ՊԵՏ – Մե՞նակ ես: Հո ուրիշ մարդ չկա տանը:

ԿԻՆ – Չե՞ս տեսնում, որ չկա: Ի՞նչ է պատահել, ասա:

ՊԵՏ – Հիմա լսիր՝ ինչ եմ ասում:

ԿԻՆ – (Անհամբեր) Վա՛յ, դե ասա:

ՊԵՏ – Մի երկու տարի առաջ, որ գնացինք մեր մինիստրի
 տեղակալի՝ Ենգիբարյանի ծննդին, հիշո՞ւմ ես...

ԿԻՆ – (Ընդհատելով) Ո՞նց չեմ հիշում, ասա...

ՊԵՏ – Հետո՞նք մի սրբապատկեր էինք տարել, հիշո՞ւմ ես:

ԿԻՆ – Այո, հիշում եմ, վայ, ինչո՞ւ չպիտի հիշեմ: Ասա:

ՊԵՏ – Եթե հարցնեն՝ կասես, որ դու ես առել:

ԿԻՆ – Զանիստ՞վ...

ՊԵՏ – Մի երեք-չորս հազարով...

ԿԻՆ – Դե հիմա ստույգ ասա, որ ասեմ:

ՊԵՏ – Երեք հազարով:

ԿԻՆ – Ո՞վ պիտի հարցնի:

ՊԵՏ – Ոչ մեկը, ասում եմ՝ եթե հարցնեն...

ԿԻՆ – Բայց ախր ի՞նչ է եղել, պարզ ասա, որ հասկանամ:

ՊԵՏ – Ոչ մի բան, կգամ, կասեմ, ինքն էր հետաքրքրվում:

ԿԻՆ – Ինչի՞ համար:

ՊԵՏ – Չիմացա, կգամ, կասեմ:
 ԿԻՆ – Որտեղի՞ց եմ առել:
 ՊԵՏ – Խանութից:
 ԿԻՆ – Ո՞ր խանութից:
 ՊԵՏ – Դու ես առել դու որոշիր: Ես չգիտեմ:
 ԿԻՆ – Ի՞նքը պիտի հարցնի:
 ՊԵՏ – Չէ, պարտադիր չի, եթե մեկնումեկը հարցնի...
 ԿԻՆ – Իսկ եթե ոչ մեկը չհարցնի՞...
 ՊԵՏ – Չհարցնեն՝ չես ասի, դա ի՞նչ հարց է, որ տալիս ես:
 ԿԻՆ – Դրա՞ համար ես զանգահարել:
 ՊԵՏ – Հա, հա, կգամ, կասեմ:
 ԿԻՆ – Հիմա ասա:
 ՊԵՏ – Հեռախոսով ո՞նց ասեմ: Դիր լսափողը, գծի մեջ հան-
 կարծ ուրիշ մարդ կընկնի: Քանի չի ընկել, դիր:
 ԿԻՆ – Էլ ո՞նց դնեմ, որ անհանգստացա:
 ՊԵՏ – Անհանգստանալու բան չկա, դիր:
 ԿԻՆ – Չեմ դնում, ասա, ես կհասկանամ:
 ՊԵՏ – Դիր, ասում եմ, մոտս մարդ եկավ:
 ԿԻՆ – Դե լավ, գոնե երկու բառով ասա:
 ՊԵՏ – Դիր, ասում եմ, կգամ, կասեմ: Ոչ մի բան էլ չի եղել:
 ԿԻՆ – Բա որ չի եղել, էլ ի՞նչ պիտի ասես: Դե դա ասա:
 ՊԵՏ – Դիր, ասում եմ, կգամ, կասեմ: Ոսկերչյանը հիմա պիտի
 մոտս գա:
 ԿԻՆ – Ի՞նչ Ոսկերչյան:
 ՊԵՏ – Գործարանի տնօրենը, դիր:
 ԿԻՆ – Լավ, էլի, ասա:
 ՊԵՏ – Կգամ, կասեմ, ասում եմ՝ դիր:
 ԿԻՆ – Ոսկերչյանից հարցրու զինը, ինքը կիմանա:
 ՊԵՏ – Կհարցնեմ: Դիր:
 ԿԻՆ – (Մինչև վերջ կառչած) Մի բուպե...
 ՊԵՏ – Չէ, ասացի: Դու չես դնում, ես կդնեմ: (Դնում է լսա-
 փողը):
 ՏՆՕՐԵՆ – (Մտնելով) Կարելի՞ է:
 ՊԵՏ – Արի, Ոսկերչյան:
 ՏՆՕՐԵՆ – Բարև՛ ձեզ:
 ՊԵՏ – Բարև՛, նստիր:
 ՏՆՕՐԵՆ – Իմանամ ինչպես եք, հետո...
 ՊԵՏ – Շնորհակալություն: Լավ...

ՏՆՕՐԵՆ – Դուք իրավունք չունեք վատ լինելու, իմ արև:
 ՊԵՏ – Ոսկերչյան, դու մի սրբապատկեր էիր բերել իմ ծննդին,
 դա որտեղի՞ց էիր առել:
 ՏՆՕՐԵՆ – Ի՞նչ սրբապատկեր...
 ՊԵՏ – Որ ցվեր էիր բերել, է՛, չե՞ս հիշում:
 ՏՆՕՐԵՆ – (Վերևից, աղայական) Հիշում եմ, բայց դա ախր
 ի՞նչ հիշելու բան է, որ հիշեմ կամ չհիշեմ: Մի հատ էլ է պե՞տք:
 ՊԵՏ – Չէ, ուրիշ բանի համար եմ հարցնում:
 ՏՆՕՐԵՆ – Եթե պետք է, բերեմ, էլ ինչո՞ւ եք հարցնում, ընկեր
 Ստեփանյան:
 ՊԵՏ – Ուղղակի ուզում եմ իմանալ:
 ՏՆՕՐԵՆ – Երբ որ կբերեմ, էն ժամանակ էլ կիմանաք:
 ՊԵՏ – Չէ, ասացի... Որ բերել էիր, ես նրա մասին եմ
 հարցնում: Որտեղի՞ց էիր առել:
 ՏՆՕՐԵՆ – Դե հիմա ի՞նչ կարևոր է, թե որտեղից էի առել:
 ՊԵՏ – Եթե հարցնում եմ, ուրեմն կարևոր է, էլի, ինչո՞ւ չես
 ուզում ասել:
 ՏՆՕՐԵՆ – Էդպիսի բաները որտեղի՞ց են առնում, ընկեր Ստե-
 փանյան, դուք չգիտեք, ի՞նչ եք հարցնում. կոմիսիոն խանութից,
 ուրիշ էլ որտեղից...
 ՊԵՏ – (Զգուշավոր) Դու էիր առել, չէ՞:
 ՏՆՕՐԵՆ – Դե հիմա ինչ կարևոր է՝ ես էի առել, թե ով էր առել:
 ՊԵՏ – Ինչ ուզում ես ասա, մենակ թե հանկարծ չասես՝ կինդ է
 առել:
 ՏՆՕՐԵՆ – Անցած-գնացած բան է, ախր ինչո՞ւ եք ուզում
 իմանալ, հետաքրքիր է:
 ՊԵՏ – Ուզում եմ, էլի, ուզում եմ, պետք է:
 ՏՆՕՐԵՆ – Իսկ եթե կինս առած լինի, ի՞նչ կլինի որ...
 ՊԵՏ – Բայց կինդ չի առել, չէ՞:
 ՏՆՕՐԵՆ – Չէ, այ մարդ, ես եմ առել: Իմ կինն ի՞նչ գործ ունի,
 որ էդ տեսակ բաներով զբաղվի, եղա՞վ:
 ՊԵՏ – Որտեղի՞ց էիր առել:
 ՏՆՕՐԵՆ – (Մեծահոգաբար, դժգոհ) Էէ՛, լավ, էլի, ընկեր Ստե-
 փանյան, հիմա ժամանա՞կն է: Նախաճաշի ժամ է, վեր կացեք, մի
 կողմի վրա գնանք: Նոր տեղ եմ հայտնաբերել, ես էլ դեռ չեմ գնացել,
 բայց տղերքը գովում են:
 ՊԵՏ – Նստի՛ր, բան եմ ասում:

ՏՆՕՐԵՆ – Խնդրեմ, մատեմ, բայց դե գնանք, էլի, տղերքը գովում են:

ՊԵՏ – Ասա որտեղի՞ց էիր առել, հետո կորոշենք...

ՏՆՕՐԵՆ – **(Շրթունքները ծփփացնելով)** Ուրեմն դրա՞ համար էիք կանչել: Կիևից եմ առել, պրծա՞նք... Դե վեր կացեք, գնանք, տղերքը գովում են:

ՊԵՏ – Ինչքա՞ն էիր տվել:

ՏՆՕՐԵՆ – Էէ՛հ, դա՞ էլ պիտի հիշեմ, ինչքա՞ն ժամանակ է անցել: Մենք մեղք չե՞նք, որ մեր հիշողությունը ամեն բանով ծանրաբեռնենք, վեր կացեք, ընկեր Ստեփանյան, ազնիվ խոսք, գովում են:

ՊԵՏ – Դրսում սպասողներ կան, պիտի ընդունեմ, հիմա չեմ կարող, օրվա վերջին զանգահարիր, գնանք: Միրով:

ՏՆՕՐԵՆ – Աչքիս վրա, բայց էս ի՞նչ պատմություն էր՝ չհասկացա:

ՊԵՏ – Մոտ մտիր, ասեմ: Լսիր, խոսքը մեր մեջ, ասում են՝ դա գողացված է եղել:

ՏՆՕՐԵՆ – **(Անակնկալի եկած)** Ի՞նչը...

ՊԵՏ – Սրբապատկերը: Դու ինձ ներիր, իհարկե:

ՏՆՕՐԵՆ – Ո՞վ է ասում:

ՊԵՏ – Միլիցիայից են եկել, ասել:

ՏՆՕՐԵՆ – Որտեղի՞ց է գողացված եղել:

ՊԵՏ – Ի՞նչ իմանամ...

ՏՆՕՐԵՆ – Բա որ գողացված է եղել, էդ ո՞նց են գողացված ապրանքը դրել կոմիսիոնում, ծախել... Ո՞վ է իր գլխից ձեռք շաշել, որ եղպիսի բան անի: **(Մտանելով)** Էէ՛, թող հեքիաթներ չպատմեն:

Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – Ներողություն: **(Վերցնում է լսափողը)**: Այո...

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – Ի՞նչ եղավ, Ստեփանյան, խոսեցի՞ր:

ՊԵՏ – **(Չգաստանալով)** Չանգահարեցի, տանը չէր, ընկեր Ենգիբարյան:

ՏԵՂԱԿԱԼ – **(Բազմանշանակ)** Պահո՞ւ, քո կինն է՞լ տանը չի:

ՊԵՏ – Շուկա էր գնացել: Կգա, նորից կզանգահարեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Արագացրու:

ՊԵՏ – Անպայման, հենց հիմա: **(Լսափողը դնելուց հետո)** Իբրոք Կիևի՞ց ես բերել:

ՏՆՕՐԵՆ – Է՛, հա... (Միջանկյալ) Մինիստրի տեղակալ Են-
զիրարյա՞նն էր... Հո սուտ չեմ ասում, մեզ կսագի՞ էս տարիքում... Ես
զարմանում եմ՝ էդ ո՞նց են եկել առանց իմանալու ասել՝ գողացված է
եղել: Ո՞ւմ են երեխայի տեղ դրել... (Հեզմալից) Գողացված է եղե՛լ...
Թող իրենցից բաներ չհորինեն: Անդորրագիրը պահել եմ:

ՊԵՏ – (Վեր թռչելով տեղից) Իսկապե՞ս...

ՏՆՕՐԵՆ – (Սնապարծ, վերկից) Բա իհարկե՛...

ՊԵՏ – (Դեռ ուշքի չեկած, հիացմունքով) Կեցցե՛ս... Ի՞նչ հե-
ռատես մարդ ես, Ոսկերչյա՛ն:

ՏՆՕՐԵՆ – Ես իմ մեռնելու օրը գիտեմ, ժամը չգիտեմ: (Խրա-
խուսված, ձեռքը տարուրերելով օդում) Հե՛յ-հե՛յ...

ՊԵՏ – Չես պատկերացնի, թե ինձ ինչքան ուրախացրիր: Հաս-
տատ պահե՛լ ես:

ՏՆՕՐԵՆ – (Ինքնագոհ) Բա ո՞նց... Իմ սովորությունն է, որ
մեծ գումար է լինում, ես միշտ պահում եմ: Իմ արև...

ՊԵՏ – (Խաղաղված) Փառք Աստծո՛ւ... Մեծ, բայց ինչքա՞ն
մեծ...

ՏՆՕՐԵՆ – Ճիշտն ասած, չեմ հիշում: Մեծ ասացի, հո էդքան
էլ մեծ գումար չի: Բայց ախր շատ հին սրբապատկեր է, է՛, եսիմ որ
դարի է:

ՊԵՏ – Մոտավորապե՞ս էլ չես հիշում:

ՏՆՕՐԵՆ – Չէ՛: Կնայեմ, կասեմ: Չնայած չեմ ասի: Նվեր է, հո
ուրիշ բան չի, որ գիմն ասեմ: Նվերի մեծն ու փոքրը հո փողով չեն
չափում, ընկեր Ստեփանյան:

ՊԵՏ – Համենայնդեպս... Եթե հարցը դրան է հասել, դա էլ
պիտի իմանանք: Հարցը հո թղթի կտորը չի:

ՏՆՕՐԵՆ – Էդ միլիցիայի աշխատողներին ուղարկեք ինձ մոտ,
ես դրանց պատասխանը կտամ, եթե փորձեն մի անգամ էլ գալ: Չեն
էլ ամաչում... Ինչ որ իրենց պետք է, թող ուրիշ տեղ ման գան, որ
գտնեն: Միսլ փողոց են ընկել: Իրենց անճարակությունն են ցույց
տալիս, պարզ չի՞: Եկել՝ ձեզ են նեղություն տվել: Նրանց փոխարեն
հիմա ես եմ անհարմար զգում ձեր առաջ:

ՊԵՏ – Այդպիսի բաներ մի ասա, ի սեր Աստծո՛ւ, դու ի՞նչ մեղք
ունես:

ՏՆՕՐԵՆ – Բոլոր դեպքերում...

ՊԵՏ – Բայց դու հիշում ես, չէ՞, դա երբ էր, որ բերեցիր:

ՏՆՕՐԵՆ – Ոնց չեմ հիշում, եղա՞վ: Գլխավոր ինժեներ էի
աշխատում, հետո ինձ առաջ քաշեցիք իմ տեղը:

ՊԵՏ – Արժանի չլինեիր՝ առաջ չեինք քաշի, պարզ չի՞: Ամեն մարդու խելքի բա՞ն է ձեռնարկություն ղեկավարելը:

ՏՆՕՐԵՆ – Ձեր թույլտվությամբ ես հիմա գնամ, մի երկու ժամից կգանգահարեմ, դուրս կգաք:

ՊԵՏ – Եթե անդորրագիրը բերեիր, լավ կլիներ:

ՏՆՕՐԵՆ – Բերեմ: Բայց արժի՞, որ դրա համար մեկ էլ տուն գնամ:

ՊԵՏ – Վարորդիդ ուղարկիր:

ՏՆՕՐԵՆ – Կուղարկեմ: Բայց ախր կինս չի իմանա... Իմ դրած բանի տեղը ես գիտեմ: Մի՛ անհանգստացեք, ընկեր Ստեփանյան, վայ... էսօր չեղավ, վաղը կբերեմ: Եկել, խելքից դուրս մի բան են ասել, գնացել: Մեկ էլ կգան թե չեն գա՝ հայտնի չի: Կամ գալիս են՝ թող գան, անդորրագիրը հո կա: Ես էլ ասացի ինչ է պատահել... Համենայնդեպս, ես ներողություն եմ խնդրում, որ եկել, անհանգստացրել են: **(Կտրուկ անցումով)** Գնանք, տեսնենք դա ինչ տեղ է: Տղերքը շատ են գովում: Եթե իսկապես կարգին տեղ եղավ, մյուս անգամ մինիստրին էլ կտանենք հետներս: **(Նորից անցումով)** Հանգիստ եղեք, ո՞նց թե... Մի քիչ շատ խոսեցինք էդ թեմայով, երկու ժամից զանգահարում եմ:

ՊԵՏ – Չանգահարիր:

ՏՆՕՐԵՆ – Առայժմ: **(Գնում է):**

Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – Լսում եմ:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – Հը՞, ի՞նչ եղավ, Ստեփանյան: Կինդ շուկայից չեկա՞վ:

ՊԵՏ – **(Բարձր տրամադրությամբ)** Եկավ, ընկեր Ենգիբարյան, հենց նոր խոսեցի, ես էլ ձեզ էի զանգահարում:

ՏԵՂԱԿԱԼ – Հետո՞...

ՊԵՏ – Կոմիսիոն խանութից է ասել, Կիևից, անդորրագիրը պահել է:

ՏԵՂԱԿԱԼ – Ինչ լավ բան ասացիր: Պահե՞լ է, իրոք:

ՊԵՏ – **(Խանդավառված)** Ազնիվ խոսք...

ՏԵՂԱԿԱԼ – Ապրես, խելացի կին ունես, Ստեփանյան, ո՞նց էլ պահել է...

ՊԵՏ – Բնավորություն է, ի՞նչ ասեմ... Ես էլ զարմացա: Ասում է, որ խոշոր գումարի գնումներ է անում, միշտ էլ պահում է:

ՏԵՂԱԿԱԼ – Ե՞րբ կբերես, որ մեկ էլ գան, կինս ցույց տա, թողնեն գնան:

ՊԵՏ – Վաղը կրերեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Չմոռանա:

ՊԵՏ – Չէ, ընկեր Ենգիբարյան, մատիս արդեն նշան եմ արել: Ուղղակի ձեզնից եմ անհարմար զգում, որ այդպիսի բան է պատահել:

ՏԵՂԱԿԱԼ – Անհարմար զգալու բան չկա: Պայմանավորվեցինք:

ՊԵՏ – Անպայման: (Գնում է լսափողը: Հեռախոսի զանգ)

Լսում եմ:

ԿՆՈՋ ՉԱՅՆԸ – Հիմա չե՞ս ասում՝ ինչ է եղել:

ՊԵՏ – Ոչ մի բան էլ չի եղել, կգամ, կասեմ:

ԿԻՆ – Հիմա ասա, հազար բան եմ մտածում իզուր տեղը:

ՊԵՏ – Հիմա չեմ կարող, վահ...

ԿԻՆ – Կարո՞ղ է Ենգիբարյանը գլխի է ընկել, որ Ոսկերչյանի բերածն ենք տարել:

ՊԵՏ – (Կանխելով) Մուս, սուս, սխալ բաներ չխոսես: Ես քեզ քանի՞ անգամ եմ ասել, որ հեռախոսով ամեն բան չեն խոսի: Ոչ մի Ոսկերչյան էլ չի բերել, անձամբ դու ես առել Կիևից, անդորրագիրն էլ պահել ես: Կրերեմ, ցույց կտամ:

ԿԻՆ – Չհասկացա:

ՊԵՏ – Կգամ, կասեմ, կհասկանաս:

Մինիստրի տեղակալի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՏԵՂԱԿԱԼ – (Վերցնում է լսափողը) Այո...

ՄԻՆԻՍՏՐԻ ՉԱՅՆԸ – (Հանդիմանական) Ենգիբարյան, ձայնը չի լսվում...

ՏԵՂԱԿԱԼ – Հենց նոր խոսեցի կնոջս հետ: Լսափողը դրեցի, որ գամ ձեզ մոտ, դուք զանգահարեցիք, ընկեր Մուրադյան: Կոմիսիոն խանութից է առել, Կիևից, անդորրագիրը պահել է:

ՄԻՆԻՍՏՐ – Ավելի լավ:

ՏԵՂԱԿԱԼ – Բայց ինձ հետաքրքրում է, թե այդ միլիցիայի աշխատողը ով է եղել, որ այդքան համարձակություն է ունեցել մինիստրի տուն մտնի: Ո՞ր հասանք...

ՄԻՆԻՍՏՐ – Անդորրագիրը պահիր:

ՏԵՂԱԿԱԼ – Անխոս: Տեղը եկավ՝ աչքն եմ խոթելու: Չնայած չեմ կարծում, որ նորից գա:

ՄԻՆԻՍՏՐ – Բարի:

Մինիստրի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՄԻՆԻՍՏՐ – (Լսափողի մեջ) Լսում եմ, ասեք...

ԿՆՈՋ ՉԱՅՆԸ – Ես եմ: Էլի եկավ:

ՄԻՆԻՍՏՐ – Ո՞վ եկավ: Պարզ ասա, արագ...

ԿԻՆ – Միլիցիայի աշխատողը՝ մի լուսանկարչի հետ: Լուսանկարեցին, ներողություն խնդրեցին, գնացին:

ՄԻՆԻՍՏՐ – Ես քեզ ի՞նչ ասացի... Չասացի՞ դուռը չբացես:

ԿԻՆ – Ասաց՝ էլի ես եմ, ո՞նց չբացեի: Ասաց՝ չենք ուզում սրբապատկերը տանել, լուսանկարում ենք, որպեսզի լուսանկարի միջոցով իմանանք՝ սա է, թե սա չի:

ՄԻՆԻՍՏՐ – (Մաստկացող ձայնով) Ինչ որ իրենց պետք է, թող գնան ուրիշ տեղ որոնեն անշնորհքները: Կիևից է գնված, անդորրագիրը պահված է, թող իզուր տեղը համը չհանեն: Մյուս անգամ եթե զան, չբացես:

ԿԻՆ – (Խառնված, մտահոգ) Հիմա ես դրա մասին չեմ մտածում, մի՛ դիր լսափողը, մի՛ բռայե լսիր, ես ուրիշ բանի մասին եմ մտածում: Եթե դա չենք տանելու Ահարոնյանի ծննդին, բա ի՞նչ ենք տանելու, դե ասա:

ՄԻՆԻՍՏՐ – Կգամ, կասեմ, հիմա դրա ժամանակը չի: Դա Կտանենք: (Դնում է լսափողը):

Գործարանի տնօրենի առանձնասենյակը: Մտնում է

ԳԼԽԱՎՈՐ ԻՆՇԵՆԵՐԸ:

ԳԼԽԱՎՈՐ ԻՆՇԵՆԵՐ – Ինձ կանչե՞լ եք, ընկե՛ր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Այո, կանչել եմ: Մինիստրությունից եմ գալիս: Նըստիր: Ո՞նց են գործերը:

ԻՆՇԵՆԵՐ – Գիտեք, ի՞նչ ասեմ... Հույս չկա, վերևից էլ սեղմում են՝ պատրաստի արտադրանք են ուզում: Գլխավոր ինժեները զլուխը ո՞ր քարին տա: Մա եղավ գո՞րծ...

ՏՆՕՐԵՆ – Ինչ գնով էլ ուզում է լինի՝ կատարողականի ճեղքվածքը պիտի վերացվի: Դա՛ հետո... Ուրիշ բանի համար եմ կանչել: Բաբլոյան, հիշո՞ւմ ես, իմ ծննդյան օրը դու մի սրբապատկեր էիր քերել, դա որտեղի՞ց էիր առել:

ԻՆՇԵՆԵՐ – (Շփոթված) Խանութից... Ինչի՞ համար եք հարցնում, ընկե՛ր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Ո՞ր խանութից:

ԻՆՇԵՆԵՐ – (Մտածկոտ) Որ... Էն խանութից, էլի... Խաչմերուկի կոմիսիոն խանութից:

ՏՆՕՐԵՆ – Ո՞ր խաչմերուկի:

ԻՆՇԵՆԵՐ – Մետրոյի կայարանի մոտի:

ՏՆՕՐԵՆ – Կայարանի անունն ասա, որ իմանամ:

ԻՆԺԵՆԵՐ – Դժվար թե հիմա էլ լինի, հավատալս չի գալիս: Պիտի պատահական մտնես՝ հանդիպի: Թե չէ որ ասեմ միշտ էնտեղ դրված լինում է, երբ ուզես՝ կգնաս կառնես, սուտ կլինի: Նոր էին բերել, ջրողեցի էլ ձևակերպեն, տեղնուտեղը ձեռքս դրի վրան, վերցրի:

ՏՆՕՐԵՆ – Ինչքանով:

ԻՆԺԵՆԵՐ – Հիմա դա կարևոր է, ընկեր Ոսկերչյան: Նվերի զինը չեն հարցնում:

ՏՆՕՐԵՆ – Չէ, ես ուզում եմ իմանալ իմ հետաքրքրության համար:

ԻՆԺԵՆԵՐ – Լավ, էլի, ընկեր Ոսկերչյան, վիրավորվում եմ, այ...

ՏՆՕՐԵՆ – Կարո՞ղ է չես հիշում:

ԻՆԺԵՆԵՐ – Հիշում եմ, ինչն՞ի չեմ հիշում, ինչն՞ի պիտի չհիշեմ:

ՏՆՕՐԵՆ – Դե լավ, ասա, ընկերական եմ հարցնում:

ԻՆԺԵՆԵՐ – Ուզո՞ւմ եք հետաքրքրվեմ, եթե ստացած լինեն, ես ձեզ կասեմ: Կամ ուզո՞ւմ եք, միասին գնանք նայենք: Վարիչի հեռախոսի համարը ինձ մոտ պիտի լինի: Իմանամ, ձեզ ասեմ: (Գնում է դեպի դուռը):

ՏՆՕՐԵՆ – Սպասիր, ո՞ր ես գնում, նրա համարն ինձ պետք չի:

ԻՆԺԵՆԵՐ – Գնամ զանգահարեմ, գամ ձեզ ասեմ:

ՏՆՕՐԵՆ – Պետք չի, ասում եմ, սպասիր: Մեկը եկել էր տուն, մոտիկ մարդ էր, տեսավ, դուր եկավ իրեն, զինն էր ուզում իմանալ: Ասացի՝ ճիշտն ասած, նվեր են բերել իմ ծննդյան օրը, ես էլ չզիտեմ, կհարցնեմ, կիմանամ:

ԻՆԺԵՆԵՐ – (Քմծիծաղով) Եթե այդքան շատ է դուր եկել, իմ հեռախոսի համարը տվեք, թող ինձ զանգահարի, ես կասեմ:

ՏՆՕՐԵՆ – Եղա՞վ: Խա՞ղ ենք անում, այ տղա, երեխա հո չես: Ասա ինչքանով ես առել, ասեմ մարդուն: Ինչն՞ի ես իզուր տեղը բարդացնում: Ինչ է, ես չզիտե՞մ, որ թանկ արժի:

ԻՆԺԵՆԵՐ – Ինձ անհարմար վիճակի մեջ եք դնում, ընկեր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Դու ես ինձ անհարմար վիճակի մեջ դնում էն մարդու առաջ:

ԻՆԺԵՆԵՐ – Ո՞վ է, ի՞նչ մարդ է, չեք ուզում՝ ինքն ինձ զանգահարի, հեռախոսի համարը տվեք, ես զանգահարեմ:

ՏՆՕՐԵՆ – Ախր ինչո՞ւ դու զանգահարես, որ ես կասեմ: Դու նրան շատ ե՞ս ճանաչում, որ ասես:

ԻՆԺԵՆԵՐ – **(Խորամանկ ժպիտով)** Խո՞սք եք քաշում, ընկեր Ոսկերչյան: **(Բազմանշանակ)** Կարծում եք, թե չգիտե՞մ: Ինչո՞ւ մինչև հիմա չեիք հարցնում, հանկարծ հիմա հարցրիք:

ՏՆՕՐԵՆ – Մինչև հիմա եղ մարդը չէր եկել իմ տուն, հիմա է եկել, հիմա եմ հարցնում, իրավունք չունե՞մ:

ԻՆԺԵՆԵՐ – Ախր նվերի գինը ո՞վ է ասում, որ ես ասեմ: Ուրեմն մինչև հիմա դուք ինձ չե՞ք ճանաչել, ընկեր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Եթե չճանաչեի, քեզ ժամանակին գլխավոր ինժեներ չեի նշանակի, հասկացա՞ր:

ԻՆԺԵՆԵՐ – **(Խոցված մինչև հոգու խորքը)** Դիմում կտամ, կզնամ, ձեզնից հարազատ ես ուրիշ մարդ ունե՞մ, որ դուք ինձ եղպիսի հարց եք տալիս: Ուրեմն մինչև հիմա չե՞ք զգացել, որ առանց ձեզ ես գոյություն չունեմ: Եթե դուք չլինեիք, ես ո՞ւմ եմ պետք: Ինձ պաշտոն պետք չի, ի՞նչ գլխավոր ինժեներ... Ուզում եք՝ որպես ցրիչ պահեք, մեռակ թե ձեզ հետ աշխատեմ:

ՏՆՕՐԵՆ – **(Նախահարձակ է լինում՝ քարճրացնելով ձայնը)** Մեռակ դու ես վրա-վրա խոսում, ինձ չես լսում, Բաբլոյան, լսիր՝ ես ինչ եմ ասում:

ԻՆԺԵՆԵՐ – **(Խռոված)** Չէ, եթե դուք ինձ եղպես եք հասկացել, ես կթողնեմ կզնամ:

ՏՆՕՐԵՆ – **(Բռնկվելով)** Դերասանություն ես անում, այ տղա:

ԻՆԺԵՆԵՐ – Ո՞վ, ես եմ դերասանություն անում, հա՞... Ո՞ւմ հանդես: Չե՞ր հանդես... Կարծում եք չգիտե՞մ, թե այդ հարցն ինչու եք հիմա ինձ տալիս: Որովհետև փոխել եք ձեր վերաբերմունքն իմ նկատմամբ:

ՏՆՕՐԵՆ – Եղա՞վ:

ԻՆԺԵՆԵՐ – Դե որ չեղավ, էն ժամանակ հարցնեիք, ինչո՞ւ եք հիմա հարցնում:

ՏՆՕՐԵՆ – Հարցրել եմ՝ հարցնում եմ: Զո կարծիքով այդ մարդուն ի՞նչ պատասխանեի: Կամ եթե դու լինեիր իմ տեղը, ի՞նչ պիտի ասեիր:

ԻՆԺԵՆԵՐ – Ասեիք՝ նվիրել եմ, չգիտեմ, վերջացավ գնաց:

ՏՆՕՐԵՆ – Եթե մարդը խնդրում է, որ իմանա, դրան ի՞նչ կասես:

ԻՆՇԵՆՇԻՐ – (Բորբորվելով) Ուրեմն էդ մարդը չգիտի՞, որ
նվերի գինը չեն հարցնում: Ախր նա ինչն՞ի պիտի ձեզ էդպիսի բան
ասեր:

ՏՆՕՐԵՆ – Դե հիմա որ ասել է, ասեմ՝ չի՞ ասել:

ԻՆՇԵՆՇԻՐ – Ասեճք թե նա հարցրեց, դուք ինչն՞ի եք ինձ հարց-
նում, ընկեր Ոսկերչյան: **(Ընդվզելով)** Մինչև հիմա ինձ չեք ճանաչել,
նո՞ր պիտի ճանաչեք: **(Թափահարելով ձեռքը)** Խառնում են մեզ, չեն
թողնում աշխատենք, չեն թողնում:

ՏՆՕՐԵՆ – Մխալ բաներ չխոսես:

ԻՆՇԵՆՇԻՐ – Ես սովո՞ր եմ, որ էսպիսի պայմաններում աշ-
խատեմ:

ՏՆՕՐԵՆ – (Մաստող) Չխոսես, ասում եմ:

ԻՆՇԵՆՇԻՐ – Եթե ինձ չեք վստահում, ո՞ւմ պիտի վստահեք:
Բա դուք էդ մա՞րդն եք, որ ինձ էդպիսի հարց տաք: Դուք ինձնից մոտ
մա՞րդ ունեք:

ՏՆՕՐԵՆ – (Համբերությունը հատած) Ինչ է, հիմա ուզում ես
ներողություն խնդրե՞մ: Չես ասում՝ մի ասա, էլ ինչն՞ի ես երկարաց-
նում: Մի բան ասացի՞նք՝ կրակն ընկանք, տո:

ԻՆՇԵՆՇԻՐ – (Լարված): Չէ, ես չէի սպասի: Այսինքն՝ զգում էի
որ...

ՏՆՕՐԵՆ – (Պոռկալով) Ի՞նչ էիր զգում, է՛, ի՞նչ էիր զգում...

ԻՆՇԵՆՇԻՐ – Ձգում էի, էլի, զգում էի...

ՏՆՕՐԵՆ – (Ոխտվ, աչքերը ոլորելով վրան) Լսիր, Բարլոյան,
քեզնից բաներ մի՛ հորինիր: Մոտ մարդ է, խոստացել եմ ասել: Չեմ
էլ ասել, որ իմ գլխավոր ինժեներն է ծննդիս նվեր բերել: Հարցրե՞ց՝
բերողը մո՞տ մարդ է, ասացի՛ շատ: Ասաց՝ որ եթե այդքան մոտ մարդ
է, գուցե չվիրավորվի, եթե հարցնես: Հիմա դու ինձ քեզնից հեռաց-
նում ես, այ տղա:

ԻՆՇԵՆՇԻՐ – Ե՞ս եմ հեռացնում, թե՞ դուք, ընկեր Ոսկերչյան:
Եթե դուք ձեզ ինձնից հեռացնեք էլ, ես ձեզնից կհեռանամ: Հեռա-
նամ՝ ո՞ւր գնամ... Ես ինձնից հեռանամ՝ ձեզնից ո՞նց հեռանամ:

ՏՆՕՐԵՆ – Դե հիմա դու պատկերացրու, թե ես ինչքան եմ քեզ
սրտիս մոտ ընդունում, որ հարցնում եմ՝ քանիտով ես առել: Եթե
ուրիշը բերած լիներ՝ ես կհարցնեի՞: Էն էլ ո՞վ՝ ե՞ս հարցնեմ... Ո՞ւմ
հարցնեմ... Եղա՞վ:

ԻՆՇԵՆՇԻՐ – Շնորհակալ եմ, ընկեր Ոսկերչյան: Ես դեռ ինձ
չեմ գտնում, գիտե՞ք: Ճնշումս մի քիչ բարձրացավ:

ՏՆՕՐԵՆ – Բա որ դու էդքան նրբազգաց մարդ ես եղել, ինչո՞ւ չես ասել, որ իմանանք:

ԻՆԺԵՆԵՐ – Ես նրբազգաց չեմ, նայած ում նկատմամբ...

ՏՆՕՐԵՆ – Երևակայիր՝ մինչև հիմա ես չեմ իմացել, որ դու էդքան փխրուն սիրտ ունես: **(Նախատինքով)** Միրտո՞ւ մի՛ բռնիր, լավ... Ինձ թվում է՝ մենք արդեն իրար հասկացանք: Ընդունում եմ իմ սխալը. ես հյուրիս չպիտի ասեի՝ կհարցնեն կիմանան: Բայց քանի որ արդեն խոստացել եմ՝ երկրորդ սխալը կլինի իմ կողմից, եթե չիմանամ:

ԻՆԺԵՆԵՐ – Չեմ ասի, ընկեր Ոսկերչյան, չեմ ասի, դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել: Ես իմ առած նվերի գինն ասե՞մ, էն էլ ո՞ւմ՝ ձե՞զ:

ՏՆՕՐԵՆ – Չեղավ, ուրեմն դու էն մարդու առաջ ես ինձ անհարմար վիճակի մեջ դնում: Բա ես որևէ մեկին՝ ով ուզում է լինի, մի բան խոստանամ ու չանե՞մ:

ԻՆԺԵՆԵՐ – Ո՞նց ասեմ, է՛, ո՞նց ասեմ... Եթե ասեմ, ուրեմն ես էլ ես չպիտի լինեմ: Էլի վիրավորեիք, բայց այդքան խորը չվիրավորեիք: Ոնց էի ձեզ հավատում, այսինքն հիմա էլ եմ հավատում, բայց կարծել եմ, թե դուք էլ ինձ եք հավատում: Արժե՞ր, որ մեր մեջ էսպիսի խոսակցություն լիներ: Շատ եմ վիրավորված, շատ... **(Ընկճված)** Կարելի՞ է ես գնամ:

ՏՆՕՐԵՆ – Ո՞ր գնաս, ա՛յ ընկեր: Ասա, իմանամ, նոր գնա: Մարդուն խոստացել եմ, չեմ կարող չասել, հասկացիր: Վերջապես մարդ ես, իմ դրության մեջ էլ մտիր: Տեսար, որ իմ սխալն ընդունեցի, էլ ի՞նչ անեմ, որ հավատաս, վայ... Արագացրու: Ինձ մի նիստրություն եմ կանչել, ես հիմա պիտի գնամ: **(Սպասողական)** Բարևոյան... Հը՞...

ԻՆԺԵՆԵՐ – **(Հոգուն հասած)** Զանի տարի է անցել, նո՞ր եք հարցնում, ընկեր Ոսկերչյան: Ես գիտեմ, թե ով է ձեզ տրամադրել իմ դեմ: Չէ, ես էլ չեմ աշխատի, չեմ աշխատի, դիմում կտամ, կգնամ: **(Գնում է դեպի դուռը):**

ՏՆՕՐԵՆ – **(Ետևից, խառնված)** Բարևոյան... Ո՞ր ես գնում, մի բոպե սպասիր: Հե՛տ արի, ասում եմ... Բարևոյան...

Ընդմիջում, որ կարող է լինել կամ չլինել:

Գլխավոր ինժեների առանձնասենյակը: Հեռախոսի զանգ: Լսափողը չի վերցնում: Մտնում է ԱՐՏԱԳՐԱՄԱՄԻ ՊԵՏԸ:

ԱՐՏԱԳՐԱՄԱՄԻ ՊԵՏ – **(Ուշադրություն հրավիրելով)** Հեռախոսը, ընկեր Բարևոյան...

ԻՆՏԵՆՇԻՎ – Գիտեն՞ք՞, դրա համար չեմ վերցնում: (Հնչում է զանգը զանգի ետևից) Դուռը ներսից բանալիով փակիր: (Արտադրամասի պետը փակում է: Չանգերը դադարում են): Ո՞նց ես:

ՊԵՏ – Դուք ինձնից լավ գիտեք. հումք չկա, պարզ չի՞ ոնց պիտի լինենք:

ԻՆՏԵՆՇԻՎ – (Հանկարծակի մտաբերելով) Հա, իմիջիայլոց, լավ էր, որ հիշեցի: Կինս խնդրեց, ասաց՝ Գագոյից հարցրու, նա կիմանա: Մի անգամ մի սրբապատկեր էիր բերել իմ ծննդյան օրը, որտեղի՞ց էիր առել, կարո՞ղ է հիշես:

ՊԵՏ – Երևի կոմիսիոն խանութներում են ծախում, ինչ ասեմ: Չէի առել, ես ունեի, ընկեր Բարլոյան: Աչքս բացել՝ դա մեր տանն են տեսել: Տատս, ողորմի իրեն, ամեն առավոտ-իրիկուն կանգնում էր դրա առաջ ու մրմնջալով աղոթում: (Վերարտադրում է տատի աղոթքը՝ «Հայր մեր») Գիտե՞ք՝ քանի հարյուր տարվա սրբապատկեր է: Մեր տան քալիսմանն էր:

ԻՆՏԵՆՇԻՎ – Թալիսմանը բա կնվիրե՞ն, է՛է՛հ, լավ չես արել: Իմանայի՛ չէի վերցնի:

ՊԵՏ – Ի՞նչ տարբերություն՞ մեր տանը, թե ձեր տանը: Տատս էլ որ չկա՝ ինչի՞ համար մնա, ո՞ւմ համար մնա: Շատ էի սիրում տատիս, ողորմի իրեն, հազար ողորմի: Ասացի՛ մի մնայուն բան տանեմ ախպորս ծննդին, որ հիշի:

ԻՆՏԵՆՇԻՎ – Ինչքան հիշում եմ՝ էլի արտադրամասի պետ էիր, եթե չեմ սխալվում:

ՊԵՏ – Չէ, դեռ իմ հին տեղում էի, դուք էիք արտադրամասի պետ: Չեզ գլխավոր ինժեներ նշանակեցին, դուք էլ իմ թեկնածությունը տվիք, ինձ արտադրամասի պետ նշանակեցին:

ԻՆՏԵՆՇԻՎ – Քեզնից հարմար թեկնածու չկար, բա էլ ո՞ւմ թեկնածությունն առաջարկեի: (Հեռախոսի զանգ): Ոսկերչյանն է... (Վերցնում է լսափողը): Ես եմ...

ՏՆՕՐԵՆԻ ՉԱՅՆԸ – Գիտեմ, որ դու ես: Բարլոյան, արի մի րոպեով:

ԻՆՏԵՆՇԻՎ – Գալիս եմ: (Լսափողը դնելուց հետո, արտադրամասի պետին) Կանչեց:

ՊԵՏ – Եթե պետք է, ես հետաքրքրվեմ, իմանամ որտեղ են ծախում:

ԻՆՏԵՆՇԻՎ – Դու մի րոպե նստիր, օրվա թերթերն աչքի անցկացրու, ես հիմա գալիս եմ: (Գնում է):

ՊԵՏ – (Նրա զնայուց հետո, ձեռքն առնելով քերթերն ու ամսագրերը) Ի՞նչ կա, որ ինչ աչքի անցկացնեմ:

Տնօրենի առանձնասենյակը:

ԻՆՇԵՆՇԵՐ – (Մտնելով) Կարելի՞ է:

ՏՆՕՐԵՆ – Արի, նստիր: Երեխա՞ ես, այ տղա. խռովում, թողնում գնում ես: Չանգահարում եմ՝ չես էլ վերցնում լսափողը: Եղա՞՞վ:

ԻՆՇԵՆՇԵՐ – Ե՞րբ... (Տարակուսանքով) Մենյակում չեմ եղել:

ՏՆՕՐԵՆ – Ես չեի կարծում, որ էդ հասարակ հարցը պատմություն կդարձնեիր: Էնպիսի մարդ է խնդրել, որ ուզում եմ իմանալ: Առել ես՝ ասա որտեղից ես առել. դրա մեջ ի՞նչ վիրավորական բան կա, որ թողնում, գնում ես:

ԻՆՇԵՆՇԵՐ – Դուք ինձ ստիպում եք, որ ձեր առաջ սո՞ւտ խոսեմ: Չեմ առել, ընկե՛ր Ոսկերչյան, չեմ առել, տանն ունեցել, բերել եմ: Չէի ուզում ասել, ստիպում եք՝ ասում եմ:

ՏՆՕՐԵՆ – (Չարմացած) Իսկապե՞ս: (Ինքն իրեն, մտահոգ): Լավ չեղավ: Հարցերը զնայով բարդանում են: Հիմա ես ի՞նչ պիտի ասեմ: **(Ինժեներին) Այդտեղ ի՞նչ մի վատ բան կար, որ չէիր ուզում ասել: Եղա՞՞վ:**

ԻՆՇԵՆՇԵՐ – Դե չէի ուզում, նրբություններ կան, էլի, ընկե՛ր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Տանը որտեղի՞ց էր հայտնվել: Մի տեղից բերել եմ, չէ՞:

ԻՆՇԵՆՇԵՐ – Չգիտեմ, մանկությունից տեսել եմ մեր պատից կախած: Ով է բերել, որտեղից է բերել, ինձ հայտնի չի: Մեռակ հիշում եմ, որ ողորմածիկ տատս առավոտից իրիկուն կանգնում էր դրա առաջ ու մրմնջալով աղոթք անում: **(Վերարտադրում է Տերունական աղոթքը): Մեր տան թալիսմանն էր:**

ՏՆՕՐԵՆ – Չեղավ, չեղավ, լավ չես արել, որ բերել ես:

ԻՆՇԵՆՇԵՐ – Այ, ես գիտեի, որ դուք դա կասեք: Դրա համար էլ չէի ուզում ասել: Ով գիտի, քանի տարի մեր տանն է եղել, հիմա էլ թող ձեր տան թալիսմանը լինի, ընկե՛ր Ոսկերչյան: Հո կորած տեղ չի:

ՏՆՕՐԵՆ – Բարլոյան, էնպիսի բան ասացիր, որ հիմա ախր չեմ ուզում քեզ հիասթափեցնել:

ԻՆՇԵՆՇԵՐ – (Միանգամից, անհանգստացած) Ի՞նչ է եղել:

ՏՆՕՐԵՆ – Միլիցիայից եկել, ասել են՝ դա գողացված է եղել:

ԻՆՇԵՆՇԵՐ – (Յնջվելով) Ո՞նց թե... Կարո՞ղ է դա իմ բերածը չի:

ՏՆՕՐԵՆ – Զո բերածն է: Եղա՞վ: Հո իմ ծննդին հարյուր սրբապատկեր չեն բերել:

ԻՆԺԵՆԵՐ – (Գլուխը բռնելով) Էդ ի՞նչ ասացիք, ընկե՛ր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Դե լավ, ի՞նչ ես քեզ կորցրել: Եղա՞վ: Գուցե թյուրիմացություն է, համբերի՛ր, իմանանք, հետո...

ԻՆԺԵՆԵՐ – (Պայթելով) Ի՞նչն է գողացված, էն սրբապատկե՞րը, որ տատս առաջը կանգնած աղոթել է: Էդ ի՞նչ ասացիք, ընկե՛ր Ոսկերչյան:

ՏՆՕՐԵՆ – Ինչ-որ ինձ ասել են, դա եմ ասում:

ԻՆԺԵՆԵՐ – (Մինչև վերջ խոցված) Չէ, չէ, դուք էդ բանը ինձ չպիտի ասեիք: Ինչ էլ լինե՛ր, չպիտի ասեիք:

ՏՆՕՐԵՆ – Տեսար՝ չէի ասում, բայց վաղ թե ուշ պիտի ասեի՞, թե չէ: Ավելի լավ, իմացա, ես էլ հանգստացա: Մարդ ես, կարող էի՛ր և չիմանալ գողացված է՝ առնել:

ԻՆԺԵՆԵՐ – Ուրեմն ձեր մտքով կարող էր եղպիսի բան անցնե՞լ: Ես չգիտե՞մ ինչը ուր եմ տանում:

ՏՆՕՐԵՆ – Եղա՞վ: Մեծ աշխարհ է, ինչ կա որ, ամեն ինչ էլ կարող է պատահել: Ինչո՞ւ ես դու ուրիշ բան մտածում: Ասացի՛ր՝ իմացանք, վերջ: Ուշացա, ես գնում եմ միմիստություն, ինչ եղավ-չեղավ՝ մոռացի՛ր: Մի ընկճվիր, այ տղա: Գլուխդ բարձր... Եղա՞վ:

ԻՆԺԵՆԵՐ – Հե՞տ եք գալու:

ՏՆՕՐԵՆ – Չէ, երևի էլ չհասցնեն: Ցե... (Դուրս է գնում, ետևից՝ գլխավոր ինժեները):

Գլխավոր ինժեների առանձնասենյակը: Արտադրամասի պետը օրվա թերթերն ու ամսագրերն է շուռումուռ տալիս: Ամսագրերից մեկում ինչ-որ նկարի է հանդիպում՝ բռնկվում ծիծաղով: Մտնում է գլխավոր ինժեները:

ԻՆԺԵՆԵՐ – Հո չուշացա:

ՊԵՏ – (Մի կերպ զսպելով ծիծաղը) Չէ: (Նորից է բռնկվում ծիծաղով՝ հայացքը չկտրելով նկարից):

ԻՆԺԵՆԵՐ – (Կանգնած ակնապիշ նայում է, ժպտալով) Ի՞նչ է եղել:

ՊԵՏ – (Ցույց տալով նկարը, խեղդվելով ծիծաղից) Մրա... (Ուզում է խոսել, չի կարողանում զսպել իրեն):

ԻՆԺԵՆԵՐ – (Վարակվելով նրանից) Ասա՛ ես էլ իմանամ:

ՊԵՏ – Մրա... (Չի հասցնում մինչև վերջ ավարտել խոսքը):

ԻՆՇԵՆՇԵՐ – (Ծիծաղի միջից) Դրա՛ ի՞նչ... (Ծիծաղում է քահ-
քահ):

ՊԵՏ – Սրա... (Չի կարողանում տիրապետել իրեն):

ԻՆՇԵՆՇԵՐ – Դրա՛ ի՞նչ... (Չհաղթահարելով իրեն՝ նորից
միանում է նրան):

ՊԵՏ – (Մի կերպ տիրապետելով իրեն, ցույց տալով նկարը)
Սրա վրա եմ ծիծաղում:

ԻՆՇԵՆՇԵՐ – (Պայթում է ծիծաղից) Դե լավ, հանգստացիր:

Ծիծաղում են մինչև արցունքոտ վեղը:

ՊԵՏ – (Սրբելով արցունքները) Վայ, արա... Մեջքս ցավեց:

ԻՆՇԵՆՇԵՐ – Իմն էլ: Դե լավ, վերջացրու, բան եմ ասում:

(Շարունակում է ծիծաղել):

ՊԵՏ – Ներողություն, ընկե՛ր Բաբլոյան: Ասեք:

ԻՆՇԵՆՇԵՐ – Գազո, Ոսկերչյանը կանչեց, չհասցրի ասել:

(Ծիծաղի միջից) Հիմա պիտի ասեմ:

ՊԵՏ – Ասեք:

Հռիռում են՝ վերստին բռնկված անզուսպ ծիծաղով:

ԻՆՇԵՆՇԵՐ – Լրջացիր, այ տղա, բան եմ ասում:

ՊԵՏ – Ասում եմ ասեք:

ԻՆՇԵՆՇԵՐ – Թողնո՞ւմ ես, որ ասեմ: Միլիցիայից եկել, կնոջս
են ասել... Զո բերած սրբապատկերը, որ տատդ առաջը կանգնած
աղոթել է, բանից պարզվում է, գողացված է եղել:

ՊԵՏ – (Ապշանքով) Ի՛...

ԻՆՇԵՆՇԵՐ – Ազնիվ խոսք:

ՊԵՏ – Օրորոցում աչքս բացել, դա մեր պատին եմ տեսել.
իրենց ձե՞ն են առնում:

ԻՆՇԵՆՇԵՐ – Ինչ իմանամ, գուցե թյուրիմացություն է:

ՊԵՏ – Ոչ թե գուցե, այլ հաստատ:

ԻՆՇԵՆՇԵՐ – Դրա համար հարցրի, թե որտեղից ես առել:

ՊԵՏ – Առած լինեի՛ ուրիշ բան, կասեի՛ կարող է գողացված
ապրանք են ծախել: (Միամտորեն) Կասկածանքո՞վ են ասել, թե՞...

ԻՆՇԵՆՇԵՐ – Չգիտեմ, ես իրենց չեմ տեսել:

ՊԵՏ – Թող ինձ կանչեն, տեսնեմ ով է եղպիսի բան ասել: Չեմ
կանչի՛ ես կզնամ:

ԻՆՇԵՆՇԵՐ – Համբերիր, եթե մի անգամ էլ գան, հետո...

ՊԵՏ – Գլխներից ձե՞ն են քաշել: Դատի կտամ, պատիվ կպա-
հանջեմ:

ԻՆՇԵՆՇԻ – Ես էլ զարմացա: Ասացի՝ Գագոն է բերել, ո՞նց կարող է եղպիսի բան պատահել:

ՊԵՏ – Մարդկանց հեղինակության հետ են խաղո՞ւմ: Ինչ որ չէինք տեսել, դա էլ տեսանք: Ողորմածիկ տատս ողջ լինեք, կզնար, դրանց աչքերը կհաներ: Նորությո՞ւն է, դրանց համար ոչ մի սրբություն գոյություն չունի: Հետաքրքիր է, ո՞վ է եղել: Հեռախոսի համարը տվեք, ես գիտեմ, թե ինչ կասեմ: Դրանց տեսեք... Բոլոր խաղերը խաղացին, դա էր պակաս մնացել:

ԻՆՇԵՆՇԻ – Գագո՛, ի՞նչ անեի, չասեի՞: Գիտես, զգայուն մարդ եմ, ինձ համար էլ դժվար էր:

ՊԵՏ – Լավ արեցիք՝ ասացիք, ընկե՛ր Բարլոյան: **(Չհանգստանալով)** Իմացեք, էլի, իմացեք հեռախոսի համարը, ես խնդրում եմ: **(Աչքի անցկացնելով ժամացույցը)** Չորսն է: Մեքենաները կզան, պիտի դատարկեն, թե չէ մի վայրկյան չէի մնա:

ԻՆՇԵՆՇԻ – Դու գնա, գործի մեջ ես, եթե նորից զան, ես քեզ իմաց կտամ: **(Համար է հավաքում):**

ՊԵՏ – Անպայման: Ի՛... **(Գնում է):**

Արտադրամասի պետի առանձնասենյակը:

ՊԵՏ – **(Համար հավաքելուց հետո)** Այլո՛ւ...

ԿԱՆԱՑԻ ՉԱՅՆ – **(Մեքենանքով)** Այո, լսում եմ:

ՊԵՏ – Լավ ես անում, որ լսում ես: Բարև ձեզ: Մենա՞կ ես, թե՞ սխալ եմ զանգահարել:

ԿԻՆ – **(Աշխուժանալով)** Չէ, չէ, ճիշտ ես զանգահարել: Գագ...

ՊԵՏ – Հա, ես եմ:

ԿԻՆ – Լավ էր, որ վերջապես հիշեցիք: Ո՞ր ես կորել:

ՊԵՏ – Կզամ, կասեմ:

ԿԻՆ – Ո՞նց ես...

ՊԵՏ – **(Հեզմալից)** Չտեսնված: Լսիր, ինչ եմ ասում. դու հիշո՞ւմ ես, որ մի անգամ ծննդի էի գնում քո մոտից: Չեր պատից կախված մի բան կար, ուզեցի, հանեցիք տվեցիք, տարա:

ԿԻՆ – **(Մրտնեղած, կանխելով)** Լավ, էլի, դրա մասին մի՛ խոսիր:

ՊԵՏ – Ի՞նչ է եղել որ...

ԿԻՆ – Մինչև հիմա քեզ չեմ ասել, հիմա պիտի ասեմ. քո գնալուց հետո ինքը եկավ... Ինչ լավ էր՝ դու շուտ էիր դուրս եկել... Ասե՞մ, թե՞ չասեմ:

ՊԵՏ – Ասա: Ի՛...

ԿԻՆ – Նայեց, տեսա՞վ չկա պատին: Գիտե՞ս ինչ աղմուկ քարձրացրեց: Մինչև հիմա էլ մեկ-մեկ հիշում է: Հենց հիշում է՝ գլխի ցավը բռնում է: Քիչ էր մնում բաժանվեի՞նք: Ասաց՝ էդ ո՞նց պատահեց, է՛, որ մտան տուն, մենակ դա տարան: Ոսկեղենը չտարան, հարյուրանոցները դարակում թափած, չտարան, մենակ դա տարան: Երդվեցի, ասացի՝ չգիտեմ, ես եկա, բանալիով բացեցի դուռը, մտա ներս, տեսա չկա պատին: Ասացի՝ երևի շտապել են, չեն հասցրել ուրիշ բան տանել: Ասաց՝ բա էդ ո՞նց են, է՛, առանց դուռը ջարդելու մտել ներս: Մերոնք ասացին՝ երևի բանալի են ունեցել, հանգիստ բացել են, մտել: Դուռն էլ փոխեցինք, երկաթյա նոր դուռ դրեցինք, դռան վրայի փակերն էլ փոխեցինք: Փող մուծեցինք, զգուշության համար եկան գծեր անցկացրին:

ՊԵՏ – (Դեռ ուշքի չեկած) Ի՞նչ ես ասում... Այ, էդ մեկը լավ չի եղել: Եթե իմանայի, չէի տանի:

ԿԻՆ – Դե լավ, չեմ ասում, որ դու էլ դա ասես: Տարել ես՝ լավ ես արել:

ՊԵՏ – Չե՞ս կարող իմանալ՝ դա որտեղից էր առել:

ԿԻՆ – (Խառնվելով) Մուս, էդ մասին չխոսես: Հենց հարցնեմ, էլի պիտի սկսի կասկածել իզուր տեղը, գլուխը պիտի ցավի, էլի պիտի թաց սրբիչով կապի ճակատը, մի բուռ դեղ խմի ու պառկի:

ՊԵՏ – Է, լավ, եթե էդպես էր, չտայիր տանելի:

ԿԻՆ – Որ ուզեցիր՝ ո՞նց չտայի, քե՞զ չտայի, չե՞ս ամաչում: Ասացիր՝ պետքական մարդու համար եմ տանում: Նրա ծննդին էիր գնում, չէ՞:

ՊԵՏ – Ոչ բարով գնայի:

ԿԻՆ – Ինչո՞ւ, նեղացե՞լ եք իրարից:

ՊԵՏ – Երանի չէր նեղացած լինելի: Հիմա ի՞նչ ես ասում, իսկապես չե՞ս կարող խոսեցնել, մի կերպ իմանալ, թե որտեղից է առել:

ԿԻՆ – Չէ, ասացի: Ինչի՞դ է պետք, որ իմանամ: Ինչքան գիտեմ, եթե չեմ սխալվում, իհարկե, ձեռքի վրայից պիտի առած լինի: (Մտաբերելով) Հա, հա, ձեռքի վրայից էր առել, երևակայիր շատ էլ էժան գնով: Ով լսում, զարմանում էր:

ՊԵՏ – Պահ, էդ ի՞նչ ասացիր...

ԿԻՆ – Ի՞նչ է եղել, դե պարզ ասա, իմանամ:

ՊԵՏ – Միլիցիայից ինչ-որ մեկը եկել, մտել է մարդու տուն, տեսել է պատից կախված, ասել է՝ սա գողացված է: Եթե գողացված չլիներ, ինչո՞ւ պիտի էդքան էժան գնով ծախեի: Կորանք:

ԿԻՆ – (Տազնապով) Վայ, հանկարծ չիմանան, որ ես եմ քեզ տըվել: Եթե իմանան՝ ընտանիքս կքայքայվի:

ՊԵՏ – Չէ, ասել եմ՝ իմ պապենական տնից է ինձ ժառանգություն մնացել:

ԿԻՆ – Բա հիմա ի՞նչ պիտի ասես:

ՊԵՏ – Ինչ որ ասել եմ, էլի դա պիտի ասեմ, ուրիշ ի՞նչ պիտի ասեմ, հո խոսքս չեմ փոխելու:

ԿԻՆ – Գծի մեջ ոնց որ թե մարդ կա, չե՞ս զգում:

ՊԵՏ – (Կշտամբանքով) Դու էլ... Ի՞նչ մարդ, է՛...

ԿԻՆ – Մի խոսքով, անունս դուրս չգա հանկարծ:

ՊԵՏ – Քո անունն ինչո՞ւ պիտի դուրս գա: Էդ որ միլիցիայից եկել հետաքրքրվել է, դրա բերանը պիտի փակեմ: Երեխա՞ ես, եթե քո անունը դուրս գա, իմ ընտանիքն էլ կքայքայվի:

ԿԻՆ – (Խանդով) Իմիջիայլոց, շատ ես դողում ընտանիքիդ վրա:

ՊԵՏ – Հարցը դա չի, իզուր տեղն ինչո՞ւ իմանան:

ԿԻՆ – Էլի եմ ասում՝ գծի մեջ ոնց որ թե մարդ կա: Դ՞նեմ՝ նորից զանգահարիր:

ՊԵՏ – Չէ, հիմա չեմ կարող, գործի մեջ եմ, հետո կզանգահարեմ:

ԿԻՆ – Դե երևա, մի՛ կորիր:

ՊԵՏ – Կերևամ: (Լսափողը դնելուց հետո գլուխն առնում է ափերի մեջ):

Գործարանի տնօրենի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՏՆՕՐԵՆ – (Լսափողի մեջ) Ես ձեզ սիրով լսում եմ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՉԱՅՆԸ – Ոսկերչյան, ես եմ, բարև:

ՏՆՕՐԵՆ – Բարև ձեզ, եղպես էլ գիտեի, որ դուք կլինեք, ընկեր Ստեփանյան:

ՊԵՏ – Ի՞նչ նորություն...

ՏՆՕՐԵՆ – Առանձնապես ոչ մի... Քիչ առաջ չորս ավտոմեքենա եկավ, դատարկում են: Երեկ լա՞վ հասաք տուն:

ՊԵՏ – Իհարկե, ի՞նչ պիտի լիներ որ... Վերցրի՞ր անդորրագիրը, հո չե՞ս մոռացել:

ՏՆՕՐԵՆ – Չէ, ընկեր Ստեփանյան, ո՞նց կարող եմ մոռանալ: Գնացի տուն, որտեղ ինչ դրել էի, փաստաթղթերս լրիվ խառնեցի տակից գլուխ, աղեցի-մաղեցի չգտա, պատկերացնո՞ւմ եք:

ՊԵՏ – Լսիր, դա պիտի գտնես, եղպես չի լինի:

ՏՆՕՐԵՆ – Կգտնեմ, ընկեր Ստեփանյան, բա ոնց... Տնից ուր պիտի կորչի: Երևի էն ժամանակ կնոջս եմ տվել, չի հիշում որտեղ է դրել: Ասացի՝ իմ գործը չի, ինչ գնով ուզում է լինի, առավտը պիտի փնտրես, գտնես: Հենց որ գտավ, ինձ պիտի զանգահարի: Ինքը հենց որ զանգահարի, ես կզանգահարեմ ձեզ:

ՊԵՏ – Ես չգիտեմ, դատարկ բանից չխայտառակվենք հանկարծ:

ՏՆՕՐԵՆ – Չէ, չէ, անհոգ եղեք, հո թև չառավ, թռավ տնից: Կինս կգտնի, նրա աչքից բան չի վրիպի: Երեկ ուղղակի որ շատ նստեցիմք, ուշ եկա տուն, ասացի՝ լավ, վաղը թարմ ուղեղով մայած տեղերս նորից կմայեմ: Կինս չգիտի, ես կգտնեմ, կորած հո չի մնալու:

ՊԵՏ – Ինչքան շուտ, այնքան լավ, ես խնդրում եմ:

ՏՆՕՐԵՆ – Դուք մի՛ անհանգստացեք, կգտնվի: Անկարելի բան չկա, ինչ որ պետք է՝ կանենք: (**Դնում է լսափողը**):

Վարչության պետի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – (**Լսափողի մեջ**) Լսում եմ:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – Ստեփանյան, ես տեղում եմ, բեր անդորրագիրը:

ՊԵՏ – Ընկեր Ենգիբարյան, ես շատ ներողություն եմ խնդրում, երեկ բավականին որոնեցի, տամը տեղ չմնաց, որ չմայեմ, չգտա:

ՏԵՂԱԿԱԼ – (**Խստամալով**) Ի՞նչ է մշանակում՝ չգտա... Բայց դու ասացիր՝ տանն է, կբերեմ:

ՊԵՏ – Տանն է, իհարկե, տանն է, ընկեր Ենգիբարյան, բայց ըստ երևույթին ինչ-որ փաստաթղթերի արանք է ընկել, կնոջս հանձնարարել եմ, որ մեկ առ մեկ նորից մայի, գտնի, զանգահարի ինձ: Ես հիմա նստած իր զանգին եմ սպասում: Վարորդին կուղարկեմ, կգնա կբերի:

ՏԵՂԱԿԱԼ – Մի՛ ուշացրու, մի՛ ուշացրու, խնդրում եմ:

ՊԵՏ – Չէ, չեմ ուշացնի: (**Դնում է լսափողը**):

Մինիստրի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՄԻՆԻՍՏՐ – (**Վերցնում է լսափողը**): Ես եմ, ասա:

ԿՆՈՋ ՉԱՅՆԸ – Երեկ դու ինձ ասացիր՝ դա տանենք Ահարոնյանի ծննդին, էլ չեմ գնա: Ես լսեցի քեզ՝ տարանք: Մի քիչ առաջ էլի եկավ:

ՄԻՆԻՍՏՐ – Ո՞վ եկավ:

ԿԻՆ – Միլիցիայից: Նայեց պատին, տեսավ չկա՝ զարմացավ:
Ասում է՝ ո՞րք է...

ՄԻՆԻՍՏՐ – (Բորբորվելով) Ասա՝ քեզ ինչ ուր է: Անդորրագիրը
համեմիր, ցույց տայիր:

ԿԻՆ – Իսկ ո՞վ է ինձ անդորրագիր տվել, որ ես էլ ցույց տայի:

ՄԻՆԻՍՏՐ – Ենթադրյալ վարորդը չբերե՞ց:

ԿԻՆ – Չէ, չի բերել:

ՄԻՆԻՍՏՐ – Դե ուրեմն կբերի: Հիմա ինձ մի՛ զբաղեցրու:

(Դնում է լսափողը):

*Միմիստրի տեղակալի առանձնասենյակը: Հեռախոսի
զանգ:*

ՏԵՂԱԿԱԼ – (Լսափողի մեջ) Լսում եմ:

ՄԻՆԻՍՏՐ – Ի՞նչ արիր, դու երեկ ասացիր՝ անդորրագիրը
կուղարկես մեր տուն, որ մյուս անգամ զան, կինս հանի, ցույց տա:
Ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ ես մոռացել:

ՏԵՂԱԿԱԼ – Չէ, չեմ մոռացել, ընկեր Սուրադյան: Ճիշտն ասած,
երեկ շատ որոնեցի տանը, չգտա: Ինչ-որ տեղ եմ դրել, հիմա
չեմ հիշում, թե որտեղ եմ դրել: Կինս հենց հիմա նայում է փաստա-
թղթերի մեջ, իր զանգին եմ սպասում: Վարորդին կուղարկեմ, կվերց-
նի, միանգամից կտանի ձեր տուն:

ՄԻՆԻՍՏՐ – Դու ինձ հանգստացրիր, ես էլ ապահով զգացի:

Դու գիտե՞ս, որ էլի եկել եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Մի՞թե...

ՄԻՆԻՍՏՐ – Արագացրու: (Անջատվում է հեռախոսը):

*Վարչության պետի առանձնասենյակը: Հեռախոսի
զանգ:*

ՊԵՏ – (Վերցնում է լսափողը) Այո...

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – (Ավելի ու ավելի ջղային)

Ստեփանյան, ի՞նչ եղավ անդորրագիրը, ի՞նչ եղավ...

ՊԵՏ – Շատ ներողություն, ընկեր Ենթադրյալ, ձեռքս հեռա-
խոսին տարա, ես էլ կարծեցի, թե կինս է, բոպե առ բոպե սպասում
եմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ինքը չի զանգահարում, դու զանգահարիր:

ՊԵՏ – Չանգահարում եմ, զբաղված է ցույց տալիս: Երևի ինքն
էլ ինձ է զանգահարում:

ՏԵՂԱԿԱԼ – (Հանդիմանաճերով) Ուշացնում ես, ուշացնում
ես...

ՊԵՏ – Հիմա նորից կփորձեմ, հենց հիմա:

ՏԵՂԱԿԱԼ – Ես չգիտեմ, անդորրագիրը լինի սեղանին:

ՊԵՏ – Կլինի: **(Դնում է լսափողը):**

Գործարանի տնօրենի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՏՆՕՐԵՆ – Ես ձեզ սիրով լսում եմ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՉԱՅՆԸ – **(Անհամբերությամբ բռնկված)** Ոսկերչյան, հը՞, ձայն չես հանում. անդորրագիրը...

ՏՆՕՐԵՆ – **(Չարմացած)** Այ քեզ զուգադիպություն... Ես էլ ձեզ էի զանգահարում, ընկեր Ստեփանյան: Գտնվեց...

ՊԵՏ – **(Թեքացած շունչ է քաշում)** Փառք Աստծո...

ՏՆՕՐԵՆ – Կինս հենց նոր զանգահարեց: Վարորդին ուղարկեցի, գնաց բերի:

ՊԵՏ – Ոսկերչյան, մի բույեմ էլ նշանակություն ունի, շուտ ինձ հասցրու:

ՏՆՕՐԵՆ – Մի՛ անհանգստացեք: Եղա՞վ: Ուր որ է դուռս կբացի, կուղարկեմ:

ՊԵՏ – Շուտ, շուտ... Սպասում եմ:

ՏՆՕՐԵՆ – Աչքիս վրա: **(Դնում է լսափողը):**

Միմիստրի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՄԻՆԻՍՏՐ – **(Վերցնում է լսափողը)** Ասեք, լսում եմ:

ԿՆՈՋ ՉԱՅՆԸ – Էլի եկել եմ... Չանգը տալիս եմ, չեմ բացում:

ՄԻՆԻՍՏՐ – Բարձր խոսիր, իմանամ ինչ ես ասում:

ԿԻՆ – Չանգերը չե՞մ լսվում: Դիտմամբ եմ ցածր խոսում, որ չիմանան տանը մարդ կա: Էլի եկել եմ, դուռը չեմ բացում:

ՄԻՆԻՍՏՐ – Իզուր, բացիր, անդորրագիրը ցույց տուր, թողնեն, գնան:

ԿԻՆ – Չեն բերել, ո՞նց ցույց տամ:

ՄԻՆԻՍՏՐ – **(Տարակուսանքով)** Ինչ է ասում...

ԿԻՆ – Ազնիվ խոսք: Ես իմ տան մեջ հո գերի չեմ մնալու:

ՄԻՆԻՍՏՐ – Դիր լսափողը, տեսնեմ դա ինչ բան է... Ո՞նց թե չեն բերել: **(Դնում է լսափողը):**

Վարչության պետի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – **(Արագ վերցնում է լսափողը):** Լսում եմ, ընկեր Ենգի-բարյան:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – **(Կշտամբանքով)** Ես ինչ-քա՞ն պիտի սպասեմ, Ստեփանյան: Ի՞նչ եղավ էդ թղթի կտորը:

ՊԵՏ – (Ուրախ) Գտնվեց: Հենց նոր կնոջս հետ էի խոսում:
 Վարորդին ուղարկել եմ, որ բերի:
 ՏԵՂԱԿԱԼ – Վերջապես...
 ՊԵՏ – Հիմա, հիմա, ընկեր Ենգիբարյան... Հենց որ եկավ,
 մըտնում եմ ձեզ մոտ:
 ՏԵՂԱԿԱԼ – Ես շենքից դուրս եմ գալու, արագացրու:
 ՊԵՏ – Հինգ րոպե ամենաշատը... Հինգ րոպե էլ չի տևի:
 ՏԵՂԱԿԱԼ – Հոգնեցրիք արդեն... Մի անդորրագրի եղածն ինչ
 է, որ ինձ զբաղեցնում ես: Հինգ րոպեն շատ է:
 ՊԵՏ – Չորս րոպեից, ընկեր Ենգիբարյան: (Դնում է լսափողը):
*Միմիստրի տեղակալի առանձնասենյակը: Հեռախոսի
 զանգ:*
 ՏԵՂԱԿԱԼ – (Լսափողի մեջ) Լսում եմ:
 ՄԻՆԻՍՏՐ – Ենգիբարյան, դու ինձ մի քիչ շատ չզբաղեցրի՞ր:
 Ի՞նչ եղավ, չգտնվե՞ց:
 ՏԵՂԱԿԱԼ – Գտնվեց:
 ՄԻՆԻՍՏՐ – Բա ո՞ր է, ինչո՞ւ չես ուղարկում, որ կինս րոպեն
 մեկ զանգահարում է:
 ՏԵՂԱԿԱԼ – Վարորդիս եմ սպասում, գնաց բերի, որ ուղար-
 կեմ:
 ՄԻՆԻՍՏՐ – Ինձ տեղյակ կպահես:
 ՏԵՂԱԿԱԼ – Ամմիջապես: (Դնում է լսափողը):
*Գործարանի տնօրենի առանձնասենյակը: Հեռախոսի
 զանգ:*
 ՏՆՕՐԵՆ – (Վերցնում է լսափողը) Ես ձեզ սիրով լսում եմ:
 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՉԱՅՆԸ – (Շնչակառուր) Ոսկերչյան,
 վարորդդ չեկա՞վ:
 ՏՆՕՐԵՆ – Եկավ, ընկեր Ստեփանյան: Ներողություն, քիչ
 մնաց ձեր ձայնը չճանաչեի:
 ՊԵՏ – Ուղարկեցի՞ր ինձ մոտ:
 ՏՆՕՐԵՆ – Չէ, չուղարկեցի:
 ՊԵՏ – Ում ես սպասում, ուղարկիր, Ոսկերչյան, ուղարկիր, թող
 բերի:
 ՏՆՕՐԵՆ – Բա որ բերած լիներ, չէի՞ ուղարկի:
 ՊԵՏ – (Իրեն կորցրած) Ո՞նց թե...
 ՏՆՕՐԵՆ – Վերջերս մի դաշնամուր էի առել փոքր աղջկաս
 համար, դրա անդորրագիրն է բերել: Չկա, էլի, չկա, չեն գտնում:
 ՊԵՏ – (Կարկամելով) Ոսկերչյան...

ՏՆՕՐԵՆ – Ասեք, ընկեր Ստեփանյան, ես ձեզ սիրով լսում եմ:

ՊԵՏ – Հիմա էլ հույս չունենա՞մ, որ կգտնվի:

ՏՆՕՐԵՆ – Չկա, էլի, չկա, ցնդեց, տնից գոլորշիացավ, ինչ եղավ, չիմացա:

ՊԵՏ – (Հուսահատ) Էլ չսպասե՞մ:

ՏՆՕՐԵՆ – Թե որ պատահաբար գտնվի... Ի՞նչ ասեմ:

ՊԵՏ – Եթե չկար, ինչո՞ւ ասացիր՝ կա:

ՏՆՕՐԵՆ – Հիմա էլ եմ ասում՝ կա, բայց որ չի գտնվում, ես ի՞նչ կարող եմ անել, ընկեր Ստեփանյան: Ո՞վ է դա, է, ո՞վ է, որ եկել է միլիցիայից: Հիմա էլ մեր ազնվության վրա եմ կասկածում մի թղթի պատճառով: Մարդ վիրավորվում էլ է:

ՊԵՏ – Վիրավորվում ես, թե չես վիրավորվում, հիմա դա է ինձ պետք:

ՏՆՕՐԵՆ – Ուղարկեք ինձ մոտ, ես դրա պատասխանը կտամ: Ես եմ ձեզ նվիրել, ես էլ գիտեմ, թե ինչ կասեմ: Չեմ ամաչո՞ւմ, հիմա էլ եկել, անդորրագիր եմ ուզում: Նվերի անդորրագիրը ո՞րն է: Մարդը մարդուն նվեր տալու իրավունք էլ չունի՞: Ես ձեզ խնդրում եմ, դրան ուղարկեք ինձ մոտ:

ՊԵՏ – (Հոգոցով). Դու ինձ ողջ-ողջ թաղում ես, Ոսկերչյան: Դու սաղիստ ես: Հիմա ես ի՞նչ անեմ, ի՞նչ... (Չեռքից ընկնում է լսափողը):

ՏՆՕՐԵՆ – (Անհանգստացած) Ընկեր Ստեփանյան, ալլո... Ալլո, ընկեր Ստեփանյան... Ալլո...

Վարչության պետի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – (Լսափողի մեջ, վախվորած) Լսում եմ, ընկեր Ենգիբարյան:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – Լսիր, ի՞նչ եղավ, չբերե՞ց եղ թղթի կտորը:

ՊԵՏ – Բերեց:

ՏԵՂԱԿԱԼ – (Համբերությունը հատած) Դե բեր:

ՊԵՏ – Բերեց, բայց դա չբերեց:

ՏԵՂԱԿԱԼ – (Կատաղությանը) Լսիր, հո դու ինձ ձեռ չես առնում:

ՊԵՏ – Ուրիշ անդորրագիր է բերել, ընկեր Ենգիբարյան: Ամբողջ տունը խառնել եմ իրար, չկա, չեն գտնում:

ՏԵՂԱԿԱԼ – (Բղավելով) Հետո՞...

ՊԵՏ – (Անձնատուր եղած) Ի՞նչ ասեմ...

ՏԵՂԱԿԱԼ – Դու վարչության պե՞տ ես, թե ինչ ես: Ստեփանյան, ես քեզ մինչև հիմա չեմ ճանաչել, ա՛յ տղա: Ես մինիստրի տեղակալ մարդ, դու ինձ հետ խա՞ղ ես անում: Այդ ոճով էլ աշխատում ես դու, Ստեփանյան: Անդորրագիրը բեր:

ՊԵՏ – (**Թևաթափ**) Որ չկա, որտեղի՞ց բերեմ, ընկեր Ենգիբարյան, դուք իմ վիճակը չե՞ք զգում:

ՏԵՂԱԿԱԼ – Տո որ ես քո վիճակն զգամ, իմ վիճակն ո՞վ զգա: Չկար՝ ասեիր չկա: Քո պատճառով ինչո՞ւ պիտի ես էլ ուրիշներին քյուրիմացության մեջ գցեմ:

ՊԵՏ – Ներողություն: Չգիտեի:

ՏԵՂԱԿԱԼ – Չգիտեիր՝ իմանայիր:

ՊԵՏ – Ավելի լավ չե՞ր գետինը մտնեի, քան ինձ հետ էսպիսի քան պատահեիր: Ես ո՞նց պիտի մայեմ ձեր աչքերին:

ՏԵՂԱԿԱԼ – (**Խորշանքով**) Քո էդ սիրուն խոսքերը շատ եմ լսել, Ստեփանյան, անդորրագիրը բեր:

ՊԵՏ – Որտեղի՞ց բերեմ:

ՏԵՂԱԿԱԼ – Ես չգիտեմ՝ որտեղից բերես: Գետնի տակից էլ լինի՝ գտիր, բեր:

ՊԵՏ – Որ լինեիր, չէի՞ բերի:

ՏԵՂԱԿԱԼ – (**Կուրծք ծեծելով**) Ես ի՞նչ պատասխան եմ տալու, դու մտածո՞ւմ ես: Քեզ ո՞վ էր խնդրում, որ իմ ծննդյան օրը նվեր բերեիր: Չբերեիր: Գան ասեն՝ տանդ իրը գողացվա՞ծ է: Չեք կարողանում նվեր բերել, մի բերեք: Ինձ էդ տեսակ նվերներ պետք չեն, որ հետո պիտի գլխացավանք պատճառեն: (**Չայնն ավելի ու ավելի քարճրացնելով**) Պետք չեն, ձեզ պահեք: Ես չգիտեմ, սպասում եմ:

Անջատվում է հեռախոսը:

Մինիստրի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՄԻՆԻՍՏՐ – (**Վերցնում է լսափողը**) Ասեք, լսում եմ:

ԿՆՈՋ ՉԱՅՆ – (**Խառնված**) Մինչև հիմա զանգը տալիս էր, դու պատկերացնո՞ւմ ես: Ականջներս իմը չեն: Ստիպված դուռը բացեցի, մտավ ներս: Ասում է՝ ո՞ւր է, որտե՞ղ եք դրել:

ՄԻՆԻՍՏՐ – (**Բորբոքվելով**) Ասա՝ իմ տան իրն է, որտեղ կուզեմ՝ կդնեմ, ձեզ ի՞նչ... Արդեն չափն անցնում եմ դրանք:

ԿԻՆ – Վախենում եմ, հիմա էլ Ահարոնյանի տուն գնան հետքերով:

ՄԻՆԻՍՏՐ – Մի անհանգստացիր, չեմ գնա: Եթե գնան էլ, ո՞վ ներս կթողնի: Դռան մոտ միլիցիոներ է կանգնած: Անդորրագիրը ցույց տայիր:

ԿԻՆ – Ո՞ւր է, անդորրագիր կա՞, որ ցույց տամ:
 ՄԻՆԻՍՏՐ – Չեմ հասկանում, չբերեցի՞ն:
 ԿԻՆ – Եթե բերած լինեին, ինչո՞ւ պիտի ցույց չտայի, է...
 ՄԻՆԻՍՏՐ – Լսափողը դիր, տեսնեմ...
 ԿԻՆ – Դե թող բերեմ, որ գամ, ցույց տամ: Ես էլ ուրիշ գործ չունե՞մ, դրանո՞վ պիտի զբաղվեմ, ուժ...
 ՄԻՆԻՍՏՐ – Տանը եղիր, կբերեմ (**Դնում է լսափողը**):
Մինիստրի տեղակալի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:
 ՏԵՂԱԿԱԼ – (**Լսափողի մեջ**) Լսում եմ, ընկեր Մուրադյան:
 ՄԻՆԻՍՏՐ – (**Հանդիմանաճքով**) Ես եմ քեզ լսում: Այդքան դժվա՞ր գործ էր մի թղթի կտոր տանելը, որ դեռ չես ուղարկել:
 ՏԵՂԱԿԱԼ – Վարորդս գնաց-եկավ, բոլորովին ուրիշ անդորրագիր էր բերել, թե չէ վաղուց ուղարկած կլինեի:
 ՄԻՆԻՍՏՐ – Ուրիշն ո՞ւմ է պետք, ինչ որ պետք է, դա թող բերեր:
 ՏԵՂԱԿԱԼ – Չկա, տեղ չմնաց, որ չմայեմ, հակառակի պես ոչ մի կերպ չի գտնվում:
 ՄԻՆԻՍՏՐ – Բայց դու ասացիր՝ գտնվել է:
 ՏԵՂԱԿԱԼ – Ես ներողություն եմ խնդրում, կինս ինձ թյուրիմացության մեջ գցեց: Ուրիշ անդորրագիր էր, կարծել է, թե դա է: Հիմար բան ստացվեց:
 ՄԻՆԻՍՏՐ – Մեր հիմնական գործը թողած, մեզ պատշա՞՞ն է, որ հիմա դրանով զբաղվենք: Չէր գտնվում, ասեիր՝ չի գտնվում: Դու էլ ինձ թյուրիմացության մեջ գցեցիր: Եթե համոզված չեիր, քո աչքով չեիր տեսել, ինչո՞ւ էիր ասում, որ գտնվել է: Սա մինիստրի ու տեղակալի խոսակցության մակարդա՞կ է, Ենգիբարյան:
 ՏԵՂԱԿԱԼ – Մխալ եմ արել, կնոջս հավատացի: Հիմա ձեզնից եմ անհարմար զգում:
 ՄԻՆԻՍՏՐ – Չէ, եղպես չի լինի, Ենգիբարյան, պիտի գտնվի՞ ինչ գնով ուզում է լինի, անպայման: Հո չեմ խայտառակվելու աշխարհով մեկ: Դու ինձ ներիր, հիմա արդեն ես էլ եմ կասկածում, որ գողացված է եղել:
 ՏԵՂԱԿԱԼ – (**Խոցված**) Ընկեր Մուրադյան, եղ ի՞նչ եք ասում... Ես եմ վիրավորվում:
 ՄԻՆԻՍՏՐ – Դե անդորրագիրը բե՛ր, բե՛ր, որ ապացուցենք: Միլիցիայի աշխատողն ո՞վ է, որ մինիստրի տուն ոտք դնի: Ի՞նչ վիրավորվելու մասին է խոսքը: Ես չեմ վիրավորվում, դո՞ւ ես վիրա-

վորվում: Իմացեք ինչ եք բերում, հետո բերեք: Սա ի՞նչ բան է... Ո՞վ էր տեսել, որ նվերի հետքերով մարդու տուն գան: Իսկ եթե հանկարծ պարզվի, որ իրոք գողացված է եղել, ի՞նչ պիտի ասես:

ՏԵՂԱԿԱԼ – Ո՞նց կարող է եղալիսի բան լինել, ընկեր Մուրադյան:

ՄԻՆԻՍՏՐ – Դե եթե չի կարող, անդորրագիրը գտիր: Չէիր գտնելու, ինձ փաստի առաջ չկանգնեցնեիր: Ես չգիտեմ՝ որտեղից ուզում է լինի, պիտի գտնես, Ենգիբարյան, պիտի գտնես, իմ հեղինակությամբ հետ եք խաղում: Ոչ մեկը չէր խնդրել, որ իմ ծննդին անպայման սրբապատկեր բերեիր: Ես դրա կարիքը չունեի, հիմա էլ չունեմ: Պիտի գտնվի անդորրագիրը, ինձ հիմա անդորրագիր է պետք, ուրիշ ոչինչ: Վտանգը գալիս է այնտեղից, որտեղից չես սպասում: Անդորրագիրը... **(Դնում է լսափողը):**

Վարչության պետի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՊԵՏ – Լսում եմ, ընկեր Ենգիբարյան:

ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՉԱՅՆԸ – **(Չոր, պաշտոնական)** Ստեփանյան, անդորրագիրը...

Գործարանի տնօրենի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՏՆՕՐԵՆ – Ես ձեզ սիրով լսում եմ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ – **(Խիստ)** Ոսկերչյան, անդորրագիրը...

Մինիստրի տեղակալի առանձնասենյակը: Հեռախոսի զանգ:

ՏԵՂԱԿԱԼ – Այո, ես եմ:

ՄԻՆԻՍՏՐԻ ՉԱՅՆԸ – **(Տիրական)** Ենգիբարյան, անդորրագիրը, ես Ահարոնյանին ի՞նչ պատասխան պիտի տամ, Ենգիբարյան...

ՏԵՂԱԿԱԼ – **(Անակնկալի եկած)** Ահարոնյանի՞ն...

ՄԻՆԻՍՏՐ – Այո, Ահարոնյանին... Անդորրագիրը...

Իրար հաջորդող հեռախոսազանգերն ընդմիջվում են արդեն արձագանքվող նույն պահանջ-ձայներով.

1999 Անդորրագիրը...

1999 Անդորրագիրը...

1999 Անդորրագիրը...

– Անդորրագիրը...

**ՇԱԲԱԹՆ ՈՒՐԲԱԹԻՑ
ՇՈՒՏ ԵԿԱՎ**

Պիես երկու մասից

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՍԱՐՏԻՆ	1999	ամուսիններ
ԱՐՈՒՍ		
ՊԱՐԳԵՎ	1999	ամուսիններ
ՔՆԱՐԻԿ		

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Մարտինի բնակարանը: Հյուրասենյակ՝ սովորական կահավորումով: Հեռուստացույցից քիչ հեռու՝ սեղան, վրան՝ հեռախոս: Շուրջը լուռ նստած են Պարզևն ու Արուսը: Շարունակաբար հնչում է մուտքի զանգը, որն ընդհատել է նրանց խոսակցությունը: Անշարժացած են՝ չմատնելու համար, որ ներսում մարդ կա: Արուսը զգուշորեն ցուցամատը տանում է շուրթերին՝ Պարզևին հասկացնելով, որ հանկարծ ձայն չհանի: Չանգերը շարունակվում են: Շունչները պահած նայում են իրար երեսի: Արուսը երբեմն-երբեմն անհանգիստ հայացք է ձգում դեպի ձախ. այնտեղ՝ ննջասենյակում, քնած է ամուսինը: Չանգերը դադարում են: Արուսը ցուցամատը նորից է տանում շուրթերին՝ զգուշացնելով, որ պետք է դեռ համբերել: Թաթերի ծայրերի վրա գնում է դեպի մուտքի դուռը: Գիտանցքից նայելուց հետո վերադառնում է:

ԱՐՈՒՄ – (Գրեթե շշուկով) Գնաց: (Անցնում է ննջասենյակի կողմը, հետախուզելուց հետո գալիս է՝ բարձրացնելով ձեռքերը) Հանգիստ քնած է, զանգի ձայնը չի լսել: (Իջեցնում է ձեռքերը):

ՊԱՐԳԵՎ – (Խորը շունչ քաշելով) Փա՛ռք Աստծո... Իմ գնալուց հետո գիշերը շա՞տ նստեցիք:

ԱՐՈՒՄ – Երևի...

ՊԱՐԳԵՎ – Քանիսի՞ն պատկեցիք:

ԱՐՈՒՄ – (Կասկածանքով նայելով ննջասենյակի կողմը)
Երեքն էր, չորսն էր, չիմացա...

ՊԱՐԳԵՎ – Ահագին ճանապարհ է եկել, կատակ հո չի՞:
Արո՛ւս, չարքնացնես, թող քնի, հանգստանա մարդը:

ԱՐՈՒՄ – Եթե իմանար, որ եկել ես, հիմա վաղուց էր արքնացել: Քո գնալուց հետո ասում էր՝ Պարզևն եկել էր, կնոջն ինչն՞ի չէր բերել հետը:

ՊԱՐԳԵՎ – Բերեի, որ խառնե՞ր իրար... Ինձ ասում է՝ դու Արուսի հետ վաղուց ես կապված եղել, ես ուշ եմ իմացել, Մարտինը հենց եկավ, գնալու եմ ասեմ:

ԱՐՈՒՄ – (Գլուխն առնելով ավերի մեջ) Դու պատկերացնո՞ւմ ես, եթե հանկարծ էդպիսի բան անի... Գժվել է եղ աղջիկը...

ՊԱՐԳԵՎ – Բա ինչ է արել... Ասում է՝ Մարտինն իր ավտոն տվել է քեզ, որ դու քո կնոջը թողած, նրա կնոջը կողքդ դրած «լևի» գնա՞ս... Գիտես թե չգիտես՞ ամեն անգամ որ կողմի վրա ես քշում... Իսկ էն մարդը տնից-տեղից կտրված, գնացել է էնտեղ տանջվում է, որ ընտանիք պահի: Ասում է՝ պիտի գնամ, իրեն ասեմ, որ ավտոն ձեռքիցդ վերցնի:

ԱՐՈՒՄ – Բա դու ի՞նչ ասացիր:

ՊԱՐԳԵՎ – Ասացի՝ հետևանքների մասին բա չե՞ս մտածում:

ԱՐՈՒՄ – Ի՞նչ ասաց:

ՊԱՐԳԵՎ – Ասաց՝ դո՛ւ մտածիր, ես ինչն՞ի պիտի մտածեմ:

ԱՐՈՒՄ – Դո՛ւ ինչ ասացիր:

ՊԱՐԳԵՎ – Շա՞տ եմ հիշում... Ինչ անում-չեմ անում, որ համոզեմ մեր մեջ էդպիսի բան չկա, չի լինում, էլի իր ասածն է ասում:

ԱՐՈՒՄ – Հանկարծ Մարտինի ականջը չընկնի...

ՊԱՐԳԵՎ – Ազնիվ խոսք, ես արդեն չգիտեմ, թե դրա հետ ոնց խոսեմ: Ինձ դրել է անհարմար վիճակի մեջ: Է՛, է՛, արդեն համբերությունից հանում է եղ կինը: Դու ասա, ի՞նչ անեմ:

ԱՐՈՒՄ – Ես գիտե՞մ, որ քեզ ասեմ: Նա որտեղի՞ց գիտի, որ Մարտինը եկել է:

ՊԱՐԳԵՎ – Հեռախոսով իմ խոսելու ժամանակ երևի տանն է եղել, ականջ է դրել կողքի սենյակից:

ԱՐՈՒՄ – (Հանկարծակի զգուշացած) Մի բռպե... Չայն լսեցի: (Գնում է ննջասենյակի կողմը, վերադառնալով) Չէ, քնած է: (Մոտենում է մուտքի դռանը) Հանկարծ հետ եկած, դռան տակ կանգնած մեզ լսելիս չլինի՞... (Գալով) Չկար:

ՊԱՐԳԵՎ – Մարտինը չի՞ ասում, թե ինքը երբ է գնալու:

ԱՐՈՒՄ – Չէ... Նոր չի՞ եկել, հո չեմ հարցնելու:

ՊԱՐԳԵՎ – Լավ կլիներ, շուտ գնար, դրա երեսը չտեսներ:

(Հեռախոսի զանգ):

ԱՐՈՒՄ – **(Կարծես հափշտակելով հեռախոսը)** Ալո... Ո՞ւմ եք ուզում... Մխալ եք զանգահարել... **(Դնում է լսափողը):**

ՊԱՐԳԵՎ – Ի՞նքն էր:

ԱՐՈՒՄ – Երևի... Չթողեցի խոսի:

ՊԱՐԳԵՎ – Լավ արիր:

ԱՐՈՒՄ – Երեկ Մարտինն ասում էր՝ Պարզևի մասին շատ եմ մտածում էնտեղ, այնք, առանց աշխատանքի եղպես ո՞նց կլինի, մրա նման շինարար մարդն էլ էսօրվա օրը գործ չունենա՞: Էս երկրի խելքը ե՞րբ է գլուխը գալու:

ՊԱՐԳԵՎ – Շնորհակալ եմ: Ինքը որ չլիներ, ոնց էի անելու, ես էլ չգիտեմ: Ի՛ն արև:

(Հեռախոսի զանգ):

ԱՐՈՒՄ – **(Նույն ձևով վերցնելով լսափողը)** Ալո, ո՞ւմ եք ուզում... Մխալ եք զանգահարել...

ՊԱՐԳԵՎ – Էլի ի՞նքն էր:

ԱՐՈՒՄ – Հա, բա էլ ո՞վ...

ՊԱՐԳԵՎ – Բա ինչո՞ւ վերցրիր:

ԱՐՈՒՄ – Չգիտեի, որ ինքն է:

ՊԱՐԳԵՎ – Բայց ի՞նչ երես ունի... Գնաց, հիմա էլ հեռախոստ՞վ է զգվեցնում:

ԱՐՈՒՄ – **(Գրեթե լացակումած)** Դե ասա, ի՞նչ անենք, որ չասի:

ՊԱՐԳԵՎ – Չէ՛, պիտի մի բան մտածվի... Հո չե՞նք թողնելու, որ էդ հիմարն իր ուզածն անի: Իրեն հարց էլ չի՞ տալիս, որ եթե Մարտինին եղպիսի բան ասի, ի՞նչ է լինելու դրա վերջը:

(Հեռախոսի զանգ):

ԱՐՈՒՄ – **(Առանց լսափողը վերցնելու, քնազդարար)** Ալո, ո՞ւմ եք ուզում... **(Կարուկ վերցնելով լսափողը)** Մխալ եք զանգահարել... **(Դնում է լսափողը):**

ՊԱՐԳԵՎ – Բա հիմա ինչո՞ւ վերցրիր:

ԱՐՈՒՄ – Կարծեցի, թե ուրիշ մարդ է:

ՊԱՐԳԵՎ – Ի՞նքն էր:

ԱՐՈՒՄ – Չիմացա:

ՊԱՐԳԵՎ – Էլ չվերցնես:

ԱՐՈՒՄ – Չէ՛, չեմ վերցնի:

ՊԱՐԳԵՎ – Ես հիմա ուրիշ բան եմ մտածում. բա որ հանկարծ վեր կենա, էլի գա՞:

ԱՐՈՒՄ – Կգա՞ որ...

ՊԱՐԳԵՎ – Եկավ՝ եկավ, ի՞նչ պիտի անես:

ԱՐՈՒՄ – Դ՛ն՛ի ասա:

ՊԱՐԳԵՎ – Ի՞նչ ասեմ, է՛, ի՞նչ ասեմ... Չար, բայց էդքա՞ն չար... Ես դրան լավ չեմ ճանաչել: Ամեն ինչի ընդունակ է եդ կինը: Ինչ ունի-չունի, հավաքել, կապել է, շարել պատի տակ, ասում է՝ բաժանվում եմ: Երեխաներն էլ էնտեղ են խառնվել իրար: Ասում եմ՝ չե՞ս ամաչում, երևակայական հիվա՞նդ ես, ա՛յ Զնարիկ: Ընտանի՞ք ես քայքայում անմեղ տեղը... Հետո գլխիդ տալու ես, բայց ուշ է լինելու:

ԱՐՈՒՄ – Բա ինքն ի՞նչ է ասում:

ՊԱՐԳԵՎ – Ասում է՝ ես չեմ քայքայում, դու շատ լավ գիտես, թե ով է քայքայում:

ԱՐՈՒՄ – Ի՞նձ նկատի ունի:

ՊԱՐԳԵՎ – Բա էլ ո՞ւմ...

ԱՐՈՒՄ – Գետիկն էլ չի մտնում... **(Հուսահատ, տագնապի մեջ)** Չիտե՛մ, չգիտե՛մ, եթե հանկարծ Մարտինը նրա ասածին հավատա, ես ինձ լուսամտից կզցեմ:

ՊԱՐԳԵՎ – Չե՞ս ամաչում, քե՞զ հետ էլ անկեղծ խոսելու իրավունք չունեմ: Իր ասելով է... Ասում է՝ թող ասի...

ԱՐՈՒՄ – **(Ապշած)** Ո՞նց թե...

ՊԱՐԳԵՎ – Ես էլ կասեմ՝ սուտ է ասում: Դե, եթե սուտ չի ասում, թող ապացուցի:

ԱՐՈՒՄ – Ո՞նց կապացուցի...

ՊԱՐԳԵՎ – Դե որ գիտես, էլ ինչո՞ւ ես հարցնում... Ես չեմ հավատում, որ Մարտինը հավատա:

ԱՐՈՒՄ – Եթե կասկածը զգի մարդու սիրտը, մեկ էլ տեսար հավատաց, ի՞նչ իմանամ...

ՊԱՐԳԵՎ – Մինչև ձեռքիդ տակ փաստ չունենաս, ո՞նց կհավատա: Շատ մարդ շատ բան կասի... Հո ասելով չի՞: Մարտինն ի՞նձ կասկածի... Ամոթ չի՞ իրեն, որ կասկածի: Ում ասես կկասկածի, ինձ չի կասկածի: Էդ նույն բանն է, թե ինքն իրեն կասկածի: Ես էլ կասեմ՝ ինքն է ուրիշի հետ կապված, ուզում է ինձնից բաժանվի, ուրիշ պատճառ չի գտնում, դա է ասում:

ԱՐՈՒՄ – Բա Մարտինն ի՞նչ կասի:
ՊԱՐԳԵՎ – Պիտի ասի՛, որ իմանամ...
ԱՐՈՒՄ – Օ՛ք, չգիտեմ...

(Հեռախոսի զանգ: Արուսը վեր է թռչում):

ՊԱՐԳԵՎ – Չվերցնես:
ԱՐՈՒՄ – Չէ, չեմ վերցնի:

ՊԱՐԳԵՎ – Կամ վերցրու, ասա՛ տանը մարդ չկա:
ԱՐՈՒՄ – Չէ, չեմ վերցնի: Կասեմ, չի հավատա, էլի կգա:
(Հարցական մայում են իրար, զանգերը դադարում են):

ՊԱՐԳԵՎ – Էլի ի՞նքն էր:
ԱՐՈՒՄ – Հա, բա էլ ո՞վ:
ՊԱՐԳԵՎ – Ո՞նց իմացար:
ԱՐՈՒՄ – Ձանգերից:

ՊԱՐԳԵՎ – Մի քիչ առաջ որ եկավ, դռան զանգը տվեց, լավ էր՝
Մարտինը քնած էր, թե չէ ուզեիր-չուզեիր դուռը պիտի բացեիր դրա
առաջ:

*(Մուտքի զանգ: Համբանում են: Շարունակվում են զան-
գերը):*

ՍԱՐՏԻՆ – (Չայնը մնջասենյակից) Արո՛ւս, Արո՛ւս...

ԱՐՈՒՄ – (Ցնցվելով) Ասա՛...

ՍԱՐՏԻՆ – Դռան զանգն է: Որտե՞ղ ես, ջա՛նս...

ԱՐՈՒՄ – Էստեղ եմ: (Գնալով դեպի մուտքը) Հիմա... (Բացում
է դուռը: Մտնում է Քնարիկը. լրջադեմ, չափից ավելի զուսպ, որ
մատնում է հոգեվիճակը):

ՊԱՐԳԵՎ – (Ուտից գլուխ չափելով նրան) Ինչո՞ւ ես եկել:
(Քնարիկը լուռ է) Քեզ հետ եմ:

ՔՆԱՐԻԿ – Կիմանաս:

(Հանդիպակաց կողմից մտնում է Մարտինը):

ՍԱՐՏԻՆ – (Հորանջում է՝ ափով փակելով քերանը)
Քնարի՞կ...

ՔՆԱՐԻԿ – (Պարտադրված ժպիտով) Բարի գալուստ... (Ող-
ջագուրվում են):

ՍԱՐՏԻՆ – (Դռանալով Պարզկին՝ հարևանցի համբուրելով նը-
րան) Միասին եկա՞ք:

ՊԱՐԳԵՎ – Չէ՛, ես մի տասը րոպե առաջ եմ եկել:

ՄԱՐՏԻՆ – Ես էլ երեկ Արուսիկն ասում եմ՝ Պարզևն եկել էր, Քնարիկին ինչո՞ւ չէր բերել հետը: **(Քնարիկին)** Նստիր: Երեխաները ո՞նց են:

ՔՆԱՐԻԿ – Մեծանում են:

ՄԱՐՏԻՆ – Պիտի մեծանան, բա ո՞նց...

ՔՆԱՐԻԿ – Մարտի՛ն, դու ո՞նց ես:

ՄԱՐՏԻՆ – Ասածուն փառք... Որ ձեզ լավ եմ տեսնում, լավ եմ:

Քնարիկ, նստիր:

ՔՆԱՐԻԿ – Շատ ներողություն, ես քեզ հետ առանձին խոսելիք ունեմ: Կարելի՞ է:

ՄԱՐՏԻՆ – Կարելի է, իհարկե, կարելի է, բայց ինչքան ես գիտեմ՝ մենք իրարից զաղտնիք չունենք: Էդպես չի՞...

ԱՐՈՒՄ – Իհարկե, չունենք...

ՊԱՐԳԵՎ – Էդ էր պակաս, որ ունենայինք:

ՄԱՐՏԻՆ – **(Քնարիկին)** Հը՞... Ի՞նչ է եղել:

ՔՆԱՐԻԿ – Կասեմ:

ՊԱՐԳԵՎ – **(Լարված)** Առանձին չես ասելու, էստեղ պիտի ասես: **(Մատույլ թմրկահարելով սեղանին)** Ա՛յ էստեղ...

ՄԱՐՏԻՆ – Առանձին է ուզում, թող առանձին ասի, վայ՛...

ԱՐՈՒՄ – Բայց ինչո՞ւ առանձին, ես դա չեմ հասկանում:

ՔՆԱՐԻԿ – Հասկանում ես, դրա համար ես ասում՝ չեմ հասկանում:

ԱՐՈՒՄ – **(Թոթվելով ուտերը, տարակուսանքով)** Ի՞նչ է ասում...

ՄԱՐՏԻՆ – Էս ի՞նչ է՝ սև կատո՞ւ է անցել ձեր միջով: Պահո՞... Առանձին է ուզում՝ թող առանձին ասի, ի՞նչ է պատահել:

ՊԱՐԳԵՎ – Բայց ի՞նչն է խանգարում, որ էստեղ ասի: Դ-ա եմ ուզում իմանալ:

ՔՆԱՐԻԿ – Դու դա գիտես:

ՊԱՐԳԵՎ – Դե որ գիտեմ, ասա, թող իրենք էլ իմանան:

ՄԱՐՏԻՆ – Պա՞րզև... Նեղը մի զգիր աղջկան, կասի, մո՞ր չեկավ... Սպասիր...

ԱՐՈՒՄ – Իհարկե...

ՊԱՐԳԵՎ – Ներողություն, ախր բաներ կան, որ դու էլ չգիտես:

ՔՆԱՐԻԿ – Չգիտի, կիմանա:

ՊԱՐԳԵՎ – Ես պիտի ասեմ, որ իմանա, քո ասելով չի իմանա:

ՄԱՐՏԻՆ – Հա, բայց քո տաքանալը չեմ հասկանում:

ՔՆԱՐԻԿ – Ես հասկանում եմ:

ՊԱՐԳԵՎ – Ի՞նչ ես հասկանում, չի՞ լինի մի ասես.. Բա դու չե՞ս ամաչում, որ ինձ անհարմար վիճակի մեջ ես դնում: Էդ ո՞ւմ տանը վե՛ճ չի լինում:

ԱՐՈՒՄ – Իհարկե...

ՄԱՐՏԻՆ – Կարիք չկա իրարից նեղանալ ամեն դատարկ բանի համար:

ՔՆԱՐԻԿ – (Դառը քմծիծաղով) Դատարկ բանի...

ՊԱՐԳԵՎ – Ինչ խոսել, չենք խոսել՝ պիտի գաս էստեղ ասե՞ս: Մարդը նոր է ոտք դրել իր տուն, դու հիմա եկել ես էդ ի՞նչ ես ասում... Մի երկու օր համբերեիր, էլի ասեիր, չէր կարելի՞...

ՄԱՐՏԻՆ – Ինչ նշանակություն ունի, թե երբ եմ եկել: Զնարիկն իրավունք ունի:

ԱՐՈՒՄ – Ո՞վ է ասում, որ չունի... Բայց ինչո՞ւ առանձին...

ՄԱՐՏԻՆ – Էդպես է ուզում, վա՛յ...

ՊԱՐԳԵՎ – Իր ուզելով է... (Զնարիկին) Էստեղ օտար մարդ չկա, բան ունես ասելու՝ ասա:

ՔՆԱՐԻԿ – Եվ կասեմ... Զեզ թվում է, թե չե՞մ ասելու:

ՊԱՐԳԵՎ – (Բռնկվելով) Դե ես էլ ասում եմ՝ ասա... Ասա, էլի, ասա, տեսնեմ ինչ ես ասում:

ՔՆԱՐԻԿ – Կասեմ, կիմանաս:

ՊԱՐԳԵՎ – Ե՞րբ... Հիմա ասա... Ասա՝ իմանամ:

ՔՆԱՐԻԿ – Մարտինին առանձին կասեմ, կիմանաս:

ՊԱՐԳԵՎ – Ես գնում եմ:

ՄԱՐՏԻՆ – Պարզև, հետ արի... Նստիր տեղդ...

ՊԱՐԳԵՎ – Չէ՛, չեմ մնա...

ՄԱՐՏԻՆ – Նստիր, ասում եմ... (Զնարիկին) Առանձին ես ուզում՝ առանձին կասես, Արուսը սեղան է սարքում, Զնարիկ, նստիր, հետո կասես:

ԱՐՈՒՄ – Իհարկե, կարիք չկա շտապելու:

ՔՆԱՐԻԿ – (Մարտինին) Չէ, միտք չունի իմ մնալը:

ԱՐՈՒՄ – Լավ, էլի, Զնարիկ...

ՄԱՐՏԻՆ – (Զնարիկին) Եթե թողնող լինի, լավ էլ կգնաս:

Նստիր:

ՔՆԱՐԻԿ – Չէ՛, եթե էդպես է, պիտի գնամ:

ՄԱՐՏԻՆ – Զեզ բաց թողնող չկա: Արի... Եթե չես ուզում էստեղ ասես, գնանք էնտեղ ասա:

ՊԱՐԳԵՎ – Ո՞ր գնաք... Մարտին, սպասիր: Եթե էդպես է՝ ավելի լավ է ես ու Արուսը դուրս գանք:

ՄԱՐՏԻՆ – Ոնց կուզեք, ի՞նչ տարբերություն...

ՊԱՐԳԵՎ – Բայց ախր մենք ինչի՞ համար պիտի դուրս գանք, չեմ հասկանում:

ՔՆԱՐԻԿ – (Կտրուկ կանգնում է) Լավ, Մարտին, ես հետո կգամ:

ՄԱՐՏԻՆ – (Բռնելով ձեռքը) Քնարիկ, սպասիր, սպասիր, ո՞նց թե՛ հետո կգամ...

ՊԱՐԳԵՎ – Թող ինքը չգնա, ես կգնամ:

ՄԱՐՏԻՆ – Հետ արի, մտի տեղդ:

ԱՐՈՒՄ – (Ընդհատելով սեղան սարքելը) Եթե էս ամեն ինչից ես բան եմ հասկանում՝ ամոթ ինձ... Ազնիվ խոսք... Արի, Պարզև...

ՊԱՐԳԵՎ – Գամ, բայց ո՞ր գամ, ինչի՞ համար գամ: Իմանամ ինչի՞ համար եմ գալիս՝ գամ:

ԱՐՈՒՄ – Ես էլ նույն կարծիքին եմ:

ՄԱՐՏԻՆ – Դուք որոշեք, ես չգիտեմ:

ՔՆԱՐԻԿ – Լավ, հասկացա, ես կգնամ:

ՄԱՐՏԻՆ – (Չեռքը բռնած) Չէ՛, չէ՛, քեզ բաց թողնող չկա, դու ոչ մի տեղ էլ չե՛ս գնա:

ՔՆԱՐԻԿ – Գնամ, հետո կգամ:

ՄԱՐՏԻՆ – Չէ՛, ասացի, սա քո տունը չի՞, ո՞ր գնաս...

ՔՆԱՐԻԿ – Դե, եթե...

ՊԱՐԳԵՎ – Ի՞նչ եթե... Բան ունես ասելու՝ էստեղ ասա:

ԱՐՈՒՄ – Լավ, էլի, Քնարիկ... Պարզև, դու ինչո՞ւ ես սրտիդ եղբան մոտ ընդունում:

ՄԱՐՏԻՆ – Եթե շատ է ուզում, որ առանձին ասի, թող ասի: Տեսնում եք՝ աղջկա սիրտը լցված է... Չեք ուզում մենք գնանք՝ մի բոստոնի դուրս դուրս եկեք, տեսնեմ Քնարիկին ինչ է ասում:

ՊԱՐԳԵՎ – Խնդրեմ, դուրս գանք, բայց ախր ինչի՞ համար դուրս գանք:

ՄԱՐՏԻՆ – Էլի՞... Պարզև, ե՛ս եմ խնդրում, մի բոստոնի դուրս եկեք, էլի կգաք:

ԱՐՈՒՄ – Ոչ մի դեպքում... Ես իմ տունը թողնեմ, ո՞ր գնամ:

ՄԱՐՏԻՆ – Ոչ մի տեղ էլ մի գնա: Մի բոստոնի մեզ առանձին թողեք, ձայն կտամ, կգաք: Վա՛հ, եղբան դժվա՞ր բան է, որ չեք ուզում հասկանալ: Չեք ուզում գնալ՝ դուք մնացեք, մենք կգնանք: (Չեռքը բռնած) Քնարիկ, արի:

ՊԱՐԳԵՎ – Մարտին, մի բռայե...
 ՄԱՐՏԻՆ – Ասա՛...
 ՊԱՐԳԵՎ – Քեզ չեմ ասում, իրեն եմ ասում... **(Քնարիկին)** Բա էս մարդը էդ վերաբերմունքին էր արժանի՞...
 ՔՆԱՐԻԿ – Ինձ մի ասա, քեզ ասա:
 ՊԱՐԳԵՎ – Բա դու խիղճ չունե՞ս... Հոգնած եկել է, ինչ-որ ասելու ես, հետո չե՞ս կարող ասել, որ հիմա ես ուզում ասել:
 ՄԱՐՏԻՆ – Պա՛րզև, Պա՛րզև, Քնարիկին մի նեղացրու: Հոգնած չեմ, ինչո՞ւ եմ հոգնած:
 ՊԱՐԳԵՎ – Սա եղավ գո՞րծ... Ասում ես՝ մի նեղացրու... Ես եմ ամաչում իր փոխարեն:
 ՔՆԱՐԻԿ – Դու քո փոխարեն ամաչիր:
 ՄԱՐՏԻՆ – Չեղա՛վ... Ինձ արդեն նեղացնում եք: Բա ես դրա՞ համար եմ եկել: Էդ ո՞նց եք իրար հետ խոսում, ինձ դուր չի գալիս:
 ՊԱՐԳԵՎ – Իրեն ասա:
 ՄԱՐՏԻՆ – Իրեն էլ եմ ասում, քեզ էլ...
 ԱՐՈՒՄ – Չգիտե՛մ, չգիտե՛մ, ինչ ասեմ:
 ՄԱՐՏԻՆ – Դու ինչո՞ւ ես նեղսրտում, ի՞նչ է եղել, է՛... Ինչո՞ւ եք լուր ուղտ սարքում: Ամեն դատարկ բանի համար եթե մենք իրարից նեղանանք, ո՞ր կհասնի... Էլ ո՞վ ունենք իրարից բացի: Քնարիկ, արի՛...
 ՊԱՐԳԵՎ – Չէ՛, Մարտին, թող չգա:
 ՄԱՐՏԻՆ – Չեմ հասկանում, թե ինչ ես ասում: Մենք մնանք, դո՞ւք գնաք, թե՞ դուք գնաք, մենք մնանք: Ի՞նչ ես առաջարկում, ոնց որ կասես...
 ԱՐՈՒՄ – **(Գրեթե լացակումած)** Ոչ դո՞ւք գնացեք, ոչ էլ մենք գնանք:
 ՄԱՐՏԻՆ – Է՛, եղա՞վ...
 ՔՆԱՐԻԿ – Լա՛վ, լա՛վ, ես կգնամ:
 ՄԱՐՏԻՆ – Չէ՛, ասացի... Մինչև ես ձեզ չհաշտեցնեմ, դու ոչ մի տեղ չես գնա:
 ՊԱՐԳԵՎ – Այսինքն՝ եթե չի ուզում, թող գնա, հետո էլի գա:
 ՄԱՐՏԻՆ – Ո՞ւր գնա, է՛, ո՞ւր գնա: Քնարիկ, էդպիսի բան մի ասա: **(Գլուխը հպում է նրա զլխին)** Ես կթողնե՞մ, որ դու գնաս: Էդ էր պակաս...
 ՔՆԱՐԻԿ – Խնդրում եմ:
 ՄԱՐՏԻՆ – Իզուր տեղը մի խնդրիր, դա լինելու բան չի:
 ԱՐՈՒՄ – Մարտի՛ն, դե եթե չի ուզում...

ՄԱՐՏԻՆ – Իր ուզելով է, որ ուզի կամ չուզի: **(Քնարիկին)** Արի:
 ՊԱՐԳԵՎ – Մարտին, մի բռայե...
 ՄԱՐՏԻՆ – Եթե չի ուզում ձեր ներկայությամբ ասի, թող առան-
 ձին ասի: Ինչն է եք էղբան բարդացնում էս հասարակ հարցը:
 ՊԱՐԳԵՎ – Էդ դեպքում ես կզնամ:
 ՄԱՐՏԻՆ – Դու ո՞ր կզնաս, քեզ ո՞վ կթողնի, որ գնաս:
 ՊԱՐԳԵՎ – Ճիշտն ասած, մի թեթև գործ ունեմ մեկի հետ,
 վախենում եմ ուշանամ՝ թողնի գնա:
 ՄԱՐՏԻՆ – **(Հանդիմանական)** Հեքիաթներ մի պատմիր:
 ՊԱՐԳԵՎ – Երդվում եմ:
 ՄԱՐՏԻՆ – Չանգահարիր, թող սպասի:
 ՊԱՐԳԵՎ – Էնտեղ հեռախոս չկա:
 ՄԱՐՏԻՆ – Դա ինձ չի վերաբերում: Նստիր տեղդ:
 ՊԱՐԳԵՎ – Վա՛յ, ուրեմն, չե՞ս հավատում:
 ՄԱՐՏԻՆ – Հավատում եմ, նստիր տեղդ:
 ՊԱՐԳԵՎ – Կնստեմ, բայց ուշանում եմ:
 ԱՐՈՒՄ – Հիմա էլ դո՞ւ...
 ՊԱՐԳԵՎ – Արո՛ւս, կասկածո՞ւմ ես...
 ԱՐՈՒՄ – Չկասկածե՞մ էլ...
 ՊԱՐԳԵՎ – Իմ արև, քո արև, Մարտինի արև... Էլ ո՞ւմ արև
 ասեմ, որ հավատաս:
 ԱՐՈՒՄ – Ում արև ուզում ես ասա, հանկարծ երեխաների արև
 չասես:
 ՊԱՐԳԵՎ – Չէ՛, չեմ ասի:
 ՄԱՐՏԻՆ – Պարզև, տեղիցդ չշարժվես: Ինձ թաղես, թե
 գնաս...
 ՊԱՐԳԵՎ – Վա՛յ, էդ ի՞նչ ասացիր: Մինչև դու ինձ չթաղես, ես
 քեզ ո՞նց կթաղեմ: Արուս, արի: **(Քնարիկին)** Գնում ենք, դե ասա,
 տեսնեմ ինչ պիտի ասես: Քեզ էլ թվում է, թե Մարտինը քեզ պիտի
 հավատա, հա՞... Նա ոչ քե՛զ կհավատա, ոչ էլ՝ ի՛նձ: Նա իրեն կհա-
 վատա: Արուս, արի:
 ԱՐՈՒՄ – **(Լացակումած)** Ո՞ր գամ, է՛, ո՞ր գամ:
 ՊԱՐԳԵՎ – Արի, կասեմ: **(Անցնում են կից սենյակը: Պարզևը
 մի վերջին անգամ դռան արանքից հանում է գլուխը, Քնարիկին
 Դե, ասա, հիմա ինչ ուզում ես՝ ասա: Դու քոնը կասես, ես էլ իմը
 կասեմ: (Գլուխը ներս է քաշում՝ ծածկելով դուռը):**
 ՄԱՐՏԻՆ – Հանգստացիր:
 ՔՆԱՐԻԿ – Ես հանգիստ եմ, իրենք են անհանգիստ:

ՄԱՐՏԻՆ – Իզուր... Անհանգստանալու բան չկա: Շնորհակալ եմ Պարզկից... Մինչև հոգուս խորքը... Բա Արուսն ինչքա՛ն է գոհ իրենից... Ասում է՝ ես Պարզկին եղբան լավ չեմ ճանաչել, ինչքան քո գնալուց հետո ճանաչեցի: Ամեն բանում մարդը հասել, օգնել է մե-
րոնց, որ իմ բացակայությունը Արուսը չզգա: Մի օր էլ Պարզկը կաշխատի, էսպես հո չի՞ մնա էս երկիրը: Համբերեք, կամաց-կամաց ամեն ինչ իր տեղը կընկնի: Ի՞նչ էիր ասելու, դե հիմա ասա: Հետո՞.... Ի՞նչ կա-չկա...

ՔՆԱՐԻԿ – Ոչ մի լավ բան:

ՄԱՐՏԻՆ – Որ առողջ եք, բա դրանից լավ բա՞ն... Հիմա ո՞վ է ուրիշ բանի մասին մտածում: Հո մենակ մենք չե՞նք... Աշխարհն է հիմա խառնված իրար:

ՔՆԱՐԻԿ – Ինչ ուզում է լիներ, մենակ թե չլիներ էն, ինչ որ եղավ:

ՄԱՐՏԻՆ – Այսի՞նքն... Ի՞նչը նկատի ունես: Չհասկացա...

ՔՆԱՐԻԿ – Բաժանվում եմ Պարզկից: (Փղճկում է):

ՄԱՐՏԻՆ – (Անակնկալի եկած) Զնարի՞կ... Էդ ի՞նչ ես ասում...

ՔՆԱՐԻԿ – (Սրբելով արցունքները, տիրապետելով իրեն) Ուզում էի չասել, բայց քեզ չէի կարող չասել: Եթե չասեի, քո գնալուց հետո պիտի ինձ մեղադրեի, թե ինչու չասացի:

ՄԱՐՏԻՆ – (Մոլորված) Սպասիր՝ ուշքի գամ, հետո... Դե՞ ո՞ր բա-
ժանվես... Ումի՞ց... Պարզկի՞ց... Դա լինելո՞ւ բան է, որ ասում ես:

ՔՆԱՐԻԿ – Ուրիշ ելք չկա: Ինքն է ինձ փաստի առաջ կանգ-
նեցրել:

ՄԱՐՏԻՆ – Հա, բայց ի՞նչ է եղել, չիմանա՞մ... Լուրջ բան կա՞,
թե՞...

ՔՆԱՐԻԿ – Եթե չլիներ, ես այդ քայլին չէի գնա:

ՄԱՐՏԻՆ – Հիմա էլ չես գնա, ո՞վ կթողնի, որ գնաս:

ՔՆԱՐԻԿ – Չէ, արդեն որոշված է:

ՄԱՐՏԻՆ – Լավ էլի, Զնարիկ:

ՔՆԱՐԻԿ – Երդվո՞ւմ եմ:

ՄԱՐՏԻՆ – Ի՞նչ է պատահել, է՛, էդ ո՞ւմ տանը վե՛ճ չի լինում:
Քեզ թվում է, թե ես ու Արուսը իրար հետ իսկի չե՞նք վիճում:

ՔՆԱՐԻԿ – Մա ուրիշ հարց է: Կապ չունի:

ՄԱՐՏԻՆ – Ինչ հարց ուզում է լինի, բաժանվելս ո՞րն է... Երե-
խաներն ի՞նչ մեղք ունեն: Անհեր մեծանա՞ն... Էդ ի՞նչ ես խոսում...

Նրանք էսօր իրենց հորը կմեղադրեն, վաղը՝ քեզ: Բա նրանց մասին չե՞ք մտածում:

ՔՆԱՐԻԿ – Մտածում եմ:

ՄԱՐՏԻՆ – Դե որ մտածում ես, ինչո՞ւ ես էդպիսի բան ասում: Լավ օրից չի, որ ես թողել, գնացել եմ աշխատեմ, երեխա պահեմ: Ընդհանրապես, եթե մեջտեղը երեխա չլիներ, չգիտես էլ, թե էդ ամուսնացածների քանի տոկոսը կբաժանվեր, քանի տոկոսը չէր բաժանվի: Եթե մարդ իր ընտանիքի համար չի ապրում, բա էլ ինչի՞ համար է ապրում, կամ նրա ապրելն էլ քանի՞ կոպեկ արժի: Արուսը երեխաներին պապի-տատի մոտ է ուղարկել, եկել եմ դեռ իրենց չեմ տեսել, գժվում եմ: **(Երեխաների լուսանկարը հանում է, համբուրում, էլի դնում ծոցագրպանը)** Իբր ձերոնց տեսե՞լ եմ, երեխաներին պիտի բերած լինեիր հետդ: Մեկ է, դուք բերեք-չբերեք, ես գալու եմ: Էնպես որ՝ էդ քարը փեշիցդ թափիր: Հիմա Պարզևին կկանչեմ, ոնց որ պետքն է տեղը կդնեմ ես դրան:

ՔՆԱՐԻԿ – **(Բռնելով Մարտինի ձեռքը)** Չկանչես, խնդրում եմ, չեմ ուզում նրա երեսը տեսնել:

ՄԱՐՏԻՆ – Առանց էդ էլ ես կյանքը կյանք չի, սուտ բանից ախր ինչի՞ համար եք պատմություն սարքում:

ՔՆԱՐԻԿ – Եթե չգիտես, իհարկե, էդպես կասես:

ՄԱՐՏԻՆ – Ի՞նչ է եղել, դե ասա իմանամ: Չեր երկուսի հերն էլ անիծած: Ես միայն մի բան գիտեմ, որ տղա երեխան հորով պիտի մեծանա, որ հետո չխեղճանա: Դե ասա, ինձնից մոտ մարդ ունե՞ք:

ՔՆԱՐԻԿ – Չէ՛...

ՄԱՐՏԻՆ – Ես ձեզանից մոտ մարդ ունե՞մ:

ՔՆԱՐԻԿ – Չէ՛:

ՄԱՐՏԻՆ – Դե որ չէ, ասա... Մեզ լսող չկա, նրանք էն սենյակում են, մենք էստեղ: Եթե հարմար չես գտնում, մի ասա, քո գործն է:

ՔՆԱՐԻԿ – **(Արտասավախառն)** Ես քեզ չեմ կարող չասել:

ՄԱՐՏԻՆ – Առավել ևս.. Ես եկել եմ ձեզ տեսնեմ ուրախանա՞մ... թե՞ տխրեմ:

ՔՆԱՐԻԿ – Ոչ կարողանում եմ ասել, ոչ էլ կարողանում եմ չասել:

ՄԱՐՏԻՆ – Հանգստացիր հետո...

ՔՆԱՐԻԿ – Չնայած՝ ասեմ էլ պիտի զոջամ, չասեմ էլ...

ՄԱՐՏԻՆ – Դե ուրեմն ասա... Ավելի լավ է ասես՝ զոջաս, քան թե չասես՝ զոջաս: Ախր հետո ինչո՞ւ գնաս, տանջվես իզուր տեղը: Խնդրեմ, կարող ես և չասել, բայց բաժանվելը մտքիցդ հանիր, Քնա-

րիկ: Էդ էր պակաս մնացել: Թե որ եղպիսի բան անեք, եթե ես հենց էսօր էլ չթողնեմ, էլի հետ գնամ, ամոթ ինձ:

ՔՆԱՐԻԿ – (Ուժ գտնելով իր մեջ, արտաքուստ սառը) Պարզևն ինձ դավաճանում է:

ՄԱՐՏԻՆ – (Քնծիծաղով) Ո՞վ... Պա՞րզևր... Վայ, ի՞նչ միամիտ կին ես... Ո՞վ է քեզ եղպիսի բան ասել, որ դու էլ հավատացել ես:

ՔՆԱՐԻԿ – Ոչ որ չի ասել, ես գիտեմ:

ՄԱՐՏԻՆ – Ես էլ ասում եմ, որ սխալ գիտես:

ՔՆԱՐԻԿ – Նա ոչ մի սրբություն չունի, երդվում եմ:

ՄԱՐՏԻՆ – Ո՞վ սրբություն չունի... Ոտից գլուխ սրբություն է, դու ասում ես՝ սրբություն չունի... Շատ ներողություն, ես չեմ հավատում, որ նա քեզ դավաճանի, հարյուր տարի մնա, չեմ հավատա: Աշխարհը կանգնի ասի՝ չեմ հավատա: Վիզս կկտրեմ, թե նա եղպիսի բան կանի: Նա էդ մարդը չի: Չեմ հավատում:

ՔՆԱՐԻԿ – Չես հավատում, որովհետև դու քո ընկերոջը չես ճանաչում:

ՄԱՐՏԻՆ – Ո՞վ, ե՞ս չեմ ճանաչում, ե՞ս...

ՔՆԱՐԻԿ – Նա անկեղծ չի եղել, դու նրան չես ճանաչել:

ՄԱՐՏԻՆ – Ո՞ւմ չեմ ճանաչել՝ Պարզևհ՞ն... Եղա՞վ... Ինձ ներիք, խնդրում եմ, բայց դու առաջ եղպես խանդոտ չէիր, Քնարիկ, էդ ո՞նց պատահեց...

ՔՆԱՐԻԿ – Ես հիմա էլ խանդոտ չեմ, դու չգիտես, ինչ որ ես գիտեմ: Եթե իմանաս, չես ասի:

ՄԱՐՏԻՆ – Դե ասա, որ իմանամ:

ՔՆԱՐԻԿ – Ավտոդ տվել ես, դրել ես տակը, նա էտեղ իր քեֆին ուր ասես քշում է, դու գնացել էնտեղ տանջվում ես:

ՄԱՐՏԻՆ – Եթե էտեղ գործ լիներ, ինչո՞ւ պիտի թողնեի, գնայի: Իբր մնայի, որ ի՞նչ անեի:

ՔՆԱՐԻԿ – Նա արժանի չէ, ավտոդ վերցրու ձեռքից, խնդրում եմ:

ՄԱՐՏԻՆ – Դա էլ իմ ավտոն չի, իր ավտոն է, նվիրել եմ իրեն, ո՞նց վերցնեմ, Քնարիկ: Ե՛վ մեզ է ծառայում, և՛ ձեզ, գոհ չե՞ս: Արուսը գոհ է: Ի՞նչ մի հաճելի բան է առավոտից իրիկուն ավտո քշելը: Խիղճն էլ լավ բան է, չէ՞... Ի սեր Աստծո, վերջացրեք էդ պատմությունը: Քնարիկ, ամոթ է, Պարզևն էդ մարդը չի: Եթե դուք եղպիսի բան անեք, ես ի՞նչ սրտով պիտի թողնեմ գնամ: Դու ինձ հավատա, ինչո՞ւ ես ինչ որ մի հիմարի ասածի հավատում:

ՔՆԱՐԻԿ – Ես ոչ մեկի չեմ հավատում, ես ինձ եմ հավատում:
 Վաղուց է կապված եղել, ես ուշ եմ իմացել, դա է վիրավորական:

ՄԱՐՏԻՆ – Ո՞ւմ հետ է կապված, է՛, ո՞ւմ... Դե ասա, դա իմանամ, չնայած գիտես, որ ասես էլ՝ չեմ հավատա:

ՔՆԱՐԻԿ – Ես էլ չեի հավատում:
 ՄԱՐՏԻՆ – Ո՞վ է, դե ասա, ո՞ւմ հետ է կապված, ինչո՞ւ ես ինձ-
 ցից թաքցնում:
 ՔՆԱՐԻԿ – Ո՞նց ասեմ, որ չեմ կարողանում ասել:
 ՄԱՐՏԻՆ – Եթե ինձ չասես, բա ո՞ւմ պիտի ասես:
 ՔՆԱՐԻԿ – Ոչ մեկին:
 ՄԱՐՏԻՆ – Զնարիկ, բայց ես զարմանում եմ, որ դու Պարզկին
 կասկածում ես, չնեղանա:
 ՔՆԱՐԻԿ – Ես գիտեի, որ դու էդպես պիտի ասես: Չեմ կաս-
 կածում, ինչո՞ւ կասկածեմ, եթե հաստատ գիտեմ:
 ՄԱՐՏԻՆ – Է՛, հոգնեցրիր արդեն... Դե ասա, ես էլ իմանամ,
 ինչո՞ւ չես ասում:
 ՔՆԱՐԻԿ – Ո՞նց ասեմ, կարծում ես հե՞շտ է:
 ՄԱՐՏԻՆ – Ասա, կտեսնես, որ էդպիսի բան չկա, երդվում եմ,
 սուտ եմ ասել, բամբասել եմ, չեմ հավատում:
 ՔՆԱՐԻԿ – Ես էլ չեի հավատում, բայց հիմա ո՞նց չհավատամ,
 եթե աչքովս եմ տեսել: Էլի չհավատա՞մ...
 ՄԱՐՏԻՆ – Չէ՛, մի՛ հավատա... Դա ի՞նչ աչքով տեսնելու բան
 է... Ուրեմն ես Պարզկին նո՞ր եմ ճանաչում:
 ՔՆԱՐԻԿ – Չեմ ուզում, չեմ ուզում, որ դու իմանա: Քեզ խնա-
 յում եմ:
 ՄԱՐՏԻՆ – Հետաքրքիր է՝ ինձ ինչո՞ւ ես խնայում: Էս աշխար-
 հում գոնե մի մարդ պիտի ունենա՞ս, որին հավատաս, թե՞ չէ... Պար-
 զկին չհավատամ, գնամ ո՞ւմ հավատամ: Ո՞ւմ, է՛, ո՞ւմ... Վիրա-
 վորվում եմ, այ... Ուրեմն դու ինձ չես վստահում, եթե չես ասում:
 Ծի՞շտ է...
 ՔՆԱՐԻԿ – Չգիտեմ:
 ՄԱՐՏԻՆ – Մի քիչ շատ չերկարացրի՞նք: Նրանց էլ չէր կարելի
 եղբան սպասեցնել էն սենյակում: Դե լավ, չես ուզում՝ մի ասա:
 ՔՆԱՐԻԿ – Ախր չասել էլ չեմ կարող:
 ՄԱՐՏԻՆ – Դե եթե չես կարող, ասա, վա՛յ... Մարդ եթե իր մեջ
 գաղտնիք է պահում, գիշերը քունը չի տանում: Մեկնումեկին ասում է,
 նոր է հանգստանում:
 ՔՆԱՐԻԿ – Ընդհակառակը, եթե ասեմ՝ ես ինձ չեմ ներելու:

ՄԱՐՏԻՆ – Ում ես ասում, որ ներես կամ չներես: Հիմա նրանք էլ էնտեղ են իրենց վատ զգում: Արժե՞ր էդքան սպասեցնել, ասա:

ՔՆԱՐԻԿ – Զեզ եմ խնայում, անկեղծորեն:

ՄԱՐՏԻՆ – Արդեն երկրորդ անգամ ես ասում նույն բանը: Ինձ ինչն՞ էս խնայում, բա ես չիմանա՞մ ով է էդ լիրբը, ո՞ւմ հետ է կապված...

ՔՆԱՐԻԿ – Արուսի...

ՄԱՐՏԻՆ – Ո՞ւմ...

ՔՆԱՐԻԿ – Արուսի...

ՄԱՐՏԻՆ – Ո՞ւմ...

ՔՆԱՐԻԿ – Արուսի...

ՄԱՐՏԻՆ – Արուսն ո՞վ է... Ի՞նչ Արուս...

ՔՆԱՐԻԿ – Արուսի... Քո կնոջ...

ՄԱՐՏԻՆ – (Յնգվում է, աչքերը լայնանում են) Քնարիկ, էդ ի՞նչ ես ասում... Գժվե՞լ ես... Էդ ի՞նչ ես ասում, Քնարիկ... Դու քո ասածին հավատո՞ւմ ես:

ՔՆԱՐԻԿ – Երանի չհավատայի:

ՄԱՐՏԻՆ – (Ուշքի գալով) Ո՞վ, Պարզե՞ն է Արուսի հետ:

ՔՆԱՐԻԿ – Հա:

ՄԱՐՏԻՆ – Իմ կնոջ...

ՔՆԱՐԻԿ – Հա...

ՄԱՐՏԻՆ – Ո՞վ ասաց:

ՔՆԱՐԻԿ – Ես եմ ասում:

ՄԱՐՏԻՆ – Խելքդ բոցրե՞լ ես:

ՔՆԱՐԻԿ – Հա:

ՄԱՐՏԻՆ – Դու քո ասածին հավատո՞ւմ ես:

ՔՆԱՐԻԿ – Ես չե՛ի ուզում ասել, դու ստիպեցիր:

ՄԱՐՏԻՆ – Բա չե՞ս վախենում, որ հանկարծ ես էլ հավատամ:

ՔՆԱՐԻԿ – Վախենում եմ:

ՄԱՐՏԻՆ – Բա ինչն՞ ասացիր:

ՔՆԱՐԻԿ – Չհավատաս, խնդրում եմ, սխալ արեցի: Ես ապուշություն արեցի, սուտ է, երդվում եմ, եղպիսի բան չկա: Չկա՛, չկա՛...

ՄԱՐՏԻՆ – Բա որ չկա, ինչն՞ ասացիր:

ՔՆԱՐԻԿ – Որովհետև... (Փղձկում է) Կա...

ՄԱՐՏԻՆ – (Հեռով) Ասել ես՝ պիտի ապացուցես: Հիմա կանչում եմ, ինչ որ ինձ ասացիր, իրենց ներկայությամբ պիտի ասես:

ՔՆԱՐԻԿ – (Կառչելով Մարտինին) Խնդրում եմ, չկանչես, չեմ ասի:

ՄԱՐՏԻՆ – Բա որ չես ասի՝ ինձ ինչո՞ւ ասացիր:
 ԲՆԱՐԻԿ – Քեզ չէի կարող չասել:
 ՄԱՐՏԻՆ – Չէ՛, էդպիսի կարգ չկա, ինչ որ ինձ ասել ես, իրենց մոտ էլ պիտի ասես, Քնարիկ:
 ԲՆԱՐԻԿ – Չե՛մ ասի, խնդրում եմ...
 ՄԱՐՏԻՆ – Չէ, խնդրելով չի, է՛... Ես էլ խնդրում եմ, որ ասես:
 ԲՆԱՐԻԿ – (Շարունակելով կառչած մնալ) Չեմ ասի:
 ՄԱՐՏԻՆ – Կասես:
 ԲՆԱՐԻԿ – Չե՛մ ասի:
 ՄԱՐՏԻՆ – (Ավելի ու ավելի խոժոռվելով) Քնարիկ...
 ԲՆԱՐԻԿ – Չէ՛, չե՛մ ասի:
 ՄԱՐՏԻՆ – Հանգստացիր:
 ԲՆԱՐԻԿ – Դու նրանց ես հավատալու, ինձ չես հավատալու:
 ՄԱՐՏԻՆ – (Կատաղությամբ հագիլ գսպած) Ես ոչ մեկիդ չեմ հավատալու, ինչ որ ճիշտն է, ես դրան եմ հավատալու: Թող գան, տեսնեն իրենք ինչ են ասում:
 ԲՆԱՐԻԿ – Ես գնում եմ, չկանչես:
 ՄԱՐՏԻՆ – Ո՞ր ես գնում, ի՞նչ գնալ... Էս ի՞նչ է ասում... Հո խաղ չե՞նք անում: Մինչև իրենց երեսին չասես, ինչ որ ինձ ես ասել քեզ քաց թողնող չկա:
 ԲՆԱՐԻԿ – Խնդրում եմ...
 ՄԱՐՏԻՆ – Չէ՛ ասացի... Աչքերդ մաքրիր...
 ԲՆԱՐԻԿ – Չէ, չէ՛, չեմ ասի...
 ՄԱՐՏԻՆ – Կասես...
 ԲՆԱՐԻԿ – Չե՛մ ասի...
 ՄԱՐՏԻՆ – Ո՞նց թե՛ չեմ ասի. Ասում եմ՝ կասես...
 ԲՆԱՐԻԿ – Ասում եմ՝ չեմ ասի...
 ՄԱՐՏԻՆ – Էդպիսի բան չկա, Քնարիկ... Ուզես էլ՝ պիտի ասես, չուզես էլ... Կանչում եմ...
 ԲՆԱՐԻԿ – Չկանչես...
 ՄԱՐՏԻՆ – (Խստանալով) Քեզ հավաքիր, Քնարիկ... Էլ չենք խոսում, չենք խոսում, Քնարիկ, վերջ, վերջ... Կանչում եմ... (Պարզևն այլայլված ընկնում է ներս):
 ՊԱՐԳԵՎ – (Ահագնացող աղաղակ-տագնապով) Մարտին, Արո՛ւսը...
 ՄԱՐՏԻՆ – (Թափահարվելով կանգնած տեղում, Քնարիկին ակամա հեռու հրելով իրենից, ահաբեկված) Արուսն ի՞նչ... (Պարզևն

հեռուից նետվում է կից սենյակը: Քնարիկը հեծկլտոցով իրեն դուրս է գցում: Բենը դատարկվում է):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս

Նույն հյուրասենյակը: Մարտինն ու Պարզևը Արուսին թևանցուկ, զգուշավոր քայլերով ուղեկցում են ներս: Ճակատին սրբիչ է փաթաթված: Նստեցնում են:

ԱՐՈՒՄ – Շնորհակալություն:

ՄԱՐՏԻՆ – (Կնոջ վրա հակված) Հիմա ո՞նց ես, լավ ես, չէ՞:

ՊԱՐԳԵՎ – Լավ է, բա ինչ է...:

ԱՐՈՒՄ – Մի տեսակ շշմած եմ:

ՊԱՐԳԵՎ – Ոչինչ, դա էլ կանցնի: Էլ ոչ հուզվել, ոչ բան...:

ՄԱՐՏԻՆ – Բայց էդ ո՞նց պատահեց, է՛, որ էդպես եղավ:

ԱՐՈՒՄ – Գլուխս պտտվեց հանկարծ: Ուրիշ բան չեմ հիշում:

Մեկ էլ են եմ հիշում, որ աչքերս բացեցի, տեսա Պարզևն ու դու կանգնած եք գլխավերև:

ՊԱՐԳԵՎ – Հեռուստատեսությամբ ասել էին, որ էսօր վատ օր է լինելու: Կպատահի... Անցավ, գնաց... Ճիշտն ասած, առավոտվանից ես էլ ինձ լավ չեմ զգում: Չգնա՞մ էդ բժշկի գրած դեղերը բերեմ:

ԱՐՈՒՄ – Կգնաս, շտապ չի:

ՊԱՐԳԵՎ – (Մարտինին) Չգնա՞մ:

ՄԱՐՏԻՆ – Արուսի՜ն հարցրու:
 ՊԱՐԳԵՎ – Ասում է՝ շտապ չի:
 ՄԱՐՏԻՆ – Դե որ շտապ չի, մի գնա, հետո կգնաս:
 ՊԱՐԳԵՎ – Էսօր դու ո՞նց ես զգում:
 ՄԱՐՏԻՆ – Ես չեմ էլ զգում, թե ինչ եմ զգում, ոնց որ անկշռե-
 լիություն մեջ լինեմ:
 ԱՐՈՒՄ – Քնարիկն ի՞նչ էր ասում:
 ՄԱՐՏԻՆ – Ոչ մի բան առանձնապես:
 ԱՐՈՒՄ – Դու էլ մեզնի՞ց ես թաքցնում:
 ՊԱՐԳԵՎ – Լավ էլի, Արուս, դրա ժամանա՞կն է, որ հարցնում
 ես:
 ԱՐՈՒՄ – (Մարտի՜ն) Չե՞ս ասում:

 ՄԱՐՏԻՆ – Կգա, իր ներկայությամբ կասեմ:
 ԱՐՈՒՄ – Ինչ որ իր ներկայությամբ պիտի ասես, հիմա ասա:
 ՄԱՐՏԻՆ – Մինչև դու քեզ լավ չզգաս, ոչ մի բան էլ չեմ ասի:
 ՊԱՐԳԵՎ – Ճիշտ է ասում:
 ԱՐՈՒՄ – Ես արդեն ինձ լավ եմ զգում: (Սրբիչը հանում է)
 Ազնիվ խոսք, չե՞ս հավատում:
 ՄԱՐՏԻՆ – Հավատում եմ, համբերիր, կասեմ:
 ՊԱՐԳԵՎ – Արո՛ւս, հիմա դա՞ է կարևորը:
 ԱՐՈՒՄ – Դե որ կարևոր չի, թող ասի:
 ՄԱՐՏԻՆ – Սպասիր, խելքս գլուխս գա, հետո...
 ՊԱՐԳԵՎ – Ես գնամ, առաջին հարկի դեղատնից դեղերն առ-
 նեմ, գամ:
 ՄԱՐՏԻՆ – Սպասիր, փո՛ղ տամ:
 ՊԱՐԳԵՎ – Ուրեմն ինձ մոտ փող չկա՞: Էլի քո տվածն է, ի՞նչ
 տարբերություն:
 ԱՐՈՒՄ – Չուշանաս:
 ՊԱՐԳԵՎ – Չէ, չեմ ուշանա: (Գնում է):
 ՄԱՐՏԻՆ – Կարոտել էի, ո՞նց էի կարոտել...
 ԱՐՈՒՄ – Ո՞ւմ...
 ՄԱՐՏԻՆ – Քեզ...
 ԱՐՈՒՄ – Մե՛նակ դո՞ւ էիր կարոտել, ուրեմն ես քեզ չէի՞ կարո-
 տել:
 ՄԱՐՏԻՆ – Հավատա՞մ...
 ԱՐՈՒՄ – Ուրեմն առանց քեզ կյանք կա՞:
 ՄԱՐՏԻՆ – Չկա՞...

ԱՐՈՒՄ – Իբր դու չգիտե՞ս... (Համբուրում է ամուսնուն):

ՄԱՐՏԻՆ – Քեզ քանի անգամ եմ տեսել երազում, ասե՞մ...

ԱՐՈՒՄ – Քանի՞ անգամ...

ՄԱՐՏԻՆ – Երկի մի տասը, տասնհինգ անգամ... Շուտ էի քնում, որ քեզ տեսնեմ: Որ օրը քեզ տեսնում էի երազում, մյուս օրը ռեստորանում հատուկ նշում էի ընկերներինս հետ: (Գրպանից օրացույց է հանում) Նայիր... Որտեղ կես եմ դրել, երազում քեզ տեսած օրերն են... Նայիր, նայիր. մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը... տասնմեկ, չէ, տասը, հետո տասնմեկ... տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց...

ԱՐՈՒՄ – Ես քեզ ավելի շատ եմ տեսել, քան դու ինձ:

ՄԱՐՏԻՆ – Լո՞ւրջ ես ասում:

ԱՐՈՒՄ – Դեռ կասկածո՞ւմ էլ ես...

ՄԱՐՏԻՆ – Ինձ շա՞տ ես սիրում, Արո՛ւս:

ԱՐՈՒՄ – Էդ ի՞նչ հարց էր... Էն ժամանակ չես հարցրել, նո՞ր ես հարցնում: Ի՞նչ էր ասում...

ՄԱՐՏԻՆ – Ո՞վ...

ԱՐՈՒՄ – Քնարիկը...

ՄԱՐՏԻՆ – Ինչո՞ւ ես անհանգստանում:

ԱՐՈՒՄ – Չէ, չեմ անհանգստանում, ուղղակի հարցնում եմ:

ՄԱՐՏԻՆ – Կասեմ: Մի անգամ էլ Պարզկի հետ եմ քեզ տեսել երազում:

ԱՐՈՒՄ – Պարզկի՞...

ՄԱՐՏԻՆ – Հա, ինչո՞ւ ես զարմանում... Արո՛ւս, դու Արո՞ւսն ես:

ԱՐՈՒՄ – (Չարմացած) Մարտին, քեզ ի՞նչ պատահեց... (Ծիծաղելով) Գժվեցի՞ր...

ՄԱՐՏԻՆ – Չէ, առաջ ես դու Արուսն եղել, հիմա դու Արուսը չես:

ԱՐՈՒՄ – Կատա՞ղ ես անում:

ՄԱՐՏԻՆ – Բա ի՞նչ եմ անում... Երանի նրանց, որ խաբված ապրում են:

ԱՐՈՒՄ – Դա ինչո՞ւ ես ասում:

ՄԱՐՏԻՆ – Հենց էնպես... Առա՛ջ ես դու Արուսն եղել, հիմա դու Արուսը չես:

ԱՐՈՒՄ – (Ընկնելով վզովը) Բա ո՞վ եմ, որ Արուսը չեմ:

ՄԱՐՏԻՆ – Ես չգիտեմ, թե ով ես, բայց Արուսը չես:

ԱՐՈՒՄ – Մարտին, դու Մարտի՞նն ես...
 ՄԱՐՏԻՆ – Եթե դու Արուսը չես, ես էլ ո՞նց Մարտինը լինեմ:
 ԱՐՈՒՄ – Դե լավ, էլի, հոգո՞ւս հետ ես խաղում: Հիմա չե՞ս
 ասում, թե ինչ էր ասում:
 ՄԱՐՏԻՆ – Ո՞վ...
 ԱՐՈՒՄ – Քնարիկը... Ինչո՞ւ ես էդպես նայում աչքերիս:
 ՄԱՐՏԻՆ – Կարոտս եմ առնում քեզնից: Ուզո՞ւմ ես՝ դու էլ իմ
 աչքերի մեջ նայիր: Նայիր, դե նայիր, ինչո՞ւ չես նայում:
 ԱՐՈՒՄ – Թող ձեռքս, ցավեցրիր: Նայում եմ...
 ՄԱՐՏԻՆ – Նայիր, ինչո՞ւ չես նայում:
 ԱՐՈՒՄ – Վա՛յ, նայում եմ...

ՄԱՐՏԻՆ – Նայում ես, բայց էնպես ես նայում, որ դու ինձ
 տեսնես, ես քեզ չտեսնեմ: Նայիր, կարգին նայիր:
 ԱՐՈՒՄ – Նայում եմ...
 ՄԱՐՏԻՆ – Չե՛, էդ Արուսը չի նայում, էդ դու ես նայում:
 ԱՐՈՒՄ – Բա ես ո՞վ եմ՝ Արուսը չե՞մ: Կատակը մի կողմ, չե՞ս
 ասում, թե Քնարիկն ինչ էր ասում:
 ՄԱՐՏԻՆ – Դու ինձանից լավ գիտես:
 ԱՐՈՒՄ – Ի՞նչ... Ի՞նչ գիտեմ:
 ՄԱՐՏԻՆ – Ինչ որ գիտես:
 ԱՐՈՒՄ – Էդ ի՞նչ է, որ ես գիտեմ, դու չգիտես:
 ՄԱՐՏԻՆ – Ես էլ գիտեմ, բայց դու չգիտես, որ ես գիտեմ:
 ԱՐՈՒՄ – Դե ասա, որ իմանամ:
 ՄԱՐՏԻՆ – Սխալ աշխարհ ենք եկել, սա մեր աշխարհը չի:
 Առողջությամբ նայիր, որ էլի վատ չզգաս:
 ԱՐՈՒՄ – Դե ասա, որ վատ չզգամ:
 ՄԱՐՏԻՆ – Պարզևր թող գա, կասեմ:
(Մտնում է Պարզևր՝ դեղորայքի տուփերը ձեռքին):
 ՊԱՐԳԵՎ – Բերի:
 ԱՐՈՒՄ – Եկավ, դե ասա:
 ՄԱՐՏԻՆ – Համբերիր, կասեմ:
 ՊԱՐԳԵՎ – Ի՞նչ է եղել:
 ԱՐՈՒՄ – Ասում եմ՝ Քնարիկն ի՞նչ էր ասում, չի ուզում ասի:
 ՊԱՐԳԵՎ – Դու է՛լ... Ինչ պիտի ասած լինի, է՛, որ հետաքր-
 քրվում ես: Ես ջղայնացա, որ Մարտինի հետ առանձին էր ուզում
 մնալ:

ՄԱՐՏԻՆ – Ապրես... Նեղություն տվինք մարդուն:
 ՊԱՐԳԵՎ – Նեղությունս ո՞րն է... Դու հո չէի՞ր գնալու...
 (Արուսիկ) Որի՞ց տամ...
 ԱՐՈՒՄ – Դեղ չեմ սիրում, եթե վատ զգամ, կասեմ:
 ՄԱՐՏԻՆ – Դե խմիր, որ վատ չզգաս:
 ԱՐՈՒՄ – Առայժմ չեմ ուզում:
 ՊԱՐԳԵՎ – (Ակնարկելով ձեռքի դեղորայքը) Որտե՞ղ դնեմ:
 ԱՐՈՒՄ – Որտեղ կուզես... Պահարանի դարակում:
 ՊԱՐԳԵՎ – Էստե՞ղ...
 ԱՐՈՒՄ – Հա: (Պարզև տեղավորում է քերած դեղորայքի տուփերը) Պարզև եկավ, էլի չե՞ս ասում: Բնարիկն ի՞նչ էր ասում:

ՄԱՐՏԻՆ – Ասաց՝ Պարզևից բաժանվում եմ: Ասացի՛ եթե թող-
 նող լինի, լավ էլ կբաժանվես:
 ՊԱՐԳԵՎ – Ես գիտեի, որ դրա համար էր եկել:
 ԱՐՈՒՄ – Ամո՞ք, ամո՞ք իրեն... Չասա՞ց, թե ինչու է
 բաժանվում:
 ՄԱՐՏԻՆ – Ասաց:
 ՊԱՐԳԵՎ – Ի՞նչ ասաց:
 ՄԱՐՏԻՆ – Ասաց՝ Պարզևը կապված է ուրիշի հետ:
 ԱՐՈՒՄ – Վա՛յ, վա՛յ, չի՞ ամաչում դա... Ո՞ւմ, ո՞ւմ հետ է
 կապված:
 ՄԱՐՏԻՆ – Շատ ես անհամբեր:
 ՊԱՐԳԵՎ – Այ, դա պիտի ասեր, որ իմանայիր ցնդել է: Արուս,
 լսեցի՞ր...
 ԱՐՈՒՄ – Բա չլսեցի՞... Ո՞ւմ մտքով կանցներ... Պարզևի մեծ
 ամուսնուն էլ խանդե՞ն, բա դա անհարմար չի՞ զգում: Հետո՞...
 ՄԱՐՏԻՆ – Ասացի՛ ո՞վ է էդ լիրբը, ո՞ւմ հետ է կապված: Ասաց՝
 Արուսի...
 ԱՐՈՒՄ – Ո՞ւմ... Ո՞ւմ հետ է կապված...
 ՄԱՐՏԻՆ – Բեզ հետ...
 ԱՐՈՒՄ – (Ծնկին խփելով) Վա՛յ, մամա... Պարզև, լսեցի՞ր...
 ՊԱՐԳԵՎ – Լսեցի, բա ինչ արի...
 ԱՐՈՒՄ – Դո՞ւ ինչ ասացիր:
 ՄԱՐՏԻՆ – Ասացի՛ Արուսն ո՞վ է, ի՞նչ Արուս...
 ԱՐՈՒՄ – Ուրի՞շ Արուսի մասին էր ասում...
 ՄԱՐՏԻՆ – Չէ, քո...

ԱՐՈՒՄ – (Նորից խփելով ծնկին) Վա՛յ, մամա՛, մամա՛...

ՊԱՐԳԵՎ – (Որ քարացել էր, մեկից ընկնելով Մարտինի գիրկը) Բա դու չտեսա՞ր, որ խելքը թոցրել է խեղճ կինս: (Հնկեկում է):

ՄԱՐՏԻՆ – (Կարծես պայծառանալով) Այսի՞նքն... Չհասկացա...

ՊԱՐԳԵՎ – Գիտե՞ս քանի բժշկի եմ դիմել... Նոր էիր եկել, չէի ուզում տրամադրություն դնել քեզ, ե՛ս եմ մեղավոր, ե՛ս...

ՄԱՐՏԻՆ – (Մոլորված) Ես էլ շշմել էի, ասում էի՝ Քնարիկն եկել է, ինձ էս ի՞նչ է ասում օրը-ցերեկով:

ԱՐՈՒՄ – Պարզևր քա քեզ ինչն՞ էր ասում խելքը թոցրել է: Ինձ ասել էր, որ հիվանդ է: Խե՛ղճ Քնարիկ... (Բարձրացնում է լացի ձայնը՝ ձայնակցելով Պարզևրին):

ՄԱՐՏԻՆ – Հիմա ստիպում եք, որ ե՞ս էլ լաց լինեմ: (Ընդվզելով) Բա եթե ես լաց լինեմ՝ ո՞նց լաց կլինեմ... Ներսս լիքն արցունք է: Ի՞նձ եք ձեռ առնում, թե՞ ձեզ:

ՊԱՐԳԵՎ – Ինչն՞ էս եղախի քան ասում:

ՄԱՐՏԻՆ – Բա որ դուք եղպես լաց եք լինում, ես ի՞նչ անեմ:

ՊԱՐԳԵՎ – Քե՞զ ինչ է եղել:

ՄԱՐՏԻՆ – Ինչ որ եղել է, ինձ է եղել, ձեզ ի՞նչ է եղել: Երևի ձեզ թվում է, թե իմ կրծքի տակ քա՞ր է դրված: Էդ քարը ես հիմա հանեմ, ո՞ւմ գլխին տամ... Ի՞նչ, իմ գլխին պիտի տա՞մ: Էդ ի՞նչ խաղեր եք տալիս:

ՊԱՐԳԵՎ – Մարտին, ինձ ներիք:

ՄԱՐՏԻՆ – Ինչի՞ համար քեզ ներեմ: Ի՞նչ ես արել, որ ներեմ: Դու պիտի քեզ չներես, դո՛ւ... Թեկուզ աշխարհն ինձ ների, եթե ես ինձ չեմ ներում: Ներողն Աստվածն է, Աստված թող ների, իմ ներելով կամ չներելով է...

ԱՐՈՒՄ – Ճիշտ է ասում:

ՊԱՐԳԵՎ – (Ատամները կրճտացնելով) Հիմա ես ի՞նչ անեմ, դուք ասեք... Գնամ, բռնեմ, սպանե՞մ դրան...

ԱՐՈՒՄ – (Փակելով նրա ճանապարհը) Պարզև, խնդրում եմ:

ՄԱՐՏԻՆ – Պարզև, հետ արի... Հետ արի, Պարզև... Հանգստացիր...

ՊԱՐԳԵՎ – Ո՞նց հանգստանամ, ո՞նց է, ո՞նց...

ԱՐՈՒՄ – (Մարտինին) Չթողնես, չթողնես գնա...

ՄԱՐՏԻՆ – Չէ՛, Պարզև, չե՛ս գնալու:

ՊԱՐԳԵՎ – Չէ՛, պիտի գնամ:

ԱՐՈՒՄ – (Աղերսանքով) Պա՛րգև...

ՄԱՐՏԻՆ – (Բռնելով Պարգևի թևից) Սպասիր, ասում եմ...

ԱՐՈՒՄ – Պա՛րգև, խնդրում եմ...

ՊԱՐԳԵՎ – Ես էլ խնդրում եմ, որ չխնդրես:

ԱՐՈՒՄ – Մարտի՛ն, չթողնե՛ս...

ՄԱՐՏԻՆ – Պա՛րգև, ինձ չե՞ս լսում:

ՊԱՐԳԵՎ – Եթե քեզ չլսեմ, էլ ո՞ւմ պիտի լսեմ:

ՄԱՐՏԻՆ – Մի բռայե՛...

ԱՐՈՒՄ – (Շարունակ փակելով նրա ճանապարհը, թախան-
ծափն) Պարգև՛...

ՊԱՐԳԵՎ – Մարտին, թո՛ղ, թո՛ղ ձեռքս...

ՄԱՐՏԻՆ – Չէ՛, ասացի...

ՊԱՐԳԵՎ – Ես մինչև իմ արածը չանեմ, չեմ հանգստանա:
(Լացախառն) Խեղճ երեխեքս էլ էնտեղ եմ տանջվում դրա ձեռքին:
Անցած անգամ էլ բարձրացել էր, որ իրեն լուսամուտից զցի: Լավ էր,
շուտ նկատեցի, վրա հասա, բռնեցի... Վարկաբեկվել եմ շենքի բնա-
կիչների մոտ:

ԱՐՈՒՄ – Հիվանդ կին է, ինչո՞ւ ես սրտիդ էդքան մոտ ընդու-
նում: Եթե ինձ նման բարոյական կնոջն է էդպիսի բան ասել, նրանից
էլ ի՞նչ սպասես:

ՊԱՐԳԵՎ – Բա որ խելքը գլխին լիներ, նա էդպիսի բան կա-
սե՞ր: Էն էլ ո՞ւմ՝ Արուս, քե՞զ... Մարտին, բա դու չտեսա՞ր, որ գիժ է:
Բժիշկներն էլ հույս չեն տալիս: Ով ասում է՝ ես կբուժեմ, տեսնում եմ,
որ սուտ է ասում, իր փողի համար է ասում:

ՄԱՐՏԻՆ – Ինչ որ պետք է, ես կտամ, մի անհանգստացիր:

ԱՐՈՒՄ – Պարզ չի՞, որ նրանց փողն է պետք, մարդը չի պետք:

ՄԱՐՏԻՆ – (Ինքն իր հետ) Գլուխ չեմ հանում...

ՊԱՐԳԵՎ – Իբր ես գլուխ եմ հանում, որ դու գլուխ հանես:

ՄԱՐՏԻՆ – Բոլոր դեպքերում զգույշ եղեք:

ՊԱՐԳԵՎ – Գիշերները քնո՞ւմ եմ, որ զգույշ լինեմ: Մի օր էլ
գիշերվա կեսին, տեսնեմ եկել, կանգնել է գլխավերևս, ուզում է ինձ
խեղդի:

ՄԱՐՏԻՆ – Լավ է՛ չի խեղդել:

ՊԱՐԳԵՎ – Քունը գլխիս ուզում էի ե՛ս բռնեմ իրեն խեղդեմ,
մեկ էլ երեխաներս լացուկո՞ծը դրին:

ԱՐՈՒՄ – Վա՛յ, ի՞նչ մեղք ես... Ես հիմա երեխաների մասին եմ մտածում:

ՊԱՐԳԵՎ – Ինքը տանջվում է, ախր երեխաներս էլ են տանջվում իր հետ: Գիտեն, որ իրենց մայրը հիվանդ է, բայց ի՞նչ անեն, իրենց մայրն է: Հենց ի՞նձ հետ պիտի կատարվեր...

ՄԱՐՏԻՆ – Եթե խելքը գլխին լիներ, նա ինձ հո եղպիսի բան չէր ասի...

ՊԱՐԳԵՎ – Էն էլ՝ ո՞ւմ... Քե՞զ... Երանի մենակ քեզ ասեր, երեխաներին էլ է ասել... Նրանց անմեղ հոգին էլ է պղտորում:

ԱՐՈՒՄ – (Չգսպելով լացը) Երեխաներն ի՞նչ մեղք ունեն...

ՊԱՐԳԵՎ – Սկզբում ասում էի՝ ջահել ժամանակ չի խանդել, էս հիմա՞ է իմ կինն ինձ խանդում... Հետո տեսա ի՞նչ խանդ... Գժվել է կինս, առավոտից իրիկուն անընդհատ նույն բանն է ասում, թե ես իբր Արուսի հետ եմ:

ՄԱՐՏԻՆ – Էդ ի՞նչ տեսակ գիժ է, որ ուրիշ բան չի ասում, միայն դա է ասում:

ՊԱՐԳԵՎ – Նա էլ եղ տեսակ հիվանդ է, ի՞նչ ասեմ... Բժիշկներն ասում են, որ դրանք մի լարի վրա են ընկնում, էլ պոկ չեն գալիս: Մի տարի առաջ էլ, դու էստեղ չէիր, Արուսն էլ չգիտի, բարձրացել էր մեր վերևի հարևանի տուն, նրա կնոջ հետ էր տեսարան սարքել: Նրա ամուսինն էլ քաղաքում չի: (Մտածողոր) Ի՞նչ ասեմ... Խանդի հողի վրա գժվել է, դեմն առնել չի լինում, խայտառակ եմ եղել շենքով մեկ:

ՄԱՐՏԻՆ – Քնարիկն էլ մեղք է, նրան էլ կարելի է հասկանալ:

ԱՐՈՒՄ – Մեղք է, բա ինչ է...

ՊԱՐԳԵՎ – Բա ես ի՞նչ եմ, որ մեղք չեմ: Նրան ո՞նց հասկանամ, որ իմ վիճակն էլ մի վիճակ չի: Վրայից էլ չի երևում, որ եղ տեսակ հիվանդ է, դա է ցավը: Վերջը գլխին մի փորձանք պիտի բերի, էս ընկնեն կրակը:

ԱՐՈՒՄ – Երանի իմանամ, եղ ի՞նչ եղավ, է՛, եղ ի՞նչ եղավ, որ Քնարիկին եղպիսի բան պատահեց հանկարծ:

ՊԱՐԳԵՎ – Հենց ի՞նչ կնոջ հետ պիտի պատահեր:

ԱՐՈՒՄ – Մի կողմից էլ զայրանում եմ ախր, Քնարի՛կ, բա դու գետինը չե՞ս մտնում, որ եղպիսի բաներ ես ասում... Ո՛վ իմանա ինչ է կատարվում խեղճ աղջկա հետ:

ՄԱՐՏԻՆ – Բա ինձ հետ հիմա ինչ է կատարվում, Արո՛ւս, դու գիտե՞ս...

ՊԱՐԳԵՎ – Մեմակ Արուսից չեմ անհարմար զգում, Մարտին, քեզնից էլ եմ անհարմար զգում... Մարդ կա գծվում է՝ բարիանում է, սա էլ գծվել է՝ չարացել... **(Բռնկվելով)** Չէ՛, ես պիտի գնամ:

ՄԱՐՏԻՆ – Պարզև, ես քեզ խնդրում եմ, նստիր տեղդ:

ՊԱՐԳԵՎ – Հետը խոսում էիր, բա դու չէի՞ր զգում, որ դա քո իմացած Քնարիկը չի: Դրա համար չէի ուզում քեզ հետ առանձին մնար:

ՄԱՐՏԻՆ – Բայց կարելի էր, չէ՞, ինձ նախօրոք զգուշացնել:

ՊԱՐԳԵՎ – **(Արուսին)** Տեսա՞ր, տեսա՞ր, որ չի զգացել:

ԱՐՈՒՄ – Չի զգացել, իհարկե, չի զգացել...

ՊԱՐԳԵՎ – Մի երկու օր անցներ, ես պիտի ասեի, կարո՞ղ է չասեի, բայց շարքան ավելի շուտ եկավ, քան ուրբաթը:

ՄԱՐՏԻՆ – Էս ի՞նչ աշխարհ է, բան չեմ հասկանում:

ԱՐՈՒՄ – Մեզնից առաջ եկողները հասկացե՞լ են, որ մենք հասկանանք:

ՊԱՐԳԵՎ – Նոպան որ բռնում է, թող ու փախիր: Էս ի՞նչ փորձանք էր, որ եկավ իմ գլխին:

ԱՐՈՒՄ – Վա՛յ, Քնարիկ, էս օրվա օրը էս ի՞նչ արեցիր:

ՊԱՐԳԵՎ – **(Ատամները կրճտացնելով, լացախառն)** Հենց ախպորս գալո՞ւն պիտի զուգադիպեր:

ՄԱՐՏԻՆ – **(Մաստոդ)** Պարզև, նստիր տեղդ:

ԱՐՈՒՄ – Պարզև, հանգստացիր, խնդրում եմ: Երեխաներիդ մայրն է վերջապես... Նա հո չէր ուզի, որ ինքն էդպես լիներ: Վա՛յ, Քնարիկ, Քնարիկ... Վատ զգալս էլ մոռացա:

ՊԱՐԳԵՎ – Բժիշկն ասաց՝ անկանխատեսելի է, զգույշ եղիր: Բայց ո՞նց զգույշ լինեմ, է՛, ո՞նց... Տեսա՞ք, եկավ, ինչ արեց... Ես հիմա Մարտինից եմ անհարմար զգում:

ՄԱՐՏԻՆ – Իզուր... Քեզ տղամարդու պես պահիր:

ՊԱՐԳԵՎ – **(Լացակումած)** Ներողություն եմ խնդրում:

ՄԱՐՏԻՆ – **(Անակնկալի եկած)** Պարզև... Չե՞ս ամաչում:

ՊԱՐԳԵՎ – Դա էլ քո արած լավության փոխարե՞ն...

ՄԱՐՏԻՆ – Վերջացրու... Փոխանակ ես շնորհակալ լինեմ, որ առավոտից իրիկուն ծառայում ես ընտանիքիս, դո՞ւ ես շնորհակալ: Դու էստեղ ես, դրա համար եմ ես էնտեղ հանգիստ: Տուն-տեղ վստահել եմ քեզ, զնացել: Դա քի՞չ բան է: Վերջացրու:

ԱՐՈՒՄ – Պարզև, անհարմար է, ինչո՞ւ ես եղպիսի բաներ մտածում: Մենք ենք քեզնից շնորհակալ:

ՄԱՐՏԻՆ – (Ինքն իր հետ) Առաջ որ ասում էին՝ թող ոչ մի տղամարդ գլուխ չգովի, կնոջ մտքին ինչ որ եղավ, ուզեց՝ կանի, չէի հավատում:

ԱՐՈՒՄ – Պարզևի հետ դա ի՞նչ կապ ունի:

ՄԱՐՏԻՆ – Չէ, առհասարակ...

ՊԱՐԳԵՎ – Մարտին, երևի չես հավատա. ներողություն եմ խնդրում, շատ բան Արուսից էլ եմ թաքցրել, չեմ ուզեցել, որ իմանա: Բայց զգում էի, որ կնոջս հետ մի բան է կատարվում: (Հանկարծակի կանգնելով) Ես գնամ:

ՄԱՐՏԻՆ – Նստիր, կգնաս:

ԱՐՈՒՄ – Սեղան եմ սարքում, Պարզև, թողնես ո՞ւր գնաս:

ՊԱՐԳԵՎ – Գնամ, էլի կգամ:

ՄԱՐՏԻՆ – Նստիր ասում եմ...

ՊԱՐԳԵՎ – (Ատամները կրճատացնելով) Ո՞նց նստեմ, որ փշերի վրա եմ նստած: Ես հիմա գնամ, գիտեմ, թե դրան ինչ կանեմ: (Նետվում է դուրս):

ՄԱՐՏԻՆ – (Նրա ետևից) Էդ էր պակաս, որ դու Զնարիկի մազին դիպչես: Սպասիր, ես էլ եմ գալիս: (Գնում է):

(Հեռախոսի զանգ):

ԱՐՈՒՄ – (Վերցնելով լսափողը) Ալո, ո՞ւմ եք ուզում... Մխալ եք զանգահարել... (Փղձկում է՝ դնելով լսափողը) Ի՞նչ է լինելու սրա վերջը, չեմ հասկանում: (Չանազան ուտեստներ է շարում սեղանին: Մուտքի զանգ: Արագ սրբում է աչքերը՝ գնալով դեպի դուռը): Ո՞վ է:

ԶՆԱՐԻԿ – (Մտնելով, պայտասակը ուսից կախ) Ես եմ...

ԱՐՈՒՄ – Արի... Ինչո՞ւ ես եկել:

ԶՆԱՐԻԿ – Ամուսինդ է ինձ կանչել, ես չեմ եկել: (Նստում է):

ԱՐՈՒՄ – Իրենք էլ քո հետևից եկան: Դու քո արածիցդ զո՞հ ես, Զնարիկ:

ԶՆԱՐԻԿ – Փոխանակ էդ հարցը ես քեզ տամ, դո՞ւ ես ինձ տալիս:

ԱՐՈՒՄ – Հետևանքների մասին բա չե՞ս մտածում:

ԶՆԱՐԻԿ – Դու մտածիր, ինչո՞ւ պիտի ես մտածեմ:

ԱՐՈՒՄ – Դու իմ տուն ոտք դնելու իրավունք ունե՞ս, որ դեռ խոսում էլ ես: Ամուսինս տանը չի, կարող ես գնալ:

ՔՆԱՐԻԿ – Ոչինչ, կսպասեմ:

ԱՐՈՒՄ – Բայց դու ի՞նչ գիտես, թե երբ է գալու, որ ասում ես՝ կսպասեմ: Ուշ է գալու:

ՔՆԱՐԻԿ – Ոչինչ, ես չեմ շտապում:

ԱՐՈՒՄ – Դա ինձ չի հետաքրքրում՝ շտապում ես, թե չես շտապում... Ասում եմ՝ տանը չի, ազատ ես, կարող ես գնալ:

ՔՆԱՐԻԿ – Եթե պետք լինի, կգնամ:

ԱՐՈՒՄ – (Չարմացած) Վա՛յ, էնպես էլ պինդ-պինդ նստել է, կարծես իր տանը լինի: Ընտանիքս ես ուզում քայքայել, հա՞...

ՔՆԱՐԻԿ – Էդ ե՞ս եմ քո ընտանիքը քայքայում:

ԱՐՈՒՄ – Բա ո՞վ է քայքայում, ե՞ս եմ քայքայում:

ՔՆԱՐԻԿ – Ե՞ս եմ քո ամուսնու հետ կապվել, թե՞ դու ես իմ ամուսնու հետ կապվել, որ ինձ ես ասում...
 ԱՐՈՒՄ – Չի էլ ամաչում, գետիճն էլ չի մտնում: Լսողն էլ պիտի հավատա...
 ՔՆԱՐԻԿ – Սո՞ւտ եմ ասում, ասա՛... Սո՞ւտ եմ ասում...
 ԱՐՈՒՄ – Ամո՞թ քեզ, ամո՞թ... Ես քեզանից չեի սպասի...
 ՔՆԱՐԻԿ – Դե ասա, էլի, ասա... Մտքիդ մեջ ասա, ինձ մի ասա...
 ԱՐՈՒՄ – Վայ էն կնոջը, որ ինքը պիտի տղամարդուն խանդի: Կին ես՝ թող ամուսինդ քեզ խանդի, դու ինչո՞ւ ես իրեն խանդում:
 ՔՆԱՐԻԿ – (Ապշած) Ի՞նչ...
 ԱՐՈՒՄ – Ինչ որ լսում ես... Չի էլ ամաչում, կանգնել, երեսիս տես ինչ է ասում... Մարդուս հոգին մի թունավորի իզուր տեղը, Քնարիկ... Երկու-երեք օրով եկել է, որ երեսխաներից կարոտն առնի, գնա, փչացրիք էսօրվա օրը: Եթե ամուսինդ քեզ չի սիրում, ես եմ մեղավոր, հա՞... Կին ես, դե էնպես արա, որ սիրի:
 ՔՆԱՐԻԿ – Ես էդ արհեստին չեմ տիրապետում, դու ես տիրապետում: Դու չլինեիր, տես կսիրեր, թե չէր սիրի:
 ԱՐՈՒՄ – Վայ, ողորմելի... Ի՞նչ մեղք ես... Քեզ մխիթարում ես, հա՞... Մեղքը իմ մեջ մի որոնիր, է՛, քո մեջ որոնիր: Դե որ էդքան լավն ես, թող քեզ սիրի, ինչո՞ւ է ուրիշին սիրում:
 ՔՆԱՐԻԿ – Որովհետև էդ ուրիշը իր կինը չի, եթե իր կինը լիներ, նրան էլ չէր սիրի, էլի կզնար ուրիշի կսիրեր:
 ԱՐՈՒՄ – Ինչո՞ւ պիտի նա ինձ սիրի, ինձ իմ ամուսինն է սիրում, որ էնտեղ երազում էլ ինձ է տեսնում: Նա իմ ամուսնու ընկերն է, ամուսնուս ընկերն ինչո՞ւ պիտի ինձ սիրի, կամ իմ ամուսնու մահն մարդ ունեցողը ինչո՞ւ պիտի ուրիշ տղամարդու վրա նայի:

ՔՆԱՐԻԿ – Դրա՞ համար էդ ամեն ինչի վրայից անցար:
ԱՐՈՒՄ – Ո՞վ անցավ, ե՞ս անցա, թե՞ դու... Դեռ երես ունես խոստում էլ ես...

ՔՆԱՐԻԿ – Առանց տղամարդու երկու տարի էլ չդիմացա՞ր, եղբան դժվա՞ր էր:

ԱՐՈՒՄ – Էս լիրբն ինձ հետ էս ո՞նց է խոսում իմ տան մեջ: Բերանդ կարգին բաց արա, ինձ համբերությունից չհանես: **(Մեղանից ձեռքն ընկած թխվածքը շարտում է Քնարիկի վրա):**

ՔՆԱՐԻԿ – **(Կրեմնաված դեմքով)** Լիրբը դու ես... **(Վարվում է նույն կերպ՝ մաքրելով դեմքը):**

ԱՐՈՒՄ – **(Կրեմնաված դեմքով)** Էս լիրբն էս ինչ արեց... **(Մաքրելով դեմքը, հարձակվում է Քնարիկի վրա, իրար կառչած քաշ-քշվում են՝ փոփելով հատակին):**

ՔՆԱՐԻԿ – Թող ձեռքս, ասում եմ... Վախենում էիր, որ էլ տղամարդու երես չտեսնե՞ս... Ձեռքս չկծես... Քեզ չթվա, թե իմ մարդը քեզ սիրում է... Եթե նա ինձ չսիրեց, ոչ մեկին չի կարող սիրել... Եթե քեզնից նա էդ հաճույքը ստանում է, քեզ չթվա, թե սիրում է:

ԱՐՈՒՄ – Թող էդ հաճույքը քեզնից ստանար:

ՔՆԱՐԻԿ – Թողեցի՞ր, որ ստանար... **(Թավալվում են):**

ԱՐՈՒՄ – Էդ բոլորն ինչի՞ համար ես ասում, լիրբ... Ինձ հետ ի՞նչ կապ ունի... Ձեռքս թող...

ՔՆԱՐԻԿ – Դե դու իմ ձեռքը թող, որ ես էլ քո ձեռքը թողնեմ: Քեզ թվում է, թե ինչ որ դու իմ մարդու հետ արել ես, ես քո ամուսնու հետ չէի՞ կարող անել... Բա ինչո՞ւ չարեցի...

ԱՐՈՒՄ – Որովհետև իմ ամուսինը քեզ վրա էլ չի նայի: Նա բարոյական մարդ է, ամեն կնոջ հետ այդ քայլին չի գնա:

ՔՆԱՐԻԿ – Բա դու ո՞նց գնացիր:

ԱՐՈՒՄ – Ո՞վ է գնացել, լսիր, Քնարիկ, հո դու չե՞ս ցնդել:

ՔՆԱՐԻԿ – Ամուսինդ գնա, էնտեղ տանջվի քեզ համար, քո երեխաների համար, որ ընտանիք պահի, դու էստեղ ինչ ուզես անե՞ս:

ԱՐՈՒՄ – Լեզուդ քեզ քաշիր, ասում եմ: Դու իրավունք չունես իմ տան մեջ ինձ վիրավորելու:

ՔՆԱՐԻԿ – Շավարավոր տղամարդը վերացե՞լ էր էս աշխարհից, որ ամուսնուդ ընկերոջը բռնեցիր: Քո բուսական հաճույքի համար թքեցի՞ր ամեն ինչի վրա: Տղամարդ էր պետք՝ գնայիր, ուրիշ տղամարդ գտնեիր, լիքն են... Քեզ համար մե՞կ չէր, թե ով կլիներ:

ԱՐՈՒՄ – Լսիր, լսիր, ամոթ է, ամոթ, չեք կարողանում տղա-
մարդ պահել, շառն ուրիշի վրա մի գցեք:

ՔՆԱՐԻԿ – Ինձ տղամարդ չի պետք, տղամարդը քեզ է պետք,
ինձ ամուսին է պետք: Ամեն կին իրավունք չունի երեխա ունենալու:
Դու ինձնից ինչն՞վ ես ավել, է՛, ինչն՞վ ես ավել, որ ինձ թողեց, քեզ
վրա աչք գցեց:

ԱՐՈՒՄ – Ինձ մի հարցրու, զնա ամուսնուդ հարցրու:

ՔՆԱՐԻԿ – Իմ ամուսնուն չեմ հարցնելու, քո ամուսնուն եմ
հարցնելու:

ԱՐՈՒՄ – Ի՛... Իմ ամուսնու հետ դու ի՞նչ գործ ունես:

ՔՆԱՐԻԿ – Բա դո՛ւ, դու իմ ամուսնու հետ ի՞նչ գործ ունես:

ԱՐՈՒՄ – Քո ամուսինը իմ ամուսնու ընկերն է... Լիրբը դու
ես... Նա ինձ վրա աչք չի գցել, քեզ է թվացել:

ՔՆԱՐԻԿ – Հա՞... Աչքովս տեսածին էլ չհավատա՞մ:

ԱՐՈՒՄ – Քեզ է թվացել, թե ես եմ եղել, լիրբ:

ՔՆԱՐԻԿ – Դու էլ զիտես, որ լիրբը դու ես: Դու ինձնից ինչն՞վ
ես է ավել... Մենակ քամակդ չե՞ս հաստացրել, լիրբ... Արյունդ
գլխի՞դ էր տվել... Կրակն ընկել էր մե՞ջդ... Վառվո՞ւմ էիր...
Չդիմացար, հա՞, որ մարդդ գար: Բա մենք ո՞նց ենք դիմանում...

ԱՐՈՒՄ – Չեղբս չկ՞ծես, շուն...

ՔՆԱՐԻԿ – Շունը դու ես, շնացող լիրբ:

*(Մտնում են ամուսինները՝ ապշած իրենց առջև բացված
տեսարանից: Աղմուկը սաստկանում է: Ամուսինները նրանց
փորձում են բաժանել իրարից):*

ՄԱՐՏԻՆ – (Մաստող) Արո՛ւս...

ՊԱՐԳԵՎ – (Նույն ձևով) Քնարիկ...

ՄԱՐՏԻՆ – Արո՛ւս...

ՊԱՐԳԵՎ – Քնարիկ...

ՄԱՐՏԻՆ – Արուս, թող...

ՊԱՐԳԵՎ – Քնարիկ, թող...

ՄԱՐՏԻՆ – Թող, Քնարիկ...

*(Կանանց բաժանում են՝ բարձրացնելով հատակից:
Մարտինը՝ Քնարիկին, Պարզևը՝ Արուսին թևանցուկ բերում,
նստեցնում են սեղանի շուրջ: Կանայք իրենց կարգի են
բերում):*

ՔՆԱՐԻԿ – Սրան տես...

ԱՐՈՒՄ – Բա քեզ տես...

ՄԱՐՏԻՆ – Վերջ տվեք, խնդրում եմ, ամոթ է...

ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...
 ՄԱՐՏԻՆ – Խայտառակվեցի՞նք, չի կարելի, չի կարելի...
 ՊԱՐԳԵՎ – (Մարտինի ականջի տակ) Ասում էի, չէ՞...
 ՄԱՐՏԻՆ – Ես եկել եմ ձեզնով ուրախանամ, դուք էս ի՞նչ եք
 անում... Արուս, ի՞նչ է եղել...
 ԱՐՈՒՄ – (Հեկեկալով) Թող ինքն ասի...
 ՄԱՐՏԻՆ – Զնարիկ, ի՞նչ է եղել...
 ԶՆԱՐԻԿ – (Նույն ձևով) Թող ինքն ասի...
 ՄԱՐՏԻՆ – Արուս...
 ԱՐՈՒՄ – Իրեն հարցրու...
 ՄԱՐՏԻՆ – Զնարիկ...
 ԶՆԱՐԻԿ – Իրեն հարցրու...
 ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...
 ՄԱՐՏԻՆ – Է՛, լավ, ձեզ սազո՞ւմ է:
 ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...
 ԱՐՈՒՄ – (Փղձկում է) Անմեղ տեղը եկավ, կռիվ սարքեց:
 ԶՆԱՐԻԿ – Ո՞վ, ե՞ս, թե՞ դու...
 ՄԱՐՏԻՆ – Վերջացրե՛ք, անհարմար է... Արուս, հավաքիր
 քեզ... Էս սեղանն ո՞ւմ համար ես սարքել, որ պիտի էսպես լիներ...
 Պարզև, նստի՛ր... Զնարիկ, նստի՛ր... Ամոթ է, երեխա հո չե՞ք...
 (Արուսին) Դեմքդ մաքրիր, կրեմ է քսվել: (Կասկածանքով) Զնարիկ,
 քեզ հետ ի՞նչ է կատարվում: (Չափում է նրան ոտից գլուխ):
 ԶՆԱՐԻԿ – Ոչ մի բան... Ինչ որ կատարվում է՝ իրենց հետ է
 կատարվում:
 ՄԱՐՏԻՆ – (Բազմանշանակ) Լավ... (Պրկված նյարդերով)
 Ինչ որ ինձ ասել ես, դե հիմա իրենց ներկայությամբ ասա:
 ԶՆԱՐԻԿ – (Շաղված) Ի՞նչ ասեմ...
 ՄԱՐՏԻՆ – Ինչ որ ինձ ես ասել... (Կարճատև, լարված դա-
 դարից հետո) Զնարիկ... Սպասում եմ... Ասա, ինչո՞ւ չես ասում:
 Ուզում ես պայթե՞մ մեջտեղից... Ասա՛, Զնարիկ, ասա՛...
 ԱՐՈՒՄ – Խանգարող չկա, ասում է՝ թող ասի...
 ՊԱՐԳԵՎ – Բան ունի ասելու՝ թող ասի...
 ՄԱՐՏԻՆ – Հը՞, Զնարիկ, չե՞ս ասում... Եթե չես ասում, ասա՛
 չեմ ասում... Չե՞ս ասում...
 ԶՆԱՐԻԿ – Ասում եմ...
 ՄԱՐՏԻՆ – Դե որ ասում ես՝ ասա...
 ԱՐՈՒՄ – Թող ասի, ես դեմ չեմ...
 ՊԱՐԳԵՎ – Ասում է՝ թող ասի, ո՞վ է դեմ...

ՄԱՐՏԻՆ – Ասա...

ՔՆԱՐԻԿ – (Մտածկոտ) Կասեմ...

ՊԱՐԳԵՎ – Դե որ կասես, ասա...

ՔՆԱՐԻԿ – Պարզև, դու կապված ես Արուսի հետ:

ԱՐՈՒՄ – (Գրեթե ճշարտ) Ո՞ւմ հետ...

ՊԱՐԳԵՎ – (Բղավոցով) Ո՞վ... (Դառնալով Մարտինին)

Ասում էի, չէ՞...

ՄԱՐՏԻՆ – (Քնարիկին) Ո՞վ է ասել, դու որտեղի՞ց գիտես...

ՔՆԱՐԻԿ – Իմ կանացի բնագող ինձ չի դավաճանում:

ՄԱՐՏԻՆ – Ի՞նչ բնագող... Ուրեմն դու մի բան գիտես, որ ասում ես... Դե ասա, ասա, որ ես էլ համոզվեմ:

ԱՐՈՒՄ – (Ծնկին խփելով) Վա՛յ, մամա՛, մամա՛...

ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...

ՄԱՐՏԻՆ – (Սևեռուն, սպասողական) Քնարիկ...

ՔՆԱՐԻԿ – Եթե քո կինն իմ ամուսնու հետ կապված չլիներ, ինչո՞ւ պիտի իմ ամուսնուն դուրս տար ամեն ամիս:

ՄԱՐՏԻՆ – (Պոռթկալով, ուշքի չեկած) Ես եմ ասել, որ տա:

ԱՐՈՒՄ – (Ինքն իր հետ, մույն ձևով) Մամա, մամա...

ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...

ԱՐՈՒՄ – (Խոցված) Ես գիտեի, գիտեի, թե եղ բուռը որտեղից է գալիս:

ՊԱՐԳԵՎ – Ասում էի, չէ՞...

ՄԱՐՏԻՆ – (Հաստատական, մատ քափահարելով) Քնարիկ, գնալու եմ, եկող ամսվանից եղ փողն ավելացնեմ, որ Պարզևը չնեղվի, մարդն աշխատանք չունի, ընտանիք է պահում: Ես եմ Արուսին ասել, որ ամեն ամիս իմ ուղարկածից Պարզևին տա: Ասոված մեռակ իմ ընտանիքը պահելու համար չի ինձ տվել եղ հնարավորությունը, տվել է, որ ախպորս ընտանիքին էլ նայեմ, թե չէ՝ չէր տա: Ամեն ինչ հաշված է էս աշխարհում, դու եղ ի՞նչ ես ասում, Քնարիկ: Եթե էս նեղ օրը մենք իրար չնայենք, էլ ո՞վ պիտի մեզ նայի: Էդպիսի բան մի ասա, ամոթ է: Հայ եմք, չէ՞, բա կթողնե՞նք, որ մեր միևուրս երկիրն էսպես մնա:

ԱՐՈՒՄ – Ի՞նչ ասեմ... Ես էլ չգիտեմ, թե ինչ ասեմ:

ՄԱՐՏԻՆ – Պարզև, նեղություն կրիր, Արուսի համար բերած սրտի հաբերից մեկը տուր ինձ, դնեմ լեզվիս տակ:

ԱՐՈՒՄ – (Տազնապած) Սիրտդ վա՞տ է:

ՄԱՐՏԻՆ – (Շփելով կուրծքը) Մի թեթև...

ՊԱՐԳԵՎ – (Հար մատուցելով) Խնդրեմ...

ՄԱՐՏԻՆ – Շնորհակալություն: **(Հարը տանում է քերանը):**
 ՊԱՐԳԵՎ – Արո՛ւս, կարելի՞ է՝ մի հատ էլ ես վերցնեմ:
 ԱՐՈՒՄ – Քոնն էլ է վա՞տ... Վերցրու: Մի հատ էլ տուր ինձ:
 ՊԱՐԳԵՎ – **(Տալով)** Խնդրեմ...
 ԱՐՈՒՄ – Շնորհակալություն:
 ԶՆԱՐԻԿ – Ինձ էլ տուր:
 ՊԱՐԳԵՎ – **(Տալով)** Առ...
 ԶՆԱՐԻԿ – **(Վերցնելով)** Շնորհակալություն:
(Նստում են՝ հարերը լեզվի տակ):
 ՊԱՐԳԵՎ – **(Վեր կենալով տեղից)** Կույ գնաց... Մի հատ էլ
 վերցնեմ... **(Վերցնում, դնում է լեզվի տակ՝ զբաղեցնելով իր տեղը):**
 ԱՐՈՒՄ – Օ՛ֆ...
 ԶՆԱՐԻԿ – Վա՛յ...
 ՊԱՐԳԵՎ – **(Հոգոցով)** Ա՛խ...
 ՄԱՐՏԻՆ – **(Բազմանշանակ)** Բա՛... **(Կարճատև դադարից հետո)**
 Մի սիրտը քիչ է, մարդ պիտի մի քանի սիրտ ունենա, որ դի-
 մանա:
 ՊԱՐԳԵՎ – Տասը սիրտ էլ ունենա, չի դիմանա:
 ԱՐՈՒՄ – Հարյուր սիրտ էլ ունենա, չի դիմանա:
 ԶՆԱՐԻԿ – Երկու հարյուր սիրտ էլ ունենա, չի դիմանա:
 ՄԱՐՏԻՆ – Ամենաճիշտը անսիրտ ապրելն է երևի...
(Կրկնվում են հոգոցները):
 ԱՐՈՒՄ – Օ՛ֆ...
 ԶՆԱՐԻԿ – Վա՛յ...
 ՊԱՐԳԵՎ – Ա՛խ...
 ՄԱՐՏԻՆ – Բա՛...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

2001 թ., մարտ, Երևան

ԼՈՒՅՍ ԶՍԱՆՅՈԹԻ ԳԻՇԵՐԸ

Պիես երկու գործողությամբ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ԹԱՏԵՐԱԳԻՐ

ԿԻՆԸ

ՏՂԱՆ

ԱՂՋԻԿԸ

ՄԱՅՐԸ

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Գիշեր: Հինգհարկանի շենքի վերջին հարկում գտնվող բնակարանի սենյակ՝ փողոցին նայող լուսամուտով: Կից սենյակից աղմուկ-աղաղակ, ծիչ, հեծկլտոց, տազնապալի բացականչություններ. «Բռնե՛ք, չթողնե՛ք: Չթողնե՛ք, բռնե՛ք: Այլայլված ներս է ընկնում Թատերագիրը՝ շալվարի տակից դուրս թռած վերնաշապիկով, կոճակներն արձակված, կուրծքը բաց: Ետևից լեղապատառ ներս են վազում տնեցիները՝ կինը, տղան, աղջիկը: Թատերագիրը մղվում է դեպի լուսամուտը՝ շրխկոցով բացելով փեղկերը: Ապակիներից մեկը ջարդուփշուր լինելով թափվում է հատակին:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որ շնչակտուր բարձրացել է լուսամուտի զոզին, պոռթկալով, ձեռքը տնկած) Է՞ս էիր ուզում: Դե հիմա գնա ապակի ճարիր, տեսնեն որտեղից պիտի ճարես...

ԿԻՆ – (Արցունքների միջից, իրեն կորցրած) Բռնե՛ք, բռնե՛ք, իրեն զցում է լուսամուտից:

ՏՂԱ – (Աղերսանքով) Հայրի՛կ...

ԱՂՋԻԿ – (Լացակումած) Հայրի՛կ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հևալով) Թող, ոտքս չբռնես, ա՛յ տղա:

ԿԻՆ – (Տղային, դողով) Թող, չբռնես: (Թատերագրին) Դե իջիր:

ԱՂՋԻԿ – Հայրիկ, իջիր:

ՏՂԱ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – Արա՛մ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որոտալով) Ի՞նչ է, ի՞նչ էս ուզում ինձնից, ճիվա՛ղ:

ԱՂՋԻԿ – Հայրի՛կ...

ՏՂԱ – Հայրի՛կ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ի՞նչ հայրիկ, բարբարոսներ, ի՞նչ հայրիկ...

ԿԻՆ – Արա՛մ... Ամոթ է, մարդիկ քնած են:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հևոցը միշտ զգալ տալով) Կերա՛ք, կերա՛ք վերջնականապես:

Մուտքի զանգ:

ԿԻՆ – Արամ, սպասիր:

Տղան գնում, քացում է դուռը: Լսվում է շան հաչոց:

Շնչասպառ ներս է քնկնում միջահասակ մի տղամարդ:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Գո՞ղ է մտել տուն:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հա, գող է մտել:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Շանս ձայնից արթնացա: Ի՞նչ են տարել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Կուրծքը վերուվար է անում անկանոն շնչառությամբ) Ոչինչ չեն տարել, մեզ են տարել մեր տնից:

ՏՂԱ – Հայրիկ, իջիր:

ԱՂՋԻԿ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – Արա՛մ...

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – (Նոր միայն կռահելով) Ի՞նչ եք անում, ախր ինչի՞ համար, ձեզ սազական չի, ազնիվ խոսք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ոտքս չբռնես, ա՛յ տղա:

ԿԻՆ – Արամ, սպասիր:

Մուտքի զանգ: Տղան գնում, բացում է: Մտնում է կիսով չափ հագնված, շլյապայով մի տղամարդ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ի՞նչ է պատահել: Չորս ժամ է անկողնում մի գլուխ շուտումուտ եմ գալիս: Քնաբեր դեղ խմեցի, որ քնեմ, պառժակ տեղից վեր բռա:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (**Չթուլացող լարվածությամբ**) Խմե՛ք, խմե՛ք, բուրդ քնաբեր խմեք, բուրդ... Խմեք, տեսնեմ մինչև երբ պիտի քնեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Տարիներով անքնությանը եմ տառապում, ի՞նչ անեմ: Բաց աչքով պառկում եմ, բաց աչքով առավոտյան վեր կենում անկողնուց:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (**Բռնկվելով**) Բա ցավն ո՞ւմ եմ տվել, որ բուրդ պիտի քնեք: Էս անտեր աշխարհում զոնե մի արթուն մարդ պիտի մնա՞, թե՞ չէ:

ԿԻՆ – Արա՛մ...

ԱՂՋԻԿ – Իջիր, հայրիկ:

ՏՂԱ – Հայրիկ, իջիր:

Մուտքի զանգ: Տղան գնում, բացում է: Մտնում է փայլ-փրլուն զգեստով մի տիկին՝ զգզված մազերով:

ՓԱՅՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (**Չեռքն ակամա տանելով կրծքին**) Էս ի՞նչ աղմուկ է, տեր իմ Աստված: Հորս հիվանդ թողել եկել եմ: Նա՛ ինձ արթնացրեց: Ասաց՝ գնա տես ինչ է կատարվում վերևում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ինչ որ կատարվում է՝ ներքևում է կատարվում, վերևում ոչինչ չի կատարվում:

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏՂԱ – Հայրիկ, իջիր:

ԿԻՆ – Սպասի՛ր, Արա՛մ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հեռո՛ւ, հեռո՛ւ, ինձնից:

Մուտքի զանգ: Տղան գնում, բացում է դուռը: Մտնում է գանգրահեր մի տղամարդ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – (**Մոլորված**) Ի՞նչ է եղել: Ինձ էլ թվաց, թե երազի մեջ եմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մենակ դու չես երազի մեջ, է՛, բուրդ եք երազի մեջ: Բա սա երազ չի ի՞նչ է, սրանից ծանր երա՞զ...

ԱՂՋԻԿ – Հայրիկ, իջիր:

ՏՂԱ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – (**Լացով**) Արամ... Չթողներ... Վայ, մամա ջան...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՍԱՐԴ – Ընկեր Արամ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Դուք զիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում:

Մուտքի զանգ:

ԿԻՆ – Արամ, սպասիր:

Տղան գնում, բացում է: Փնչացնելով մտնում է մի հաղթանդամ տղամարդ:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – (Ջնաթաթախ) Է՛, հետո՞...

Պիտի թողնե՞ք քնենք, թե՞ չէ: Աշխատող ժամացույց չունե՞ք, նայեք ժամը քանիսն է:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ունենք, ինչու չունենք... Ժամանակը վաղուց կանգ է առել, ժամացույցներն են իրենք իրենց համար աշխատում:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Ես էլ ասում եմ՝ էս ձեները որ-տեղից են գալիս: Բան ասեք, բան հասկանանք:

ԿԻՆ – Արամ, մարդիկ քնած են, ամոք է, իջիր: Վա՛յ, մամա ջան... Արա՛մ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որոտալով) Դու իմ մահից չես սարսափում, դու իմ թաղումից ես սարսափում, որովհետև կոպեկ չկա տանդ: (Կարծես հանդարտվելով) Մի՛ վախեցիր, սարսափելի ոչինչ չկա էս սարսափելի աշխարհում: Կզնաս գրողների միություն, կասես, մի դագաղ կտան: Փողը դուրս կգրեն, կառնեն, կտան: Կտան, է՛ն էլ ո՛նց կտան, ուրախությամբ կտան: Շքեղը չեն տա, է՛, անշուքը կտան: Շքեղն իրենց համար կպահեն: Եթե շքեղն ինձ տան, ոտանավոր գրողներին բա ի՞նչ տան: Ոչինչ, թող անշուքը տան, մեկ է՝ մեջը չեմ մնալու, էլի դուրս եմ գալու, հոգին չի մնում ներսում, մարմինն է մնում: Թող խփեն, ինչքան ուզում են թող ամուր խփեն մեխերը, դուրս եմ գալու:

ՏՂԱ – Հայրիկ, իջիր:

ԱՂՋԻԿ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – Արամ... Մարդիկ քնած են: Չթողնեք:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Ընկեր Արամ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Դու լավ մարդ ես, իմ արև, ախր ինչի՞ համար...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Մի արեք, մի արեք այդ բանը, խընդրում եմ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ախր ինչո՞ւ, հանուն ինչի՞ ղիմեք այդ քայլին:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Էս անիրավ աշխարհը գալիս ոչ ոք չի հարցնում, թե ինչու ես գալիս, գնալիս եմ հարցնում: Թող, ոտքս չբռնես, այ տղա:

ԿԻՆ – **(Տղային)** Թող, չբռնես: Արամ, իջիր, ամոթ է: Փողոցով անցնող-դարձողը հիմա վերև է մայում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ինչո՞ւ եմ վերև մայում, թող ներքև մայեմ: Հիմա անցնող-դարձող կա՞, որ վերև մայեմ: Նրանք վերևի հետ կապ չունեն: Ով որ վերևում Աստված ունի, թող մա մայի: Ամեն մարդ վերև մայելու իրավունք չունի: Ջունգլիներում ուժեղն է թույլին ուտում, էստեղ էլ թույլերն են ուժեղներին ուտում:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – **(Կողքինին)** Ի՞նչ է ասում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Չհասկացա:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ի՞նչ կա չհասկանալու, որ չհասկացար: Ես էլ չեմ հասկանում: Ջունգլիներում որ ուժեղն է թույլին ուտում, դա հասկանում եմ, բայց որ էստեղ թույլերն են ուտում ուժեղներին, դա չեմ հասկանում: Էլի չհասկացա՞ր:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Հասկացա:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ի՞նչ է եղել, եթե կարելի է, ասեք, մենք էլ իմանանք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Կույր Քրոնոսը լափում է իր խելոք գավակներին, էլ ի՞նչ էիք ուզում, որ լիներ:

ԱՂՋԻԿ – Հայրիկ, իջիր:

ՏՂԱ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – Արամ... Չթողնեք...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Տեր իմ Աստված, ես էլ ասացի երևի գող է մտել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Ընդվզելով)** Որ մտան՝ ի՞նչս պիտի տանեն: Տանելու բան կա՞, որ տանեն: Ձեր տներից կտանեն, է՛, իմ տնից չեն տանի: Ամենաթանկ բաները որտե՞ղ են պահվում: Իբր դուք չգիտե՞ք... Հոգու մեջ չե՞ն պահվում: Հոգին չգոհեցի՞ք նյութին: Բա էս բոլորն ինչի՞ համար էսպես եղավ: Դրանից չեղա՞վ: Նյութից եք ստեղծվել, է՛, դրա համար եք նյութը պաշտում: Եթե նյութից ստեղծված չլինեիք, նյութապաշտ կլինեի՞ք: Ումի՞ց եք գողանում, ձեզանից չե՞ք գողանում: Ո՞ւմ վրա եք կրակում՝ ձե՞զ չեք սպանում: Չէ՛, չեք կարող, առանց վախի չեք կարող ապրել, չեք կարող: Մովոր եք, է՛... Ձեզ բեղավորն էր պետք... Դահճի կարոտ ունեք: Հոգին հանել եմ,

տեղը մյուս են դրել: Առայժմ տներն են մտնում, վաղը հոգիները կմտնեն, որ ամենամեծ հարստությունը տանեն: Շուտով, շուտով հոգիների կողոպուտը կսկսվի: Դրանից զգուշացեք: Էս օրը եկավ, էդ օրն էլ կգա: **(Ձարմացած)** Բա որ զա՞... Հերթը դրան էլ կհասնի, չէ՞: Դատարկված հոգիներով էլ ո՞ր պիտի գնաք, է՛, ո՞ր...

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏՂԱ – Հայրիկ, իջիր:

ԿԻՆ – Արամ... Չթողնեք... Բռնեք...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Ընկեր Արամ... Խեղճ կենդանին էլ էմտեղ է իրեն կտրատում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Պարոն Արամ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ես ուղղակի խնդրում եմ:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Ախր դու կարգին մարդ ես, ինչի՞ համար... **(Կողքիններին)** Համենայնդեպս, մի բան եղել է, հո հենց էնպես չի...

Մուտքի զանգ:

ԿԻՆ – Արամ, սպասիր:

Տղան գնում, բացում է: Գազազած ներս է մտնում ակնոցավոր մի տղամարդ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՍԱՐԴ – **(Նախահարձակ լինելով)** Սա ի՞նչ բան է, եղբայր: Նայեք, նայեք ժամը քանիսն է: Գրողն էլ գրողին չհասկանա՞, եղբայր: Ուրիշ անգամ դժգոհում ես, որ գրամեքենայիս ձայնը խանգարում է: Ինչո՞ւ պետք է խանգարի, երբ տարբեր մուտքերում ենք բնակվում, եղբայր: Գիշերվա ժամը տասներկուսից հետո ոչ ոք իրավունք չունի խանգարելու բնակիչների անդորրը, եղբայր: Քաղաքապետարանի որոշում գոյություն ունի: **(Կնոջը, զարմացած, կարծես նոր միայն նկատելով)** Չեմ հասկանում, ինչո՞ւ է բարձրացել լուսամուտի գոգին:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Պիեռ Բեգուխովը, որ իր հաճույքի համար բարձրացել էր շամպայնի բաժակը ձեռքին, չեմ հիշում՝ մեջը շամպայն էր, թե գարեջո՞ր, նրան ոչ ոք չէր ասում, թե ինչու ես բարձրացել: Թույնի բաժակը տվել եք ձեռքս, ի՞նձ եք հարցնում: **(Ամեն անգամ դուրս մղվելիս ցնցվում է՝ տեղնուտեղն ընկրկելով):**

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏՂԱ – Իջիր, հայրիկ...

ԿԻՆ – Արամ, սպասիր... Չթողնեք... Վա՛յ, մամա ջան...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Դուք գիտե՞ք, մենք ձեզ ինչքն ենք հարգում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Էս ի՞նչ է անում, եղբայր:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Խեղճ կենդանին էլ էնտեղ է իրեն կարատում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Գոմե իմանանք ինչ է եղել, հետո...

ՏՂԱ – Հայրիկ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Թող, ձեռքդ հեռու տար ինձնից: **(Հեզմանքով)**

Հայրիկ... Ի՞նչ հայրիկ... Դու իմ դեմ ես ծնվել, այ տղա: Դու ինձ հետ ի՞նչ կապ ունես: Ամեն որդի Աստծու որդին չի: Որ դու իմ որդին ես, բա ես ո՞ւմ որդին եմ: **(Վառված)** Կխաչե՛ք... Նրան խաչեցեք, ինձ էլ կխաչեք:

ԿԻՆ – Մի քիչ ցածր, կարթնանա հանկարծ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Կարթնանա, բայց ուշ կլինի: Ուշ կլինի...

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Իջիր, անհարմար է, եղբայր, հեղինակավոր գրող ես:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես հեղինակավոր չեմ, հեղինակավորը դուք եք, ես հեղինակ եմ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Չես աշխատում, դե թող ես աշխատեմ, եղբայր: Պատճառն ասեք, պատճառն իմանամ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Պատճառը... Պատճառը ձեր մեջ որոնեք, ձեր... Հավի խելքով աշխարհ եկաք մի օր, տեսաք կարելի է ապրել և ապրում եք հաջողությամբ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – **(Շփոթված)** Ո՞ւմ է ասում, ի՞նձ է ասում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չէ, քեզ չեմ ասում, է՛, բոլորիդ եմ ասում: Բառի հետևից եմ ընկել, ես մի բառի համար ընտանիքս եմ քաղցի մատնում, տեղեկություն ունե՞ք:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Էհ, մի մատնիր, մե՞նք ենք մեղավոր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Դուք չեք մեղավոր, է՛, ես եմ մեղավոր, որ ուրիշ փողոց եմ ընկել: Բա դուք իմ վիճակը չե՞ք տեսնում: Մարդ չե՞ք:

ԿԻՆ – Զանի անգամ ասացի՝ գնա բժշկի, չգնացիր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Գնամ բժշկի, որ ի՞նչ անի, խելագար:

ԿԻՆ – Նիհարել ես:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Տերդ մեռնի, մի գրամ յուղ չես լցնում ճաշի մեջ, ասում ես՝ նիհարե՞լ ես: Ես որ իմ բառը չգտնեմ, ո՞վ պիտի գտնի:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ է, դու գտնում ես, մենք չե՞նք գտնում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Լարված)** Գտնում եք, է՛, բայց ձերը չեք գրտնում, ձերը... Անտեր բառ չկա, ձեզ չթվա, թե կա, բոլոր բառերն էլ տեր ունեն: Բա որ տերը հանկարծ հայտնվի, ի՞նչ պատասխան պիտի տաք էդ բառի տիրոջը, մտածե՞լ եք:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ւմ է ասում, եղբայր, ի՞նձ... Անհարմար չի՞ ձեզ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Թրիքի հոտը բռնել է գրականությունը՝ անհարմար չի, ի՞նձ է անհարմար: Թե՞ փ չեք արտադրում, դրա դիմաց չե՞ք պարզկներ ու մրցանակներ ստանում ձեր հարազատ պետությունից: Ինքնուս հանրապետություն է, պարզ չի՞, որ իրար պիտի զովենք: Տգիտության պաշտամունք կա, չէ՞... Եթե ձեր սրտի խորքում կասկած չունեք, ինչո՞ւ եք ուզում, որ փառաբանեն: Կենդանության օրո՞ք եք ստեղծում ձեր փառքը: Վաղվա օր էլ կա, է՛... Դրա մասին չե՞ք մտածում: Ես առավոտից իրիկուն բառի հետևից ընկած՝ բառս եմ ման գալիս, որ բառս գտնեմ, դուք հեշտ գրում եք, հեշտ էլ տպվում: Ամեն ինչ խլեք, ուրիշի փառքն ինչի՞ եք խլում: Որ խլեցիք, ձերը պիտի լինի՞: Կգա, կգա օրը... **(Չարմացած, ինքն իրեն)** Կարո՞ղ է չգա:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ւմ է ասում, եղբայր, ո՞վ է թեփ արտադրում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Դու չգիտես, ի՞նձ ես հարցնում: Գղտալով եմ տնիցդ դուրս գալիս: Խաշը դու դնես, սխտորի հոտը իմ տնից գա՞: Ուտեմ՝ շնչեմ, առանց ուտելու ինչո՞ւ շնչեմ: Էսօր տպվեցիր, քեզ թվում է, թե վա՞ղն էլ ես տպվելու:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Խուլիզան, ես եկել եմ քեզ կարգի հրավիրեմ, դու իմ հեղինակության հետ ես խաղո՞ւմ գիշերվա տասներկուսից հետո:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Սիրելիներս, չեղավ, դա արդեն չեղավ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Անհարմար է: **(Ժամանակ առ ժամանակ անդիմադրելիորեն հորանջում է՝ փորձելով տիրապետել իրեն):**

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Հարևան եք, չէ՞, չի կարելի, չէ՞:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – (Չհանդարտվելով) Չլսեցի՞ք, եղբայր... Չէ, դուք չլսեցի՞ք ինչ ասաց:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ներող եղեք, խնդրում եմ: Դուք գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Չլսեցի՞ք, եղբայր... Չէ, դուք չլսեցի՞ք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՄԱՐԳ – Խեղճ կենդանին էլ էնտեղ է իրեն կտրատում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Չլսեցի՞ք, եղբայր... Չէ, դուք չլսեցի՞ք:

ԿԻՆ – Ասում է, բայց սրտում բան չկա, դուք մրա բնավորությունը լավ գիտեք:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԳ – Սիրելիներս, անհարմար է, ձեր ձայնը մինչև առաջին հարկ է հասնում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Չլսեցի՞ք, եղբայր: Չէ, դուք չլսեցի՞ք:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԳ – Սրտիդ մոտ մի ընդունիք, այ մարդ, վահ, հարևան եք, կկռվեք էլ, կհաշտվեք էլ, բա ո՞նց:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Դե գիտե՞ք ինչ, էսպիսի դեպքերում ապտակում են, որ սթափվի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա ձեր գոյությունը ինձ համար ապտակ չի՞: Ո՞վ սթափվի, ե՞ս սթափվեմ: Բա որ դուք սթափվեք հանկարծ... Դուք ձեզնից չե՞ք սարսափի:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Ես քո գլուխը չունեմ, եղբայր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Իհարկե, չունես: Տողս դնեմ՝ ձեզ բուրբիդ կկշռի:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – (Լարված) Հիշիր, հիշիր, գիշերվա ժամը ուղիղ երեքն է, լույս քսանյոթի գիշերը... (Աչքի անցկացնելով ժամացույցը) Երեքին հինգ է պակաս: Խնդրեմ, վկաներ կան: Քաղաքապետարանի որոշում գոյություն ունի, եղբայր, ինչի՞ մասին է խոսքը:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ցերեկն ուրիշ որոշումներով եք ինձ լռեցնում, գիշերն ուրիշ... Մենակ ինձ համար կա՞, ձեզ համար ոչ մի որոշում չկա՞:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԳ – Լսեցի՞ք, եղբայր: Չէ, դուք չլսեցի՞ք: (Չեռքի ժամացույցը մեկնած) Նայեք, նայեք, երեքը չի՞: Պատասխան կտաս: (Գնում է):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ետևից) Կտամ, է՛, կտամ, բայց քեզ չեմ տա,
 Տիրոջը կտամ:
 ԱՂՋԻԿ – Իջիր, հայրիկ...
 ՏՂԱ – Հայրիկ, իջիր:
 ԿԻՆ – Արամ, սպասիր... Չթողնեք... Իջիր...
 ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ձգույ՛, հարևան, զգույ՛...
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հար-
 գում:
 ԿԻՆ – Իջիր, Արամ... Վա՛յ, մամա ջան...
 ՏՂԱ – Հայրիկ...
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ի՞նչ է, դժբախտ:
 ՏՂԱ – Ես կարծեցի, թե զցեցիր:
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես ինձ վաղուց եմ զցել, դու նո՞ր ես կարծում:
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Տեսնում եք, բուլբուս էլ խնդրում
 ենք, իմ արև: Ո՞ւմ տանը վեճ չի լինում:
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Խնդրում ենք, ուղղակի խնդրում ենք:
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մի անգամ տունս մտած կա՞ք, որ հիմա եկել
 եք: Եկել եք, որ ինձ ստորացնե՞ք ընտանիքիս մոտ:
 ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Միրելիս, եղա՞վ...
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Բա դա ասելու բա՞ն է, որ դու
 ասում ես: Հարևաններն էլ ո՞ր օրվա համար են: Դեպք է, կպա-
 տահի... Մարդ է, կհերստտի էլ, բա ո՞նց... Ո՞ւմ հետ չի պատահել:
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Իհարկե, ինչ կա որ... Մի փոքր հուզ-
 ված եք... Մենք ուղղակի խնդրում ենք: Գիտե՞ք մենք ձեզ ինչքան
 ենք հարգում:
 ԱՂՋԻԿ – Հայրիկ, իջիր:
 ՏՂԱ – Իջիր, հայրիկ:
 ԿԻՆ – Գոնե երեխաներիդ խղճա: Վա՛յ, մամա ջան:
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես նրանց չեմ խղճում, է՛, ես բուլբուս եմ
 խղճում:
 ԱՂՋԻԿ – (Ցնցվելով) Հայրիկ, իջիր:
 ՏՂԱ – Իջիր, հայրիկ:
 ԿԻՆ – Արամ... Չթողնեք... Իջիր...
 ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Չեղավ, այդ արդեն չեղավ: Ախր
 դուք ստեղծագործական ծրագրեր ունեք, պայմանագրեր ունեք կըն-
 քած, ձեզնից նոր գործեր են սպասում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Թող չսպասեն: Ո՞վ է սպասում: Ես ոչ մեկի համար մի տող անգամ չեմ գրի, մի տող: Ես իմ հոգու փրկության համար եմ գրում: Սրանց հոգի պետք չի: Պետք չի... Տերը մարմնի համար չի ստեղծել հոգին, է՛, հոգու համար է ստեղծել մարմինը, որ հոգին տեղավորի, սրանք հոգին են վտարում մարմնից: Որ մարմնիցները կան, իրենց էլ թվում է, թե իրենք էլ կան: Չկա՞ք, չկա՞ք, դուք առանց ձեզ եք ապրում: Տիրոջ դեմ եք դուրս գալիս: Մեկ է, ձեր էդ շքեղ փալաս-փուլուսով չեք ծածկի ձեր մերկությունը, չեք ծածկի: Մի գեղեցիկ օր ներս եք մայելու, չէ՞: Բա որ մայեք, չե՞ք սարսափի: Ի՞նչ եք ձեզ կոտորում: Բոլորդ եք մարմնավոր: Երբ որ Տերը ձեզ ստեղծեց, հոգի դրեց ձեր մարմնի մեջ: **(Չարմացած, ինքն իրեն)** Չորե՞ց: Բա ո՞ր է: Մարմնական հաճո՞ւյք եք ուզում ստանաք: Առանց հոգո՞ւ... Չեք ստանա: Էս մարմնավոր աշխարհում ոչինչ չեք ստանա: Կձգտեք ու չեք ստանա:

ԿԻՆ – **(Լացակումած)** Վա՛յ, մամա ջան, մարդիկ քնած են:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Հայացքով դեպի դուրս)** Մեռակ քնած չեն, է՛, երազներ էլ են տեսնում, բայց իրենք իրենց չեն տեսնում: Բա որ տեսնեին, հիմա ճշարով չէի՞ն արթնացել: Հանգիստ քնել են: Ոնց որ ոչ մեկն ինքը չի... Քնած են, բոլորը քնած են անվրդով: Բայց վաղ թե ուշ պիտի արթնանան, չէ՞, քնած հո չե՞ն մնալու: Տերեկները գործած ձեր մեղքերի մեջ չի՞ հիմա թաղված աշխարհը: Էլի լուսամալու է, չէ՞: Կարթնանա՞ք, կարթնանաք ու կսկսեք... Ոչ ոք իրավունք չունի խանգարելու ձեր խաղաղ քունը, ոչ ոք: Քաղաքապետարանի որոշում կա, չէ՞: Պիտի հանգիստ քնեք, որ ուժ հավաքեք: Ասենք թե էս գիշերն էլ քնեցիք, հետո՞... Մի օր կանչելու է Տերը, չէ՞, բոլորիդ է կանչելու, բոլորիդ: Առայժմ քնած են, ոչի՛նչ , թող քնեն: Կգա՛, կգա օրը...

ԱՂՋԻԿ – **(Աղեկտուր)** Հայրիկ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Որոտալով)** Ի՞նչ հայրիկ... Մխալ ես լաց լինում, տխմար: Արցունքներով չեմ լաց լինում, է՛, աշխարհն առանց արցունքի է լաց լինում: Դուք որ չեք տեսնում, ես մեղք ունե՞մ: Տեսնելու ընդունակությունը ամեն մեկին չի տրված: Կույր Հոմերոսն էր տեսնում, դուք չեք տեսնում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Որպես նույն շենքի բնակիչ, ես ձեզ ուղղակի խնդրում եմ, մի՞ արեք այդ բանը:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հետո ի՞նչ, որ նույն շենքի բնակիչ եմք: Դա դեռ ոչինչ չի նշանակում: Լինելովն էլ էր Միսսիսիպիի նահանգից, Մարկ Տվենն էլ: Էստեղ եմք նույն շենքի բնակիչ, է՛, էնտեղ էլ նույն

շենքի բնակիչ չենք լինելու: Ասում էր, չէ՞, երեսիդ էր ասում, պրեզիդենտ Լինկոլն, որ դու կլռես, երբ գա օրը, ինչպես բոլոր պրեզիդենտներն են լռում, իսկ Տերն ինձ տվել է էն աշխարհից խոսելու իրավունք: Չէի՞ր հավատում: Հը՞... Ախ, լռում ես... Լռում ես, որովհետև Տերը քեզ էն աշխարհից խոսելու իրավունք չի տվել: Ում որ էն աշխարհից խոսելու իրավունք են տալիս, էս աշխարհում են լռեցնում: Էս աշխարհում կլռեցնեք, է՛, էն աշխարհում չեք լռեցնի: Ես իմ աշխարհն ունեմ, ես ինչո՞ւ պիտի ձեր էս աշխարհում ապրեմ: Նույն կենդանական աշխարհը չի՞: (Ջարմացած, ինքն իրեն) Չէ՛, նույնը չի: Էնտեղ ուժեղներն են ուտում թույլերին, էստեղ թույլերն են ուտում ուժեղներին: Ո՞նց է նույնը: Ուժեղները չեն սարսափելի, թույլերն են սարսափելի: Թույլերը շատ են ուժեղ, ուժեղներն են թույլ ձեր էս անցավոր աշխարհում: Հետո ի՞նչ, որ նույն շենքի բնակիչ ենք: Ձեզ է քվում, թե նույն շենքի բնակիչ ենք: Ես ինձ վատ եմ զգում ձեր աշխարհում, չասե՞մ: Ես ձեր կյանքը հեշտացնեմ, դուք իմը դժվարացնե՞ք: Ձեր աշխարհն է, դուք ապրեք, ես ինչո՞ւ պիտի ապրեմ: Չեմ ուզո՞ւմ, չեմ ուզո՞ւմ, զոռո՞վ է...

ԿԻՆ – Արամ... Գցեց... Բռնեք... Չթողներ...

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏԳԱ – Հայրիկ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Ընկեր Արամ...

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Ախր զոնե վատ մարդ լինեք, կասեի գրուխը քարը, իմ արև:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չեմ ուզում, ես ձեր էս անցավ աշխարհը չեմ ուզում: Ձեր աշխարհում ցավ չկա: Ապրեք էդպես ուրախ ու երջանիկ՝ իրար կոտորելով:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Է՛, լավ, հասկացանք, աշխարհն ի՞նչ մեղք ունի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մեղքի մեջ թաղված, ասում ես ի՞նչ մեղք ունի: Բա ո՞վ ունի, ե՞ս ունեմ: (Հայացքով դեպի դուրս) Հիմա չունի, որովհետև քնած են, բայց մի երկու ժամից արթնանալու են, չէ՞, հո՞ քնած չեն մնալու: Ասածո ստեղծած աշխարհը դուք դարձրիք ձեր աշխարհը, սա նրա ստեղծագործությունը չի: Մա նրա հետ կապ չունի: Էդպես ռեժիսորներն են աղավաղում իմ պիեսները, որովհետև նրանց

դենքին ռեժիսորական քախիծ չկա: Տերը երկրի վրա նրանց տվեց ճիշտ դերաբաշխում անելու իր աստվածային շնորհը, Աստծուն էլ ուրացան: Եթե Աստծուն ուրանան, ինձ չե՞ն ուրանա: Վագրի դերը կատվին են տալիս, որ վագրը մլավի: Վագրը բա կմլավի՞: **(Ձարմանքով, ինքն իրեն)** Արի ու տես, որ մլավում է: Վագրերին կատուներ դարձրին, կատուներին՝ վագրեր: Մխալ դերաբաշխումից չի՞ կործանվում աշխարհը:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – (Կողքինին) Կարո՞ղ է խմած է:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ախր ինչո՞ւ եք ավելորդ բաներ ասում, չի կարելի, չէ՞:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞վ է խմած, ե՞ս են խմած: Բա դուք խիղճ ունե՞ք: Երանի չէր խմած լինեի: Խմած չեմ, է՛, հարբած եմ: Միսսիսիսիսում բոլորը գիտեին, որ Լինկոլնի հայրը փայտահատ է, բայց չգիտեին, որ հարբեցող է: Հարբեցողից որ պրեզիդենտ է ծնվում, դա չի սարսափելին: Որ պրեզիդենտից է հարբեցող ծնվում, դա է սարսափելին: Ես չեմ հարբած, է՛, աշխարհն է հարբած: Թող բոլորին բուժեն, բայց խելագարներին չբուժեն, որովհետև իրենք են խելագար, որ չեն խելագարվում: Ես Ռիչարդ չեմ, դուք ինձ դարձրիք Ռիչարդ:

ԿԻՆ – Մի քիչ ցածր, կարթնանա հանկարծ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Նրա արթնանալն ինձ էլ պետք չի: Եթե մինչև հիմա չի արթնացել, էլ ինչի՞ համար արթնանա:

ԿԻՆ – Ասա ինչ անեմ՝ անեմ, ասա... Դու մեզնից ի՞նչ ես ուզում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես ձեզնից ոչինչ չեմ ուզում: Դուք ձեզնից ի՞նչ եք ուզում, դուք... Գոնե մի անգամ ձեզ տվե՞լ եք էդ հարցը, տվե՞լ եք:

ԿԻՆ – (Լացով) Գցեց... Փրկեք... Վա՛յ, մամա ջան...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞ւմ փրկեն, դժբախտ: Փրկողը Տերն է, ո՞վ փրկի: Մի հանճարեղ ռուս աշխարհ եկավ մի օր, ասաց՝ գեղեցիկն աշխարհը կփրկի: Ես էլ հավատացի: Ուզում էի, շատ էի ուզում, որ փրկի: Դե թող փրկի, ինչո՞ւ չի փրկում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Հա, բայց...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բայց չկա, ի՞նչ բայց... Թող փրկի, ինչո՞ւ չի փրկում: **(Լուսամուտից դեպի դուրս)** Կարթնանա՛ն, կարթնանան շուտով...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ է ասում:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Չհասկացա:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Էդտեղ ի՞նչ կա չհասկանալու, որ չհասկացար: Էս բոլորը հասկացան, դո՞ւ չհասկացար:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Որ չհասկացա, ասեմ՝ հասկացա՞: Եղա՞վ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Որ ուզում եք հասկանաք, շատ լավ էլ հասկանում եք: Որ չեք ուզում հասկանաք, չեք հասկանում: Ես ձեզ հասկանում եմ, որ դուք ինձ հասկանաք: Բա մեր տարբերությունն էլ ո՞րը պիտի լինի: Եթե դուք ինձ հասկանաք, ես ինձ չեմ հասկանա, ես էլ ես չեմ լինի, ուրիշ մարդ կլինեմ, պարզ չի՞: Հիշեք, հիշեք, գալու է օրը...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – **(Կնոջը)** Ո՞վ է ջղայնացրել:

ԿԻՆ – Ոչ մեկը: Վա՛յ, մամա ջան...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Իրոք, չիմանա՞նք ինչ է եղել:

ԿԻՆ – Ոչ մի բան: Արա՛մ...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Դե լավ, մի բան եղել է, հո հենց էնպես չի... Ո՞ւմ հետ չի պատահում...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Վա՞տ է զգում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չէ, վատ չեմ զգում, դուք եք ձեզ լավ զգում: Դե թող փրկի, ինչո՞ւ չի փրկում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Հանգստացեք, խնդրում եմ: Դուք գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Շեմքում մարդ կա՞, որ չհարգի:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Խեղճ կենդանին էլ էնտեղ է իրեն կտրատում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Տենդով բռնված)** Լրտես Սոմերսեթ Մոհեմ, իննսունմեկ տարի որ ապրեցիր էս հանցավոր աշխարհում, վաթսույնյոթում չեի՞ր մեռել նախքան քո մահը: Իզուր տեղը էլ ինչի՞ էիր ժամանակ կորցնում, որ էլ ոչ մի տող չեիր գրելու դրանից հետո: **(Դառնալով հավաքվածներին)** Մեռնելո՞ց եք վախենում: Էդպես վախենալով ինչքա՞ն պիտի ապրեք, է՛, ինչքա՞ն... Մեռնելուց հետո ի՞նչ տարբերություն՝ ես եմ Շեքսպիրը, թե Շեքսպիրն ինքն է Շեքսպիրը: Ո՞վ ասաց, որ ինքն է, կարող է ես եմ: Հետո ի՞նչ, որ ինքն է, ես չեմ: Դրանից բան է փոխվո՞ւմ: Ո՞նց եմ նա ես, որ ես եմ ես: **(Պայթելով)** Մեռնելը չի ահավորը: Որ մեռած ապրում ես, դա է ահավորը: **(Մղվում է դեպի դուրս: Աղմուկ-աղաղակ, քաշքշում, զցում են ներս):**

ԿԻՆ – **(Լացակումած)** Ի՞նչ եղավ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Բռնելով մեջքը)** Վա՛յս...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – **(Այլայլված)** Ընկա՞վ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չընկա, է՛, դուք քաշեցիք գցեցիք ներքև:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Ներողություն:

ԿԻՆ – Քերծվե՞ց:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Բարձրանալով լուսամուտի գոգին, պոռթկալով)** Ապրելու իրավունք չունեն, մեռնելու իրավունք էլ չունե՞մ:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Բոլորս ենք խնդրում, ազնիվ խոսք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես պիտի ինձ չգցեմ, է՛, դուք պիտի ինձ գցեք: Գոհ չե՞ք, որ ես եմ գցում: Որտեղ պատահի բռնեք, բռնեք կախեք ինձ մմաններին: Նրանք շատ չե՞ն դժվարացնում ձեր կյանքը: Բոլորին կախեք, չթողնեք ոչ մեկը մնա: Ինձ մմանները շատ չեն, մի վախեցեք, ձեզ մմաններն են շատ:

ԿԻՆ – Կարթնանա հանկարծ, ինչո՞ւ ես բղավում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Որ աշխարհը խուլ է, բա ի՞նչ անեմ: Վան Գոգը մեռավ քաղցից, Փարիզը չամաչեց: Դուք ինչո՞ւ պիտի ամաչեք: Փարիզը սպանեց Վան Գոգին, բայց նույն Փարիզը Վան Գոգին Վան Գոգ դարձրեց: Ի՞նչ կարևոր է, թե ով է ասել: Ճիշտ չի՞ ասել: Եթե պիտի չդարձնեք, ինչո՞ւ եք սպանում:

ԱՂՋԻԿ – Հայրիկ, իջիր...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Նոցված, իրեն կտրատելով)** Ոչ ոք իր բնական մահով չի մեռնում: Ըս-պա-նում են... Մինչև չեն սպանում, չի մեռնում: Բնական մահ չկա՛, չկա՛: Հո-րի-նել են...

ՏՂԱ – Իջիր, հայրիկ:

ԿԻՆ – Արամ... Իջիր, իջիր մի կտոր բան կեր, հետո... Սոված ես:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Սովածը դուք եք, ես սոված չեմ: Ստամոքսով եք ապրում, դե առանց դրա ապրեք, է՛... Դուք առանց ձեր ստամոքսի չեք կարող ապրել, չեք կարող: Վան Գոգը մեծահարուստին ասաց՝ եթե ինձ մի քիչ դրամ տաք, ես զարեջուր կխմեմ, ես կապրեմ դրանով: Մեծահարուստն ասաց՝ Վան Գոգ, եթե տամ, դու կկշտանաս, դու էլ չես նկարի: Հիշեք, դուք էդպես կուշտ-կուշտ էլ մեռնելու եք մի օր: Քաղցից չեք մեռնի, կշտանալուց կմեռնեք: **(Որոտալով)** Չեմ հավատում, քաղցից ոչ ոք չի մեռնում, ընչաքաղցությունից են մեռնում:

ԿԻՆ – Մարդկանց հավաքել ես գլխիդ, խայտառակվեցի՞նք շենքով մեկ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞վ է հավաքել, ե՞ս եմ հավաքել, թե՞ դու: Թող չհավաքվեն, ինձ հանդիսատես պետք չի, ցավը հանդիսատես չի ունենում, տխմարությունն է հանդիսատես ունենում:

ԿԻՆ – Մի ժամ առաջ սուրճ էիր ուզում, բերեմ կխմե՞ս:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հա՛, կխմե՛մ... Էստեղ չեմ խմի, է՛, էնտեղ կըխմեմ: Վերջի՞ն բաժակն ես ուզում տաս: (**Ծխախոտ է հանում: Կինը դուրս է գնում**) Մխալն էն գլխից է գալիս: Փոխանակ ճորտերին վերացնեն, ճորտատերերին վերացրին: Եթե ճորտ չլինի, ճորտատեր կլինի՞: Ստրուկը չի սարսափելին, է՛, ստրկամտությունն է սարսափելի: Դե ձեզ ներշնչեք, ներշնչեք, որ ստրուկ չեք: Ներշնչելով է... Ամեն ինչ կվերացնեք, ստրկամտությունը չեք վերացնի: Ճապոնացիներին ասացին եկեք ձեզ մի ուրիշ տեղ հող տանք, ձեր երկիրը տարեք, երկրաշարժից հեռու տեղ սարքեք: Բա ինչն՞ չզնայցին: Ճապոնացին ֆուձիաման կթողնի՞ կզնա, որ դուք թողնում գնում եք: Ամեն ինչից կփախչեք, ձեզնից ո՞ր պիտի փախչեք, է՛, ո՞ր...

(Կինը սուրճ է մատուցում: Խմում է):

ԿԻՆ – Հո շատ տաք չի՞:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (**Կում անելուց հետո, կարծես նոր միայն նկատելով**) Սո՞ւրճ ես բերել: Ես քեզ չասացի՞ չբերես: (**Կում անելուց հետո**) Չէի՞ր կարող գոալի ծայրով մի քիչ շաքարավազ լցնել:

ԿԻՆ – Կա՞, որ լցնեմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (**Կում անելուց հետո**) Եթե կյանքս դառն է, պարտադի՞ր է, որ խմածս սուրճն էլ դառը լինի: (**Խորը ներս քաշելով ծխախոտի ծուխը, մտահոգ, կարճատև դադարից հետո, ինքն իր հետ**) Ես վախենում եմ, որ ես փլված երկրի տեղում այլևս ոչինչ չկառուցվի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ի՞նչ է ասում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես չեմ ասում, է՛, Հարվարդի համալսարանի պրոֆեսորն է ասում: Նա վախենում է, դուք չե՞ք վախենում: (**Կնոջը**) Էսքան մարդու ներկայությամբ սո՞ւրճ եմ խմում: (**Նստում է լուսամուտի գոգին**) Ինձ համար բերել ես, իրենց համար էլ բերեիր: (**Շարունակում է խմել**):

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՍԱՐԴ – Շնորհակալ եմք, մենք չենք խըմում: Դե լավ, ժողովուրդ, մի բուպեով դուրս եկեք: Դեպք է, կպատահի, ի՞նչ է եղել որ... Թողեք մարդն իր սուրճը խմի:

ԳԱՆԳՐԱՆՏԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Դուրս եկեք մի բուպեով, բուլոդ էլ դուրս եկեք, անցավ, ամեն ինչ անցավ:

**ԿԻՆ – (Ուտուճեռ ընկած) Ո՞ւր եք գնում, մի՛ գնացեք: Սպասեք:
(Մենյակն աստիճանաբար դատարկվում է: Մնում է միայն թատե-
րագիրը):**

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

*Նույն սենյակը: Թատերագիրը չկա: Դուրս եկածները
լցվում են ներս: Աիչ, հեծկլտոց, աղմուկ-աղաղակ: Մղվում են
դեպի լուսամուտը: Խառնակ վիճակ, ժխտք, լացուկոծ:*

*Հակառակ կողմից մտնում է թատերագիրը՝ բարձրաց-
նելով շալվարը, կոճկելով:*

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Պայթելով) Չուզարան մտնելու իրավունք էլ չունե՞մ: **(Բարձրանում է լուսամուտի գոգին՝ զրադեցնելով իր տեղը)** Մենակությունս ինչո՞ւ եք խլում: Որ լրիվ մենա՞կ մնամ: Ես ինձ հետ ինձ մենակ չեմ զգում, ես ձեզ հետ եմ ինձ մենակ զգում: Ես մենակ մարդ եմ: Մենակ ծնվել եմ, մենակ էլ պիտի սատկեմ:

ԱՂՋԻԿ – Հայրի՛կ...

ՏՂԱ – Հայրի՛կ...

ԿԻՆ – Արամ...

(Հավաքվածները ձայնակցում են նրանց):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ականջները փակելով) Չեմ մնա, ես էս գծանոցում չեմ մնա: Գլուխս առնեմ, ո՞ր գնամ: Որտե՞ղ դնեմ գլուխս, որ հանգստանամ: Ուզում եմ մտցնեմ տողերիս արանքը, էնքան խիտ եմ զրում, որ էնտեղ էլ տեղ չկա: Գլուխս առնեմ, հիմա ո՞ր գնամ:

ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան: Մարդիկ քնած են:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Խեղճ կենդանին էլ էնտեղ է իրեն կտրատում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Խոցված) Նա որ իրեն կտրատում է, անհանգրստանում եք: Շուն է, է՛, մարդ չի... Մի շան չափ էլ չկա՞մ:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – (Միամիտ) Ո՞վ է ասում, որ չկաք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Տենդով քոնկված) Բա ասում էիր գեղեցիկը աշխարհը կփրկի, ինչո՞ւ չի փրկում:

ԱՂՋԻԿ – Հայրի՛կ, իջիր:

ՏՂԱ – Իջի՛ր, հայրի՛կ:

ԿԻՆ – Արամ, սպասի՛ր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞ւմ սպասեմ, էլ ո՞ւմ սպասեմ...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ի՛նձ լսիր, լավ մարդ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Ընկեր Արամ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Քսանութամյա թոքախտավոր Միֆոնը Լոնդոնը փրկեց զարշահոտությունից, Լոնդոնը նրան չփրկեց: Առաջ գլխարկ էի կարում, չէ՞... Բա ինչո՞ւ թողեցի... Տեսա, որ մարդկանց գլխարկ չի պետք, գլուխ է պետք:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ինչ ասես, մարդը հերստտել է, կարծում եք հե՞շտ է:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կնոջը, գրեթե շշուկով) Իսկապես, բայց ի՞նչ է եղել: Եթե գաղտնիք չի, իհարկե...

ԿԻՆ – Ոչ մի բան: Սուրճը դրել էի կրակիին, թափվեց:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Բռնկվելով) Ի՞նչ սուրճ, խելագար: Դու սուրճը չէիր դրել կրակիին, դու ի՛նձ էիր դրել, ի՛նձ... Դու քո կյանքում գոնե մի անգամ ինձ խելքը գլխին սուրճ տված կա՞ս:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Համենայնդեպս մի բան եղել է, հո հենց էնպես չի...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բոլորն իրենց կանանց հետ գան, մստեն սեղանի շուրջը, ես առանց իմ կնո՞ջ: Նրանք քո եղունգն արժե՞ն, դժբախտ: Ի՞նչ սուրճ... Դուք որ սխալ եք ծնվել, ձեզ չեք ճշտում, գիտեք թե դո՞ւք եք ճիշտը: Ես քեզ ամենալավ խոսքերը պիտի ասեի, որ դեռ ոչ ոք, ոչ ոք չի ասել էս աշխարհում: Թողեցի եկա, որ էլի չգա՞ս: Ի՞նչ սուրճ...

ԿԻՆ – Մի քիչ ցածր, կարթնանա հանկարծ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Արթնանում է, թող արթնանա: Էս ձայները շենքում լսում են, ինքն իր տան մեջ չի՞ լսում:

ԿԻՆ – Դե իջիր, հագնվեմ, գնամք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Վրեժխնդիր) Ի՞նչ... Ինձ էլ պետք չի քո գալը, քո գալն ինձ էլ պետք չի: Ո՞ւր ես գալիս, ինչի՞ համար ես գալիս:

ԿԻՆ – Գալիս եմ, ուր ուզում ես, գալիս եմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Պայթելով) Սպանելուց հետո՞... Ինձ էլ պետք չի քո գալը: Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձնից...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կողքինին) Ո՞ւմ են սպանել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Չիմացա:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Ասում էի, չէ՞, մի բան եղել է, հո հենց էնպես չի...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Որտե՞ղ են սպանել, մեր շենքում...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Ե՞րբ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ո՞ւմ են սպանել:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Չգիտեմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ինչո՞ւ չգիտեք, մորություն՞ն է, ամեն օր մարդ չե՞ն սպանում: Ես թղթի վրա մարդ եմ ստեղծում, դուք մարդ եք սպանո՞ւմ:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ներողություն, ո՞ւմ են սպանել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չեն սպանել, է՛, սպանել եք:

ՓՍՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Ապշած) Ո՞վ... Մե՞նք...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա ո՞վ... Ե՞ս... Դուք մարդ չե՞ք: Մարդը չի՞ մարդ սպանում: Իրենց կողքը կանգնածին են սպանում, է՛, հեռու կանգնածին ձեռքները չի հասնում: Ում որ սպանում եք՝ նախ ձեզ չե՞ք սպանում: Ինձ սպանեք, ձեզ ինչո՞ւ եք սպանում:

ԿԻՆ – Արա՛մ... Աստված ջան, իմ մեղքը ո՞րն է:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Բռնկվելով) Հարևաններիդ հետ «ջանով» խոսիր, Աստծու հետ ինչո՞ւ ես «ջանով» խոսում, խելագար: Ես գոնե մի տեղ օգտագործել եմ էդ նողկալի բառը, որ դու ասում ես: Դու չգիտե՞ս, որ ես էդ բառի նկատմամբ ավերգիա ունեմ, չգիտե՞ս: Ուզում ես, որ մարմինս էլի դուրս տա՞: Դա՞ ես ուզում: **(Բղավելով, հատու)** Դուք Աստծու հետ գործ չունեք:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Շատ ներողություն, ի՞նչ է, մեզ Աստված չի ստեղծել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որոտալով) Չէ՛, ձեզ Աստված չի ստեղծել: Աստված իր նմանին է ստեղծում: **(Հավատով, ռխով)** Նա իր ազնիվ կավը չէր խառնի ձեզ, չէր խառնի: Սուտ է, ձեր շաղախի մեջ կավ չկա, չկա: Չեզ մսից են ստեղծել, դուք եք ձեզ իրարից ստեղծել:

ԿԻՆ – Դե ասում եմ իջիր գնանք, չես գալիս:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞ր գամ, հրեշ: Էլ ո՞ր գամ... Բո գալն էլ ինձ պետք չի:

ՓՍՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կողքինին) Հետաքրքիր է, ո՞ւմ են սպանել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Կուրծք ծեծելով) Ի՛նձ են սպանել, ի՛նձ... Սպանելիս չեք զարմանում, սպանելուց հետո եք զարմանո՞ւմ: Կենդանության օրոք կսպանեք, մահիցս հետո ինձ չեք սպանի: Մեռնողներն են մահից վախենում, չմեռնողներն ինչո՞ւ պիտի վախենան: Նրանք էլ վախենան, ե՞ս էլ... Մինչև չմեռնեմ, ո՞նց իմանամ, որ ապրում եմ:

ԿԻՆ – Չթողնեք... Արա՛մ... Վա՛յ, մամա ջան...

(Ակնոցավոր տղամարդը իրեն զգում է ներս՝ ձեռքերը քափահարելով):

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՍԱՐԴ – (Համբերությունը հատած, գոռոռալով) Պիտի թողնե՞ք աշխատեմ, թե չէ՞: **(Միջահասակ տղամարդուն)** Նա ինչո՞ւ է հաչում: Գոնե շանդ ձայնը կտրիր, եղբայր: **(Թատերագրին)** Ա՛յ տղա, դու դեռ էդտե՞ղ ես:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ձղաձիգ) Բա որտե՞ղ էիր ուզում, որ լինեմ: Հուսահատվեցի՞ր, որ դեռ էստեղ եմ: **(Դաղված)** Շուտո՞վ, շուտով քեզ լավ կզգաս:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ե՞րբ, եղբայր, ե՞րբ... Յերեկը նստում սպասում եմ, որ գիշերը գա, գիշերն աշխատեմ՝ խնդրեմ... Դեռ ոչ մի տող չեմ գրել:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հոգուն հասած) Ինչի՞ համար գրես... Ո՞ւմ համար գրես... Էդքան գրել ես, ի՞նչ ես հասկացել, որ էլի գրես: Փո՞ղ է պետք: Քիչ ունե՞ս: Համ փող եք ուզում ունենալ, համ փա՞ռք: Շատ չեղա՞վ... Չես ունենա: Հետո ինչ, որ փառքն էլ է փ-ով սկսվում, փողն էլ: Դրանք տարբեր փ-եր են, իրար հետ կապ չունեն, չսխալվեք հանկարծ, մեկ է, չեք ունենա: Փող ունեցողը երբեք չի կարող փառք ունենալ: Դրանք հակացուցված բառեր են: Փողով ամեն ինչ կզմենք, փառք չեք գնի: Չեր կենդանության օրո՞ք եք ուզում ամեն ինչի հասնեք: Դե եթե հասնող եք՝ ձեր մահից հետո հասեք, է՛: Որ դեռ ողջ եք, ձեզ թվում է, թե մեռած չե՞ք: Էսօր տարաք, վաղն էլ հո չե՞ք տանելու ուրիշի փառքը: **(Խորովվելով)** Թող տանե՛ն, տանեն ինչքան ուզում են, վաղվա օր էլ կա, չէ՞: Մուտ է, մեռնողն իր կենդանության օրոք է մեռնում, մահից հետո չի մեռնում: Կար ժամանակ, որ Շեքսպիրը մեռած էր, չէ՞: Մի ժամանակ մեռած չէ՞ր: Բա ո՞նց կենդանացրին: Պարզվեց, որ թաղել են, չի մեռել: Կթաղեք, է՛, բայց չեք մեռցնի:

ԱՂՋԻԿ – Հայրի՛կ...

ԿԻՆ – Արա՛մ... Վա՛յ, մամա ջան... Չթողնեք...

ՏՂԱ – Հայրի՛կ, իջի՛ր:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Լսիր, ի՞նչ ես անում, ա՛յ տղա, դու հո խելագար չե՞ս: Դու իմ դեմ ես անում եղ բոլորը, կարծում ես չգիտե՞մ, եղբայր: Դիտավորյալ ես անում, որ խանգարես, չաշխատեմ: Եթե գիշերը չէի աշխատելու, ցերեկն ինչո՞ւ քնեցի, եղբայր: Մա ի՞նչ խուլիզանություն է: Քաղաքապետարանի որոշում գոյություն ունի, եղբայր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Խախտված շնչառությամբ) Ուրիշի որոշումներով եք ապրում, բա դուք ոչ մի բան չե՞ք որոշում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Դու իրավունք չունես ինձ խանգարելու, եղբայր, ինչի՞ մասին է խոսքը: Մա ի՞նչ դժբախտություն է, եղբայր: Մե լինեք այն օրը, որ քեզ հետ միասին նույն շենքում բնակվեցի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որոտալով) Չբնակվեիր: Պարտադի՞ր է, որ Մոցարտի մոտ միշտ Մայլերի լինի: Ինչո՞ւ... **(Ակնոցավոր տղամար-**

դը գնում է՝ շրխկացնելով դուռը) Բա Սալյերիի մոտ ինչո՞ւ Մոցարտ չկա, Մոցարտի մոտ Սալյերի կա: Դե եթե իր սովերն է, թող սովերն իր տիրոջը մման լինի, ինչո՞ւ է ինքն իրեն մման: **(Ինքն իրեն, զարմանքով)** Կարո՞ղ է դրանք իրար հետ են ծնվել: **(Կտրատելով իրեն)** Աշխարհը մոցարտներով չի լցված, սալյերիներով է լցված: Ես ոչ մեկից չեմ վախենում, ես իմ սովերից եմ վախենում, որովհետև հետ եմ դառնում, տեսնում, որ էլի ինքն է, ես չեմ: **(Ինքն իր հետ կռիվ տալով)** Ի՞նչ անեմ, հետ չնայե՞մ, թողնեմ թիկունքից խփի՞: Խփո՞ւմ եմ, խփո՞ւմ եմ, էն էլ ոնց են խփում: Ինքդ քեզնից փախար, դու քո սովերից ո՞ր պիտի փախչես, է՛, ո՞ր պիտի փախչես: Փախչե՞ս՝ էլի առաջդ է դուրս գալու: Թողնես գնաս, մեկ է, էլի հետևիցդ գալու է: Քեզ կմոլորեցնես, է՛, նրան չես մոլորեցնի, նա քեզ կմոլորեցնի: Դե գնա, տեսնեմ առանց նրա ուր պիտի գնաս: Կթողնի՞, որ գնաս: Առանց նրա մի քայլ չես անի, մի... Մինչև վերջ պիտի սպանի, որ հանգստանա: Մինչև վերջ սպանում է, հետո ինչ, որ Մոցարտ ես: Մոցարտ չլինեիր՝ չէր սպանի: Նա հիմա՞ր է, որ իր մմանին սպանի: Իր մմանն ինքն է, ինքն իրեն սպանի՞: Ինչո՞ւ... Իր մմանն իրեն չի խանգարում, ով իր մման չի, նա է խանգարում, նա: Նրան պիտի սպանի, որ հանգստանա: Բա դու Մոցարտ լինես, ինքը Սալյերի լինի՞: Ինչո՞ւ... Աստծուց իր վրեժը չի հանի, է՛, քեզնից կհանի: Մուտ է, ոչ մի նախանձ էլ չկա, տեսակի կռիվ է: Իր տեսակը չես, պրծավ գնաց... Բա դու քո տեսակը ունենաս, ինքը չունենա՞: Ինչո՞ւ... Դե եթե էդքան լավ բան է չունենալը, դու էլ մի ունեցիր: Ախր ո՞նց չունենամ, որ ես իմ տեսակն ունեմ: Ինձ հանդուրժում են, տեսակս չես հանդուրժում, որովհետև ես իրենց տեսակը չեմ:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Մի հուզվեք, խնդրում եմ, հանգստացեք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես հանգիստ եմ, իրենք են անհանգիստ:

ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան: Մարդիկ քնած են:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ինքն իր հետ) «Մեռելախաղի կերակուրները պաղ մատուցվեցին...» **(Կնոջը, բորբոքվելով)** Պետք չի, պետք չի, ինձ մեռելախաղ պետք չի, քաղքենիություն չանես հանկարծ...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Լավ գրադարան ունեք: **(Հանում է գրքերից մեկը, բարձրաձայն ինչ-որ տողեր է կարդում: Նրա օրինակին են հետևում մյուսները):**

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Որ մինչ այդ լուռ ծխում էր, հանկարծ պոռկալով) Բա դուք ինչո՞ւ չեք ձեզ գցում:

ԳԱՆԳՐԱՋԵՐ ՏՂԱՄԱՐԴ – (Շփոթված) Մե՞նք...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հա, դուք, բա էլ ո՞վ:
 ԿԻՆ – (Հանդիմանանքով) Արամ...
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – (Չարմացած մայելով կողքի կանգնածներին) Չհասկացա, մենք ինչո՞ւ պիտի մեզ զցենք:
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ինչո՞ւ, դուք մարդ չե՞ք:
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Այսինքն, ճիշտ է ասում էլի, ինքը մարդ է, մենք մարդ չե՞նք:
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կողքինին) Լո՞ւրջ է ասում:
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա ձեզ թվում է, թե կատա՞կ եմ անում:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Դեռ ուշքի չեկած) Ո՞վ զցի:
 ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԴ – Մե՞նք...
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա ո՞վ, ե՞ս... Եթե մարդ եք, դուք ինչո՞ւ չեք ձեզ զցում: (Հեզանքով) Չեր սեփական կյանքը թանկ է ձեզ համար, հա՞...
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ո՞ր կյանքը, էս կյանքը... (Փղճկում է) Բա սա կյանք է: Ախ, երանի չե՞ր...
 ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – (Ինքն իրենից ձեռ քաշած) Իբր սա կյանք է, որ թանկ լինի կամ էժան: Մենք որ չենք խոսում, կարծում եք, թե հենց էնպե՞ս է...
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏԻԿԻՆ – (Մտածկոտ) Էս ամեն ինչին մենք ոնց ենք դիմանում, գլուխ չեմ հանում:
 ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Տիրապետելով իրեն) Ո՞վ է դիմանում... Դիմանո՞ւմ ենք որ... (Արցունքները սրբելով) Ինչ-որ չեինք տեսել, դա էլ տեսանք:
 ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԴ – (Հոգոցով) Փառք Աստծո, ինձ քիչ է մնում ապրելու, կարծենեմ էս ամեն ինչից:
 ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Սիրելիներս, ինձ ճիշտ հասկացեք, էս հո չեմ ուզում ապրել, էս ուզում եմ տեսնել, թե էլ ինչ է լինելու:
 ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Հորանջում է՝ փակելով քերանը) Ասենք թե մի քիչ էլ ապրեցինք, հետո՞... Բա՞ն է փոխվելու...
 ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Առաջ մղվելով, մոլեգին) Ես անհնարինու-թյան եմ ձգտում, դո՞ւք ինչի եք ձգտում: Ֆոլքները չի ասել է՛, էս նրանից առաջ եմ ասել, հետո՞ ինչ, որ նա հայ չի, էս հայ եմ: Կրակն ընկա՞, որ հայ եմ: Դե զցեք, զցեք, ինչո՞ւ չեք զցում:
 ԱՂՋԻԿ – Հայրիկ...
 ՏՂԱ – Հայրիկ, իջիր:
 ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան, մարդիկ քնած են:
 ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Արամ, սիրելիս...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Պարոն Արամ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Դուք գիտե՞ք մենք ձեզ ինչքան ենք հարգում: Մի՛ արեք այդ բանը, խնդրում եմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ինքնատիրապետունը կորցրած) Ի՞նչ եք խնդրում, ինչի՞ համար եք խնդրում: Որ իրար հռչակելով հաշտ ու խաղաղ ապրում եք, կարծում եք, թե ճիշտը դո՞ւք եք: Դուք էլ բոլորն ինչի՞ համար եք անում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – (Մոլորված) Ո՞ր բոլորը...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես չգիտեմ որ բոլորը... Դո՞ւք գիտեք որ բոլորը... (Լուսամուտից դեպի դուրս) Ձեր էս քնած աշխարհը մթության մեջ չի ընկղմված, է՛, մեղքի մեջ է ընկղմված: Հանգիստ քնել եմ, բա որ չարթնանա՞ն: Միրուց չեն արթնանա, ատելությունից կարթնանան: Ում խիղճը քնած է, նա չի արթնանա: Ում խիղճը քնած չի, նա կարթնանա: (Ոխով) Քնած տեղն է՞լ եք դավեր նյութում, էլի մեկը մյուսի դե՞մ եք դուրս եկել: Եթե մեկը մյուսի դեմ դուրս չգաք, չե՞ք ապրի: Ձեզ էլ թվում է, թե դո՞ւք եք ապրում: Տիրոջ ողորմածությամբ չե՞ք ապրում: Պատահաբար չե՞ք ողջ մնում առայժմ: Հավիտենական քուն էլ կա, որ քնում են ու էլ չեն արթնանում: (Կրակված) Բա որ քնած չլինեիք, հիմա ինչեր կանեիք: Ձեր ուզելով է, որ չքնեք: Ձեր կարծիքով Տերը ինչի՞ համար է ստեղծել գիշերը: Աշխարհի մեղքը թեթևացնելու համար չի՞ ստեղծել, որ քնեք, մեղք չգործեք: Ձեր կյանքի կեսը քնած չեք անցկացնում: Բա որ էդ մի կեսն էլ արթուն անցկացնեիք, չե՞ր կրկնապատկվի էս աշխարհի մեղքը: Էլ ո՞նց կշնչեիք էս օդը: Ապականել եք, է՛... Շնչահեղձ չեի՞ք լինի: Ձեր ապականած օդի մեջ ճիչ կա, ճիչը չե՞ք լսում: (Ապշած) Ես լսում եմ, դուք չե՞ք լսում: (Չարմացած, ինքն իրեն) Կարո՞ղ է՝ չկա, ես եմ լսում: Ես լսում եմ, դուք չե՞ք լսում: Եթե չլինի՝ ո՞նց կլսեմ, ո՞նց, է՛, ո՞նց... Ճիչը կա, լսող չկա: Որ քնած են, ո՞նց լսեն: (Շրջվելով հավաքվածներին) Նրանք են քնած, չեն լսում, դո՞ւք էլ չեք լսում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Ձեռքը տանելով թրթռացող կրծքին, կարճատև դադարից հետո, ինքն իրենից վերացած) Ես լսում եմ, ազնիվ խոսք, լսում եմ:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Ես չեմ լսում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Չարմացած) Բա ես ո՞նց եմ լսում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Չէ, չեմ լսում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Աչքերդ փակիր, կլսես:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Փակել եմ, չեմ լսում:

ՓՈՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Հարևանցի, չեղվելով) Մի քիչ ուշա-
 դիր եղեք, դուք էլ կլսեք:
ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԳ – Իրոք, լսո՞ւմ եք:
ՓՈՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Տարված) Այո, իհարկե...
ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԳ – (Հանկարծակի պայծառանալով)
 Ես էլ սկսեցի լսել:
ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – (Տարակուսանքով) Բա ես ինչն՞
 չեմ լսում:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – Լսում ես, է՛, քեզ է թվում, թե չես լսում:
ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Երևի... **(Մեկից սթափվելով,**
զրտանելով ինքն իրեն, սևեռում) Չէ՛, լսեցի՛:
ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԳ – (Լարված ուշադրությամբ) Ես
 ինչ-որ բան լսում եմ:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Պայթելով) Դու ինչ-որ բան չես լսում, դու ճիշ
 ես լսում:
ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԳ – Հավանաբար... Չեմ
 առարկում... **(Հանճնվելով)** Այո՛, ճիշ եմ լսում:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Խառնված) Ասեք, ասեք իմանամ, ո՞վ չի
 լսում:
ԱՂՋԻԿ – (Գերված) Հայրիկ, լսում ենք:
ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Բռնկվելով) Հիմա մամայի ժամանա՞կ է, խե-
 լագար:
ԿԻՆ – (Տեղի տալով) Որ լսում ենք, ասենք՝ չե՞նք լսում:
ՏՂԱ – Հայրիկ, լսում ենք:
ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – (Կենտրոնացած) Ես շատ ուժեղ
 եմ լսում:
ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԳ – Առաջ համարյա չէի լսում, բայց
 հիմա լավ լսում եմ:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Անհանգիստ, գործնական մտահոգությամբ)
 Չլսող կա՞, թող ձեռք բարձրացնի: Չկա՞...
ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Չէ՛, ոնց որ թե չեմ լսում:
ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՍԱՐԳ – Ա՛յ մարդ, ես կողքդ կանգնած
 լսում եմ, դու չե՞ս լսում:
ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Չէ, մի վայրկյան ինձ թվաց, թե
 չեմ լսում, բայց հիմա էլի լսում եմ:
ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Կուրծք պատռելով) Կա՞... Ասեք, չլսող կա՞:
ՓՈՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Գրավված) Չկա, չկա:

(Նրան ձայնակցում են մյուսները՝ չկարկելով իրենք իրենցից):

Մտնում է Ակնոցավոր տղամարդը:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – **(Փրփրած)** Եթե էստեղ լուսթյուն է, ես աղմուկը որտեղի՞ց է գալիս, եղբայր: Եկա, լռեցի՞ք...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Մի խանգարեք, խնդրում եմ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Դ՞ն՞ք եք խանգարում, թե՞ ես...

Ի՞նչ է եղել, եղբայր:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ճիշ ենք լսում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ ճիշ:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Օդում ճիշ կա:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – **(Խշկոտում է՝ փորձելով որսալ)**

Ճի՞շ... Ո՞րք է... Ոչ մի ճիշ էլ չկա:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Վա՛յ, ասում է՝ չկա... Ո՞նց չկա, որ պարզ լսվում է:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն չեք ուզում լսեք, որ չեք լսում:

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Եթե ուզեք՝ կլսեք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Բարձրացնելով ձեռքը)** Մի բռայե, մի բռայե...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Պարզ լսվում է:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Իսկապե՞ս... Չարմանալի բան է, ես չեմ լսում, եղբայր: Տրամվա՞յ էր...

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ տրամվայ, էս ժամին տրամվա՞յ է լինում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – **(Լարելով ուշադրությունը)** Չկա, եղբայր, չեմ լսում: **(Թռփվելով ուսերը)** Եթե լինեք, ես էլ կլսեի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Լսողի համար կա, է՛, չլսողի համար չկա:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Եթե չեմ լսում, ասեմ՝ լսո՞ւմ եմ, եղբայր:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – Էս ո՞նց է, որ բոլորս լսում ենք, դու չես լսում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Երդվում եմ, չեմ լսում: Գուցե լսողությունս է ինձ դավաճանում, եղբայր: Չեմ լսում, եղբայր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Պոռթկալով)** Հոգուդ միջի ճիչն էլ ես ուզում ականջներով լսե՞ս:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հոգու ճիչ, եղբայր, ասում եմ՝ օդում ճիչ կա:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա որ չկա, իրենք ո՞նց են լսում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – (Լարելով ուշադրությունը, խար-
խափելով) Մի բռայե... Դադարե՞ց...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Բռնկվելով) Ի՞նչը դադարեց, էդ ճիչը չի դա-
դարում: Ցերեկվա աղմուկը խանգարում է, որ ցերեկը լսեք, գիշերն էլ
չե՞ք լսում: Որ էսքան արյուն է թափվում, ձեր կարծիքով հենց էնպես
զնում, կորչո՞ւմ է: Հողը չի ընդունում, գլխի չե՞ք ընկնում: (Չեռից զնա-
լով) Ես էդ ձայնից խլանում եմ, դու ասում ես՝ չե՞մ լսում:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ՏՂԱՄԱՐԴ – Բաղաքապետարանի որոշում
զոյություն ունի, եղբայր, ինչի մասին է խոսքը: Ի՞նչ ճիչ... Ես հիմա
նստիկանություն կզանգահարեմ: (Գնում է):

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Դողով) Տեր իմ Աստված, ավելի
ուժեղացավ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա ուզում էիք էսքանից հետո դեռ թուլանա՞ր:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կողքինին, գրեթե շշուկով) Լսո՞ւմ եք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Կլանված) Ո՞նց թե...

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՄԱՐԴ – (Անշարժացած) Շատ պարզ...

ՄԻՋԱՀԱՍՍԿ ՏՂԱՄԱՐԴ – (Անձնատուր եղած) Լռություն,
լռություն մի բռայե...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – (Ինքն իրեն) Եթե լսում ես,
իհարկե, լսվում է:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բոլո՞րդ եք լսում, կարո՞ղ է մեկնումեկը չի
լսում: Չլսող կա՞... Չկա՞...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Չեռքը տանելով կրծքին) Բոլորս ենք
լսում, բոլորս, ազնիվ խոսք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա որ լսում եք, դուք, դուք ինչո՞ւ չեք ձեզ
զցում: Մի քիչ շա՞տ չեք ձեզ սիրում: Եթե դուք չեք զցում, ե՞ս էլ չզցեմ:
Բա ո՞վ զցի: Մեկնումեկը պիտի իրեն զցի՞, թե՞ չէ:

ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Եթե գոյացել ենք՝ մենք սիրուց չե՞նք գոյացել:
Ուրիշ էլ ինչի՞ց: Բա ինչի՞ համար եք իրար ատում: (Փոփոխական
բռնկումներով) Եթե չեք սիրում, ո՞նց եք իմանում, է՛, ո՞նց եք իմա-
նում, որ ապրում եք, դա ինձ բացատրեք: Եթե ապրում եք, ձեզ թվում
է, թե ապրո՞ւմ եք: Ինչո՞ւ եք ուզում, որ ձեր սիրտը ձեր ուղեղին
ենթարկվի: Բռնությա՞ն եք դիմում: Առանց ուղեղի կապրեք, առանց
սրտի չեք ապրի: Չե՞նք տեսնում, ապրում են... Էս ամեն ինչը որ
եղավ, դրանի՞ց չեղավ: Մեռակ դուք պիտի ձեր սրտի կարիքը չզգաք,
է՛, նա էլ ձեր կարիքը պիտի զգա: Բա թրթռա ու չիմանա՞ ում համար է

թրթռում: Սի՞րտ կդիմանա: **(Ապշած, աչք ածելով չորս կողմը)** Չե՞ք
զգում, որ թթվածինն էլ չի հերիքում: **(Հևալով)** Շնչահեղձ չե՞ք լինում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Թատերագրի կնոջը) Ներողություն,
ձեզ մոտ վոլեդոլ կլինի՞: Թրթռոց զգացի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հանդիմանանքով) Տիկին, Տերը նրա համար
չի՞ ձեր կրծքի տակ սիրտ դրել, որ թրթռա:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Կնոջը) Լավ, հարկավոր չի:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – (Կողքինին) Իմն էլ իրեն զգացնել
տվեց:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չեր սրտի թրթռոցն էլ չեք ուզում զգա՞ք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Իմ առիթմիան սկսվեց: Չէ՛, ան-
ցավ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Չերն անցավ, իմն սկսվեց:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ես եմ, որ սրտիս տեղը չզիտեմ:

(Ցնցվելով) Չէ՛, իմն էլ զգացնել տվեց:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հիշեք, հիշեք, վաղը թթվածինը ձեզ կարոն-
ներով են տալու: Դրամով չեն ծախելու, է՛, դոլարով են ծախելու:
Էդքան դոլար ձեզ ո՞վ կտա, որ առնեք, տանեք տանը շնչեք: Հիմա էլ
դրա համար եք իրար կոտորելու: Դոլարով թթվածին կառնեք, է՛,
թրթիռ չեք առնի: **(Ահագնանալով)** Սուտ է, թթվածնի քաղցից չի կոր-
ծանվելու աշխարհը, ատելությունից է կործանվելու: Ում սիրում եք,
նրան չեք սիրում, է՛, դուք էլի ձեզ եք սիրում: Բա որ ձեզ չեք սիրում,
ուրիշի եք սիրում, ինչի՞ համար է ատելությունն էսքան շատ: Եթե
չատեք, չե՞ք սիրի: Անպայման պիտի ատե՞ք, հողագունդը մի օր
կորցնելու է իր հավասարակշռությունը, չէ՞: Չե՞ք զգում, որ արդեն
կորցնում է: Առանց էդ էլ մազից չի՞ կախված: Դե թող պտտվի,
տեսնեմ մինչև երբ պիտի էսպես անիմաստ պտտվի, մինչև ե՞րբ:
Էսքան ատելությամբ ո՞նց կդիմանա: Բա որ անկախ իր կամքից
պտույտները դանդաղեցնի, օրերից մի օր կանգնի՞: Սրտխառնոց
չե՞ք զգա: Գունդ է, չէ՞: **(Չարմացած, ինքն իրեն)** Գունդ չի՞: Մի օր
զլորվելու է: Չեր կարծիքով էդ մազը չի՞ բարակում: **(Ինքնատիրա-
պետունը կորցրած, ինքն իրենից առաջ ընկնելով)** Բա ինչո՞ւ չեք
զգում, դե զցեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Թևաթափ) Ո՞վ է ասում, որ չենք
զգում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Սա մնալու աշխա՞րհ է, որ
մնանք, իմ արև:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Ո՞վ գիտի, թե իր հետ էլ ինչ է լինելու:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Լացակումած) Ո՞վ կմնա որ... Ես չեմ մնա: Հորս եմ հիվանդ թողնում, զնում, նրան եմ խղճում:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Բա ե՞ս ինչ ասեմ, որ շանս եմ ամտեր թողնում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Մեղք չի՞, նրան էլ քեզ հետ տար, ինչո՞ւ ես թողնում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մահվանից առաջ վերջին բուպեին մատդ ինչի՞ համար դիրք քունքիդ, Բեռնարդ Շոու, որ ասես ես եղպես էլ չհասկացա՞ դրամատուրգիայի գաղտնիքը: Մե՞զ ես ձեռ առնում, թե՞ քեզ: Եթե չէիր հասկանալու, եղբան տարի էլ ինչի՞ համար էիր ապրում: Դու որ չհասկացար, բա ո՞վ հասկացավ, է՛, ո՞վ: Միշտ է եղպես եղել, միշտ: Հասկացողներին թվում է, թե չեն հասկանում, չհասկացողներին է թվում թե հասկանում են: (Խոցված) Դրա համար է ես աշխարհն էսքան անհասկանալի: Դե դրեք, էլի, դրեք, դուք ինչո՞ւ չեք ձեր մատդ ձեր քունքին դնում: Դրեք, դրեք, որ գա օրը, տեսնեմ դուք ի՞նչ պիտի ասեք: Մտածե՛լ եք: Ինչի՞ եք սպասում. որ գա, հետո ասե՞ք, հիմա ասեք:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Ցնցված) Ի՞նչ ասեմք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես չգիտեմ, թե ինչ ասեք, դուք պիտի իմանաք, թե ինչ ասեք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – (Քթի տակ) Իհարկե, մենք պիտի իմանանք, թե ինչ ասեմք:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Ամեն մարդ ինքը պիտի իմանա, թե ինչ ասի:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Անշուշտ, ուրիշը չի ասի մեր փոխարեն, սիրելիներս:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ասելու բա՞ն է մնացել, որ ասեմք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Բա որ չի մնացել, էլ ինչո՞ւ եք սպասում: Չկարծեք, թե որ օրերից մի օր եկել եք ես աշխարհը, դրանով ամեն ինչ վերջացավ: Չեզանից առաջ էնքան մարդ կար, որ կարող էր գալ, բա ինչո՞ւ չեկան: Չեկան, որովհետև գիտեին, գիտեին ուր են գալու, դրա համար չեկան: Չեզ թվում է, թե առանց ասելու պիտի թողնեք գնա՞ք: Չէ, չեք գնա, մինչև չասեք, չեք գնա: Տերը ձեզ վերջին հնարավորությունն է տալիս, որ գոնե մի անգամ անկեղծ լինեք, դրանից էլ չօգտվե՞ք: Չեզնից ոչ ոք չգիտի: Նա գիտի, թե ձեզնից ամեն մեկը

ինչ պիտի ասեք: Եթե չասեք էն, ինչ որ ինքը գիտի, մեկ է, ինչ էլ ասեք՝ չի ընդունի: Ձեր հոգու փրկության համար պիտի ասեք, որ թեթևացած հոգով գնաք էս աշխարհից: Չկեղծեք ձեզ վերջին շնչում, նախօրոք եմ զգուշացնում: Ձեզ ասեք, ձեզ, ձեր մտքի մեջ ասեք, ինձ մի ասեք: Դե ասեք, ասեք, ինչի՞ չեք ասում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ասում եմ... (Բոլորի ուշադրությունը դառնում է նրա կողմը: Գծագրվում է շրթունքների շարժումը):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Դադարից հետո) Վերջացրի՞ք:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Այո: (Փղձկում է):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Կշտամքանքով) Տիկին, էն աշխարհում լաց չեն լինում, էս աշխարհում են լաց լինում: Էն աշխարհում չեն լացացնում մարդկանց:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ներեցեք: (Տիրապետում է իրեն՝ թաշկինակով սրբելով արցունքները):

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Կենտրոնանալով) Մի վայրկյան մտքերս հավաքեմ, եթե կարելի է:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Խառնվելով իրար) Միտք պետք չի, պետք չի, մի՛ հավաքեք: Առանց մտածելու ասեք, որ իմանամ մտածում եք:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – (Հանում է շյապան) Ասում եմ... (Սկսվում է շրթունքների շարժումը):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Դադարից հետո) Վե՞րջ:

(Գլխով է անում՝ դնելով շյապան):

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – (Քաշվելով մի կողմ) Կարելի՞ է...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ասեք:

(Գանգրահեր տղամարդն ամփոփվում է ինքն իր մեջ՝ ձեռքերը խաչելով կրծքին, շրջապատից վերացած, առանց շրթունքների շարժման, հայացքը սկեռուն մի կետի):

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՍԱՐԴ – (Համերությունը հատած) Չը-հասկացանք, հիմա ասո՞ւմ է, թե՞ չի ասում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Լարված) Մի՛ խանգարեք: Մեղք եք գործում:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ասում է, չե՞ք տեսնում, որ ասում է:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – (Թեթևացած խորը շունչ է քաշում՝ իջեցնելով ձեռքերը) Ես վերջացրի:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Էնքան բան կա ասելու, մարդ չգիտի՝ ինչ ասի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մի՛, մի բան պիտի ասեք:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Ասում եմ... (Լսվում են քրթմնջոցները):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չայն չսվի: Չեզանհից բացի ոչ ոք, ոչ ոք չպիտի իմանա, թե ինչ եք ասում:

(Լռությամբ շարունակվում է միջահասակ տղամարդու շրթունքների շարժումը, որին զուգակցվում է դրսից լսվող աղիւղորմ հայտը):

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՍԱՐԳ – **(Անջատվելով ինքն իրենից)** Մի բռայե... Վերջացնի, շարունակեն:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Կապ չունի, ասեք, ասե՛ք, մի՛ ընդհատեք: Կա՛րճ, կա՛րճ...

(Շարունակվում է նույն տեսարանը):

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՍԱՐԳ – Ինչ որ ասացի, դա էր իմ ասածը, ես էլ ուրիշ բան չունեմ ասելու: Ներողություն, մոռացա, մի բան էլ հիշեցի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ուշ է, ուշ է, վերջ: Էդ հնարավորությունը մարդուն մի անգամ է տրվում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Դե որ մի անգամ է տրվում, ես գիտեմ, թե ինչ կասեն: **(Կրճտացնում է ատամները: Շրթունքների շարժումից զգացվում է, որ հայհոյում է):**

ՏԱԹԵՐԱԳԻՐ – **(Բռնկվելով)** Դադարեցրեք, դադարեցրեք...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – **(Հոգուն հասած)** Մտքիս մեջ էլ որ չասեմ, բա ի՞նչ անեմ, պայթում եմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Հետ վերցրեք, ինչ որ ասացիք՝ հետ վերցրեք, մաքրված հոգով պիտի գնաք ես աշխարհից, հետ վերցրեք:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Հետ եմ վերցնում: **(Խաղաղվում է շրթունքների շարժումը)** Էդքան բան...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Կնոջը)** Բա դու ինչո՞ւ չես ասում, դժբախտ:

ԿԻՆ – Ասում եմ... **(Շրթունքների շարժումից զգացվում է, որ աղոթում է՝ աչքերը հառած վեր):**

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Տիրոջը խնդրում ես, որ իր մարմինը փրկի՞: Մամնի համար չեն աղոթում, հոգու համար են աղոթում, խելագար: Թող ոչ մեկի մտքով չանցնի, որ ասաց էմ, ինչ որ պիտի ասեր: Կգա օրը, դուք ուրիշ, ուրիշ բան կասեք: Չեր իմացածը չեք ասի, Տիրոջ իմացածը կասեք: **(Մղվում է դեպի դուրս):**

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏՂԱ – Հայրիկ...

ԿԻՆ – Աբամ...

(Մյուսները ձայնակցում են նրանց):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Տննդի մեջ, ինքնամոռաց) Բա ասում էիր գեղեցիկն աշխարհը կփրկի, ինչո՞ւ չի փրկում:

(Լույսերը մարում են):

ԿԻՆ – (Իրեն կորցրած) Վա՛յ, մամա ջան: Արա՛մ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ի՞նչ է, ի՞նչ եք գոռոռում, էստեղ եմ:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Մարսափած) Տեր իմ Աստված, ես մթուքյունից վախենում եմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Մաստող) Եթե հոգուդ մեջ լույս կա, ինչի՞ց ես վախենում, տիկին:

ԱՂՋԻԿ – Էս ո՞վ դիպավ ինձ:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Հանգի՛ստ, հանգի՛ստ, մի՛ խառնըվեք իրար:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Քանի դեռ աշխարհում մի թշվառ մարդ կա, ես չեմ ժպտա: Քեզ թվում է, թե ես կժպտա՞մ, պարոն Դոստոևսկի: Թշվառը դու ես, հանճարեղ ընկնավոր: Թշվառը նա է, ով իրեն թշվառ չի համարում: Աշխարհն ամոթից փակել է աչքը, իբր թե բան չի տեսնում...

ԿԻՆ – Վա՛յ, մամա ջան, եմ ո՞վ գնաց լուսամուտի կողմը: Ինչո՞ւ չեմ խոսում, էս ո՞ր եմ գնում գալիս: Չայն հանեք, իմանամ ով եք:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Ոտքիս տակ ինչ-որ մի բան եմ տրոքում, ձեր շյապա՞ն է:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԳ – Ի՞նչ իմանամ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Ճչալով) Մի՛ համբուրեք ինձ:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԳ – Բա ո՞ւմ համբուրեմ:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – (Նվաղելով) Չգիտեմ... Վերցրեք... Ո՞ւմ տամ, ո՞ւմ շյապան է, մարդ չեմ տեսնում:

ԿԻՆ – (Ահաբեկված) Մեկն էլ գնաց լուսամուտի կողմը:

ՏՂԱ – Հայրիկ, եմ ի՞նչ եմ անում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԳ – Հանգի՛ստ, հանգի՛ստ, մի՛ խառնըվեք իրար:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Մաստրոյանիից խլեցին իր տղամարդկային արհեստը, կինոաստղ սարքեցին ո՞ր ինչ: Առաջ երկաթի հետ էր կռիվ տալիս, հիմա ինչի՞ հետ կռիվ տա: Մարդուն իր դեմ են հանում, որ չիմանա դրանցից որն էր ինքը: **(Բռնկվելով)** Կռիվ ունեք՝ խավարի դեմ արեք ձեր կռիվը, էս խավարի դեմ չէ, է՛, ձեր հոգու խավարի դեմ: Եթե եղ խավարը չլինի, էս խավարը կլինի՞:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՍՄԱՐԴ – Խեղճ կենդանին էլ էնտեղ է իրեն կտրատում: Չի հաշտվում մթության հետ:

ԿԻՆ – (Ճչալով) Էն ո՞վ է ուզում իրեն զցի: Հետ եկավ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հրամայական) Հե՛տ, հե՛տ...

ԿԻՆ – Ո՞վ ես:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍՄԱՐԴ – Չգիտեմ, մութ է, չեմ տեսնում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ո՞վ է:

ԿԻՆ – Չի ասում... Չեմ տեսնում...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Դու իրեն չես տեսնում, ինքն էլ իրեն չի՞ տեսնում:

ԱՂՋԻԿ – Մամ, մեկն էլ գնաց...

ԿԻՆ – Ինչո՞ւ չեք խոսում:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍՄԱՐԴ – Հանգի՛ստ, հանգի՛ստ, մի՛ խառնըվեք իրար:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՍՄԱՐԴ – Հա, ինչ էի ուզում ասել... Հիշողություն էլ չի մնացել: Մոռացա, թե ինչ պիտի ասեմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Կհիշեք, թե չեք հիշի, դա չի դժբախտությունը: Երբ մարդկությունն է կորցնում իր հիշողությունը՝ դրանից զգուշացեք:

ԿԻՆ – Էս ո՞ր եմ գնում: Չայն հանեք, իմանամ ով եք:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Եթե մութ է, ձեզ թվում է, թե լույս չի՞: Հիմա ոչ մեկը մյուսիդ չեք տեսնում, հիմա հոգու աչքերով եք տեսնում:

ԿԻՆ – Էս ո՞ր եմ գնում, էլի գալիս: Տիկին, դուք ո՞ր եք գնում: Տիկի՛ն...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏՂԱՍՄԱՐԴ – Գնում եմ այնտեղ, որտեղից եկել եմ:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍՄԱՐԴ – Ներողություն, ձե՞զ կպա:

ՄԻՋԱՀԱՍՍԱԿ ՏՂԱՍՄԱՐԴ – Ես ինչ գիտեմ՝ ինձ կպաք, թե ում: Ով է ում տեսնում:

(Պատարագ է սկսվում: Չայնակցում են իրար):

ԿԻՆ – (Ճչալով) Վա՛յ, մամա ջան, զցում է իրեն:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Ահեղ) Ո՞վ է զցում: (Որոտալով) Թող չփորձի... Ձեզնից ինչո՞ւ եք ձեզ թաքցնում: Լույս տեղն են զցում, է՛, մութ տեղը չեն զցում, մութ տեղն աղոթում են:

(Փայլիլուն տիկինն աղոթք է մրմնջում: Մյուսները միանում են նրան):

(Լույսերը վառվում են):

ԲՈԼՈՐԸ – (Բացի թատերագրից) Ուռուա՛, լույս եղիցի...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Կատաղությանը) Սո՛ւս, սո՛ւս... Ի՞նչ ուռռա, ի՞նչ ուռռա... Դուրս եկեք, դրսում գոռացեք, տունս ինչո՞ւ եք պղծում: «Ուռռա» գոռալով չեկա՞ք հասաք էս օրին: Ո՞վ էր ուզում իրեն զցի... (Սպասողական դադարից հետո, հեզմայից) Ախ, լո՞ւմ է... Մութ տեղը ով ասես իրեն կզցի, դե գցող եք՝ հիմա զցեք, է՛... Դե զցեք, զցեք, ինչո՞ւ չեք զցում: Դուք ձեզ չեք զցի, չէ, չեք զցի:

ԱՂՋԻԿ – Հայրիկ...

ՏՂԱ – Հայրիկ...

ԿԻՆ – Արա՛մ...

(Մյուսները ձայնակցում են նրանց):

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Լարված, նույն անկանոն շնչառությամբ)

Գեներալ Դը Գոլը գլխարկը դրեց իր գերեզմանին, ես ի՞նչս պիտի դնեմ: **(Կնոջը)** Պետք չի, ոչ մի բան պետք չի, չխառնվես իրար... Հանկարծ չիմանամ, որ ինձ վրա քար ես դրել: Մեկ է, տակը չեմ մնալու, մարմինս է մնալու, ինձ մարմին պետք չի: Դա ես չեմ, ինձ հետ կապ չունի: Սրտիս վրա դրած քարը ինչքան որ ինձ ճնշեց էս աշխարհում, հերիք է: Չեր էդ գերեզմանաքարերով մահս չվավերացնեք հանկարծ: Եթե դնում եմ՝ դրա՞ համար չեմ դնում: Ինձ քար պետք չի, ինձ հող է պետք: Էդ շքեղ քարերը որ ծանր-ծանր դնում եք, բա ձեր խիղճը չի՞ տանջում տակի մարդու համար: Նրանց համար չեք դնում, է՛, ձեզ համար եք դնում: Դրանք նրանց արձանները չեն, դրանք ձեր արձաններն են: Չեզ թվում է, նրանք գնացին, դուք մնացի՞ք: Բոլորդ եք զնացող, բոլորդ: Ոչ մեկը չեք մնալու, ձեր մտքով չանցնի, թե մնալու եք: **(Լուսամուտից դեպի դուրս)** Քնե՛ք, քնեք ինչքան ուզում եք... Ոչ ոք չի գալիս մնալու համար, գալիս եմ՝ գնալու համար, ձեզ էլ թվում է, թե դուք մնալո՞ւ եք: **(Շրջվելով դեպի հավաքվածները)** Ես ինձ թողած գնում եմ: Գնում եմ, որ էլի գամ, չեմ զնում, որ չգամ:

ԿԻՆ – Արամ, սպասիր... Վա՛յ, մամա ջան...

ՄԻՋԱՀԱՍՏԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Ընկեր Արամ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես ձեզ ի՞նչ ընկեր...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄԱՐԴ – Պարոն Արամ...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Եվ ոչ էլ «պարոն»...

ԿԻՆ – Մի քիչ ցածր, կարթնանա հանկարծ... Մորդ ես քնից հանում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Եթե մայր է, ինչո՞ւ է քնած:

ԿԻՆ – Չե՞ս հիշում, ինչքան ուշ պառկեց: Թողեցի՞ր, որ քնի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ինքն է քնած, մայրական քնագոն էլ է քնած, քա նրան քան չի՞ ասում, ոչ մի քան չի՞ ասում: Եթե մայրական քնագոն է քնած՝ աշխարհն է քնած: Մենակ նա չի քնած, բոլորդ եք քնած, ձեզ թվում է, թե դուք արթո՞ւն եք: Թվալով չի, է՛... Բոլորդ եք լեթարգիզական քնի մեջ, բոլորդ... Բայց մի օր կարթնանաք, չէ՞... Կարթնանա՞ք, էն էլ ո՞նց կարթնանաք: Կգա, կգա օրը... Որդիներն արթուն են, մայրերն են քնած, այնինչ հակառակը պիտի լիներ...

ԿԻՆ – Մի քիչ ցածր... Վա՛յ, մամա ջան, ինչո՞ւ ես գոռում:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Լավ եմ անում, խլացե՞լ է: **(Դեպի կից սենյակը, որտեղ քնած է մայրը)** Ինչո՞ւ չես արթնանում, չէիր արթնանալու՝ չծնեիր: Ծնել ես՝ արթնացիր: Եթե մայր ես, դու իրավունք ունե՞ս քնելու: Մայրը քա կքնի՞: Ծնում եք, ինչի՞ համար եք ծնում: Ձեզ հաշիվ տալի՞ս եք: Ձեզ թվում է, թե մենակ բարի՞ք եք ծնում: Բա էս աշխարհի չարիքն ո՞վ է ծնում: Էլի դուք չե՞ք ծնում: Բա որ դուք չեք ծնում, ո՞վ է ծնում: Բարիքը մայր ունի, չարիքը մայր չունի՞: **(Չարմացած, ինքն իրեն)** Ինչո՞ւ... Դուք մեզ ձեզ համար եք ծնում, ձեզ... Դուք մեզ համար չեք մեզ ծնում: Ձեր հաճույքի համար ես ինչո՞ւ պիտի կյանքովս հատուցեմ, ո՞ր մեղքիս համար: Ես քեզ խնդրե՞լ եմ, որ դու ինձ ծնես: Խնդրե՞լ եմ...

(Մտնում է մայրը՝ գիշերանցով, ավելը ձեռքին):

ՄԱՅՐ – **(Նախահարձակ լինելով)** Ի՞նչ է, ես գիշերվա կեսին ի՞նչ ես ձեռք գլուխդ գցել, ա՛յ տղա: Էն ժամանակ չթողեցիր քնեմ, հիմա՞ ինչ ես ուզում: Բա դու խիղճ ունե՞ս:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Չէ՛, ես խիղճ չունեմ, իմ խիղճը դու ես:

ՄԱՅՐ – **(Ավելն սպառնալից թափահարելով)** Թողեք, թողեք գցի, տեսնեմ ոնց է գցում: **(Հարվածելով թատերագրի ոտքերին)** Գցիր, դե գցիր...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Թո՛ղ, թո՛ղ... Հետ տար ավելը:

ԱՂՋԻԿ – Տատ...

ՄԱՅՐ – Դե գցիր...

ՏՂԱ – Տատ, մի՛ արա...

ՄԱՅՐ – Գցիր, դե գցիր...

ԿԻՆ – Ի՞նչ ես անում, ա՛յ կին... Վա՛յ, մամա ջան...

ՄԱՅՐ – Գցիր, դե գցիր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – **(Պաշտպանվելով)** Հեռու տար ավելը:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Կարիք չկա, մայրիկ...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Մայրիկ, ես ձեզ խնդրում եմ...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Մայրիկ, թող...

(Այս ու այն կողմից փորձում են ետ պահել մորը):

ՄԱՅՐ – (Շարունակելով հարվածներ տեղայ) Գցիր, շուտ արա, գցիր...

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ի՞նչ ես անում, պառավ:

ՄԱՅՐ – Գցիր, գցիր, շուտ արա... Գցիր... Դե գցիր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ավել ունես՝ աշխարհի կեղտերը մաքրիր, ի՞նչ ես անում:

ՄԱՅՐ – Գցիր, դե գցիր: (Չանչ է անում՝ դառնալով հավաքվածներիմ) Որ խնդրեք էլ, նա իրեն չի գցի: Ես եմ ծնել՝ ես գիտեմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Քեզ թվում է, որ դու ինձ չծնեիր, ես չէի ծնվելու՞: Տիրոջ կամքն ես կատարել, մա՛յր, դու քո կամքը չես կատարել: Քրիստոսն իր մորը մայր չէր ասում, ես քեզ մայր եմ ասում: Շատ կուզեիր, որ չծնեիր: Քո ուզելով է... Դու չծնեիր, մի ուրիշը կծներ: Ծնվելուց հետո ինձ համար մեկ չի՞, թե ով ինձ կծնի: Էլի ես մեղավոր աշխարհը չէ՞ր բերելու: Որ ծնել ես՝ ի՞նչ է, է՛, ի՞նչ...

ՄԱՅՐ – Գցիր, ա՛յ տղա, դե գցիր:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ավելդ հեռու տար, աչքս ես մտցնում:

ՄԱՅՐ – (Հավաքվածներիմ) Էս, ես վախկոտին տեսեք... Որ աղաչեք էլ՝ նա իրեն չի գցի:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Նայում է լուսամուտից ներքև՝ անմիջապես ետ քաշելով գլուխը) Ո՞վ չի գցի:

ՄԱՅՐ – Գցիր, դե գցիր:

ԱՂՋԻԿ – Տատ...

ՏՂԱ – Տատ, մի՛ արա:

ԿԻՆ – Լավ էլի, այ կին...

ՄԱՅՐ – Ես եմ ծնել, ես գիտեմ:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – Ես չգիտեմ, դու գիտե՞ս:

ՄԱՅՐ – Դե գցիր ասում եմ, գցիր, շուտ արա:

ԹԱՏԵՐԱԳԻՐ – (Հանձնվելով, հանդիսավոր) Այն, ինչ որ մայրը գիտի, աշխարհում ոչ ոք չգիտի: (Իջնում է, ծխախոտ է վառում՝ քաշվելով մի կողմ, գլուխն առնելով ասիերի մեջ):

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՄԱՐԴ – Ասում էի, չէ՞... Պետք չէր...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Իհարկե, պետք չէր...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՄԱՐԴ – Բոլորովին պետք չէր...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՄՐԴ – Փառք Աստծո... (Հորանջում է՝ արագ փակելով բերանը):

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՄԱՐԴ – Ամեն ինչ էլ կպատահի, ինչ է եղել... Մարդ չե՞նք...

ԿԻՆ – (Հավաքվածներին) Շնորհակալություն... (Խորը շունչ քաշելով, տանջահար) Վա՛յ, մամա ջան...

ՄԱՅԻ – Ներող կլինեք, ժողովուրդ: (Խփելով ծնկներին) Իմ մեղքը շատ է:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Ոչինչ, մայրիկ, հարևանն էլ ո՞ր օրվա համար է: (Թատերագիրը գլուխը կախ դուրս է գալիս՝ մտնելով կից սենյակը):

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – (Կողքինի ականջին) Չհասկացանք, ուրեմն էս բոլորը հենց էնպե՞ս էր...

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Եսիմ...

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Եսիմը ո՞րն է, որ եղպես դուրս եկավ:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Ես գիտեի, որ չի գցի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Մենք գցե՞նք, ինքը չգցի՞:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Դե եթե ինքը չէր գցելու, մեզ ինչո՞ւ էր ասում գցեք:

ՀԱՂԹԱՆԴԱՍ ՏՂԱՍԱՐԴ – Եթե ինքը չէր գցելու, իբր մենք ինչո՞ւ պիտի մեզ գցեինք:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Ես էլ չհասկացա:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Գլուխ չեմ հանում...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Իմ հիմար խելքը... Հորս իզուր թողեցի եկա: Գիտե՞ք մենք իրեն ինչքան ենք հարգում: Ախր եղպես էլ չի կարելի... Ընեքի բնակիչների մեջ հիվանդ մարդիկ կան, երեխաներ կան... Եթե սխալ եմ ասում, ասեք սխալ եմ ասում:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Քունս չէր տանում: Վեր կացա, քնաբեր խմեցի, հիմա էլ ինքը չթողեց, որ քնեմ: Եթե չէի քնելու, ինչո՞ւ խմեցի:

(Լսվում է շան հաչոցը):

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Խնդրեմ: Ինքը նրան չթողեց քնի նա էլ ինձ չթողեց: Ախր ինչի՞ համար...

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Չի կարելի, չէ՞... Մեր նյարդերն էլ պողպատից չեն: Մենք իրեն հարգում ենք, թող բարի լինի ինքն էլ մեզ հարգի:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Եթե իմանայի պիտի չքնեմ, իսկի կխմեի՞: (Փորձում է հորանջել, ափով փակում է քերանը) Հիմա ես ի՞նչ անեմ:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Շանս մեղքի տակ էլ ընկա իզուր տեղը:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՍԱՐԴ – Ամոք է, ամո՛ք, տղամարդ ես...
Եթե չէիր գցելու, ասեիր՝ չեմ գցելու: Մենք հո պարապ մարդ չե՞նք: Էս
գլխով ո՞նց եմ գործի գնալու:

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՍԱՐԴ – Մեզ էլ ուրիշ հոգս ու ցավ
չունենք, հենց միայն սա էր պակաս:

ՇԼՅԱՊԱՅՈՎ ՏՂԱՍԱՐԴ – Չեմ հասկանում, մե՞զ են ձեռ
առնում, թե՞ իրենց: (Ափով փակում է քերանը՝ կանխելով հորանջելը)
Հիմա ես ի՞նչ անեմ: Եթե չէի քնելու, ինչո՞ւ խմեցի:

ՄԻՋԱՀԱՍԱԿ ՏՂԱՍԱՐԴ – Ո՞ւմ են երեխայի տեղ դրել:

ՓԱՅԼՓԼՈՒՆ ՏԻԿԻՆ – Դե եթե այդքան ռիսկ չունեիր, էլ ինչո՞ւ
էր բարձրացել վերև:

ՀԱՂԹԱՆԴԱՄ ՏՂԱՍԱՐԴ – Համենայնդեպս կարիք չկար
էսքան մարդու անհանգստացնել, եթե մեջտեղը լուրջ բան չկար:

ՄԱՅՐ – Առավոտից իրիկուն կռիվ է տալիս քղթերի հետ, տուն
չի կարողանում պահի, բա ի՞նչ անի բալես: (Փղձկում է):

*(Հարևաններն իրար գլխով են անում՝ դուրս գալով տնից:
Կհնն ու երեխաները մնացել են շվարած: Կից սենյակից լսվում
է քնած թատերագրի խոռոցը):*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

1993 թ., Երևան

ԲԵՄԻ ՊԱՐԾԱՆՔ, ՓԱՂՔ, ՓԱՂՔ

Սատիրա երկու մասից

*Ասի թե՛ մարդ եք ախար դո՛ւք,
չե՛ք տեսնում մարմինս
ծվառ...*

Ե. Չարենց

**ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍԻ ԴԵՐՈՒՄ
ՀԵՂԻՆԱԿԸ ՆԿԱՏԻ Է ԱՌԵԼ
ԽՈՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Չ Ի Ն Ք

ԲԵՆԻԱՄԻՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ – հայտնի դերասան

ՀՈՎՀԱՐՈՎ ՏԻԿԻՆ – Չառա անունով,
անճնագրով՝ Լուսնթագ

ԱՌԱՋԻՆ ԱՀԱԲԵԿԻՉ – Սև մականունով

ԵՐԿՐՈՐԴ ԱՀԱԲԵԿԻՉ – Թուրք մականունով

ՎԱՐՍԱՎԻՐ, որի անունը Սոկրատ է

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Մեկսենյականոց բնակարան: Բազմոց, մի կողմում՝ լրագրասենդան, վրան հեռախոս, կողքը՝ մագնիտոֆոն, շուրջը՝ երկու աթոռ: Դիմացի պատին՝ Քրիստոսի մեծադիր պատկերը: Հնչում է մուտքի զանգը: Հետևում է հեռախոսի զանգը: Միաժամանակ քակում են դուռը: Դրսից աղմկոտ ձայներ են լսվում. «Բենիամին... Խուրշուդյան... Խուրշուդյան Բենիամին... Բաց արա, մենք ենք... Խուրշուդյան... Բենիամին Խուրշուդյան»: Մեկից շրխկոցով բացվում է դուռը: Ներս են ընկնում երկու ահաբեկիչներ՝ աչք ածելով չորս կողմը: Հեռախոսի զանգերը դադարում են:

ԱՌԱՋԻՆ ԱՀԱԲԵԿԻՉ – (Չարմացած, ինքն իրեն) Բաց էր: ԵՐԿՐՈՐԴ ԱՀԱԲԵԿԻՉ – Մենք էլ քակում ենք իզուր տեղը:

(Ահաբեկիչները խոսում են իրենց հատուկ «զոդական լեզվով»՝ ծամծամելով բառերը):

ԱՌԱՋԻՆ – Էս ո՞ւր է, տանը չի՞:

ԵՐԿՐՈՐԴ – (Չայն է տալիս) Խուրշուդյան... Բենիամին...

(Մտնում է խոհանոց) Բենիամին... (Վերադառնալով) Չկա:

ԱՌԱՋԻՆ – Չուզարանը տես...

ԵՐԿՐՈՐԴ – (Գնում է, ձայնը դրսից) Խուրշուդյան... (Գալով)

Չուզարանում էլ չկա:

ԱՌԱՋԻՆ – Իմացել է՝ գալու ենք, թողել, գնացե՞լ է: Բաղնիքը նայիր...

ԵՐԿՐՈՐԴ – Խուրշուդյան... Պարոն Խուրշուդյան... Նայեցի, չկա:

ԱՌԱՋԻՆ – (Թիկն տալով բազմոցին) Կարո՞ղ է էլի փոկեր է խաղում հարևանի տանը:

ԵՐԿՐՈՐԴ – Դուռն ինչի՞ պիտի բաց թողներ, գնար:

ԱՌԱՋԻՆ – (Գրպանից ատրճամակ է սահում, ընկնում է հատակին) Սա ինչի՞ ընկավ, չհասկացա: (Չեռքը երկարում, վերցնում է):

ԵՐԿՐՈՐԴ – Սև, բա որ հանկարծ գլխի ընկնի, որ խաղալիք է, իսկական չի՞:

ԱՌԱՋԻՆ – (Ափի մեջ խաղացնելով իսկականից արտաքուստ չտարբերվող խաղալիք-ատրճամակը) Մինչև ձեռք չտա, ո՞նց կիմանա: Չհավատաս... (Դնում է գրպանը) Թուֆ, տես ջուրը գալիս է, մի բաժակ ջուր բեր խմեմ:

ԵՐԿՐՈՐԴ – (Գնում է, ձայնը խոհանոցից) Չէ, չի գալիս, կտրել եմ:

ԱՌԱՋԻՆ – Թերմոսից լցրու:

ԵՐԿՐՈՐԴ – Ո՞ր է, որտե՞ղ է դրել: Դերասանիս տեսեք, մի քերմոս էլ չունի տանը:

ԱՌԱՋԻՆ – (Լարելով ուշադրությունը, ականջ է դնում՝ հաված քազմոցին) Էս անտերի մեջ մուկ կա՞: (Ուղղվում է):

ԵՐԿՐՈՐԴ – (Գալով) Շշից լցրի:

ԱՌԱՋԻՆ – (Կում անելուց հետո) Պահ... մեզ... (Հետ տալով բաժակը) Պիտի բռնես, իրեն խմեցնես, որ խելքը գլուխը գա: Նայիր տես, տանը հարմար բան-ման չունի՞:

ԵՐԿՐՈՐԴ – Չէ, հա՛... Նայել եմ: (Ցույց տալով պատից կախված սրբապատկերը) Մրա ունեցածը էս է:

ԱՌԱՋԻՆ – Քրիստո՞սը...

ԵՐԿՐՈՐԴ – Հանե՞մ...

ԱՌԱՋԻՆ – Հանես ինչ անես, վերնիսաժում քափած եմ, դրան հիմա զին տվող չկա: (Հանկարծակի սրտնեղած) Է՛, լավ էլի, համը հանեց էս անտերը: (Վեր է կենում քիկնած տեղից. բացելով քազմոցը, ապշանքով) Բենիամի՞ն... Էդ ո՞ր ես...

ԵՐԿՐՈՐԴ – (Աշխուժանալով) Պարոն Խուրշուդյանը...

ԱՌԱՋԻՆ – Շոր են խցկել բերանդ, սպասիր հանեմ: (Երկրորդին) Պարանները քանդիր:

ԵՐԿՐՈՐԴ – (Արձակելով) Էս պատվավոր մարդու ձեռ ու ոտը էս ո՞վ է կապել, զցել սրա մեջ:

ԱՌԱՋԻՆ – Մենք էլ ասում ենք՝ դուռը բաց, էս ո՞ր է թողել զնացել:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Նրանց օգնությամբ դուրս գալով) Շնորհակալություն: (Թափ է տալիս շորերը՝ հարևանի մայելով պատից կախված Տիրոջ պատկերին՝ ստուգելու համար՝ տեղում է, թե տեղում չէ):

ԵՐԿՐՈՐԳ – (Որսալով Բենիամինի հայացքը) Ուզում ես իմանալ՝ ինքն է, թե ինքը չի՞... Ինքն է...

ԱՌԱՋԻՆ – Վա՛յ ես ձեր... Բա ես տեսակ դերասանին ես օրը կզգե՞մ: Բարև...

ԵՐԿՐՈՐԳ – Բարև ձեզ...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Հոգոցով) Բարև...

ԱՌԱՋԻՆ – Ազգի պատիվն են գցում էդ էշի տղերքը: (Երկրորդին) Էն ջուրը բեր, շփիր երեսին, թող ուշքի գա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Պետք չի...

ԱՌԱՋԻՆ – Մի բռայե... Մենք գիտե՞նք, թե՞ դու...

ԵՐԿՐՈՐԳ – (Բաժակով ջուրը լցնելով Բենիամինի գլխին) Ուխա՛յ...

(Բենիամինը թափահարում է գլուխը):

ԱՌԱՋԻՆ – Մեզ թոջեցիր, այ անխիղճ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ներեցեք:

ԱՌԱՋԻՆ – Էդ մազերդ ինչի՞ չես սարքել տալիս, Բենո:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ինչո՞ւ Բենո և ոչ Բենիամին...

ԱՌԱՋԻՆ – Ընկերական եմ ասում... Ի՞նչ տարբերություն...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե կա, էլի, որ ասում եմ...

ԵՐԿՐՈՐԳ – Սև, երևի փող չունի, որ սարքել տա:

ԱՌԱՋԻՆ – Չունի, թող ասի, մենք տանք:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Արժանապատվությունը զգալ տալով)

Եղա՞վ... Պատկերացրեք, որ ժամանակ չի լինում: Ազնիվ խոսք:

ԱՌԱՋԻՆ – Հարցնելն ամոթ չլինի, քեզ մման տղամարդու ձեռն ուտը էդ ո՞նց են, է՛, կապել, զգել սրա մեջ, գլուխ չեմ հանում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ոչինչ, կստանա՞ն... Գուլպա էին քաշել դեմք-նեքին, որ չճանաչեմ...

ԱՌԱՋԻՆ – Ասե՛ք թե՛ դու իրենց չճանաչեիր, իրենք էլ քեզ չճանաչեի՞ն, քեզ չճանաչող կա՞...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ինչ ասեմ... Երկրի վիճակից են օգտվում, պարզ չի՞, չգիտեն իրենց գլխի գալիքը: Կիմանա՞ն, էն էլ ո՞նց կիմանան...

ԵՐԿՐՈՐԳ – Մարդու բախտը բերեց, գոռո՞վ է...

ԱՌԱՋԻՆ – Մի երկու բռայե էլ ուշ գայինք, ձեռից գնացել էր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ապրեք: Նստե՛ք, տղաներ:

ԱՌԱՋԻՆ – Հը, ո՞նց ես, հիմա լավ ես, չէ՞:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բա ինչ եմ, որ լավ չեմ, դեռ մի բան էլ ավել եմ:

ԵՐԿՐՈՐԳ – Մարդ իմանա՛ ովքեր են եղել...

ԱՌԱՋԻՆ – Հարյուր մարդուց փող է պարտք արել, ո՞նց կիմանաս...

ԲԵՆԻԱՄԻՆ – Կիմանա՞մ, իհարկե՛ կիմանամ, իրենց չթվա, թե չեմ իմանա, կգա՛ն, կգան շան մման ոտքերս կընկնեն: **(Հեռախոսի զանգ: Չեղբի ժամացույցը աչքի անցկացնելուց հետո)** Հեռուստատեսությունից է: **(Չի վերցնում լսափողը: Ջանգերը դադարում են)** Տղաներ, ձեզ ներդրումն տվի, հա՞:

ԱՌԱՋԻՆ – Ներդրումն ո՞րն է... Էլ ո՞վ ունենք հարազատ...

ԵՐԿՐՈՐԴ – Էդ էր պակաս, ի՛...

ԱՌԱՋԻՆ – Չես ուզում Բենո ասեմ, չեմ ասի, պարոն Խուրշուրյան: Գիտես, չէ՞, էսօր ամսի քանիսն է, Բենիամին:

ԲԵՆԻԱՄԻՆ – Գիտեմ:

ԱՌԱՋԻՆ – Գիտես, չէ՞, ժամը քանիսն է:

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Աչքի անցկացնելով ժամացույցը)** Երկուսը: Հինգ պակաս...

ԱՌԱՋԻՆ – Քոնը հինգ րոպե հետ է, առաջ գցիր: Մենք տղամարդու պես քո ասած օրը, քո ասած ժամին եկել ենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տղաներ, բայց ես պիտի ներդրություն խնդրեմ, գիտե՞ք:

ԱՌԱՋԻՆ – Ինչի՞ համար...

ԲԵՆԻԱՄԻՆ – Որ չեմ կարող հիմա տալ:

ԵՐԿՐՈՐԴ – Ի՛... **(Բենիամինի խոսքերի վրա ամեն անգամ լեզվով դժգոհ ծայացնում է):**

ԱՌԱՋԻՆ – Էս ի՞նչ է ասում... Չէիր կարողանալու, ասեիր՝ չգայինք:

ԵՐԿՐՈՐԴ – Ի՛... Չե՞ն է առնում...

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե լիներ, ուրեմն կարո՞ղ է չտայի:

ԱՌԱՋԻՆ – **(Ատրճանակը սահեցնում է գրպանից)** Էս ամտերն ինչի՞ ընկավ: **(Հատակից վերցնում, խաղացնում է ասի մեջ):**

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Մրտնեղած, ակնարկելով ատրճանակը)** Լավ, էլի, իբր դա ինչի՞ համար հանեցիր: Մակարո՞վ է...

ԱՌԱՋԻՆ – Դե որ գիտե՞ս, էլ ինչի՞ ես հարցնում: Չհանե՞մ:

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Թոքվում է ուտերը)** Ի՛նչ ասեմ...

ԱՌԱՋԻՆ – Մա էլ մեր աշխատանքային գործիքն է, սա չհանեմ, քա ի՞նչ անեմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ազնիվ խոսք, ես էդ տեսակ կատակներ չեմ սիրում, տղաներ:

ԱՌԱՋԻՆ – Իսկ ո՞վ է կատակ անում, որ սիրես կամ չսիրես:

ԵՐԿՐՈՐԳ – Ի’...

ԲԵՆԻԱՍԻՆ – Երևի չեք հավատում, հա՞, որ չունեմ:

ԱՌԱՋԻՆ – Ասա, էլի, ասա մի իմանամ՝ առաջ ճի՞շտ չէին անում, որ դերասանին ոչ աղջիկ էին տալիս, ոչ էլ դերասանից աղջիկ էին առնում: Մեր ի՞նչ գործն է՝ ունես, թե չունես, մարդ ես, խոսք ես ավել, խոսքիդ տեր եղիր: Բախտդ բերել է, որ դու ես, եթե դու չլինեիր, մենք հիմա վաղուց էինք ստացել էդ փողը:

ԲԵՆԻԱՍԻՆ – Գիտեմ, ուրեմն ես չգիտե՞մ:

ԱՌԱՋԻՆ – Դե լավ, որ գիտես: Դե որ գիտես, բեր տուր: Դու՛ դու ես, մենք էլ՝ մենք ենք: Ես չեմ ուզում, որ դու ինձ քեզանից ավել հարգես, բայց ոչ էլ ուզում եմ, որ դու ինձ քեզանից պակաս հարգես: Ինչքան ուզում ես բեմի պարծանք եղիր, բա դա ինձ պե՞տք է... Մխալ եմ ասո՞ւմ:

ԲԵՆԻԱՍԻՆ – Չէ, ճիշտ ես ասում, ե՛ս եմ սխալ ծնվել:

ԵՐԿՐՈՐԳ – Ի’...

ԱՌԱՋԻՆ – Բա մենք մեղք ունե՞նք, որ դու սխալ ես ծնվել:

Ճիշտ ծնվեիր, ո՞վ էր ձեռքդ բռնել: Մարդուց երկու ամսով պարտք ես վերցրել, երկու տարի է՝ տանում-բերում ես, չես տալիս: Նա էլ էդ գործը զցել է մեզ վրա, որ մենք ստանանք:

ԲԵՆԻԱՍԻՆ – Ո՞վ, Յուլիյա՞...

ԵՐԿՐՈՐԳ – Հա, Յուլիյա, բա էլ ո՞վ...

ԱՌԱՋԻՆ – Իբր ինքը չգիտի՞, որ դու ես ասում:

ԲԵՆԻԱՍԻՆ – Տղանե՛ր, կարո՞ղ է պատահի, որ ես ձեզ սուտ ասեմ: Առայժմ չունեմ, ինչն՞վ երդվեմ, որ հավատաք:

ԱՌԱՋԻՆ – Քո երդումը մեզ պետք չի, մեզ փողն է պետք:

ԲԵՆԻԱՍԻՆ – Հասկանում եմ, ուրեմն կարո՞ղ է պատահի՝ չեմ հասկանում:

ԱՌԱՋԻՆ – Դե որ հասկանո՞ւմ ես, տուր... Մեկ է, մինչև չտաս, մենք էստեղից գնացողը չենք: Տանդ բան-ման չունե՞ս, ծախսիր տուր:

ԵՐԿՐՈՐԳ – Հա՛, ծախսիր տուր:

ԲԵՆԻԱՍԻՆ – Ծախելու բա՞ն է մնացել, որ ծախսեմ: Առնողն ո՞վ է: Եղած-չեղածը թողել եմ կնոջս, ինչ որ հագիս եղել է, տեսնում եք, էլի, ինչ ասեմ, սրանցով եմ դուրս եկել տնից: Հա, միայն պատից կախված Տիրոջ էս ցկարն եմ վերցրել հետս: Խոհանոցում մի սառ-նարան կա, ցույց կտամ, դա էլ իմը չի: Ինչ որ տեսնում եք, չէ՞, էս իրերից ոչ մեկն ինձ չի պատկանում, ուզում եք հավատացեք, ուզում եք մի հավատացեք: Հարևաններն են բերել:

ԱՌԱՋԻՆ – Է՛, լավ, եթե գիտեիր, որ չես կարողանալու մարդու պարտքը տաս, չվերցնեիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ոչ մի պարտք անող նախօրոք չգիտի, որ չի կարող, անելուց հետո է իմանում: Էդպես է, ցավոք սրտի:

ԱՌԱՋԻՆ – Ափսո՛ս, որ դու ես... Քեզ մնան դերասանին բա սազո՞ւմ է...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ճիշտ եք ասում, իհարկե, չի սազում:

ԵՐԿՐՈՐԴ – Շատ ներողություն, էդքան դուլար քո ինչի՞ն էր պետք, որ վերցրել ես սրանից-նրանից, Բենիամին Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – Պատկերացրեք, որ իսկի պետք էլ չէր: Կինս էր խեղդում, ասում էր դու մարդ չես, դրա համար են քեզ թատրոնից հանել: Ոտքերը գետին էր խփում, հիստերիայի մեջ էր ընկնում: Դե, կին է, հագնվել էր ուզում, զարդ-մարդ էր սիրում, ի՞նչ իմանամ: Գոնե կնոջս կոսմետիկայի փողը պիտի տայի՞, թե՞ չէ, դուք ասեք:

ԱՌԱՋԻՆ – Է՛, տայիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կա՞ր, որ տայի: Երևի մի տեղ ինքն էլ էր ճիշտ: Եթե երկու տարի չաշխատես, կապրե՞ս, կարծում եք հե՞շտ է: Փորձեք, էլի, փորձեք... (Ահաբեկիչները մերթ իրար են նայում, մերթ շրջվում՝ ոտից գլուխ չափում են Բենիամինին) Երեքսենյականոց բնակարանս վաճառել եմ, իրենց համար երկուսենյականոց եմ գնել, էս մեկսենյականոցն էլ վերցրել եմ ինձ, բա ի՞նչ անեի: Բնակարան առնող էլ չկա: Բոլորը ծախող են:

ԱՌԱՋԻՆ – Բա մեզ պե՞տք է, թե դու էլ ինչ ես արել: Դուրս չգայիր թատրոնից, իրենք քեզ խանգարո՞ւմ էին:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չէ, ես էի խանգարում իրենց:

ԵՐԿՐՈՐԴ – Ի՛...

ԱՌԱՋԻՆ – Չհասկացա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ես իրենց հանդուրժում էի, իրենք ինձ չէին հանդուրժում: Առանց ինձ իրենք լավ են զգում իրենց, թող լավ զգան: Եթե ես չկամ, իրենց թվում է, թե իրենք կան:

ԱՌԱՋԻՆ – Դե որ չէիր տալու, էդ պարանները ինչի՞ համար քանդեցինք իզուր տեղը:

ԵՐԿՐՈՐԴ – Բերե՞մ:

ԱՌԱՋԻՆ – Հա, բեր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բերի, որ ի՞նչ անեք:

(Երկրորդ ահաբեկիչը հատակից հավաքում է պարանը):

ԱՌԱՋԻՆ – Կանենք, կիմանաս:

(Երկրորդ ահաբեկիչը սկսում է կապկպել Բենիամինին՝ առանց դիմադրության հանդիպելու):

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Կարծես անհաղորդ)** Տղաներ, բայց իզուր եք նեղություն կրում, ազնիվ խոսք: Առանց ձեր կապելու էլ իմ ձեռքն ու ոտքը կապված են: Եթե չի երևում, ձեզ քվում է, թե կապված չեմ, հա՞: **(Երկրորդ ահաբեկիչն)** Թող, թող օգնեմ:

ԵՐԿՐՈՐԴ – Ընդհակառակ էմ, ես կանեմ... Սա էսպես, սա էլ էսպես...

ԲԵՆԻԱՄԻՆ – Սա էլ էսպես...

ԱՌԱՋԻՆ – Դու իզուր ես խառնվում, մենք մեր գործը զիտենք, Բեն... Ներողություն...

ԵՐԿՐՈՐԴ – **(Բենիամինին)** Չեղքերդ հանգիստ թող:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հանգիստ եմ, հանգիստ չե՞մ: Էլի եմ ասում, իզուր եք չարչարվում: Եթե բեմում չեմ, ձեռք ու ոտքս իբր կապված չի, ի՞նչ է...

ԱՌԱՋԻՆ – **(Երկրորդ ահաբեկիչ)** Պրծա՞ր... Քաշվիր մի կողմ: **(Բենիամինին)** Համարիր, որ էլի բեմում ես: Խաղա, տեսնեմ ոնց ես խաղում... Այ, դերասան ես, հիմա խաղա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Խաղամ... **(Ոչնչացնող հայացքով նայելով ահաբեկիչներին՝ կատարում է իր խաղացանկից համապատասխան մենախոսություն, որն անուղղակիորեն հասցեագրում է նրանց: Ավարտվելուն պես, ահաբեկիչները բուռն ծափահարում են):**

ԱՌԱՋԻՆ ԱՀԱԲԵԿԻՉ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԵՐԿՐՈՐԴ ԱՀԱԲԵԿԻՉ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

(Բենիամինը գլուխ է տալիս):

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Ծափերը դադարելուց հետո)** Բայց ինչո՞ւ է Յուլիը ձեզ ուղարկել, թող ինքը գար: **(Հեզմանքով)** Դժվար էր, հա՞...

ԱՌԱՋԻՆ – Չի՞ եկել, ձեռքդ դիր խղճիդ, նոր ասա, չի՞ եկել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Է՛, թող մի անգամ էլ գար, չե՞ր կարելի:

ԵՐԿՐՈՐԴ – Ինչքա՞ն գար ու գնար է՛...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ափսոս չզիտեք, թե մենք ինչքան մոտ ենք եղել: Նույն բակում ենք մեծացել: Յուլիը շուտ գրկվեց մորից: Երևի հինգ-վեց տարեկան էլ չկար: Չէ, չէր լինի... Մայրս առաջ իրեն էր լողացնում, հետո՞ ինձ:

ԱՌԱՋԻՆ – Բա հիմա մեզ պե՞տք է, թե ով ումից առաջ էր լողանում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երևակայեք, լավ է, որ մայրս ողջ չի:

ԵՐԿՐՈՐԳ – Ողորմի իրեն:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե ողջ լինեիր, շատ ծանր կտաներ, ազնիվ խոսք: Նույն անկողնում ոտնուծոց ենք քնել: **(Ինքն իր հետ, խոցված)** Էս ի՞նչ եղավ, որ էսպես եղավ... Սա մենք չենք, նա էինք մենք: Մեզ կարոտել են, Յուլիա...

ԱՌԱՋԻՆ – Մի քիչ շա՞տ չես երկարացնում: Բենիամին Խուրշուդյանը՝ չէ, ով ուզում էս եղիր, մարդուց պարտքով փող էս վերցրել, պիտի տաս:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տամ, էս ասացի չե՞մ տա... Բայց թող Յուլիաը գա, ինքն իմ աչքերի մեջ նայի, էս էլ իր աչքերի մեջ նայեմ, ու էլ ոչ մի բան չխոսենք... Հետո թողնի, գնա:

ԱՌԱՋԻՆ – Նա որ պիտի գար, բա մենք էլ ինչի՞ համար ենք: Դե ասա, քո խաղացածներից մի բան էլ ասա, լսենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Պե՞տք է որ...

ԵՐԿՐՈՐԳ – Եթե պետք չլիներ, չէր ասի՝ ասա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ չե՞ք ուզում պարանները մի քիչ ձգեք: **(Ուտերը թոթվում է, ուզում է զգալ մարմինը)** Ոնց որ թե թուլացան...

ԱՌԱՋԻՆ – Դու հանգիստ եղիր, եթե պետք լինի, մենք կձգենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հիմա... **(Ներքուստ մտնելով դերի մեջ, կարճատև դադարից հետո կատարում է հատված ներկայացումից: Ահարեկիչները ծափահարում են):**

ԱՌԱՋԻՆ – Բենի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԵՐԿՐՈՐԳ – Բենի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

(Բենիամինը գլուխ է տալիս: Ծափերը դադարում են: Տարերքին տրված, կատարում է նոր հատված: Նույն ձևով կրկնվում են ծափերն ու բացակայությունները):

ԲԵՆԻԱՄԻՆ – Երևի ձեզ դուր է գալիս, հա՞, որ գլուխ են տալիս:

ԱՌԱՋԻՆ – Կարգն է եղպես, ծափ ենք տալիս, պիտի գլուխ տաս, բա ի՞նչ պիտի անես:

ԲԵՆԻԱՄԻՆ – Այսինքն՝ ճիշտ եք ասում... Բենին կարոտել են:

ԱՌԱՋԻՆ – Մի հատ էլ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Շատ չեղա՞վ...

ԵՐԿՐՈՐԳ – Չէ՛, չէ, մի հատ էլ...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Ակնարկելով ատրճառակը)** Դա պահիր, էլի՛, լավ էլի՛...

ԱՌԱՋԻՆ – **(Խաղացնելով ասիի մեջ)** Որ պիտի պահեի, էլ ինչի՞ էի հանում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց հարձա՞ր է որ... Ես չգիտեմ...

ԱՌԱՋԻՆ – Կիմանաս... Սկսիր...

(Բենիամինը խոժոռվում է՝ մտնելով դերի մեջ: Յուցադրում է Դեզդեմոնային խեղդելու տեսարանը: Մեկից արձակվում է պարանը: Տեսարանն ավարտվում է ահաբեկիչների շոնդայից ծափերով):

ԱՌԱՋԻՆ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԵՐԿՐՈՐԴ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Գլուխ տալուց հետո)** Ներեցեք, արձակվեց...

ԱՌԱՋԻՆ – Ոչինչ, դու ողջ լինես: **(Երկրորդ ահաբեկիչն)** Էդ ո՞նց էիր կապել:

ԵՐԿՐՈՐԴ – Սև, շատ շարժվեց կանգնած տեղը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կապե՞մ:

ԱՌԱՋԻՆ – Չէ, առայժմ թող մնա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Խնդրեմ, ոնց կուզեք... **(Թաշկինակով սրբում է ճակատը):**

ԱՌԱՋԻՆ – **(Արտաքուստ կարծես մտահոգված)** Էս տեսակ դերասանին բա էդպես կնայե՞մ... Սրանց ինչի՞ չի մայում էս երկիրը: Հետո ինչ, որ դերասան եմ, մարդ էլ եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Նայում եմ, մեղալ եմ տալիս:

ԱՌԱՋԻՆ – Մեղալով փոր կկշտանա՞:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չէ, ինչո՞ւ, շքանշան էլ եմ տալիս:

ԱՌԱՋԻՆ – Նույն բանը չի՞:

(Հեռախոսի զանգ):

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Աչքի անցկացնելով ձեռքի ժամացույցը)** Ռադիոյից է... **(Չի վերցնում լսափողը: Չանգերը դադարում են):**

ԱՌԱՋԻՆ – Հիմա ի՞նչ ես ասում, Բենիամին Խուրշուդյան, էդ փողերը չե՞ս տալիս, թողնենք, գնանք: Թե չէ՝ մենք ձեռքաշողը չենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տղանե՛ր, երկու օր էլ պիտի համբերեք: Ասեմ, որ էս բնակարանը վաճառում եմ: Կծախվի՛ կտամ: Հո ես ձեզ սուտ չե՞մ ասում:

ԵՐԿՐՈՐԴ – **(Առաջին ահաբեկիչն)** Կապե՞մ:

ԱՌԱՋԻՆ – Մի բոպե... **(Բենիամինին)** Բա քեզ նման դերասանին վայել է, որ ամեն անգամ մեզ տանում-բերում ես: Չէիր կարողանալու ապրես, թատրոնից դուրս չգալիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իբր թատրոնը փո՞ղ էր տալիս... Շատ ներողություն, ես չեմ դուրս եկել, ինձ համել եմ:

ԵՐԿՐՈՐԳ – Դու էլ քեզ էնպես պահեիր, որ չհանեին: Ինչ էլ տային, չեղածից լա՞վ չէր... Ամեն մարդ իր եփած ճաշն է ուտում: Էդ քոլորը վատն եղան, մենակ դո՞ւ ես լավը:

ԲԵՆԻԱՍԻՆ – Կապ չունի... Նրանք ինձ չեն ներում, որ ես ծնվել եմ:

ԱՌԱՋԻՆ – Դու էլ չծնվեիր:

ԲԵՆԻԱՍԻՆ – Երանի չէր...

ԵՐԿՐՈՐԳ – Բա ո՞վ կխաղար քո դերերը:

ԲԵՆԻԱՍԻՆ – Ով ուզում է՝ թող խաղար: Խաղում են, էլի, խաղում են, չե՞ն խաղում... Կարծում էին, որ եթե ես չլինեմ՝ իրենք կլինեն: Դե, եղեք... Դե թող խաղան, էլի... Թող խաղան... Կխաղաք, ո՞նց չէ... Դուք դժբախտ եք, որ ես կամ:

ԱՌԱՋԻՆ – (Երկրորդ ահարեկչին) Բայց ես Բենիամին Խուրշուդյանը մեծ դերասան է, դու գիտե՞ս:

ԲԵՆԻԱՍԻՆ – Ես մեծ չեմ, իրենք են փոքր:

ԱՌԱՋԻՆ – Հույս չունենաս, մեկ է, առանց ստանալու մենք էստեղից գնացողը չենք:

ԲԵՆԻԱՍԻՆ – Երկու օրվա եղածն ի՞նչ է, որ չեք համբերում: Եկել տեսել, հավանել են բնակարանը, մեկը չառնի, մյուսը՝ կառնի:

ԱՌԱՋԻՆ – Չէ՛, էդ բաները մեզ մի՛ ասա, էսօր պիտի տաս: Քեզ էլ հավատացող չկա: Բեր տուր, մենք էլ թողնենք գնանք մեր գործին: Չես տա, մենք էլ չենք գնա:

ԲԵՆԻԱՍԻՆ – Մի՛ գնացեք, խնդրեմ, մնացեք, ես դեմ չեմ: (Ակնարկելով իրեն անհանգստացնող ատրճառակը) Լավ, էլի, դա պահիր, աչքս չտեսնի:

ԱՌԱՋԻՆ – (Երկրորդ ահարեկչին) Էդ մագնիտոֆոնը միացրու: (Միացնում է, հնչում է պարային երաժշտություն: Ծափ է զարկում՝ դառնալով երկրորդ ահարեկչին) Դու էլ...

ԲԵՆԻԱՍԻՆ – Ինչքան հասկացա՝ ուզում եք պարեմ, հա՞...

ԱՌԱՋԻՆ – (Մպառնալից) Հա...

ԲԵՆԻԱՍԻՆ – Վատ բան չեք ուզում... Միբով, բայց ես առանձնապես պարել չգիտեմ, դա էլ ասեմ:

ԱՌԱՋԻՆ – Քեզ մման դերասանը պարել չիմանա՞:

ԵՐԿՐՈՐԳ – Չեռքերս հոգնեցին, պրծի...

ԲԵՆԻԱՍԻՆ – Տղանե՛ր, հո կատակ չե՞ք անում:

ԱՌԱՋԻՆ – Չէ՛, ասացի: (Վրան պահելով ատրճառակը) Սկըսիր... Տա՛շ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Սկսում եմ... Տա՛շ... (Թաշկինակը ծածանելով սկսում է պարել):

ԱՌԱՋԻՆ – Տա՛շ, ես քո ցավը տանեմ:

ԵՐԿՐՈՐԳ – Տա՛շ... Ես էլ... (Թաշկինակներն առած, պարի մեջ են մտնում ահաբեկիչները, հետո զբաղեցնելով իրենց տեղերը՝ շարունակում են ծափ զարկել: Պարն ավարտվելուն պես սաստկանում են ծափերը):

ԱՌԱՋԻՆ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԵՐԿՐՈՐԳ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

(Բենիամինը սովորականի պես գլուխ է տալիս):

ԱՌԱՋԻՆ – Բենիամին Խուրշուդյան, դու որ ուզես, օրական գիտե՞ս ինչքան փող կաշխատես: Փողոցներում նվագող կա, երգող կա, պարող չկա, տեսել ես, չե՞:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տեսել եմ, իհարկե, ո՞վ չգիտի... Երևակայիր, վատ միտք չի, կարելի է:

ԱՌԱՋԻՆ – Ազնիվ խո՞սք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Է՛, հա, ի՞նչ կա որ... Հերթը դրան էլ կհասնի:

ԵՐԿՐՈՐԳ – Սև, ասում եմ, եթե պարոն Խուրշուդյանը եղպես լավ պարում է, երգել էլ կհմանա:

ԱՌԱՋԻՆ – Բա ո՞նց... Էլ ի՞նչ դերասան, որ երգել չիմանա:

Պարողը միշտ էլ երգել իմանում է, երգողը կարող է պարել չիմանա:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Թոթվելով ուսերը) Էդ ի՞մ մասին եք ասում...

ԱՌԱՋԻՆ – Հա, բա էլ ո՞ւմ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Երգել գիտեմ, իհարկե, գիտեմ, ինչո՞ւ պիտի չիմանամ:

ԱՌԱՋԻՆ – Դե որ գիտես՝ երգիր, լսենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երգեմ, ի՞նչ է եղել որ...

ԵՐԿՐՈՐԳ – Մենք էլ դա ենք ասում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հա, բայց... Երգեմ որ ինչ...

ԱՌԱՋԻՆ – Չես ուզում՝ մի երգի, տեսնեմ ոնց չես երգի...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Ակնարկելով ատրճառակը) Լավ կանես, դա պահես...

ԱՌԱՋԻՆ – Պահեմ... (Ատրճառակը դնում է գրպանը) Դե, սկսիր...

(Բենիամինը համապատասխան կեցվածք է ընդունում՝ մաքրելով կոկորդը: Սկսում է երգել: Ահաբեկիչները միանում են նրան: Երգն ավարտվելուց հետո, ոգևորված ծափահարում են):

ԱՌԱՋԻՆ – Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

ԵՐԿՐՈՐԳ – Բենի պարծանք, փա՛ռք, փա՛ռք...

(Բենիամինը գլուխ է տալիս):

ԱՌԱՋԻՆ – Մի հատ էլ... **(Բենիամինը երգում է: Ահաբեկիչները միանում են: Կրկնվում են ծափերը)** Բա որ էդքան լավ ձեռն ես ունեցել, ինչի՞ չես ասել, որ մենք էլ իմանանք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տղաներ, հո ձեռ չե՞ք առնում:

ԱՌԱՋԻՆ – Չէ՛, դու ես մեզ ձեռ առնում, Բենիամին Խուրշուդյան, որ ասում ես՝ էսինչ օրը, էսինչ ժամին եկեք, կտամ: Եկել ենք, դե տո՛ւր: **(Ատրճանակը պահում է վրան):**

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց սիրուն բան չես անում: Ազնիվ խոսք... Թքել եմ փողի վրա:

ԵՐԿՐՈՐԳ – Որ ունենաս՝ չես թքի:

ԱՌԱՋԻՆ – Շո՛ւտ արա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տամ, հա՞... Չունեմ, որտեղի՞ց տամ:

ԱՌԱՋԻՆ – Չունես, հագիդ շալվարը հանիր, տուր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կհանեմ, կտամ, բայց դուք կվերցնե՞ք, դա եմ ուզում իմանալ, կվերցնե՞ք...

ԱՌԱՋԻՆ – **(Կտրուկ)** Շալվա՛րդ...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Հանելով)** Խնդրեմ... **(Տալուց հետո, զարմացած)** Վերցրեք...

(Երկրորդ ահաբեկիչը շալվարը փաթաթում է՝ դնելով թևի տակ):

ԱՌԱՋԻՆ – Տղամարդը շալվարով չի տղամարդ, է՛, իր խոսքի տերը լինելով է տղամարդ: Երկու օրից կզանք. կտաս՝ կստանաս, չես տա՛ չես ստանա: **(Գնում են):**

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Նրանց ետևից)** Տղաներ, չմոռանաք, Յուլիին կբարևեք: **(Շրջվում է դեպի Քրիստոսի պատկերը, կանգնելով նրան դեմ հանդիման՝ շնջալով Տերուհայկան աղոթքը: Մուտքի զանգ: Ցնցվում է) Ո՞վ է:**

ՀՈՎՀԱՐՈՎ ՏԻԿԻՆ – **(Չայնը)** Ես եմ, Չառան է, պարոն Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – Մի բուպե... **(Շոր է փնտրում մերկությունը ծածկելու համար)** Հիմա... Բաց է... Համեցեք...

ՀՈՎՀԱՐՈՎ ՏԻԿԻՆ – **(Մտնում է՝ տեղնուտեղը ընկրկելով)** Օ՛յ... **(Մեջքով շրջվում է դեպի Բենիամինը):**

ԲԵՆԻԱՄԻՆ – Ներեցեք...

(Տիկինը հովհարում է նյարդային անսովոր ռիթմով):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Նույն բնակարանը: Մուտքի զանգ:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Դուրս գալով խոհանոցից, ոտքից գլուխ նոր հագուստ-կապուստով) Հիմա... (Մոտենալով դռանը) Ո՞վ է:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Չայնը դրսից) Ես եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Դուք ո՞վ եք:

ՎԱՐՍԱՎԻՐ – Սուկրատը...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ներեցեք, բայց ես ձեզ չեմ ճանաչում:

ՎԱՐՍԱՎԻՐ – Վնաս չունի, մենք ենք ձեզ ճանաչում: Խուրշուղյանի բնակարանը չի՞:

ԲԵՆԻԱՄԻՆ – Այո: (Բացում է դուռը) Խնդրեմ, համեցեք:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Մտնում է՝ ձեռքին փոքրիկ ճամպրուկ, հանում է գլխարկը, ճակատը սրբելով) Հարգանքներս...

ԲԵՆԻԱՄԻՆ – Բարև ձեզ: Պատահում է՝ հարցնում եմ, սխալ հասցեով եմ եկած լինում, գիտե՞ք:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ինձ ուղարկել եմ, ես չեմ եկել, պարոն Խուրշուղյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Մեկից դռնալով ավելի պատրաստակամ) Ուրախ եմ, խնդրեմ, նստեք:

ՎԱՐՍԱՎԻՐ – Շնորհակալ եմ, կնստեմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Սա է բնակարանս:

ՎԱՐՍԱՎԻՐ – Տեսնում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Պայծա՞ռ, սրտաբա՞ց...

ՎԱՐՍԱՎԻՐ – (Անհաղորդ) Ո՞վ է բան ասել...

ԲԵՆԻԱՄԻՆ – Որովհետև մարդիկ կան, գիտե՞ք, հավանում եմ, բայց ասում եմ՝ բակին մայող մեծ պատշգամբ չունի: Ես անձամբ դրա կարիքը չեմ զգում: Մեկսենյականոցները մեծ մասամբ միայն փողոցին մայող փոքրիկ պատշգամբ են ունենում: Ես էլ ունեմ: Գողտրիկ պատռշգամբ: Մասիսը պարզ երևում է: Եթե կուզեք, խնդրեմ, կարող եք մայել:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ինչի՞ համար մայեմ, մայեմ, որ ի՞նչ անեմ, ուրեմն ես չգիտե՞մ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե բնակարանը քաղաքի կենտրոնում է, կարծեմ դա էլ մի բան նշանակում է, եղպես չի՞:

ՎԱՐՍԱՎԻՐ – Անխոս...

ԲԵՆԻԱՄԻՆ – Խոհանոցը վեց քառակուսի մետր է, ինձ լրիվ բավարարում է: Բաղնիքն ու զուգարանը միասին են, երևակայեք, դա վատ չի: Մարդիկ կան, որ դժգոհում են, ի՞նչ ասեմ... Չե՞ն ուզում՝ թող առանձնացնեն:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ամեն ինչ կարելի է, անհնար բան չկա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ընդհանուր տարածքը երեսունհինգ քառակուսի մետր է: Կարելի է և որոշ փոփոխություններ անել, ինչ կա որ... Եթե ձեզ դուր գա, իհարկե...

ՎԱՐՍԱՎԻՐ – Չհասկացա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Գնի մասին ձեզ ասել են, ձևակերպումները կարելի է և հետո անել, ես դեմ չեմ:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Բացելով ճամպրուկը) Էլի չհասկացա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ներեցեք, իսկ դուք ի՞նչ եք հանում ճամպրուկից:

ՎԱՐՍԱՎԻՐ – Գործիքներս: (Հագնելով սպիտակ խալաթը) Ասացին՝ դու գնա, սկսիր, մենք հիմա կգանք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ի՞նչ պիտի սկսեք:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Կոճկելով խալաթը) Գլուխդ չե՞մ սարքելու:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ո՞վ, ո՞վ է եղպիսի բան ասել:

ՎԱՐՍԱՎԻՐ – Իրենք ասացին:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իրենք ովքե՞ր են:

ՎԱՐՍԱՎԻՐ – Կզան, կիմանա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ըստ երևույթին, դուք սխալ հասցեով եք եկել, գիտե՞ք:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ո՞նց... Ուրեմն ես քեզ չե՞մ ճանաչում, պարոն Խուրշուդյան, մարդ կա՞, որ քեզ չճանաչի: Գլուխդ էլ տեսնում եմ, որ սարքելու ենքակա գլուխ է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ասեմք թե... Բայց դա ի՞նչ կապ ունի:

ՎԱՐՍԱՎԻՐ – Դե հիմա ինչ որ ինձ ասել են՝ ես դա եմ ասում:

Մի հարմար տեղ նստիր, որ լույսն ընկնի վրադ:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Թոքվելով ուսերը) Ինչո՞ւ նստեմ: Ի՞նչ է, ես չե՞մ կարող գնալ վարսավիրանոց, թե՞ տեղը չգիտեմ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Հայելի կա՞ տանդ, դու եղ ասա, աչքովս չի ընկնում, պարոն Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ինչի՞ համար, հայելին ձեր ինչի՞ն է պետք:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Գործ եմ անելու, առանց հայելու ո՞նց կլինի:
 ԲԵՆԻԱՄԻՆ – Ով որ ձեզ ուղարկել է, գնացեք, ասեք՝ իզուր եմ
 ձեզ նեղություն տվել:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Նեղությունս ո՞րն է, գործ է, անում եմք, քեզ
 նման դերասանի համար ամեն ինչ էլ պարտավոր ենք անել: Էս
 տանը մի հայելի չկա՞, այ մարդ, աչքովս չի ընկնում:
 ԲԵՆԻԱՄԻՆ – Ասում եմ՝ դրա կարիքը չկա: Շնորհակալ եմ, մի
 անհանգստացեք, պետք չի:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Եկել եմ՝ նո՞ր ես ասում:
 ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ ինձ ո՞վ է հարցրել, որ ասեի կամ չասեի:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Հաճախորդներս էնտեղ հիմա իրար գլուխ են
 ջարդում, բա էլ ինչի՞ եմ գործս թողել, եկել, հասել էստեղ: Երեխա՞
 են, թե՞ ինձ են լակոտի տեղ դրել: Իմացա դու ես, դրա համար եկա,
 էդ էլ ասեմ, թե չէ ո՞վ էր եկողը: **(Աչքը ընկնում է սրբապատկերին,
 խաչակնքում է):**
 ԲԵՆԻԱՄԻՆ – Ասում եմ՝ դրա կարիքը չկա, ի սեր Աստծո:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Դու քո գլուխը տեսնո՞ւմ ես, որ ասում ես՝ դրա
 կարիքը չկա: Դեռ մի բան էլ ժամանակն անցել է: Բա վայել է, որ
 քեզ նման դերասանը էդ գլխով ման գա: Հայելիդ որտե՞ղ է, հայելիդ
 չեմ գտնում:
 ԲԵՆԻԱՄԻՆ – Գտնեք, որ ի՞նչ անեք:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Է՛, լավ, չիմանա՞մ, տանդ հայելի կա, թե չկա:
 ԲԵՆԻԱՄԻՆ – Ասե՛նք թե կա, կամ ասե՛նք թե չկա, դա ի՞նչ կա-
 րևոր է:
 ՎԱՐՍԱՎԻՐ – Է, ի՞նչ է ասում... Բա որ հայելու մեջ չես նա-
 յում, ո՞նց ես իմանում, որ դու ես: Չնայե՞ս, որ տեսնես դու ով ես:
(Մուտքի զանգ: Միաժամանակ թակում են դուռը):
 ԲԵՆԻԱՄԻՆ – **(Դուռը քայք է անում)** Համեցեք:
(Մտնում են երկու ահաբեկիչները):
 ՎԱՐՍԱՎԻՐ – Ըհը՛, եկան, թող իրենք ասեն:
 ԱՌԱՋԻՆ ԱՀԱԲԵԿԻՉ – **(Անակնկալի եկած, ոտքից գլուխ չա-
 փելով Բենիամինին, բազմանշանակ)** Պարոն Խուրշուդյա՞ն... Բա-
 րև... Ի՛, բարով մաշես: **(Մեղմում է ձեռքը):**
 ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալություն:
 ԵՐԿՐՈՐԴ ԱՀԱԲԵԿԻՉ – **(Նույն ձևով)** Պարոն Խուրշուդ-
 յա՞ն... Բարև... Ի՛, բարով մաշես:

ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալություն: Էս մարդն ի՞նչ է ուզում ինձնից:

ԱՌԱՋԻՆ – Սոկրատը... Մենք ենք ասել, որ գա: Նստիր, թող մազերդ սարքի:

ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալ եմ, բայց իզուր եք մարդուն նեղություն տվել: Ազնիվ խոսք...

ԵՐԿՐՈՐԴ – Ոչինչ, կորած տեղ չի, պարոն Խուրշուդյան:

ԱՌԱՋԻՆ – Իր ոտքով հասել է էստեղ, հո հետ չենք տալու: Մազերդ սարքելու ժամանակն է, սարքել ենք տալիս, վա՞տ բան ենք անում:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Նստելով) Դե լավ, ինչ ասեմ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Ապրես: (Անցնում է գործի):

ԱՌԱՋԻՆ – Անցած անգամ տեսանք մազերդ շատացել է, ասացինք, Սոկրատին բերենք, թող թեթևացնի: Վա՞տ ենք արել, Բենո:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իմ անունը Բենո չի, իմ անունը Բենիամին է:

ԱՌԱՋԻՆ – Կներես, էլի մոռացա, Բենիկ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բենիամին անունը Աստվածաշնչից է գալիս: Հնում գործածական չի եղել: Մեզանում գործածվում է 17-րդ դարից: Իմ անունը հայրս է դրել իր հոր անունով: «Վենուամին» անունից է, որ նշանակում է «ամուր», «երջանիկ», բառացի՝ «ուժի և երջանկության որդի» կամ «աջի որդի»:

ԵՐԿՐՈՐԴ – Արջի՞...

ԲԵՆԻԱՄԻՆ – Չէ՛, աջի, աջի, աջի որդի... Աջ կողմում նստող...

ՎԱՐՍԱՎԻՐ – (Քփ տակ) Դե արի ու առանց հայելի գործ արա:

ԱՌԱՋԻՆ – Հայելի պետք չի, առանց հայելի սարքիր, դու ի՞նչ ես համը հանում:

ՎԱՀՄԱՎԻՐ – (Պատրաստական բարձրացնելով ձեռքերը) Ոնց կասեք... Ինքն իրեն չտեսնի՞:

ԱՌԱՋԻՆ – Չէ, ասացի... Մենք տեսնում ենք, հերիք է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հայելին թողել եմ էնտեղ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Բա որ հայելի ունենայիր, մինչև հիմա դու քո գլուխը սարքել տվա՞՞ծ չէիր լինի, ճիշտն ասա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երևի... Մաշկս նուրբ է, մազս՝ կոշտ, զգույշ, ածելին չկտրի դեմքս:

ՎԱՐՍԱՎԻՐ – Չի կտրի, չի կտրի, դու հանգիստ նստիր տեղդ, մնացածը թող մեզ վրա: Բերանդ փակիր, փրփուրը չլցվի բերանդ:

ԱՌԱՋԻՆ – Քեզ հանգիստ պահիր, Խուրշուդյան, Սոկրատը գիտի իր գործը:

ԵՐԿՐՈՐԴ – Մենք չենք նրան սովորեցնելու, թե ոնց սարքի, մեզնից լավ գիտի:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ոնց որ թե առաջին մարդն է, էլ հաճախորդի երես չենք տեսել... Հանգի՛ստ, հանգի՛ստ...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Ցավից վեր թռչելով) Վախ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Ի՞նչ եղավ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կտրեցիր:

ԱՌԱՋԻՆ – Չի կտրել, չի կտրել, նստիր տեղդ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ո՞նց չի կտրել, արյուն է գալիս:

ՎԱՐՍԱՎԻՐ – Ո՞ր է, ո՞ր է, որ գալիս է... Ցույց տուր, աչքս մտցրու:

ԱՌԱՋԻՆ – Արյուն չի:

ԲԵՆԻԱՄԻՆ – Արյուն է:

ՎԱՐՍԱՎԻՐ – Էս ի՞նչ է ասում, այ ձեր հոգուն մատաղ, ախր արյուն չի, ինչի՞ է ասում՝ արյուն է: Արյունը կարմիր չի՞ լինում, բա սա կարմիր է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կարմիր է:

ՎԱՐՍԱՎԻՐ – Էլի ասում է՝ կարմիր է: Դու բա՞ն ես տեսնում, որ ասում ես՝ կարմիր է: Բա մի հայելի չլինե՞ր, ինքն իր աչքով տեսնե՞ր, որ կարմիր չի: Դրա համար էի ուզում, է՛, եղ անտերը... Բա սա կարմիր է:

ԱՌԱՋԻՆ – Չէ, չէ, կարմիր չէ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կարմիր է:

ԵՐԿՐՈՐԴ – Իսկի կարմիր չի, ինչո՞վ երդվեմ, որ հավատաս: Քո արև, կարմիր չի:

ԱՌԱՋԻՆ – Թող մի քիչ էլ կարմիր լինի, ի՞նչ է եղել, է՛...

ՎԱՐՍԱՎԻՐ – Երեք հոգով կանգնել են, երսիդ ասում են՝ կարմիր չի, դու ասում ես՝ կարմիր է: Եղա՞վ...

ԵՐԿՐՈՐԴ – (Մատը քսելով Բենիամինի դեմքին, ցուցադրելով) Տես, որ կարմիր չի:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Դիտելով) Կարմիր է:

ՎԱՐՍԱՎԻՐ – Կարմիր չի, կանաչ է, աչքիդ է կարմիր երևում:

ԱՌԱՋԻՆ – Սոկրատ, առաջ անցիր:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Նույն ձևով քարձրացնելով ձեռքերը) Ոնց կասեք... **(Բենիամինին)** Ես մեղք ունե՞մ, որ մաշկդ նուրբ է, մրմռում է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ ինչո՞ւ է ձախ կողմը մրմռում, աջը չի մրմռում:

ՎԱՐՍԱՎԻՐ – Դու դա մի հարցրու, է՛, դու հարցրու, թե ինչու աջը չի մրմռում, ձախն է մրմռում: Գլխիդ կեսը քրտնում է, կեսը չի քրտնում, իբր դու չգիտե՞ս:

ԲԵՆԻԱՄԻՆ – Առաջին անգամ եմ լսում:

ԵՐԿՐՈՐԴ – (Վարսավիրին) Իսկապե՞ս...

ՎԱՐՍԱՎԻՐ – Ուրեմն ես սո՞ւտ եմ ասում: Գլխի ուղիղ կեսը քրտնում է, կեսը չի քրտնում: Դրա համար էլ ձախը մրմռում է, աջը չի մրմռում: Եթե աջ կողմը քրտներ, էս անգամ էլ աջը կմրմռար, ձախը չէր մրմռա: Բայց որովհետև ձախ կողմն է քրտնում, ձախն է մրմռում, աջը չի մրմռում: Գլուխ էլ կա՝ աջ կողմը քրտնում է, ձախը չի քրտնում: Աջը մրմռում է, ձախը չի մրմռում: Հագարից մեկ պատահում է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Առաջին անգամ եմ լսում: Ազնվությամբ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Չնեղանաս, դու քո գլխից էլ տեղեկություն չունես: Չեղավ, էլի, չեղավ: Էդքան չեն շարժվի ախր... Ածելի է, մեկ էլ տեսար միամիտ տեղը փախավ ձեռքիցս, հետո՞...

ԱՌԱՋԻՆ – Որ շարժվես՝ կկտրի, բա ինչ կանի, Խուրշուդյան:

ՎԱՐՍԱՎԻՐ – Հիմա, հիմա վերջացնում եմ... Հանգի՛ստ, հանգի՛ստ...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Հանկարծակի հարձակումով, հափշտակում է վարսավիրի ձեռքի ածելին՝ կտրուկ կանգնելով, կատաղությամբ) Վիզդ կկտրեն...

(Վարսավիրն ընկրկում է վախից, ահաբեկիչներն ընկնում են մեջտեղ՝ նրանց իրարից բաժանելու համար: Բենիամինը պոկում, շարտում է կրծքին ամրացված սպիտակ շորը) Վիզդ կկտրեն...

ԱՌԱՋԻՆ – (Որ ընկել է մեջտեղ, հրմշտելով մեկին կամ մյուսին) Չհասկացա, ի՞նչ եղավ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ուզում էր մորուքս սափրի, էլ ի՞նչ էիք ուզում, որ լիներ: **(Նորից նախահարձակ է լինում)** Ես քո վիզը կկտրեն...

ԵՐԿՐՈՐԴ – Սոկրատ, էս ի՞նչ է ասում:

ՎԱՐՍԱՎԻՐ – (Կարծես շնչահեղձ լինելով) Իրեն է թվացել, այ ձեր հոգուն մատաղ, մի երկու աներես մազ կար, ասացի դրանք էլ վերցնեն մեջտեղից, չթողեց:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Որին կրծքով պատմեչ են կանգնել ահաբեկիչները) Շանսատակ կանեմ, իմացիր: (Ահաբեկիչներին, կշտամբանքով) Չեղավ, էլի, չեղավ...

ՎԱՐՍԱՎԻՐ – (Վախից դողում է) Ո՞վ է քո մորուքին ձեռ տվել, ցավդ տանեմ, պարոն Խուրշուդյան: Զեզ մման դերասանին բա ես կնեղացնե՞մ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չե՛նդ... (Նախահարձակ է լինում) Աչքերդ կհանեմ...

ՎԱՐՍԱՎԻՐ – Ածելիս, ածելիս ասեք տա...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Պոկվելով ահաբեկիչների ձեռքից) Արի, արի տամ... (Խոյանում է վարսավիրի վրա: Վերջինս ճողալրում է: Ահաբեկիչները հետևում են նրան: Բեմը դատարկվում է):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Ր Ո Ր Գ

Նույն բնակարանը: Փնջացնելով մտնում է Բենիամինը:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Նայելով ձեռքի ածելում) Շա՛տ հետաքրքիր է մարդկանց կենդանական աշխարհը: Դրան տես... Մարդասպան էլ կդարձնեն մարդու... (Շարտում է ածելին):

(Մտնում են ահաբեկիչները):

ԱՌԱՋԻՆ ԱՀԱԲԵԿԻՉ – Երեխա հո չե՞ս, պարոն Խուրշուդյան, ո՞վ կթողնի, որ նա քո մազին դիպչի:

ԵՐԿՐՈՐԳ ԱՀԱԲԵԿԻՉ – Էդ վարսավիրի երեսից մենք էինք շառի մեջ ընկնում օրը ցերեկով:

ԱՌԱՋԻՆ – Ի՞նչ արիր, էդ ածելին որտե՞ղ դրեցիր:

ԵՐԿՐՈՐԳ – Էս է: (Վերցնում է):

ԱՌԱՋԻՆ – Պահիր, կտաս էդ անասունին: Մի խոսքով, Աստված չարը խափանեց: Դե լավ, պարոն Խուրշուդյան, անցավ գնաց, սրտիդ մոտ մի ընդունիր, բեր մեր ստանալիքն էլ տուր, մենք էլ թողնենք զընանք մեր գործին:

ԲԵՆԻԱՄԻՆ – Որտեղի՞ց տամ...

ԱՌԱՋԻՆ – Որտեղից ուզում ես՝ տուր, դա՞ էլ մենք ասենք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հո չեմ հրաժարվում, բնակարանը կվաճառվի, կտամ: Հիմա չունեն:

ԵՐԿՐՈՐԳ – Բա որ չունես, հագիդ կոստյումը ինչո՞վ ես առել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ես չեմ առել, առել են:

ԱՌԱՋԻՆ – Դու ասացիր, մենք էլ հավատացինք, եղավ ու գնաց... Ո՞վ է առել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե հիմա որ չեմ ուզում ասել, ո՞նց ասեմ:

ԵՐԿՐՈՐԳ – Մի ասա, բա մեզ պե՞տք է...

ԱՌԱՋԻՆ – Տանը հացի փող էլ չունի էդ մարդը, լույսի վարձն էլ չի մուծել, եկել-կտրել են, մութ տեղը նստած է: Մենք համբերենք, նա ո՞նց համբերի: Դու հասկանո՞ւմ ես՝ ինչ ես ասում:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Անակնկալի գալով) Ո՞վ, Յուլիկը...

ԱՌԱՋԻՆ – Բա էլ ո՞վ... Մարդ ես, դերասան ես, նրա դրությամբ մեջ էլ մտիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Գլուխն առնելով ասիերի մեջ) Էդ ի՞նչ վատ բան ասեցիր... Ո՞նց թե՛ հացի փող էլ չունի... Ո՞նց թե՛... Երանի չասեիր...

ԵՐԿՐՈՐԳ – Բա դու գիտես, թե հենց էնպե՞ս ենք եկել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Մի բուպե, մի բուպե թողեք, ուշքի գամ, հետո...

ԱՌԱՋԻՆ – Էլ հետո չկա... Սովից հո չի մեռնելու էդ մարդը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երանի ասած չլինեիր... Էդ ինչ վատ բան ասացիր...

ԱՌԱՋԻՆ – Որ ստիպում ես՝ բա ի՞նչ անեմ, չասե՞մ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Պատկերացնո՞ւմ եք, ուշքի չեմ գալիս:

ԵՐԿՐՈՐԳ – Դե բեր տուր, թողնենք գնանք, մենք հո պարապ մարդ չենք: Չեմից գնում է էն մարդը...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իմիջայոց, շատ վատ բան ասացիր... Երանի ասած չլինեիր:

ԱՌԱՋԻՆ – Դե բեր, բեր տուր, իմանանք մեր անելիքը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե լինեիր, բա չէ՞ր տա:

ԵՐԿՐՈՐԳ – (Բացելով քազմոցը) Բա մենք քեզ էստեղից ինչի՞ հանեցինք, մի հարցնող լինի:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հանեցիր, շնորհակալություն հայտնեցի, էլ ի՞նչ էիր ուզում, որ անեմ:

ԱՌԱՋԻՆ – (Գրպանից հանելով ատրճաճակը՝ ուղղելով Բենիամինին) Դե, ասա, ինչ որ կհաստ էիր թողել քո խաղացածներից, դա ասա:

(Բենիամինն անձնատուր լինելով ավելի շատ ինքն իրեն, քան ահաբեկիչին, կատարում է մի հատված իր խաղացած դերերից: Դրան հետևում են ահաբեկիչների ծափերն ու նույն բացականչությունները):

ԵՐԿՐՈՐԳ – Մի հատ էլ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Էլ ինչո՞ւ թատրոնից դուրս եկա, որ տանս մեջ պիտի խաղամ:

ԱՌԱՋԻՆ – Դու դուրս չես եկել, քեզ հանել են: Դե ասա, էլ իզուր ժամանակ մի կորցրու:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կասեմ, բայց իմ հանդիսատեսի համար կասեմ, իմ, իմ...

ԵՐԿՐՈՐԴ – Ի՞նչ հանդիսատես: Քո հանդիսատեսը հիմա մենք ենք:

ԱՌԱՋԻՆ – Մեզանից լա՞վ հանդիսատես ես ուզում...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իմ հանդիսատեսը իմ մեջ է, դահլիճում չի... (Կատարում է մի հատված իր դերերից, որին սովորականի պես հետևում են ահաբեկիչների ծափերն ու մույն բացականչությունները):

ԱՌԱՋԻՆ – Ափսոս, դու՛ դու չլինեիր, որ մենք իմանայինք մեր անելիքը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Արեք, ո՞վ է խանգարում...

ԱՌԱՋԻՆ – (Գրպանից հանելով ատրճաճակը, դարձնելով Բենիամինի կողմը) Ոչ մեկն էլ չի խանգարում... (Ցույց տալով բացված բազմոցը) Դե արի, քո ոտքով արի, էլի մտիր մեջը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե չեմ սխալվում, մի անգամ էդտեղ եղել եմ: Ըն՞չտ է:

ԵՐԿՐՈՐԴ – Փոսդ պանթեոնում փորել են, նստել, քեզ են սպասում, շուտ արա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ինչո՞ւ պանթեոնում:

ԱՌԱՋԻՆ – Բա էլ որտե՞ղ... Էնտեղ չի՞ քո տեղը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Էնտեղ է, եթե չխանգարեն...

ԱՌԱՋԻՆ – Չեն խանգարի, արի... Որ խտրություն են դրել, նրանց տարել, էնտեղ են թաղել, գիտես, թե քեզնից ավե՞լ են:

ԵՐԿՐՈՐԴ – Թաղողները գիտեն, թաղվողներն էլ հո չգիտեն, թե որտեղ են թաղված:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Շփելով դեմքը) Ոնց որ թե շատ է վերցրել էդ ապուշը...

ԱՌԱՋԻՆ – Շուտ արա... Թաղվելուց հետո քեզ համար մեկ չի՞, շատ է վերցրել, թե քիչ է վերցրել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երևակայիր, ճիշտ ես ասում... Տղանե՛ր, ես հուճորով մարդ սիրում եմ: Ազնիվ խոսք: Գիտեք, չէ՞, որ Ամերիկայում պրեզիդենտ ընտրելիս հաշվի են առնում՝ հուճորի զգացողություն ունի՞, թե՞ չունի: Կետերից մեկն էլ դա է: (Առաջին ահաբեկիչն) Բայց դու էդ ի՞նչ վատ բան ասացիր... Երանի չասեիր... Մտքիցս ոչ մի բոպե չի հեռանում Ցոլակը, երդվում եմ:

ԱՌԱՋԻՆ – Է՛, դերասանություն ես անում, Խուրշուդյան...

ԲԵՆԻԱՄԻՆ – Լավ, էլի, եղպիսի բան մի ասա, ի սեր Աստծո:

ԱՌԱՋԻՆ – Արի, ո՞ւմ ես սպասում, արի մտիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Այսինքն՝ չեք սխալվում... Սովորաբար ինձ թաղում են, ես չեմ մեռնում: Չնայած, եթե բեմում չեմ, մեռած չեմ, ի՞նչ եմ...

ԱՌԱՋԻՆ – Չեքս հոգնեց... շուտ արա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դագաղս բերեք, մեծ սիրով մտնեմ, ազնիվ խոսք...

ԵՐԿՐՈՐԳ – Պահ, էնպես էլ ասում է՝ դագաղս, ոնց որ թե փողը հաշված է տվել:

ԱՌԱՋԻՆ – Արագացրու: Դու ուրիշ դագաղ չունես, քո դագաղը սա է, մտիր: Չե՞ս մտնում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Խնդրեմ, մտնեմ, բայց կարգը ո՞նց է. կարծեմ առաջ մեռնում են, հետո են թաղում, եղպես չի՞:

ԵՐԿՐՈՐԳ – Կթաղենք, կմեռնես, ի՞նչ տարբերություն...

ԲԵՆԻԱՄԻՆ – Այսինքն՝ ճիշտ ես ասում... (Գնում է դեպի բազմոցը, խարս տալով, մեկից շրջվում է՝ խլելով իրեն ուղղված ատրճամակը):

(Խառնակ վիճակ):

(Մտնում է Հովհարով տիկինը):

ՀՈՎՀԱՐՈՎ ՏԻԿԻՆ – (Գոռգոռալով սենյակով մեկ) Ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում, չափահաս մարդիկ եք, անհարմար է, հիմա ես ոստիկանություն կզանգահարեմ...

(Բենիամինը ատրճամակը դարձնում է դեպի ահաբեկիչները: Տիկինը սարսափահար ճչում է՝ ձեռքից զցելով հովհարը: Լսվում են խաղալիք-ատրճամակը մատնող կրակոցները: Ահաբեկիչները դիմում են փախուստի):

ԲԵՆԻԱՄԻՆ – (Հիասթափությունից կախ ընկած ձեռքից բաց է թողնում ատրճամակը) Չեն էլ ամաչում: Խաղալիք էր: Ի՞նչ ասես... (Հովհարը գետնից վերցնում, տալիս է տիկնոջը) Խնդրեմ..

Հ. ՏԻԿԻՆ – Շնորհակալություն... (Նստում է, անկանոն շնչառությունից վերուվար է անում կուրծքը) Բարբարոսներ... (Հարևանի հայացք ձգելով սրբապատկերին) Սիրտս արագ է խփում, գիտե՞ք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իզուր, դրանք ովքե՞ր են, որ դրանցից մարդ վախենա:

Հ. ՏԻԿԻՆ – Գողեր էի՞ն:

ԲԵՆԻԱՄԻՆ – Գիտե՞մ, ովքեր էին, որ ասեմ: Գողեր են, բա ինչ են...

Հ. ՏԻԿԻՆ – Չիմացա՞ն՝ դուք եք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկի ինձ պե՞տք է՝ կիմանան, թե չեն իմանա: Արվեստի հետ կապ չունեցող ստոր արարածներ են, հանուն փողի ամեն ինչի ընդունակ են նրանք: Գիտեին, ո՞նց չէ...

Հ. ՏԻԿԻՆ – Բայց ի՞նչ էին ուզում ձեզնից:

ԲԵՆԻԱՄԻՆ – Մանկությանս ընկերոջը փող են պարտք, ոնց որ ձեզ, ինքը չի գալիս, էդ թափթփուկներին է ուղարկում, ձեզնից ի՞նչ քաքցնեմ:

Հ. ՏԻԿԻՆ – Դա եղավ ընկե՞ր... Ամոթ իրեն... Անհարմար էլ չի զգում... Թքեմ իր վրա... Ներողություն, իհարկե... Փոխանակ հպարտանա, որ ձեզ նման մեծ դերասան ընկեր ունի... Հիմար է, ի՞նչ է...

ԲԵՆԻԱՄԻՆ – Նա էլ մեղք չունի, նրա վիճակն էլ վիճակ չի: Մի խոսքով...

Հ. ՏԻԿԻՆ – Էդ սրիկաները հանկարծ չգա՞ն նորից...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե, եթե էդքան համարձակություն ունեն, թող գան: Խաղալիք-ատրճանակով են ուզում մարդ վախեցնել էդ տակաճները, դա է վիրավորական, թե չէ՝ ինչ է եղել որ...

Հ. ՏԻԿԻՆ – (Անակնկալի եկած) Վա՛յ, մոռացա շնորհավորել... Բարով մաշեք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալություն: Էնքան ստոր են, որ շավարս բերեցին ու էլի հետ տարան:

Հ. ՏԻԿԻՆ – Լա՛վ է, շա՛տ լավ է, կարծես ձեր վրայով կարված լինի, հարյուր խանութ են մտել ու դուրս եկել, գիտե՞ք: Կասկածանքով առա, որովհետև ձեր չափը չգիտեի, պարոն Խուրշուդյան: Միրտըս տեղն ընկավ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ո՞նց եք:

Հ. ՏԻԿԻՆ – Լավ: Իմիջիայլոց, ձեզ կարոտել էի: Ուզում էի չասեմ, բայց ասացի: **(Երբեմն-երբեմն աչքը զցելով սրբապատկերին):**

ԲԵՆԻԱՄԻՆ – Լավ արեցիք, ինչո՞ւ չասեք որ...

Հ. ՏԻԿԻՆ – Երևի սխալ արեցի, հա՞...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ընդհակառակը՝ կնեղանայի, եթե չասեիք:

Հ. ՏԻԿԻՆ – (Յուզամատը տանելով Բենիամինի դեմքին) Սա ի՞նչ է... Չեր դեմքին քերծվածք կա՞: (Պայուսակից հայելի է հանում տալով Բենիամինին) Նայեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Երևի եղ ապուշի արածն է: (Նայելով հայելու մեջ) Վարսավիր էին բերել իրենց հետ: (Վերադարձնելով հայելին) Մորուքս էին ուզում սափրել, դուք պատկերացնո՞ւմ եք:

Հ. ՏԻԿԻՆ – Ո՞նց թե... Դուք՝ էլ դուք չէիք լինի, պարոն Խուրշուդյան: Ես ձեզ ուրիշ կերպ չեմ էլ պատկերացնում: Ողորմելիներ՛ր... իրենք ուլքե՞ր են, Աստված ձեզ տաղանդ է տվել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հա, բայց մի կողմից էլ պատժել է՝ ուրիշի տեքստ ես ասում... Դրա համար են բեմում դերասաններն իրենց պատեպատ տալիս:

Հ. ՏԻԿԻՆ – Պարոն Խուրշուդյան, իսկ ինչո՞ւ են ձեզ թատրոնից հանել: Ներողություն, որ հարցնում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հանողներին պիտի հարցնեք, ի՞նձ եք հարցնում: Բոլորը մեկի դեմ կարող են գնալ, մեկը բոլորի դեմ չի կարող... Նրանք չեն ուզում ես իրենց կողքին երևամ, որպեսզի իրենք երևան: Ես նրանց հասկանում եմ, ես ինձ չեմ հասկանում: Դե թող երևան, ինչո՞ւ չեն երևում: Երևացեք, էլի, երևացեք... Չգիտեիք, հա՞, որ էլի ամելու եք այն, ինչ որ կարող եք, չեք անելու այն, ինչ որ չեք կարող: Դուք իրար էլ տանել չեք կարող, ձեր բոլորին համախմբողը ես եմ: Էնպես որ, եղքան էլ մի ատեք ինձ: Եթե ես չլինեմ, դուք իրար էլ չեք հանդուրժի: Շնորհակալ եղեք, էլի, շնորհակալ եղեք, որ ես կամ:

Հ. ՏԻԿԻՆ – Ինչ էլ ասեք-չասեք, միևնույն է, ես էդպես էլ չեմ հասկանում, իմ ուղեղում չի նստում, թե դրանց ուզածն ի՞նչ է:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ես էլ չեմ հասկանում, չնայած հասկանում եմ, ո՞նց չեմ հասկանում: Նրանք Մարլոն Բրանդո չեն, որ դերասան Մոթգոմերի Քլիֆֆին բացեիբաց ասեն. «Քլիֆֆ, միշտ ատել եմ քեզ, որովհետև միշտ ուզեցել եմ քեզանից լավը լինել: Բայց միշտ պարզվել է, որ լավը դու ես: Ես առանց տատանվելու ինձ կփոխանակեի քեզ հետ, եթե միայն հնարավոր լիներ ինքնությունը փոխանակելի»:
Դա Մարլոն Բրանդոն է ասել, Մարլոն Բրանդոն ինքնություն ունի, նրանք ինքնություն չունեն, նրանք ուրիշի ինքնությունն են ուզում խլել:

(Հեռախոսի զանգ):

Հ. ՏԻԿԻՆ – Չե՞ք վերցնում...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Աչքի անցկացնելով ժամացույցը) Չէ, հավես չունեմ: Թերթերի խմբագրությունից են զանգահարում:

Հ. ՏԻԿԻՆ – Հետաքրքրվում եմ ձեզնով...

ԲԵՆԻԱՄԻՆ – Նրանց գրելու նյութ է պետք, նրանց ես չեմ պետք: Ամեն բան իր տեղը պիտի դրվի, Չառա, էսպես հո չի կարելի... Վերկներում թե ինչ եմ մտածում, ես չգիտեմ: Ես միայն գիտեմ, թե ինչ եմ մտածում ներքևներում: Ներքևներում էլ չգիտեմ, թե ինչ եմ մտածում վերևներում: Իսկ գուցե չեմ էլ մտածում, ի՞նչ իմանամ...

Հ. ՏԻԿԻՆ – **(Բացում է պայուսակը, ձայնագրիչ է հանում, ցուցադրելով)** Սա հատուկ եմ վերցրել, պարոն Խուրշուդյան: Անցած անգամ ավստրացի, որ մոտս չէր: Չեր խաղացանկից մի բան ասեք՝ ձայնագրեմ, խնդրում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ինչի՞ համար... Ի՞նչ պիտի անեք...

Հ. ՏԻԿԻՆ – Ուզում եմ ունենալ տանը: Շատ եմ ուզում...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ո՞ւմ է պետք... Ունենաք, որ ի՞նչ...

Հ. ՏԻԿԻՆ – Խնդրում եմ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Առանց խնդրելու... Գիտեք, որ ես չեմ կարող ձեզ մերժել, Չառա:

Հ. ՏԻԿԻՆ – Շնորհակալություն: Միացնե՞մ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Միացրու: **(Կատարում է մենախոսություն):**

Հ. ՏԻԿԻՆ – Բրավո՛... բրավո՛... **(Փոթորկալից ծափահարում է)** Բրավո՛...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Գլուխ տալուց հետո)** Լավ, լավ, բավական է:

Հ. ՏԻԿԻՆ – **(Ակնարկելով կոստյումը)** Ի՞նչ լավ է, որ գույնը բռնում է ձեզ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկապե՞ս, շնորհակալ եմ: Արժեքը կասեք, մի երկու օրից կտամ, Չառա:

Հ. ՏԻԿԻՆ – Վա՛յ, ոնց եք վիրավորում... Համարեք, որ չեք ասել... **(Հայացքը Տիրոջ պատկերին)** Պարոն Խուրշուդյան, ես սրբապատկերը ո՞րերորդ դարի է:

ԲԵՆԻԱՄԻՆ – 17-18 երևի... Եթե չեմ սխալվում...

Հ. ՏԻԿԻՆ – Իսկապե՞ս... Հետաքրքիր է, ի՞նչ կարժենա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չգիտեմ, չեմ էլ ուզում իմանալ:

Հ. ՏԻԿԻՆ – Եթե այդքան հին է, շատ քանկ կարժենա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Հավանաբար... Իմ ստացած ժառանգությունն է հորս տնից: Փոքր էի, բայց ո՞նց չհիշեմ տատիս, որ ամեն առավոտ, իրիկուն կանգնում էր դիմացը ու խաչակնքելով մրմնջում. «Հայր մեր, որ հերկինս ես...»: Մինչև հիմա ականջներինս մեջ է տատիս ձայնը,

երդվում եմ... Խելացի կին էր: Տատիս շատ էի սիրում: Ինքն էլ՝ ինձ: Տատ, կարոտել եմ քեզ...

Հ. ՏԻԿԻՆ – Համեմայնդեպս, մասնագետներից կարելի է իմանալ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Գիտեմ, 17-րդ կամ 18-րդ դար... Ինձ էդպես եմ ասել:

Հ. ՏԻԿԻՆ – Չէ, չէ, գիմը... Իսկ գիմը չե՞ն ասել, թե ինչ կարծեմա:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չեմ էլ հարցրել, որ ասեին: Եթե չեմ վաճառելու, գիմն ինչի՞ս է պետք, որ իմանամ: Գիմն անգիմ է, Չառա:

Հ. ՏԻԿԻՆ – Լավ է, որ էդ կեղտոտները պատից չեն հանել, տարել հետները:

ԲԵՆԻԱՄԻՆ – Սա նրանց խելքի բանը չի, որ տանեին: Նրանք ովքե՞ր են, որ հոգևոր արժեքի գիմ իմանան: Նրանց ոսկի է պետք, ադամանդ, եսիմ էլ ինչ... Դուլար-մուլար... Ո՞վ կթողներ, որ տանեին... Ականջները կկտրեմ... Իրենց տանելով է, որ տանեին:

Հ. ՏԻԿԻՆ – Ներողություն, պարոն Խուրշուդյան... Ասե՞մ, թե՞ չասեմ... Գուցե իրավունք չունեն ասելու...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դուք ամեն ինչի իրավունք էլ ունեք, Չառա: Ունի՞ց եք քաշվում, ասեք ազատ:

Հ. ՏԻԿԻՆ – Ճիշտն ասած, ես միշտ զարմացել եմ, թե ինչու եմ ձեր մասին վատ բաներ ասում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ ինչո՞ւ չասեմ որ... Ես մարդ չե՞մ... Էդ ո՞ւմ մասին չեմ ասում, որ իմ մասին չասեմ: Չարմացեք, եթե չասեմ... Ասողն ո՞վ է... Ինքն ազգին պե՞տք է... Թող ասի, էլի, թող դա ասի, ինչո՞ւ է ուրիշ բան ասում: Ես էլ ձեր զարմանալու վրա եմ զարմանում:

Հ. ՏԻԿԻՆ – Այսինքն՝ ճիշտ եք... Իզուր էլ ասացի...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ինչո՞ւ չասեիք որ... Շատ էլ լավ արեցիք, որ ասացիք: Նրանք մեր միջից խենթությունն են ուզում հանել, որ մեզ էլ իրենց նման դարձնեն:

Հ. ՏԻԿԻՆ – Պարոն Խուրշուդյան, մի բան էլ էի ուզում ասել...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ասեք... Եթե ասելու բան ունեք, իհարկե, պիտի ասեք...

Հ. ՏԻԿԻՆ – Մեկը ձեր մասին մի անգամ ասաց՝ բեմում իրեն տեսնելիս միշտ ինձ թվում է, թե մեր լճում օվկիանոսի ձուկ կա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ի՞նչ ձուկ... Չուկ, իհարկե, ես սիրում եմ, թարխունով, բայց գետի ձուկ, Չառա... Ես մոտավորապես հասկանում

եմ, թե դուք ինչ եք ասում: Շնորհակալ եմ... Ես դա չեմ ասում, ես էլ ուրիշ բան եմ ուզում ասել... Ինձ կարելի է դավաճանել, իհարկե, կարելի է, ես ո՞վ եմ որ... Ես էլ չգիտեմ, թե ես ով եմ: Այնպես որ, ինձ դավաճանելը դժվար չէ: Բայց արվեստին դավաճանել չի կարելի: Ազնիվ խոսք, ես անձնական թշնամի դժվար թե ունենամ: Չէ, երևի չունեմ: Իսկ ով որ արվեստին դավաճանում է՝ դառնում է իմ անձնական թշնամին, ինձ դավաճանողներն իմ անձնական թշնամիները չեն: Ովքեր իմ դեմ են դուրս գալիս, նրանք էլ իմ անձնական թշնամին չեն, նրանք իրենք իրենց բարեկամն են: Ի՞նչ ասեմ...

Հ. ՏԻԿԻՆ – (Հայացքով դեպի դուռը) Ես անընդհատ կասկածում եմ, որ դրանք կարող են հետ գալ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Նրանց ո՞վ է տվել էդ ռիսկը, որ գան: (Գնում, ներսից կողպում է դուռը):

Հ. ՏԻԿԻՆ – (Կանացիությամբ զգալ տալով, պաշտպանվելու համար ձևականորեն բարձրացնելով ձեռքերը) Պարոն Խուրշուդյան, չմոտենաք ինձ, էլի, խնդրում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Չարմատացած) Տիկին Չառա՞... Ինչո՞ւ պիտի մոտենամ կամ չմոտենամ, չհասկացա:

Հ. ՏԻԿԻՆ – Համենայնդեպս, չմոտենաք, էլի, խնդրում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – (Թոթվելով ուսերը) Առանց խնդրելու... Չեմ մոտենա...

Հ. ՏԻԿԻՆ – Եթե չեք մոտենա, ինչո՞ւ եք ուզում մոտենալ, պարոն Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ես կարծեմ էդպիսի փորձ չեմ արել:

Հ. ՏԻԿԻՆ – Չեք արել, բայց չէ՞ որ կարող եք անել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Երբ անեմ, էն ժամանակ ասեք:

Հ. ՏԻԿԻՆ – Հետո արդեն ուշ կլինի, ես հիմա եմ ասում՝ չմոտենաք, շատ եմ խնդրում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ուրեմն վստահություն չկա, հա՞... Չեմ մոտենա: Ուզում եք՝ երդվե՞մ...

Հ. ՏԻԿԻՆ – Տղամարդկանց երդումներին ես ընդհանրապես չեմ հավատում: Իսկ ինչո՞ւ գնացիք, ներսից կողպեցիք դուռը, եթե չեք մոտենալու:

ԲԵՆԻԱՄԻՆ – Կողպեցի, որ դուք ձեզ ապահով զգաք, Չառա:

Հ. ՏԻԿԻՆ – Եթե ամուսին չունեմ, դա դեռ ոչինչ չի նշանակում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չառա, ես խնդրում եմ, դուք ինձ ճիշտ հասկացեք:

Հ. ՏԻԿԻՆ – Ես ձեզ ճիշտ եմ հասկանում, դուք էլ ինձ ճիշտ հասկացեք, պարոն Խուրշուդյան: Ես բարոյական կին եմ և հակառակ իմ կամքի ոչինչ թույլ չեմ տա առհասարակ: Հետո ես ո՞նց պիտի նայեմ ձեր աչքերին...

ԲԵՆԻԱՄԻՆ – Չառա, ես ձեզ ասում եմ...

Հ. ՏԻԿԻՆ – (Տեղնուտեղը ընդհատելով) Դուք ինձ ոչինչ մի ասեք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց դուք չգիտեք, թե ես ինչ եմ ասելու:

Հ. ՏԻԿԻՆ – Չեմ ուզում իմանալ, չեմ ուզում, պարոն Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ի՞նչ եք առաջարկում, իսկ ի՞նչ անեմ, որ հավատաք:

Հ. ՏԻԿԻՆ – Ես չգիտեմ, տղամարդը դուք եք, դուք պիտի իմանաք: Չմոտենաք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չեմ մոտենա:

Հ. ՏԻԿԻՆ – Դե ուրեմն տվեք իմ գումարը, ես թողնեմ, գնամ: Ինձ մի սպասեցրեք իզուր տեղը:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ա՛խ, Կլարա, Կլարա...

Հ. ՏԻԿԻՆ – (Քամահրանքով) Կլարան ո՞վ է...

ԲԵՆԻԱՄԻՆ – Կինս...

Հ. ՏԻԿԻՆ – Ես որքան գիտեմ, նա այլևս ձեր կինը չի, պարոն Խուրշուդյան, ի՞նչ Կլարա...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ախր դուք չգիտեք, չգիտեք, թե նա ինչ խաղեր է խաղացել իմ գլխին:

Հ. ՏԻԿԻՆ – Բայց դուք էլ չգիտեք, թե իմ գլխին ինչ խաղեր է խաղացել իմ ամուսինը: (Փղճկում է) Ով ինձ չի սիրում, նա արժանի չի իմ սիրուն:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ես ձեզ լրիվ հասկանում եմ, Չառա: (Համբուրում է) Ազնիվ խոսք, ես բռնաբերեմ ես որևէ մեկին համբուրելու կարիք էի զգում:

Հ. ՏԻԿԻՆ – Բայց կարծեմ, ես ձեզ համար որևէ մեկը չեմ և չեմ էլ ուզի լինել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ինձ համար ոչ ոք որևէ մեկը չի, առավել և՛ դուք, Չառա: Դուք ինձ հետ «դուք»-ով մի խոսեք, էլի, խնդրում եմ:

Հ. ՏԻԿԻՆ – Նույնը ես եմ խնդրում ձեզ, պարոն Խուրշուդյան: (Բացում է պայուսակը, երկրորդ անգամ է հանում ձայնագրիչը):

Եթե խնդրեմ, մի բան էլ չե՞ս ասի քո խաղացանկից:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե խնդրես՝ չեմ ասի, եթե չխնդրես՝ կասեմ:

Հ. ՏԻԿԻՆ – Միացնե՞մ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Միացրու: (Կատարում է մենախոսություն):

Հ. ՏԻԿԻՆ – Բրա՛վո... (Ոգեշունչ ծափահարում է) Բրա՛վո...

ԲԵՆԻԱՄԻՆ – (Գլուխ տալով) Ցածր, հարևանները կլսեն հանկարծ...

Հ. ՏԻԿԻՆ – (Չայնագրիչը տեղավորելով պայուսակում) Իսկ չի՞ ամաչում քո մանկության ընկերը... Ես ինքս կտամ նրանից վերցրած գումարը, դու էլ կտաս էդ ստոր արարածներին, որ էս կողմերում այլևս աչքս չտեսնի նրանց:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց հետո պիտի վերադարձնեմ, ինչքան հասկանում եմ, էդպես չի՞...

Հ. ՏԻԿԻՆ – Ոչ, կարող ես և չվերադարձնել, նվիրում եմ, ում ի՞նչ գործն է: Ո՞ւմ առաջ եմ հաշվետու որ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալ եմ, գիտես, որ ստիպված եմ բնակարանս վաճառում:

Հ. ՏԻԿԻՆ – Եթե վաճառես, որտե՞ղ ես բնակվելու, պարոն Խուրշուդյան:

ԲԵՆԻԱՄԻՆ – «Պարոնը» գցիր մի կողմ, Խուրշուդյանն էլ հետը... Գիտե՞մ, որ ասեմ...

Հ. ՏԻԿԻՆ – Իմիջիայլոց, ես քաղաքի կենտրոնում երեքսենյականոց ընդարձակ բնակարան ունեմ, խնդրեմ, մի սենյակը կարող եմ քեզ տրամադրել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Շնորհակալ եմ, շա՛տ... Բայց ես երդվել եմ, որ այլևս չեմ ամուսնանալու: Բոլոր դեպքերում ինձ համար կարևորը քո վերաբերմունքն է, անկեղծ եմ ասում, ինչով ուզում ես երդվեմ:

Հ. ՏԻԿԻՆ – (Ներքուստ ցնցված) Իսկ ձեզ ո՞վ է ասում՝ ամուսնացեք, որ այդպիսի բան եք ասում: Անհարմար էլ չեք զգում: Չեր կինը էնպես է վախեցրել ձեր աչքը, որ ձեզ թվում է, թե բոլոր կանայք նույնն են:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չառա, ինչո՞ւ էլի հոգնակիլի անցաք:

Հ. ՏԻԿԻՆ – Բա այսքանից հետո դու էլ ո՞նց էիր ուզում, որ քեզ հետ խոսեմ: Դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել: Ի՞նչ է նշանակում երդվել եմ... Կարծես ես ուզում եմ իր հետ զոռով ամուսնանալ... Չի էլ ամաչում... Տվեք, տվեք գումարս, ես ավելորդ ժամանակ չունեմ, ես զնում եմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե բող մի բառ էլ ես ասեմ... Չի՞ կարելի...

Հ. ՏԻԿԻՆ – Չեմ ուզում, չեմ ուզում լսել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց դու ի՞նչ գիտես, թե ես ինչ եմ ասելու, որ չես ուզում լսել:

Հ. ՏԻԿԻՆ – Տեր Աստված, անշնորհք հարևանուհուս պատճառով ինչո՞ւ պիտի ես էս վիճակի մեջ ընկնեմ: Միջնորդեց, ասաց՝ ում համար է, ես էլ արվեստասեր կիմ եմ, տվի, որովհետև միայն բեմից ու էկրանից էի ձեզ ծանոթ, չգիտեի ում հետ գործ ունեմ: Ինքը թողեց, գնաց քաղաքից, ինձ զգեց կրակը: Գումարս տվեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Համբերել եք, մի քիչ էլ համբերեք: Չառա, կտամ:

Հ. ՏԻԿԻՆ – Տղամարդը կնոջը էսքան չի տանի ու բերի հենց էնպես, եթե իրոք տղամարդ է: Հոգնել եմ, էլ չեմ ուզում ոտք դնել էստեղ: Գումարս, գումարս տվեք: **(Ցատկում է, որ պատից իջեցնի Տիրոջ պատկերը, ձեռքը չի հասնում):**

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Մղվում է դեպի նա՝ բռնելով տիկնոջ քեփից)** Տիկի՛ն, տիկի՛ն, ի՞նչ եք անում:

Հ. ՏԻԿԻՆ – Գումարս, գումարս տվեք... **(Նորից է ցատկում՝ ձեռքը երկարած սրբապատկերին):**

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Մաստող)** Տիկի՛ն, տիկի՛ն Չառա...

Հ. ՏԻԿԻՆ – **(Շարունակելով ցատկել)** Տվե՛ք, տվե՛ք գումարս...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Դարձյալ բռնելով տիկնոջ բարձրացրած ձեռքը)** Կտամ... Չեզ թող չթվա, թե չեմ տա: Եթե չուզեք էլ՝ կտամ... Հանգրստացեք, տիկի՛ն Չառա... Չեզ ի՞նչ պատահեց հանկարծ...

Հ. ՏԻԿԻՆ – Չեքս մի ցավեցրեք... Թո՛ղ...

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Թողնելով տիկնոջ ձեռքը)** Ազնիվ խոսք, ես ձեզնից չեի սպասի, չեի սպասի, Չառա, իսկի չեի սպասի... Եթե ձեր փոխարեն մի ուրիշը դա աներ, գիտեք, չէ՞, ինչ կանեի... Դռնից չեի հանի, լուսամուտից կհանեի:

Հ. ՏԻԿԻՆ – Ինչ ուզում եք արեք, տեսնեմ ինչ պիտի անեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե դուք եք՝ ո՞նց անեմ, դուք չլիներեք, էն ժամանակ կիմանայիք՝ կանեի, թե չեի անի:

Հ. ՏԻԿԻՆ – Ես չգիտեմ... **(Անդրդվելի)** Գումարս, գումարս տվեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Ուրեմն կարո՞ղ է պատահի, որ չտամ... Չունեմ, որտեղի՞ց տամ...

Հ. ՏԻԿԻՆ – **(Ակնարկելով Տիրոջ պատկերը)** Չունե՞ք՝ հանեք, ծախեք, տվեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Այ, եղ խոսքը դուք պիտի չասեիք ինձ, պիտի չասեիք, պիտի չասեիք, ինչ էլ որ լիներ, թեկուզ աշխարհն աշխարհով անցներ: Դուք համարեք, որ այդ խոսքն ինձ չեք ասել, ես այդպիսի բան ձեզնից երբեք չեմ լսել:

Հ. ՏԻԿԻՆ – Գումարս, գումարս տվեք... Իմ գործը չի՝ ունեք, թե չունեք... Դերասան ես՝ զնա դերասանությունդ արա... Աստված դրա՞ համար չի ձեզ էդ շնորհքը տվել, որ հիմա էլ ուրիշ բաներ եք ուզում: Ասածու դե՞մ եք դուրս գալիս... Կստանաք, ո՞նց չէ... Գումարս, գումարս տվեք...

ԲԵՆԻԱՄԻՆ – Բնակարանս կծախվի՝ կտամ, հո չփախա՞, տիկին Ջանա:

Հ. ՏԻԿԻՆ – Տվեք, տվեք գումարս... Ես ավելորդ փող չունեմ, որ շռայլեմ աջ ու ձախ: Դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել: Ի՞նչ է նշանակում՝ երդվել եմ... Դուք գիտե՞ք, թե ես ինչ ամուսին եմ ունեցել: Եթե նրա հետ չեմ ապրել, քեզ հետ կապրե՞մ: Ես հիմա նոր եմ հասկանում ձեր խեղճ կնոջը: Կյանքում ոչ ոք, ոչ ոք դեռ ինձ եղպես չէր վիրավորել: Իմ հիմար խելքը... Ես ինձ չեմ ներում: Ես նոր, նոր հասկացա, թե քեզ ինչու են հանել թատրոնից:

ԲԵՆԻԱՄԻՆ – Եթե անգգուշաբար ես վիրավորել եմ ձեզ, ներողություն եմ խնդրում, էլ ինչ ասեմ:

Հ. ՏԻԿԻՆ – Տվեք, գումարս տվեք: Դուք ինձ չեք վիրավորել և չեք էլ կարող վիրավորել, դուք ուղղակի ձեր իսկական դեմքը ցույց տվիք:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ինձ ինչ էլ ասեք, մեկ է, որպես մարդու ես ձեզ բարձր եմ գնահատում, Ջանա:

Հ. ՏԻԿԻՆ – (**Պայուսակից հանում է ձայնագրությունները, նետում սեղանին**) Ինձ որպես կին էլ շատ բարձր են գնահատում, դա էլ իմացեք: Ոսկու արժեքը ոսկերիչը գիտի, դուք որտեղի՞ց իմանաք, եթե ազնիվ մետաղների հետ առհասարակ գործ չեք ունեցել: Ինչո՞ւ եք երկարացնում, չեմ հասկանում: Իմ համբերությունն ես փորձում: Երևի քեզ թվացել է, թե հազիդ կոստյումն էլ հատուկ նպատակով եմ առել:

ԲԵՆԻԱՄԻՆ – Ուրեմն ես կարո՞ղ էի եղպիսի բան մտածել: Լավ, էլի...

Հ. ՏԻԿԻՆ – Ես քեզ խղճացել եմ, դա էլ իմացիր, ես քո մերկությունն եմ ուզեցել ծածկել: Իսկ դու հիմա քեզ լրիվ մերկացրիր, էլ ոչ մեկը չի կարող ծածկել, որովհետև հոգու մերկությունը ոչ մի բանով չի ծածկվում: Որպեսզի դու իմ մասին վատ բան չմտածես, ես հիմա

ստիպված եմ քո հագի կոստյումն էլ ետ պահանջել: Մի զարմացիր, էնպես էլ զարմանում է որ... Ես իմ կանացի արժանապատվությունն եմ փրկում: Ես բոլորովին էլ մտադիր չեմ մեկնումեկի կողմից մազաչափ անգամ սխալ հասկացվել: Անգամ քո, է՛, քո կողմից: Հանիր, հանիր կոստյումը...

ԲԵՆԻԱՄԻՆ – Լո՞րջ ես ասում:

Հ. ՏԻԿԻՆ – (Չարախնդալով) Չէ, կատակ եմ անում... Նստել սպասում եմ, որ ինքը գլխի ընկնի, բայց տեսնում եմ, որ իրեն չհասկանալու է տալիս:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չեմ ուզում հավատալ, որ դու կարող ես այդ քայլին դիմել: Անկեղծ եմ ասում... Չեմ հավատում...

Հ. ՏԻԿԻՆ – Մի հավատա: Հանիր կոստյումը...

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ես խոսք եմ տալիս, որ կվճարեմ արժեքը, հենց որ բնակարանս վաճառվի, կվճարեմ: Բույե առ բույե սպասում եմ, որ գան...

Հ. ՏԻԿԻՆ – Ես չգիտեմ, թե ինչ ես անում... Ես զգեստների, փալաս-փուլուսի առևտրով չեմ զբաղվում, որ վճարես կամ չվճարես: Հանիր կոստյումը: Էնպես էլ հագել, կանգնել է առաջս, ոնց որ թե իր գրպանի փողերով առած լինի: (Ուտքով հարվածում է հատակին) Հանիր կոստյումը...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե, եթե լուրջ ես ասում... (Հանում է պիջակը) Խնդրեմ... (Տալիս է տիկնոջը):

Հ. ՏԻԿԻՆ – Ինչի՞ համար, է՛, ինչի՞ համար դու իմ մասին ուրիշ բան մտածես: Դու ո՞վ ես, որ ես քեզ համար կոստյում առնեմ: Պիջակը հանեցիր, դե շալվարն էլ հանիր, ո՞ւմ ես սպասում: Դու չգիտե՞ս, որ մեկն առանց մյուսի չի լինում:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չառա...

Հ. ՏԻԿԻՆ – (Հեզմանքով) Չառա՛... Հանիր շալվարը, ժամերով պիտի սպասե՞մ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Բայց ես ուրիշ շալվար չունեմ տանը...

Հ. ՏԻԿԻՆ – Ժամանակին մտածեիր, դրա՞ մասին էլ ես պիտի մտածեմ: Արագացրու, վա՛յ, ես ժամանակ չունեմ:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չառա...

Հ. ՏԻԿԻՆ – Ո՛ւֆ, էլի Չառա... Դու իմ անունը մի տուր ընդհանրապես, իմ անունը Չառա չի, իմ անունը Լուսնթագ է անձնագրով, դա էլ իմացիր: Հանիր կոստյումը, դու արժանի չես:

ԲԵՆԻԱՄԻՆ – Տիկին Լուսնթագ...

Հ. ՏԻԿԻՆ – **(Բռնկվելով)** Ոչ Լուսնթագ և ոչ էլ Չառա, ես քեզ կտրականապես արգելում եմ իմ անունը տալ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ եթե...

Հ. ՏԻԿԻՆ – Եթե ի՞նչ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Իսկ եթե չհանե՞մ...

Հ. ՏԻԿԻՆ – Ստիպում ես, որ ոստիկան կանչեմ՝ ոստիկանո՞վ հանել տամ: Հա՞: Դա՞ ես ուզում... Ես դա էլ կանեմ... **(Չեռքը գցում է հեռախոսին, Բենիամինը խլում է լսափողը)** Եթե տղամարդկային արժանապատվություն ունենայիր, չէիր էլ հազմի: Բայց որովհետև քեզ լրիվ էին տկլորացրել, ուրախությամբ հազար: Ոնց որ հազար, էնպես էլ հանիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Քո ներկայությամբ...

Հ. ՏԻԿԻՆ – Ինձ համար մեկ է, թե որտեղ կհանես: Ի՞նչ անեմ, փակե՞մ աչքերս:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չես ուզում ինձ հասկանալ, չես ուզում, էլի, չես ուզում:

Հ. ՏԻԿԻՆ – Չէ, չեմ ուզում, հանիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Է՛հ, ուզում ես հանեմ՝ կհանեմ, բայց հետո ի՞նչ եմ անելու:

Հ. ՏԻԿԻՆ – Ինչ ուզում ես՝ արա, դա՞ էլ է ինձ վերաբերում: **(Հիստերիկ, արտասովախառն աղաղակելով)** Հանիր:

ԲԵՆԻԱՄԻՆ – Չեմ հանում:

Հ. ՏԻԿԻՆ – Դու չես հանի, ես կհանեմ: **(Հարձակվում է՝ փորձելով հանել շալվարը):**

ԲԵՆԻԱՄԻՆ – **(Թեթևակի դիմաճալով)** Տիկի՛ն... Ի՞նչ եք անում, տիկի՛ն...

Հ. ՏԻԿԻՆ – Շալվարս եմ հանում, ինչ եմ անում...

ԲԵՆԻԱՄԻՆ – Տիկի՛ն...

Հ. ՏԻԿԻՆ – **(Կառչած)** Թո՛ղ, թո՛ղ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Տիկի՛ն...

Հ. ՏԻԿԻՆ – Թո՛ղ... Չեռքս թո՛ղ...

ԲԵՆԻԱՄԻՆ – Անհարմար է, մարդ կմտնի...

Հ. ՏԻԿԻՆ – **(Որ շալվարն իջեցրել է մինչև ծնկները)** Մտնում եմ՝ թող մտնեն... Թող, թող...

ԲԵՆԻԱՄԻՆ – Դե սպասիր, սպասիր գնամ, հանեմ քերեմ տամ քեզ... **(Տիկնոջը հրում, գցում է՝ մտնելով խոհանոց):**

Հ. ՏԻԿԻՆ – **(Անմիջապես կանգնելով ընկած տեղից)** Ով որ արժանի է, թող մա էլ հազմի:

**ԲԵՆԻԱՄԻՆ – (Բերում է շավարը) Հիմա ես ներողություն
խնդրե՞մ, ներողություն խնդրեմ, հա՞, որ էս տեսքով եմ ներկայանում:**

Հ. ՏԻԿԻՆ – Հանգիստ եղիր, քեզ վրա մայող չկա:

**ԲԵՆԻԱՄԻՆ – Խնդրեմ, վերցրու: Ես մեղավո՞ք եմ, որ դու որ-
պես կին չես ազդում ինձ վրա: Մարդն ինքն իրեն պիտի թույլ չտա...
Եթե ինքն իրեն թույլ է տալիս, ինչ ասես...**

**Հ. ՏԻԿԻՆ – (Կոստյունն առած գնում է դեպի դուռը, շրջվում է՝
արգահատանքով Բենիամինին չափելով ոտից գլուխ) Ես նոր իմա-
ցա, թե քեզ ինչու չեն սիրում: Ով ուզում ես եղիր, ինչ ուզում ես եղիր,
բայց մի քիչ էլ մարդ եղիր... (Չանչ անելով) Հողեմ հանճարեղ
գլուխդ: (Կտաղրտվելով գնում է):**

**ԲԵՆԻԱՄԻՆ – (Նրա գնալուց հետո, թոթվելով ուտերը, ինքն իր
հետ) Չի կարելի, էլի, չի կարելի... Կարծեմ հայ ենք, չէ՞... Բա մեզ
վայել է... Ի՞նչ ասեմ... Աշխարհը մեզ չգիտի, բայց մենք հո մեզ
գիտենք: (Փակում է աչքերը՝ սուզվելով ինքն իր մեջ: Արտասանում է
Համլետի հայտնի մեմախոսությունը: Հետո մտածում, կանգնում է
սրբապատկերի առջև՝ մրմնջալով Տերունական աղոթքը: Ձգուշորեն
պատից հանում է սրբապատկերը, խնամքով սրբում է, թերթի մեջ
փաթաթելուց հետո դնում է թևի տակ: Տարտամ քայլերով գալիս,
կանգնում է նախարենում՝ հայացքը սևեռած հանդիսատեսին:
Իջնում է՝ դուրս գնալով դահլիճից):**

ՎԱՐԱԳՈՒՅՐ

1994 թ.

**ՄԵՐ ՏԱՆ ՏԵՐԵՐԸ ԿԱՍ
ԵՍ ՉԵՄ ՈՒՉՈՒՄ ԴԱՌՆԱԼ
ՄԻԼԻՈՆԱՏԵՐ**

Կատակերգություն երկու մասից

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՀԱՅՐՈ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ – գործարար, փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն

ԿԱՐԱՊԵՏ (ԿԱՐՈ) – նույն ընկերության աշխատակից

ՎԵՐԺԻՆԵ (ՎԵՐԺԻԿ) – կինը

ԹԱԳՈՒՀԻ (ԹԱԳՈՒՇ) – գոքանչը

ԳԱՅԱՆԵ (ԳԱՅՈՒՇ) – Կարապետի դուստրը

ԼԻՊԱՐԻՏ (ԼԻՊՈ) – նրա ամուսինը

ԳԵՐԱՍԻՄ (ԳԵՐԱՍ) – հարևան

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ

ԱՂՋՆԱԿ ԼԱԼԱ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

*Փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենն
Հայրո Հայրույնյանի շքեղ կահավորված, ընդարձակ աշխա-
տասենյակը մեծադիր դռնով:*

*Աջից՝ հանգստի սենյակի վրա բացվող դուռն է:
Մտնում է բջջային հեռախոսը հպած ականջին:*

ՀԱՅՐՈ – Բարև... Չէ... Ասել եմ... Հա... Լրիվ... Գնացի...
Էնտեղից եմ գալիս... Ասա... (Տեղավորվում է անտիկվար
գրասեղանի հետևում քիկնակներին գալարվող օձեր դրվագված,
խոշոր բազկաթոռին: Հնչում է գրասեղանին կից պատվանդանին
շարված հեռախոսներից մեկի զանգը) Մի բոպե... (Ընդմիջում է
բջջայինով խոսելը՝ վերցնելով լսափողը) Ալո... Ե՛ս եմ... Նոր եկա...
Մի բոպե... (Լսափողը դնում է մի կողմ, շարունակելով բջջայինով
ընդհատված խոսակցությունը) Չէ՛, իրեն չեմ գտնում: Չկա՛...
Չանգահարել եմ... Կառավարությունում էլ չկա: Կինն էլ չգիտի, թե
որտեղ է: Ազգային ժողովում էլ չկա... Աշխատակազմում էլ չգիտեմ,
թե որտեղ կլինի: Ինքն էս գործը փակեց՝ փակեց, եթե չփակեց, ի՛նչ
ասեմ... Ոտով-գլխով կորած եմ... Մի բոպե... (Շարունակում է մյուս
հեռախոսով) Հասկացա... Կանեմ... Ցե՛... (Դնում է լսափողը, բջ-
ջայինով) Ասա՛... Չէ՛, բջջայինն էլ չի պատասխանում: Կա-չկա՝ ինքն
է անջատել... Երևի պրեզիդենտի մոտ է... Կես ժամից... (Անջատում
է):

Մտնում է Կարապետը՝ մնալով դռան տակ:

ԿԱՐԱՊԵՏ – Կարելի՞ է:

ՀԱՅՐՈՒՄ – Արի՛:
 ԿԱՐԱՊԵՏ – Բարև ձեզ:
 ՀԱՅՐՈՒՄ – Բարև էլ, դեռ մի բան էլ ավելի՛: Արի՛, մոտ մտախր:
 ԿԱՐԱՊԵՏ – Շնորհակալություն:
 ՀԱՅՐՈՒՄ – Մո՛տ, մո՛տ, էլի մոտ... Այ, էդպես... Ինչո՞ւ ես քեզ ին-
 ձանից հեռու պահում, այ տղա: Դու էլ հո ուրիշ մարդ չես...
 ԿԱՐԱՊԵՏ – (Քաշվելով) Չէ՛, հեռու չեմ պահում, Վաղիմակիչ,
 ընդհակառակը...
 ՀԱՅՐՈՒՄ – (Նստում է Կարապետին դեմ հանդիման. սևեռում
 նայելով նրա աչքերի մեջ, կարճատև դադարից հետո) Գիտե՞ս քեզ
 ինչի համար եմ կանչել:
 ԿԱՐԱՊԵՏ – (Անհանգիստ) Չէ, ճիշտն ասած, չգիտեմ:
 ՀԱՅՐՈՒՄ – Ո՞նց ես:
 ԿԱՐԱՊԵՏ – Լավ:
 ՀԱՅՐՈՒՄ – (Քազմանշանակ) Կարապետ...
 ԿԱՐԱՊԵՏ – Լսում եմ...
 ՀԱՅՐՈՒՄ – Կարո՞ ասե՞մ, թե՞ Կարապետ...
 ԿԱՐԱՊԵՏ – Մեկ է, ոնց կուզեք...
 ՀԱՅՐՈՒՄ – Կարո՞, պիտի գնաս, իմ տեղը մտես:
 ԿԱՐԱՊԵՏ – (Չարմացած) Նստած եմ... (Ինքնաբերաբար
 կանգնում է անհեթեթ ժպիտը դեմքին):
 ՀԱՅՐՈՒՄ – (Չեռքի անփույթ շարժումով հասկացնում է, որ
 նստի) Նստած ես, բայց քո տեղն ես մտած, պիտի գնաս՝ իմ տեղը
 մտես:
 ԿԱՐԱՊԵՏ – (Կանգնում է, մոլորված) Որտե՞ղ մտեմ...
 ՀԱՅՐՈՒՄ – (Չեռքի նույն շարժումը) Որտե՞ղ եմ մտում ընդհան-
 րապես... Դու չգիտե՞ս:
 ԿԱՐԱՊԵՏ – (Խարխալելով) Լավ, էլի, Վաղիմակիչ, հումոր
 եք անում: Հումոր չե՞ք անում:
 ՀԱՅՐՈՒՄ – Ի՞նչ հումոր...
 ԿԱՐԱՊԵՏ – Բա որ հումոր չեք անում, ինչո՞ւ եք ասում իմ
 տեղը պիտի մտես: Ես ձեր տեղը ո՞նց մտեմ: Դուք մտած եք:
 ՀԱՅՐՈՒՄ – Լսիր, դու իրոք չե՞ս հասկանում՝ ինչ եմ ասում, թե՞
 դիտմամբ ես քեզ անհասկացողի տեղ դնում: Էստեղ պիտի չմտես,
 է՛, պիտի գնաս, է՛մտեղ մտես իմ տեղը:
 ԿԱՐԱՊԵՏ – Էմտեղ որտե՞ղ... Ներողություն, Վաղիմակիչ, չեմ
 հասկանում՝ ինչ եք ասում:
 ՀԱՅՐՈՒՄ – Ի...

ԿԱՐԱՊԵՏ – Ազնիվ խոսք...
 ՀԱՅՐՈ – (Խոժոռված, լրջացնելով) Բա՛նտ, բանտ նստես...
 ԿԱՐԱՊԵՏ – (Աչքերը լայնանում են, շփոթված բարձրանում է տեղից, կարկամելով) Բբբա՞նտ... (Բերանը մնում է բաց):
 ՀԱՅՐՈ – Հա՛, բանտ, բա էլ որտե՞ղ...
 ԿԱՐԱՊԵՏ – (Ապշած) Ե՞ս...
 ՀԱՅՐՈ – (Չեռփի նույն շարժումը, Կարապետը ափամա նըստում է) Հա՛, դու, բա էլ ո՞վ, քեզ հետ եմ խոսում...
 ԿԱՐԱՊԵՏ – (Կանգնելով) Լո՞ւրջ...
 ՀԱՅՐՈ – Բա քեզ թվում է, թե կատակ եմ անո՞ւմ (Չեռփի կտրուկ դարձած շարժումով նստեցնում է) Լսիր, կարո՞ղ է ես քեզ լավ եմ ճանաչել:
 ԿԱՐԱՊԵՏ – Վաղիճակիչ, ներողություն, հո ձեռ չե՞ք առնում:
 ՀԱՅՐՈ – (Պոռթկալով) Չե՛, դու ես ինձ ձեռ առնում, որ պարզ ասում եմ, էլի չես հասկանում...
 ԿԱՐԱՊԵՏ – (Կանգնում է՝ զգալով պահի լրջությունը) Բայց ես ի՞նչ եմ արել, որ գնամ նստեմ:
 ՀԱՅՐՈ – (Բարձրացնելով ձայնը) Ոչ մի բան էլ չես արել: Եթե արած լինեիր, էլ ինչի համար էինք էսքան խոսում: Քեզ թվում է, թե էդ բոլոր նստածները բա՞ն են արել, որ նստած են: Կյանքը հո կանգ չի՞ առնելու, այ տղա: Դու չես արել, ես եմ արել, ի՞նչ տարբերություն:
 ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն, բայց դուք ի՞նչ եք արել, որ ես ձեր փոխարեն գնամ, նստեմ:
 ՀԱՅՐՈ – Դա՞ էլ է քեզ վերաբերում... Եթե չես ուզում նստես, ասա՝ չեմ ուզում, էլ ինչո՞ւ ես երկարացնում:
 ԿԱՐԱՊԵՏ – Ո՞վ չի ուզում, ե՞ս... Եթե ձեր տեղը չուզեմ, էլ ո՞ւմ տեղը պիտի ուզեմ, Վաղիճակիչ:
 ՀԱՅՐՈ – (Հարձակողական) Քո տեղը...
 ԿԱՐԱՊԵՏ – Ի՞մ տեղը...
 ՀԱՅՐՈ – Հա, հա, քո տեղը... Բա ի՞նչ էիր կարծում... Քեզ թվում է, թե մե՞նք ենք մեր գլխի տերը: Արած լինեմ, արած չլինեմ, պատասխան տվողը ես եմ: Ապրանք են անցկացրել, եկել են՝ մեզ մոտ են հայտնաբերել: Քո ինչի՞ն է պետք, որ դա էլ իմանաս:
 ԿԱՐԱՊԵՏ – Ի՞նչ ապրանք...
 ՀԱՅՐՈ – Քեզ համար մեկ չի՞... Կասես՝ ոչ մի բանից տեղեկություն չունեմ, չգիտեմ, չեմ տեսել, չեմ լսել, վե՛րջ... Քեզնից ուրիշ բան չի պահանջվում: Դա իմ պրոբլեմն է, դա քո պրոբլեմը չի:
 ԿԱՐԱՊԵՏ – Աչքիս վրա, ինչ որ կասեք, Վաղիճակիչ...

ՀԱՅՐՈՒՆ – Ես հո քեզ չեմ ասում զնա հենց էնպես, անտեր-անտիրական նստիր: Աշխատավարձդ ինչքա՞ն է, ամիսը քանի՞ դոլար ես ստանում:

ԿԱՐԱՊԵՏ – Հարյուր...

ՀԱՅՐՈՒՆ – Որ նստես, օ՛րը հարյուր կստանաս:

ԿԱՐԱՊԵՏ – Հարյուր... Կարյուր...

ՀԱՅՐՈՒՆ – Հա...

ԿԱՐԱՊԵՏ – Դոլար...

ՀԱՅՐՈՒՆ – Հա, բա էլ ի՞նչ...

ԿԱՐԱՊԵՏ – Օրը...

ՀԱՅՐՈՒՆ – Հա, ինչի՞ համար ես զարմանում...

ԿԱՐԱՊԵՏ – Կստանա՞մ...

ՀԱՅՐՈՒՆ – Հա, ասում եմ...

ԿԱՐԱՊԵՏ – Օրը...

ՀԱՅՐՈՒՆ – Հա...

ԿԱՐԱՊԵՏ – Հարյուր դոլար...

ՀԱՅՐՈՒՆ – Հա՛, ասում եմ... Երկու օր նստես՝ երկու հարյուր կըստանաս, չորս օր կնստես՝ չորս հարյուր կստանաս, տաս օր կնստես՝ հազար դոլար կստանաս...

ԿԱՐԱՊԵՏ – Եթե տասնհինգ օր նստե՞մ...

ՀԱՅՐՈՒՆ – Տասնհինգ օր նստես՝ հազար հինգ հարյուր դոլար կստանաս:

ԿԱՐԱՊԵՏ – Շա՞տ կնստեմ...

ՀԱՅՐՈՒՆ – Ցմահ... մի երկու շաբաթ կնստես, դուրս կգաս, դա ի՞նչ հարցնելու բան է, որ հարցնում ես:

ԿԱՐԱՊԵՏ – Բայց դուրս կգամ, չե՞:

ՀԱՅՐՈՒՆ – Դուրս չես գա, է՛, կհանենք:

ԿԱՐԱՊԵՏ – Թեկուզ ցմահ նստեմ, Վաղինակիչ, ձեզ համար եմ նստում, հո ուրիշի համար չեմ նստում:

ՀԱՅՐՈՒՆ – Բա էլ ինչի՞ համար ես հարցնում:

ԿԱՐԱՊԵՏ – Հենց էնպես... Ցմահ եք ուզում՝ ցմահ կնստեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Եթե ուզես էլ՝ քեզ էնտեղ երկու շաբաթից ավել պահող չկա, հանգիստ եղիր: Երկու շաբաթ չլինի՝ թող մի ամիս լինի, մի ամիս չլինի՝ թող երկու ամիս լինի: Քեզ նման տղամարդու համար մի երկու ամիս նստելը ինչ է որ... Առոք-փառոք կնստես, դուրս կգաս, ի՞նչ է եղել...

ԿԱՐԱՊԵՏ – Չե՛, հարցը դա չի...

ՀԱՅՐՈՒՆ – Բա ի՞նչն է հարցը: Բան ասա, բան հասկանամ...
Օրական հարյուր դուրս, որ պարապ նստած տեղդ ստանաս, վա՞տ է:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, վատ չի, շատ լավ է, Վաղինակիչ, դա չեմ ասում:

ՀԱՅՐՈՒՆ – Բա ի՞նչ ես ասում: Քսան օր կնստես՝ երկու հազար կստանաս, մի ամիս կնստես՝ երեք հազար կստանաս, երկու ամիս կնստես՝ վեց հազար կստանաս: Շատ կնստես՝ շատ կստանաս, քիչ կնստես՝ քիչ կստանաս: Ես չգիտե՞մ, որ շատ նստելն է քեզ ձեռ տալիս էդ գնով: Եթե դուրս գաս, էլի խնդրելու ես, որ գնաս նստես: Ինձ սազակա՞ն է, որ ես գնամ նստեմ, դու ասա:

ԿԱՐԱՊԵՏ – Անհարմար չի՞, Վաղինակիչ, բա մեզ ամոք չի՞, որ դուք նստեք:

ՀԱՅՐՈՒՆ – Չէ, ամեն ինչ մի կողմ կղնեմ, կզնամ, կնստեմ, բայց որ ես նստեմ, ես ժողովրդին ո՞վ պիտի պահի: Երեք հարյուր մարդ պահելը հե՞շտ է էսօրվա օրը:

ԿԱՐԱՊԵՏ – Ես չգիտե՞մ... Էդ բոլորը դուք մեզ համար եք անում, հո ձեզ համար չեք անում:

ՀԱՅՐՈՒՆ – Ազգիս համար էլ որ չանեմ, բա էլ ո՞ւմ համար պիտի անեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Կարելի՞ է մի բան հարցնեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Կարելիս ո՞րն է, հարցնում ես՝ հարցրու:

ԿԱՐԱՊԵՏ – (Կաշկանդված) Չէ, եթե...

ՀԱՅՐՈՒՆ – Եթե-մեթե չկա, ասա:

ԿԱՐԱՊԵՏ – Կարելի՞ է:

ՀԱՅՐՈՒՆ – Ասում եմ՝ հա՛...

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն, իսկ էնտեղ պայմանները ո՞նց են, որ... գնամ նստեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Ինչի՞ համար ես հարցնում... Ուրեմն կարո՞ղ է պատահի, որ քեզ համար էլ վատ լինի: Իմ տեղն ես նստում, հո քո տեղը չես նստում, որ վատ լինի: Եթե քո տնից լավ չլինի, վատ էլ չի լինի:

ԿԱՐԱՊԵՏ – Առաջին անգամն է, դրա համար եմ հարցնում:

ՀԱՅՐՈՒՆ – Ոնց որ ինձ պիտի նայեին, մույն ձևով էլ քեզ կնայեն, պարզ չի՞: Բանտում մի օր ես նստելու, մնացած օրերին հիվանդանոց են տեղափոխելու, դա էլ ասեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞ր հիվանդանոցը:

ՀԱՅՐՈՒՆ – Բանտի հիվանդանոցը, ուրիշ էլ ո՞ւր...

ԿԱՐԱՊԵՏ – Վաղինակիչ, բայց ես հիվանդ չեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Հիսուն կա՞ս:

ԿԱՐԱՊԵՏ – Անց եմ...

ՀԱՅՐՈՒՆ – Բա էլ ո՞նց ես ասում հիվանդ չեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Լեղապարկս էր վատ՝ հանել եմ:

ՀԱՅՐՈՒՆ – Էսօր լեղապարկդ եմ հանել, վաղը, մյուս օրն էլ ուրիշ քան կհանեն: Մենք մեզնից ձեռք քաշած ապրում ենք: Ով որ հիսունից հետո կասի՝ ես լավ եմ, չհավատաս: Ուրեմն ինքն իրենից էլ տեղեկություն չունի: Դու ի՞նչ գիտես՝ հիվանդ ես, թե հիվանդ չես: Կքննեն, իրենք քեզ կասեն: Էնտեղ պայմաններն են լավ, դրա համար պիտի պառկես: Առողջ ու հիվանդ հարցնող չկա:

ԿԱՐԱՊԵՏ – Եթե ընդամենը մի օր պիտի մստեմ, իսկ մնացած օրերին պառկեմ, Վաղինակիչ, մի օրվա համար հարյուր դոլար կըստանամ, մենք սխալ հաշվեցինք:

ՀԱՅՐՈՒՆ – (Մռայլվելով) Լսիր, մտած կլինես, թե պառկած, դու քո օրական հարյուր դոլարը պիտի ստանաս, ոնց որ կարգն է: Բանտի հիվանդանոցն էլ է բանտ, ինչո՞ւ է մտքովդ ուրիշ քան անցնում:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, չի անցնում, երդվում եմ:

ՀԱՅՐՈՒՆ – Ինձ ո՞ւմ տեղն ես դրել: Որ չի անցնում, ինչի՞ համար ես եղպիսի բան ասում, Կարո... Կարո Կարապետ կամ Կարապետ Կարո...

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն, Վաղինակիչ, ես չգիտեի, որ բանտի հիվանդանոցն էլ է բանտ:

ՀԱՅՐՈՒՆ – Կմստես, կիմանաս: Օրը՝ օր է... (Գրասեղանի դարակը քաշում, դուլարներ է հանում) Սա էլ վերցրու, դիր գրպանդ:

ԿԱՐԱՊԵՏ – Դա ինչի՞ համար եք տալիս... Դեռ չեմ մստել, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈՒՆ – Կապ չունի, վերցրու:

ԿԱՐԱՊԵՏ – Բայց ախր ինչի՞ համար...

ՀԱՅՐՈՒՆ – Լսիր, տվողից հիմա վերցնում եմ, էլ չեմ հարցնում...

Սա քո ստանալիք օրական հարյուր դոլարի հետ կապ չունի:

ԿԱՐԱՊԵՏ – Բա էլ ինչո՞ւ վերցնեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Վերցրու, կասեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Ես ձեզնից ո՞նց վերցնեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Իմ տեղն ես մստելու, բա ումի՞ց վերցնես:

ԿԱՐԱՊԵՏ – Հարմա՞ր է որ...

ՀԱՅՐՈՒՆ – Շատ երկարացրիր, Կարո: Եթե հարմար չլինի, չեմ տա: Վերցրու, Կարապետ: (Խոթում է գրպանը) Տնեցիներին կտաս: Եթե պետք լինի, կավելացնեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Շնորհակալ եմ: Չէ՛, պետք չի լինի:

ՀԱՅՐՈ – Չի իմացվի... Բա քեզ թվում է, թե էդ բոլորը հենց էն-պես, ինքն իրե՞ն է լինում: Եթե չեն թողնում արդար աշխատես, ուզես-չուզես պիտի մի բան անե՞ս, որ տակից դուրս գաս: Մարդիկ ըն-տանիք են պահում, ազգը հո չի՞ կործանվելու դրանց պատճառով: Մերոնցից մեկնումեկը պիտի գնար, նստեր, ինչքան զցեցի-բռնեցի, տեսա, որ քեզնից բացի ուրիշ հարմար մարդ չունեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Շնորհակալ եմ, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈ – Էդ որ ասում են՝ օրենք չկա, բան չկա, սխալ են ասում, չհավատաս: Ո՞նց չկա... Եթե չլիներ, դու ինչի համար պիտի գնայիր, իմ տեղը նստեիր: Եթե իսկապես նստելու գործ է, քարը որ տրաքի, մեկնումեկը պիտի անպայման նստի, ուրիշ վարիանտ չկա:

ԿԱՐԱՊԵՏ – (Մտերմիկ) Վաղինակիչ, իսկ եթե չնստի՞...

ՀԱՅՐՈ – Էս ի՞նչ է ասում... Ես ասում եմ՝ ուրիշ վարիանտ չկա, սա ասում է՝ իսկ եթե չնստի՞...

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն, օրինակի համար եմ ասում, Վա-ղինակիչ:

ՀԱՅՐՈ – Էս գործն առանց նախնական կալանքի չի լինի, Կա-րո... Կարապետ: Մարդկանց հետ խոսել եմ, որ ասում եմ... Կզնաս, միառժամանակ տան երես չես տեսնի, մերվերդ կհանգստացնես, էլի դուրս կգաս: Ի՞նչ է եղել, է՛... Չլինի՞ չես ուզում նստես:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, ուզում եմ: Անհարմար չի՞, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈ – Բա որ ուզում ես՝ էլ ինչի՞ համար ես էդպիսի բան ասում: Ի... Քիչ է մնում, գործս թողնեմ, ես գնամ քո տեղը նստեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, հենց էնպես եմ ասում...

ՀԱՅՐՈ – Հենց էնպես ոչ մի բան էլ մի ասա: Ինչքան շուտ նըս-տես՝ քո օգուտն է, էդքան էլ շուտ դուրս կգաս:

ԿԱՐԱՊԵՏ – Իսկ հնարավոր չի՞, որ ուշ նստեմ: Ճիշտն ասած, մի քիչ գործ ունեմ:

ՀԱՅՐՈ – Հո տուն-տուն չենք խաղում, դրանից մեծ գո՞րծ: Լսիր, Կարո... Կարո՞, թե՞ Կարապետ...

ԿԱՐԱՊԵՏ – Ոնց կուզեք... Կարո, Կարապետ...

ՀԱՅՐՈ – Լսիր, Կարո կամ Կարապետ, կարո՞ղ է՝ հետո միտքդ փոխես, չուզես՝ նստել:

ԿԱՐԱՊԵՏ – Լավ, էլի, Վաղինակիչ, ուրեմն ես է՞դ մարդն եմ... Վերավորվում եմ, ա՛յ...

ՀԱՅՐՈՒՆ – Ես ի՞նչ գիտեմ... Ձգուշացնում եմ, որ վերջին
բռնակներն ինձ փաստի առաջ չկանգնեցնես հանկարծ... Մեղք ես...
Դու քո ճակատագրի հետ չխաղաս, տղա:

ԿԱՐԱՊԵՏ – Վիրավորվում եմ, ա՛յ... Ուրեմն կարո՞ղ է պա-
տահի...

ՀԱՅՐՈՒՆ – Ես չգիտեմ, դու պիտի իմանաս...

ԿԱՐԱՊԵՏ – Ուրեմն դուք ինձ նո՞ր եք ճանաչում... Վիրա-
վորվում եմ, ա՛յ... Վաղինակիչ, ներողություն, մոտավորապես ինչ-
քա՞ն կնստեմ:

ՀԱՅՐՈՒՆ – Նոր չասա՞ցի... Չնստած, դու արդեն դուրս գալու
մասին ես մտածո՞ւմ, ի՛... Եղա՞վ... Եթե քեզ հարմար չի, ուզո՞ւմ ես՝
քո փոխարեն ուրիշի ասեմ...

ԿԱՐԱՊԵՏ – Վիրավորվում եմ, ա՛յ...

ՀԱՅՐՈՒՆ – Որ չես ուզում, բա ի՞նչ ասեմ...

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞վ չի ուզում, ե՞ս, ես չե՞մ ուզում... Վիրավորվում
եմ, ա՛յ...

ՀԱՅՐՈՒՆ – Որ խնդրես, աղաչես էլ՝ քեզ էնտեղ երկար պահող
չկա, մի անհանգստացիր: Օրական հարյուր դոլարի հետ խա՞ղ ես
անում:

ԿԱՐԱՊԵՏ – Ուրեմն ես չգիտե՞մ...

ՀԱՅՐՈՒՆ – Որ գիտես, էլ ինչո՞ւ ես իզուր տեղը խոսում:

ԿԱՐԱՊԵՏ – Մի բան հարցնե՞մ:

ՀԱՅՐՈՒՆ – Հարցրու:

ԿԱՐԱՊԵՏ – Իսկ գործը դատարան չի՞ մտնելու:

ՀԱՅՐՈՒՆ – Էս ի՞նչ է ասում... Մտնում է՝ թող մտնի... Դրա
մասին էլ ես մտածո՞ւմ... Ոնց որ մտնի, էնպես էլ դուրս կգա: Եթե
մտքիդ ուրիշ բան կա, դա ասա:

ԿԱՐԱՊԵՏ – Լավ, էլի, Վաղինակիչ...

ՀԱՅՐՈՒՆ – Ես ի՞նչ գիտեմ... Ինչ որ մտքիդ կա, հիմա ասա,
հետո էլ ինձ բան չասես, ես պարապ մարդ չեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն, իսկ կարելի՞ է իմանալ՝ ինձ ե՞րբ
են նստեցնելու:

ՀԱՅՐՈՒՆ – Քեզ համար մեկ չի՞... Կարող է, ա՛յ, հենց հիմա էլ
մըտնեն, ձերբակալեն:

ԿԱՐԱՊԵՏ – (Վախեցած, հայացքով դեպի դուռը) Ո՞ւմ, ի՞նձ...

ՀԱՅՐՈՒՆ – Հա՛, բա էլ ո՞ւմ...

ԿԱՐԱՊԵՏ – (Ժամանակ առ ժամանակ սպասողական հա-
յացք ձգելով դռան կողմը) Հենց հիմա՞...

ՀԱՅՐՈՒՆ – Հա՛, հենց հիմա, բա էլ ե՞րբ... Հիմա թող չլինի, թող մի կես ժամ հետո լինի, մի ժամ հետո լինի, շուտ թե ուշ պիտի գան տանե՞ն, թե՞ չէ:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞ւմ տանեն:

ՀԱՅՐՈՒՆ – Քե՛զ տանեն, ո՞ւմ տանեն:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞ւր տանեն:

ՀԱՅՐՈՒՆ – Որ տանում են, ո՞ւր են տանում... Տանեն, նստեցնեն:

Բա մինչև հիմա ինչի՞ մասին էինք խոսում:

ԿԱՐԱՊԵՏ – Գնա՞մ:

ՀԱՅՐՈՒՆ – Ո՞ւր գնաս:

ԿԱՐԱՊԵՏ – Գնամ, որ չգան:

ՀԱՅՐՈՒՆ – Հիմա չեկան, հետո կգան:

ԿԱՐԱՊԵՏ – Հետո՞ ե՞րբ...

ՀԱՅՐՈՒՆ – Դա՞ էլ ես պիտի իմանամ: Քեզ համար մեկ չի՞, թե երբ... Ինչի՞ համար ես անընդհատ դռան կողմը նայում:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, չեմ նայում:

ՀԱՅՐՈՒՆ – Դե որ չես նայում, մի նայիր: Նստիր, ինչո՞ւ կանգնեցիր:

ԿԱՐԱՊԵՏ – Բա ինչո՞ւ են ուշանում:

ՀԱՅՐՈՒՆ – Նրանք իրենց գալու ժամը գիտեն, դու մի անհանգըստացիր:

ԿԱՐԱՊԵՏ – Որ տանեն, ի՞նչ պիտի անեն:

ՀԱՅՐՈՒՆ – Կհարցաքննեն, ինչ պիտի անեն:

ԿԱՐԱՊԵՏ – Հարցաքննելիս կարո՞ղ է ինձ վրա ուժ գործադրեն:

ՀԱՅՐՈՒՆ – Գործադրում են, թող գործադրեն՝ ինչ գիտես, որ ինչ ասես:

ԿԱՐԱՊԵՏ – Բա որ չհավատա՞ն...

ՀԱՅՐՈՒՆ – Պարզ չի՞, որ չեն հավատա: Կամ ինչի՞ պիտի հավատան որ...

ԿԱՐԱՊԵՏ – Գնամ, որ չգան:

ՀԱՅՐՈՒՆ – Էստեղ չեկան, տունդ կգան, մույն բանը չի՞... Նրստիր... Դռան կողմն ես նայում, որ ի՞նչ... Ավելի լավ չի՞ գան էստեղից տանեն, որ տնեցիները իզուր տեղը չխառնվեն իրար:

ԿԱՐԱՊԵՏ – Չեն խառնվի, ազնիվ խոսք:

ՀԱՅՐՈՒՆ – Ե՞ս եմ որոշողը, որ ինձ ես ասում, Կարո... կամ Կարապետ:

ԿԱՐԱՊԵՏ – Բայց թող տնից տանեն, էլի, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈՒՆ – Իմ ուզելով է... Մազալու մարդ է... Կարող է տնից չտանեն, հիմա դուրս գաս փողոց՝ հենց փողոցից բռնեն, տանեն, կամ տրանսպորտ մատես՝ տրանսպորտից իջեցնեն, տանեն: Դա ի՞նչ հարց է, որ դրա վրա էլ ես ուշադրություն դարձնում: Կարևորն էն է, որ դու մախօրոք գիտես՝ քեզ պիտի բռնեն, վատ չես զգա: Ուրիշ բան է, որ չիմանաս, զան, միամիտ տեղը բռնեն: Հո մույն բանը չի՞ իմանաս՝ բռնեն, թե չիմանաս՝ բռնեն... Եթե չես ուզում զան, էդքան դժան կողմը մի մայիլ: Քեզ հետ եմ, Կարո... Կարապետ:

ԿԱՐԱՊԵՏ – (Նայելով) Չէ, չեմ մայում:

ՀԱՅՐՈՒՆ – Եթե չես ուզում մատես, դա ուրիշ հարց է: Թե չէ՝ ի՞նչ կարևոր է, թե որտեղից կտանեն:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞վ չի ուզում, ե՞ս... Վիրավորվում եմ, ա՛յ...

ՀԱՅՐՈՒՆ – Բա էլ ինչի՞ համար ես պոչ խաղացնում: Քեզ համար մեկ չի՞ էտեղից կտանեն, թե տնից:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ՛, տնեցիներին ուզում եմ տեղյակ պահեմ, որ չանհանգստանան:

ՀԱՅՐՈՒՆ – Ինչո՞ւ պիտի անհանգստանան, է՛, ի՞նչ է եղել, որ անհանգստանան:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ՛, ուղղակի ուզում եմ, որ իրենց տեսնեմ, հետո մատես:

ՀԱՅՐՈՒՆ – Դեռ չմտած, հիմա էլ տնեցիներին՞ կարոտեցիր:

(Թակում են դուռը: Կարապետը Հայրույնն մայում է թրթր-ռացող հույսը դեմքին):

ԿԱՐԱՊԵՏ – (Գրեթե շշուկով) Իրե՞նք են:

ՀԱՅՐՈՒՆ – Հանգիստ մատիլ տեղդ:

ԿԱՐԱՊԵՏ – (Մնալով կանգնած) Նստած եմ:

ՀԱՅՐՈՒՆ – Նստած չես, կանգնած ես: Նստիլ, ասում եմ...

ԿԱՐԱՊԵՏ – Թակում եմ...

ՀԱՅՐՈՒՆ – Թակում են, թող թակեն... Ո՞վ ռիսկ ունի, որ առանց իմ թույլտվության մերս մտնի: Սպասիլ, ո՞ւր ես գնում:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, չեմ գնում: (Բացում է հանգստի սենյակի դուռը՝ նետվելով դուրս):

ՀԱՅՐՈՒՆ – Կարո՞... Կարապե՛տ... (Դուրս է գնում ետևից):

(Թակոցները շարունակվում են):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Կարապետի բնակարանը: Ճաշասենյակ: Վերժինեն
 բազմոցին նստած հեկեկում է՝ խփելով ծնկներին:

ԹԱԳՈՒԸ – (Չայնը դրսից) Վերժիկ... Վերժիկ... Չե՞ս լսում,
 ա՛յ աղջիկ... Վերժինեն... (Մտնում է, տեսնելով լացող աղջկան
 փրղճկում է) Բա՞ն է պատահել:

ՎԵՐԺԻՆԵՆ – Հա՛...

ԹԱԳՈՒԸ – (Մտաառքով) Ի՞նչ, ասա, իմանամ:

ՎԵՐԺԻՆԵՆ – (Ուզում է խոսել՝ հեկեկոցը խանգարում է) Ո՞նց
 ասեմ, որ չեմ կա... կա... կարողանում...

ԹԱԳՈՒԸ – (Տեղավորվում է Վերժինեի կողքին ձայնակցելով
 նրան) Ասաված, էս ի՞նչ փորձանք եկավ մեր գլխին: (Վերժինեին)
 Ասա՛, վատանում եմ, ա՛յ...

ՎԵՐԺԻՆԵՆ – (Հեկեկոցով) Կ՛... Կ՛...

ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ կ... կ... Շուտ արա, սիրտս պայթում է:

ՎԵՐԺԻՆԵՆ – Կ՛... Կ՛...

ԹԱԳՈՒԸ – Կ... կ... Կարո՞ն, Կարապետը...

ՎԵՐԺԻՆԵՆ – Հա...

ԹԱԳՈՒԸ – (Ահաբեկված) Կարոն ի՞նչ...

ՎԵՐԺԻՆԵՆ – Ձ... զ... զանգահարեց...

ԹԱԳՈՒԸ – Նրա՞ հետ էիր խոսում... (Վերժինեն գլխով է
 անում) Ի՞նչ էր ասում: Ուշքս գնում է, շուտ արա... Ասա՛, հետո էլի
 լաց կլինես:

ՎԵՐԺԻՆԵՆ – Դե դու էլ լաց մի լինի, որ ես էլ լաց չլինեմ:

ԹԱԳՈՒԸ – Ես քո լաց լինելու վրա եմ լաց լինում:

ՎԵՐԺԻՆԵՆ – Ես էլ քո...

ԹԱԳՈՒԸ – Աչքերդ կցավան, դու լաց մի լինի, քո տեղը ես լաց
 եմ լինում:

ՎԵՐԺԻՆԵՆ – Իմ մերը լաց լինի, ես լաց չլինե՞մ...

ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ էր ասում:

ՎԵՐԺԻՆԵՆ – Ո՞վ...

ԹԱԳՈՒԸ – Կարոն, Կարապետը...

ՎԵՐԺԻՆԵՆ – Ասում էր՝ եթե գիշերը տուն չգամ, չանհանգստա-
 նաք, ինձ նստեցնում են:

ԹԱԳՈՒԸ – (Բարձրացնելով լացի ձայնը) Նրան ինչո՞ւ պիտի
 նստեցնեն:

ՎԵՐԺԻՆԵՆ – Ի՞նչ իմանամ...

ԹԱԳՈՒԸ – (Լքջանալով) Կարո՞ղ է՝ մտքին ուրիշ բան է եղել...
 Ասել է, որ գիշերը տուն չգա:

ՎԵՐԺԻՆԵ – Բա ո՞ր գնա, որ չգա:

ԹԱԳՈՒԸ – Տղամարդ չե՞ն... Դրանց քոքը կտրվի:

ՎԵՐԺԻՆԵ – Բա էլ ինչո՞ւ իզուր տեղը էսքան լաց եղա:

ԹԱԳՈՒԸ – Համբերիր, կիմանաս՝ հետո... Հիմա լաց մի լինի:

ՎԵՐԺԻՆԵ – Որ չեմ կարողանում զսպեմ, բա ի՞նչ անեմ:

ԹԱԳՈՒԸ – Լաց ես լինում, որ ե՞ս էլ լաց լինեմ:

ՎԵՐԺԻՆԵ – (Հանկարծակի բռնկումով) Չէ, չեմ հավատում...

Ինչո՞ւ էդ բանն ասացիր, այ մեր:

ԹԱԳՈՒԸ – Ասացի, որ լաց չլինես: Ես ընդհանրապես եմ ասում... Էդպիսի տղամարդ չկա, որ կնոջը չդավաճանի: Մեկինը իմացվում է, մեկինը չի իմացվում: Ես Կարոյի մասին չեմ ասում... Հո խմա՞ծ չէր...

ՎԵՐԺԻՆԵ – Չէ, չէ, նա երբ է եղպես խմում...

Մտնում է Գայուշը, ետևից՝ Լիպոն: Գայուշը փաթաթվում է մորն ու տատին՝ համբուրելով նրանց: Երեքով կողք-կողքի նրստած հեկեկում են:

ԼԻՊՈ – Հերթով լաց եղեք, այ ձեր հոր Աստծուն մատաղ:

ՎԵՐԺԻՆԵ – Կարոն զանգահարեց, ասաց՝ եթե գիշերը չգամ, չանհանգստանաք, ինձ նստեցնում են:

ԼԻՊՈ – Է՛, հա, մեր տուն էլ է զանգահարել, դրա համար ենք Գայուշի հետ վեր կացել, եկել: Բայց իմացեք՝ հաստա՞տ նստեցնում են, հետո ձեզ կոտորեք: Մինչև գիշեր դեռ ահազին ժամանակ կա: Գայուշ, դու սուս...

ԳԱՅՈՒՇ – Ինչո՞ւ ես ինձ ասում, իրենց չես ասում:

ԼԻՊՈ – Իմ կինը դու ես, քեզ եմ ասում:

ԹԱԳՈՒԸ – Նրան էլ մի ասա... Գայուշս թող լացի, հանգըստանա:

ԳԱՅՈՒՇ – Հորս նստեցնում են, չլացե՞մ:

ԼԻՊՈ – Չէ, ասում եմ...

ԹԱԳՈՒԸ – Մի ասա՝ չէ՛... Մի լաց լինել է մնացել, դա՞ էլ եք արգելում:

ԼԻՊՈ – Իմ աներոջը ես ձեզնից պակաս՞ եմ սիրում, որ լաց չեմ լինում: Ի՞նչ գիտի, որ նստեցնում են, կարող է՝ չեն նստեցնում:

ԹԱԳՈՒԸ – Բայց ի՞նչ է արել, է, ի՞նչ է արել, որ նստեցնեն:

ԼԻՊՈ – Հենց էդ է, էլի... Ես էլ եմ մնացել զարմացած:

Մտնում է Գերասիմը:

ԳԵՐԱՍԻՄ – (Խառնված, հևալով) Ժողովուրդ, ի՞նչ է պատահել: Ո՞ր է, Կարապետն ո՞ր է, խաս հարևանս ո՞ր է... Դրսում

մարդիկ կանգնել, ձեր լուսամտուի կողմն են մայում: Լիպո, իրենք չեն ասում, դու ասա...

ԹԱԳՈՒԸ – Գիտի՞, որ ասի...

ԼԻՊՈ – Աներս զանգահարել է, ասել՝ եթե գիշերը չգամ, չանհանգստանաք, ինձ մտեցնում են:

ԳԵՐԱՍԻՄ – Բա հիմա ժամը քանի՞սն է, որ անհանգստանում են: Դե թող չգա, հետո... Շենքում խելքը գլխին մի մարդ կա, նրան էլ բռնեն, մտեցնե՞ն... Չեմ հավատում...

ԼԻՊՈ – Ո՞վ է հավատում որ... ես էլ չեմ հավատում...

ԹԱԳՈՒԸ – Հավատալու բա՞ն է, որ հավատաք:

ԳԵՐԱՍԻՄ – Ինչի՞ համար են մտեցնում:

ԼԻՊՈ – Չի ասել:

ԳԵՐԱՍԻՄ – Համենայն դեպս, մի բան եղել է, որ զանգահարել է:

ԹԱԳՈՒԸ – Եթե եղած չլիներ, ինչն՞ի պիտի զանգահարեր:

ՎԵՐԺԻՆԵ – (Խփելով ծնկներին) Ա՛խ, Կարո, Կարո...

ԹԱԳՈՒԸ – Փեսա՛ս... Աստծո զառ փեսա՛ս... Ես կզնամ, գիտեմ, թե դրանց ինչ կանեն...

ԳԱՅՈՒԸ – Հորս կարոտել եմ...

ՎԵՐԺԻՆԵ – Մի անգամ զանգահարել ես, մի անգամ էլ զանգահարիր, որ ձայնդ լսեմ, ինչ կլինի...

Մտնում է Կարապետը:

Կանայք թափվում են վրան համբուրելով չորս կողմից:

ԿԱՐԱՊԵՏ – Թողեք՝ էս մարդկանց էլ բարևեն:

ԳԵՐԱՍԻՄ – Տեսա՞ք, բա որ ասում էի...

ՎԵՐԺԻՆԵ – Փառքդ շատ, Աստված...

ԹԱԳՈՒԸ – Ո՞ւմ փեսային բռնեն, ի՞նչ... Գլխներից ձե՞ն են քաշել...

ԼԻՊՈ – Ասում էի, չէ՞, որ իզուր եք ձեզ կոտորում:

ԳԱՅՈՒԸ – Հայրիկ, բռնեցին, էլի բաց թողեցի՞ն:

ԳԵՐԱՍԻՄ – Եթե բռնեին, ինչն՞ի պիտի բաց թողնեին:

ՎԵՐԺԻՆԵ – Բա որ չէին մտեցնելու, ինչն՞ի էիր զանգահարում, ասում՝ մտեցնում են:

ԿԱՐԱՊԵՏ – Հիմա էլ եմ ասում: (Շոգազրպանից հանում է իրեն տրված դուլարները նետելով սեղանին):

ԹԱԳՈՒՀԻ – (Հափշտակված, ծափ զարկելով) Էս ի՞նչ է...

ՎԵՐԺԻՆԵ – Դուլա՞ր...

ԿԱՐԱՊԵՏ – Հա, դուլար...

ԳԱՅՈՒԹ – Իսկական...
ԿԱՐԱՊԵՏ – Չե՞ս տեսնում, որ հարցնում ես... Չէ, անհսկա-
 կան...
ԼԻՊՈ – Դուլար է, էլի, դուլարն էլ ի՞նչ տեսակ է լինում:
ԳԵՐԱՍԻՄ – Դուլար է, բա ինչ է...
ԹԱԳՈՒԹ – (Վերցնում է հարյուր դուլարանոցներից մեկը, շո-
 շափելով) Ի՞նչ էլ լավ դուլարներ են... (Հաշվում է):
ՎԵՐԺԻՆԵ – (Շոշափելով դուլարներից մեկը) Ոնց որ թե ձեռք
 դիպած չլինի, չէ՞...
ԹԱԳՈՒԹ – Հա, իսկի չի դիպել...
ԳԱՅՈՒԹ – (Շոշափելով) Լրիվ նոր հարյուրանոցներ են:
ԼԻՊՈ – (Շոշափելով) Ա՛յ, փող...
ԳԵՐԱՍԻՄ – (Շոշափելով) Մաքուր դուլար... Ա՛յ, ի՞նչ եմ
 ասել... Ձեռք ես տալիս, զգում ես, էլի, որ գտարյուն դուլար է:
 Հետաքրքիր է, մարդ իմանա՝ դրանք էս ի՞նչ թղթի վրա են տպում, որ
 աշխարհն առել են: Մենք էդ թղթից չունե՞նք:
ԼԻՊՈ – Որտեղի՞ց... Եթե ունենայինք, մենք էլ կտպեինք, էլի...
ԳԵՐԱՍԻՄ – Մրա եղածն ի՞նչ է, որ չունենք: Թուղթ չի՞:
ԼԻՊՈ – Չէ՛, ամեն թուղթ թուղթ չի... Թուղթ կա՝ թուղթ է, թուղթ
 էլ կա՝ դուլար է:
ԳԵՐԱՍԻՄ – Հարցը մեմակ թուղթը չի, տպելու ձևն էլ պիտի
 իմանաս, բա ո՞նց...
ՎԵՐԺԻՆԵ – (Թագուշին) Հավաքիր, մարդ կմտնի:
ԹԱԳՈՒԹ – (Հավաքելով դուլարները, դնելով խալաթի գրպա-
 նը) Մտնում են՝ մտնեն, գողությո՞ւն ենք արել, մեր դուլարները չե՞ն...
ՎԵՐԺԻՆԵ – Ինչքա՞ն էր...
ԹԱԳՈՒԹ – Հինգ հարյուր... Հինգ հատ հարյուրանոց է:
ՎԵՐԺԻՆԵ – (Կարապետին) Հինգ հարյո՞ւր էր:
ԿԱՐԱՊԵՏ – Հաշվե՞լ եմ, որ իմանամ...
ՎԵՐԺԻՆԵ – Բա քեզ որտեղի՞ց էդ դուլարները...
ԿԱՐԱՊԵՏ – Վաղիմակիչը տվեց:
ԹԱԳՈՒԹ – Վաղիմակիչն ո՞վ է:
ԿԱՐԱՊԵՏ – Վաղիմակիչը...
ՎԵՐԺԻՆԵ – Ի՞նչ Վաղիմակիչ...
ԿԱՐԱՊԵՏ – Գլխավոր տնօրենը, մեր բաժնետիրականի տե-
 րը, Հայրույնյանը, Հայրոն... Իրեն Տանձ Հայրոն էլ են ասում...
ԹԱԳՈՒԹ – Դե միանգամից ասա՝ Տանձ Հայրոն, էլ ինչո՞ւ ես
 ասում Վաղիմակիչ...

ԿԱՐԱՊԵՏ – Հոր ամուրը, որ Վաղինակ է, բա ի՞նչ ասեմ:
 ԳԵՐԱՍԻՄ – Էդ աշխատող մարդկանց ինչո՞ւ են մակամուն-
 ներ դնում, նրանց մեղքը ո՞րն է:
 ՎԵՐԺԻՆԵ – Հիմա դրա ժամանակն է... **(Կարապետին)** Նա
 ինչո՞ւ պիտի քեզ էդքան փող տար:
 ԿԱՐԱՊԵՏ – Տվեց, որ գնամ իր տեղը նստեմ:
 ՎԵՐԺԻՆԵ – Որտե՞ղ նստես:
 ԿԱՐԱՊԵՏ – Բանտ նստեմ:
 ԳԱՅՈՒԸ – **(Դողով)** Բա՞նտ...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա, բանտ...
 ՎԵՐԺԻՆԵ – Բա՞նտ...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա...
 ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ բանտ...
 ԿԱՐԱՊԵՏ – Բանտ, էլի, բանտ, սովորական բանտ...
 ԳԵՐԱՍԻՄ – Բա՞նտ...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա, ասում եմ...
 ԼԻՊՈ – Բա՞նտ...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա, վա՛յ...
 ԳԵՐԱՍԻՄ – **(Մյուսներին)** Լսեցի՞ք...
 ԹԱԳՈՒԸ – Խելքը թոցրե՞լ է էդ մարդը:
 ՎԵՐԺԻՆԵ – Դու ինչո՞ւ պիտի գնաս նրա տեղը բանտ նստես:
 ԹԱԳՈՒԸ – Նա չգիտի՞ իր գլխի գալիքը, որ քեզ էդպիսի բան է
 ասում: Երկու մատս, այ, էսպես կտանեմ, կմտցնեմ էդ Տանձ Հայրոյի
 աչքը:
 ԳԱՅՈՒԸ – Բայց ի՞նչ ստոր մարդ է... Լիպարիտ, լսեցի՞ր...
 ԼԻՊՈ – Հա՛, լսեցի... Ախր չեք թողնում, որ խոսի մարդը, բան
 իմանանք:
 ԳԵՐԱՍԻՄ – Թողեք մարդը խոսի, իմանանք ինչն ինչոց է:
 ԹԱԳՈՒԸ – Հիմա ասել էի, ա՛յ...
 ՎԵՐԺԻՆԵ – Դրան տես... Ուրիշ մարդ չգտավ, եկավ իմ ա-
 մուսնու վրա կանգնեց...
 ԳԱՅՈՒԸ – Լիպարիտ, լսեցի՞ր...
 ԼԻՊՈ – Ասացի՛ հա, քանի՞ անգամ ասեմ...
 ԳԵՐԱՍԻՄ – Կարապետ, ասա՛...
 ԿԱՐԱՊԵՏ – Թողնում ե՞ք, որ ասեմ...
 ԳԵՐԱՍԻՄ – Լռությու՛ն, մի բռայե...
 ԹԱԳՈՒԸ – Ըհը՛, թող ասի... **(Ափով ամուր փակում է բերանը):**
 ՎԵՐԺԻՆԵ – Էլ չեմ խոսում, ասա...

ԿԱՐԱՊԵՏ – Ապրանք են անցկացրել...
 ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ ապրանք... (Նույն ձևով փակում է քերանը):
 ԿԱՐԱՊԵՏ – Ես չգիտեմ, ինքը գիտի: Օրգաններից եկել են,
 մեզ մոտ են հայտնաբերել:
 ԼԻՊՈ – Որտեղի՞ց են անցկացրել...
 ԿԱՐԱՊԵՏ – Ասում եմ՝ ինքը գիտի, ես չգիտեմ, ինձ չի ասում:
 ԹԱԳՈՒԸ – Բայց ես մեռա՞ծ եմ, որ թողնեմ, փեսաս զնա,
 նստի նրա տեղը:
 ՎԵՐԺԻՆԵ – Ո՞վ կթողնի որ..
 ԳԱՅՈՒԸ – Ո՞նց էլ չի ամաչում... Լիպարիտ, լսեցի՞ր...
 ԳԵՐԱՍԻՄ – (Կարապետին) Հետո՞, հետո՞... Չի վերջացրել,
 թողեք խոսի:
 ԹԱԳՈՒԸ – Ասա...
 ՎԵՐԺԻՆԵ – Հետո՞...
 ԿԱՐԱՊԵՏ – (Ցնցվելով) Դ՞ն՞ումն էր...
 ԳԵՐԱՍԻՄ – Չէ...
 ԿԱՐԱՊԵՏ – Բա ինչո՞ւ ինձ թվաց...
 ԼԻՊՈ – Ես էլ ձայն լսեցի...
 ԹԱԳՈՒԸ – Մենք չլսեցինք, դու ո՞նց լսեցիր:
 ԼԻՊՈ – Եսիմ...
 ՎԵՐԺԻՆԵ – Գայուշ, զնա, դուռը ներսից բանալիով փակիր:
 ԹԱԳՈՒԸ – Ինչի՞ համար, է՛...
 ԿԱՐԱՊԵՏ – Չէ՛, չէ՛, թող փակի:
 ԳԱՅՈՒԸ – Կփակեմ, բայց դուռը չէր: (Գնում է, բանալիով կող-
 պում դուռը):
 ՎԵՐԺԻՆԵ – Փակեցի՞ր...
 ԳԱՅՈՒԸ – Հա...
 ԹԱԳՈՒԸ – Ումի՞ց ես վախենում, ի՞նչ ես արել, է, ի՞նչ ես արել,
 որ նստեցնեն:
 ԿԱՐԱՊԵՏ – Ոչ մի բան... Եթե արած լինեի, ես իմ ոտքով կզը-
 նայի, կնստեի:
 ԳԵՐԱՍԻՄ – Ինքը պիտի նստի, ինքը...
 ԿԱՐԱՊԵՏ – Եթե զանգը տան, չբացեք:
 ՎԵՐԺԻՆԵ – Չէ, ինչո՞ւ պիտի բացենք:
 ԹԱԳՈՒԸ – (Կարապետին) Որ ջարդեն էլ՝ բացող չկա, դու
 հանգիստ եղիր:
 ԳԵՐԱՍԻՄ – Ախր չթողեցիք՝ մարդն ասի մինչև վերջ:
 ԹԱԳՈՒԸ – Թող ասի, ըհը... (Ափով փակում է քերանը):

ՎԵՐԺԻՆԵ – Ասա..
 ԳԵՐԱՍԻՄ – Ասա՛, Կարապետ...
 ԿԱՐԱՊԵՏ – Կանչեց, ասաց էս գործով մերոնցից մեկնումեկը
 անպայման պիտի գնա մատի, ուրիշ տարբերակ չկա:
 ԹԱԳՈՒԸ – Ո՞վ ասաց... (Բացում, նորից ափով փակում է
 քերանը):
 ԿԱՐԱՊԵՏ – Հայրոն, Հայրումյանը... Գլխավոր տնօրենը...
 ՎԵՐԺԻՆԵ – Մեկնումեկը մատում է՝ թող մատի, դու ինչո՞ւ պի-
 տի մատես:
 ԹԱԳՈՒԸ – Ինչո՞ւ պիտի մատես:
 ԳԵՐԱՍԻՄ – Թագուշ, համբերիր:
 ԹԱԳՈՒԸ – Համբերում եմ:
 ԿԱՐԱՊԵՏ – Ասաց՝ ինչքան զցում-բռնում եմ, տեսնում եմ, որ
 քեզանից հարմար մարդ չունեմ, որ գնա իմ տեղը մատի:
 ԳԵՐԱՍԻՄ – Լիպո, ականջդ բեր, ասեմ... (Փսփսում է ական-
 ջին):
 ԹԱԳՈՒԸ – Բան ես ասում բարձր ասա, մենք էլ իմանանք...
 Ականջին ասելս ո՞րն է...
 ԳԵՐԱՍԻՄ – Եթե բարձր ասելու բան լիներ, կասեի... ներողու-
 քյուն:
 ՎԵՐԺԻՆԵ – (Կարապետին) Բա որ ինքն ասաց, դու ի՞նչ աս-
 ացիր:
 ԿԱՐԱՊԵՏ – Ասացի՛ ախր ես ի՞նչ եմ արել, որ գնամ մատեմ:
 ՎԵՐԺԻՆԵ – Բա ինքն ի՞նչ ասաց:
 ԿԱՐԱՊԵՏ – Ասաց՝ դու չես արել, ես եմ արել, ի՞նչ տարբերու-
 քյուն...
 ՎԵՐԺԻՆԵ – Դե որ տարբերություն չկա, թող ինքը գնա մատի,
 ինչո՞ւ է քեզ ուղարկում:
 ԹԱԳՈՒԸ – Ինչո՞ւ է քեզ ուղարկում... թող ինքը գնա, մատի:
 ԿԱՐԱՊԵՏ – Ասում է՝ եթե ես գնամ մատեմ, բա էս ժողովրդին
 ո՞վ կպահի, երեք հարյուր մարդ է աշխատում ձեռքիս տակ: Ազգի
 մասին պիտի մտածե՞նք, թե՞ չէ...
 ԹԱԳՈՒԸ – Թող ազգի անուն չտան դրանք: Դո՞ւք եք ազգի
 մասին մտածում: Դուք ազգի մասին չեք մտածում, դուք ձե՛ր, ձե՛ր
 մասին եք մտածում: Դրանք էդ ո՞նց, է, էդ ո՞նց դարձան մեր տան
 տերերը: (Բռնկվելով) Չէ, ես գնում եմ... Գայուշ, բանալին որտե՞ղ է,
 բացիր դուռը:
 ՎԵՐԺԻՆԵ – Ո՞ւր ես գնում:

ԹԱԳՈՒԸ – Գնում եմ, դրա երեսին երկու խոսք ասեմ ու գամ:
 ԿԱՐԱՊԵՏ – Խնդրում եմ ոչ մեկդ իմ գործերին չխառնվեք:
 ԹԱԳՈՒԸ – Չխառնվե՞նք, որ իմանա անտեր ե՞ս: Չէ՛, գնում եմ...

ԳԵՐԱՍԻՄ – Թագուշիկ, միտք չունի...
 ԹԱԳՈՒԸ – Ես գիտեմ՝ ունի, թե չունի... Եթե դուք չեք գնում, ես էլ չգնա՞մ... Բա ո՞վ գնա... Էս տանը մի տղամարդ չկա՞...
 ԳԱՅՈՒԸ – Տատ, մի բռայե սպասիր:
 ԹԱԳՈՒԸ – Ո՞ւմ սպասեմ, ինչի՞ համար սպասեմ...
 ԼԻՊՈ – Թագուհի Գրիգորևնա, միտք չունի...
 ՎԵՐԺԻՆԵ – Քեզ ի՞նչ պատահեց...
 ԹԱԳՈՒԸ – Ես գիտեմ՝ ինչ եմ անում: Ճանապարհս չփակեք, ասում եմ:
 ԿԱՐԱՊԵՏ – Դու ինձ հո խայտառակ չե՞ս անելու, այ կին:
 ԹԱԳՈՒԸ – Չէ՛, իրեն եմ խայտառակ անելու... Գայուշ, բացիր դուռը:
 ՎԵՐԺԻՆԵ – Հանգստացիր: Ո՛ւֆ...
 ԳԵՐԱՍԻՄ – Թագուշիկ, մեզ վերավորեցիր, լավ արեցիր, մի՛ գնա:
 ԼԻՊՈ – Չթողնեք...
 ԿԱՐԱՊԵՏ – Թագուհի Գրիգորևնա...
 ՎԵՐԺԻՆԵ – Քեզ հետ եմ, այ մեր...
 ԹԱԳՈՒԸ – (Անդրդվելի) Ես ձեզ ասում եմ՝ բացեք դուռը: Գայուշ, բացիր դուռը...
 ԿԱՐԱՊԵՏ – Չբացե՛ք... Նստիր տեղդ, ո՞վ կթողնի, որ գնաս:
 ԳԵՐԱՍԻՄ – Թագուշիկ, հանգստացիր, հետո...
 ԹԱԳՈՒԸ – Իմ գլխի տակ փափուկ բարձ չդնեք, գնում եմ...
 ԿԱՐԱՊԵՏ – Ես էլ ասում եմ՝ չես գնալու...
 ԹԱԳՈՒԸ – Չեզ համար եմ գնում, ինձ համար չեմ գնում:
 ՎԵՐԺԻՆԵ – Եթե պետք լինի, կգնաս:
 ԹԱԳՈՒԸ – Շուտ արեք, բացեք դուռը, ճանապարհս չփակեք: (Պաշարման մեջ, ձեռքը տնկած) Ես մեռած ե՞մ, որ փեսաս հինգ հարյուր դոլարով գնա, մստի քո տեղը: Բերանս որ բացեցի, էլ չեմ փակի, իմացիր...
 ԿԱՐԱՊԵՏ – Մենակ էդ հինգ հարյուրը չի, մինչև վերջ լսիր, հետո... Ասաց՝ մտածո՞ւ ամեն օրվա դիմաց էլ հարյուր դոլար կստանաս:
 ԹԱԳՈՒԸ – (Չինաթափ եղած) Հարյու՞ր...

ԿԱՐԱՊԵՏ – Հա...
 ԹԱԳՈՒՇ – Օրակա՞ն...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛:
 ԹԱԳՈՒՇ – Դուլա՞ր...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա...
 ՎԵՐԺԻՆԵՇ – Օրը՞...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛...
 ԼԻՊՈ – Դուլա՞ր...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա...
 ԳԵՐԱՍԻՄ – Մաքուր հարյո՞ւր...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛:
 ԳԵՐԱՍԻՄ – Պահ՞...
 ԳԱՅՈՒՇ – Հարյուր դուլա՞ր...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա...
 ԳԵՐԱՍԻՄ – Կտա՞...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛...
 ԹԱԳՈՒՇ – Օրը՞...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա՛...
 ՎԵՐԺԻՆԵՇ – Հարյո՞ւր...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛...
 ԳԱՅՈՒՇ – Էդ դուլարի՞ց...
 ԿԱՐԱՊԵՏ – Չէ՛, ուրիշ... Հարյուր տեսակի դուլար կա՞...
 ԳԵՐԱՍԻՄ – (Դեռևս լսածի տպավորության տակ) Բայց օրը
 հարյո՞ւր..
 ԿԱՐԱՊԵՏ – Հա, ասում եմ...
 ԳԵՐԱՍԻՄ – Ինչքան մստե՞ս...
 ԿԱՐԱՊԵՏ – Այո՛...
 ԳԵՐԱՍԻՄ – Կտա՞...
 ԿԱՐԱՊԵՏ – Հա, որ մստեմ, կտա:
 ՎԵՐԺԻՆԵՇ – Ո՞վ մստի...
 ԹԱԳՈՒՇ – (Կարապետին) Էդ էր պակաս, որ մստես... Բա ես
 որտե՞ղ եմ, որ դու մստես: Երե՛կ ինձ...
 ԳԱՅՈՒՇ – Ինչո՞ւ մստի...
 ԳԵՐԱՍԻՄ – Ի՞նչ է արել, որ մստի: Ջրույց ենք անում հենց
 էնպես...
 ԼԻՊՈ – (Որ երբեմն-երբեմն զրպանից արևածաղկի սերմ է
 հանում՝ ծածուկ չրթելով) Գերասն օրինակի համար է ասում...

ԳԵՐԱՍԻՄ – Բա էլ ինչի՞... Խոսքի օրինակ, եթե ասենք մարդը տասը տարի նստի, նրա ասելով, ուրեմն տասը տարի իրար հետևից օրական հարյուր դոլար շրխկացնելով պիտի ստանա՞: Պահ, էդ քանի՞ հարյուր հազար դոլար կանի...

ԼԻՊՈ – Ասեմ...

ՎԵՐԺԻՆԵ – Ինչի՞ համար ասես...

ԹԱԳՈՒԸ – Ասես, որ ի՞նչ, է՛, ի՞նչ...

ԿԱՐԱՊԵՏ – Դուք էլ գործ գտաք...

ԳԱՅՈՒԸ – (Լիպարիտին) Կամ էլ ո՞նց կիմանաս, որ ասես:

ԼԻՊՈ – Հաշվով մի բան չի՞... Մի տարին հարյուր հազար դոլար, երկու տարին՝ երկու հարյուր հազար, երեք տարին՝ երեք հարյուր հազար, չորս տարին՝ չորս հարյուր հազար...

ԳԵՐԱՍԻՄ – Չէ՛, չէ՛, սխալ ես հաշվում... Ինչո՞ւ ես պակասեցնում: Տարին քանի՞ օր ունի...

ԼԻՊՈ – Նայած տարի...

ԳԵՐԱՍԻՄ – Տարին երեք հարյուր վաթսուհինգ օր չունի՞... Եթե ճիշտ հաշվես, այսինքն՝ օր չկորցնես, չէ՞, պահ, միլիոնը տվեց, անցավ...

ԿԱՐԱՊԵՏ – Վերջացրեք, ես չեմ ուզում դառնալ միլիոնատեր:

ԳԵՐԱՍԻՄ – Ուզես էլ՝ չես դառնա...

ԼԻՊՈ – Մարդ կա՞, որ չուզի...

ԹԱԳՈՒԸ – Էդ որ հաշվեցիք, դոլարով հաշվեցիք, թե՞ դրամով...

ԳԵՐԱՍԻՄ – Թագուշիկ, լավ էլի, դրամով հիմա բա՞ն են հաշվում... Դոլարով, ի՞նչ դրամ...

ԹԱԳՈՒԸ – Բա չե՞ք հարցնում՝ նրան էդքան փող որտեղի՞ց, է՛, որտեղի՞ց, որ տասը տարի օրական հարյուր դոլար տա:

ՎԵՐԺԻՆԵ – (Հեզմանքով) Լավ էլ կտա...

ԳԱՅՈՒԸ – Իրեն էլ թվում է, թե պիտի հավատան:

ԿԱՐԱՊԵՏ – Հիմա դա մեզ վերաբերո՞ւմ է:

ԳԵՐԱՍԻՄ – Կարոյի հետ իսկի կապ չունի, իմ արև:

ԿԱՐԱՊԵՏ – Նա ինձ հո չի ասել՝ տասը տարի պիտի գնաս, նստես, որ դուք էլ խոսում եք առանց իմանալու:

ՎԵՐԺԻՆԵ – Բա ինչքա՞ն է ասել:

ԳԱՅՈՒԸ – Մամ, ախր ո՞նց կիմանար, որ ասեր:

ԹԱԳՈՒԸ – (Մատ քափահարելով) Թող դա բերանս բացել չտա, թե չէ, որ բացեցի...

ԿԱՐԱՊԵՏ – Ասաց՝ երկու շաբաթ կնստես, դուրս կգաս:

ՎԵՐԺԻՆԵ – (Լարված) Մի՛ օր, մի՛ օր չես մատի...

ԹԱԳՈՒԸ – Մի ժամ էլ չես մատի, կես ժամ էլ չես մատի: Բա ես որտե՞ղ եմ, որ դու մտես:

ԳԱՅՈՒԸ – Սրիկա... Բայց ի՞նչ կեղտոտ մարդ է... Լիպարիտ, լսեցի՞ր...

ԳԵՐԱՍԻՄ – Եթե երկու շաբաթ է ասել...

ԹԱԳՈՒԸ – (Ընդհատելով) Իր ասելով է... Նա ո՞վ է, է՛, ո՞վ է, որ ասի...

ԳԵՐԱՍԻՄ – Դա առանձին... Բայց, եթե երկու շաբաթ է ասել, կտա: Ինչքա՞ն է անում, որ չտա...

ԼԻՊՈ – Մի օրը՝ հարյուր դոլար, երկու օրը՝ երկու հարյուր, երեք օրը՝ երեք հարյուր, չորս օրը՝ չորս հարյուր, հինգ օրը՝ հինգ հարյուր...

ԿԱՐԱՊԵՏ – (Նախահարձակ լինելով) Էդ ինչի՞ համար է հաշվում: Ուրեմն պիտի գնամ, մտած՞մ, այ մարդ:

ԳԵՐԱՍԻՄ – Կարապետ, եղա՞վ... Ամոթ չի՞... Ինչո՞ւ ես քեզ վրա վերցնում...

ԿԱՐԱՊԵՏ – Բա ինչո՞ւ է հաշվում:

ԳԵՐԱՍԻՄ – Հենց էնպես... Հաշվելու մեջ ի՞նչ կա...

ՎԵՐԺԻՆԵ – Դե որ չկա, թող չհաշվի: (Խառնակ վիճակ):

ԼԻՊՈ – (Նեղսրտած) Չեմ հաշվի:

ԹԱԳՈՒԸ – Իբր հաշվում եք, որ ի՞նչ... (Լիպարիտին) Էդ սենուշկադ հեռու տար ինձնից, զգվում եմ:

ԿԱՐԱՊԵՏ – Դո՞ւմն էր...

ԳԱՅՈՒԸ – Չէ...

ԿԱՐԱՊԵՏ – Վիրավորվում եմ, ա՛յ...

ԳԵՐԱՍԻՄ – Իզո՞ր... Առանց քեզ ես մի օր կմնա՞մ ես շենքում... Իմ ապրելն էլ ո՞ւմ է պետք... Առանց էդ էլ իզուր ժամանակ եմ կորցնում:

ԹԱԳՈՒԸ – Լիպո, էլ չհաշվես, լսեցի՞ր...

ԼԻՊՈ – Չեք ուզում չեմ հաշվի... (Գերասիմին, հարևանցի) Հազար երկու հարյուր...

ԹԱԳՈՒԸ – Ես քեզ ասում եմ չհաշվես, հիմա էլ մտքիդ մեջ ես հաշվո՞ւմ, այ տղա:

ԼԻՊՈ – Չեմ հաշվում, արդեն հաշվել, պրծել եմ:

ԳԵՐԱՍԻՄ – Հաշվել ես, բայց սխալ ես հաշվել:

ԼԻՊՈ – Երկու շաբաթը օրական հարյուր դոլարով հազար երկու հարյուր դոլար չի՞ անում:

ԳԵՐԱՍԻՄ – Շաբաթը քանի՞ օր ունի:
 ԼԻՊՈ – Վեց...
 ԳԵՐԱՍԻՄ – Ո՞նց... Էդ երբվանի՞ց... Կիրակի օրերը չե՞ս
 հաշվում...
 ԼԻՊՈ – Ներողություն, յոթ...
 ԹԱԳՈՒԸ – Մի հաշվե՛լ էլ իմանա...
 ԳԵՐԱՍԻՄ – (Լիպարիտին) Եթե շաբաթը յոթ օր ունի, երկու
 շաբաթը քանի՞ օր կունենա, Լիպո:
 ԼԻՊՈ – Ճիշտ է, սխալվեցի, տասնչորս...
 ԳԵՐԱՍԻՄ – Դե հիմա հաշվիր...
 ԿԱՐԱՊԵՏ – Էլի՞... Վերջացրեք, ամոք է...
 ԳԵՐԱՍԻՄ – Հիմա... (Լիպարիտին) Երկու շաբաթը օրական
 հարյուր դոլարով քանի՞ դոլար կանի:
 ԼԻՊՈ – Հազար չորս հարյուր դոլար...
 ԳԵՐԱՍԻՄ – Տեսա՞ր... Բա էն երկու հարյուր դոլարը ո՞ւմ
 հաշվին գնար-կորչեր օրը ցերեկով: Դու էդ ո՞նց ես դպրոցն ավար-
 տել, այ իմ սիրուն բալա:
 ԿԱՐԱՊԵՏ – Դո՞ւմն էր...
 ԳԱՅՈՒԸ – Չէ, վա՛յ... Հայրիկ, բայց վախենո՞ւմ ես նստելուց:
 Ասա, էի...
 ԹԱԳՈՒԸ – Ինչո՞ւ պիտի վախենա, տղամարդ է, հո կին չի, որ
 վախենա: Փեսայիս ո՞ւմ տեղն եք դրել:
 ԼԻՊՈ – Եթե պետք լինի, ես կգնամ կնստեմ, որ աներս չնստի:
 ԳԵՐԱՍԻՄ – Մենակ մարդ եմ, օրինակ, ինձ համար ի՞նչ տար-
 բերություն՝ իմ տանն եմ նստած, թե էնտեղ: Էդ էր պակաս, որ խաս
 հարևանս գնա, նստի: Էս շենքում ես էլ ո՞վ ունեմ իրենից հարազատ:
 ԹԱԳՈՒԸ – Իզուր տեղը ձեզ առաջ մի գցեք: Հանգի՛ստ, հան-
 գի՛ստ... Նա իրե՛ն գիտի, ինձ չգիտի՛: Թող բերանս բացել չտա, թե չէ
 որ բացեցի...
 ՎԵՐԺԻՆԵ – (Կարապետին) Ես քեզ վրա զարմանում եմ, ա՛յ,
 ազնիվ խոսք... Դու գիտեիր, որ չես գնալու նստես, էդ հինգ հարյուր
 դոլարն ինչի՞ համար վերցրիր դրանից: Դա չեմ հասկանում:
 ԿԱՐԱՊԵՏ – Չէի վերցնում, զոռով խցկեց գրպանս:
 Չգիտե՞ս... Ով ինձ լավություն է անում, նրա ձեռքն ընկնում եմ
 կրակը:
 ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ է արել, է՛, ի՞նչ է արել...
 ԿԱՐԱՊԵՏ – Էդքան շուտ մոռացա՞ք...

ԳԵՐԱՍԻՄ – Ես հին մարդ եմ, դու ինձ լսիր. պիտի թույլ չտաս, որ ամեն մարդ քեզ լավություն անի:

ՎԵՐԺԻՆԵ – Դրա՞ համար է արել, որ գնաս, նստես: Հանեիր, շարտերի երեսին: Ուրեմն էդ հինգ հարյուր դոլարի համար գնաս, նրստե՞ս:

ԿԱՐԱՊԵՏ – Եթե չգնամ, գործից կհանի:

ԹԱԳՈՒԸ – Էդ էր պակաս...

ՎԵՐԺԻՆԵ – Հանում է՝ թող հանի:

ԿԱՐԱՊԵՏ – Բա ո՞նց կապրենք:

ՎԵՐԺԻՆԵ – Ուրիշները ո՞նց են ապրում:

ԿԱՐԱՊԵՏ – Ապրո՞ւմ են որ...

ԳԵՐԱՍԻՄ – Ներողություն, մոռացա մի բան հարցնեմ. օրական հարյուրն էլ է էդ հինգ հարյուր դոլարի մեջ մտնում:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ... Ասաց՝ դա օրական քո ստանալիք հարյուրի հետ կապ չունի, էդ հինգ հարյուրին հետո էլի կավելացնեն, եթե պետք լինի:

ԹԱԳՈՒԸ – Հետո ե՞րբ...

ԳԵՐԱՍԻՄ – Ի՞նչ է նշանակում՝ հետո... Ա՛յ, քեզ բան...

ԼԻՊՈ – Ավելացնող էր՝ թող տալու ժամանակ ավելացներ:

ԹԱԳՈՒԸ – Չասա՞ց ինչքան կավելացնի:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ՛:

ԹԱԳՈՒԸ – Չհարցրի՞ր...

ԿԱՐԱՊԵՏ – Ես ինչո՞ւ պիտի հարցնեի:

ՎԵՐԺԻՆԵ – Եթե գիտեր չի նստելու, էլ ինչո՞ւ համար հարցներ:

ԳԱՅՈՒԸ – Նրա ավելացնելը մեզ պետք չի, չենք ուզում:

ԹԱԳՈՒԸ – Էդպես չի կարգն, է՛... Հարցը մեր ուզել-չուզելը չի... Եթե գիտեր, որ հինգ հարյուրը քիչ է, պիտի ավելացներ:

ԼԻՊՈ – Չէ, էլ չի ավելացնի:

ԳԵՐԱՍԻՄ – Իհարկե, չի ավելացնի:

ԹԱԳՈՒԸ – Թող փորձի չավելացնի, հետո ես դրա հետ կխոսեմ: Թող բերանս բացել չտա, թե չէ, որ բացեցի...

ԿԱՐԱՊԵՏ – Եթե չեմ նստելու, էլ ինչո՞ւ ավելացնի, չեմ հասկանում:

ԹԱԳՈՒԸ – Կապ չունի... Դա մարդ չի... Ուրեմն ես կթողնեմ, որ դու էդ հինգ հարյուր դոլարով գնաս, նստե՞ս՝ լեղապարկդ հանած: (Չեռքը թափահարելով) Հա՛յ, հա՛յ...

ՎԵՐԺԻՆԵ – Դու ի՞նչ ես խոսում... Թեկուզ միլիոն տա... Ինձ իմ ամուսինն է պետք: **(Կարապետին)** Երեսին ասեիր՝ ես քո տեղը չեմ նստի, քո տեղը դո՛ւ, դո՛ւ պիտի նստես, քո հինգ հարյուր դոլարը քեզ լինի, անամոք շուն:

ԿԱՐԱՊԵՏ – Ասաց՝ ընդամենը մի օր ես նստելու, մնացած օրերին բանտի հիվանդանոցում պառկելու ես:

ԹԱԳՈՒԸ – Առողջ մարդուն հիմա էլ հիվանդանոց է գցո՞ւմ: **(Վրեժխնդիր)** Լա՛վ... Ես քո ճաշը էնպես եփեմ, որ ուտես չկշտանաս: Բերանս բացել ես տալիս, հա՞...

ՎԵՐԺԻՆԵ – Ասեիր՝ իմ լեղապարկը հանել եմ, եթե էդքան լավ տեղ է, դու գնա պառկի:

ԳԵՐԱՍԻՄ – **(Կարապետին)** Եթե մի օր էիր նստելու, ուրեմն ընդամենը հարյուր դոլար պիտի ստանայիր եղած-չեղածը:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, ասում է՝ բանտի հիվանդանոցն էլ է բանտ հաշվվում:

ԳԵՐԱՍԻՄ – Դա ուրիշ հարց...

ԿԱՐԱՊԵՏ – Էդ երկուսի մեջ տարբերություն չկա:

ԳԵՐԱՍԻՄ – Դո՞ւմն էր...

ԳԱՅՈՒԸ – Չէ...

ԿԱՐԱՊԵՏ – Դուռը չէ՞ր...

ԼԻՊՈ – Չէ՛, վերևից էր...

ԹԱԳՈՒԸ – **(Հայացքը գցելով առաստաղին)** Հարյուր անգամ ասել եմ՝ այ կին, դրսից որ գալիս ես, կոշիկներդ փոխիր: Անշնորհք...

(Չայն տալով) Մազդալինա, կոշիկներդ փոխիր: Խո՞ւլ ես... Էնպես խլանաս, Մազդալինա, որ ես իմանամ:

ԿԱՐԱՊԵՏ – **(Դեպի դուռը)** Չայն լսեցի: Մի քիչ ցածր խոսեք, որ դռան հետևից չլսեն:

ԹԱԳՈՒԸ – Լսում եմ՝ թող լսեն:

ԿԱՐԱՊԵՏ – Խնդրում եմ, Թագուհի Գրիգորենա...

ԹԱԳՈՒԸ – Իզուր տեղը մի խնդրիր... Ումի՞ց եմ վախենում, է՛... Իմ տան մեջ ինչո՞ւ պիտի ցածր խոսեմ: **(Բարձրացնելով ձայնը)** Կուզեմ՝ կխոսեմ, կուզեմ՝ չեմ խոսի... Կուզեմ՝ կերգեմ... **(Երգում է)** Կուզեմ՝ չեմ երգի... Կուզեմ՝ կպարեմ... **(Պարում է)** Կուզեմ՝ չեմ պարի...

ԿԱՐԱՊԵՏ – Իմ սրտից արյուն է գնում, դու քեզ համար համե՞րգ ես տալիս, այ կին... Երանի քո տիրոջը...

ԹԱԳՈՒԸ – Կեսն էլ քո տիրոջը... Չանգահարել, ասել ես՝ եթե զիջերը չգամ, չանհանգստանաք... Եկել ես, ուրախանում եմք, վա՞տ

ենք անում: Կարող ես վաղվանից գործի էլ չգնալ, էդ հինգ հարյուր դոլարը մեզ բավական է առայժմ:

ԿԱՐԱՊԵՏ – (Տարակուսանքով) Ի՞նչ է խոսում... Տուր, էդ հինգ հարյուր դոլարը տուր:

ԹԱԳՈՒԸ – Կտամ, շտապ չի, համբերիր... Տվածն էլ հետ չեն ուզում:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞նց թե... Ի՞նչ էլ ասում...

ԹԱԳՈՒԸ – Ինչ որ լսեցիր...

ԿԱՐԱՊԵՏ – Դո՞ւմն էր...

ԹԱԳՈՒԸ – Հա, դումն էր...

ՎԵՐԺԻՆԵ – Լավ էլի, այ մեր, ինչո՞ւ ես մարդուս վախեցնում:

ԳԵՐԱՍԻՄ – Բայց իսկապես դումն է...

ԼԻՊՈ – Գրագ կգամ, դուռը չի, վերևից է...

ԹԱԳՈՒԸ – (Հայացքը առաստաղին) Մազդալինա... Կոշիկներդ չփոխեցի՞ր, այ կին... Որ բարձրացել եմ վերև, գիտես, չէ՞, քեզ ինչ կանես... Սկիբոզդ էլի բռնե՞ց... Էնպես բռնի, Մազդալինա, որ ես իմանամ...

(Հեռախոսի զանգ):

ԿԱՐԱՊԵՏ – (Վեր է քոչում) Հեռախոսն է... Չվերցնեք, ինձ են ուզում:

ՎԵՐԺԻՆԵ – Ի՞նչ գիտես...

ԿԱՐԱՊԵՏ – Գիտեմ... Ուզում են իմանան՝ տանն եմ, թե տանը չեմ:

ԹԱԳՈՒԸ – Վերժիկ, վերցրու, ասա՝ տանը չի:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, չէ, թող չվերցնի... Հենց ասի՝ տանը չի, կիմանան, որ տանն եմ, կգան իմ ետևից: Ես գնամ:

ՎԵՐԺԻՆԵ – Էս ժամին ո՞ւր գնաս: Ոչ մի տեղ էլ չես գնա:

ԹԱԳՈՒԸ – Դու քո տունը թողնես, ո՞ւր գնաս:

ԳԵՐԱՍԻՄ – Կարապետ, չգիտենք ով է, կարող է ուրիշ մարդ է:

ԳԱՅՈՒԸ – Կարող է ուրիշ մարդ է:

ԿԱՐԱՊԵՏ – Ուրիշ մարդը եղբան չէր զանգահարի: Իրենք են... Գայուշ, բաց արա դուռը, շուտ արա՝ քանի չեն եկել:

ԳԱՅՈՒԸ – Չեմ բացի:

ՎԵՐԺԻՆԵ – Չբացես:

ԿԱՐԱՊԵՏ – Գայուշ, արագացրո՛ւ...

ԹԱԳՈՒԸ – Թող գան, եթե եղբան ռիսկ ունեն... (Մարտի պատրաստ) Եկե՛ք, էլի, եկե՛ք...

ԿԱՐԱՊԵՏ – Գայուշ... Դու հո իմ քշնամին չե՞ս...
 ԳԱՅՈՒՑ – Չեմ բացի:
 ԿԱՐԱՊԵՏ – (Չեռքից խլելով բանալին) Դու չես բացի, ես
 կբացեմ: (Բանալիով բացում է դուռը՝ իրեն նետելով դուրս):
 ՎԵՐԺԻՆԵ – (Թաշկինակը տանելով աչքերին) Կարո, դու ինձ
 քաղում ես...
 ԳԵՐԱՍԻՄ – Կարապետ...
 ԳԱՅՈՒՑ – Հայրի՛կ...
 ԼԻՊՈ – Գնա՞ց...
 (Իրենց դուրս են գցում նրա ետևից):
 ԹԱԳՈՒՑ – (Վերցնելով լսափողը, հարձակողական) Ալո՛...
 Լսում եմ... Լահմաջոռանո՞ց... Ի՞նչ լահմաջոռանոց... Իմացեք ուր եք
 զանգահարում, հետո զանգահարեք... Հիմարը դու ես, ապուշ...
 Լիրբն էլ ես դու, խոզն էլ ես դու, շունն էլ ես դու, հավն էլ ես դու, օձն էլ
 ես դու... (Արագ դնելով լսափողը՝ դուրս է վազում նրանց ետևից) Կա-
 րապետ, Կարո՛ ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Ր Ո Ր Դ

*Հայրո չայրումյանի նույն աշխատասենյակը փակ բաժ-
նետիրական ընկրությունում:*

Բջջային հեռախոսի զանգ:

**ՀԱՅՐՈ – (Որ նստած է գրասենյանի առջև, միացնում է հեռա-
խոսը՝ սեղմելով ականջին) Ասա՛... Ընդունարանում երկու համբալ
հասել էին իրար վրա, եկա, քշեցի: Լսել են, որ մերոնցից մեկնումեկը
օրական հարյուր դոլարով պիտի գնա, նստի մի երկու շաբաթով,
ամեն մեկն ուզում էր, որ ինքը նստի: Դոլարի անունն են լսել, պարզ
չի՞... Չէ, ես օֆիսում չեմ եղել: Ոստիկանություն են զանգահարել, մի
դունդուկն էլ եկել է, ընդունարանում նստած արձանագրություն է
կազմում իր արևին: Ասա՛... Գնացի, եկա... Ահագին սոված ժողո-
վուրդ էր հավաքվել: Լիքը... Չեռի հետ մի երկու խոսք ասացի, ծափ
սվին, էլ չմնացի, թողեցի եկա էս գործով... Բոլորին էլ բաժանել են...
Ցուցակով... Կասեմ... (Անջատում է):**

*Մտնում է ոստիկանը: Պատվի է առնում դռան տակ
կանգնած սպասելով հրահանգի:*

ՈՍՏԻԿԱՆ – Լսում եմ...

ՀԱՅՐՈ – Արի, տեսնեմ՝ ինչ ես ասում...

**ՈՍՏԻԿԱՆ – (Մոտենալով) Արձանագրությունը... (Խոնարհա-
բար դնում է սեղանին ետ քաշվելով):**

ՀԱՅԲՈ – (Վերցնում, պատռում է՝ առանց աչքի անցկացնելու)
 Պետք չի... (Մանրատում է՝ լցնելով սեղանի տակ դրված զամբյուղը):
 ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի է առնում, նույն պատրաստակամու-
 քյամբ) Լսում եմ...
 ՀԱՅԲՈ – Ձեռքդ իջեցրու: Ի՞նչ ես լսում...
 ՈՍՏԻԿԱՆ – Ինչ որ կասեք...
 ՀԱՅԲՈ – Ոչ մի բան էլ չեմ ասում, ազատ ես, գնա:
 ՈՍՏԻԿԱՆ – Իսկ կարելի՞ է...
 ՀԱՅԲՈ – Ի՞նչը...
 ՈՍՏԻԿԱՆ – Որ ես ինձ դնեմ ձեր տրամադրության տակ:
 (Պատվի է առնում):
 ՀԱՅԲՈ – Ձեռքդ իջեցրու: Դնես, որ ի՞նչ անեմ...
 ՈՍՏԻԿԱՆ – Եթե կարելի է, ես գնամ նստեմ...
 ՀԱՅԲՈ – Ա՛յ տղա, ա՛յ տղա, դու հո խելքդ հացի հետ չե՞ս
 կերել: Էն փայլքոտներին քշեցի, հիմա էլ դո՞ւ:
 ՈՍՏԻԿԱՆ – Չէ՛, բայց եթե...
 ՀԱՅԲՈ – (Ձարմանքով) Ի՞նչ է խոսում...
 ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի է առնում) Լսում եմ...
 ՀԱՅԲՈ – Ձեռքդ իջեցրու: Դու եկել ես էստեղ, որ կարգ ու
 կանոն պաշտպանե՞ս, թե՞ քո անձնական հարցերը լուծես:
 ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի է առնում) Ճիշտ եղպես...
 ՀԱՅԲՈ – Ձեռքդ իջեցրու:
 ՈՍՏԻԿԱՆ – Իջեցրի...
 ՀԱՅԲՈ – Կանգնել երեսիս էդ ի՞նչ ես ասում... Չե՞ս ամաչում:
 ՈՍՏԻԿԱՆ – Ամաչում եմ... Բայց եթե... (Կարճ դադարից հե-
 տո) Հաստիքս կրճատում եմ:
 ՀԱՅԲՈ – Կրճատողի՛ն ասա, եկել ես ի՞նձ ես ասում:
 ՈՍՏԻԿԱՆ – Կինս հղի է, խնդրում եմ ընդառաջեք...
 ՀԱՅԲՈ – Ի՞նչ կապ ունի... Ես մեղք ունե՞մ, որ քո կինը հղի է:
 ՈՍՏԻԿԱՆ – Չէ՛, բայց...
 ՀԱՅԲՈ – Ի՞նչ «բայց»... Գետիմն էլ չես մտնում, եկել ինձ էդ
 ինչ ես ասում... Ոստիկանը կգնա, կնստի՞, որ դու ուզում ես նստես,
 արա... Համազգեստիցդ ամաչիր:
 ՈՍՏԻԿԱՆ – Ստիպված եմ, դրա համար եմ ասում... Եթե հղի
 է, ասեմ՝ հղի չի՞...
 ՀԱՅԲՈ – Չէիր կարողանալու երեխա պահես, էդ անմեղ կնոջը
 չհղիացնեիր, սրիկա:

ՈՍՏԻԿԱՆ – Էն ժամանակ կրճատման տակ չեմ եղել, հիմա եմ կրճատման տակ գցել, Վաղինակիչ:

ՀԱՅԲՈ – Մոտ արի, ասեմ...

ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի է առնում) Լսում եմ...

ՀԱՅԲՈ – Չեռքդ իջեցրու (Դուրս է հանում գրասեղանի դռակից՝ խոթելով ոստիկանի գրպանը) Ա՛ն... Դե գնա, թող կինդ բարով-խեղով ծննդաբերի: Ես իմ աչքալուսանքը տվի: Գնա...

ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի առնելով) Լսում եմ...

ՀԱՅԲՈ – Չեռքդ իջեցրու:

ՈՍՏԻԿԱՆ – (Իջեցնում է) Շնորհակալություն: Բայց եթե...

ՀԱՅԲՈ – (Դեմքին առանց նայելու, ձեռքի անփույթ շարժումով) Դուրս արի, դուրս արի... Տարածքում էլ չերևաս: Պագոններդ կպոկեմ վրայիցդ, իմացիր: Հետո ինձանից էլ չնեղանաս: Գնա...

ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի առնելով) Լսում եմ... (Կտրուկ շրջվում է դուրս գնալով սենյակից):

Վազեվազ ներս է խուժում մինի հագած, վառվռուն աղջնակ Լալան թառելով Հայրոյի գոգին, ձեռքին մի թերթ:

ԼԱԼԱ – (Կարդում է անսովոր արագությամբ, գրեթե մի շնչով) Խոյ... Երկուշաբթի ձեր հմյաքն անդիմադրելի կլինի: Երեքշաբթի դուք ամբողջովին լցված եք ստեղծագործական էներգիայով: Չորեքշաբթին բարեհաջող է ուղևորությունների և դատական հարցերի համար: Հինգշաբթին հակասական օր է: Ուրբաթ փոփոխություններ են սպասվում ստեղծագործական ճակատում: Շաբաթ կրկին հնարավորություն կըստեղծվի գործարքի մեջ մտնել, որից դուք մի անգամ արդեն հրաժարվել եք: Կիրակի ձեզանից պահանջվում է հավատալ և սպասել լավ փոփոխությունների:

ՀԱՅԲՈ – (Որ այդ ընթացքում կարծես անհաղորդ նայում էր աղջնակին) Է՛, հետո՞...

ԼԱԼԱ – (Տարակուսանքով) Ուղիղ մեկն է...

ՀԱՅԲՈ – Էլի թող մեկը լինի...

ԼԱԼԱ – Վաղինակիչ, չե՞ք ասել, որ ամեն օր ուղիղ ժամը մեկին գամ, մատեն ձեր ծնկներին ու աստղագուշակը կարդամ:

ՀԱՅԲՈ – Հա, ասել եմ, բայց քո կարդացածից դու բան հասկացա՞ր: Վրա ես տալիս մի գլուխ: Ո՞վ է ընկել ետևիցդ: Հանգիստ կարդա:

ԼԱԼԱ – Շատ լավ... Տույ... Երկուշաբթի գործերն անչափ հաջող կլինեն: Երեքշաբթի փորձեք խուսափել հակամարտություններից: Չորեքշաբթի ուշադիր և զգույշ եղեք փողոցում: Հինգշաբթի հա-

կասական և կոնֆլիկտային օր կլինի: Ուրբաթ համարձակորեն կարող եք իրականացնել նոր ծրագրեր և գաղափարներ: Շաբաթ ձեզ սպասում է հետաքրքիր և հազեցած օր: Կիրակի զվարճացեք և հանգստացեք՝ անուշադրության մատնելով առօրյա հոգսերը:

(Բջջայինի զանգ: Լալան ընդհատում է կարդալը):

ՀԱՅԲՈ – (Հեռախոսը սեղմած ականջին) Շնորհակալ եմ... ուրիշ բան չկա... Գնալու եմ... Էսօր... Տանելու եմ տամ, որ ինքն էլ իրենց տա... Երկու տեղ... Կասեմ... (Անջատում է բջջայինը: Հնչում է դրված հեռախոսներից մեկի զանգը: Վերցնում է լսափողը) Լսում եմ... Չէ... Հա... Երևի... Ասա... (Լալան խոսակցության ընթացքում փաղաքշանքով խաղում է Հայրոյի դեմքի, մազերի հետ, այտը հայում նրա այտին) Անպայման... Չէ՛, եղ գնով չէ... Կէժանացնեն... Ուզեն, թե չուզեն... Ի՞նչ... Անհնար բան չկա... Մի ժամից... (Դնում է լսափողը: Հնչում է բջջայինի զանգը) Ասա՛... Լսում եմ... Չէ՛, դեռ ժամանակ կա... Ես քեզ կասեմ... Նույն տեղը... Չորը... Յոթին... Ասա... Եղավ... (Անջատում է):

ԼԱԼԱ – Կարդա՞մ, Վաղինակիչ...

ՀԱՅԲՈ – Չէ՛, մնացածն էլ պահիր, հետո կկարդաս: **(Համբուրում է Լալային, իջեցնելով գոգից) Գնա: (Լալան դուրս է գնում: Բջջային հեռախոսի զանգ: Վերցնում է, հայում ականջին) Լավ, էի... Ինչի՞ համար ես էդքան անհանգստանում: Չկա... «Մերսեդեսի» մեջ էլ եմ նայել, «Ջիպիս» մեջ էլ եմ նայել, «Ջիպիս» մեջ էլ չկա լիֆդ... Վախենում ես՝ գտնե՞մ, տանեն մարդուդ տա՞մ... Դե որ՝ չէ, բա էլ ինչի՞ համար ես խառնվել իրար.. Մեկի տեղը հարյուր հատ կանեն... Վերջացրո՛ւ... Յոթին... Նույն տեղը... Չորը... (Անջատում է):**

Մտնում է Լիպոն շրթունքներից մաքրելով արևածաղկի սերմի հետքերը:

ԼԻՊՈ – Բարև ձեզ...

ՀԱՅԲՈ – Բարև...

ԼԻՊՈ – Անհարմար եմ զգում, որ ասեմ...

ՀԱՅԲՈ – Անհարմար ես զգում՝ մի ասա...

ԼԻՊՈ – Իմ անունը Լիպո է:

ՀԱՅԲՈ – Թող Լիպո լինի, ի՞նչ է խանգարում...

ԼԻՊՈ – Ես Կարապետի փեսան եմ:

ՀԱՅԲՈ – Ո՞ր Կարապետի...

ԼԻՊՈ – Կարոյի... Չեր աշխատակից...

ՀԱՅԲՈ – Իմացա... Փեսա, ասա...

ԼԻՊՈ – Բարև ձեզ...
 ՀԱՅՐՈ – Բարևել եմք, ասա...
 ԼԻՊՈ – Ես խնդրում եմ, եթե հնարավոր է՝ ես գնամ նստեմ
 աներոջս տեղը:
 ՀԱՅՐՈ – Դուրս արի...
 ԼԻՊՈ – Լուրջ եմ ասում: Ազնիվ խոսք...
 ՀԱՅՐՈ – Ես էլ եմ լուրջ ասում, դուրս արի...
 ԼԻՊՈ – Դուրս գամ, ո՞ր գնամ:
 ՀԱՅՐՈ – Ուր ուզում ես գնա, դա էլ է ինձ վերաբերո՞ւմ:
 ԼԻՊՈ – Բայց ես գնալու տեղ չունեմ:
 ՀԱՅՐՈ – Է՛, ունեցիր...
 ԼԻՊՈ – Ո՞նց ունենամ, որ չեմ աշխատում:
 ՀԱՅՐՈ – Է՛, աշխատիր...
 ԼԻՊՈ – Ո՞նց աշխատեմ, որ աշխատելու տեղ չկա:
 ՀԱՅՐՈ – Է՛, թող լինի...
 ԼԻՊՈ – Ամոթ էլ է ասելը՝ կարմիր դիպլոմով եմ ավարտել ոչ
 բարով:
 ՀԱՅՐՈ – Գույճը փոխիր...
 ԼԻՊՈ – Ինչի՞ գույճը...
 ՀԱՅՐՈ – Դիպլոմիդ... Եկել ես, էդ բաներն ինձ ասում ես, որ
 ի՞նչ...
 ԼԻՊՈ – Բա ո՞ւմ ասեմ:
 ՀԱՅՐՈ – Ում ուզում ես՝ ասա... Ի՛...
 ԼԻՊՈ – Ամեն Աստծու օր առավոտ շուտ դուրս եմ գալիս տնից,
 չգիտեմ, թե ուր գնամ, գժվում եմ: Փողոցներն ընկած մինչև մութն
 ընկնելը ման եմ գալիս սենուշկա չրթելով: Իրիկունը հոգնած գալիս
 եմ տուն, քնում, առավոտ շուտ վեր կենում, գնում, իրիկունն էլի գալիս
 տուն:
 ՀԱՅՐՈ – Էլ գալիս ես տուն, որ ի՞նչ անես:
 ԼԻՊՈ – Իբր որ դրսում մնացի, ի՞նչ պիտի անեմ: Եկել եմ՝
 խնդրեմ, որ ես գնամ, նստեմ աներոջս տեղը:
 ՀԱՅՐՈ – Լավ ես արել... Փեսան էլ ո՞նց է լինում...
 ԼԻՊՈ – Ես փողոցներն ընկած պարապ-սարապ թափառեմ,
 լեղապարկը հանած աներս գնա, նստի՞, բա իմ խիղճն ինձ չի
 տանջի՞:
 ՀԱՅՐՈ – Դու աներոջդ մասին չես մտածում, դու քո մասին ես
 մտածում, փեսա:
 ԼԻՊՈ – Ինչո՞վ երդվեմ, որ հավատաք:

ՀԱՅՐՈՒՆ – Ոչ մի բանով...

ԼԻՊՈՒ – Աներս աշխատում է, ես չեմ աշխատում: Եթե ես էլ իմ մասին չմտածեմ, ո՞վ մտածի:

ՀԱՅՐՈՒՆ – Դե, դա ասա, էլ ինչի՞ համար ես ուրիշ բան ասում:

ԼԻՊՈՒ – Բայց ճիշտ չե՞մ ասում, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈՒՆ – Որ ճիշտ ես ասում՝ ի՞նչ... Դու էստեղի աշխատող չես: Անունն ի՞նչ դնեմ, որ գնաս, նստես:

ԼԻՊՈՒ – Ես էստեղի աշխատող չեմ, աներս է էստեղի աշխատող, Վաղինակիչ: Թողեք մի շաբաթ ինքը գնա նստի, գոնե մի շաբաթ էլ ես նստեմ, ի՞նչ կլինի... Կինս էլ չի աշխատում:

ՀԱՅՐՈՒՆ – Լեղապարկը համած աներդ գիտի՞, որ փեսան ինձ մոտ է եկել էդ գործով:

ԼԻՊՈՒ – Չէ, չգիտի:

ՀԱՅՐՈՒՆ – Դե երբ որ կիմանա, էն ժամանակ կգաս: Գնա՛...

ԼԻՊՈՒ – Ո՞ր գնամ:

ՀԱՅՐՈՒՆ – Գնա սեմուշկադ չրթի, գնա՛...

ԼԻՊՈՒ – Գոնե մի շաբաթով էլ հնարավոր չի՞, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈՒՆ – Չէ՛, ասում եմ... Ազատ ես, գնա՛:

ԼԻՊՈՒ – Գնամ, բայց ո՞ր գնամ:

(Դուրս է գնում արևածաղկի սերմ չրթելով):

(Բջջային հեռախոսի զանգ):

ՀԱՅՐՈՒՆ – Ասա՛... Չէ՛... Հա՛... Կգամ տուն, տանը կխոսենք: Էդ ծրարի-պրարի բաները թող... Հինգ ծառայող ունես տանդ, դրա մասին էլ ե՞ս մտածեմ: Ուշ... Երբ որ գամ... Ես չգիտեմ, թե երբ կգամ: Չեք ուզում տանը մնաք, երեխաներին վերցրու, գնացեք քաղաքից դուրս: Չէ... Հա... **(Անջատում է):**

Մտնում է Գերասիմը՝ հանելով հնամաշ շյապան:

ԳԵՐԱՍԻՄ – Կարելի՞ է...

ՀԱՅՐՈՒՆ – Ասե՛ք...

ԳԵՐԱՍԻՄ – Բարև ձեզ...

ՀԱՅՐՈՒՆ – Բարև... Արա՛գ, ես էդքան ժամանակ չունեմ:

ԳԵՐԱՍԻՄ – Ինչպե՞ս եք:

ՀԱՅՐՈՒՆ – Ասենք թե՛ լավ եմ, հետո՞...

ԳԵՐԱՍԻՄ – Հարևանիս գործով եմ եկել:

ՀԱՅՐՈՒՆ – Ի՞նչ հարևան...

ԳԵՐԱՍԻՄ – Կարոն, ձեր աշխատողն է, Կարապետը...

ՀԱՅՐՈՒՆ – Իմացա...

ԳԵՐԱՍԻՄ – Հատուկ եկել եմ՝ խնդրեմ, որ նա չգնա նստի:
Առողջությունը էնքան էլ լավ չի...
ՀԱՅՐՈ – Բժիշկ եք...
ԳԵՐԱՍԻՄ – Չէ՛, հաշվապահ եմ՝ թոշակի անցած: Հենց մութն
ընկնում է, գնում եմ հարևանների տները, որ լույս չվառեն:
ՀԱՅՐՈ – Լավ ես անում: Ասելիքդ ասա...
ԳԵՐԱՍԻՄ – Ուզում եմ՝ ես գնամ նստեմ հարևանիս տեղը:
ՀԱՅՐՈ – Դո՞ւ...
ԳԵՐԱՍԻՄ – Հա՛, եթե կարելի է...
ՀԱՅՐՈ – Էդքան շա՞տ ես սիրում հարևանիդ:
ԳԵՐԱՍԻՄ – Շա՛տ... Եթե ինքը չլինի, տունս էժան գնով կծա-
խեմ, կթողնեմ, կգնամ շենքից: Երկու անգամ արդեն ծախել եմ տար-
քեր տեղեր, որ եկել եմ էդ շենքը: Եթե նստեց, չի դիմանա, ազնիվ
խոսք:
ՀԱՅՐՈ – Էդ ո՞նց է, որ դու կդիմանաս, նա չի դիմանա:
ԳԵՐԱՍԻՄ – Լեղապարկը հանած է:
ՀԱՅՐՈ – Քոնը հանած չի՞:
ԳԵՐԱՍԻՄ – Ես էդքան փող ունե՞մ, որ հանել տամ:
ՀԱՅՐՈ – Ես կտամ:
ԳԵՐԱՍԻՄ – Բայց ես լեղապարկից բողոք չունեմ, ճիշտն
ասած: Ես խոց ունեմ՝ տասներկուամատնյա աղիքի:
ՀԱՅՐՈ – Չէ՛, խոցի համար չեմ տա:
ԳԵՐԱՍԻՄ – Չնայած լեղապարկը հանած է, ինքը լավ
մարդ է:
ՀԱՅՐՈ – Ինքը լավ մարդ է, բայց դու վատ մարդ ես:
ԳԵՐԱՍԻՄ – Ներողություն, բայց ես ի՞նչ եմ արել, որ ինձ վատ
մարդ եք համարում:
ՀԱՅՐՈ – **(Բռնկվելով)** Բավական չեղա՞վ դուք էդ մարդու լեղա-
պարկն իմ աչքը մտցնեք: Իմ էլ կույր աղիքն է հանած, հետո՞...
ԳԵՐԱՍԻՄ – Շատ ներողություն, բայց լեղապարկը կույր ա-
ղիք չի, ճիշտ էնպես, ինչպես կույր աղիքը լեղապարկ չի: Լեղա-
պարկի հետ կատակ չեմ անում:
ՀԱՅՐՈ – Եթե հարևանիդ էդքան սիրում ես, կգնա՞ս նրա տեղը
կնստես առանց փողի:
ԳԵՐԱՍԻՄ – Կնստեմ, սիրով... Ներեցեք, բայց ինչո՞ւ առանց
փողի, եթե օրական հարյուր դոլար պիտի տայիք իրեն:
ՀԱՅՐՈ – Նրան տայիս եմ, քեզ չեմ տայիս, կգնա՞ս...
ԳԵՐԱՍԻՄ – Հարյուր մի տվեք, պակաս տվեք...

ՀԱՅՐՈՒՆ – Պակաս էլ չեմ տալիս, կզմա՞ս...
 ԳԵՐԱՍԻՄ – Իհարկե, կզմամ, բայց հիսուն դուար էլ չտա՞ք
 օրը, Վաղինակիչ:
 ՀԱՅՐՈՒՆ – Ասացի չէ, չեմ տալիս, կզմա՞ս...
 ԳԵՐԱՍԻՄ – Եթե համաձայն չեք հիսուն դուարով, ես առձեռն
 քսանհինգ դուարով էլ կնստեմ:
 ՀԱՅՐՈՒՆ – Տասնհինգով չե՞ս նստի:
 ԳԵՐԱՍԻՄ – Տասնհինգո՞վ... Մտածելու բան է, ի՞նչ ասեմ...
 ՀԱՅՐՈՒՆ – Իսկ տասո՞վ...
 ԳԵՐԱՍԻՄ – Առայժմ ես տասնհինգի շուրջ եմ մտածում:
 ՀԱՅՐՈՒՆ – Տասնհինգը դիր մի կողմ, տասը դուարով կնստե՞ս:
 ԳԵՐԱՍԻՄ – Տասո՞վ...
 ՀԱՅՐՈՒՆ – Հա՛, տասը դուարով...
 ԳԵՐԱՍԻՄ – Մնացած օրերին ինձ հիվանդանոց եմ տեղափո-
 խելու, հիվանդանոցում պիտի մնա՞մ:
 ՀԱՅՐՈՒՆ – Չէ, բանտում ես մնալու:
 ԳԵՐԱՍԻՄ – Կարո՞ն ինձ էդպես է ասել...
 ՀԱՅՐՈՒՆ – Կարոյի ասելով չի, Կարոն սխալ է ասել: Հինգ դո-
 ւարով կնստե՞ս, դա ասա:
 ԳԵՐԱՍԻՄ – Բայց ինչո՞ւ միանգամից էդքան իջաք, Վաղի-
 նակիչ:
 ՀԱՅՐՈՒՆ – Էլ չեմ իջնի, վերջին գինն է, կնստե՞ս...
 ԳԵՐԱՍԻՄ – Կնստեմ... Բայց եթե հնարավոր է՝ մի քիչ երկար
 նստեմ...
 ՀԱՅՐՈՒՆ – Կղիմանա՞ս...
 ԳԵՐԱՍԻՄ – Էս ամեն ինչին որ դիմանում եմ, դրան ինչո՞ւ
 պիտի չդիմանամ:
 ՀԱՅՐՈՒՆ – Ես ինչ գիտեմ, թոշակառու մարդ ես...
 ԳԵՐԱՍԻՄ – Ինձ ինչքա՞ն է մնացել ապրելու, որ երկու շաբաթ
 էլ չդիմանամ:
 ՀԱՅՐՈՒՆ – Դու ասա, ես չգիտեմ...
 ԳԵՐԱՍԻՄ – Դիմացա՛ դիմացա, չդիմացա՛ չդիմացա... Ա-
 նանձնապես ի՞նչ ունեմ կորցնելու, որ չդիմանամ:
 ՀԱՅՐՈՒՆ – Չէ, ասա, էլի, իմանամ՝ կղիմանա՞ս...
 ԳԵՐԱՍԻՄ – Կղիմանամ...
 ՀԱՅՐՈՒՆ – (Պռոթկալով) Ախր դու ո՞վ ես, դու էս գործի հետ ի՞նչ
 կապ ունես, որ գնաս, նստես, դիմանաս կամ չդիմանաս: Ես չեմ
 դիմանում ձեզ, ես... Քիչ է մնում վեր կենամ, գնամ էդ մարդու տեղը

ես նստեմ, որ ձեզանից պրծնեմ: Դու քո հարևանին չես սիրում, դու քեզ ես սիրում:

ԳԵՐԱՍԻՄ – Ինչո՞ւ եք եղպիսի բան ասում... Եղա՞վ...

ՀԱՅՐՈ – Էդ մարդուց քաքուն եկել եք էստեղ՝ ձեզ համար գո՞րծ եք դասավորում: Դու պիտի քո տունը էժան գնով չծախես, գնաս էդ շենքից, ինքը պիտի իր տունը ծախի գնա, որ քեզ մնան հարևան չունենա:

ԳԵՐԱՍԻՄ – Եղա՞վ... Հարևանից լավ բա՞ն...

ՀԱՅՐՈ – Գնա, գնա քոշակդ ստացիր:

ԳԵՐԱՍԻՄ – Էս ամսվանը ստացել եմ:

ՀԱՅՐՈ – Գնա մյուս ամսվանն էլ ստացիր:

ԳԵՐԱՍԻՄ – (Դնելով շյապան) Ցտեսություն...

ՀԱՅՐՈ – Ցտեսություն էլ, դեռ մի բան էլ ավել... (Գերասիմը դուրս է գնում: Բջջայինի զանգ) Ասա... Չէ... Հա... Հարյուր... Խոսել եմ... Երեկ... Չէ... Հա... Կզամ, կասեմ... Հեռախոսով խոսելու բան չի... (Անջատում է):

Մտնում է Թազուշը՝ ներկայանալի, նոր հազուստ-կապուստով:

ԹԱԳՈՒԸ – Բարև ձեզ...

ՀԱՅՐՈ – Բարև...

ԹԱԳՈՒԸ – Ներողություն, դո՞ւք եք Տանձ Հայրոն:

ՀԱՅՐՈ – (Պայթելով) Դո՞ւրս արի, դուրս արի՛, շո՛ւտ... Էս կնիկն ո՞վ է... Քեզ ո՞վ ներս բողեց... (Բռնում է թևից՝ մտանցնելով դռանը՝ Թազուշի դիմադրությանը հանդիպելով):

ԹԱԳՈՒԸ – Թո՛ղ, ձեռքս թո՛ղ... Մարմինս կապտացրիր... Վա՛յ, մամա ջան, մարմինս կապտացրեց... Ես դատական բժշկի կզնամ... Թո՛ղ, թո՛ղ... (Ետ է գալիս):

ՀԱՅՐՈ – Դուրս արի, դուրս արի՛ ուր ուզում ես գնա... Դու հո շա՞ն չես, այ կնիկ:

ԹԱԳՈՒԸ – Ես կնիկ չեմ, ես կին եմ: Բերանս բացել չտաս, թե չէ որ բացեցի...

ՀԱՅՐՈ – Որ բացեցիր՝ ի՞նչ...

ԹԱԳՈՒԸ – Էլ չեմ փակի...

ՀԱՅՐՈ – Մտել ես էստեղ, էդ ո՞նց ես ինձ հետ խոսում, այ կնիկ... Էդ ո՞վ էդքան ռիսկ ունի, որ կանգնի, երեսիս ինձ Տանձ Հայրո ասի, որ դու ասում ես: Դուրս արի, դուրս արի, ինձ համբերությունից չհանես:

ԹԱԳՈՒԾ – Ես չեմ քեզ համբերությունից հանում, դու ես ինձ համբերությունից հանում: Ինձ էդպես են ասել, ես էլ ձեզ էդպես դիմեցի: Ներողություն, չգիտեի... Կրակն ընկա՞... Չի կարելի, չէ՞...

ՀԱՅՐՈ – Ի՞նչը չի կարելի... Էս ո՞վ է, այ մարդ...

ԹԱԳՈՒԾ – Ես եմ, ով եմ... Եթե չեք ուզում ես ձեզ Տանձ Հայրոս ասեմ, Տանձ Հայրոս չեմ ասի:

ՀԱՅՐՈ – Էլի ասում է, հետո ասում է՝ չեմ ասի... Էս ո՞նց եմ դիմանում, այ մարդ, ես էլ եմ ինձ վրա զարմանում:

ԹԱԳՈՒԾ – Վաղինակիչ, ուզում ե՞ք՝ Վաղինակիչ ասեմ, Վաղինակիչ կասեմ, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈ – Ոչ մի բան էլ մի ասա, դուրս արի...

ԹԱԳՈՒԾ – Դուրս չեմ գա: Ես գործով եմ եկել ձեզ մոտ:

ՀԱՅՐՈ – Հիմա շա՞տ պիտի երկարացնի ես կնիկը:

ԹԱԳՈՒԾ – **(Ոտքը գետին է խփում)** Ես կնիկ չեմ, ես կին եմ: Ես ձեզ Տանձ Հայրոս ասացի, վիրավորվեցիք, դուք ինձ կնիկ եք ասում՝ չվիրավորվե՞մ:

ՀԱՅՐՈ – **(Կատաղությունը հազիվ զսպած, ատամները կրճրտացնելով)** Էլի՞...

ԹԱԳՈՒԾ – Իսկ դուք ինձ չե՞ք վիրավորում, Վաղինակիչ, որ կնիկ եք ասում... Ես հո ձեզ չեմ ասում, որ դուք ինձ Թագուհի Գրիգորենա ասեք, բայց կնիկ էլ մի ասեք:

ՀԱՅՐՈ – **(Մոլտալով)** Ի՞նչ...

ԹԱԳՈՒԾ – Թագուհի Գրիգորենա...

ՀԱՅՐՈ – Դուրս արի, դուրս արի, Թագուհի Գուրգենովնա, թե չէ հենց հիմա ոստիկանություն եմ զանգահարում:

ԹԱԳՈՒԾ – Դուրս չեմ գալիս, ես Գրիգորենա եմ, ես Գուրգենովնա չեմ, զանգահարիր: **(Աթոռ է առանձնացնում, մտում):**

ՀԱՅՐՈ – Հիմա կտեսնենք՝ դուրս կգաս, թե դուրս չես գա:

ԹԱԳՈՒԾ – **(Անդրդվելի)** Կտեսնենք...

ՀԱՅՐՈ – **(Վերցնում է հեռախոսներից մեկի լսափողը)** Այո... Ոստիկանություն, Վաղինակիչն է... Մի կնիկ է մտել աշխատասենյակս, դուրս չի գալիս: Մարդ ուղարկեք, թող գա, հանի սրան... Կնիկ... Ես շատ գիտե՞մ, թե ինչ կնիկ... Եկեք դուք իմացեք...

ԹԱԳՈՒԾ – **(Խոցված)** Կնիկ...

ՀԱՅՐՈ – **(Լսափողը դնելով)** Հա՛, հենց կնիկ...

ԹԱԳՈՒԾ – Դե լավ... Թող գան, հանեն, տեսնեմ էդ ոնց եմ հանում... Թող փորձեն, էլի, թող փորձեն, ա՛յ, էսպես մատով

դիպչեն... Մարմինս կապտացրիք, հիմա էլ ոստիկանությունն եք
զանգահարում:

ՀԱՅՐՈՒՆ – Հա՛, ոստիկանությունն եմ զանգահարում... Քանի չեն
եկել, ավելի լավ է՝ դու քո ոտքով դուրս գաս, սուսուփուս գնաս, թե չէ
հետո վատ կլինի, ա՛յ, ասում եմ:

ԹԱԳՈՒԾ – Թող վատ լինի... Ումի՞ց եմ վախենում, է՛, ումի՞ց
եմ վախենում... Շատ կուշանա՞ն... Ինձ համար վա՞տ կլինի, թե՞
իրենց... Բերանս բացել չտաս, թե չէ որ բացեցի...

ՀԱՅՐՈՒՆ – Էս ո՞վ է, այ մարդ... Գիշերվա երա՞զ է... Էս ո՞վ է...

ԹԱԳՈՒԾ – Դե թողեք, ասեմ՝ ով եմ: Կարապետի կնոջ մայրն
եմ, հիմա իմացա՞ք:

ՀԱՅՐՈՒՆ – Ո՞ր Կարապետի...

ԹԱԳՈՒԾ – Ձեր աշխատակից Կարոյի...

ՀԱՅՐՈՒՆ – Ի՛...

ԹԱԳՈՒԾ – (Կարծես հաղթանակած) Բա՛...

ՀԱՅՐՈՒՆ – Դե միանգամից ասա՛ Կարոյի գոքանչն եմ, կնոջ
մայրը ո՞րն է, գոքանչը մայր էլ է լինո՞ւմ...

ԹԱԳՈՒԾ – Եթե ես իմ աղջկա մայրն եմ, չասե՞մ... Չոքանչս
ո՞րն է... Կարապետն էլ իմ աղջկա ամուսինն է:

ՀԱՅՐՈՒՆ – (Ինքն իրեն, մտահոգ) Բա դու մե՞ղք չես, Կարո...

ԹԱԳՈՒԾ – Շատ ներողություն, ինչո՞ւ է մեղք:

ՀԱՅՐՈՒՆ – Որ քեզ նման գոքանչ ունի:

ԹԱԳՈՒԾ – Դե՛, դե՛, դե՛, բերանս որ բացեցի... Առանց ճանա-
չելու էղպիսի բա՞ն են ասում ինձ նման կնոջը, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈՒՆ – Ճանաչելն էլ ո՞նց է լինում, դու քեզ արդեն ճանաչել
ավիր, Թագուհի... Ինչովնա՞... Հորդ անունն ի՞նչ էր...

ԹԱԳՈՒԾ – Գրիգոր էր, ինչ էր...

ՀԱՅՐՈՒՆ – Թագուհի Գուրգենովնա...

ԹԱԳՈՒԾ – Ես Գուրգենովնա չեմ, ես Գրիգորենա եմ... Ո՛ւֆ...
Եթե փեսայիս հինգ հարյուր դոլարով թողնեմ գնա, մստի, էն ժամա-
նակ լավ կին կլինեմ, հա՞... Էդ չի լինի...

ՀԱՅՐՈՒՆ – Բա քանի՞ դոլարով ես ուզում, որ գնա մստի:

ԹԱԳՈՒԾ – Համենայն դեպս՝ ոչ հինգ հարյուրով...

ՀԱՅՐՈՒՆ – Ես էլ հարցնում եմ քեզ՝ բա ինչքանո՞վ...

ԹԱԳՈՒԾ – Դուք պիտի իմանաք, ես ասե՞մ...

ՀԱՅՐՈՒՆ – Ես գիտեմ, ձեզանից եմ ուզում իմանալ:

ԹԱԳՈՒԾ – Շնորհակալ եմ, արդեն սկսեցիք ինձ հետ հոգնա-
կիով խոսել, Վաղինակիչ...

ՀԱՅՐՈՒՆ – Դե ասա՛ ինչքանո՞վ...
 ԹԱԳՈՒԻՇ – Էլի եզակիի անցաք:
 ՀԱՅՐՈՒՆ – Բա որ ամենն նստած օրվա դիմաց էլ հարյուր դուլար պիտի ստանա, դա հաշիվ չի՞...
 ԹԱԳՈՒԻՇ – Հաշվում եմ... Ես ուրիշ բան եմ ասում, ես հինգ հարյուր դուլարի մասին եմ ասում... Դուք եք ասել, որ կավելացնեք, ես էլ եկել եմ, որ ավելացնեք:
 ՀԱՅՐՈՒՆ – Ասա, ինչքա՞ն ավելացնեմ:
 ԹԱԳՈՒԻՇ – Գոնե հազար դուլար էլ չտա՞ք, Վաղինակիչ:
 ՀԱՅՐՈՒՆ – Ի՛... Էդ ինչքա՞ն պիտի նստի, որ հազար դուլար տամ: Երկու շաբաթից ավել հո չի՞ նստելու: Երկու շաբաթվա եղածն ի՞նչ է, որ հազար դուլար տամ:
 ԹԱԳՈՒԻՇ – Թող էլի երկու շաբաթ լինի, մարդը գնա, հինգ հարյուր դուլարով նստի՞... Բա դա խի՞ղճ է...
 ՀԱՅՐՈՒՆ – Խոսք եմ տվել, որ կավելացնեմ, ըհը, ավելացնում եմ... (Գրպանից դուլար է հանում մեկնելով Թագուշին):
 ԹԱԳՈՒԻՇ – (Կարծես հափշտակելով) Ներողություն, ես ինչքա՞ն է...
 ՀԱՅՐՈՒՆ – Երկու հարյուր... Տալիս եմ, որ հենց հիմա թողնես ու գնաս էստեղից, այ կնիկ:
 ԹԱԳՈՒԻՇ – Կնիկ մի ասեք, գնամ...
 ՀԱՅՐՈՒՆ – Որ կնիկ ես, բա ի՞նչ ասեմ, այ կնիկ...
 ԹԱԳՈՒԻՇ – Բայց երկու հարյուրը քիչ է, Վաղինակիչ... Քո արև... Մի քիչ ավելացրեք, էլի, լեղապարկը հանած է փեսայիս, խնդրում եմ...
 ՀԱՅՐՈՒՆ – Որ լեղապարկը հանած է՝ ինչքա՞ն մի քիչ... Քսան, երեսուն դուլար:
 ԹԱԳՈՒԻՇ – Չէ, մի՛ ի՛ քիչ, մի հիսուն դուլար...
 ՀԱՅՐՈՒՆ – (Տալով) Առ, մեռակ թե գնա, գնա՛, պրծնեմ քեզնից, այ կնիկ...
 ԹԱԳՈՒԻՇ – Շնորհակալություն... Ես կնիկ չեմ, ես կին եմ... Միի՛ քիչ էլ ավելացրեք, որ գնամ, Վաղինակիչ:
 ՀԱՅՐՈՒՆ – Ուզում ես գնա, ուզում ես՝ մնա... Չե՞ս գնա, հիմա իրենք կգան, իրենք քեզ կհանեն:
 ԹԱԳՈՒԻՇ – Բա ինչո՞ւ չեկան... Շա՞տ կուշանան...
 ՀԱՅՐՈՒՆ – Հի՛մա, հի՛մա կգան, մի անհանգստացիր... Չգան, ես քեզ կհանեմ:

ԹԱԳՈՒԾ – Ինչո՞ւ դուք ներդրություն կրեք, թող գան, իրենք հանեն: Վաղինակիչ, ներողություն, իսկ կարո՞ղ է՝ փեսաս երկու շաբաթից ավել նստի:

ՀԱՅՐՈ – Մեղք չի՞, որ փեսադ լեղապարկը հանած երկու շաբաթից ավել նստի:

ԹԱԳՈՒԾ – Չէ՛, էլ չի դժգոհում, բողոքներ չունի, հիմա լավ է... Եթե պետք լինի, թող մի քիչ էլ ավել նստի, տղամարդ չի՞...

ՀԱՅՐՈ – Ես գիտեմ, թե ինչի համար ես ասում ավել նստի... Ավել նստի, որ ավել ստանա... Հույս չունենաս, որ երկու շաբաթից ավել կնստի, այ կնիկ...

ԹԱԳՈՒԾ – Էլի՞ կնիկ...

ՀԱՅՐՈ – Թագուհի Գուրգենովնա, գնա, շուտ արա, ես գործ ունեմ, ես հո պարապ մարդ չե՞մ...

ԹԱԳՈՒԾ – Ո՛ւ՛ֆ, էլի Գուրգենովնա...

ՀԱՅՐՈ – Ինչովնա ուզում ես եղիք, մենակ թե գնա, գնա...

ԹԱԳՈՒԾ – Բա չեն գալո՞ւ... Սպասում եմ, բա ինչո՞ւ են ուշանում:

ՀԱՅՐՈ – Մի սպասիր, գնա, ասում եմ...

ԹԱԳՈՒԾ – Գնում եմ, բայց դուք լավ մարդ եք...

ՀԱՅՐՈ – Լավ մարդու հերն եմ անիծել... Ինչի՞ց իմացաք, որ լավ մարդ եմ:

ԹԱԳՈՒԾ – Առանց համար հավաքելու զանգահարեցիք ոստիկանություն: Ես գիտեի, որ չեն գա: **(Ծիծաղում է)** Շնորհակալություն...

ՀԱՅՐՈ – Ես էլ եմ շնորհակալ, մենակ թե գնա:

ԹԱԳՈՒԾ – Տեսնում եք, որ գնում եմ, էլ ինչո՞ւ եք ասում... Ցտեսություն, պարոն Տանձ Հայրո... Ներողություն, հազար ներողություն, էլի սխալվեցի... **(Ափով ամուր փակում է բերանը՝ զնալով դուրս):**

ՀԱՅՐՈ – **(Գլուխն առնելով ավերի մեջ)** Զո փրկությունը քանտն է, Կարո...

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԳ

Կարապետի բնակարանի նույն սենյակը:

ՎԵՐԺԻՆԵ – Ժամը մեկ զանգահարում էր, երկու ժամ է անցել, չի զանգահարում:

ԹԱԳՈՒԸ – Երկու ժամ չի անցել, մի ժամ քառասունհինգ րոպե է անցել: Ես էլ եմ նայել ժամացույցին, մենակ դու չես նայել:

ՎԵՐԺԻՆԵ – Կարո՞ղ է եղ ժամացույցը կանգնել է, չի աշխատում:

ԳԱՅՈՒԸ – Աշխատում է, մամ, ո՞նց չի աշխատում:

ՎԵՐԺԻՆԵ – Բա որ աշխատում է, Կարոն ինչո՞ւ չի զանգահարում:

ԹԱԳՈՒԸ – Կզանգահարի էլի, վայ՛... Դու չգիտե՞ս՝ էս հեռախոսները ոնց են աշխատում: Երբ ուզում միանում են, երբ չեն ուզում՝ չեն միանում: Ի՞նչ գիտես, որ հենց հիմա մի տեղից չի զանգահարում: Կարոյին շատ եմ սիրում: Մի թերություն ունի, եթե դա էլ չլիներ...

ՎԵՐԺԻՆԵ – Չասես:

ԹԱԳՈՒԸ – Չէ չեմ ասում: Որ վախենում է զա տուն, ես ի՞նչ անեմ...

ՎԵՐԺԻՆԵ – Գա, որ բռնե՞մ...

ԹԱԳՈՒԸ – Որ բռնեցին՝ ի՞նչ... Տղամարդ չի՞... Ոնց բռնեն, էնպես էլ բաց կթողնեն: Երկու շաբաթվա եղածն ի՞նչ է...

ՎԵՐԺԻՆԵ – Էդ ի՞նչ ես ասում... Ուրեմն երկու շաբաթը քի՞չ է:

ԹԱԳՈՒԸ – Օրական հարյուր դոլարն էլ փոքր փող չի... Մեկն ասում ես, մյուսն էլ ասա... Իմ կին տեղով քիչ է մնում ես գնամ նստեմ: Եվ կզնամ... Եթե պետք լինի... Ազնիվ խոսք...

ՎԵՐԺԻՆԵ – Ի՞նչ դոլար, է՛... Դու ի՞նչ ես խոսում... Ինձ դոլար չի պետք, ինձ իմ մարդն է պետք, էլի ասե՞մ...

ԳԱՅՈՒԸ – Պարզ չի՞...

ԹԱԳՈՒԸ – Չէ, պարզ չի... Ձեզ համար է պարզ, ինձ համար պարզ չի:

ԳԱՅՈՒԸ – Լավ էլի, տատ...

(Հեռախոսի զանգ):

ԹԱԳՈՒԸ – Ըհը՛... Տեսա՞ր... Որ ասում էի...

ՎԵՐԺԻՆԵ – Չվերցնես՛ս... Թո՛ղ...

ԹԱԳՈՒԸ – Ուշքդ գնա՞ց... Չեմ վերցնի, դու վերցրու:

ԳԱՅՈՒԸ – Մամ, թող ես վերցնեմ:

ՎԵՐԺԻՆԵ – Չէ՛, ասացի... **(Վերցնում է լսափողը, լացակումած)** Կարո... Ես եմ, Կարո...

ԹԱԳՈՒԸ – Կարոն չի՞...

ԳԱՅՈՒԸ – Հերս չի՞...

ՎԵՐԺԻՆԵՆ – Լսվո՞ւմ է, որ իմանամ... Կարո, ես քեզ չեմ լսում, դու ինձ լսո՞ւմ ես: Ասում եմ՝ ես եմ, Վերժիկը... Վերժիկեն... (Դառնալով Թագուշին) Հիմա էլ զանգահարել է, չի խոսում...

ԹԱԳՈՒԻՇ – Տո՛ւր, տո՛ւր, տեսնեմ ոնց չի խոսում... (Վերցնելով լսափողը, գոռոցով) Կարո... Ես եմ, Թագուիի Գրիգորենան... Բա էլ ո՞նց ես դու ինձ լսում, որ ես քեզ չեմ լսում: Ի՞նչ... Բարձր ասա, որ բան հասկանամ: Հենց խոսում ես, անջատվում է, դու մի խոսի, ես կխոսեմ: Կարո՞... Անջատվեց... (Դնում է լսափողը):

ՎԵՐԺԻՆԵՆ – Բայց ի՞նքն էր...

ԳԱՅՈՒԻՇ – Հե՞րս էր...

ԹԱԳՈՒԻՇ – Հա, վա՛յ...

ՎԵՐԺԻՆԵՆ – Կարո՞ն էր...

ԹԱԳՈՒԻՇ – Հա, ասում եմ, բա էլ ո՞վ պիտի լիներ, ձայնը դուրս չեկավ, ոնց որ մի քիչ փոխված էր:

ՎԵՐԺԻՆԵՆ – Քոռանամ ես, մրսել է երևի...

ԹԱԳՈՒԻՇ – Լա՞ց ես լինում:

ՎԵՐԺԻՆԵՆ – Չէ, ինձ զսպում եմ:

ԳԱՅՈՒԻՇ – Ես էլ...

ՎԵՐԺԻՆԵՆ – Մի անգամ էլ զանգահարի, էլի, դժվա՞ր է...

ԳԱՅՈՒԻՇ – Հայրիկ, մի անգամ էլ զանգահարի, էլի... Խնդրում եմ...

ԹԱԳՈՒԻՇ – Համբերեք, վա՛յ... Չեք թողնում մարդն իմանա ինչ է անում: Մեր ու աղջիկ էլ ինչ բնավորություն ունե՞ք...

(Հեռախոսի զանգ):

ԳԱՅՈՒԻՇ – Մա՛...

ՎԵՐԺԻՆԵՆ – Թո՛ղ, թո՛ղ ես վերցնեմ...

ԹԱԳՈՒԻՇ – Վերցրու, վերցրու, ուշքդ չգնա...

ՎԵՐԺԻՆԵՆ – Այո... Կարո... Կարո, ես եմ, Վերժիկը... Վերժիկեն... Էլի չի՞ լսվում... Ասում եմ՝ ես եմ... Կարո... (Թագուշին) Չի լսվում, դու վերցրու... Հետո կտաս ինձ:

ԹԱԳՈՒԻՇ – Այո՛... Կարո, ասա, ես եմ Թագուիի Գրիգորենան... Ի՞նչ... Ի՞նչ պիցցա... Լահմաջոն կերանք, կշտացանք, հիմա էլ պիցցա՞... Չէ՛, չէ՛, չուղարկեք, չենք ուզում, ձեր սարքածը դուք կերեք: Հիմարը դու ես, ապուշ... Կեղտոտն էլ ես դու, լիրբն էլ ես դու, անպետքն էլ ես դու, օձն էլ ես դու...

ԳԱՅՈՒԻՇ – Տա՛ տ...

ՎԵՐԺԻՆԵՆ – Լա՛վ, լա՛վ, վերջացրու...

ԹԱԳՈՒԸ – Հավն էլ ես դու, շունն էլ ես դու, կույր աղիքն էլ ես դու... **(Դնում է լսափողը):**

ՎԵՐԺԻՆԵ – Լա՛վ, լա՛վ, հանգստացիր...

ԳԱՅՈՒԸ – Տատ, ինչո՞ւ ես հավասարվում...

ԹԱԳՈՒԸ – Լավ եմ անում... Ինքն ինձ ասի, ես չասե՞մ, էլ ի՞նչ կուզեիք...

ՎԵՐԺԻՆԵ – Կարոն էլ երևի հիմա զանգահարում է, տեսնում է զբաղված է հեռախոսը:

(Հեռախոսի զանգ):

ԳԱՅՈՒԸ – Հերս է... Թող ես վերցնեմ...

ՎԵՐԺԻՆԵ – Ինքն է... Չէ, թող ես վերցնեմ...

ԹԱԳՈՒԸ – **(Կարծես հափշտակելով լսափողը)** Եթե ինքը լինի, կտամ... Այո՛... Կարո, դո՞ւ ես... Դու չե՞ս... Կարո... Ո՞վ է... Կարապետ՞ը... Կարոն չես, Կարապետն ե՞ս... Բա էդ ո՞նց ես Կարապետը, որ Կարոն չես... Որտեղի՞ց... Լոսի՞ց... Չէ՛, չէ՛, սխալ տեղ եք ընկել: **(Դնում է լսափողը):**

ԳԱՅՈՒԸ – Էլի հե՞րս չէր...

ԹԱԳՈՒԸ – Չէ... Ասում է՝ հոս ինձ Կարապետ կասեն, իմ անունը Կարո չի, մենակ Կարապետ է...

ՎԵՐԺԻՆԵ – Բա էդ ի՞նչ Կարապետ էր, որ Կարոն չէր... Ինքն էլ երևի զանգահարում է, ուրիշ տեղ է ընկնում:

ԳԱՅՈՒԸ – Հորս կարոտել եմ...

ԹԱԳՈՒԸ – Համբերիր... Մենակ դու չես կարոտել...

ՎԵՐԺԻՆԵ – **(Գայուշին)** Լիպոն ո՞ր է... Դու եկել ես, մա՞ ինչու չի եկել:

ԳԱՅՈՒԸ – Ասե՞մ...

ՎԵՐԺԻՆԵ – Ինչո՞ւ պիտի չասես...

ԹԱԳՈՒԸ – Հա՛, ասա...

ԳԱՅՈՒԸ – Գնացել է Գլխավոր տնօրենի մոտ, որ հորս փոխարեն ինքը գնա մտի:

ԹԱԳՈՒԸ – **(Ապշանքով)** Էս ի՞նչ նորություն է...

ՎԵՐԺԻՆԵ – Բա՛, տեսնո՞ւմ ես՝ փեսաս աներոջը ինչքան է սիրում, որ ուզում է Կարոյի տեղը ինքը գնա մտի:

ԹԱԳՈՒԸ – Էլի թող սիրի, բայց նրա ի՞նչ գործն է, ինքն ի՞նչ կապ ունի, ինչո՞ւ պիտի Կարոյի տեղը ինքը գնա մտի: **(Գայուշին)** Հորդ թողած, դու էլ ամուսնո՞ւղ մասին ես մտածում:

ԳԱՅՈՒՑ – Չմտածե՞մ էլ... Հայրիկն աշխատում է, ինքը չի աշխատում: Առավոտ շուտ փողոցներն ընկած էնքան քայլում է, որ ոտքերն ուռել են:

ԹԱԳՈՒՑ – Ուռել են՝ կոմպրես արա, թող իջնի:

ԳԱՅՈՒՑ – Մամ, բայց դու դե՞մ ես, որ հորս փոխարեն Լիպոն գնա, մտի: Ասա, էլի, ասա...

ՎԵՐԺԻՆԵ – Ո՛չ նա պիտի մտի, ո՛չ էլ նա, ի՞նչ են արել, որ գնան մտեն:

ԳԱՅՈՒՑ – Բայց եթե մտի, ավելի լավ չի՞, որ Լիպոն գնա մտի հորս տեղը:

ԹԱԳՈՒՑ – Չէ՛, լավ չի... Իզուր տեղը մի համոզիր...

Մտնում է Լիպոն:

ԳԱՅՈՒՑ – Եկավ, թող ինքն ասի:

ԼԻՊՈ – Բարև ձեզ...

ԹԱԳՈՒՑ – (Նետելով) Բարև... Տղամարդը սեմուշկա կչրթի՞, ախլ...

ՎԵՐԺԻՆԵ – Բարև, Լիպո, դու էդ ի՞նչ հոգի ես ունեցել, որ ես չեմ իմացել:

ԹԱԳՈՒՑ – Ո՞վ է իմացել, որ դու իմանաս... (Բազմանշանակ) Լիպո...

ԼԻՊՈ – Ասա, Թագուհի Գրիգորևնա:

ԹԱԳՈՒՑ – Ոչ թե՛ ասա, այլ՝ ասեք..

ԼԻՊՈ – Ասեք, Թագուհի Գրիգորևնա:

ԹԱԳՈՒՑ – (Լարված, կարծես հարցաքննողի դերում) Որտեղի՞ց ես գալիս:

ԼԻՊՈ – Դրսից...

ԹԱԳՈՒՑ – Ո՞ր դրսից... Դրսից՝ որտեղի՞ց...

ԳԱՅՈՒՑ – (Լիպարիտիճ) Ես ասել եմ, ասա...

ԹԱԳՈՒՑ – Գիտեմ, որ ասել ես... Ես իր քերանից եմ ուզում լսել (Լիպարիտիճ) Նայիր աչքերիս մեջ, հետո ասա...

ԼԻՊՈ – Առանց մայելու էլ կասեմ, հո գաղտնիք չի... Գնացել էի տնօրենի՝ Հայրույժան Հայրոյի մոտ, որ ամերոջս փոխարեն ես գնամ մտեմ:

ՎԵՐԺԻՆԵ – Տեսնո՞ւմ եք՝ ինչ փեսա ունեմ...

ԹԱԳՈՒՑ – Դու մի բռպե սուս... (Լիպարիտիճ) Դու ինչո՞ւ նրստես:

ԼԻՊՈ – Բա ինչո՞ւ ամերս մտի, ինքը տարիքով է, ես ջահել եմ, ես կնատեմ:

ԹԱԳՈՒԸ – Հենց դրա՞ համար էիր գնացել... Նայիր աչքերիս
մեջ...

ԼԻՊՈ – Նայում եմ... Բա էլ ինչի՞...

ՎԵՐԺԻՆԵ – Հո հարցաքննություն չի:

ԹԱԳՈՒԸ – Մի բուստ սուս... Որ հեռախոսը զանգի, դու կվերց-
նես:

ԳԱՅՈՒԸ – (Լիպարիտին) Զեզ ո՞վ կթողնի, որ գնաս մատես:

ԹԱԳՈՒԸ – Դու շատ լավ էլ կթողնես... Չեր իմացածը մենք էլ
գիտենք...

ՎԵՐԺԻՆԵ – Դե լավ, էլի, հիմա ես ձեր սիրտն ունե՞մ:

ԹԱԳՈՒԸ – Մի խանգարիր... (Լիպարիտին) Նայիր աչքերիս
մեջ, էլի, նայիր...

ԼԻՊՈ – Ըհը՛, նայում եմ... նայելն էլ ո՞նց է լինում:

ՎԵՐԺԻՆԵ – Ախր ինչո՞ւ ես տղային նեղ վիճակի մեջ դրել:

ԹԱԳՈՒԸ – Դու սուս...

ԼԻՊՈ – Ոչինչ, թող ասի, տեսնեմ՝ ինչ է ասում:

ԳԱՅՈՒԸ – Լավ, էլի, տատ...

ԹԱԳՈՒԸ – Դու որ սուս ու սուս... (Լիպարիտին) Նայիր...

ԼԻՊՈ – Հիպոնոսացնո՞ւմ ես, Թագուհի Գրիգորևնա, ինչի՞ հա-
մար նայեմ, աչքերս հոգնեցին:

ԹԱԳՈՒԸ – Հայացքդ փախցնում ես, հա՞... Հիմա տեսա՞ր, որ
բռնվեցիր: Ուզում ես էդ օրական հարյուր դոլարը դու ստանա՞ս,
Լիպո տղա:

ԼԻՊՈ – Ինչ վատ կլինի, որ ստանամ...

ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ... Էդ էր պակաս... Ոչ մի դեպքում... Մտքովդ
չանցնի...

ՎԵՐԺԻՆԵ – Ուրեմն դու ուզում ես, որ Կարոն գնա, մատի՞:

ԹԱԳՈՒԸ – Թող չմտաի, ես ասել եմ՝ մատի՞... Բայց ինքն էլ
չպիտի մտաի:

ԳԱՅՈՒԸ – Հերս մատի՞...

ԹԱԳՈՒԸ – Դա ինձ չի վերաբերում՝ թե ով կմտաի, ով չի մտաի:
Դու հորդ մասին չես մտածում, դու քո ամուսնու մասին ես մտածում:
Ինքը չպիտի մտաի:

ԼԻՊՈ – (Ծաղրանքով) Չես ուզում՝ չեմ մտաի: Բայց խեղճ
աներս մեղք չի՞, որ ինքը գնա մտաի:

ԹԱԳՈՒԸ – Դու սուս, ես գիտեմ քո մտքինը: Չխոսես...

ԳԱՅՈՒԸ – Ինչո՞ւ պիտի չխոսեմ, է՞, ձայնագուրկ եմ, ինչո՞ւ
դու խոսես, ես չխոսեմ:

ՎԵՐԺԻՆԵՆ – Էլի սրանք սկսեցի՜ն... Էս ինչն՞ի չի զանգահարում...

ԼԻՊՈ – Թագուհի Գրիգորևնա, եթե որոշողը դուք եք, ես էլ ի՞նչ ասեմ...

ԹԱԳՈՒԸ – Ոչ մի բան էլ մի ասա: Քեզ ո՞վ է թույլ տվել, որ վեր ես կացել, առանց հարցնելու գնացել...

ԼԻՊՈ – Ես վատ բանի համար չեմ գնացել:

ԹԱԳՈՒԸ – Ես էլ գիտեմ, դու էլ գիտես, թե ինչի համար ես գնացել: Էդ սեմուշկան հեռու տար ինձնից... Դու չհոգնեցի՞ր, այ տղա...

ՎԵՐԺԻՆԵՆ – Էս ինչն՞ի չի զանգահարում...

ԼԻՊՈ – Կարելի՞ է մի բան ասեմ, Թագուհի Գրիգորևնա:

ԹԱԳՈՒԸ – Չի կարելի, բայց ասա:

ԼԻՊՈ – Ասե՛մ, թե՞ չասեմ:

ԹԱԳՈՒԸ – Ասում ես, դե ասա...

ԼԻՊՈ – Դե որ շատ եք ուզում, կասեմ... Իմիջիայլոց, դուք իզուր տեղն եք խառնվել իրար, ես գնացի, բայց մերժեց: Ասաց՝ դու մեր աշխատողը չես... Հիմա հանգստացա՞ք, Թագուհի Գրիգորևնա, հանգստացա՞ք... Բա...

ԹԱԳՈՒԸ – Լավ է արել... Ես հանգստացա, հիմա դու ես անհանգիստ:

ԳԱՅՈՒԸ – Իրոք, չհամաձայնե՞ց...

ԼԻՊՈ – Չէ՛...

ԹԱԳՈՒԸ – Էդ ո՞նց ես կարմիր դիպլոմով ավարտել համալսարանն, է՛, որ էդքան բան չես հասկացել, վեր ես կացել, գնացել նրա մոտ: Ես դրա մասին եմ մտածում:

ԼԻՊՈ – Ինձ համար չեմ գնացել, աներոջս համար եմ գնացել:

ԹԱԳՈՒԸ – Հիմա էդպես կասես, բա ո՞նց...

ՎԵՐԺԻՆԵՆ – Իբր թե որ համաձայներ, ես կթողնեի՞, որ դու նստես: **(Ինքն իր հետ)** Էս ինչն՞ի չի զանգահարում...

Մտնում է Գերասիմը:

ԳԵՐԱՍԻՄ – Բարև ձեզ, ժողովուրդ: Ինչպե՞ս ես, Թագուշիկ:

ԹԱԳՈՒԸ – Ես լավ եմ, ով որ վատ է, նրան հարցրու:

ԳԱՅՈՒԸ – Մամ, ես էլ չեմ համբերում, գնում եմ հորս ետևից:

ԹԱԳՈՒԸ – Գնում ես՝ ի՞նչ անես, դու հորդ տեղը գիտե՞ս, որ գնում ես:

ԳԱՅՈՒԸ – **(Թնկքնկալով)** Բա ինչն՞ի չի զանգահարում: Չէ՛, գնում եմ:

ՎԵՐԺԻՆԵ – Սպասիր, ես էլ եմ գալիս:
 ԹԱԳՈՒԸ – Դու ո՞ր ես գնում:
 ՎԵՐԺԻՆԵ – Բա ինչքա՞ն մտեմ ու սպասեմ:
 ԹԱԳՈՒԸ – Որ գնացիք, պիտի գտնե՞ք:
 ԳԵՐԱՍԻՄ – Միտք չունի, Թագուշիկը ճիշտ է ասում:
 ԼԻՊՈ – Գայուշ, մտիր տեղդ:
 ԳԱՅՈՒԸ – Չէ՛, չէ՛, գնում եմ: Մի՛ ասա...
 ՎԵՐԺԻՆԵ – Աղջիկս գնա, ես մնա՞մ: Ես էլ եմ գնում:
 ԹԱԳՈՒԸ – Նա քո աղջիկն է, դու էլ իմ աղջիկն ես: Իմ աղջիկը
 գնա, ես մնա՞մ: **(Վերցնում է պայուսակը, հարդարվում է պատրաստ-
 վելով գնալու):**
 ՎԵՐԺԻՆԵ – Լիպո, եթե դուրս գալու լինեք, դուռը կքաշեք,
 ինքն իրեն կփակվի:
(Կանայք դուրս են գնում):
 ԳԵՐԱՍԻՄ – Եթե իրենք գնում են, մենք ինչո՞ւ պիտի մնանք,
 չհասկացա: Լիպարիտ, արի, մենք էլ գնանք:
 ԼԻՊՈ – Գամ, բայց ո՞ր գամ...
*(Գնում են: Մենյակը դատարկվում է: Հնչում է հեռախոսի
 զանգը):*

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայրո Հայրունյանի նույն աշխատասենյակը:
Մտնում է ոստիկանը՝ առանց համազգեստի, գլխարաց:
 ՈՍՏԻԿԱՆ – Բարև ձեզ...
 ՀԱՅՐՈ – Բարև...
 ՈՍՏԻԿԱՆ – **(Պատվի առնելով)** Լսում եմ...
 ՀԱՅՐՈ – **(Նոր միայն ճանաչելով)** Ի՛... Էդ դո՞ւ ես... Համա-
 զգեստդ հանել, եկել ես, որ ի՞նչ...
 ՈՍՏԻԿԱՆ – Ես չեմ հանել, հանել են: Կրճատել են հաստիքս,
 Վաղինակիչ:
 ՀԱՅՐՈ – Բա հիմա որպես ի՞նչ ես եկել...
 ՈՍՏԻԿԱՆ – Էն հարցով, որ ընդառաջեք, գնամ երկու շաբաթ
 մտեմ: Խնդրում եմ, էլի, Վաղինակիչ...
 ՀԱՅՐՈ – Դու էդ գործի հետ կապ չունես, դու էստեղի աշ-
 խատող չես, որ գնաս, մտես: Էդ գործը փակված է, վերջ, մտքիցդ
 հանիր:
 ՈՍՏԻԿԱՆ – Հանե՞մ...

ՀԱՅԲՈ – Հա, ասացի...

ՈՍՏԻԿԱՆ – Կինս ծննդաբերեց:

ՀԱՅԲՈ – Շուտ-ուշ պիտի ծննդաբերեր, բա ինչ պիտի աներ:

Աչքդ լույս:

ՈՍՏԻԿԱՆ – Շնորհակալություն...

ՀԱՅԲՈ – Տղա՞ է, թե՞ աղջիկ...

ՈՍՏԻԿԱՆ – Երկու աղջիկ...

ՀԱՅԲՈ – (Մատը տնկած) Ի՞նչ... Մեկն էլ չէ, երկու՞:

ՈՍՏԻԿԱՆ – Երկվորյակ են...

ՀԱՅԲՈ – Էլի թող երկվորյակ լինեն... Եթե դրանցից մեկը տղա լիներ գոնե, մեկը՝ աղջիկ, ի՞նչը կխանգարեր: Պարտադի՞ր էր, որ երկուսն էլ աղջիկ լինեին:

ՈՍՏԻԿԱՆ – Դե հիմա էդպես է ստացվել, ես ի՞նչ անեմ...

ՀԱՅԲՈ – Ոչ մի բան... (Չեռքի շարժումով ոստիկանին հեռու վանելով իրենից) Ազատ ես, գնա...

ՈՍՏԻԿԱՆ – (Պատվի առնելով) Լսում եմ...

ՀԱՅԲՈ – Հագիդ համազգեստ չկա, ձեռքդ իջեցրու:

ՈՍՏԻԿԱՆ – (Իջեցնելով) Ներողություն... Բա հիմա իմ երեխաներին ո՞վ պիտի պահի, Վաղինակիչ:

ՀԱՅԲՈ – Ես... (Հարձակողական) Ի՞նչ ես հարցնում, մախօրոք մտածեիր...

ՈՍՏԻԿԱՆ – Չէ, բայց ուր գնում եմ՝ գործ չկա: Ես չպահեմ, բա ո՞վ պիտի պահի էդ երեխաներին:

ՀԱՅԲՈ – Ասաված...

ՈՍՏԻԿԱՆ – Էլ չգա՞մ...

ՀԱՅԲՈ – Չէ, հիմա էլ ես իզուր եկել:

ՈՍՏԻԿԱՆ – Իսկի հույս չունենա՞մ:

ՀԱՅԲՈ – Ունեցիր...

ՈՍՏԻԿԱՆ – Ունենա՞մ...

ՀԱՅԲՈ – Է՛, հա, հույսի եղածն ի՞նչ է, որ դա էլ չունենաս:

Ազատ ես, գնա:

ՈՍՏԻԿԱՆ – (Մովորության ուժով փորձում է պատվի առնել՝ տեղնուտեղը իջեցնելով ձեռքը) Հաջողություն...

ՀԱՅԲՈ – Հաջողություն էլ, դեռ մի բան էլ ավել... (Նրա գնալուց հետո) Ինչ երեսով էլ եկել է... Աղջկա երկվորյակը ո՞րն է...

Լալան թերը ձեռքին խուժում է ներս՝ տեղավորվելով Հայրոջի ծնկներին:

ԼԱԼԱ – (Կարդում է) Խոյ...

ՀԱՅՐՈՒՆ – (Աչքի անցկացնելով ձեռքի ժամացույցը) Մե՞կն է...

ԼԱԼԱ – (Կարդալով իրեն հատուկ արագավարժությամբ, գրեթե անհասկանալի լսողի համար) Երկուշաբթի անհրաժեշտ կլինեն ժամանակ և համբերություն, որպեսզի ամեն ինչ ստացվի այնպես, ինչպես մտածել եք: Երեքշաբթի մեծ նշանակություն կստանան տղամարդ ընկերները: Չորեքշաբթի ֆինանսական ճեղքվածք կունենաք: Հինգշաբթի ոչ մեկի օգնությամբ մի դիմեք: Ուրբաթ խառնաշփոթի մեջ կհայտնվեն մարդիկ, որոնցից նյութական կախում ունեք: Շաբաթ դեպքերը կզարգանան արագ, բայց ոչ բարենպաստ հունով: Կիրակի լռության անհրաժեշտություն կզգաք:

ՀԱՅՐՈՒՆ – Ի՞նչ... Դու քո կարդացածից բան հասկացա՞ր: (Նմանակելով) Տոտոտոտոտոտոտոտ... Մարդավարի կարդա, այ անխիղճ... Էլի վրա ես տալիս մի գլուխ...

ԼԱԼԱ – Ներողություն:

ՀԱՅՐՈՒՆ – Կարդա...

ԼԱԼԱ – Ցո՛ւլ... Երկուշաբթի խուսափեք գործընկերների հետ կոնֆլիկտներից: Երեքշաբթի մի դիմեք իրավապահ մարմիններին: Չորեքշաբթի դադարեցրեք խելահեղ մրցավազքը հանուն շահույթի: Հինգշաբթի զբաղվեք առողջության հարցերով: Ուրբաթ կողմնակի մարդկանց թույլ մի տվեք խառնվել ձեր անձնական գործերին: Շաբաթ շրջանցեք սուր իրավիճակները, վերահսկեք հույզերը: Վտանգ է սպառնում ձեր բիզնեսին՝ եթե չաջակցի նա, ով խոստացել է ձեզ փրկել սպասվող վտանգից: Կիրակի հանգստացեք քաղաքից դուրս:

ՀԱՅՐՈՒՆ – Ի՞նչ սրտով հանգստանամ... (Լալային կտրուկ իջեցնում է՝ ձեռքից հափշտակելով թերթը, որը պատառոտում է տրորելով ոտքերի տակ) Եկել ես, կրակի վրա յո՞ւղ ես լցնում: (Բղավոցով) Գնա՛... (Լալան հավաքում է հատակին թափված թղթերը՝ դուրս գալով աշխատասենյակից):

Մտնում է Կարապետը:

ԿԱՐԱՊԵՏ – Կարելի է՞:

ՀԱՅՐՈՒՆ – Եկել ես՝ արի, էլ մի հարցրու:

ԿԱՐԱՊԵՏ – Բարև ձեզ...

ՀԱՅՐՈՒՆ – Բարև էլ, դեռ մի բան էլ ավել...

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞նց եք:

ՀԱՅՐՈՒՆ – Ես լավ եմ, երկիրդ երկիր չի:

ԿԱՐԱՊԵՏ – (Բազմանշանակ) Ես ներողություն եմ խնդրում, Վաղինակիչ...

ՀԱՅՐՈ – (Ուտքից գլուխ չափելով Կարապետին) Հը՛, բա՞ն է պատահել:

ԿԱՐԱՊԵՏ – (Հոգոցով) Ինչ ասեմ...

ՀԱՅՐՈ – Ինձ էլ որ չասես, բա էլ ո՞ւմ պիտի ասես: Եկե՛լ եմ հետևիցդ...

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, եթե եկած լինեիմ, հիմա ես էստեղ չէի լինի:

ՀԱՅՐՈ – Ճիշտ ես ասում: Ուրի՞շ... Տեսնում եմ, որ մտքիդ բան կա, ասելու ես՝ ասա, էլ ինչո՞ւ ես նեղվում:

ԿԱՐԱՊԵՏ – Ո՞նց ասեմ, է՛, ախր ո՞նց ասեմ, հե՞շտ է...

ՀԱՅՐՈ – Եթե ասես, կտեսնես, որ դժվար էլ չի... Հը՞... Մտքիդ ասա...

ԿԱՐԱՊԵՏ – Չե՞ք զգում, որ ձեր երեսին չեմ կարողանում նայել, Վաղինակիչ: Խոսք եմ տվել, սխալվել եմ, ես իմ ձեռքն ընկել եմ կրակը: (Կարճ դադարից հետո) Չեմ ուզում՝ նստեմ:

ՀԱՅՐՈ – Չես ուզում նստես՝ կանգնիր, մնա կանգնած:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, բանտ չեմ ուզում նստեմ:

ՀԱՅՐՈ – (Բռնկվելով) Ի՞նչ...

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն եմ խնդրում, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈ – Ո՞նց թե... (Կարծես ինքնատիրապետունը կորցնելով) Էս ի՞նչ է ասում...

ԿԱՐԱՊԵՏ – Ազնիվ խոսք...

ՀԱՅՐՈ – Ազնվությունդ քեզ պահիր, Կարո ես, Կարապետ ես, թե ինչ ես... Խա՞ղ ենք անում, այ տղա: Չէիր նստելու, ժամանակին ասեիր:

ԿԱՐԱՊԵՏ – Չգիտեի...

ՀԱՅՐՈ – Է, իմանայիր... Ես քեզ չզուլացրի՞, որ վերջին բուստին ինձ փաստի առաջ չկանգնեցնես, ասա...

ԿԱՐԱՊԵՏ – Ձզուլացրիք:

ՀԱՅՐՈ – Բա հիմա եկել ես, կանգնել ես առաջս, էդ ի՞նչ ես ասում:

ԿԱՐԱՊԵՏ – Էն ժամանակ երեսս չբռնեց...

ՀԱՅՐՈ – Բա հիմա ո՞նց է բռնում երեսդ, որ եկել, ասում ես չեմ նստի...

ԿԱՐԱՊԵՏ – Սիրով կնստեի, եթե կարողանայի, բա չէի՞ նստի, Վաղինակիչ:

(Ընդունարանից աղմկոտ ծայներ եմ լսվում գրավելով նըրանց ուշադրությունը):

Ներս է խուժում Թագուշը:

ԹԱԳՈՒԻՇ – **(Կարապետին)** Դու էստե՞ղ ես... Մենք էլ ընկել ենք փողոցները, քաղաքով մեկ քեզ ենք ման գալիս: **(Դեպի ընդունարանը)** Եկեք, գտել եմ, էստեղ է Կարապետը:

Իրար ետևից, կարծես շարք կազմած, մտնում են Վերժինեն, Գայուշը, Լիպարիտը, Գերասիմը:

ՀԱՅՐՈ – **(Յնցված)** Էս ովքե՞ր են, այ մարդ...

ԹԱԳՈՒԻՇ – Մենք ենք... **(Ժպիտը դեմքին, ցուցադրական հարգանքով պահպանելով ձևական կողմը)** Բարև ձեզ... Ինչպե՞ս եք...

ՀԱՅՐՈ – Դուրս եկեք, շուտ... **(Այլայլված, ինչ որ կոճակ է սեղմում: Լսվում է զանգի ձայն: Դեպի ընդունարանը)** Լալա՛...
ԿԱՐԱՊԵՏ – Ինչո՞ւ եք եկել...

ՎԵՐՇԻՆԵ – Զո ետևից... Ժամը մեկ զանգահարում էիր, քեզ ի՞նչ պատահեց, որ էլ ոչ զանգ, ոչ բան...

ԳԱՅՈՒՇ – Ձանգահարեիր էլի, հայրիկ...

ԼԻՊՈ – Եթե զանգահարած լինեիր, չէինք գա:

ԳԵՐԱՍԻՄ – Իհարկե, չէինք գա...

ՀԱՅՐՈ – **(Կատաղությանը նորից է սեղմում նույն կոճակը, րդավոցով դեպի ընդունարանը)** Լալա՛...
Հեկեկալով մտնում է Լալան:

Հեկեկալով մտնում է Լալան:

ԼԱԼԱ – Լսում եմ...

ՀԱՅՐՈ – Սրանց ինչո՞ւ ես ներս թողել:

ԼԱԼԱ – **(Մատնացույց անելով Թագուշին)** Այս կինը ինձ հրեց, զցեց, իրենք ներս մտան:

ԹԱԳՈՒԻՇ – Ես չեմ հրել, զցել, դու ընկար: Երիտասարդ աղջիկ ես, ազնվություն ունցիր՝ ոնցիր՝ ոնց որ եղել է, գոնե էնպես ասա: Չի կարելի, չէ՞...

ՀԱՅՐՈ – Դու ուրիշ խաղ չէի՞ր կարող խաղալ իմ գլխին, Կարո կամ Կարապետ: Բայց ի՞նչ բացբերան մարդ ես եղել...

ԿԱՐԱՊԵՏ – Ե՞ս եմ բացբերան:

ՀԱՅՐՈ – Չէ, ես...

ԿԱՐԱՊԵՏ – Ես ներողություն եմ խնդրում իրենց փոխարեն, Վաղինակիչ:

ՀԱՅՐՈ – Դու իրենց փոխարեն մի խնդրիր, դու քո՛, քո՛ փոխարեն ներողություն խնդրիր, որ էս տեսակ զոքանչ ունես:

ԹԱԳՈՒԻՇ – Դե՛, դե՛, ես թույլ չեմ տա, որ դուք ինձ վիրավորեք, ես իմ աղջկա մայրն եմ նախևառաջ: Բերանս բացել չտաք, թե չէ որ բացեցի...

ԿԱՐԱՊԵՏ – (Նախահարձակ լինելով) Տո՛ր, տո՛ր... Տուր,
շուտ արա...

ԹԱԳՈՒԸ – Ի՞նչ տամ, ասա՛ տամ:

ԿԱՐԱՊԵՏ – Ինչ որ վերցրել ես՝ դա տուր:

ԹԱԳՈՒԸ – Ումի՞ց եմ վերցրել:

ԿԱՐԱՊԵՏ – Դու չգիտես, ի՞նձ ես հարցնում:

ԹԱԳՈՒԸ – Թող ինձ...

ԿԱՐԱՊԵՏ – Տուր, շուտ արա, դուլարները տուր: **(Քաշքշում է
Թագուշին):**

ԹԱԳՈՒԸ – Վա՛յ, մամա ջան, կապտացրեց մարմինս... Մար-
մինս մի կապտացրու... **(Մյուսները նրանց բաժանում են իրարից՝
պատ կազմելով երկուսի միջև):**

ՀԱՅՐՈ – Էս ի՞նչ են անում, այ մարդ... Էս ի՞նչ եք սարքել
օֆիսը:

ԿԱՐԱՊԵՏ – **(Թագուշին)** Շուտ արա...

ՎԵՐԺԻՆԵ – Դե դու էլ տուր, էլի...

ԳԱՅՈՒԸ – Տատ, տուր...

ԹԱԳՈՒԸ – Դու սուս, քեզ խոսք չի հասնում:

ԳԵՐԱՍԻՄ – Թագուշիկ, տուր:

ԼԻՊՈ – Թագուհի Գրիգորենա, տուր...

ԹԱԳՈՒԸ – Դուք ո՞վ եք, է՛, խառնվում եք:

ԿԱՐԱՊԵՏ – Արագացրու...

ՎԵՐԺԻՆԵ – Տուր...

ԹԱԳՈՒԸ – Դու էլ ես ասում՝ տուր... Փոխանակ մորդ պաշտ-
պանես, մարդո՞ւղ ես պաշտպանում:

ՎԵՐԺԻՆԵ – Երկուսիդ էլ պաշտպանում եմ, տուր...

ՀԱՅՐՈ – Վերջ տվեք, ասում եմ, քանի չեմ կատաղել:

ԿԱՐԱՊԵՏ – **(Թագուշին, չքուլացող լարվածությամբ)** Վերջին
խոսքդ ասա, չե՞ս տալիս...

ԹԱԳՈՒԸ – Որ քեզ տամ, բա վարձերն ինչո՞վ տամ:

ԿԱՐԱՊԵՏ – Ինձ համբերությունից չհանես, տուր...

ՀԱՅՐՈ – Սրանք արդեն համը հանում են, իմ արև...

*(Խառնակ վիճակ, իրարանցում: Մենյակով մեկ վազվզում
են իրար ետևից ընկած: Ճիչ, հեծկլտոց, ժխոր):*

ԹԱԳՈՒԸ – Մարմինս կապտացրեց: **(Լացակումած)** Հաշվի
չեմ առնի, որ փեսաս ես, դատական բժշկի կզնամ, իմացիր...

ԿԱՐԱՊԵՏ – Տո՛ր, տո՛ր...

ԹԱԳՈՒՇ – (Պայուսակից հանում է դուարները) Առ... Սև լինի...

ՀԱՅՐՈ – Իմ համբերությունն եք փորձում... (Ոխտվ) Կստանա՞ք...

ԿԱՐԱՊԵՏ – (Վերցրած դուարները դնելով Հայրոյի գրասեղանին) Ներողություն եմ խնդրում, Վաղինակիչ, վերցրեք...

ՀԱՅՐՈ – (Չեռքի անփույթ շարժումով սեղանի վրայից հեռացնում է դուարները, որ թափվում են հատակին, պայթելով) Կարո՞ղ է պակաս եմ տվել... Ուզում ես՝ ավելացնե՞մ... Ուզում ե՞ս՝ կավելացնեմ:

ԿԱՐԱՊԵՏ – Չէ, չէ, չեմ ուզում...

ՀԱՅՐՈ – (Լարված, կարծես տենդի մեջ) Ասա, ասա ինչքա՞ն ավելացնեմ: Միլիոն ես ուզում, ասա՝ միլիոն տամ: Ասա՝ մտքինդ ասա...

ԿԱՐԱՊԵՏ – Միլոն էլ տաք, չեմ մտախ...

ԹԱԳՈՒՇ – (Հայրոյին) Նա չպիտի մտախ, դուք շատ լավ գիտեք, թե ով պիտի մտախ... Բերանս բացել չտաք...

ՎԵՐԺԻՆԵ – Չեր փոխարեն ինչո՞ւ պիտի իմ ամուսինը մտախ:

ԳԱՅՈՒՇ – Ո՞վ ուզում է՝ թող մտախ, իմ հայրը ինչո՞ւ պիտի մտախ:

ԼԻՊՈ – Ի՞նչ է արել, որ մտախ...

ԳԵՐԱՍԻՄ – Եթե չի արել, ինչո՞ւ պիտի մտախ...

ՀԱՅՐՈ – (Գոռում է՝ ներկաներին լռեցնելով) Մի բռայե... (Կարապետին) Ասա, մտքինդ ասա...

ԿԱՐԱՊԵՏ – Ներողություն եմ խնդրում, էլ ի՞նչ ասեմ...

ՀԱՅՐՈ – (Ինքն իրենից դուրս եկած, որոտալով) Դու չմտես, ես չմտեմ, բա ո՞վ մտախ... (Դաեղիճով մեկ արձագանքվում է ձայնը) Ո՞վ... Ո՞վ... Ո՞վ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Վ Ե Ր Ջ

2003 թ., հունիս

339

ԼՈՒՅՍ ՔԵՉ ՏԵՄՆՈՂԻՆ

Պիես երկու մասից

340

*Ինձ երանի, որ զքեզ տեսայ...
Պաղտասար Դպիր*

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՀՐԱՉ	1999 ամուսիններ
ԼԱԼԱ	
ՉԱՐՈՒՀԻ	– Հրաչի զոքանչը
ԱՐԻՍ (ԱՐԻՍՏԱԿԵՍ)	– տարիքը՝ 78, ոչ ստույգ ավյալներով
ՌԱՖԻԿ	– Արիսի հանգուցյալ եղբոր տղան

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Հրաչի բնակարանը բազմահարկ շենքում: Դռան հետևում կիսով չափ երևացող մուտքն է՝ վեր ու վար տանող աստիճաններով: Վերելակի դուռը չի երևում:

Ուզում է տնից դուրս գնալ, զոքանչը հիստերիկ լացով կառչել է նրանից:

ՁԱՐՈՒՀԻ – Տո՛ր, տուր բանալին:

ՀՐԱՉ – Թո՛ղ, ձեռքս թող, այ կին, ամոթ է, մարդիկ կլսեն:

ՁԱՐՈՒՀԻ – (Հեռքը զգալ է տալիս) Չէ, չեմ թողնի:

ՀՐԱՉ – (Կատաղությունը զսպելով) Թո՛ղ, ասում եմ թող:

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ թողնի:

ՀՐԱՉ – Շորերս հագիցս հանեցիր, Չարուհի Աբրահամովնա, բա քեզ սազե՞ց, ինտելիգենտ կին ես, ամոթ է, թո՛ղ:

ԶԱՐՈՒՀԻ – Չեմ թողնի, տուր, տուր բանալին:
 ՀՐԱՉ – (Չայնը բարձրացնելով) Թող, ասում եմ...
 ԶԱՐՈՒՀԻ – Մինչև չտաս, չեմ թողնի, վրաս էլի բանալիով
 դրսից կփակես դուռը, կգնաս:
 ՀՐԱՉ – Չեմ փակի, թող:
 ԶԱՐՈՒՀԻ – Կփակես... Երեկ էլ ասացիր՝ չեմ փակի,
 փակեցիր:
 ՀՐԱՉ – Էսօր չեմ փակի, թող, վա՛յ, ուշանում եմ:
 ԶԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ թողնի:
 ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա, ես քեզ խնդրում եմ թող...
 ԶԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ թողնի, քեզ էլ հավատացող չկա: Տո՛ւր,
 տուր բանալին:
 ՀՐԱՉ – Ազնիվ խոսք, արդեն համը հանում է ես կնիկը: Թող,
 ասում եմ... Թող, կտամ... Չենդ ինչի՞ համար ես գլուխդ զցել,
 Զարիկ: Դե թող, որ տամ:
 ԶԱՐՈՒՀԻ – Դե տուր:
 ՀՐԱՉ – Տամ, հետո ումի՞ց ստանամ:
 ԶԱՐՈՒՀԻ – Մարդը երեկ եկավ, դուռը փակ էր, թողեց գնաց:
 Էսօր էլ գա՞, թողնի գնա էդ մարդը: Տո՛ւր...
 ՀՐԱՉ – Ո՞վ է, է՛, ի՞նչ մարդ...
 ԶԱՐՈՒՀԻ – Որ չես ճանաչում, ո՞նց ասեմ...
 ՀՐԱՉ – Երբ որ տանը կլինենք, նա էլ թող էդ ժամանակ գա:
 ԶԱՐՈՒՀԻ – Հիմա է հարմար, հիմա է գալիս:
 ՀՐԱՉ – Դե ասա, իմանամ ով է, տամ:
 ԶԱՐՈՒՀԻ – Քեզ համար մեկ չի՞, թե ով է: Բան ունի ինձ տալու,
 գալիս է տա, թողնի գնա:
 ՀՐԱՉ – Ի՞նչ պիտի տա, հո դուլար-մուլար չի՞...
 ԶԱՐՈՒՀԻ – Կրեքի, կիմանաս:
 ՀՐԱՉ – Ի՞նչ գիտես, որ պիտի բերի:
 ԶԱՐՈՒՀԻ – Ինքն է զանգահարել երկու օր առաջ:
 ՀՐԱՉ – Է, լավ, չիմանա՞նք՝ ով է...
 ԶԱՐՈՒՀԻ – Կգա, կիմանաս: Տուր, բանալին տուր:
 ՀՐԱՉ – Մեկ էլ տեսար ինքը չեկավ, եկողը մի ուրիշ մարդ
 եղավ, չփակեմ, որ գան, զանգը տան, դու էլ իմանաս, թե ինքն է,
 դուռը բացե՞ս:
 ԶԱՐՈՒՀԻ – Կհարցնեմ ով է, նոր կբացեմ: Արիսը չեղավ, չեմ
 բացի: Տուր...
 ՀՐԱՉ – Անունն Արի՞ս է:

ՉԱՐՈՒՀԻ – Տա, տուր... Արիս, Արիստակես...

ՀՐԱՉ – Արի՞ս, թե՞ Արիստակես...

ՉԱՐՈՒՀԻ – Քեզ համար մեկ չի՞... Արիս էլ եմ իրեն ասում,
Արիստակես էլ... Տո՛ւր...

ՀՐԱՉ – Հաստատ գիտե՞ս:

ՉԱՐՈՒՀԻ – Ուրեմն կարող է չիմանա՞մ էլ...

ՀՐԱՉ – Ի՞նչ տարիքի մարդ է:

ՉԱՐՈՒՀԻ – Ո՞վ...

ՀՐԱՉ – Էդ Արիս է, Արիստակես է՝ դա...

ՉԱՐՈՒՀԻ – Ութսունին մոտ... Տո՛ւր...

ՀՐԱՉ – Բա էլ ինչի՞ է տնից դուրս գալիս:

ՉԱՐՈՒՀԻ – Ո՞վ...

ՀՐԱՉ – **(Հեզմանքով)** Ով... **(Ակնարկելով սկլերոզը)** Էլի բռնե՞ց... Քո էդ ասած Արիսը, Արիստակեսը... Քեզ էլ թվում է, թե մենակ ինքն է Արի՞ս, էլ ուրիշ Արիստակես չկա՞: Բա որ քո ասած Արիսը չի՞նի, հանկարծ ուրիշ Արիստակես լինի, գա, զանգը տա, դու էլ դուռը բացե՞ս...

ՉԱՐՈՒՀԻ – Ուրեմն ես նրա ձայնը չեմ ճանաչո՞ւմ: Տուր...

ՀՐԱՉ – Եթե ձայնը փոխած խոսեն, դրան հետևից ո՞նց կիմանա՞ ինքն է, թե ինքը չի: Մոռացե՞լ ես, որ մտել էին տուն, ձեռ ու ոտը կապել, գցել մահճակալին, շոր խցկել բերանը, խոխոացնում էիր: Մի երկու բռպե էլ ուշ գայի շունչդ լրիվ էիր փչել: Ի՞նձ ես ասում՝ չեմ բացի... Լավ է, որ նրանք խղճով գողեր էին, բա որ էս անգամ բռնեն իսկականից խեղդեն, աղջկանդ ի՞նչ պատասխան տամ: **(Հեզմանքով)** Մի գլուխ՝ տուր հա տուր... Էդպես չի կարգն, է՛, գոքանչ մայրիկ:

ՉԱՐՈՒՀԻ – **(Իրեն կտրատելով)** Չեմ բացի, ես անգամ չեմ բացի:

ՀՐԱՉ – **(Անդրդվելի)** Կբացես:

ՉԱՐՈՒՀԻ – Չեմ բացի:

ՀՐԱՉ – Կբացես, ասում եմ...

ՉԱՐՈՒՀԻ – Քո արև, չեմ բացի:

ՀՐԱՉ – Պահ, էնքան էլ սիրում է ինձ, որ իմ արևով է երդվում:

ՉԱՐՈՒՀԻ – Լալայիս արև, չեմ բացի: Էլ ի՞նչ ասեն, որ հավատաս:

ՀՐԱՉ – Ոչ մի բան էլ մի ասա, գործի հերն էլ անիծած, չեմ զնում: **(Գալիս, նստում է սեղանի մոտ):**

ՉԱՐՈՒՀԻ – Եթե ուրիշ մարդ եղավ, ինձ թաղես, թե բացեմ:

ՀՐԱՉ – (Ուտքը ուտքովը գցած, ծխելով) Բացես-չբացես՝ ես պիտի քեզ թաղեմ, բա հո ուրիշը չի թաղելու: Դու հոգեպահուստդ մեջտեղ հանիր, նոր թաղումից խոսիր:

ՁԱՐՈՒՀԻ – Հրաչ, ուրեմն չես հավատում, հա՞, որ չեմ բացի:

ՀՐԱՉ – Հավատում եմ:

ՁԱՐՈՒՀԻ – Դե տուր բանալին:

ՀՐԱՉ – Չեմ տալիս:

ՁԱՐՈՒՀԻ – (Փղձկում է) Ես քեզ էդ տեսակ աղջիկ տամ, դու ամեն անգամ ինձ վրա բանալիով փակես դուռը, գնա՞ս... Երագո՞ւմ էիր տեսել... Դու Լալայիս նման աղջիկ կգտնեի՞ր... Չեռքդ դիր խղճիդ ասա՝ կգտնեիր, Հրաչ տղա:

ՀՐԱՉ – Չէ, չէի գտնի:

ՁԱՐՈՒՀԻ – Ես էլ գիտեմ, որ չէիր գտնի:

ՀՐԱՉ – Ավելի լավին կգտնեի:

ՁԱՐՈՒՀԻ – Դու քո ասածին հավատո՞ւմ ես: Աղջկաս համար հերթ էին կանգնել դռանս առաջ: Դու նրա ճկույթն արժե՞ս, որ քեզ նմանին տվի աղջկաս: Ո՞վ լինեք քո տեղը, որ ինձ ձեռքերի վրա չպահեր:

ՀՐԱՉ – Ուրեմն ես հեչ բան չե՞մ արժեցել:

ՁԱՐՈՒՀԻ – Իբր դու չգիտես, ի՞նձ ես հարցնում: Էդ տեսակ հասարակ ընտանիքից էլ հազիվ քեզ նմանը դուրս գար: Մորդ էլ եմ տեսել, չե՞մ տեսել...

ՀՐԱՉ – (Մայառնալից) Մորս անունը չտաս:

ՁԱՐՈՒՀԻ – Տուր, բանալին տուր:

ՀՐԱՉ – Չարիկ, ի՞նչ ես ուզում ինձնից, է՛, ի՞նչ ես ուզում ինձնից, Չարիկ:

ՁԱՐՈՒՀԻ – Իմ անունը Չարիկ չի, անամոթ: Ինչ որ ձեր տանը տեսել ես, դա ես սովորել: Քեզնից ուրիշ ի՞նչ կարելի է սպասել որ... Լալաս գա, ասելու եմ: Քեզ չքվա, թե չեմ ասելու:

ՀՐԱՉ – Ինչ ուզում ես՝ ասա, վախեցնո՞ւմ ես: Հո դու փորձա՞նք չես իմ գլխին, այ կնիկ:

ՁԱՐՈՒՀԻ – Հիմա էլ կնիկ, հա՞... Չմոռանաս էդ ասածներդ, Հրաչ տղա:

ՀՐԱՉ – Բա դու էդ ո՞նց ես ինձ անամոթ ասում, տիկին Չարուհի:

ՁԱՐՈՒՀԻ – Ես քեզ համար տիկին չեմ:

ՀՐԱՉ – Միսիս Հայաստան Չարուհի...

ՁԱՐՈՒՀԻ – Եվ ոչ էլ միսիս...

ՀՐԱՉ – Ֆրաու Չարուհի...

ՁԱՐՈՒՀԻ – Չեռ ես առնում, հա՞...

ՀՐԱՉ – Դե ասա՝ ոնց ես ուզում, էնպես ասեմ, քալ բատոնո...

ՁԱՐՈՒՀԻ – Վրացերեն էլ գիտե՞ս...

ՀՐԱՉ – Չէ, մենակ դու գիտես, մադամ Չարուհի: Ներողութուն, մադմուազել Չարուհի:

ՁԱՐՈՒՀԻ – Որ ես մադմուազել էի, դու որտե՞ղ էիր: Ուր գնում էի՝ հետևիցս էնքան էին մայում, որ վզերը ծովում էին, ինչի՞ց տեղեկություն ունես:

ՀՐԱՉ – Չարուհի Արրահամովնա, մի բան հարցնեմ, բայց խնդրում եմ՝ անկեղծ պատասխանես. աղջիկ ժամանակ էլ էիր եղպե՞ս:

ՁԱՐՈՒՀԻ – Այսինքն՝ ո՞նց...

ՀՐԱՉ – Ոնց որ հիմա...

ՁԱՐՈՒՀԻ – Դա քո իմանալու բանը չի... Տուր, մինչև չտաս, չես գնա: Հենց դուռը փակեցիր, գնացիր՝ ես ինձ լուսամուտից գցելու եմ:

ՀՐԱՉ – Երեկ չէ առաջին օրը գցած լինեիր, էսօր երկու օր կլինեիր:

ՁԱՐՈՒՀԻ – Հա՞... Բա դու չե՞ս մտածում, որ աղջիկս քեզ հետ էլ չի ապրի: Նա է աչքերը փչացնելով էս տունը պահում, դու չես պահում: Գցելու եմ... Նախօրոք զգուշացնում եմ, որ հետո չասես՝ չեմ ասել: Ինձ չեն դատելու, է՛, քեզ են դատելու:

ՀՐԱՉ – Է՛, է՛, զզվացրեց արդեն... Գցում ես՝ գցիր, հո առաջին անգամը չի՞, դու մի անգամ էլ ես քեզ գցել: Դատում եմ՝ թող դատեն, ես ջուր ծեծելու ժամանակ չունեմ: Չհասկացա, ես քե՞զ հետ եմ ամուսնացել, թե՞ քո աղջկա: Ասում եմ մորը տես աղջկան առ: Բա քեզ տեսնողը քո աղջկան կառնե՞ր, որ ես առա:

ՁԱՐՈՒՀԻ – **(Արտասովախառն, կառչելով)** Տուր, բանալին տուր:

ՀՐԱՉ – Ուշանում եմ, ինձ համբերությունից չիանես, ասում եմ... Ժամանակին քեզ էին պարեցնում, հիմա էլ դու եկել իմ տան մեջ ի՞նձ ես պարեցնում: **(Պայթելով)** Թո՛ղ... **(Հեռացնում է իրենից՝ նետվելով դուրս, դուռը կողպելով դրսից):**

ՉԱՐՈՒՀԻ – (Աղեկառութիւն, քակելով դուռը) Բաց արա, բաց արա դուռը, ես ինձ լուսամտից զգում եմ: (Շարունակելով քակել) Երևի չես հավատում, հա՞, որ զգում եմ: Կզգեմ, հետո գլխիդ գալիքը կիմանաս: (Ետ-ետ նայելով զնում է դեպի լուսամուտը) Այ, տես, տես, զնում եմ, որ զգեմ: (Վերադառնալով դռան տակ կանգնած ակնաջ է դնում) Գնա՞ց... Եթե հիմա հանկարծ էդ մարդը գա, ես ի՞նչ պիտի անեմ: (Հեռախոսի զանգ: Ուշացումով վերցնում է լսափողը) Այո... (Լացով) Հա, ես եմ... Մարդը էլի դուռը փակեց վրաս, զնաց: Մեռնեմ, պրծնեմ ավելի լավ չի՞... Կգաս, կտեսնես էլ չկամ: Ես ինձ լուսամտից զգում եմ: Չէ՛, չէ՛, չասես, զգում եմ: Ո՞ւմ է պետք իմ էսպես ապրելը, որ չզգեմ: Չհամոզես, զգում եմ: Ի՞նչ մամա, մամա եք թողե՞լ, որ մամա... Չգաս, չգաս՝ ասում եմ... (Դնում է լսափողը՝ մաքրելով արցունքները: Դրսից մուտքի դռանն է մոտենում տարեց մի մարդ՝ տերողորմյան ձեռքին: Մեղմուն է զանգի կոճակը Չարու-հին տիրապետելով իրեն մոտենում է դռանը) Ո՞վ է:

ՏԱՐԵՑ ՄԱՐԴ – Չարուհի, ես եմ, Արիսը:

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, դուռն էլի փակել եմ վրաս: Տանը մեռակ եմ, բանալի չկա, որ բացեմ: Ներողություն, ի՞նչ ասեմ...

ԱՐԻՍ – Չարուհի, էդ դո՞ւ ես:

ՉԱՐՈՒՀԻ – Հա՛, հա՛, ես եմ:

ԱՐԻՍ – Լույս քեզ տեսնողին: Բարև, Արիսն է:

ՉԱՐՈՒՀԻ – (Լացով) Բարև, Արիս, իմացա, որ դու ես:

ԱՐԻՍ – Բա էդ ինչո՞ւ ես լաց լինում, կզամ, հո դրսում չեմ մնալու:

ՉԱՐՈՒՀԻ – (Չսպելով իրեն) Չէ, լաց չեմ լինում:

ԱՐԻՍ – Գնամ, հետո գա՞մ:

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ ասեմ...

ԱՐԻՍ – Թե՞ սպասեմ...

ՉԱՐՈՒՀԻ – Ինչքա՞ն սպասես:

ԱՐԻՍ – Մինչև զան:

ՉԱՐՈՒՀԻ – Ես չզիտեմ, թե երբ կզամ: Ուզո՞ւմ ես՝ զնա, հետո արի:

ԱՐԻՍ – Հետո՞ ե՞րբ...

ՉԱՐՈՒՀԻ – Մի երկու ժամից...

ԱՐԻՍ – Չէ, կսպասեմ, մեկ էլ տեսար՝ շուտ եկան:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ՛, չէ՛, հիմա զնա, հետո կզաս:

ԱՐԻՍ – Մի քիչ սպասեմ, նոր զնամ:

ԶԱՐՈՒՀԻ – Ինչի՞ համար իզուր տեղը սպասես:
 ԱՐԻՍ – Չե՞ն ասել՝ երբ կգան:
 ԶԱՐՈՒՀԻ – Աղջիկս երևի շուտ գա, փեսաս ուշ է գալիս: Ոտքի վրա ինչքա՞ն մնաս: Գնա, կգաս, էլի:
 ԱՐԻՍ – Կգնամ, շտապ չի:
 ԶԱՐՈՒՀԻ – Արիս...
 ԱՐԻՍ – Ասա...
 ԶԱՐՈՒՀԻ – Գնա...
 ԱՐԻՍ – Կգնամ...
 ԶԱՐՈՒՀԻ – Արիս...
 ԱՐԻՍ – Հը՞...
 ԶԱՐՈՒՀԻ – Դե գնա, որ գաս: (**Հեռախոսի զանգ: Գնում, վերցնում է լսափողը**) Այո... Բարև ձեզ... Տանը չի... Ես չգիտեմ, ինձ չեն ասել... Չէ, նա էլ չկա... Դուք ինձ ասեք, ես իրենց կասեմ... 05-06, թե՞ 05-06... Սպասեք, գրեմ, որ հիշեմ... (**Գրում է**) 05-06... Խնդրեմ... Ցտեսություն... (**Դնում է լսափողը, մոտենալով դռանը**) Արիս...
 ԱՐԻՍ – Ասա...
 ԶԱՐՈՒՀԻ – Չե՞ս գնացել...
 ԱՐԻՍ – Ո՞ր գնամ...
 ԶԱՐՈՒՀԻ – Տուն գնա, որ գաս:

 ԱՐԻՍ – Գնամ տուն, որ ի՞նչ անեմ:
 ԶԱՐՈՒՀԻ – Որ մնացիր, ի՞նչ պիտի անես: Գնա, եկած կլինեն՝ կգաս: Գնա... (**Հեռախոսի զանգ: Մոտենում, վերցնում է լսափողը**) Այո... Այո... Չի լսվում... Նորից զանգահարեք: (**Դնում է լսափողը՝ մոտենալով դռանը**) Արիս...
 ԱՐԻՍ – Հը՞...
 ԶԱՐՈՒՀԻ – Ասում եմ գնա տուն, հետո կգաս էլի:
 ԱՐԻՍ – Համարիր, որ գնացել եկել եմ:
 ԶԱՐՈՒՀԻ – Չէ՛, չէ՛, գնա: (**Հեռախոսի զանգ: Վերցնում է լսափողը**) Այո... Ձանգահարել ես, դե խոսիր, ինչո՞ւ չես խոսում: Էդ մարդն եկել է, դրսում կանգնած է, հիմա ես նրան ի՞նչ պատասխան տամ... Գիտես, թե չգիտես, որ դու ես զանգահարողը, անամոք Հրաչ տղա: (**Դնում է՝ գնալով դեպի դուռը**) Արիս...
 ԱՐԻՍ – Հը՞...
 ԶԱՐՈՒՀԻ – Դեռ եդտե՞ղ ես:
 ԱՐԻՍ – (**Շարունակ տերթոզրմյայի հետ**) Բա որտե՞ղ լինեմ:

ՉԱՐՈՒՀԻ – Տանջվում ես ախր, մեղք ես, գնա, որ գաս:

ԱՐԻՍ – Վախենում եմ գնամ, գամ, շենքն էլ չգտնեմ:

ՉԱՐՈՒՀԻ – Դու չգտնես, ես տնից դուրս կգամ, քեզ կգտնեմ:

ԱՐԻՍ – Բա էդ ինչի՞ համար եմ ամեն անգամ վրադ փակում

դուռը:

ՉԱՐՈՒՀԻ – Շա՞տ գիտեմ... Գողերից եմ զգուշանում: Ձգվել եմ արդեն, քիչ է մնում գլուխս առնեմ, գնամ կորչեմ: **(Փղճկում է):**

ԱՐԻՍ – Լաց մի լինի, ցավդ տանեմ, լաց մի լինի:

ՉԱՐՈՒՀԻ – **(Սրբելով արցունքները)** Եկել ես, էլի չեմ կարողանում դուռը բացեմ: **(Հեռախոսի զանգ)** Ալո... Էլի դո՞ւ ես: Չունենամ, չունենամ քեզ... Կյանքումդ լավ օր չտեսնես, Հրաչ տղա: **(Փղճկում է՝ դնելով լսափողը)** Արիս...

ԱՐԻՍ – Լաց մի լինի, ցավդ տանեմ, կգամ, հո դրսում չե՞մ մնալու: Էդ ո՞վ էր զանգահարողը:

ՉԱՐՈՒՀԻ – Փեսաս... Բոպեն մեկ զանգահարում է՝ չի խոսում: Վախենում է՝ ինձ լուսամուտից զցեմ:

ԱՐԻՍ – Ինչի՞ համար զցես, ցավդ տանեմ:

ՉԱՐՈՒՀԻ – Բա իմ էսպես ապրելն ո՞ւմ է պետք, սա ապրե՞լ է, որ ես եմ ապրում: Սի օր չի, երկու օր չի, երեք օր չի, մինչև ե՞րբ... Ես էլ մարդ եմ, չէ՞:

ԱՐԻՍ – Լաց մի լինի, ցավդ տանեմ, լաց մի լինի: Ինձ էլ ես լացացնում ախր...

ՉԱՐՈՒՀԻ – Դե գնա, էլ մի կանգնիր:

ԱՐԻՍ – Բա ես էլ կգնա՞մ...

ՉԱՐՈՒՀԻ – Ինձ թաղես, թե չգնաս:

ԱՐԻՍ – Մինչև դու ինձ չթաղես, ես քեզ ո՞նց կթաղեմ:

ՉԱՐՈՒՀԻ – Գնա, էլի, խնդրում եմ:

ԱՐԻՍ – Ես քեզ էդպես ո՞նց թողնեմ, գնամ:

ՉԱՐՈՒՀԻ – Արդեն լավ եմ, անցավ, դե գնա, որ գաս:

ԱՐԻՍ – Կգնամ, շտապ չի:

ՉԱՐՈՒՀԻ – Ասում ես կգնամ, բայց էլի մնում ես: Գնա...

ԱՐԻՍ – Գնում եմ...

ՉԱՐՈՒՀԻ – Հաջողությո՜ւն...

Արիսը թաշկինակ է հանում գրպանից, փռում է աստիճանահարթակին նստելով վրան:

Հեռախոսի զանգ:

ՉԱՐՈՒՀԻ – Ալո... Ի՞նչ է, ի՞նչ ես ուզում ինձնից... Ուզում ես իմանալ՝ ես ինձ զցել եմ, թե չեմ զցե՞լ: Գցե՛լ եմ, զցե՛լ եմ, էլ չզանգա-

հարես: **(Գնելով լսափողը)** Չոքանչների անունն է դուրս եկել, է՛ղ, է՛ղ ծոտոտները մեր գլխին ինչ խաղ ասես խաղում են: **(Մտանում է դռանը)** Արիս...

ԱՐԻՍ – **(Որ աչքերը փակ ետ ու առաջ է մղվում չհաղթահարելով քունը)** Հը՞...
ՉԱՐՈՒՀԻ – Ինչքա՞ն պիտի սպասես, հոգնեցիր, դե գնա էլի:

Մեղք ես, ոտքի վրա կանգնել ես:

ԱՐԻՍ – **(Մթափվելով)** Կանգնած չեմ, նստել եմ:

ՉԱՐՈՒՀԻ – Վեր կաց շորերդ կկեղտոտվեն:

ԱՐԻՍ – Թաշկիմակս զցել եմ տակս, չեն կեղտոտվի:

ՉԱՐՈՒՀԻ – Սառը բետոնին նստել ես, կմրես:

ԱՐԻՍ – Սառը չի:

ՉԱՐՈՒՀԻ – Ո՞նց չի սառը, որ սառն է:

ԱՐԻՍ – Առաջ էր սառը, հիմա էլ սառը չի: Չեկա՞ն:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ... Որ գան, դու էլ կիմանաս, էդ դռնից են ներս մտնելու:

ԱՐԻՍ – Տանը գործ կունենաս, դե դու գնա քո գործին, որ ես էլ գնամ: **(Աչքերն աստիճանաբար փակվում են, տերողորմյան ընկնում է ձեռքից):**

ՉԱՐՈՒՀԻ – Ես գնացի, դե դու էլ գնա: **(Հեռախոսի զանգ)**

Այո... Վրաս դուռը փակեցիր, գնացիր, էլի չպրծա՞ք քեզնից: Վերևում Աստված կա, բա դու չե՞ս վախում: Չանգահարել ես, դե խոսիր: Բա դու գետինը չե՞ս մտնում, որ էդ ութսուն տարեկան մարդն եկավ, էլի քողեց գնաց: **(Չգուշորեն շրջանցելով Արիսին, դռանն է մտանում Լալան)** Ես ինձ զցում եմ, էլ չգանգահարես, մեկ է՛ վերցնող չի լինելու: **(Լսափողը դնում է՝ շրջվելով դեպի դուռը, որտեղից անցքի մեջ խաղացվող բանալու ձայն է լսում: Լալան մտնում է՝ նետվելով մոր զիրկը: Իրար փաթաթված հեկեկում են):**

ԼԱԼԱ – **(Արցունքների միջից)** Ասացի՛ մեկ էլ մորս կտեսնե՞մ կենդանի:

ՉԱՐՈՒՀԻ – Բա մարդդ ինչի՞՞ համար է ամեն անգամ դուռը փակում վրաս ու գնում:

ԼԱԼԱ – **(Ձեռքշանքով մաքրում է մոր արցունքները)** Քո ապահովության համար, մամ ջան... Տեսա՞ր մի անգամ գողերը մտան, ինչ արին...

ՉԱՐՈՒՀԻ – Մի անգամ որ եկան, հո ամեն անգամ չե՞ն գալու:

ԼԱԼԱ – Բա ինչո՞ւ ասացիր՝ ես ինձ լուսամուտից գցում եմ:
Ծնկներս թուլացան, բերին սրտի դեղ տվին: Թույլտվություն եմ
վերցրել եկել: **(Շոյելով մոր մազերը)** Հանգստացիր, սիրուն ջան:

ՉԱՐՈՒՀԻ – Ո՞նց հանգստանամ, որ էլի եմ մեծ մարդն եկավ,
թողեց գնաց:

ԼԱԼԱ – Ի՞նչ մարդ...

ՉԱՐՈՒՀԻ – Որ զանգահարել էր...

ԼԱԼԱ – Գնաց, էլի կգա: Տրամադրությունդ մի գցիր, մամ ջան:

Մեկն էլ եկել, մուտքի աստիճանների վրա նստած քնել է:

ՉԱՐՈՒՀԻ – **(Ցնցվելով)** Ո՞վ... **(Արագ դուրս է գնում):**

ԼԱԼԱ – Մամ, էդ ո՞ւր... **(Գնում է ետևից):**

ՉԱՐՈՒՀԻ – **(Հակված ծերունու վրա)** Արի՞ս...

ԱՐԻՍ – **(Վեր է թռչում բացելով աչքերը)** Հը՞...

ՉԱՐՈՒՀԻ – Քոռանամ ես, բաց-բաց քնել է ես մարդը:

ԼԱԼԱ – Ի՞նքն է...

ՉԱՐՈՒՀԻ – Հա, բա էլ ո՞վ...

ԱՐԻՍ – Չէ, չեմ քնել, աչքերս էին փակվել:

ԼԱԼԱ – Հայրիկ, վեր կացեք, կմրսեք: **(Ընկած տերողորմյան
տալիս է ծերունուն):**

ԱՐԻՍ – **(Կանգնելով)** Չէ, չեմ մրսի, տակից տաք եմ հազել:

ՉԱՐՈՒՀԻ – Թաշկինակդ վերցրու:

ԱՐԻՍ – Կվերցնեմ: Բարև ձեզ:

ՉԱՐՈՒՀԻ – Բարև: Ես քեզ չասացի՞ գնա, հետո էլի կգաս:

ԱՐԻՍ – Դե որ եկել էի, էլ ո՞նց գնայի: Ալարեցի:

ԼԱԼԱ – Մամ, տուն հրավիրիր:

ՉԱՐՈՒՀԻ – Ծանոթացիր, աղջիկս է:

ԼԱԼԱ – Լալա...

ԱՐԻՍ – **(Մեղմելով Լալայի ձեռքը)** Արիստակես...

ՉԱՐՈՒՀԻ – Արի: **(Ծերունուն ուղեկցում են ներս):**

ԼԱԼԱ – Նստեք, հայրիկ:

ԱՐԻՍ – Շնորհակալ եմ: **(Նստում է ծոցագրպանից հանելով
խունացած լրագրից կտրված մի լուսանկար)** Հեռախոսով որ ասացի՞
քեզ բան ունեմ տալու, սա էր, բերել եմ:

*(Չարուհին վերցնում է հեռավոր վերհուշի ժպիտը դեմքին
աչքի անցկացնում լուսանկարը):*

ԼԱԼԱ – **(Հափշտակված)** Էդ դո՞ւ ես, մամ: Տուր, ես էլ գայեմ:
(Չեռն է առնում՝ հայացքը չկտրելով լուսանկարից, զվարթացած)

Վա՛յ, մորս երեխա ժամանակ թերթում նկարել են պարելիս: Մամ, քանի՞ տարեկան էիր:

ՁԱՐՈՒՀԻ – Տասներեք, տասնչորս երևի...

ԼԱԼԱ – (Արիսիճ) Բա էդ ո՞նց եք պահել էքքան տարի:

ԱՐԻՍ – Ցելոֆանի մեջ:

ԼԱԼԱ – (Չկտրվելով լուսանկարից) Բայց ի՛նչ հետաքրքիր է...

ՁԱՐՈՒՀԻ – Տուր... (Վերցնում է՝ շարունակելով մայել ինքն իրենից վերացած):

ԼԱԼԱ – Մամ, հիմա էդ դո՞ւ ես...

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, առաջ եմ ես եղել, հիմա էլ ես չեմ:

ԼԱԼԱ – (Արիսիճ) Դո՞ւք եք մեծ, թե՞ մայրս:

ԱՐԻՍ – Ինքն ինձնից մի տարով փոքր է: Ես տասնհինգ տարեկան էի, ինքը տասնչորս: Ես փոխադրվել էի ութերորդ դասարան, ինքը յոթերորդ: Ինքն աղջիկների դպրոցում էր սովորում, ես՝ տղաների: Իմ անձնագիր հանելու ժամանակ, ճիշտն ասած, ծննդականս կորել էր: Նորը հանեցինք: Ողորմածիկ մերս ասում էր՝ ինչ որ անձնագրում գրել են, դա քո իսկական թիվը չի, երկու տարով փոքրացրել են: Յոթանասունն անց եմ, ութսունին մոտ, յոթանասունութ երևի...

ԼԱԼԱ – Դուք ինձ ներեցեք, ես հենց հիմա... (Անցնում է կից սենյակը):

ԱՐԻՍ – Աղջիկդ քեզ մման էր:

ՁԱՐՈՒՀԻ – Էլ ո՞վ ունեմ իրենից բացի... Շա՞տ եմ փոխվել:

ԱՐԻՍ – Չէ, դու ո՞նց կփոխվես:

ՁԱՐՈՒՀԻ – Ինչ իմանամ...

ԱՐԻՍ – (Գրպանից հանում է ակնոցը, դնում է՝ աչքի անցկացնելով լուսանկարը) Տարա, քսերոքսի տեղը փակ էր: Տուր տանեմ, մի հատ էլ ինձ համար հանել տամ, քոնը բերմ, էլի տամ քեզ:

ՁԱՐՈՒՀԻ – (Լուսանկարը վերցնելով ձեռքից, աղջկական ժամանակների ուշացած չարամճիությունը) Չէ...

ԱՐԻՍ – Բա ես չունեմա՞մ: (Հանում է ակնոցը՝ դնելով մի կողմ):

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, ասացի...

ԱՐԻՍ – Ոնց կուզես... Քանի՞ սենյակ է:

ՁԱՐՈՒՀԻ – Երկու:

ԱՐԻՍ – Քիչ չի՞:

ՁԱՐՈՒՀԻ – Դե հիմա ես է...

ԱՐԻՍ – Դու որտե՞ղ ես քնում:

ՁԱՐՈՒՀԻ – Էստեղ...

ԱՐԻՍ – Հորդ անունը Վազգեն էր, մորդ անունը՝ Մարգո...
 Հորդ աչքերը կապույտ էին, դու հորդ էիր գցել: Երկու ախպեր ունեիր:
 ՁԱՐՈՒՀԻ – Ինձնից փոքր քույր էլ ունեի:
 ԱՐԻՍ – Իսկապե՞ս... Բա էդ ո՞նց է, որ ես չեմ իմացել: Չա-
 րուհի...
 ՁԱՐՈՒՀԻ – Ասա...
 ԱՐԻՍ – Մի բան էի ուզում ասեմ, մոռացա:
 ՁԱՐՈՒՀԻ – Որ հիշես, կասես:
 ԱՐԻՍ – Ամենաառաջին անգամ, որ քեզ տեսա, գիտե՞ս ինչ
 եղավ...
 ՁԱՐՈՒՀԻ – Ի՞նչ եղավ:
 ԱՐԻՍ – Ես էլ չիմացա, թե ինչ եղավ:
 ՁԱՐՈՒՀԻ – Բա որ չիմացար, էլ ի՞նչ ես ասում:
 ԱՐԻՍ – Ոչ մի բան: Աշխարհը ոնց որ թե մի տեսակ...
 ՁԱՐՈՒՀԻ – Ի՞նչ...
 ԱՐԻՍ – Մի տեսակ եղավ... Թռչակդ ինչքա՞ն է:
 ՁԱՐՈՒՀԻ – Չորս հազար է, հինգ հազար է... Չեմ էլ իմանում:
 Իրենք են ստանում, ծախսում:
 ԱՐԻՍ – Դու ինձ տեսա՞ր:
 ՁԱՐՈՒՀԻ – Ե՞րբ...
 ԱՐԻՍ – Որ ես քեզ տեսա:
 ՁԱՐՈՒՀԻ – Չէ:
 ԱՐԻՍ – Բա էդ ո՞նց ես քեզ տեսա, որ դու ինձ չտեսար:

 ՁԱՐՈՒՀԻ – Կարող է տեսել եմ, չեմ հիշում:
 ԱՐԻՍ – Չէ, չտեսար, ես քեզ տեսա:
 ՁԱՐՈՒՀԻ – Դե որ դու ինձ տեսել ես, երևի ես էլ քեզ տեսած
 լինեմ:
 ԱՐԻՍ – Կարող է՝ տեսար, բայց չիմացար, որ ես եմ: Ես իմա-
 ցա, որ դու ես, դու չիմացար, որ ես եմ:
 ՁԱՐՈՒՀԻ – Բա դու էդ ո՞նց իմացար, որ ես եմ:
 ԱՐԻՍ – Ո՞նց չիմանայի, որ դու էիր:
 ՁԱՐՈՒՀԻ – Անունս գիտեի՞ր:
 ԱՐԻՍ – Չէ:
 ՁԱՐՈՒՀԻ – Հետս խոսացած կայի՞ր:
 ԱՐԻՍ – Չէ:
 ՁԱՐՈՒՀԻ – Ուրիշ անգամ ինձ տեսած կայի՞ր:
 ԱՐԻՍ – Չէ:

ԶԱՐՈՒՀԻ – Հետո ի՞նչ եղավ:
 ԱՐԻՍ – Գնացիր:
 ԶԱՐՈՒՀԻ – Ո՞ւր գնացի:
 ԱՐԻՍ – Չիմացա: (Հար է դնում լեզվի տակ) Քեզ էլ տա՞մ:
 ԶԱՐՈՒՀԻ – Ինչի՞ համար է:
 ԱՐԻՍ – (Տալով) Վերցրու, ասեմ... Դիր լեզվիդ տակ:
 ԶԱՐՈՒՀԻ – Թա՞նկ դեղ է:
 ԱՐԻՍ – Հա, դիր... Որ օգուտ չտա, վնաս էլ չի տա:
 ԶԱՐՈՒՀԻ – (Դնելով լեզվի տակ) Բա չիմանա՞մ ինչի հա-
 մար է:
 ԱՐԻՍ – Սրտի... Սրտից ո՞նց ես...
 ԶԱՐՈՒՀԻ – Սի՞րտ եմ թողել, որ իմանամ:
 ԱՐԻՍ – Ճնշմանն էլ է օգուտ:
 ԶԱՐՈՒՀԻ – Քոնն ինչքա՞ն է:
 ԱՐԻՍ – Ի՞նչը:
 ԶԱՐՈՒՀԻ – Թոշակդ:
 ԱՐԻՍ – Քոնի չափ: Ստանում, տալիս եմ ախպորս թոռներին,
 որ իրենց համար կոնֆետ առնեն: Թոշակի հույսին չեմ... Փառք
 Աստծո...
 ԶԱՐՈՒՀԻ – Բա որ ես թողեցի-գնացի, դու ի՞նչ արիր:
 ԱՐԻՍ – Ե՞րբ...
 ԶԱՐՈՒՀԻ – Էդ որ ասում ես...
 ԱՐԻՍ – Ոչ մի բան, կանգնեցի, մնացի կանգնած:

 ԶԱՐՈՒՀԻ – Չգնացի՞ր:
 ԱՐԻՍ – Էլ ո՞ւր գնայի: Գնացի... Դե հո կանգնած չեմ մնացել:
 ԶԱՐՈՒՀԻ – Ո՞ւր գնացիր:
 ԱՐԻՍ – Չիմացա: Ճնշում ունե՞ս:
 ԶԱՐՈՒՀԻ – Հա, բա ո՞նց... Դա՞ էլ չունենամ:
 ԱՐԻՍ – Ինչքա՞ն է:
 ԶԱՐՈՒՀԻ – Չափե՞լ եմ, որ իմանամ:
 ԱՐԻՍ – Բա էլ ո՞նց ես ասում, որ ունես:
 ԶԱՐՈՒՀԻ – Որ բարձրանում է՝ գլխիս ցավից զգում եմ, որ
 բարձրանում է:
 ԱՐԻՍ – Մեծակ բարձրանալիս ես զգո՞ւմ, իջնելիս չես զգո՞ւմ,
 որ իջնում է:
 ԶԱՐՈՒՀԻ – Չէ, ոտքերս եմ թուլանում, գլխացավս անցնում է:

ԱՐԻՍ – Բա որ դու ինձ երկրորդ անգամ տեսար, ի՞նչ մտածեցիր:

ՁԱՐՈՒՀԻ – Ես քեզ երկրորդ անգամ չէի տեսնում, դու էիր ինձ երկրորդ անգամ տեսնում, ես քեզ առաջին անգամ տեսա եղ օրը:

ԱՐԻՍ – Ուտքերդ տաք ջրի մեջ չե՞ս դնում:

ՁԱՐՈՒՀԻ – Ինչի՞ համար:

ԱՐԻՍ – Որ ճնշումդ իջնի:

ՁԱՐՈՒՀԻ – Դնում եմ, բայց երկար չեմ պահում, որ շատ չիջնի: Բա դու ի՞նչ մտածեցիր, որ երկրորդ անգամ ինձ տեսար:

ԱՐԻՍ – Շշմեցի... Մտքիս մեջ ասացի՝ սա նա է... Աչքերիս չէի հավատում:

ՁԱՐՈՒՀԻ – Շա՞տ ժամանակ էր անցել առաջին անգամից հետո, որ տեսել էիր:

ԱՐԻՍ – Երևի մի երկու ամիս... Ես տանը գործիք ունեմ, իմն ամեն օր չափում եմ, կրբերեմ, քոնն էլ կչափեմ:

ՁԱՐՈՒՀԻ – Բա եղ ո՞նց եղավ, որ եղպես եղավ:

ԱՐԻՍ – Ի՞նչը...

ՁԱՐՈՒՀԻ – Որ էլի ինձ տեսար:

ԱՐԻՍ – Ես էլ չիմացա... Վերևում Աստված կա, ո՞նց չտեսնեի... Որտեղ էլ լինեիր, մեկ է, ես քեզ էի տեսնելու, դու՝ ինձ: Ջերմուկի մեջ մածուն լցրու, խմիր քնելուց առաջ:

ՁԱՐՈՒՀԻ – Դա էլ եմ անում:

ԱՐԻՍ – Չի օգնո՞ւմ:

ՁԱՐՈՒՀԻ – Օգնում է, էլ չի բարձրանում, բայց որ իջնում է, հիմա էլ դրանից եմ վատանում:

ԱՐԻՍ – Ես քեզ դեղ կտամ, որ ոչ իջնի, ոչ էլ բարձրանա: Հիշո՞ւմ ես...

ՁԱՐՈՒՀԻ – Ի՞նչը...

ԱՐԻՍ – Որ մի անգամ տետրի կապույտ գծերով փայլուն թուղթ էի ճարել ու երկու տող բան գրել:

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ հիշում:

ԱՐԻՍ – Բերեցի, տվեցի քեզ, ո՞նց չես հիշում:

ՁԱՐՈՒՀԻ – Բա ես ի՞նչ արեցի:

ԱՐԻՍ – Քեզ նման ժպտալով կարդացիր, հետո ճնթեցիր, զցեցիր աշակերտական նստարանիդ դարակը:

ՁԱՐՈՒՀԻ – Ի՞նչ էիր գրել:

ԱՐԻՍ – Չգիտեի, թե ոնց ասեմ՝ քեզ սիրում եմ, էդ երկու տողը բռնեցի մի բանաստեղծությունից արտագրեցի, տվեցի քեզ: Հիշո՞ւմ ես:

ՁԱՐՈՒՀԻ – (Մեղավոր, խորամանկ ժպիտը դեմքին) Հա, հիշում եմ:

ԱՐԻՍ – Դու էդ թուղթը չճանաչեցիր, է՛, ինձ ճանաչեցիր, զգեցիր դարակը, այ անխիղճ: Հիշո՞ւմ ես...

ՁԱՐՈՒՀԻ – (Երանություն) Բա չեմ հիշո՞ւմ...

ԱՐԻՍ – Մեկնումեկը էդ թուղթը հիմա գտներ, տար ինձ... Հոչքարձրացա՞վ...

ՁԱՐՈՒՀԻ – Ի՞նչը...

ԱՐԻՍ – Ճնշումդ:

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, ոնց որ թե իջնում է:

ԱՐԻՍ – Ի՞նչ բարձրանում է, ես էլ իմացա, թե քոնն է բարձրանում: Որ էդքան տարի խռով եմք եղել, վախենում էի զանգահարեմ հետս չխոսես:

ՁԱՐՈՒՀԻ – Հեռախոսի համարը բա որտեղի՞ց էիր իմացել:

ԱՐԻՍ – Չեր դասարանի Մարոյին տեսա մի օր, նա տվեց:

ՁԱՐՈՒՀԻ – Մարո՞... Մեր դասարանում Մարո չի եղել:

ԱՐԻՍ – Բա համարդ որտեղի՞ց գիտեր, որ ինքը չի եղել:

ՁԱՐՈՒՀԻ – Կարող է՛ ինքն է եղել, բայց անունը Մարո չի եղել:

Մարին է եղել, Մարոն չի եղել:

ԱՐԻՍ – Հա, հա, Մարին էր: Իմ հազի են պապիների սպիտակ կտորից կարած կիտելը հիշո՞ւմ ես: Մառլյայի նման բարակ կտորից, վերնաշապիկի տեղ էինք հագնում, մոդա էր: Մատդ դրիր ցայտադրյուրին, ջուրը պզգացրիր վրաս, թրջեցիր, տեսից ընկավ: Հազել, եկել էի, որ տեսնես: Հիշո՞ւմ ես...

ՁԱՐՈՒՀԻ – (Օրորելով գլուխը) Չէ, չեմ հիշում:

ԱՐԻՍ – Մեր դասարանի Ալբերտն էլ իրենց շենքի երկրորդ հարկի պատշգամբում քնած էր էդ առավոտ: Զեզ ցույց տվի: Հիշո՞ւմ ես...

ՁԱՐՈՒՀԻ – (Շարունակելով օրորել գլուխը) Չէ, ոնց որ թե չեմ հիշում...

ԱՐԻՍ – Մի օր էլ տրամվայի վերջին դռնից թռա, ընկա քարերին, էդ կիտելս համ ճղճղվեց, համ էլ մազութուովեց, էլ չհագա: Ծնկներս էլ արյունոտվել էին: Ես միշտ էլ վերջին վագոնի վերջին դռնից էի թռչում: Աչքերից ո՞նց ես...

ՉԱՐՈՒՀԻ – Մեկն էնքան էլ լավ չի, էն մեկն էլ՝ էնքան էլ վատ չի:

ԱՐԻՍ – Դեղ կտամ, կկաթեցնես օրն երկու անգամ: Էդ ո՞նց պատահեց, որ դու ինձ հետ էլ չխոսեցիր: Ախր ոչ մի բան չէր եղել մեր մեջ:

ՉԱՐՈՒՀԻ – Որ բուրբն էլ իմացել էին, դրա համար...

ԱՐԻՍ – Ցավդ տանեմ, երեխա էինք, ախր ձեռք բռնած էլ չկայի, ի՞նչն էին իմացել:

ՉԱՐՈՒՀԻ – Ուր գնում էի՝ ետևիցս Արիս էին գոռում: Ասում էի՝ ինչո՞ւ է գնացել ամեն տեղ ասել, որ ինձ գժվեցնում են:

ԱՐԻՍ – Բա որ չասեի, մեջս ո՞նց պահեի: Մեռակ քեզ չէին գժվեցնում, ինձ էլ էին գժվեցնում: Իմ ետևից էլ Չարիկ էին կանչում եղ հիմարները: Ինչո՞ւ էիր բանի տեղ դնում:

ՉԱՐՈՒՀԻ – Ասում էի՝ ուրեմն ինքն ինձ չի ուզում, դրա համար է գնում սրա-նրա մոտ ինձնից խոսում, որ գալիս, գժվեցնում են:

ԱՐԻՍ – Նախանձությունից են արել: Ես նրանց գժվացնելով չէի գժվում, ես քեզ տեսնելու օրից էի գժվել: Եթե դու չլինեիր, ես իմ կյանքից ի՞նչ պիտի հասկանայի: Բա սա կյա՞նք է: Քո հանդեպ մեռակ մի անգամ եմ սխալ արել, մինչև հիմա տանջվում եմ անմեղ տեղը: Եթե ներողություն խնդրեմ, Չարուհի, դու ինձ կներե՞ս:

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ ես արել, որ...

ԱՐԻՍ – Չէ՛, չէ՛, ասա, կներե՞ս...

ՉԱՐՈՒՀԻ – Իմանամ՝ ինչ ես արել, որ ներեմ:

ԱՐԻՍ – Մի՞նասյանի հետ որ մի օր եկանք ձեր տուն...

ՉԱՐՈՒՀԻ – Մի՞նասյանն ո՞վ է:

ԱՐԻՍ – Իմ մաթեմատիկայի դասատուն, որ քեզ հետ էլ էր պարապում... Չախկալ...

ՉԱՐՈՒՀԻ – Չեմ հիշում:

ԱՐԻՍ – Այրոմդ բերիր, լուսանկարներդ ցույց տվիր, էնքան լավն էիր, որ խելքս մաղվեց, ինչ որ պիտի ասեի, լրիվ հակառակն ասացի: Ես քքեմ իմ երեսին, վատ բան ասացի:

ՉԱՐՈՒՀԻ – Չեմ հիշում:

ԱՐԻՍ – Բայց ներո՞ւմ ես:

ՉԱՐՈՒՀԻ – Դե որ չեմ հիշում, ինչո՞ւ պիտի չներեմ:

ԱՐԻՍ – Հիշում ես, ասում ես՝ չեմ հիշում: Ներո՞ւմ ես...

ՉԱՐՈՒՀԻ – Հա...

ԱՐԻՍ – Շնորհակալ եմ... Փառք Աստծո... Նոր որ խիղճս
հանգըստացավ: Դու ինչքան ուզում ես ներքի, մեկ է, ես ինձ չեմ
ներում:

ՉԱՐՈՒՀԻ – Դու էլ ես աչքերից բողոքում:

ԱՐԻՍ – Չախից բողոքում եմ, աջից չեմ բողոքում, աջս մի
տասը տարի առաջ վիրահատել եմ:

ՉԱՐՈՒՀԻ – Ինձ տեսնո՞ւմ ես ձախով:

ԱՐԻՍ – Քեզ ձախով էլ եմ տեսնում, աջով էլ: Վաթսունհինգ
տարի ձեռք ականջներինս մեջ պահել եմ, որ չտեսնե՞մ... Աչքերս
փակ էլ քեզ կտեսնեմ: Քեզ էլ որ չտեսնեմ, բա իմ տեսողությունն ինձ
էլ պե՞տք է: Ես ձեր շեմքի մայթով չէի անցնում, դիմացի մայթով էի
զնում-զալիս: Զո կողմը չէի նայում, բայց քեզ տեսնում էի: Դու էլ իմ
կողմը չէիր նայում, բայց ինձ տեսնում էիր: Յոթերորդ հարկ բարձ-
րանալը դժվար չի՞: Լիֆտը որ չի աշխատում, բա ո՞նց ես անում:

ՉԱՐՈՒՀԻ – Իբր բողոքում եմ, որ սնից դուրս գամ: Ասում եմ՝
սկլերոզ ունես, կզնաս կկորչես:

ԱՐԻՍ – Ունե՞ս:

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ...

ԱՐԻՍ – Սկլերոզ:

ՉԱՐՈՒՀԻ – Շատ գիտե՞մ... Խե՞ղք եմ թողել, որ դրածս բանի
տեղն իմանամ:

ԱՐԻՍ – Մի բաժակ կաթի մեջ երկու կաթիլ յոդ կլցնես, ավել
չլցնես, ու կխմես մի տասնհինգ օր:

ՉԱՐՈՒՀԻ – Փորձե՞լ ես:

ԱՐԻՍ – Եթե փորձած չլինեմ, չեմ ասի: Բայց մի օր խմում էի,
մյուս օրը մոռանում էի, որ խմեմ: Զնելուց առաջ կխմես, քնելուց
հետո չխմես: Չարուհի...

ՉԱՐՈՒՀԻ – Ասա:

ԱՐԻՍ – Դու ասա:

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ ասեմ:

ԱՐԻՍ – Մի բան ասա էլի...

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ ես ուզում, որ ասեմ:

ԱՐԻՍ – Օր չի եղել, որ քեզ չհիշեմ, դու ինձ հիշե՞լ ես:

ՉԱՐՈՒՀԻ – Չեմ հիշում՝ հիշել եմ, թե չեմ հիշել:

ԱՐԻՍ – Դե եթե չես հիշում՝ հիշել ես, թե չես հիշել, ուրեմն
հիշել ես:

ՉԱՐՈՒՀԻ – Էս անտեր սկներոզը թողնում է, որ բան հիշեմ, մեկ-մեկ թռռներիս անուններն էլ եմ մոռանում:

ԱՐԻՍ – Բա ո՞նց անենք, որ էլի հետ գնանք էնտեղ: Մի անգամ էլ, հիշո՞ւմ ես, ձմեռ էր, բայց արև էր, ձյունը հալվում էր: Դու մեկի հետ իջնում էիր փողոցով. տղա էր, ես էլ ձեր ետևից գալիս էի: Չէի լսում, թե ինչ էք խոսում:

ՉԱՐՈՒՀԻ – Բա ինչո՞ւ էիր գալիս:

ԱՐԻՍ – Բա ո՞ր գնայի... Չախ ոտքիդ կոշիկի կրունկն էլ ծովել էր:

ՉԱՐՈՒՀԻ – Հո շա՞տ չէր ծովել:

ԱՐԻՍ – Չէ, մի՛ ի՛ քիչ... Չյուների մեջ չէր երևում, ձյունից ոտդ հենց հանում էիր, նոր էր երևում: Տակերն էլ փափուկ, սպիտակ կաուչուկից էին: Բաց շագանակագույն էին, էնքան էլ բաց չէին, բայց մուգ էլ չէին: Էդ կոշիկներդ հիշո՞ւմ ես:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ հիշում: Այսինքն՝ ոնց որ թե հիշում եմ, չէ, բայց չեմ հիշում:

ԱՐԻՍ – Դրանցից հիմա էլ չկան: Քանի՞ սենյակ է:

ՉԱՐՈՒՀԻ – Երկու:

ԱՐԻՍ – Քիչ չի:

ՉԱՐՈՒՀԻ – Դե հիմա էս է...

ԱՐԻՍ – Դու որտե՞ղ ես քնում:

ՉԱՐՈՒՀԻ – Էստեղ...

ԱՐԻՍ – Հա, ասել ես... Մի անգամ էլ, հիշո՞ւմ ես...

ՉԱՐՈՒՀԻ – Չէ, չեմ հիշում...

ԱՐԻՍ – Որ լավ մտածես, կհիշես... Մարոյենց շենքի երկրորդ հարկի պատշգամբում ընկերուհիներով կանգնած էիք, վերևից ծիծաղեցիք ինձ վրա, թողեցի գնացի: Մի անգամ էլ քեզ կենտրոնական փոստում տեսա հեռվից, մի երեսուն-քառասուն տարի առաջ էր երևի... Քաղաքը մեծացավ, իրար կորցրինք: Եթե քեզ չէի տեսնելու, էլ ինչի՞ համար դուրս գալի տնից: Դուրս գալի որ ի՞նչ... Սա մեր քաղաքը չի, նա էր մեր քաղաքը: Աղերդ ցավացնո՞ւմ եմ:

ՉԱՐՈՒՀԻ – Արթուն ժամանակ ցավացնում եմ, քնած ժամանակ չեմ ցավացնում:

ԱՐԻՍ – Ինչքան շատ քնես՝ քո օգուտն է, իբր էսպես արթուն մնում եմք որ ինչ... Մեկ-մեկ էլ ձեռքով-ոտքով վարժություններ արա առավոտները:

ՉԱՐՈՒՀԻ – Անում եմ:

ԱՐԻՍ – Հիմա ի՞նչ ես ասում՝ չես տալի՞ս, տանեմ քսերոքսի տեղը, մի հատ էլ հանեն, քոնն էլի բերեմ տամ քեզ:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ, ասացի...

ԱՐԻՍ – Ո՞նց ես:

ՉԱՐՈՒՀԻ – Ոնց պիտի լինեմ, ամեն առավոտ փեսաս դուռը բանալիով էսպես փակում է վրաս ու թողնում, գնում: Լավ էր աղջիկս եկավ, դրսում չմնացիր:

ԱՐԻՍ – Բա ինչո՞ւ է փակում:

ՉԱՐՈՒՀԻ – Վախենում եմ բացեմ, գող մտնի: Մի անգամ մտել են, ինձ կապել, զցել մահճակալին: Ինչ որ ձեռներն է ընկել, տարել են տնից:

ԱՐԻՍ – Ո՞նց թե... Բա ինչո՞ւ էիր դուռը բացել:

ՉԱՐՈՒՀԻ – Չէի բացում, համոզեցին, բացեցի:

ԱՐԻՍ – Էս ի՞նչ է ասում... Հետո՞...

ՉԱՐՈՒՀԻ – Նոր չի եղել, վաղուց է եղել էդ դեպքը:

ԱՐԻՍ – Չարուհի, երեխա՞ ես, բա ամեն մարդու առաջ դուռ կբացե՞ն, ցավդ տանեմ: Հիմա վախեցել ես կարգին:

ՉԱՐՈՒՀԻ – Ինչքան երդվում եմ, որ էլ չեմ բացի, չեմ հավատում: Իմ բնակարանը ծախել տվին, փեսաս ավտո առավ, դրեց տակը, թե չէ ես մի քոպե չէի մնա էստեղ: Աղջիկս հենց գնում է, ուտում է հոգիս: Կանգնում՝ երեսիս ինչ ասես ասում է, ոնց ուզում հետս խոսում է: Վա՛յ, զզվել եմ, էլ չեմ դիմանում: Չեմ ուզում դրա երեսը տեսնել, չեմ ուզում: Ինչ խաղ ասես խաղացել է իմ գլխին: Ոնց որ իր աչքի գրողը լինեմ: Երկու օր է՝ խնդրում եմ, ասում եմ՝ մարդ է էսօր գալու, դուռը դրսից բանալիով չփակես: Չլսեց, փակեց, էլի գնաց:

ԱՐԻՍ – Էդ ի՞նչ ես ասում, այ աղջիկ... Ուրեմն քեզ բան ասող էլ կա՞նք էս տան մեջ: Բա աղջիկդ ի՞նչ է ասում...

ՉԱՐՈՒՀԻ – Իրենք իրար հասկանում են: Չգիտեմ ե՞ս չեմ իրենց հասկանում, թե՞ իրենք չեն ինձ հասկանում:

ԱՐԻՍ – Ուրեմն դա իսկի մարդ չի՞:

ՉԱՐՈՒՀԻ – Բա որ մարդ լիներ, էսքան ինչի՞ պիտի խոսեի:

(Փղճկում է):

ԱՐԻՍ – Լաց մի լինի, ցավդ տանեմ, լաց մի լինի: Մարդս որ մեծանում է՝ դառնում է մաշված շոր, տնից հանում, փռում են դռան առաջ, որ ներս մտնողը կռչիկները մաքրի, նոր ներս մտնի: Գնացողեկողի ոտի տակ էնքան տրորվում է, որ մի օր էլ էմտեղից վերցնում են, տանում, դեն զցում էդ փալասը ու բերում, մի ուրիշ շոր են փռում քո տեղը: Լաց մի լինի, ցավդ տանեմ, լաց մի լինի:

ՉԱՐՈՒՀԻ – Բա ի՞նչ անեմ, որ լաց չլինեմ: Ո՞վ լինեք իմ տեղը, որ դիմանար: Չորս կողմից ձեռքերի վրա էին ինձ բարձրացնում, որ պարում էի ժամանակին: Էդ, էդ քոստին տես... **(Սրբում է արցունքները):**

ԱՐԻՍ – Դե որ էդպես է՝ մի բան ասեմ, Չարուհի:

ՉԱՐՈՒՀԻ – **(Տիրապետելով իրեն)** Ասա:

ԱՐԻՍ – Ասե՞մ, թե՞ չասեմ:

ՉԱՐՈՒՀԻ – Ասա՛ ասում եմ...

ԱՐԻՍ – Դե նախօրոք ասա, որ «հա» ես ասելու, «չէ» չես ասելու:

ՉԱՐՈՒՀԻ – Ասա, տեսնեմ ինչ ես ասելու, որ իմանամ՝ ինչ ասեմ:

ԱՐԻՍ – Արի, գնանք երկուսով իմ տանը միասին սիրուն ապրենք մեզ համար:

ՉԱՐՈՒՀԻ – Վա՛յ, այ տղա, դա լինելու բա՞ն է, որ դու ասում ես: Մի քիչ ցածր, աղջիկս կլսի...

ԱՐԻՍ – Երկու հարկանի տուն է: Առաջին հարկը ախպորս տղային եմ տվել, նրա ընտանիքն է ապրում երեք սենյակում, վերևի երեք սենյակում էլ մենակ ես եմ: Առավոտից իրիկուն մի սենյակից մտնում, մյուսով դուրս եմ գալիս, մեկով դուրս եմ գալիս, մեկով մտնում... Պարապությունից գործիքն առնում եմ, նստում արյանս ճնշումն եմ չափում: Էնքան չափեցի, որ էսպես եղավ... Իմ կյանքն էլ մի կյանք չի: Քեզ համար էլ լավ կլինի, ինձ համար էլ: Կինս էլ մի տասը տարի առաջ է մահացել:

ՉԱՐՈՒՀԻ – Ողորմի իրեն: Ամուսնուցս երկար է ապրել:

ԱՐԻՍ – Զո՛ւ ամուսնուն էլ ողորմի: Էլ ոչ վրադ դուռ փակող կլինի, ոչ բան... Իրար «ջան» կասենք, «ջան» կլսենք:

ՉԱՐՈՒՀԻ – Լավ, էլի, Արիս, դու էլ բան գտար ասելու... Ցածր, աղջիկս հանկարծ չլսի... Էդպիսի բան մի ասա:

ԱՐԻՍ – Ինչի՞ չասեմ, բա ես էդ գազանի մոտ քեզ կթողնեմ, կզնա՞մ, այ աղջիկ:

ՉԱՐՈՒՀԻ – **(Մաստող)** Ցածր...

ԱՐԻՍ – Դու արի, մնացածը քո գործը չի:

ՉԱՐՈՒՀԻ – Բա չե՞ս մտածում, թե լսողներն ինչ կասեն:

ԱՐԻՍ – Ինչ ուզում եմ՝ թող ասեն, նրանց ասելն՞ով է... Էլ ո՞վ է մնացել, որ ասեն...

ՉԱՐՈՒՀԻ – Է՛, է՛, մի ասա...

ԱՐԻՍ – Ինչո՞ւ չասեմ, է՛, ինչո՞ւ չասեմ:
 ՁԱՐՈՒՀԻ – Ցածր, աղջիկս չլսի...
 ԱՐԻՍ – Էլ չենք խոսում, գալիս ես:
 ՁԱՐՈՒՀԻ – Հարմա՞ր է որ...
 ԱՐԻՍ – Եթե հարմար չլիներ, չէի ասի: Մեզ էլ ինչքա՞ն է մնա-
 ցել ապրելու, որ առանց իրար ապրենք:
 ՁԱՐՈՒՀԻ – Աղջկաս ո՞նց թողնեմ, գամ:
 ԱՐԻՍ – Ո՞ր ենք գնում, որ թողնես կամ չթողնես: Հո չենք թող-
 նում, գնում ուրիշ երկիր:
 ՁԱՐՈՒՀԻ – Ինձ խայտառակ է անելու էս տղան: Աղջկաս հետ
 խոսեմ, հետո...
 ԱՐԻՍ – Էլ ի՞նչ խոսես, եկողը դու չե՞ս: Դե որ դու համաձայն
 ես, էլ ինչո՞ւ ես ուրիշ բան մտածում:
 ՁԱՐՈՒՀԻ – Աղջկաս մասին եմ մտածում: Չի նեղանա՞:
 ԱՐԻՍ – Երեխա՞ է, որ նեղանա... **(Կտրուկ)** Գալիս ե՛ս...
 ՁԱՐՈՒՀԻ – Չէ՛է՛, չեմ գա:
 ԱՐԻՍ – Հո ես քեզ չեմ ասում՝ հենց հիմա վեր կաց արի: Էսօր
 չլինի, թող վաղը լինի, բայց հաստատ իմանամ, որ գալիս ես:
 ՁԱՐՈՒՀԻ – Է՛է՛, ամոթ չի՞:
 ԱՐԻՍ – Ի՞նչն է ամոթ:
 ՁԱՐՈՒՀԻ – Որ գամ...
 ԱՐԻՍ – Ամոթն էն կլինի, որ չգաս, ես իմ էս տարիքում քեզ
 փախցնեմ, տանեմ գոռով: Ես առանց քեզ չեմ ապրել, դու էդ ո՞նց ես
 էսքան տարի առանց ինձ ապրել:
 ՁԱՐՈՒՀԻ – Ապրե՞լ եմ որ...
*Լալան վերադառնում է գգեստափոխված, սուրճի բա-
 ժակներով մատուցարանը ձեռքին:*
 ԼԱԼԱ – Ներեցեք, ուշացա: Մուրճը թափվեց, նորից եփեցի:
(Բաժակները դասավորում է սեղանին):
 ԱՐԻՍ – Շնորհակալ եմ, եկա նեղություն տվի:
 ԼԱԼԱ – Նեղությունս ո՞րն է, եկաք՝ մաման իրեն լավ զգաց:
 ԱՐԻՍ – **(Ծոցագրպանից մատանի է հանում, ցույց տալով)**
 Չարուհի, սա հատուկ բերել եմ, որ նվիրեմ քեզ: Խնդրում եմ, չմեր-
 ժես:
 ԼԱԼԱ – **(Անակնկալի եկած)** Ոսկե մատանի՞... Ինչի՞
 համար...
 ՁԱՐՈՒՀԻ – Արիս, պետք չի, պետք չի...

ԱՐԻՍ – Որպես հիշատակ... Խնդրում եմ, թող, թող ես իմ ձեռքով դնեմ մատիդ: **(Հագցնում է):**

ՉԱՐՈՒՀԻ – Հա՛, բայց... Ախր... Ինչի՞ համար...

ԱՐԻՍ – Վախենում էի չմտնի... Փառք Աստծո, մտավ...

ԼԱԼԱ – Արդյո՞ք դրա կարիքը կար... Ազնիվ խոսք...

ԱՐԻՍ – Լալա... Լալա էր, չէ՞ անունդ, Լալա ջան:

ԼԱԼԱ – Այո, բայց...

ԱՐԻՍ – Էլ չենք խոսում... Շնորհավոր լինի:

Մուտքի զանգ:

Լալան գնում, բացում է դուռը: Մտնում է Հրաչը:

ԼԱԼԱ – Լավ է, Հրաչն էլ եկավ: **(Արիսին)** Ամուսինս է:

ՀՐԱՉ – Բարև Ձեզ... **(Գլխի շարժումով հարցնում է կնոջը, թե ով է եկվորը):**

ԼԱԼԱ – Մորս մանկության ընկերն է պարոն Արիստակեսը: Ծանոթացեք, խնդրեմ, պարոն Արիստակես:

ԱՐԻՍ – Արիս, Արիստակես...

ՀՐԱՉ – **(Մեղմելով ձեռքը)** Հրաչ... Իսկապե՞ս... Մանկությունից թանկ բա՞ն...

ԱՐԻՍ – Երեխա ժամանակ ես եմ իրեն տեսել. ինքն իրեն չի տեսել, ինքն է ինձ տեսել, ես ինձ չեմ տեսել:

ԼԱԼԱ – **(Մեղանից վերցնելով, Հրաչին ցույց տալով լուսանկարը)** մայիր, տե՛ս, պարոն Արիստակեսն է բերել: Տեսնո՞ւմ ես՝ ինչ գեղեցիկ աղջնակ է եղել մայրս:

ՀՐԱՉ – **(Լուսանկարն առնելով ձեռքը)** Վա՛յ, Չարուհի Աբրահամովնա, էս դո՞ւ ես... Իբր հիմա ինչ պակաս գեղեցկուհի է Չարուհի Աբրահամովնան:

ԼԱԼԱ – **(Ցուցադրական բարձրացնում է Չարուհու ձեռքը)** Մորս մատի էս ոսկե մատանին էլ պարոն Արիստակեսը նվիրեց:

ՀՐԱՉ – **(Հափշտակված)** Հա՞... Շնորհավոր, Չարուհի Աբրահամովնա:

ՉԱՐՈՒՀԻ – **(Գժկամ)** Շնորհակալ եմ:

ԼԱԼԱ – **(Հրաչին)** Լավն է, չէ՞:

ՀՐԱՉ – Շա՛տ... Չոքանչ ունեմ՝ աշխարհը չունի:

ՉԱՐՈՒՀԻ – Եկար, էլի սկսեցի՞ր...

ԼԱԼԱ – Կատակ է անում, մամ, դու էլ ի՞նչ ես ամեն ինչ սրտիդ մոտ ընդունում:

ՀՐԱՉ – Կատակ չեմ անում, լուրջ եմ ասում, պարոն Արիս...
 ներողություն, պարոն Արիստակես:
 ԱՐԻՍ – Ոչինչ, Արիսն էլ եմ ես:
 ՀՐԱՉ – Իմ զոքանչի նման զոքանչ՝ աշխարհը ման գաս, չես
 գտնի:
 ԱՐԻՍ – Ինձ մի ասեք, ես դա գիտեմ:
 ՋԱՐՈՒՀԻ – Իբր իր նմանը կգտնվի՞...
 ՀՐԱՉ – Ինձ նմանը կարող է գտնվի, բայց քեզ նմանը չի
 գտնվի, Ջարուհի Աբրահամովնա, ազնվությամբ եմ ասում:
 ՋԱՐՈՒՀԻ – Չլիներ էն օրը, որ դու աղջկաս հանդիպեցիր:
 ՀՐԱՉ – Խնդրեմ, էլ ի՞նչ խոսեմ...
 ԼԱԼԱ – Լավ, էլի, մամ, վերջ տվեք:
 ՋԱՐՈՒՀԻ – Չէ, ես էս տանը չեմ մնա, չեմ մնա, չէ՛...
 ԼԱԼԱ – Մամ, անհարմար է, ինչո՞ւ ես պարոն Արիստակեսի
 ներկայությամբ էդպիսի բան ասում:
 ՋԱՐՈՒՀԻ – (Փղճկում է) Մարդը եկել է, սառը բետոնին նստել,
 քնել:
 ԼԱԼԱ – Մամա, քեզ զսպիր, մամա, խնդրում եմ...
 ԱՐԻՍ – Ոչինչ, էդպես էլ կպատահի, սառը չէր: Դուռը մի փա-
 կեք Ջարուհու վրա: Ինչ իմամաք, թե ինչ կլինի: «Շտապ օգնությու-
 նից» գան, չեն կարող ներս մտնել: Եթե, Աստված չանի, հանկարծ
 պետք լինի:
 ՀՐԱՉ – Պարոն Արիս... ներողություն, էլի Արիս ասացի... Պա-
 րոն Արիստակես, բայց դուք գիտե՞ք՝ ինչի համար եմ փակում:
 ԼԱԼԱ – Դե լավ, հիմա դրա ժամանակն է...
 ՀՐԱՉ – Ինչի՞ համար չասեմ... Հենց զանգը տալիս են՝ ում
 առաջ ասես դուռը բացում է:
 ԼԱԼԱ – Լավ, հասկացանք...
 ՀՐԱՉ – Մի անգամ գողերը մտել են տուն, Ջարուհի Աբրահա-
 մովնայի ոտ ու ձեռ կապել, զցել մահճակալին, ինչ-որ տանը կա-չկա՝
 սրբել տարել: Մի բան պատահի, հետո ես աղջկան ի՞նչ պատաս-
 խան տամ:
 ԱՐԻՍ – Չի պատահի, դեպքը մի անգամ է պատահում: Լաց մի
 լինի, ցավդ տանեմ, լաց մի լինի:
 ԼԱԼԱ – (Լացակումած) Մամ, քո ապահովության համար է
 փակում, էլի ասե՞մ...
 ՋԱՐՈՒՀԻ – (Խոցված) Հա, դու էլ ամուսնուդ պաշտպանիր:

ՀՐԱՉ – Բա ես կթողնե՞մ՝ քո գլխից մազ պակասի, Չարուհի Արրահամովնա:

ԼԱԼԱ – Չես ուզում՝ էլ չենք փակի, ի՞նչ է պատահել:

ԶԱՐՈՒՀԻ – Շատ եք ասել, էլ հավատացող չկա:

ԱՐԻՍ – Լաց մի լինի, ցավդ տանեն, լաց մի լինի:

ԶԱՐՈՒՀԻ – Էնքան հոգիս կերավ, որ տունս ծախել տվեց, իր համար ավտո առավ, դրեց տակը:

ԼԱԼԱ – Մամա, ես քեզ շատ եմ խնդրում, պարոն Արիստակեսի մոտ եղպիսի բաներ մի ասա:

ՀՐԱՉ – Էդ ի՞նչ մասին է ասում:

ԼԱԼԱ – Բա էլ ո՞ւմ...

ԶԱՐՈՒՀԻ – Մինչև ծախելը շուրջս պտտվում էիր... Քաղցր լեզվիդ էի կարո՞տ...

ՀՐԱՉ – Լսողն էլ պիտի հավատա, գիտե՞ս...

ԼԱԼԱ – Լավ, էլի, մամա...

ԶԱՐՈՒՀԻ – Բա հիմա ես ի՞նչ անեն, հիմա ես ո՞ւր գնամ...

Ծախած չլինեի, ես իմ տուն կգնայի:

ԼԱԼԱ – Լավ էլի, մամ...

ՀՐԱՉ – Ես քեզնից չէի սպասի, Չարուհի Արրահամովնա, իսկի չէի սպասի...

ԼԱԼԱ – Դու սուս...

ՀՐԱՉ – Երանի ամեն փեսա իր զոքանչին էնքան սիրի, ինչքան ես եմ քեզ սիրում:

ԶԱՐՈՒՀԻ – Տեսնում եմ՝ թե ո՞նց ես սիրում...

ՀՐԱՉ – Դու ես քո տունը ծախել, Չարուհի Արրահամովնա, եթե քո մտքին չլինեք, հազար ինձ մմանն էլ լինեք, չէիր ծախի: Ամիսներով տունդ ոտք չէիր դնում, որ լույսի վարձը չտաս:

ԼԱԼԱ – Չես ամաչո՞ւմ, Հրաչ:

ՀՐԱՉ – Ամաչում եմ, բա ի՞նչ եմ անում... Ներողություն, պարոն Արիս... Արիստակես:

ԱՐԻՍ – Դու ինձնից մերողություն մի խնդրիր, Հրաչ, իրենից խնդրիր:

ՀՐԱՉ – Խնդրում եմ, բա չե՞մ խնդրում... Եթե մի բան էլ իմ կողմից քեզ դուր չի եկել, մերողություն, Չարուհի Արրահամովնա: Բայց դու առանց քո աղջկա ո՞նց կապրեիր, եթե տունդ չծախեիր:

ԼԱԼԱ – Իբր ես կապրեի, որ ինքն ապրեր: Ներեցեք, պարոն Արիստակես:

ՉԱՐՈՒՀԻ – (Վառվաձ) Չէ՛, էլ չեք համոզի, չէ՛... Գնալու եմ, ես էստեղ էլ մնացողը չեմ: Ես կզնամ, դու քո ամուսնու հետ մնա:

ՀՐԱՉ – Ինչի՞ համար դու գնաս, Չարուհի Արահամովնա, ես կզնամ, դու քո աղջկա հետ մնա:

ԼԱԼԱ – Մամ, դու տե՞ղ ունես գնալու, որ խոսում ես: Առանց ինձ ո՞նց կզնաս, ես կզնամ:

ՀՐԱՉ – Ոչ դու կզնաս, ոչ էլ նա կզնա, ես կզնամ, ասում եմ:

ԱՐԻՍ – Մի բուպե, մի բուպե... Ոչ մեկդ էլ մի գնացեք: Խնդրեմ, եթե դեմ չեք, Չարուհին թող գա ինձ մոտ մնա: Երկու հարկանի տուն է: Գլխիս վրա կպահեմ: Երեք սենյակ վերևում է, երեք սենյակ՝ ներքևում:

ԼԱԼԱ – Էդ ի՞նչ եք ասում, պարոն Արիստակես: Դա լինելու՞ քան է, որ դուք ասում եք: Ա՛յ քեզ բան... Մայրս ինչո՞ւ պիտի իր տունը թողնի, գնա ուրիշի տանը ապրի:

ԱՐԻՍ – Շատ ներողություն, ես ուրիշ չեմ, բալաս:

ԼԱԼԱ – Շնորհակալ եմք, էդ էր պակաս...

ԱՐԻՍ – Չեր գործն է: Ներող եղեք, ինձ խոսք չէր հասնում երևի... Որոշողն ինքն է՝ ոնց կուզի, թող էնպես էլ անի: (Ուտից գլուխ չափելով Հրաչին) Սրանից հետո ով որ իրեն կնեղացնի՝ ինձ հետ գործ կունենա: Ես գնացի: Մնացեք խաղաղությամբ: (Գնում է: Չարուհին նրան ուղեկցում է մինչև վերելակի դուռը):

ՀՐԱՉ – Էս ցնդած քիճեն ո՞վ էր, այ մարդ... Դրան տես... Ահ էլ է տալիս...

ԼԱԼԱ – Եկել է, ես ի՞նչ է ասում... Թե ասա՝ դու ո՞վ ես, քեզ հարցնող կա՞... Ի՞նչ փնթի մարդ էր... Ախկ, զզվում եմ...

ՀՐԱՉ – Էս երեխայի նկարն ինչի՞ համար է հին թերթից կտրել, բերել:

ԼԱԼԱ – Մորս նկարն է, ի՞նչ երեխա...

ՀՐԱՉ – Ասա՛ դու քո թզրեհը քաշիր, քիթդ ինչի՞ համար ես ամեն տեղ խոթում: Զեզ վերաբերո՞ւմ է, այ քիճա... Մարդ իմանա՛ սրա ի՞նչն է սիրել...

ԼԱԼԱ – Մայրս ո՞նց կարող էր դրան սիրել... Երբեք...

ՀՐԱՉ – Երեխա է եղել, չի հասկացել...

ԼԱԼԱ – Ո՛ւֆ, դու էլ... Լավ, էլի, սրտովս գնա:

(Դրսից դռան թակոցներ են լսվում):

ՀՐԱՉ – Լիֆտում մարդ է մնացել:

ԼԱԼԱ – Ի՞նչ իմացար:

ՀՐԱՉ – Չե՞ս լսում, դուռը թակում են: **(Դուրս է գնում):**

ԼԱԼԱ – Եկավ, փաստորեն, մեզ վիրավորեց ու գնաց:

(Հրաշք վերադառնում է):

ՀՐԱՉ – Ո՞ր է, ո՞ր է դրա ակնոցը: Լիֆտի մեջ է մնացել
քիճեմ:

ԼԱԼԱ – Սա չի՞... Սեղանին է թողել, վերցրու:

ՀՐԱՉ – Ասում եմ՝ առաջին հարկի կոճակը սեղմիր, ասում է՝
աչքս չի տեսնում: Տանեմ, տամ իրեն:

ԼԱԼԱ – Դռները փակ՝ ո՞նց պիտի տաս:

*(Դուրս է գնում Հրաշի ետևից): Բեմը դատարկվում է: Թա-
կոցները շարունակվում են):*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

*Նույն բնակարանը՝ երկացող դրսի մուտքով:
Ամուսինները ներս ու դուրս են անում՝ որոնելով Չարուհուն:*

ԼԱԼԱ – Մամա՛ ...
ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա՛ ...
ԼԱԼԱ – Մամա՛ ... Ես ի՞նչ է, տանը չի՞:
ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա՛ ...
ԼԱԼԱ – Դուռն իր վրա չէիր փակե՞լ բանալիով:
ՀՐԱՉ – Փակել էի:
ԼԱԼԱ – Բա որ փակել էիր, ո՞նց է դուրս եկել:
ՀՐԱՉ – Ի՞նչ իմանամ... Չարուհի Աբրահամովնա՛ ... Կարո՞ղ
է՛ գուգարանում է:
ԼԱԼԱ – Մամա՛ ... Չուգարանում ե՞ս: Չուգարանում էլ չկա:
ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա՛ ...
ԼԱԼԱ – Կարո՞ղ է՝ դուռը բանալիով չէիր փակել դրսից:
ՀՐԱՉ – Փակել էի, վա՛յ...
ԼԱԼԱ – Բա որ փակել էիր՝ ո՞ր է, համբարձվե՞ց էդ կինը:
ՀՐԱՉ – Էնքան ասացիր, արդեն իմ մեջ էլ կասկած ընկավ:
Փակել եմ, բայց կարո՞ղ է՝ չեմ փակել:
ԼԱԼԱ – Չես փակել:
ՀՐԱՉ – Փակել եմ: Կարո՞ղ է՝ էդ բիճեն եկել, տարել է:
ԼԱԼԱ – Ի՞նչ բիճա, է՛, դու էլ... Դուռը բանալիով փակ ո՞նց
կտաներ: Հրաչ, այ ասում եմ. եթե մորս մի բան պատահի, հետո ինձ-
նից չնեղանաս:
ՀՐԱՉ – Ի՞նչ պիտի պատահի, է՛ ... Ես ի՞նչ մեղք ունեմ, թող
չգնար:
ԼԱԼԱ – Դուռը բանալիով փակեիր, չգնար:
ՀՐԱՉ – Փակել եմ, ասում եմ...
ԼԱԼԱ – Չես փակել, ասում եմ...
ՀՐԱՉ – Փակել եմ, ասում եմ...
ԼԱԼԱ – Չես փակել, ասում եմ...
(Մուտքի զանգ):
ՀՐԱՉ – Մի րոպե, դուռն է... Գնա, եկավ, ինքն է:
ԼԱԼԱ – (Մղվելով դեպի դուռը) Մամա՛ ... (Բացում է):
(Մտնում է թխադեմ մի տղամարդ):
ԹԽԱԳԵՄ ՏՂԱՄԱՐԴ – Կարելի՞ է:

ՀՐԱՉ – Համեցեք:
 ԹԽԱԳԵՄ – Բարև ձեզ:
 ԼԱԼԱ – **(Անհամբեր)** Բարև...
 ՀՐԱՉ – Եկեք, բարև ձեզ:
 ԹԽԱԳԵՄ – Իմ անունը Ռաֆիկ է: **(Լալային)** Չեր մայրը հոր-
 եղբորս տանն է: Ինձ ուղարկել են, որ ձեզ ասեմ, չանհանգստանաք:
 ՀՐԱՉ – **(Լալային)** Տեսա՞ր... Ասում էի, չէ՞...
 ԼԱԼԱ – Ի՞նչ մայրը... Ներեցեք, ձեր հորեղբայրն ո՞վ է:
 ՌԱՖԻԿ – Արիստակեսը... Երեկ ձեր տանն է եղել:
 ՀՐԱՉ – **(Լալային)** Բիժեն... Որ լիֆտի մեջ էր մնացել:
 ԼԱԼԱ – Իմացա... Բայց իմ մայրն ի՞նչ գործ ունի ձեր
 հորեղբոր տանը:
 ՌԱՖԻԿ – Պատահական մտա հորեղբորս տուն, ասաց՝ ծանո-
 թացիր, կինս է:
 ԼԱԼԱ – **(Հրաշին, ապշանքով)** Լսեցի՞ր...
 ՀՐԱՉ – Հա, լսեցի... Որ ասում էի՝ եկել, տարել է, չէիր հավա-
 տում:
 ԼԱԼԱ – **(Դեռ ուշքի չեկած, Ռաֆիկին)** Իմ մա՞յրն է իր կինը:
 ՀՐԱՉ – Հա, բա էլ ո՞վ...
 ԼԱԼԱ – **(Փղճկում է)** Ո՞նց թե...
 ՀՐԱՉ – Լա՛վ... Քեզ ի՞նչ պատահեց:
 ԼԱԼԱ – Էլ ի՞նչ էիր ուզում, որ պատահեր: Չլսեցի՞ր... **(Թաշ-
 կինակով սրբում է աչքերը):**
 ՀՐԱՉ – Գժվե՞լ է եղ կինը: **(Ռաֆիկին)** Նստե՛ք:
 ՌԱՖԻԿ – Ընդհանրապես: **(Չի նստում):**
 ՀՐԱՉ – Ինձ չէր ասում, գոնե թող աղջկան մի քերան ասեր: Բա
 հիմա ի՞նչ է անում էնտեղ:
 ՌԱՖԻԿ – Ոչ մի բան, հորեղբորս հետ նստած խոսում են:
 ՀՐԱՉ – Պիտի խոսեն, ուրիշ ինչ պիտի անեն: Չոքանչ
 ունե՞ս...
 ՌԱՖԻԿ – Չէ:
 ՀՐԱՉ – Երանի քեզ...
 ԼԱԼԱ – **(Գլուխն առած ավերի մեջ)** Ա՛խ, մամա, մամա... Ես
 դեռ չեմ հավատում...
 ՀՐԱՉ – Ո՞վ է հավատում, որ դու հավատաս:
 ՌԱՖԻԿ – Եթե ինձ ձեր հասցեն տված, ասած չլինեի՞ն՝ զնա,
 ասա, ես չէի գա:

ՀՐԱՉ – Շնորհակալ եմք, լավ էր՝ եկաք, ասացիք, անհանգիստ էինք:

ԼԱԼԱ – Ա՛խ, մամա, մամա... Հիմա լսողներն ի՞նչ կասեն...

ՀՐԱՉ – Ինչ ուզում են՝ թող ասեն... Լսողների հերն էլ անիծած, մեր ցավն ու դարդը թողած, հիմա էլ պիտի նստեն նրա՞նց մասին մտածեն:

ԼԱԼԱ – **(Բռնկվելով) Բո՛ւ, քո՛ պատճառով է գնացել:**

ՀՐԱՉ – Էդ ի՞նչ ես ասում, Լալա: Ես հարազատ մոր տեղ եմ ընդունում իմ զոքանչին: Էդ զոքանչներն են, որ չեն սիրում փեսաներին: Ռ-աֆիկ, գիտե՞ք՝ ինչու... Խանդում են, որ իրենց աղջկան իրենցից բացի ուրիշ սիրող էլ կա: Չարուհի Աբրահամովնան դրանցից չի: **(Լալային) Ինչի՞ համար ես մեղքն ինձ վրա գցում: Մտքին եղել է, որ գնացել է, եթե չլիներ՝ ոնց կգնար: Ճիշտ չե՞մ ասում, Ռ-աֆիկ:**

ՌԱՖԻԿ – **(Թոթվելով ուսերը) Չգիտեմ, ինչ ասեմ..**

ՀՐԱՉ – Ինչո՞ւ եք մնացել կանգնած, չհասկացա: Նստեք:

ԼԱԼԱ – Ա՛խ, մամա, մամա...

ՀՐԱՉ – Դե լավ, հանգստացիր, ինչո՞ւ ես քեզ կոտորում:

ԼԱԼԱ – Այ, իմացիր, առանց քեզ կմնամ, առանց մորս չեմ մնա:

ՀՐԱՉ – Նո՞ր եմ իմանում...

ԼԱԼԱ – Ա՛խ, մամա, մամա...

ՀՐԱՉ – Դե լավ, հասկացանք... Լալա, հանգստացիր:

ՌԱՖԻԿ – Բա ես ի՞նչ ասեմ... Իբր իմ հորեղբայրն էդ բանն անելու իրավունք ունե՞ր... Մի ոտը գերեզմանում՝ ամուսնանո՞ւմ են:

ԼԱԼԱ – **(Թաշկինակը տանելով աչքերին) Հորս հիշատակը եղպե՞ս ես պահում, մամա:**

ՌԱՖԻԿ – Բա որ իմանայիք հորեղբորս ողորմածիկ կինն ինչ կին էր... Էդպիսի կի՛ն... Հարազատ մայրն իր երեխային եղպես չէր նայի, ոնց որ նա էր հորեղբորս նայում: Ինչո՞վ երդվեմ, որ հավատաք:

ՀՐԱՉ – Բա որ էդ տեսակ կին է ունեցել, էլ ինչի՞ համար էր թիթիզացել, զոքանչիս երեխա ժամանակվա նկարն առած եկել էդ տարիքում: Չի՞ ամաչում դա:

ՌԱՖԻԿ – Էլի եմ ասում՝ եղպիսի կի՛ն...

ՀՐԱՉ – Բա որ զոքանչիս ճանաչես... Իսկի զոքանչի նման չի... Գիտե՞ս ինչ կին է... Որ ասեմ էլ՝ երևի չհավատաս:

ՌԱՖԻԿ – Ինչի՞ պիտի չհավատամ: Հորեղբորս բախտը միշտ էլ բերում է, ես չգիտե՞մ... Մեռակ վատն էն է, որ ում հետ ամուսնանում է՝ մեռնում են, չեն դիմանում հորեղբորս... Ծանր բնավորու-

թյուն ունի, ճիշտն ասած: Մարուշ մայրիկից առաջ էլ Սուսանն էր...
Մեկը մեկից լավ կնանիք էին, ողորմի երկուսին էլ: Ոչ մեկից երեխա
չունեցավ խեղճ հորեղբայրս, կանայք մեղք չունեին, իրենից էր...

ԼԱԼԱ – Չգիտե՛մ, չգիտե՛մ, թե հիմա ես ինչ անեմ:

ՀՐԱՉ – Նա իր արածն արել է, ի՞նչ կարող ես, որ ինչ անես:

ԼԱԼԱ – Ես առանց մորս չեմ մնա, չե՛, կգնամ, հետ կբերեմ:

ՀՐԱՉ – Կգա՞, որ բերես:

ԼԱԼԱ – Ո՞նց չի գա, է՛, դու էլ...

ՀՐԱՉ – Բիճե՛ն կթողնի՞:

ԼԱԼԱ – Նրա թողնելուն պիտի նայե՞մ: Բիճու գլուխն էլ էմտեղ
թաղեմ:

ՀՐԱՉ – Ռաֆիկ ջան, կներես:

ՌԱՖԻԿ – Ոչինչ, ջղայնացած է... Չէ, կթողնի, աղջիկն է, հո
ուրիշ մարդ չի:

ՀՐԱՉ – Եթե բիճեն սիրում է, չի թողնի:

ՌԱՖԻԿ – Էդ տարիքում ի՞նչ սեր:

ՀՐԱՉ – Ասում են, չէ՞, սերը տարիք չի հարցնում:

ԼԱԼԱ – Դու ի՞նչ ես հիմար բաներ խոսում:

ՀՐԱՉ – Հիմար բաներ չեմ խոսում, ես ընդհանրապես եմ
ասում...

ԼԱԼԱ – Ո՛ւֆ, ընդհանրապես էլ մի ասա...

ՀՐԱՉ – Ախր նա էդպիսի բան պիտի չաներ, էլի, ինտելիգենտ
կին է: Չարուհի Աբրահամովնայից իսկի չէի սպասի:

ԼԱԼԱ – Ա՛խ, մամա, մամա... Բան չեմ գտնում, որ ասեմ:

ՌԱՖԻԿ – Կարելի՞ է ծխել:

ԼԱԼԱ – Ծխեք:

ՀՐԱՉ – (Ռաֆիկին) Մի հատ էլ ինձ հյուրասիրեք, եթե կարելի
է... Որ էդքան ծխում եք, բա վնաս չի՞:

ՌԱՖԻԿ – Ինձ պահողը սա է, ազնիվ խոսք: Տունն էլ կտակել է
ինձ, ես էլ առնող եմ գտել, մարդիկ եկել, տեսել, հավանել են, զնի
հարցում վերջնական համաձայնության ենք եկել, փողի կեսն էլ տվել
են: Հիմա ես ի՞նչ պատասխան պիտի տամ էդ մարդկանց, գլուխ չեմ
հանում: Մա անելո՞ւ բան է, որ դու անում ես, այ հորեղբայր: Բա իմ
հանգուցյալ հերը քեզ էդպե՞ս է նայել:

ՀՐԱՉ – Պահո՛ւ, հասկացա, ուրեմն քո վիճակն էլ մի վիճակ չի:
Բա էդ տուներ, որ ծախեք, որտե՞ղ եք գնալու ապրեք, հարցնելն ամոթ
չլինի:

ՌԱՖԻԿ – Ես երեքսենյականոց բնակարան ունեմ հինգհարկանի շենքի երրորդ հարկում: Պայմանավորվել էինք, որ հորեղբորս առանձնատունը ծախսեմ, հորեղբորս էլ վերցնեմ, գնանք միասին ապրենք էդ երեքսենյականոցում: Թե էդ մարդկանց հիմա ես ինչ պատասխան պիտի տամ, մնացել եմ շվարած: Վրայից ծախսել եմ, ցավը դա է, թե չէ՝ հերն էլ անհիծած, հետ կտայի:

ՀՐԱՉ – Ռաֆիկ, չնեղանաս, սխալ բան ես արել, որ ծախսել ես:

ՌԱՖԻԿ – Ի՞նչ իմանայի, որ էսպես կլիներ: Մեր ցեղում սա առաջին դեպքն է, էդ տարիքում մերոնցից դեռ ամուսնացող չէր եղել, այ ձեր հոր Աստծուն մատաղ:

ՀՐԱՉ – Երևի թանկ գնով էլ համաձայնության եք եկել:

ՌԱՖԻԿ – Բա ո՞նց... Քաղաքի կենտրոնում, տուֆ քարից, չորս կողմից սրբատաշ քարով պարիսպ, ջրավազանով, գարածով, բանով... Անցնող-դարձողի աչքը էդ տան վրա է մնում: Գլուխս բռնել կանգնել եմ: Ի՞նչ պիտի անեմ՝ ես էլ չգիտեմ: Այ հորեղբայր, ութսուն տարեկան ես, օրենքով դու հիմա կարող է մեռած լինեիր, բա դա անելու բա՞ն է, որ դու անում ես: Մի ասեք՝ ութսո՞ւն... Տեսեք մենք էդքան ապրո՞ւմ ենք... Էս ինչ փորձանք էր, որ դու բերիր իմ գլխին: Թե էդ մարդկանց ինչ պատասխան պիտի տամ, ես էլ չգիտեմ, զժվում եմ:

ԼԱԼԱ – Ա՛խ, մամա, մամա...

ՀՐԱՉ – Առանց զոքանչիս ո՞նց պիտի ապրենք, ես էլ դա եմ մտածում:

ԼԱԼԱ – Քեզ էլ թվում է, թե առանց մորս ես կապրեմ, հա՞... Մի օր չեմ ապրի, մի օր...

ՀՐԱՉ – Իբր ես կապրե՞մ, որ դու ապրես: (Ռաֆիկին) Տանը չի, չէ՞... Բայց չեմ հավատում, որ տանը չի: Ասում եմ՝ ուր որ է հիմա դուռը կբացի ու կմտնի ներս:

ՌԱՖԻԿ – Տանը որ մեծ չեղավ, էն տունն ո՞ւմ է պետք: Եթե ես էդ տեսակ զոքանչ ունենայի, բա կթողնեի՞, որ ոտը ոտի առաջ դներ...

ՀՐԱՉ – Ո՞վ է մեղավոր, մե՞զ ես ասում, հորեղբայրդ է եկել, տարել:

ՌԱՖԻԿ – Նա կարո՞ղ է կին պահել, որ տարել է: Մեկը լինի՝ իրեն պահի: Ներողություն արտահայտությանս, ախր շատ անգամ վրան է չիչիկ անում: Հորեղբայրս է, չեմ ուզում ամեն բան ասեմ, ինձ էլ հասկացեք: Բնավորությունն էլ է փոխվել, ամեն ինչի վրա խոսում

է: Չգիտե՞ք, որ մեծանում են դառնում են երեխա: Դրած բանի տեղն էլ չի հիշում: Սկսեցի թողնու՞մ է, որ հիշի: Ինչ որ պիտի հիշի չի հիշում, ինչ որ պիտի չհիշի դա է հիշում: Մեղք է էդ կինը, գնացեք հետ բերեք:

ՀՐԱՉ – Ո՞նց հետ բերեցք, որ արդեն գնացել է:

ՌԱՖԻԿ – Հետո ի՞նչ... Եթե չես ուզում, դա ուրիշ հարց է:

ՀՐԱՉ – Ո՞վ չի ուզում, ո՞վ, ե՞ս...

ԼԱԼԱ – (Հարձակողական) Հա, դո՛ւ, դո՛ւ չես ուզում:

ՀՐԱՉ – Լալա, դու քո ասածին հավատո՞ւմ ես:

ԼԱԼԱ – Դու էլ գիտես, որ ճիշտ եմ ասում:

ՀՐԱՉ – Անհարմար չե՞ս զգում, ես երկրորդ անգամ եմ մայր կորցնում, դու էդ ի՞նչ ես ասում:

ՌԱՖԻԿ – Ազնիվ խոսք, մեղք է էդ կինը, շատ բան չեմ էլ ուզում ասել, հորեղբայրս է, ուրիշ մարդ չի, գնացեք հետ բերեք քանի շուտ է, ես խնդրում եմ: Իմ դրության մեջ էլ մտեք, ուզեմ-չուզեմ՝ ես պիտի վերադարձնեմ էդ մարդկանցից վերցրած փողը:

ՀՐԱՉ – Է՛հ, վերադարձրու:

ՌԱՖԻԿ – Ո՞նց վերադարձնեմ, որ ծախսել եմ:

ՀՐԱՉ – Է՛հ, չծախսեիր, մենք մեղք ունե՞նք:

ՌԱՖԻԿ – Ես չեմ ասում, թե մեղք ունեք, ես էդ ծեր կնոջն եմ խղճում: Ստիպված եմ ծախսել: Դու էլ լինեիր իմ տեղը, դու էլ կծախսեիր: Ընտանիքով ծանրաբեռնված մարդ եմ, ապրելու հարց է:

ԼԱԼԱ – Ուրեմն ձեզ թվում է, թե ես մորս էնտեղ կթողնե՞մ:

ՌԱՖԻԿ – Ուղղակի էդ կինն է մեղք...

ՀՐԱՉ – Լավ, էլի, Ռաֆիկ, դու էլ քո փողի մասին ես մտածում:

ՌԱՖԻԿ – Բա ինչի՞ մասին մտածեմ, սա լինելու բա՞ն էր, որ եղավ: Բա էն կնոջ ճակատագիրը... Չեք պատկերացնում, էլի, չեք պատկերացնում:

ՀՐԱՉ – Բանը բանից անցել է, որ պատկերացնեցք, ի՞նչ պիտի անենք:

ԼԱԼԱ – Ո՞նց թե, մայրս պիտի էնտեղ մնա՞ քո կարծիքով:

ՀՐԱՉ – Եթե չուզեց՝ չի գա, իմ ու քո ուզելո՞վ է... Երեխա չի, որ թևից բռնենք բերենք:

ՌԱՖԻԿ – Լսիր, այ ընկեր, ուզում ես մարդասպանություն լի-նի՞. վերցրել եմ պիտի տամ:

ՀՐԱՉ – Է՛, տուր, ես ասում եմ՝ մի տո՞ւր:

ՌԱՖԻԿ – (Բռնկվելով) Որտեղի՞ց տամ, բա չլսեցիր, որ ասացի ծախսել եմ:

ՀՐԱՉ – Դա՞ էլ է մեզ վերաբերում:
 ՌԱՖԻԿ – Չեմ հասկանում, հիմա դու ուզում ես, որ զոքանչի հորեղբորս տանը մնա, չգա՞...
 ՀՐԱՉ – Ես էդպիսի բա՞ն եմ ասել:
 ԼԱԼԱ – Բա ի՞նչ ես ասում:
 ՀՐԱՉ – Ոչ մի բան էլ չեմ ասում: Կգա, թե չի գա՝ ինքն է որոշողը: Լալա, եթե չեկավ, դու ի՞նչ կարող ես անել, ես ի՞նչ կարող եմ անել: Ինչո՞ւ չեք ուզում ինձ հասկանալ:
 ԼԱԼԱ – (Խոցված) Ես քեզ հասկանո՞ւմ եմ, լա՛վ եմ հասկանում... Եթե ինքը չգա, ես էլ էստեղ չեմ մնա:
 ՀՐԱՉ – Ուրեմն ինձ կթողնես կզնա՞ս:
 ԼԱԼԱ – Հա, կզնամ, դու առանց ինձ մի օր չես ապրի:
 ՀՐԱՉ – Երեսով ես տալիս, հա՞, որ չեմ աշխատում: Ուրեմն էդ կինը ինձ խանգարո՞ւմ է...
 ԼԱԼԱ – Նա «էդ կինը» չի, նա իմ մայրն է:
 ՀՐԱՉ – Մեռակ քո մայրը չի, իմ մայրն էլ է:
 ԼԱԼԱ – Չես ուզում գա, դրա համար ես ասում չի գա:
 ՀՐԱՉ – Եղա՞վ...
 ՌԱՖԻԿ – Չոքանչից ուզում եք ազատվեք, ձևը գտել եք, հիմա էլ զոքա՞նչ եք պսակում: Ես չզիտեմ, ես հարցը փակեք, չզնամ անմեղ տեղը նստեմ:
 ՀՐԱՉ – Էստեղ ընտանիք է քայքայվում, դու էլ քո նստելո՞ւ մասին ես մտածում:
 ՌԱՖԻԿ – Շատ ներողություն, տանդ մեջ չլիներ, ես ականջիդ մի բան կասեի:
 ՀՐԱՉ – Դրանից են կողմ էլ ի՞նչ պիտի ասես: Վախեցնո՞ւմ ես... Առանց քո ասելու էլ մենք նրան էնտեղ թողնողը չենք, եթե գա...
 ՌԱՖԻԿ – Ինչի՞ պիտի չգա, էդ տարիքում նրանք իրարից ի՞նչ պիտի հասկանան:
 ՀՐԱՉ – Գնա հորեղբորդ ասա, ի՞նձ ես ասում:
 ՌԱՖԻԿ – Դու քո զոքանչին ասա, ես իմ հորեղբորը կասեմ:
 ՀՐԱՉ – Եթե չուզեց, դեմ եղավ հորեղբայրդ, չթողեց գա, հիմա դու ասա՝ մենք ի՞նչ անենք:
 ԼԱԼԱ – Ես զիտեմ, թե ինչ անեմ: (Գնում է դեպի դուռը):
 ՀՐԱՉ – (Ետևից) Ո՞ր ես գնում:
 ԼԱԼԱ – Գրողի ծոցը:
 ՀՐԱՉ – Առանց ի՞նձ... Սպասիր, ես էլ եմ գալիս:
 (Դուրս են գնում: Բեմը դատարկվում է:

Անպատասխան հնչում է հեռախոսի զանգը):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Արիսի առանձնատունը: Գորգապատ, ընդարձակ հյուրասենյակ երկրորդ հարկում վայելուչ կահավորումով:

Չարուհին ծաղկանկար խալաթը հագին ընկղմված է շքեղ բազկաթոռում: Նրա ոտքերի առջև ծալապատիկ նստած է Արիսը:

ՉԱՐՈՒՀԻ – Դուք ներսից փակե՞լ ես:

ԱՐԻՍ – Չէ, էստեղ քեզ վրա դու փակող չի լինելու, միշտ պիտի բաց մնա:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ, չէ, գիշերը կփակես ներսից:

ԱՊԻՍ – Ոնց որ դու կասես...

ՉԱՐՈՒՀԻ – Աղջկանիցս եմ անհանգիստ:

ԱՐԻՍ – Ուֆիկը գնաց, կասի, էլ ինչո՞ւ ես անհանգստանում, ցավո՞ւ տանեմ: Իզուր էլ չթողեցիր ես զանգահարեմ: Չարուհի, հիմա էս մե՞նք ենք:

ՉԱՐՈՒՀԻ – Բա ո՞վ ենք, որ մենք չենք:

ԱՐԻՍ – Երազո՞ւմ չենք:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ...

ԱՐԻՍ – Առաջ, որ ես քեզ տեսնում էի երազում, էլ չէի ուզում արթնանալ: Չարչարվում էի, որ էլի քնեմ: Ես քեզ հետ խոսում էի, դու ինձ հետ չէիր խոսում, երազում էլ էիր խոռով պահում, այ անխիղճ: Ինձ կանգնած թողնում, գնում էիր: Էլ իզուր տեղը ինչի՞ համար քնեի: Էն որ իրենց սիրածների հետ ամուսնանում էին, է՛, նրանք իրենց սիրածներին չեն սիրել: Եթե սիրեին, ո՞նց կամուսնանային: Իրարից կխռովեին, կբաժանվեին իրարից՝ իրար համար գժված: Ես չդիմացա, երեխա էի... Ո՞վ լինեիր իմ տեղը, որ դիմանար: Երանի քիչ սիրեի...

ՉԱՐՈՒՀԻ – Ես էլ...

ԱՐԻՍ – Դրա համար իրար կորցրինք: Քեզ որ տեսնում էի, չէ՞...

ՉԱՐՈՒՀԻ – Ի՞նչ...

ԱՐԻՍ – Դե հիմա ո՞նց ասեմ, որ ես էլ չզիտեմ: Մի տեսակ էի լինում, ոնց որ ես էլ ես չլինեի: Մի հնար լինեիր, էլի հետ գնայինք էնտեղ...

ՉԱՐՈՒՀԻ – Որտե՞ղ...

ԱՐԻՍ – Էնտեղ, էլի, էնտեղ...

ՁԱՐՈՒՀԻ – Բա որ ես քեզ չտեսնելու էի տալի՞ս...

ԱՐԻՍ – Գնանք, էլի չտեսնելու տուր... Մեկ է, ես քեզ տեսնում էի:

ՁԱՐՈՒՀԻ – Ես էլ քեզ էի տեսնում:

ԱՐԻՍ – Ո՞նց էիր տեսնում, որ իմ կողմը չէիր մայում:

ՁԱՐՈՒՀԻ – Առանց մայելու էի տեսնում:

ԱՐԻՍ – Արյանդ ճնշումը հո չբարձրացա՞վ:

ՁԱՐՈՒՀԻ – Չէ, իջնում է:

ԱՐԻՍ – Ուրեմն իմն է բարձրանում: Մի անգամ էլ գիշերվա մեկի, երկուսի կողմն էր՝ մի երեսուն, քառասուն տարի առաջ... Չեր դպրոցի դուռը թակեցինք ընկերոջս հետ, երկուսս էլ խմած էինք:

ՁԱՐՈՒՀԻ – Ինչի՞ համար էիք թակում գիշերվա կեսին:

ԱՐԻՍ – Ուզում էի մտնեմ առաջին հարկի ձեր դասարանը:

ՁԱՐՈՒՀԻ – Մտնեիր, որ ի՞նչ անեիր:

ԱՐԻՍ – Ոչ մի բան... Ուզում էի ընկերոջս ցույց տամ... Պահակը երևի քնած էր, չեկավ, մենք էլ թողեցինք գնացինք:

ՁԱՐՈՒՀԻ – Լավ է, որ չի եկել, պիտի իմանար, թե գող եք:

ԱՐԻՍ – Աղերդ հո չե՞ն ցավացնում:

ՁԱՐՈՒՀԻ – Չէ...

ԱՐԻՍ – Ամեն անգամ կայարան գնալիս տրամվայից մայում եմ ձեր դասարանի լուսամուտերին: Մտքիս մեջ ասում եմ՝ էս լուսամուտերին հետո էլ մայող չի՞ լինելու: Ասե՛ք՝ կամ որ մայեցին ի՞նչ... Մի անգամ էլ մութ էր, ասացի՝ կարո՞ղ է էլի ներսում եմք:

(Մուտքի զանգ):

ՁԱՐՈՒՀԻ – Էս դռան զանգը չէ՞ր:

ԱՐԻՍ – Չէ, եթե դռան զանգը լիներ, ես էլ կլսեի:

ՁԱՐՈՒՀԻ – Ես էլ իմացա, թե դռան զանգն էր: Արիս, էդ ո՞նց պատահեց, որ մնացիր վերելակի մեջ:

ԱՐԻՍ – Եսիմ... Շունչս կտրում էր:

ՁԱՐՈՒՀԻ – Բա ինչո՞ւ էիր մերսից ասում լավ եմ, չվախենա...

ԱՐԻՍ – Ասում էի, որ իմ մասին չմտածես: Վախենում էի, որ վախենաս: Ասում էի՝ Ձարուհին էլ հիմա էնտեղ է իրեն կորցրել: Որ մեռնեի, ուրեմն քեզ էլ չէի՞ տեսնելու:

ՁԱՐՈՒՀԻ – Քեզ որ մի բան պատահեր, ես էլ ո՞նց կապրեի...

ԱՐԻՍ – Առանց քեզ միշտ էլ իբր վերելակում չեմ մնացել, ի՞նչ եմ արել... Հիշո՞ւմ ես, մի անգամ էլ...

(Չանգը կրկնվում է):

ՉԱՐՈՒՀԻ – Ոնց որ թե դռան զանգն էր:

ԱՐԻՍ – Ականջդ էլի ձենով ընկա՞վ:

ՉԱՐՈՒՀԻ – Բա ինչն՞ի ինձ թվաց...

ԱՐԻՍ – Լսողությունից ո՞նց ես:

ՉԱՐՈՒՀԻ – Մեկ-մեկ էնքան էլ լավ չեմ լսում առաջվա պես:

ԱՐԻՍ – Կտավատի ձեթ կտամ, կկաթեցնես:

ՉԱՐՈՒՀԻ – Ռաֆիկն էս ինչն՞ի ուշացավ, կարո՞ղ է՝ շենքի տեղը չի գտնում:

ԱՐԻՍ – Կգա, ցավդ տանեմ, մի անհանգստանա:

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, քո լսողությունը ո՞նց է:

ԱՐԻՍ – Նայած օր...

(Նորից զանգ):

ՉԱՐՈՒՀԻ – Ոնց որ թե զանգն է...

ԱՐԻՍ – Մի բույե... (Լսում է) Այ, հիմա որ դռան զանգն էր, ես էլ լսեցի: (Կայտառացած կանգնելով) Բա՛ց է, բա՛ց է, համեցեք...

Այլայլված մտնում է Լալան, ետևից ներս են խուժում

Հրաչն ու Ռաֆիկը:

ԱՐԻՍ – (Չեռքերը տարածած, զվարթ) Եկա՛ն, եկա՛ն...

ՌԱՖԻԿ – Այ հոպար, մենք դրսից ձեր ձայները լսում ենք, դուք զանգի ձայնը չե՞ք լսում:

(Չարուհին փղձկում է: Լալան ընկնում է մոր գիրկը:

Իրար փաթաթված հեկեկում են):

ԼԱԼԱ – (Հեռ քաշվելով) Մամա, գնացիք...

ԱՐԻՍ – Ո՞ր գնացիք... Իմ տուն մտնողը էդպես ո՞նց կթողնի կզնա:

ԼԱԼԱ – Չեզ ո՞վ է իրավունք տվել, որ եկել, մորս բերել եք:

ԱՐԻՍ – Իրավունք տվող է՞լ պիտի լինեք, բալաս:

ՉԱՐՈՒՀԻ – Ինքը չի բերել, ես եմ եկել:

ՀՐԱԶ – Ասում էի, չէ՞...

ԼԱԼԱ – Գնացիք, մամ...

ԱՐԻՍ – (Բռնելով Չարուհու ձեռքը) Չէ՛, չեմ թողնի, Չարուհին պիտի էստեղ մնա, իմ բալա:

ԼԱԼԱ – Այդ էր պակաս... Թողեք, թողեք մորս ձեռքը:

ՌԱՖԻԿ – Հոպար, թո՛ղ, թո՛ղ գնան:

ԱՐԻՍ – Ես գիտեմ, թե դու ինչու ես ասում՝ թող գնան:

ԼԱԼԱ – Թողեք մորս ձեռքը:

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, թող...

ԱՐԻՍ – Չէ, չեմ թողնի:
 ԼԱԼԱ – (Չարմանքով) Վա՛յ... Ուզում եք ոստիկան կանչե՞մ,
 որ թողնեք: Թողեք մորս ձեռքը: Մամ, գնացի՞նք:
 ՉԱՐՈՒՀԻ – Գա՞մ որ...
 ԼԱԼԱ – Էս ի՞նչ է ասում... Էստեղ մնաս, որ ի՞նչ անես:
 ՉԱՐՈՒՀԻ – Շա՞տ գիտեմ...
 ԼԱԼԱ – Դե որ չգիտես, արի:
 ԱՐԻՍ – Չարուհի, ինձ մե՞նակ չթողնես ես պատերի մեջ:
 ՌԱՖԻԿ – Այ հոպար, ուրե՛մն մենք քո կողքին չե՞նք, իմ կինը,
 իմ երեխաները քա քո կողքին չե՞ն: Ուրե՛մն ի՞նքը պիտի քեզ պահի:
 ԱՐԻՍ – Չէ, ինքը չի ինձ պահելու, ես եմ իրեն պահելու:
 ՌԱՖԻԿ – Մեկը լինի քեզ պահի, դու կին պահո՞ղ ես: Աղջիկն
 ու փեսան եկել են ետևից, թող էդ կինը գնա:
 ԱՐԻՍ – Ո՞ր գնա:
 ՌԱՖԻԿ – Թող գնա իր տուն:
 ԱՐԻՍ – Բա սա ո՞ւմ տունն է, իր տունը չի՞:
 ՌԱՖԻԿ – Չէ, սա քո տունն է, դու էլ կտակել ես ինձ, ես էլ մարդ
 եմ գտել, որ ծախսեմ քո համաձայնությամբ, այ հոպար:
 ԱՐԻՍ – Ինձ էլ մեջը ծախսիր, պրծ՞նի: Իմ ապրելն էլ քանի՞
 կոպեկ արժի:
 ԼԱԼԱ – Իմ համբերությունն էլ սահման ունի, գիտե՞ք: Մեծ
 մարդ եք, անհարմար չե՞ք զգում: Թողեք մորս ձեռքը: Մամ, ասա՛
 ձեռքդ թողնի:
 ՉԱՐՈՒՀԻ – Արիս, թող:
 ԱՐԻՍ – Որ թողնեմ, կգնա՞ս:
 ՉԱՐՈՒՀԻ – Չէ...
 ԱՐԻՍ – Բա էլ ինչո՞ւ թողնեմ:
 ԼԱԼԱ – (Հրաշի՛ն) Դու ինչո՞ւ ես լռել, ասա թողնի:
 ՀՐԱՉ – Ինչ տարբերություն, ասում եք, էլի... Պարոն Արիս,
 թող...
 ՌԱՖԻԿ – Հոպար, թող, անհարմար է:
 ՀՐԱՉ – Պարոն Արիստակես, Չարուհի Արրահամովնան թող
 ինքը որոշի՛ գալիս է՝ գա, մնում է՝ մնա:
 ԼԱԼԱ – Ո՞նց թե մնա, որտե՞ղ մնա...
 ՀՐԱՉ – Ես հո չեմ ասում, որ մնա... Ես ասում եմ՝ գալիս է՝ թող
 գա, մնում է՝ մնա... Ոնց որ ինքը կուզի...
 ԼԱԼԱ – Ավելի լավ է՝ դու ոչ մի բան էլ մի ասա:

ՀՐԱՉ – Չեմ ասում, ասում ես՝ ասա, ասում եմ՝ ասում ես՝ մի ասա, բա ի՞նչ անեմ, որ չասեմ:

ՌԱՖԻԿ – Հոպար, բռնել կանգնել ես, գոռով հո չե՞ս պահելու եղ կնոջը:

ԼԱԼԱ – Էս շառը որտեղի՞ց եկավ, փաթաթվեց մեզ, տեր Աստված:

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, թող...

ՌԱՖԻԿ – Հոպար, թող, աղջիկը լաց է լինում:

ԱՐԻՍ – Իմ սրտից արյուն է գնում, դու եղ ի՞նչ ես ասում...

ԼԱԼԱ – (Ռաֆիկին) Ես ձեզ խնդրում եմ՝ ձեր հորեղբորն ասեք, որ մորս ձեռքը անմիջապես բաց թողնի:

ՌԱՖԻԿ – Հոպար, աղջիկն ասում է՝ քեզ խնդրում եմ, ձեր հորեղբորն ասեք, թող մորս ձեռքը անմիջապես բաց թողնի:

ԱՐԻՍ – Խույ չեմ, լսում եմ: Բաց թողնեմ, որ գնա՞:

ՌԱՖԻԿ – Բա հո չի՞ մնալու...

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, ձեռքս թող... Չեմ գնա:

ԱՐԻՍ – Դու չես գնա, է՛, ինքը կտանի:

ՀՐԱՉ – Ինչի՞ համար եք խառնվել իրար... Էս կնոջ համար ոնց լավ է, թող եղպես անի:

ԼԱԼԱ – Դու ուզում ես, որ քեզ, քեզ համար լավ լինի: Մորս բնակարանը ծախեցիր, ավտո առար, հիմի էլ ուզում ես տնից թողնի գնա՞: Ո՞ր գնա, բայց ո՞ր գնա, է՛, տեղ ունի՞ր գնալու, որ գնա:

ՀՐԱՉ – Ամոթ է, Լալա, ես մարդկանց ներկայությամբ եղ ինչե՞ր ես խոսում... Ավտո էլ որ չեմ ասում... Կրակն եմ ընկել ես եղ ավտոյի ձեռքը: Բակում ընկած է, ոչ քշվում է, ոչ բան... Բա դա ավտո՞ է, որ երեսով ես տալիս: Չարուհի Աբրահամովնան թող գա, իր տանը մնա, ինչո՞ւ է վեր կացել եկել:

ՉԱՐՈՒՀԻ – Դա իմ տունը չի, դա քո տունն է:

ՀՐԱՉ – Ի՞նչ տարբերություն... Ուրեմն իմ տունը քո տունը չի՞, Չարուհի Աբրահամովնա:

ՉԱՐՈՒՀԻ – Չէ, իմ տունն էր քո տունը, որ էժան գնով ծախեցիր:

ԼԱԼԱ – Մամա, դու առանց ինձ կապրե՞ս:

ՉԱՐՈՒՀԻ – Դու առանց ինձ կապրե՞ս, որ ես առանց քեզ ապրեմ:

ԼԱԼԱ – Բա էլ ինչի՞ մասին է խոսքը... Ասա՛ ձեռքդ բաց թողնի, գնանք:

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, թող...

ՌԱՖԻԿ – Հոպար, թող, բաց թող էդ կնոջ ձեռքը՝ գնա իր տուն:

ԱՐԻՍ – Նա ուրիշ տուն չունի, սա է իր տունը, ինչ ունենալունեն
իրենն է:

ՌԱՖԻԿ – (Յնգված) Էս ի՞նչ է ասում... Այ հոպար, տունը
կտակել ես ինձ, հետո ասացիր ծախում եմ, ես էլ մարդ գտա, որ
առնեն, փողի կեսն էլ տվել եմ, հիմա էլ ասում ես՝ իրենն է:

ՀՐԱՉ – Մարդու սեփական տունն է, ինչ ուզի կանի, ում կուզի
կտա:

ՌԱՖԻԿ – Լսի՛ր, լսի՛ր, է՛, լսի՛ր... Դու գնա ես կնոջ տան փողե-
րով առած քո ավտոն սարքի, հիմի էլ ուրիշ բա՞ն է անցնում մտքովդ:
Հիմա էլ ուզում ես էս տանը տիրանա՞ս:

ՀՐԱՉ – Ո՞վ, ե՞ս, Ռաֆիկ, չե՞ս ամաչում...

ՌԱՖԻԿ – Դու ամաչիր, դու, որ չես ուզում գոքանչիդ տանես:

ՀՐԱՉ – Ո՞վ չի ուզում, դու իմ գոքանչին ինձնից շա՞տ ես սի-
րում, որ խոսում ես...

ՌԱՖԻԿ – (Լալալին) Չեր ամուսնուն ասեք իրեն կարգին պա-
հի ուրիշի տան մեջ, գլխից ձե՞ն է քաշել:

ՀՐԱՉ – Էս ո՞ւր ընկանք, այ մարդ... Էս ի՞նչ է ասում...

ԼԱԼԱ – Ինձ տուն պետք չի, ինձ իմ մայրն է պետք, բաց թողեք
մոքս ձեռքը:

ՌԱՖԻԿ – Հոպար, թո՛ղ, էլի, թո՛ղ... Հիմա էդ մարդիկ որ գան,
ես նրանց ի՞նչ պատասխան տամ, հոպար... Համաճայնությունը տ-
վիր, դու ասացիր, որ տունը ծախենք, գնանք իմ երեքսենյականոցում
միասին ապրենք: Մարդիկ եկան, տեսան, հավանեցին, փողի կեսն էլ
տվին:

ԱՐԻՍ – Տար հետ տուր իրենց:

ՌԱՖԻԿ – (Իրեն կորցրած) Ո՞նց հետ տամ, որ վրայից ծախսել
եմ:

ԱՐԻՍ – Չծախսեիր, բա ես մեղք ունե՞մ:

ՌԱՖԻԿ – (Շշմած) Ո՞նց թե...

ՀՐԱՉ – Ճիշտ է ասում:

ՌԱՖԻԿ – Տո դու ո՞վ ես, է՛, դու ո՞վ ես, որ մեջ ես ընկնում:

ՀՐԱՉ – Բա դու ո՞վ ես:

(Քաշքշում են իրար: Արիսն ընկնում է):

ՋԱՐՈՒՀԻ – Ընկա՛վ, ընկա՛վ... Քոռանամ ես, մարդուն զցե-
ցիք:

ԱՐԻՍ – (Հրաչի և Ռաֆիկի օգնությամբ կանգնում է, պոռթկալով) Էն ժամանակ էն հիմարները խանգարեցին, հիմի էլ դո՞ւք... (Նորից բռնում է Չարուհու ձեռքը):

ՉԱՐՈՒՀԻ – Արիս, ձեռքս թող...
ԱՐԻՍ – (Ետ քաշելով ձեռքը) Թողնում եմ, ըհը՛...
ԼԱԼԱ – Մամ, դե արի...
ԱՐԻՍ – Չարուհի, թող քո սրտովը լինի, ոնց կուզես՝ էնպես էլ արա...

ԼԱԼԱ – Մամա, գնացի՞նք: Ուշանում ենք, մամա:

(Չարուհին երկրնտրանքի մեջ՝ արգելակված կանգնած է լուռ):

ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա...

ԼԱԼԱ – Մամա...

ՌԱՖԻԿ – Տիկին Չարուհի, ձեր աղջիկը ձեր ետևից է եկել, ինչո՞ւ եք սպասեցնում իզուր տեղը:

ԱՐԻՍ – Քեզ խոսք չի հասնում:

ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա, կամ ես կողմ, կամ էն կողմ...

ՌԱՖԻԿ – Կամ չկա...

ԱՐԻՍ – Չարուհի...

ԼԱԼԱ – Մամա, շա՞տ պիտի սպասենք:

ԱՐԻՍ – Չարուհի...

ՌԱՖԻԿ – Տիկին Չարուհի...

ԼԱԼԱ – Մամ, մի ուշացրու...

ՀՐԱՉ – Չարուհի Աբրահամովնա...

ԱՐԻՍ – Չարուհի...

ԼԱԼԱ – Մամա...

ԱՐԻՍ – Չարուհի...

(Չարուհին ուղղվում է դեպի դուռը: Դուրս է գնում: Ռաֆիկն ու Հրաչը հետևում են նրան: Արիսն արտաքուստ անհաղորդ՝ մնացել է մոլորված կանգնած: Չարուհին վերադառնում է՝ բազմելով նույն բազկաթոռին):

Արիսը ծալապատիկ նստում է նրա ոտքերի առջև՝ դեռ ուշքի չեկած:

Չարուհին շոյում է նրա գլուխը):

ՉԱՐՈՒՀԻ – Վեր կաց, կմքսես:

ԱՐԻՍ – Չէ՛, չեմ մքսում: (Գլուխը դնում է Չարուհու ծնկին):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

2001 թ. հոկտեմբեր

ՏԵՐ, ՄԻ՛ ԹՈՂ ՄԵՉ ԱՆՏԵՐ

Կատակերգություն երկու մասից

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՍԵՆ (ՍԵՆԵՔԵՐԻՍ)		
ԱՐՈՒՄ	–	նրա կինը
ՄՈՒԿՈՒՉ	–	կնոջ եղբայրը
ՀԱԿՈՔ	–	ամուսիններ
ԿԱՐԻՆԵ		
ՏԱՐԵՑ ԿԻՆ		
ՀԱՐՔԱԾ ՏՂԱՍԱՐԴ	–	Սուրեն անունով, իրեն անվանում է Սուրո
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՍԱՐԴ		
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ		
ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ		
ՆՐԱ ԱՄՈՒՄԻՆԸ		
ԱՌԱՋԻՆ ԳՈՂ		
ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂ		
ՎԱՆՈՒՇ		
	1999	ամուսիններ
ՋԱՐԻԿ		
ԳԻՇԵՐԱՆՈՑՈՎ ԿԻՆ		
ՆՐԱ ԱՄՈՒՄԻՆԸ		

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Մենի բնակարանը: Դռան զանգ:

ԱՐՈՒՄ – Հիմա... Ո՞վ է:

ՄԵՆ – (Գոռոցը կից սենյակից) Չբացես: (Նետվելով ներս, ահաբեկված) Չբացես:

ԱՐՈՒՄ – (Շրջվելով դեպի ամուսինը, ըմբոստացած) Կբացեմ:

ՄԵՆ – (Տազնապով) Չբացես՝ ասում եմ: (Փակում է կնոջ ճանապարհը): (Չանգեղը շարունակվում են: Խոսում են գրեթե շշուկով):

ԱՐՈՒՄ – Իսկ ի՞նչ գիտես՝ ով է, որ ասում ես՝ չբացես:

ՄԵՆ – Գիտեմ:

ԱՐՈՒՄ – Չգիտես:

ՄԵՆ – Գիտեմ՝ ասում եմ... Ինքն է...

ԱՐՈՒՄ – Զեզո՞ւմ ասեց, որ ինքն է: Կարող է՝ ուրիշ մարդ է:

Հեռու գնա:

ՄԵՆ – (Խուճապի մեջ) Չե՞ս լսում, ինքն է:

ԱՐՈՒՄ – Թող, թող, ինքը չի:

ՄԵՆ – (Մարսափած) Ինքն է:

ԱՐՈՒՄ – Ասում եմ՝ ինքը չի, վա՛յ...

(Փակում են դուռը):

ՄԵՆ – Տեսա՞ր, որ ինքն է: (Տեղ է փնտրում թաքնվելու համար)

Չբացես:

ԱՐՈՒՄ – Թողնեմ դուռը կտարի՞: Ասում է՝ չբացես: Ո՞նց չբացեմ:

ՄԵՆ – Չբացես:

ԱՐՈՒՄ – Ես չբացեմ, ինքը կբացի:

ՄԵՆ – (Մեռումն ուշադրությամբ դեպի դուռը, վախվորած)
 Գնա՞ց:

ԱՐՈՒՄ – Գնաց՝ էլի կգա: Ջարդի, հիմա էլ անդուռ մնա՞նք: Բա սա դուռ է՞: Մի քիչ ուժեղ քացի տան՝ կբացվի: (Լացակամած) Էս դռա՞ն համար ես ուզում մնաս: Ուրիշները սովետի դռները փոխեցին, բերեցին երկաթից դռներ դրին: Դու էլ փոխեիր:

ՄԵՆ – Ինչո՞վ...

ԱՐՈՒՄ – Ուրիշներն ինչո՞վ են փոխում:

ՄԵՆ – Ունեն փոխում են:

ԱՐՈՒՄ – Դու էլ ունցիր:

ՄԵՆ – Ո՞նց ունենամ...

ԱՐՈՒՄ – Ուրիշները ո՞նց են ունենում:

ՄԵՆ – (Կասկածանքով նայում է դռան կողմը) Գնա՞ց:

ԱՐՈՒՄ – Դե դու էլ գնայիր, որ ինքը չգար:

ՄԵՆ – Գալիս է՝ թող գա, չեմ ուզում՝ չեմ գնում, ում ի՞նչ գործն է:

(Լսվում է տեղահան եղող դռան ուժեղ ճռռոցը: Մենք թափահարվում է կանգնած տեղում՝ իրեն զցելով կից սենյակը):

ԱՐՈՒՄ – Վա՛յ, ջարդե՛ց, ջարդե՛ց... (Գնալով դեպի դուռը)

Սպասիր, բացեմ:

ՄՈՒԿՈՒՉ – (Մտնում է՝ մուտքի հանված դուռը ներս բերելով, հևալով) Քո բացելն ինձ էլ պետք չի: (Դուռը հենում է պատին):

ԱՐՈՒՄ – (Խփելով ծնկներին) Էս ի՞նչ արեցիր:

ՄՈՒԿՈՒՉ – (Փնջացնում է՝ սպառնալից նայելով այս ու այն կողմ) Ո՞ր է...

ԱՐՈՒՄ – Ո՞վ...

ՄՈՒԿՈՒՉ – (Չայնը բարձրացնելով) Ով... Չգիտե՞ս՝ ով... Ո՞ր է, ո՞ր է մարդը... Այսպորդ առաջ էլ դուռը չես բացո՞ւմ: Չգիտե՞ս, որ կհանեն, կբերեն, կդնեն տանդ մեջտեղը:

ԱՐՈՒՄ – Խոհանոցում գործ էի անում, զանգի ձայնը ուշ լսեցի:

ՄՈՒԿՈՒՉ – (Հոխորտանքով) Ինչո՞ւ, խլացե՞լ էիր, ականջներիդ մեջ բամբակ էիր խրե՞լ: Ես դռան հետևից լսում եմ՝ ինչ եք խոսում, դու զանգի ձայնը չես լսո՞ւմ: Թափում էի, էլի չէի՞ր լսում: Ո՞ր է, ո՞ր է... (Մտնում է կից սենյակը, վերադառնալով Մենի օձիքից բռնած, քաշելով, բերելով ներս) Արի, ի՞նչ ես ծակը մտել: Դու՞ն էիր ասում չբացես: (Թափահարում է՝ ծեփելով պատին):

ՄԵՆ – Մեջքս...

ԱՐՈՒՄ – (Ընկնելով մեջտեղ, ազատելով ամուսնուն) Լավ էլի, Մուկուչ, երեխա հո չե՞ս: Դուռը հանել ես, հարևանները հանկարծ կլսեն:

ՄՈՒԿՈՒՉ – Մարդո՞ւղ ես պաշտպանում: Հեռու գնա ինձանից, հեռու գնա:

ՄԵՆ – Մեջքս ցավաց:

ՄՈՒԿՈՒՉ – **(Հեզմանքով)** Ազնիվ խո՞սք... Սրա քիթ ու մոթին ցայեք, բա սա մա՞րդ է:

ՄԵՆ – Բա ի՞նչ եմ, որ մարդ չեմ:

ՄՈՒԿՈՒՉ – Բա որ մարդ ես՝ պայմանավորվել էինք, ինչո՞ւ չեկար: Ուղիղ երկու ժամ է՝ զնացել եմ, շենքի առաջ կանգնել, քեզ եմ սպասում: Ի՞նձ ես ձեռ առնում, թե՞ քեզ... Դու ո՞վ եղար, է՛, դու ո՞վ եղար, որ ինձ մատներիդ վրա խաղացնում ես ամեն անգամ:

ԱՐՈՒՄ – Մի քիչ ցածր, դուռը հանել ես, անցնող-դարձողը հանկարծ կլսի:

ՄՈՒԿՈՒՉ – Լսում են՝ թող լսեն, ումի՞ց եմ վախենում: **(Տանում դուռը կախում է տեղում):**

ԱՐՈՒՄ – **(Մենին հրմշտելով)** Դե դու էլ գնալիք, էլի:

ՄԵՆ – Ո՞նց գնամ, է՛, ո՞նց գնամ: Իմ դրուքյան մեջ էլ մտեք:

ՄՈՒԿՈՒՉ – **(Հարձակողական)** Ո՞նց թե... Ո՞նց թե... Էս ի՞նչ է ասում... Մենք զնանք, դու մնա՞ս:

ԱՐՈՒՄ – **(Փղձկում է):**

ՄՈՒԿՈՒՉ – **(Բռնում է Մենի օձիքից)** Մտածում ես՝ նո՞ր ես խոսում, թե՞ խոսում ես՝ նոր մտածում: Դու չգաս՝ քրոջս էլ չեմ թողնի զա: Բա որ ես քո դրուքյան մեջ մտնեմ, իմ դրուքյան մեջ ո՞վ մտնի:

ԱՐՈՒՄ – **(Լացախառն)** Ասա՛, ասա՛, էլի՛ ասա...

ՄԵՆ – Թո՞ղ...

ՄՈՒԿՈՒՉ – Թղթերը լրիվ պատրաստ, էլ ոչ մի խանգարող բան չկա, հիմա էլ դո՞ւ ես ինձ փաստի առաջ կանգնեցրել:

ՄԵՆ – Ո՞վ է կանգնեցրել, ե՞ս եմ կանգնեցրել: Թո՞ղ...

ՄՈՒԿՈՒՉ – Բա ո՞վ է կանգնեցրել, ե՞ս եմ կանգնեցրել:

ԱՐՈՒՄ – Բա ո՞վ է կանգնեցրել, ի՞նքն է կանգնեցրել:

ՄԵՆ – Ես իմ երկիրը թողնեմ, ո՞ւր գնամ:

ՄՈՒԿՈՒՉ – **(Պայթելով)** Սա քո՞ երկիրն է, սա քո՞ երկիրն է:

ՄԵՆ – Բա ո՞ւմ երկիրն է:

ՄՈՒԿՈՒՉ – **(Թողնելով օձիքը, լարված)** Դու չգիտես ում երկիրն է, ի՞նձ ես հարցնում: **(Վառված)** Ուզո՞ւմ ես մեկ-մեկ անունները

տամ, ուզո՞ւմ ես... Տա՞մ, տա՞մ... Ասա՛, ասա՛ տա՞մ, անունները մեկ-մեկ տա՞մ, որ իմանաս՝ ում երկիրն է:

ԱՐՈՒՄ – Ինքը իբր չգիտի՞...

ՄՈՒԿՈՒՉ – Քանի՞ տարի եղավ, որ չես աշխատում, հաշվե՞լ ես: Ասա, հաշվե՞լ ես: Հաշվիր էլի՛, հաշվիր...

ԱՐՈՒՄ – (Լացը զսպելով) Ես եմ հաշվում, ինքը չի հաշվում:

ՄՈՒԿՈՒՉ – (Լեզվով ծպպացնում է) Երկիր էլ որ չի ասում...

Հացի փող էլ չկա տանդ, որ երխաներդ կուշտ փորով սեռի հաց ուտեն, բա դու մա՞րդ ես: Քո հայրենիքը քո երեխաներն են: Դու ինձանից հայրենասեր չլինես: Մեկի փոխարեն հետո չորս-հինգ հատ Մասիս եմ տանում վերնիսածից: Էդ քո հայրենասերները չարի՞ն, որ է՛ս օրն ընկանք: Տեսա՞ր՝ ոնց խաբեցին... Դրանց ուզածն ի՞նչ էր՝ իրենց դրյակները չէ՞ր: Ես դրանց... (Շրթունքների շարժումից հասկացվում է, որ հայտնում է) Բա մենք է՞ս երկիրն էինք ուզում... Ում ընտրեցինք՝ չսխալվեցի՞նք: Մեկ է, մեկ է՝ ում էլ ընտրեք, սխալվելու եք: Բա էս տեսակ ժողովրդին էս օրը կոցե՞ն: Երկիրդ առել են՝ քեզ էլ մեջը, դու քեզնից էլ տեղեկություն չունես: Հայից ամեն ինչ կլինի, մուրացկան կլինի՞, որ դարձնում են: Տեսնեմ հետո՛, հետո՛ ում պիտի կառավարեն... Իրենք՝ իրենց... Նայում եմ տանդ՝ մարդու լաց է գալիս: Տղամարդ ես՝ դե տունդ պահիր, պահիր, էլի, պահիր, ինչո՞ւ չես պահում:

ՄԵՆ – Պահում եմ:

ԱՐՈՒՄ – (Լացակումած) Լա՛վ էլ պահում ես... Ստիպում ես, որ բերանս բացե՞մ... (Փղձկում է) Ես էլ մեղք եմ, չէ՞, հազիս մի շոր չկա:

ՄԵՆ – Ո՞նց չկա, այ կնիկ, բա դա ի՞նչ է, շոր չի՞:

ԱՐՈՒՄ – (Լացով) Չէ, շոր չի, քեզ է թվում, թե շոր է: (Երդվյալ) Չէ՛, ես չեմ մնա՛, չե՛մ մնա...

ՄԵՆ – Չես մնա՛ մի մնա, ո՞վ է քեզ ստիպում:

ՄՈՒԿՈՒՉ – Էդ քո հագի սովետի շորերն էլ որ մաշվեն, տեսնեմ դու ի՞նչ պիտի հագնես: Արխիվի աշխատող էիր՝ չբռնեցի՞նք քեզ մման աշխատողին կրճատեցին, իսկականից արխիվ գցեցին:

ԱՐՈՒՄ – (Արցունքները սրբելով) Չոցեցի՞ն, ասա...

ՄՈՒԿՈՒՉ – Ազգային ժողովի պատգամավոր էիր ուզում դառնալ ոչ բարով: Դե դառնայիր, էլի, դառնայիր, ինչո՞ւ չդառար: (Որոտալով) Մուրացկանի պառլամենտ է լինո՞ւմ: Փողոցները լիքը մուրացկան չե՞ն: Չգիտես՝ որին տաս, որի կողքից անցնես... Ազգ չեն

պահում՝ Ազգային ժողով են պահում: Հիմա ինչի՞նչ վրա ես դրել հույսդ: Դու հայ ես, մենք հայ չե՞նք:

ՄԵՆ – Գնացող ես, պարզ չի՞, որ ինչ բերանդ գա, կասես:

ՄՈՒԿՈՒԳ – Մխալ բան են ասում՝ ասա սխալ ես ասում:

Ասա՛...

ՄԵՆ – Սովոր եք, որ տեղից տեղ չվեք: Իբր նորություն են... Հենց նեղն եք ընկնում, չվում եք:

ՄՈՒԿՈՒԳ – Չենք կարողանում ապրել, բա ի՞նչ անենք:

ՄԵՆ – Գնում եք, բայց ես գիտեմ, էլի հետ եք գալու:

ՄՈՒԿՈՒԳ – Է՛, լավ կլինի, հետ կգանք: Ինչի՞ համար ես խառնըվել իրար, ի՞նչ է պատահել: **(Մոլեզմած)** Հայը աղբանոց մտնի՞, հա՞յը... Հավ են սարքում, մտցնում են աղբանոցները, որ ձու ածենք՝ էլի իրե՞նք ուտեն... Մենք է՞ս էինք... Ազգի լիմիտը պրծա՞վ... Բա որ ես էինք, էսքան հազար տարի ո՞նց ենք դիմացել: Դու ուզում ես հավ լինես՝ եղիբ: Մենք հավ չենք, մենք հայ ենք:

ՄԵՆ – Ժամանակավոր դժվարություններ են, չեք դիմանում, ես մեղք ունե՞մ:

ՄՈՒԿՈՒԳ – **(Խորշանքով ծամծմելով քառերը)** Ա՛յ տղա, ա՛յ տղա, դժվարությունները չեն ժամանակավոր, է՛, մենք ենք ժամանակավոր: Սոված փորով անկախություն է լինո՞ւմ, խելքդ գլուխդ հավաքիբ: Էս ո՞ւմ հետ ես ամուսնացել, այ քույր:

ԱՐՈՒՄ – Ես չեմ իր հետ ամուսնացել, ինքն է ինձ հետ ամուսնացել: Ինքն ինձ ճանաչել է, ես իրեն չեմ ճանաչել:

ՄԵՆ – Եթե դու ինձ հետ չամուսնանայիր, ես քեզ հետ չէի ամուսնանա: Դու թե ինձ ճանաչեիր, ես էլ քեզ կճանաչեի: **(Հանկարծակի բռնկումով)** Ես էլ ես տեսակ մարդ եմ, ի՞նչ եք ուզում ինձանից:

ՄՈՒԿՈՒԳ – **(Թափ տալով ձեռքը, վերևից)** Վա՛յ ես քո տեսակը... **(Մնացյալը բարձրաձայն չասված հայեռյանք է հասկացվում շրթունքների շարժումից):**

ԱՐՈՒՄ – **(Արտասովախառն)** Դու երջանիկ ես, որ ինձ մման կին ունես, ես եմ դժբախտ, որ քեզ մման ամուսին ունեմ:

ՄՈՒԿՈՒԳ – Հիշո՞ւմ ես...

ԱՐՈՒՄ – Հա, հիշում եմ...

ՄՈՒԿՈՒԳ – Քեզ չեմ հարցնում, իրեն եմ հարցնում: Դեռ բան չասած ի՞նչն ես հիշում:

ԱՐՈՒՄ – Էդ որ պիտի ասես:

ՄՈՒԿՈՒԳ – Ի՞նչ պիտի ասեմ:

ԱՐՈՒՄ – Ասա՛ կասեմ...

ՄՈՒԿՈՒՉ – (Մենին) Մի անգամ էլ էս կոտրված ձեռքով փող էի դուրս գրել քո անունով՝ սովետի ժամանակ: Չգնացիր ստանաս, վրաս գործ բացեցին: Հիշո՞ւմ ես... Ես քեզ նո՞ր եմ ճանաչում: Եթե ինձ նման մարդը չի կարողանում էս երկրում ապրի, դո՛ւ պիտի ապրե՞ս, դո՞ւ... Չտեսա՞ր՝ ինչ գործ բռնեցի, վերջը տակ տվեցի: Տունս էլ ծախեցի, որ փրկվեմ, էլ ի՞նչս ծախեմ: Ծախելու բան է մնացե՞լ, որ ծախեմ: Հիմա մարդ կա՞, որ ձեռքին ճար լինի՝ չգնա... Քեզ չհաշվես... Ով ճար չունի՝ նա մնում է: Փառք Աստծու, վիզաները եկել են, ձևակերպում են, գնում ենք, չգնա՞նք:

ՄԵՆ – Գնում եք՝ գնացեք, ես չեմ գալիս, ի՞նչ եք ուզում ինձնից:

ՄՈՒԿՈՒՉ – (Ցնցվելով) Չհասկացա... Քրոջս բողբոջեմ գնա՞մ, խելքդ բռցրե՞լ ես:

ԱՐՈՒՄ – Ունեմ-չունեմ՝ մի եղբայր ունեմ, ես մնամ, Մուկուչը գնա՞:

ՄԵՆ – Չէ, գնում ես, դու էլ գնա:

ԱՐՈՒՄ – Այսինքն ո՞նց՝ ես գնամ, դու մնա՞ս:

ՄԵՆ – Դե որ գնում ես, բա ի՞նչ ասեմ:

ԱՐՈՒՄ – Հա՞... Առանց ինձ դու կմնա՞ս:

ՄԵՆ – Բա դու առանց ինձ կգնա՞ս:

ԱՐՈՒՄ – Ես առանց քեզ կգնամ, բայց դու առանց ինձ կմնա՞ս, դա ասա:

ՄԵՆ – Դե որ գնաս՝ բա ի՞նչ պիտի անեմ...

ԱՐՈՒՄ – (Լացով) Ես գիտեմ, ես գիտեմ՝ քո մտքում ինչ կա: **(Թմրկահարելով ծնկները)** Վա՛յ, մամա ջան, վա՛յ, մամա՛, մամա՛...

ՄՈՒԿՈՒՉ – (Որոտալով) Չեմ...

ԱՐՈՒՄ – (Կարուկ դադարեցնելով) Ասա...

ՄՈՒԿՈՒՉ – (Մենին) Դու չգիտե՞ս, որ առանց քեզ ինքը չի կարող գալ, չգիտե՞ս... Ամուսիններ եք, թե նա գա, դու էլ պիտի գաս, որ նա գա: Եթե դու մնաս, նա էլ պիտի մնա:

ԱՐՈՒՄ – Չեմ մնա, չե՛...

ՄՈՒԿՈՒՉ – Կասեմ՝ էդ ո՞նց է, որ ամուսինը մնում է, կինը՝ գնում:

ՄԵՆ – Դա՞ էլ է իրենց վերաբերում... Չեմ ասի...

ՄՈՒԿՈՒՉ – Լավ, ասենք, թե չեմ ասի... Մի բոպե ընդունենք, որ Արուսին բողեցին գա... Բա երեխանե՞րդ... Դու ինձանից լավ գիտես, թե հոր հետ ինչքան են կապված: Ոչ բարով հերն էլ դու ես: Առանց քեզ նրանք կգա՞ն... Քեզ եմ հարցնում՝ կգա՞ն... Իբր դու չգիտե՞ս, որ չեմ գա, չգիտե՞ս:

ԱՐՈՒՄ – Գիտի, շատ լավ էլ գիտի:
ՄՈՒԿՈՒՉ – Մի խանգարիր:
ԱՐՈՒՄ – Չեմ խանգարում:
ՄՈՒԿՈՒՉ – Բա որ երեխաները չգան, Արուսն էլ ո՞նց գա: Իր հարազատ երեխաներին թողնի, գա՞... Մայրը երեխա կթողնի՞... Խելքդ հո հացի հետ չե՞ս կերել:
ԱՐՈՒՄ – (Փղճկում է, թաշկինակը տանելով աչքերին) Ո՞վ, ո՞վ երեխա կթողնի... Դա էր պակաս... Ես էստեղ երեխա կթողնե՞մ... Մտքովդ չանցնի...
ՄՈՒԿՈՒՉ – Դու սուս, մի խանգարիր...
ԱՐՈՒՄ – Չեմ խանգարում:
ՄՈՒԿՈՒՉ – (Մենին) Դե ասա, էլի, ասա...
ՄԵՆ – (Ուտերը թոթվելով) Ի՞նչ ասեմ...
ՄՈՒԿՈՒՉ – (Նախահարձակ է լինում) Ասելու բան է մնացե՞լ, որ ասես... Մինչև հիմա դու չհասկացա՞ր, որ մենք մեզ համար չենք ապրում, հայր իր երեխաների համար է ապրում: Քանի՞ անգամ ասեմ... (Սպառնալից, մատ թափահարելով) Ուզես էլ՝ պիտի գաս, չուզես էլ... Հիմա լսիր՝ ինչ եմ ասում...
ԱՐՈՒՄ – Մուրճ բերե՞մ:
ՄՈՒԿՈՒՉ – Շնորհակալ եմ, ես չեմ խմում:
ՄԵՆ – Բեր, ես խմում եմ:
ՄՈՒԿՈՒՉ – Հա՞... Դե լավ, բեր, թող խմի:
ԱՐՈՒՄ – (Մենին) Դե որ ինքը չի խմում, դու էլ ինչո՞ւ խմես:
ՄԵՆ – Գլուխս պայթում է ցավից, բեր:
ԱՐՈՒՄ – Մարդը սպասում է, վա՛յ...
ՄՈՒԿՈՒՉ – Սպասել եմ, էլի կսպասեմ, բեր, բեր թող խմի՝ խելքը գլուխը գա:
ԱՐՈՒՄ – Քեզ համար էլ սարքե՞մ, Մուկուչ:
ՄՈՒԿՈՒՉ – Չէ, ասացի, մենակ իր համար սարքիր:
ԱՐՈՒՄ – Ախր աղացած չկա, պիտի աղամ:
ՄԵՆ – Բեր, ես կաղամ:
ՄՈՒԿՈՒՉ – Բեր, թող աղա:
ԱՐՈՒՄ – Կսպասե՞ս:
ՄՈՒԿՈՒՉ – (Դժգոհ) Հա, կսպասեմ...
(Արուսը սրճադաջը բերում, տալիս է Մենին):
ԱՐՈՒՄ – Չուշանաք:
ՄՈՒԿՈՒՉ – (Մենին) Դժվա՞ր է աղում՝ տուր աղամ:
ՄԵՆ – (Աղալով) Աղում եմ, չե՞մ աղում:

ՄՈՒԿՈՒՉ – Արագացրու, Սեն:

ԱՐՈՒՄ – Ասում է՝ արագացրու:

ՍԵՆ – Որ արագ եմ աղում, լավ չի աղում, խոշոր է աղում, ազնվությամբ... Աղում եմ, էլի...

ՄՈՒԿՈՒՉ – **(Կատաղությունը հագիվ գսպելով)** Դու ինձ ես աղում, այ անխիղճ:

ԱՐՈՒՄ – Տուր, է՛, տուր, ինչքան աղացիր, բավական է: Արդեն մի բաժակ կլինի:

ՍԵՆ – Չի լինի, թող մի քիչ էլ աղամ:

ԱՐՈՒՄ – **(Աղացը խփելով ձեռքից)** Տուր, կլինի՝ ասացի... **(Տանում է):**

ՄՈՒԿՈՒՉ – Հիմա լսիր՝ ինչ եմ ասում... Երկուսս էլ տղամարդ ենք, երկուսս էլ փառք Աստծու, հայ ենք, պարզ խոսենք, իրար հասկանանք: Արուսն էլ մեզ չի լսում, ավելի լավ, կնանիքի հետ գլուխ չունեն, թող չլսի: Ուրեմն, եթե հաստատ, վերջնական որոշել ես, որ չես գալու, այսինքն՝ մնում ես, ուրեմն պայմանավորվում ենք՝ անպայման պիտի գաս, ուզես թե չուզես:

ՍԵՆ – Եթե չեմ գալու, ո՞նց եմ գալու: Չեմ հասկանում:

ՄՈՒԿՈՒՉ – Կհասկանաս, մինչև վերջ լսիր՝ ինչ եմ ասում, հետո... Ուրեմն բոլորս միասին, դու էլ մեզ հետ գնում ենք:

ՍԵՆ – Բայց ես չեմ գալիս, չե՞...

ՄՈՒԿՈՒՉ – **(Սրանեղած, ձեռքերը տարածելով)** Դու ինն ամիս ո՞նց ես դիմացել, այ քո հոր Աստծուն մատաղ: Համբերիր վերջացնեմ, հետո... **(Դեպի խոհանոց)** Արուս, չչտապես, թող լավ եռա: **(Սենին)** Ուրեմն ուշադիր լսիր՝ ինչ եմ ասում...

ԱՐՈՒՄ – **(Գալով, Մուկուչին)** Կխմե՞ս...

ՄՈՒԿՈՒՉ – Հա, կխմեմ... Չե, չեմ խմի, աղացած չկա:

ԱՐՈՒՄ – Ոչինչ, երկու բաժակ կդարձնեմ:

ՄՈՒԿՈՒՉ – Դե լավ, դարձրու, բայց ջուրը շատ չլինի հանկարծ:

ԱՐՈՒՄ – Չե, չի լինի, մի քիչ կար աղացած: **(Գնում է):**

ՄՈՒԿՈՒՉ – Ուրեմն բարով-խերով կզնանք, կտեղավորվենք, Մայքլը ողջ լինի՝ Մանուկը հորեղբորս տղան... Ամեն ինչ իր վրա է վերցրել մարդը, մեզ է սպասում: Ի՞նչ է պատահել՝ չես ուզի՝ չես մնա, հետ կգաս, քո ձեռքը բռնող չկա: Ինքնաթիռի տոմսը Մայքլը կառնի՝ Մանուկը, ես էլ քեզ պատվավոր կտանեմ, կնստեցնեմ ինքնաթիռ, Լոսից հետ կգաս, պրծավ-զնաց: **(Ափերը շփելով իրար)** Մենակ թե հիմա քարը փեշիցդ թափիր, սուրճը խմենք, դուրս գանք, զնանք:

Ես դրսում կսպասեմ, դու կմտնես ներս, քեզ հետ գրույց կունենան, դեսպանությունը քույրությունը կտա, ձևակերպումները կանեն: Կարգն է եղպես, դու ինձանից լավ գիտես եղ բաները: Էնպես որ քեզնից ուրիշ բան չի պահանջվում: Էլի եմ ասում՝ չես ուզի մնաս՝ չես մնա, հետ կգաս, քեզ արգելող չկա: Հասկացար, չէ՞, ինչ եմ ասում: Պարզ բան է, եղտեղ ի՞նչ կա չհասկանալու, որ չես հասկանում: Էլի քո ուզածն է լինում. չես ուզի՝ հետ կգաս:

ՄԵՆ – Իսկ եթե...

ՄՈՒԿՈՒՉ – Ի՞նչ «եթե», էլ «եթե» չկա... Ի՞նչ «եթե»...

ՄԵՆ – Իսկ եթե Մանուկը հետ գալու տոմսը չառնի՞...

ՄՈՒԿՈՒՉ – **(Բնծիծաղով, ինքնագոհ)** Ո՞վ չառնի, Մանուկը չառնի... Ասում է՝ իսկ եթե Մանուկը տոմսը չառնի... Մեկի տեղը հարյուր հատ կառնի, Մայքլին ո՞ւմ տեղն ես դրել: Չեռքի տակ հարյուր, թե երկու հարյուր նեզը է աշխատում: Դրանց սևությամբ չնայես: Շատ մաքրասեր ցեղ են՝ ասում է: Էնտեղ նեզերն են մեր առաջ աշխատում՝ էստեղ մեզ են նեզրի տեղ դնում: Չե՞ս ամաչում, որ եղպիսի բան ես ասում: Նշանակում է՝ դու Մայքլին լավ չես ճանաչում, Մանուկիս ցավը տանեն: **(Հանդիմանաճյուղով)** Կասկածում ես՝ քեզ վրա կասկածիր, ինձ վրա կասկածիր, ում վրա ուզում ես կասկածիր, Մայքլի վրա ինչի՞ համար ես կասկածում: Տոմսի եղածն ինչ է, որ չառնի:

ՄԵՆ – Թանկ չի՞:

ՄՈՒԿՈՒՉ – Թանկ է լինում՝ թող թանկ լինի, հո դու չես առնողը: Մայքլը քթած ունի փողի վրա: Շատ չեղավ՝ քեզ համար առանձին ինքնաթիռ կվարձի, դրանով կուղարկի:

ԱՐՈՒՄ – **(Գալիս է, մատուցելով սուրճը)** Ո՞վ, Մայքլն ինքնաթիռի տոմս չի՞ առնի... Ո՞վ, Մայքլը՞...

ՄՈՒԿՈՒՉ – Ի՞նչ ինքնաթիռ, ի՞նչ տոմս... Դու սուրճ չեի՞ր սարքում:

ԱՐՈՒՄ – Մանուկի անունը ականջովս ընկավ, դրա համար եմ հարցնում:

ՄՈՒԿՈՒՉ – Ազատ ես, կարող ես գնալ:

ԱՐՈՒՄ – Խանգարո՞ւմ եմ:

ՄՈՒԿՈՒՉ – **(Բնայելով)** Չէ, չես խանգարում: Ուզում ես՝ գնա, ուզում ես՝ մնա, քեզնից մենք գաղտնիք չունենք: **(Մեճիճ)** Խմիր:

ՄԵՆ – **(Բաժակը մոտեցնելով շուրթերին)** Տաք է, թող մի քիչ սառչի:

ԱՐՈՒՄ – Տաք չի, խմիր:

ՄՈՒԿՈՒՉ – Խմիր, տաք չի:
ՄԵՆ – Խմեմ՝ վառվե՞մ:
ՄՈՒԿՈՒՉ – Չէ, ես վառվեմ քո պատճառով: **(Գատարկված քաժակը հրելով մի կողմ)** Շնորհակալ եմ: Խմիր, խմիր, չուշանանք:
ՄԵՆ – Խմում եմ, բա չեմ խմո՞ւմ:
ԱՐՈՒՄ – Դե լավ, պարտադիր չի, որ մինչև վերջ խմես:
ՄԵՆ – Գլխիս ցավը չանցնի՞: Պայթում է՝ ասում եմ: Մի քիչ էլ շաքարավազ պիտի զցեիր: Շատ ես դառն արել:
ԱՐՈՒՄ – **(Դժգոհ)** Կար՝ չզցեցի՞:
ՄՈՒԿՈՒՉ – Էլի եմ ասում ում ձեռքին ճար չկա՝ նա է մնում, պարզ չի՞: Անձնագիրդ չմոռանաս:
ԱՐՈՒՄ – Շատ ներողություն, Մայքլն ո՞ւմ համար պիտի տոմս առնեիր, չիմացա:
ՄՈՒԿՈՒՉ – Սենի համար, որ Լոսից հետ գա:
ԱՐՈՒՄ – Հետ գա, որ ի՞նչ անի:
ՄՈՒԿՈՒՉ – Ինչ կուզի կանի, դա էլ է մեզ վերաբերո՞ւմ:
ԱՐՈՒՄ – Եթե հետ է գալու, էլ ինչո՞ւ է գալիս:
ՄՈՒԿՈՒՉ – Հետ գալու համար է գալիս: Գալիս է, որ հետ գա, մինչև չգա, ո՞նց հետ կգա:
ԱՐՈՒՄ – Եթե հետ է գալու, թող չգա:
ՄՈՒԿՈՒՉ – Եթե ինքը չգա, դու ո՞նց կգաս, քեզ ո՞վ կթողնի, որ գաս, ՉԱԳՄ-ով եք:
ԱՐՈՒՄ – Կբաժանվեմ, կգամ:
ՄՈՒԿՈՒՉ – Ուշ է, ուշ է, ինչ որ անելու էիր՝ ժամանակին պիտի անեիր:
ԱՐՈՒՄ – Ի՞նչ է, մարդիկ իրենց սխալը չե՞ն կարող ուղղել:
ՄՈՒԿՈՒՉ – Մխալն ամուսնանալն է, բաժանվելը չի սխալը:
ԱՐՈՒՄ – **(Լացով, Սենին)** Հետ կգաս, առանց ինձ կապրես, հա՞, կապրե՞ս: Ես գիտեմ, գիտեմ ես բոլորն ինչի համար է անում:
ՄՈՒԿՈՒՉ – Չեմ... Մարդուդ համոզեցի, հիմա էլ դո՞ւ... **(Սենին)** Գնացի՞նք: Անձնագիրդ վերցրե՞լ ես:
ՄԵՆ – **(Գրպանները տնողելով)** Չկա, որտեղ եմ դրել, չեմ հիշում: Հիմա... Հիշեցի... Չէ, ինձ թվաց, թե հիշեցի:
ՄՈՒԿՈՒՉ – Գրպաններդ նայիր:
ՄԵՆ – Նայում եմ, չկա:
ՄՈՒԿՈՒՉ – **(Մտտեմալով)** Թող ես նայեմ, կասեմ՝ կա, թե չկա:
ՄԵՆ – Չկա, էլի, չկա:
ՄՈՒԿՈՒՉ – Սպասիր, ո՞ւր ես գնում:

ՄԵՆ – Չեմ գնում:
 ՄՈՒԿՈՒՉ – Դե որ չես գնում, մի գնա:
 ՄԵՆ – Մի արի, չգնամ:
 ՄՈՒԿՈՒՉ – Չհասկացա: Էս չե՞ս ուզում գաս:
 ՄԵՆ – (Պոռթկալով) Չեմ ուզում, հա՛, չեմ ուզում, զոռո՞վ է...
 ՄՈՒԿՈՒՉ – (Մոլորված) Ինչ որ խոսեցի՞նք, ուրեմն էլ բոլորը
 հե՞ջ: Շուն էիր հաչացնո՞ւմ: (Հասնում, բռնում է օձիքից):
 ՄԵՆ – Թող... (Խռխռացնում է):
 ԱՐՈՒՄ – (Ճշալով մեջտեղ է ընկնում) Մուկո՞ւչ... Խեղդում ես:
 ՄՈՒԿՈՒՉ – Լավ եմ անում, խեղդում եմ:
 ԱՐՈՒՄ – (Լացով) Թող, մարդուս թող:
 ՄԵՆ – Թող... (Ազատվում է մի կերպ՝ իրեն պատեպատ
 տալով, խուճապահար փախչում՝ մտնելով մի սենյակից մյուսը,
 Մուկուչը՝ ետևից):
 ՄՈՒԿՈՒՉ – (Նստում է՝ շնչառությունը կանոնավորելով) Մե՛ն,
 դու Մուկուչին չես ճանաչում, դու մե՛նակ քեզ ես ճանաչում, Մե՛ն: Դու
 իմ ձեռքից ո՞ւր ես փախչելու, է՛, ո՞ւր... (Դեպի դուրս) Մե՛ն, անճա-
 զիրդ բեր, քո ձեռքով դիր սեղանին:
 ԱՐՈՒՄ – (Մե՛նի գնացած ուղղությամբ) Դե դու էլ բեր, էլի:
 ՄՈՒԿՈՒՉ – Չե՞ս բերում: Մի անգամ էլ եմ ասում, էլ չեմ ասե-
 լու, բերո՞ւմ ես, թե՞ չէ: Լսո՞ւմ ես, Մե՛ն, մի անգամ էլ եմ ասում, էլ չեմ
 ասելու՝ բերո՞ւմ ես, թե՞ չես բերում: (Որոտալով) Մե՛ն, Մե՛նքերի՛մ...
 (Գնում է ետևից):
 ԱՐՈՒՄ – (Ահաբեկված) Մուկո՞ւչ...
 ՄՈՒԿՈՒՉ – (Վեռադառնալով) Էս որտե՞ղ մտավ, դուրս գնա՞ց:
 (Արուսի՛ն) Դուռը բացեցիր, դուրս գնա՞ց:
 ԱՐՈՒՄ – Փակ է, դուռը փակ է, դուրս չի եկել:
 ՄՈՒԿՈՒՉ – (Շարունակում է որոնել) Բա որ դուրս չի եկել,
 ո՞ւր է... Ցնդե՞ց... Դուրս արի, Մե՛ն... Մե՛ն, դուրս արի: Դուրս արի,
 կրո՞նեմ կսպանեմ, հետո ի՛նձնից չմեղամաս: Դուրս արի, շուտ արա,
 եթե դուրս չգաս, այ, իմացի՛ր, ես իմ արածը կանեմ, կզգամ կնստեմ:
 Դուրս արի: (Կատաղությամբ իրեն նետում է այս ու այն կողմ,
 մտնում, դուրս է գալիս՝ ատամները կրճտացնելով) Ի՞նչ եղավ, ի՞նչ
 եղավ դա, համբարձվե՞ց: (Հեռով) Մե՛ն... Մե՛ն... Մե՛նքերի՛մ... (Աչ-
 քերը ոլորելով Արուսի վրա):
 ԱՐՈՒՄ – Ի՛նձ ի՛նչո՞ւ ես կասկածանքով մայում:
 ՄՈՒԿՈՒՉ – Ասե՞ղ էր, կորավ...
 ԱՐՈՒՄ – Ես ի՞նչ մեղք ունեմ:

ՄՈՒԿՈՒՉ – Չէ, ե՛ս մեղք ունեմ, ես... Սեմ, բա որ բռնել եմ...
Դու իմ ձեռքից ո՞ր պիտի փախչես, է՛, ո՞ր... Ես քեզ էնպես գոլոր-
շիացնեմ, որ չիմանաս էլ՝ եղել ես, թե չես եղել: Գիտես, չէ՞, որ ա-
սացի՝ կանեմ: Դե հիմա կտեսնես: Դու քո արածն արիր, ես էլ իմը
կանեմ: Դուրս չգաս, դուրս չգաս, ես հիմա գիտեմ, թե քեզ ինչ կանեմ:
(Չեռքը կարուկ տանում է գրպանը):

ԱՐՈՒՄ – **(Բռնելով Մուկուչի գրպանը տարած ձեռքը, աղեկը-
տուր) Չհանես...**

ՄՈՒԿՈՒՉ – **(Կատաղած) Թող, ձեռքս թող, մա ապրելու իրա-
վունք չունի: (Հրում, զցում է Արուսիկն, նետվելով կից սենյակը):**

ԱՐՈՒՄ – **(Հեծկլտոցով, նրա ետևից):** Մուկու՛ւչ...

ՄՈՒԿՈՒՉ – **(Ետ է գալիս, փրփրած) Ո՞ր է, ո՞ր է... Ո՞ր է...
Դու ինձնից շա՞տ ես հայ: Ով ինձնից շատ է հայ՝ ես հայ չեմ: Ո՞ր
է... Ո՞ր է...**

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

*Բնակարան: Դռան զանգ: Սենը պատեպատ խփվելով
վազում է այս ու այն կողմ՝ թաքնվելու տեղ որոնելով: Մտնում է
զգեստապահարանը՝ իր վրա ծածկելով դուռը: Չանգերը շարու-
նակվում են:*

ԿԱՐԻՆԵ – **(Չայնը) Գալիս եմ: (Մտնում է՝ կիսամերկ, սրբիչով
փաթաթված, դեպի դուռը) Հակոբ, դո՞ւ ես:**

ՀԱԿՈՒՔ – **(Չայնը դռան հետևից) Ես եմ:**

ԿԱՐԻՆԵ – Մե՛նա՞կ ես, հո մարդ չկա՞ քեզ հետ:

ՀԱԿՈՒՔ – Չէ, ասացի:

ԿԱՐԻՆԵ – **(Բացելով դուռը) Հազմված չեմ, դրա համար եմ
հարցնում:**

ՀԱԿՈՒՔ – **(Մտնելով) Սի ժամ է զանգը տալիս եմ, ինչո՞ւ չես
բացում:**

ԿԱՐԻՆԵ – Չե՞ս տեսնում... **(Մանրելով թաց մազերը) Ջրի
ձայնը թողնո՞ւմ էր, որ լսեմ:**

ՀԱԿՈՒՔ – Վրադ մի բան զցիր, չմրսես: **(Մտնում է կից սեն-
յակը):**

*(Կարիներն բացում է զգեստապահարանը՝ ճշալով փռվում
հատակին):*

ՍԵՆ – **(Դուրս գալով զգեստապահարանից, իրեն կորցրած)
Տիկի՛ն...**

ՀԱԿՈՔ – (Ընկնելով ներս) Կարինե՛, Կա՛ր... (Փորձում է քարձրացնել ուշագնաց կնոջը, արտասովախառն) Կա՛ր, Կարինե՛... Ջո՛ւր... Կա՛ր, Կարա՛...

ՄԵՆ – (Մատուցելով ջրով լի բաժակը) Խնդրեմ...

ՀԱԿՈՔ – (Նայելով Մենին) Տվեք: (Շփելով կնոջ դեմքը) Կա՛ր, Կարա՛...

ԿԱՐԻՆԵ – (Բացելով աչքերը) Գող է մտել տուն: (Նկատելով գլխավերևում կանգնած Մենին, նորից է նվաղում):

ՀԱԿՈՔ – Գո՞ղ... (Բռնում է դողը: Ետ-ետ նայելով՝ գնում է դեպի հեռախոսը):

ՄԵՆ – Ես գող չեմ, ընդհակառակը... Դ-րեք, դրեք լսափողը, կզոջաք, հետո ուշ կլինի:

ՀԱԿՈՔ – Թույլ կտա՞ք կնոջս մոտենամ:

ՄԵՆ – Մոտեցեք, ո՞վ է խանգարում: Մի վախեցեք, մի վախեցեք:

ՀԱԿՈՔ – (Դնելով լսափողը) Ինչ որ ձեզ պետք է՝ վերցրեք:

ՄԵՆ – (Խառնված) Պետք չի, պետք չի, ինձ ոչ մի բան պետք չի:

ՀԱԿՈՔ – Վերցրեք, էլի, խնդրում եմ:

ՄԵՆ – Ինչի՞ համար վերցնեմ, ի՞նչ վերցնեմ:

ՀԱԿՈՔ – Ինչ որ հարմար կգտնեք: Միայն թե վատ բան չլինի հանկարծ: Կնոջս զարդերը վերևի դարակում են, ներքևի դարակում քսան հազար դրամ կա:

ՄԵՆ – Ինչո՞ւ եք դրանց տեղն ինձ ցույց տալիս, ես գող չեմ, դուք ինձ վիրավորում եք: Ես մեղք չունեմ, ինքը վախեցավ: Տիկին, ես ներողություն եմ խնդրում:

ԿԱՐԻՆԵ – (Բացելով աչքերը) Եթե գող չեք, ի՞նչ գործ ունեք ուրիշի պահարանում: (Ամուսնուն) Պահարանից դուրս եկավ:

ՄԵՆ – Ինձ հետապնդում են, պատշգամբից եմ մտել ձեր բնակարանը: Չանգը տվին, ես կարծեցի, թե կնոջս եղբայրն է: Մտա, որ քաքնվեմ:

ՀԱԿՈՔ – Հավատում եմ, բայց ինչ որ պետք է՝ վերցրեք, խնդրում եմ:

ՄԵՆ – Ինձ ոչ մի բան պետք չի, ես արխիվի նախկին աշխատող եմ, ես գող չեմ, ինչո՞ւ չեք հավատում:

ՀԱԿՈՔ – Համենայն դեպս... Ես միանգամայն անկեղծորեն... Միայն թե վատ բան չլինի հանկարծ: Չեր ձեռքը ձեր գրպանը մի տարեք, խնդրում եմ:

ՄԵՆ – Ինձ մոտ զենք չկա, մի անհանգստացեք: Ուղղակի խնդրում եմ, որ հեռախոսին չմոտենաք:

ԿԱՐԻՆԵ – (Ամուսնուն, լացակումած) Տարավ, ձեռքը էլի տարավ գրպանը:

ՄԵՆ – Բայց դուք չգիտեք, թե ես ինչու եմ տանում:

ՀԱԿՈՔ – Մի տարեք, երեխաներ ունենք: Մենք մեր մասին չենք մտածում: Մեր երեխաների մասին ենք մտածում:

ՄԵՆ – Ես պաշտում եմ երեխաներին առհասարակ: Դուք ինձնի՞ց եք վախենում՝ արխիվի նախկին աշխատողի՞ց:

ՀԱԿՈՔ – Չենք վախենում, դուք մեզ ճիշտ հասկացեք, բայց երբ ձեր ձեռքը տանում եք ձեր գրպանը, կիմս իրեն վատ է զգում: Կարա, ձեռքն էլի տանում է գրպանը:

ՄԵՆ – Միրոս վատ է, ես հաբ եմ հանում, որ դնեմ լեզվիս տակ:

ՀԱԿՈՔ – (Ուշքը հեռախոսի կողմը) Մի հանեք, էլի, խնդրում եմ:

ՄԵՆ – Հեռախոսին չմոտենաք, ես էլ ձեզ եմ խնդրում:

ՀԱԿՈՔ – Չեմ մոտենա: Համենայն դեպս, փողի կարիք չունե՞ք:

ՄԵՆ – Ունե՞մ, ունե՞մ, շատ ունեմ:

ՀԱԿՈՔ – Փող...

ՄԵՆ – Չէ, կարիք... Չաշխատող մարդ եմ, ես որտեղի՞ց պիտի փող ունենամ:

ԿԱՐԻՆԵ – (Մարսափով) Տարա՛վ, տարա՛վ, էլի ձեռքը տարավ գրպանը: (Ամուսնուն) Ինչո՞ւ ես պարապ կանգնել, ձայն տուր հարևաններն իմանան:

ՄԵՆ – Ինձ չե՞ք հավատում, մարդ եք վերջապես:

ՀԱԿՈՔ – (Հանկարծակի, ինքնամոռաց, թակելով պատերը) Օգնությո՛ւն, օգնությո՛ւն...

(Հնչում է մուտքի զանգը):

ՄԵՆ – (Ցնցվելով) Ի՛նքն է, ի՛նքն է... (Փախչում է):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Բնակարան: Գաշասենյակի կենտրոնում դույլ է դրված: Կից սենյակի դռան հետևից՝ շան հաչոցներ: Մենք իրեն զգում է ներս: Փորձում է դուրս պրծնել բնակարանից: Մեկ մղվում է առաջ, մեկ՝ նորից ետ: Հաչոցներն ամեն անգամ նրան ետ են

պահում: Ներս է մտնում տարեց մի կին՝ հովանոցով: Սենը
փորձում է տիրապետել իրեն:

ՏԱՐԵՑ – Ի՞նչ լավ է, որ եկել եք: Բարև ձեզ:

ՄԵՆ – (Անհուսալի ժպիտով) Բարև ձեզ:

ՏԱՐԵՑ – (Գեպի շունդ) Լավ, հասկացանք: (Սենին) Դուք մի
անհանգստացեք, նա իր սենյակից դուրս չի գա, դուռը կողպել եմ
վրան: Համցեք, նստեք: (Գեպի շունդ) Ջեննի, դու արդեն քեզ վատ ես
պահում, գիտե՞ս: (Սենին) Տեսնում ե՞ք մեր բնակարանի վիճակը:

ՄԵՆ – Տեսնում եմ, իհարկե:

ՏԱՐԵՑ – Ամեն անգամ վերևից այսպես ջուր եմ թողնում
գլխիս: Խեղճ կենդանին էլ այստեղ է թրջվում: Դուռը ձեզ համար էի
բաց թողել, որ գաք, դրսում չմնաք:

ՄԵՆ – Շնորհակալությամբ:

ՏԱՐԵՑ – Բարձրացա վերև, էլի զգուշացրի: Արդեն որերորդ
անգամ: Անշնորհք մարդիկ են: Եթե առաջին անգամ լինեք, ես չէի
բողոքի: Ինքներդ որոշեցեք, ես չգիտեմ:

ՄԵՆ – (Անակնկալի եկած) Խնդրեմ... Բայց ես ի՞նչ կարող եմ
անել:

ՏԱՐԵՑ – Եթե դուք չեք կարող, ուրիշ էլ ո՞վ է կարող: Դուք եք
շենքի տերը:

ՄԵՆ – Ոչ, ցավոք սրտի, դուք սխալվում եք, ես դրա համար չեմ
մտել ձեզ մոտ:

ՏԱՐԵՑ – (Ինչ որ գրքույկ քերելով) Նայեք, բնակարանային
վարձը բարեխղճորեն մուծել եմ: (Թերթում է) Տարին վաղուց եմ
փակել:

ՄԵՆ – Ինձ մի ասեք, ես ձեզ հավատում եմ:

ՏԱՐԵՑ – Թռչակիցս կտրում եմ, խեղճ կենդանու բերանից ան-
գամ կտրում եմ, որպեսզի ժամանակին մուծեմ: Եթե դուք էլ չեք
պաշտպանելու բնակիչների շահերը, ասացեք, խնդրեմ, ուրիշ ո՞ւմ
դիմեմ: (Գեպի ժամանակ առ ժամանակ հաչող շունդ) Ջեննի, ես
խնդրում եմ՝ քեզ մի փոքր զսպես: (Սենին) Եթե ճիշտ չեմ ասում...

ՄԵՆ – (Ընդհատելով) Համաձայն եմ, այո, իհարկե, ճիշտ եք
ասում, բայց, ցավոք, ես այդ հարցում չեմ կարող ձեզ օգտակար
լինել:

ՏԱՐԵՑ – Իսկ ինչո՞ւ եք դուք նրանց հավատում:

ՄԵՆ – Ես ձեզ եմ հավատում, նրանց չեմ հավատում:

SURԵՑ – Դիտավորյալ են անում, ամեն անգամ հենց շանս վրա են բաց թողնում ջուրը: Ասում են իբր թե իրենց անհանգստացնում է:

ՄԵՆ – Ինչո՞ւ պիտի անհանգստացնի:

SURԵՑ – Ընդհակառակը, իրենք են վերևից անհանգստացնում: Իրենց պատճառով մի անգամ հիվանդացավ թոքերի բորբոքումով, հազիվ փրկեցին: Նորի՞ց նույն բանը... Ասում են՝ տանը շուն մի պահիր: Իսկ որտե՞ղ պահեն, հետաքրքիր է: Իրենից բացի ես ուրիշ հարազատ չունեմ: Նա էլ ինձանից բացի ոչ ոք չունի այս աշխարհում: Երկուսս ենք մնացել: **(Լացակումած)** Վիրավորում են, ասում են՝ վատ շուն է: Չգիտեմ, որ վատ շուն չի լինում: Մարդը կարող է լավ կամ վատ լինել: Իսկ նա մարդ չէ, շուն է: Ես ի՞նչ անեմ, որ դուք ինձ հավատաք, ոչ թե նրանց:

ՄԵՆ – Ես նրանց չեմ հավատում, ես ձեզ եմ հավատում: Բայց ախր ես ի՞նչ կարող եմ անել: Դիմեք իրավասու մարմիններին:

SURԵՑ – Դիմել եմ, ձեզ եմ դիմել:

ՄԵՆ – Դուք ինձ շփոթում եք, ես նա չեմ, ում դուք սպասում եք:

SURԵՑ – Իսկ դուք ո՞վ եք:

ՄԵՆ – Ոչ մեկը, կողմնակի մարդ եմ:

SURԵՑ – Իսկ ի՞նչ հարցով եք մեզ մոտ եկել:

ՄԵՆ – Ոչ մի... Ինձ հետապնդում են: Մտել եմ ձեզ մոտ, որ պատասխարվեմ: Ներողություն եմ խնդրում անհանգստացնելու համար:

SURԵՑ – Աստված իմ... Մի՞թե հիմա էլ որևէ մեկը չի գալու: **(Թուլացած ձեռքերը կախ են ընկնում քազկաթռռի երկու կողմից: Աչքերը փակ, դեպի շունը, անօգնական)** Ջեննի...

(Դռան զանգ):

(Բնակարանը մեկից լցվում է իրեն կտրատող շան հաչոցներով):

Մենն իրեն դուրս է գցում եկած ճանապարհով):

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Բնակարան: Մի կողմում դրված է զուգասանդուղք: Մենը վախվորած դիտում է շուրջը: Մտնում է միջին տարիքի մի հարթած տղամարդ: Մենը ցնցվում է՝ զգուշանալով թիկունքից:

ՀԱՐԲԱԾ – **(Չեռքերը հանդիսավոր տարածած, զնալով դեպի Մենը, խանդաղատանքով)** Ախպե՛րս... Սպասիր, չգնաս:

ՄԵՆ – Չեմ գնում:

ՀԱՐՔԱԾ – Ինձանից փախար, դու քո ճակատագրից ո՞ր պիտի փախչես, ախպերս: (Համրույրներ տեղալով աջից ու ձախից) Ես քո ցավը տանեմ: Հերս ասում էր՝ Սուրբ... (Փղձկում է՝ չզսպելով լացը):

ՄԵՆ – (Շփոթված) Հանգստացեք... Լավ, լավ, հանգստացեք:

ՀԱՐՔԱԾ – (Դեպի դատարկ պատը՝ կարծելով, թե այնտեղ կախված է հոր լուսանկարը) Ողորմի քեզ, այ հեր... (Մաքրելով արցունքները) Արի՛, արի՛ նստիր: (Պիջակի գրպանից օղու շիշ է հանում, դնելով լրագրասեղանին) Նստիր: (Բաժակներ է քերում և ուտելիք) Ախպե՛րս... (Մենը փորձում է կանգնել՝ զգուշանալով քիկունքից) Նստիր... (Նորից է փորձում) Նստիր: (Տեղավորվում են սեղանի շուրջը դրված աթոռներին: Լցնում է բաժակները) Վերցրու:

ՄԵՆ – (Շարունակ կասկածանքով) Շնորհակալ եմ, ես չեմ խմում:

ՀԱՐՔԱԾ – Ո՞նց չես խմում: Ի՞նձ հետ չես խմո՞ւմ: (Բաժակ մատուցելով) Վերցրու, վերցրու տեսնեմ ոնց չես խմում: (Չեռքը զցելով վզովը) Ախպե՛րս...

ՄԵՆ – (Վերցնելով բաժակը) Ազնիվ խոսք, չեմ խմում: (Ցած է դնում):

ՀԱՐՔԱԾ – Որ վերցնում են, էլ ցած չեն դնում:

ՄԵՆ – Իսկապես, չեմ խմում:

ՀԱՐՔԱԾ – Խմիր հետո կասես՝ չեմ խմում:

ՄԵՆ – Ես դեղ եմ խմում: (Ցույց է տալիս գրպանից հանած հարը):

ՀԱՐՔԱԾ – Եթե օղին կա, դեղն էլ ինչի՞ համար ես խմում: Սրանից լավ դե՞ղ... Տուր, տուր տեսնեմ: (Հարը վերցնում, շարտում է մի կողմ) Էդ էր պակաս, որ ախպերս դեղ խմի: Վերցրու, բաժակդ վերցրու: Թե սա ինչու չեմ դնում, դեղատներում ծախում, գլուխ չեմ հանում: Փոխանակ սա ծախեն, էն թանկ ու կրակ դեղերն են ծախում, որ մարդու մի օրգանին օգուտ են տալիս, մեկին՝ վնաս: Խմիր:

ՄԵՆ – (Հարկադրված վերցնելով) Ախր որ չեմ խմում, ո՞նց խմեմ:

ՀԱՐՔԱԾ – Ո՞ւմ հետ չխմես, ի՞նձ հետ: Քո խմելո՞ւ է, որ խմես կամ չխմես:

ՄԵՆ – Ախր վատ եմ զգում:

ՀԱՐՔԱԾ – Դրա համար եմ ասում՝ խմիր: Ամեն մարդ իրավունք չունի խմելու, իմ արև: Ով որ մարդ չի՝ նա իրավունք չունի խմելու:

լու: Խմիր, եթե մի բաժակից լավ չզգաս, կասես՝ Սուրո, ամոք քեզ, ամոք քեզ Սուրո: Ես էլ եմ վատ զգում: Դրա համար եմ խմում: Եթե լավ զգամ՝ ինչո՞ւ պիտի խմեմ: Խմում եմք՝ իսկի լավ չենք զգում, որ չխմենք, ո՞նց լավ կզգանք: Առանց խմելու հիմա կապրվի՞: Էս ամեն ինչին ո՞նց դիմանաս: Էս ամեն ինչին դիմացար, Հունանյանին ո՞նց դիմանաս, Հունանյանին դիմացար՝ կնոջ ո՞նց դիմանաս: Չխմեմ, որ մեռնե՞մ: Ինքը իմ կնիկն է, գիտի, թե ես եմ իր կնիկը: Խմիր, ախպերս, բաժակը մի սառեցրու:

ՄԵՆ – Վախենում եմ ազդի:

ՀԱՐԲԱԾ – Ինչո՞ւ պիտի ազդի, ի՞նչ է եղել, որ ազդի: Եթե չազդի, էլ ինչի՞ համար ենք խմում: Կի՞ն ես, որ ազդի: Կանայք են առանց խմելու դիմանում, մենք տղամարդ ենք, մենք պիտի խմենք, որ դիմանանք:

ՄԵՆ – (Ձգուշանալով քիկունքից) Վախենում եմ...

ՀԱՐԲԱԾ – (Չեռքերը տարածած) Էլ ինչի՞ց ես վախենում, այ քո հոր Աստծուն մատաղ: Էլ ինչի՞ց վախենանք:

ՄԵՆ – Խմելուց եմ վախենում:

ՀԱՐԲԱԾ – Դե խմիր, որ չվախենաս: Ես քեզ տեսել եմ, ուզում եմ խմեմ, դու ինձ տեսել ես, չե՞ս ուզում խմես: (Նախահարձակ է լինում քռնելով օձիքից):

ՄԵՆ – (Հանձնվելով) Ուզում եմ, ուզում եմ...

ՀԱՐԲԱԾ – (Բաց քողմելով) Դե որ ուզում ես, խմիր:

ՄԵՆ – Սրտիցս եմ վախենում:

ՀԱՐԲԱԾ – Մենք մեր սրտից ենք վախենում, մեր սիրտը մեզ-նի՞ց է վախենում: Սրտիցդ ինչո՞ւ ես վախենում, սիրտդ ուտեմ, խմիր, խմիր, ախպերս:

ՄԵՆ – Ազնիվ խոսք, սիրտս վատ է:

ՀԱՐԲԱԾ – Ի՞նչ գիտես, որ վատ է, կարող է լավ է:

ՄԵՆ – Արագ է խփում:

ՀԱՐԲԱԾ – Բա ուզում ես դանդա՞ղ խփի: Ավելի լավ... Մեղք ես, ախպերս, խմիր: Ոչ մի առողջ օրգան չհանձնենք հողին: (Բռնկվելով) Խմիր, խմիր, ասում եմ: (Հարվածում է սեղանին) Խմիր, թե չէ ասել էի, այ...

ՄԵՆ – Չէ, մի ասեք, մի ասեք, խնդրում եմ, կխմեմ:

(Խփում են բաժակ-բաժակի, խմում են):

ՀԱՐԲԱԾ – Հերս ասում էր՝ Սուրո... (Փղճկում է):

ՄԵՆ – Հանգստացեք:

**ՀԱՐՔԱԾ – (Դառնալով դեպի դատարկ պատը, նայելով վերև՝ իրրև թե հոր լուսանկարին) Ողորմի քեզ, այ հեր: (Մաքրում է ար-
ցունքները) Ինչքան ուրախացա, որ քեզ տեսա, բա մարդ մարդուն
տեսնի՝ չուրախանա՞: Ինչ մարդ լինի, որ չուրախանա: (Մըքմըքալով
քթի տակ) Հունանյան... (Լցնում է բաժակները) Վերցրու: Հունան-
յան...**

ՍԵՆ – Կվերցնեմ:

ՀԱՐՔԱԾ – Առանց խոսքի... Աստված մի բաժակը շատ չհա-
մարի: Իմ արև... **(Խմում են խփելով բաժակ-բաժակի) Կեր:**

ՍԵՆ – Ուտում եմ:

ՀԱՐՔԱԾ – Իմ արև... **(Երգում է):**

ՍԵՆ – (Լցնելով բաժակները) Կարելի՞ է մի բան ասել:

ՀԱՐՔԱԾ – Չէ, ոչ մի բան էլ չասես: Առանց խոսքի... Իմ արև...

(Երգում է): Լցրու:

ՍԵՆ – Լիքն է: **(Կանգնում է բաժակը ձեռքին) Դուք լավ մարդ
եք: Սուրեն, էս բաժակով ես ուզում եմ...**

**ՀԱՐՔԱԾ – (Տեղնուտեղը փակելով Սենի քերանը) Ոչ մի բան էլ
չես ուզում: Ինձ վիրավորում ես, այ... Իմ արև... Ուրեմն ես քեզ
համար օտա՞ր մարդ եմ, որ ուզում ես իմ կենացը խմես: Ես մարդ չեմ:
Ի՞նչ լավ մարդ... Տո ես ի՞նչ մարդ... Կնոջս հարցրու՝ կասի իսկի
մարդ էլ չեմ: Հունանյանն է մարդ... Հունանյան... Ամեն մարդ մարդ
չի: Իրենք են մարդ, ես մարդ չեմ: Չեմ ուզում, զոռո՞վ է... Նրանք էլ
մարդ լինեն, ե՞ս էլ... Ես մարդ չեմ, իմ արև... Հու-նան-յան:**

ՍԵՆ – Դուք լավ մարդ եք, դրա համար եք ասում ես մարդ չեմ:

ՀԱՐՔԱԾ – Ես վատ մարդ եմ, իրենք են լավ մարդ: Բա ինչո՞ւ
պիտի իրենք էլ լավ մարդ լինեն, ես էլ... Եթե իրենք լավ մարդ են,
ուրեմն ես վատ մարդ եմ: Եթե իրենք խելոք են՝ ես անխելք եմ, իմ
արև: Բա նրանք էլ մարդ լինեն, ե՞ս էլ... **(Երգում է, նրան միանում է
արդեն գինովցած Սենը) Իմ արև...**

**ՍԵՆ – (Ինքն իր հետ) Կարծում են իրենք մարդ են, ես մարդ
չեմ:**

ՀԱՐՔԱԾ – Իմ արև... **(Երգում է, Սենը ձայնակցում է):**

ՍԵՆ – Եթե իրենք խելոք են, ես անխելք եմ: Եթե խելոքը դրանք
են՝ ես անխելք եմ: Իմ արև... Բա մենք մեղք չե՞նք, որ իրենք էդքան
խելոք են:

ՀԱՐՔԱԾ – Լցրու... Աստված մի բաժակը շատ չհամարի: **(Եր-
գում է՝ «Լուսնյակ գիշեր»...):**

ՄԵՆ – (Վեր է թռչում, բռնելով Հարրածի քերանը) Մի երգիր, եղ երգը մի երգիր, խնդրում եմ: Էդ իմ երգն է:

ՀԱՐՔԱԾ – Քոնը չի, իմն է:

ՄԵՆ – Ախր ես փաստորեն տուն չունեմ, չնայած ունեմ:

ՀԱՐՔԱԾ – Բա էս ո՞ւմ տունն է, որ քո տունը չի:

ՄԵՆ – Չէ, քո տունն է: Եթե թողնես զիշերը էստեղ քնեմ, շնորհակալ կլինեմ:

ՀԱՐՔԱԾ – Բա դու էլ որտե՞ղ ես քնելու, եթե էստեղ չքնես:

ՄԵՆ – Չգիտեմ: Իմ արև... (Ցնցվում է՝ զգուշանալով թիկունքից):

ՀԱՐՔԱԾ – Ախպերս, դու քո տանը պիտի քնես:

ՄԵՆ – Այսինքն՝ թողնեմ, գնա՞մ:

ՀԱՐՔԱԾ – Ո՞ւր գնաս, իմ տունը քո տունը չի՞: Դու քո տունը թողնես ո՞ւր գնաս:

ՄԵՆ – Ուրեմն էստեղ պիտի քնե՞մ:

ՀԱՐՔԱԾ – Բա էլ որտե՞ղ:

ՄԵՆ – (Համբուրում է ճակատը) Շա՛տ, շատ շնորհակալ եմ: Գողերը մտել են տունս, բան չեն գտել տանելու, ստիպված մի թղթի կտորի վրա գրություն են թողել, թե՛ դու ի՞նչ մարդ ես, մտանք տունդ, բան չկար, որ տանեիք: Տանդ գոնե մի կտոր բան էլ չկար ուտելու, որ մի կտոր բան ուտեիք: Սոված եկանք, սոված գնում ենք:

ՀԱՐՔԱԾ – (Խորը հոգոցով, խփելով ծնկին) Վա՛յ էն երկրին, որ երկրի գողն էլ սոված լինի: Լցրո՛ւ...

ՄԵՆ – Լցրել եմ:

ՀԱՐՔԱԾ – Աստված մի բաժակը շատ չհամարի: Իմ արև... (Խմում են: Հարրածը երգում է, Մենը միանում է նրան):

ՄԵՆ – Ընկել է հետևիցս, որ սպանի: Գիտի, թե մենակ իր սպանելով է:

ՀԱՐՔԱԾ – Ո՞վ, է՛, ո՞վ...

ՄԵՆ – Աներձագս...

ՀԱՐՔԱԾ – Գլխից ձեռ է քաշե՞լ... Ես կթողնե՞մ, որ ախպորս մատով կաշեն: Մայրիկը կլացացնեմ: (Սպառնալից) Ո՞ւմ սպանի...

ՄԵՆ – Ինձ... Ամերիկա են գնում, ես չեմ գնում: Ասում է՝ դու էլ պիտի գաս: Եթե դու չգաս, երեխաներդ էլ չեն գա, քրոջս էլ չեն թողնի գա:

ՀԱՐՔԱԾ – Այսինքն՝ ո՞նց չեն թողնի... Իր քրոջը ինչո՞ւ պիտի չթողնեն:

ՄԵՆ – Քույրն իմ կինն է:

ՀԱՐՔԱԾ – Քո կինը իր քույրն է, իր քույրը՝ քո կի՞նը...

ՄԵՆ – Է՛, հա...

ՀԱՐՔԱԾ – Քո կի՞նն է իր քույրը, թե՞ իր քույրն է քո կինը:

ՄԵՆ – Է՛, հա, նույն բանը չի՞, ի՞նչ տարբերություն...

ՀԱՐՔԱԾ – Լա՛վ, լա՛վ, հասկացա... Կարո՞ղ է՝ դու էլ միտքդ փոխես, թողնես, գնաս, ախպերս:

ՄԵՆ – Հոբո, մոբո գերեզմանը թողնեմ, ո՞ր գնամ:

ՀԱՐՔԱԾ – Բա ուրիշները ո՞նց են գնում, դրանք հեր ու մեր չունեն՞ն: Գնում են՝ մեզ են խայտառակում էնտեղ, դա է ցավը: Գնում են՝ իրենց էնտեղ վատ են պահում, ախպերս... Ինչ ուզում եք արեք, ձեր երկրում արեք, բա դուք չեք ամաչո՞ւմ, բա դուք գետինը չեք մտնո՞ւմ, որ գնում եք՝ էնտեղ էլ եք էդ բաներն անում: Բա դուք հա՞յ եք: Բա դուք իրավունք ունե՞ք էս ժողովրդի պատվի հետ խաղալու, մի ժողովուրդ, որ Քրիստոսից առաջ է քրիստոնեություն ընդունել: Իրավունք ունե՞ք... Դրանց պիտի բռնեն, հետ ուղարկեն, որ խելքները գլուխները գա: Գնում են՝ էն երկրի լեզուն էլ չեն սովորում, ստիպված ամերիկացիներն են իրենց հետ հայերեն խոսում: **(Երգում է):**

ՄԵՆ – Չգիտի, որ եթե ինքն ինձ սպանի, ես էլ իրեն կսպանեմ:

ՀԱՐՔԱԾ – Վա՛յ, ես քո ցավը տանեմ, ախպերս... Անունդ ի՞նչ է:

ՄԵՆ – Սենեքերիմ, բայց ինձ Սեն են ասում:

ՀԱՐՔԱԾ – Ո՞նց էի կարոտել, ախպերս...

ՄԵՆ – Ո՞ւմ, ի՞նձ:

ՀԱՐՔԱԾ – Չէ, մի կարգին մարդու: Իմ արև... Հերս ասում էր՝ Սուրո... **(Փղձկում է՝ դառնալով դեպի նույն պատը)** Ողորմի քեզ, այ հեր...

ՄԵՆ – Լավ, հանգստացիր, մեղք ես:

ՀԱՐՔԱԾ – Իմ առողջությունը վատ է, եթե ես չխմեմ՝ կմեռնեմ: Լցրու... **(Սենը լցնում է)** Աստված մի բաժակը շատ չհամարի: **(Խըփում են բաժակ-բաժակի, խմում են):**

ՄԵՆ – Վաղը, մյուս օրը եթե հանկարծ մեռնեմ, ո՞նց են թաղելու: Կոպեկ չկա տանը:

ՀԱՐՔԱԾ – Ի՛... Այ Յուլակ ջան, էդ ո՞վ գիտի, թե ինքը երբ է մեռնելու, որ դու իմանաս, ախպերս: **(Մատ թափահարելով)** Աստծու գործերին մի խառնվիր: Ի՞նչ գիտես, որ պիտի մեռնես: Կարող է իսկի չես մեռնում: Մենք չգիտենք, մեռակ ինքը գիտի:

ՄԵՆ – Չէ, ասում եմ, եթե հանկարծ...

ՀԱՐՔԱԾ – (Բռնկվելով) Էլ ի՞նչ հանկարծ... Մեռնում ես՝
մեռիր, ինձ մման ախպեր ունես, դու ինչի՞ց ես վախենում: Էնպես
առոք-փառոք թաղեմ, որ զարմանաս: **(Մատ թափահարելով)** Աստծու
գործերին մի խառնվիր: Իրավունք չունես, ախպերս, չի կարելի:

ՄԵՆ – Կթաղե՞ս:

ՀԱՐՔԱԾ – Էն էլ ո՞նց...

ՄԵՆ – Ուրեմն հանգիստ լինե՞մ:

ՀԱՐՔԱԾ – Լրիվ: Ուզո՞ւմ ես՝ հենց էսօր էլ մեռիր, տես, թաղում
եմ, թե չեմ թաղում:

ՄԵՆ – (Փաթաթվելով) Վա՛յ, ես քո ցավը տանեմ:

ՀԱՐՔԱԾ – Դու ինչի՞ց ես վախենում: Ինձ մման ախպեր ունես,
ես ո՞վ ունեմ:

ՄԵՆ – Բա ես քո ախպերը չե՞մ:

ՀԱՐՔԱԾ – Չէ, դու իմ ախպերը չես, ես եմ քո ախպերը:
(Հայացքը առաստաղից կախված ջահին) Լամպերից մեկը վառվել
է, բերեմ փոխեմ: **(Չուզասանդուղքը բերում է նախարեմի կեմարոն
«Լուսնյակ գիշեր» երգելով քարճրանում է վեր: Հանդիպակաց կող-
մից քարճրանում է Մենը՝ կանգնելով նրանից մի աստիճան ցած):**

ՄԵՆ – Դա իմ երգն է: Իմ արև... Թող ես երգեմ: **(Միանում է
նրան):**

(Լույսերը մարում են: Հեռվից շան հաչոցներ են լսվում):

ՀԱՐՔԱԾ – Վա՛յ, ես ձեր հերն եմ անիծել: Էլի՞... **(Մթության
մեջ քախվում են իրար):**

ՄԵՆ – (Ցնցվում է՝ զգուշանալով թիկունքից) Էս ո՞վ կալավ ինձ:

ՀԱՐՔԱԾ – Չիմացա:

ՄԵՆ – Էդ դու չե՞ս:

ՀԱՐՔԱԾ – Չեմ տեսնում՝ ե՞ս եմ, թե՞ ես չեմ:

ՄԵՆ – Դու ես, ես չեմ:

ՀԱՐՔԱԾ – Գլուխս ցավաց:

ՄԵՆ – Կարո՞ղ է քոնը չի ցավում, իմն է ցավում:

ՀԱՐՔԱԾ – (Չեռքը տանելով գլխին) Թաց է, ջո՞ւր են լցրել
գլխիս:

ՄԵՆ – Կարո՞ղ է ջուր չի, արյուն է:

ՀԱՐՔԱԾ – Եթե արյուն լիներ՝ կերևար... Արյունը կարմիր չի՞
լինում:

ՄԵՆ – Առաջ կարմիր էր: Կարմի՞ր է...

ՀԱՐՔԱԾ – Ի՞նչ իմանամ...

ՄԵՆ – Բա իմ գլխին ես ի՞նչ են լցրել, իմն էլ է թաց:

ՀԱՐՔԱԾ – Էդ քո գլուխը չի, իմ գլուխն է:
 ՄԵՆ – Ես էլ իմացա, թե իմ գլուխն է:
 ՀԱՐՔԱԾ – Իմ գլուխը կպավ քո գլխի՞ն, թե՞ քո գլուխը կպավ
 իմ գլխին:
 ՄԵՆ – Քոնը կպավ իմ գլխին:
 ՀԱՐՔԱԾ – Բա ինչն՞ի ինձ թվաց, թե քոնը կպավ իմ գլխին:
 ՄԵՆ – Ի՞նչ տարբերություն, իմ գլուխը քո գլուխը չի՞:
 ՀԱՐՔԱԾ – Մեզ գլուխ պետք չի, ախպերս: Մենք առանց գլխի
 էլ կապրենք, իրենց է պետք, իրենց... Էս անտեր աշխարհի գլխին
 գլուխ չկա: Չկա՛, չկա՛... Էս լույսի վարձը չե՞ն մուծել սրանք: **(Չայն
 է տալիս) Դեղձանի՛կ...**
 ՄԵՆ – Դեղձանի՛կ...
 ՀԱՐՔԱԾ – Ժոժո՛...
 ՄԵՆ – Ժոժո՛...
 ՀԱՐՔԱԾ – Գառնի՛կ... Գա՛ռ...
 ՄԵՆ – Գա՛ռ...
 ՀԱՐՔԱԾ – Գառնի՛կ... Գա՛ռ... **(Զննչալից) Սուրո՛... (Մենին)**
Թոռս է...
 ՄԵՆ – **(Նույն ձևով) Սուրո՛...**
 ՀԱՐՔԱԾ – **(Բղավելով) Տանը մարդ չկա՞: Մոմ բերեք: Էս լույսի**
վարձը չե՞ք մուծել: Դեղձանի՛կ...
 ՄԵՆ – Դեղձանի՛կ...
 ՀԱՐՔԱԾ – Էս մեր տնեցիներն ո՞րն են... Կարո՞ղ է՝ քնել են:
(Չայն է տալիս) Դեղձանի՛կ, բերեք մոմ վառեք: Էս լույսի վարձը չե՞ք
մուծել: Դեղձանի՛կ...
 ՄԵՆ – Դեղձանի՛կ... Մոմ վառեք:
 ՀԱՐՔԱԾ – Չեն լսում, քնել են:
 ՄԵՆ – Մեզ լույս պետք չի, ախպերս: Մեր հոգու լույսը մեզ
 հերիք է:
 ՀԱՐՔԱԾ – Լույսն ինչի՞ համար է: Նրա համար չի՞, որ առաջը
 դրած բաժակը տեսնես: Ես էլ բաժակս չեմ գտնի՝ շշուկ կխմեմ: Է՛,
 հետո՞, դրանից էն կողմ էլ ի՞նչ պիտի անենք, է՛, ի՞նչ: Չգույշ, չընկ-
 նես:
 ՄԵՆ – Չէ, չեմ ընկնի, բռնել եմ քեզնից: **(Փղձկում է):**
 ՀԱՐՔԱԾ – Քեզ ի՞նչ պատահեց, ախպերս:
 ՄԵՆ – Բա որ երեխաներիս տանի՞...
 ՀԱՐՔԱԾ – Կտանի, կգնամ, հետ կբերեմ: Ո՞նց կտանի, է՛, ո՞նց
 կտանի...

ՄԵՆ – (Լացով) Փող կտա, կտանի:

ՀԱՐՔԱԾ – Ես կթողնե՞մ, որ նա էստեղից երեխա տանի:

ՄԵՆ – (Ինքն իր հետ) Գնամ, բայց ո՞ր գնամ է՛, ո՞ր...

(Շան հաչոցները աստիճանաբար ավելի ու ավելի մոտիկից են լսվում):

ՀԱՐՔԱԾ – Նրանք ինչի՞ համար են հաչում:

ՄԵՆ – Շուն են, է՛, մարդ չեն, մթության հետ չեն հաշտվում:

Մենք հաշտվում ենք, նրանք չեն հաշտվում:

ՀԱՐՔԱԾ – (Դեպի դուրս) Շներ ջան, ձեր ցավը տանեմ, մենք էլ ենք շուն: Մարդ էլ կա, որ ասում ես շուն վիրավորվում է: Փոխանակ շները վիրավորվեն, իրենք են վիրավորվում:

ՄԵՆ – Էս ո՞ւմ վրա են հաչում:

ՀԱՐՔԱԾ – Լուսնի:

ՄԵՆ – Լուսնի վրա ինչի՞ են հաչում:

ՀԱՐՔԱԾ – Ասում են՝ քո լույսը քիչ է, դու գնա, քո տեղը քող արևը դուրս գա:

ՄԵՆ – (Դեպի դուրս) Ախպերներ, մեր արևն ո՞ր է: Ի՞նչ...

Պարզ ասեք, բան հասկանամ:

ՀԱՐՔԱԾ – Ի՞նչ են ասում:

ՄԵՆ – Սկիզբը հասկանում եմ, վերջը չեն հասկանում: (Շնե-րին) Ախպերներ, ասում են՝ մեր արևն ո՞ր է: Ի՞նչ... Ի՞նչ...

ՀԱՐՔԱԾ – Կարո՞ղ է չեն հասկանում, թե ինչ ենք ասում:

ՄԵՆ – Ասում են՝ չէ, հասկանում ենք:

ՀԱՐՔԱԾ – Բա որ հասկանում եք, ինչո՞ւ չեք ասում:

ՄԵՆ – Ասում են՝ ասում ենք, դուք չեք հասկանում:

ՀԱՐՔԱԾ – Էս ի՞նչ լեզվով են հաչում:

ՄԵՆ – Չե՞ս տեսնում, որ հայերեն են հաչում: Ամեն ազգի շուն էլ կա. ռուս շուն կա, անգլիացի շուն կա, ամերիկացի շուն կա, ֆրանսիացի շուն կա, ճապոնացի շուն կա, վրացի շուն կա... Ազգություն չունեցող շուն էլ կա:

ՀԱՐՔԱԾ – Չհասկացա, հիմա էս ո՞ւմ վրա են հաչում:

ՄԵՆ – Աշխարհի վրա, որ իրենց շան տեղ են դրել էդ շները:

(Հաչում է՝ ձայնակցելով շներին):

ՀԱՐՔԱԾ – Դու մի հաչա, ախպերս, մեր ախպերները հաչում են: (Հաչում է՝ միանալով նրանց):

ՄԵՆ – Դե դու էլ մի հաչա, որ ես էլ չհաչամ:

ՀԱՐՔԱԾ – Ես էս աշխարհի արդարության վրա եմ հաչում, ախպերս:

ՄԵՆ – Դե արի միասին հաչենք: (Չայնակցում են շներին):
ՀԱՐԲԱԾ – (Դեպի դուրս, աղաղակելով) Հաչե՛ք, հաչե՛ք, ես ձեր հոգուն մատաղ, մեզ էլ են ձեզ նման շան տեղ դրել էդ շները: Աշխարհը խուլ է, հիմա ոչ ձեզ լսող կա, ոչ մեզ:
(Շարունակում են ձայնակցել շներին: Հանդիսասրահը լցվում է հաչոցներով):

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նույն բնակարանը: Հարբածն արթնացել է: Մենը դեռ քնած է:

ՀԱՐԲԱԾ – (Ապշանքով նայում է չորս կողմը՝ ժամանակ առ ժամանակ զարմացած նայելով Մենին) Էս որտե՞ղ եմ:

ՄԵՆ – (Զննի մեջ) Այ հեր... Այ մեր, դու ասա... Այ հեր, ինքը չի ասում, դու ասա... Չե՞ք լսում... Ես ձեզ լսում եմ, դուք ինձ չեք լսում... (Լացով) Բա որ երեխաներիս տանի՞...

ՀԱՐԲԱԾ – (Թեքակի հայումով) Բաց-բաց քնել ես, այ մարդ, վեր կաց, չմրսես:

ՄԵՆ – Չեմ ուզում՝ չեմ գալիս, գոռո՞վ է...

ՀԱՐԲԱԾ – (Թոթվում է ուսերը) Երազի մեջ է: Կմրսես: Քեզ հետ եմ, վեր կաց:

ՄԵՆ – (Աչքերը տրորելով արթնանում է, նստում է ծալապատիկ) Բարև ձեզ:

ՀԱՐԲԱԾ – Բարև... Ներողություն, ես որտե՞ղ եմ:

ՄԵՆ – (Ակնապիշ նայելուց հետո) Ե՞ս... (Կանգնում է):

ՀԱՐԲԱԾ – Չէ, ես...

ՄԵՆ – Ես չգիտեմ, թե ես որտեղ եմ, բայց դու քո տանն ես:

ՀԱՐԲԱԾ – Ո՞նց... (Նայելով չորս կողմը) Սա իմ տունը չի:

ՄԵՆ – Բա ո՞ւմն է:

ՀԱՐԲԱԾ – Քո տունը չի՞:

ՄԵՆ – Չէ, իմը չի, քոնն է:

ՀԱՐԲԱԾ – Լավ, էլի, քո տունն է: (Նայելով պատին, տարակուսանքով) Բա որ իմ տունն է՝ հորս նկարն ո՞ւր է:

ՄԵՆ – Ի՞նչ իմանամ...

ՀԱՐՔԱԾ – (Չայն է տալիս) Դեղձանի՛կ... (Ինքն իրեն, մտա-
հոգ) Հորս նկարն ո՞վ է պատից հանել: Դեղձանի՛կ...

ՄԵՆ – Դեղձանի՛կ...

ՀԱՐՔԱԾ – Կինս չկա, բա տղաներս ո՞րն են: (Չայն է տալիս)

Աշն՛տ...

ՄԵՆ – Աշն՛տ...

ՀԱՐՔԱԾ – Գառնի՛կ... Գա՛ն...

ՄԵՆ – Գա՛ն...

ՀԱՐՔԱԾ – Գառնի՛կ...

ՄԵՆ – Գառնի՛կ... Գա՛ն...

ՀԱՐՔԱԾ – Չէ, մարդ չկա:

ՄԵՆ – Ուրեմն գնացել են:

ՀԱՐՔԱԾ – Ո՞րն են գնացել: Բոլորը միասի՞ն գնացին: Հորս
նկարը չկա: Բա բռններս ո՞րն են: (Չայն է տալիս) Ժոժո՛՛ն...

ՄԵՆ – Ժոժո՛՛ն...

ՀԱՐՔԱԾ – (Քնքշալից) Սուրո՛՛ն...

ՄԵՆ – (Նույն ձևով) Սուրո՛՛ն...

ՀԱՐՔԱԾ – Բա ասում ես քո տունն է:

ՄԵՆ – Բա ո՞ւմն է:

ՀԱՐՔԱԾ – Հորս նկարը չկա: Չէ, սա իմ տունը չի: Եթե իմ տու-
նը լիներ, հորս նկարը ինչո՞ւ պիտի հանեին պատից: Ո՞վ ռիսկ ուներ,
որ հաներ: Կարո՞ղ է՝ քո տունն է, չես հիշում:

ՄԵՆ – Չէ, իմը չի:

ՀԱՐՔԱԾ – Իմն էլ չի: Բա ո՞ւմն է:

ՄԵՆ – Ի՞նչ իմանամ...

ՀԱՐՔԱԾ – Բա որ չգիտես, ինչո՞ւ ես մտել ուրիշի տուն:

ՄԵՆ – Չեմ մտել, մտցրել են: Չմտնեի, պիտի բռներ սպաներ:

ՀԱՐՔԱԾ – Ո՞վ...

ՄԵՆ – Կնոջս եղբայրը... Ասել եմ...

ՀԱՐՔԱԾ – Ո՞ւմ ես ասել, ես քեզ առաջին անգամ եմ տեսնում:

ՄԵՆ – Բա էն ո՞ւմ էի ասում...

ՀԱՐՔԱԾ – Շատ գիտեմ՝ ում էիր ասում...

ՄԵՆ – Քեզ չասացի՞, որ իրենք Ամերիկա են գնում, ես չեմ
գնում, կնոջս եղբայրը ստիպում է, որ ես էլ գնամ:

ՀԱՐՔԱԾ – Առաջին անգամ եմ լսում:

ՄԵՆ – Բայց ես ձեզ երկրորդ անգամ եմ տեսնում:

ՀԱՐՔԱԾ – Ո՞նց ես դու ինձ երկրորդ անգամ տեսնում, որ ես
առաջին անգամ եմ քեզ տեսնում: Հիմա չե՞ս ասում՝ սա ո՞ւմ տունն է:

ՄԵՆ – Չեր... Շնորհակալ եմ, որ դուք գիշերը ինձ տեղ տվիք
ձեր հյուրընկալ հարկի տակ:

ՀԱՐՔԱԾ – Ի՞նչ հյուրընկալ հարկ, ես ասում եմ՝ սա իմ տունը
չի, դու ասում ես՝ հյուրընկալ հարկի տակ...

ՄԵՆ – Եթե ձերը չի, բա ո՞ւմն է:

ՀԱՐՔԱԾ – Ի՞նձ ես խոսեցնում... Քո տունն է, ումն է: Ես եմ
շնորհակալ:

ՄԵՆ – Իմ տունը չի:

ՀԱՐՔԱԾ – Բա ո՞ւմն է:

ՄԵՆ – Քոնն է:

ՀԱՐՔԱԾ – Էլի ասում է՝ քոնն է... Բա հորս նկարն ո՞ւր է: Ու-
րեմն ես իմ տունը չե՞մ ճանաչում, եղա՞վ: Ես գնում եմ, դու մնո՞ւմ ես:

ՄԵՆ – Ես գնալու տեղ չունեմ, ո՞ւր գնամ:

ՀԱՐՔԱԾ – Ի՞նչ գործ ունես, որ մնաս ուրիշի տանը, գան շառ
անեն: Ասա իմանամ, նոր գնամ՝ հիմա սա քո տունը չի՞:

ՄԵՆ – Չէ, ազնվությամբ... Չե՞ս հավատում:

ՀԱՐՔԱԾ – Իմ առաջ դուռը դո՞ւ չբացեցիր, որ ես ներս մտա:

ՄԵՆ – Չէ, դու բացեցիր:

ՀԱՐՔԱԾ – Ինչո՞վ բացեցի:

ՄԵՆ – Չիմացա, երևի բանալիով...

ՀԱՐՔԱԾ – Ինձ մոտ բանալի չկա, բանալիով ո՞նց կբացեի:
Ուրեմն բաց է եղել: (**Հեռախոսի զանգ**) Վերցրու, երևի քեզ են ուզում:

ՄԵՆ – Էստեղ ինձ ինչո՞ւ պիտի ուզեն:

ՀԱՐՔԱԾ – Բա ինձ ինչո՞ւ պիտի ուզեն:

(*Դուրս են պրծնում հակառակ ուղղություններով*):

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

*Բնակարան: Անցքի մեջ խաղացվող բանալու ծայն: Բաց-
վում է մուտքի դուռը: Չգուշությամբ մտնում են մի երիտասարդ
կին և մի երիտասարդ տղամարդ:*

ՏՂԱՄԱՐԴ – (**Դիտելով բնակարանը**) Կողպեցի՞ր ներսից:

ԿԻՆ – Իհարկե:

ՏՂԱՄԱՐԴ – Բանալիո՞վ:

ԿԻՆ – Բա էլ ինչո՞վ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ինչ գիտեմ, հանկարծ մեկնումեկը չգա՞...

ԿԻՆ – Ո՞վ պիտի գա: Տերը քաղաքում չի: Ամուսնուս բարե-
կամի տունն է: Բանալին տվել են մեզ, որ մեկ-մեկ գանք, ուշադրու-
թյուն դարձնենք տանը: (**Կոնյակի շիշ, բաժակներ, ուտելիք է քերում,**

դասավորում սեղանին: Ծխախոտի տուփ նկատելով) Ես սրանից կծխեմ:

ՏՂԱՄԱՐԳ – (Փողկապը հանելով) Որից կուզես... (Տեղավորվում են մի անկյունում դրված սեղանի շուրջ) Մոտ նստիր: Վերցրու բաժակը:

ԿԻՆ – Ինչո՞ւ ես շտապում:

ՏՂԱՄԱՐԳ – Չեմ շտապում, վերցրու: (Բաժակը հայելով կնոջ քթին, խմում է):

ԿԻՆ – Ի՞նչ կենացն է:

ՏՂԱՄԱՐԳ – Բա էլ ո՞ւմ...

ԿԻՆ – (Խմելուց հետո, նայելով տղամարդու դատարկված բաժակին) Ինչո՞ւ մինչև վերջ խմեցիր:

ՏՂԱՄԱՐԳ – Հա՞... Չգզացի: (Միացնում է մազնիտոֆոնը):

ԿԻՆ – Այ, էսպես վայելելով պիտի խմես:

ՏՂԱՄԱՐԳ – Շամպայն կուզե՞ս:

ԿԻՆ – Վերջում:

(Պարում են):

ՏՂԱՄԱՐԳ – (Լցնում է բաժակները) Ինչո՞ւ ես ձեռքդ դրել բաժակին, թող լցնեմ:

ԿԻՆ – Մատներիս արանքից լցրու, կարո՞ղ ես:

ՏՂԱՄԱՐԳ – (Լցնելով) Ինչո՞ւ չէ: (Համբուրվում են):

ԿԻՆ – Կենացդ:

ՏՂԱՄԱՐԳ – (Չեռքը զցում է կնոջ վզովը) Բո կենացը:

ԿԻՆ – Իմը խմեցի՞նք:

ՏՂԱՄԱՐԳ – Մի անգամ էլ եմ ուզում խմել: (Բաժակը հայում է կնոջ քթին):

ԿԻՆ – Ուզում ես՝ խմիր:

ՏՂԱՄԱՐԳ – Միասին... (Խմում են: Պատի հետևից հայտնվում է Սենի գլուխը, որ անմիջապես ետ է քաշվում) Մի բան վերցրու:

ԿԻՆ – Ուտել չեմ ուզում:

ՏՂԱՄԱՐԳ – Ֆիստաշկա վերցրու: Հայերեն՝ գետնանուշ...

ԿԻՆ – Դու կեր:

ՏՂԱՄԱՐԳ – Կոնյակի և գարեջրի մեջ սնունդ կա, օդու մեջ չկա: (Լցնում է բաժակները):

ԿԻՆ – Սպասիր, մատներս դնեմ, հետո լցրու:

ՏՂԱՄԱՐԳ – Դիր: (Լցնում է մատների արանքից):

ԿԻՆ – Լավ, բավական է, կթափվի:

ՏՂԱՄԱՐԳ – Տեսնում եմ, մի անհանգստանա: Կենացդ: Բեր քիթդ:

ԿԻՆ – Քո կենացը: Խմում ես, դե մի բան կեր:

ՏՂԱՄԱՐԳ – (Խմիչքն արդեն իրեն զգալ տալով) Մի բան...

Ի՞նչ մի բան... Ես քեզ եմ ուզում ուտել: (Համբուրվում են):

(Մենի խուլ հազի ձայնը):

ԿԻՆ – (Միանգամից ետ քաշվելով) Թող:

ՏՂԱՄԱՐԳ – Ի՞նչ եղավ:

ԿԻՆ – Չայն լսեցի:

ՏՂԱՄԱՐԳ – Չայն չկա, ի՞նչ ձայն:

ԿԻՆ – Դուռը ստուգիր:

ՏՂԱՄԱՐԳ – (Գնում է դեպի մուտքի դուռը, վերադառնալով)

Քեզ է թվացել:

(Պարում են: Կինը գլուխը դրել է Տղամարդու ուսին):

ԿԻՆ – Էսօր ինչն՞ի ուշ զանգեցիր:

ՏՂԱՄԱՐԳ – (Համբուրելուց հետո) Հեռախոսն էր անջատվել, դուրս եմ եկել, ավտոմատից եմ զանգահարել: Հոգնեցի՞ր...

ԿԻՆ – Բոլորովին:

ՏՂԱՄԱՐԳ – (Կնոջը գրեթե ձուլված) Արի: (Տանում է դեպի բազմոցը):

ԿԻՆ – Չեմ գալիս:

ՏՂԱՄԱՐԳ – Ինչն՞ի:

ԿԻՆ – Ժամացույցդ հանիր:

ՏՂԱՄԱՐԳ – (Անակնկալի եկած) Ինչի՞ համար:

ԿԻՆ – Հանիր:

ՏՂԱՄԱՐԳ – (Հանում է) Բայց չիմանա՞մ՝ ինչի համար:

ԿԻՆ – (Վերցնելով ժամացույցը, դնելով մի կողմ) Ամեն անգամ վերջում նայում ես ժամացույցին, որ շուտ գնաս:

ՏՂԱՄԱՐԳ – Էլ չեմ նայի: (Իրար կառչած՝ զգվում են բազմոցին):

(Պատի հետևից հայտնվում է Մենի գլուխը):

ԿԻՆ – Թող...

ՏՂԱՄԱՐԳ – Հանիր...

ԿԻՆ – Թող, դե թող: (Հանվում է: Մենը գլուխը ետ է քաշում):

ՏՂԱՄԱՐԳ – Շուտ արա: (Երևում է Մենի գլուխը: Փռչում է՝ ետ քաշվելով: Տղամարդն ու կինը ցնցվում են՝ արագ-արագ հագնելով):

ԿԻՆ – (Հևալով) Ո՞վ էր:

ՏՂԱՄԱՐԴ – (Իրեն կորցրած) Չիմացա:

(Խոսում են շշուկով):

ԿԻՆ – Մի գնա, ո՞ր ես գնում:

ՏՂԱՄԱՐԴ – (Ընկրկելով) Նայեմ, գամ... Հանկարծ կինս չի՞ն՞ի...

ԿԻՆ – Բա որ իմ ամուսինը լինի... Մի գնա:

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ գնում, նայեմ գամ: (Վերադառնալով, փողկապը կախվել է պիջակի տակից) Մարդ չկա:

ԿԻՆ – Ո՞նց չկա, գլուխը տեսա:

ՏՂԱՄԱՐԴ – Կարո՞ղ է աչքիդ է երևացել:

ԿԻՆ – Փռշտաց, չլսեցի՞ր:

ՏՂԱՄԱՐԴ – (Շշմած) Լսեցի:

ԿԻՆ – Կրծկալս ի՞նչ եղավ:

ՏՂԱՄԱՐԴ – (Տալով) Վերցրու: (Դռան զանգ: Քարացել են: Ձանգերը շարունակվում են):

ՄԵՆ – (Ընկնելով ներս, ահաբեկված) Չբացե՛ք, չբացե՛ք...

(Գլուխները կորցրած՝ խառնիճադանջ վազում են այս ու այն կողմ):

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Բնակարան: Մենք բազմոցին պառկած թերթ է կարդում: Ծածկված է դեմքը: Մտնում է միջահասակ մի կին՝ պահարանից սպասք է տանում:

ԿԻՆ – (Դեպի Մենը, հարևանցի) Դե վեր կաց: Վեր կաց, քանի դեռ ճաշը չի սառել: Եկա տեսա՝ բաց-բաց քնել էիր: (Գնում է):

(Մենը թերթը մի փոքր հեռացնում է դեմքից, կնոջը չափելով ոտից գլուխս, վերստին ծածկելով դեմքը):

ԿԻՆ – (Վերադառնալով) Շուտ արա: (Պահարանից ինչ-որ բան է հանում) Հետո պիտի ասես՝ չեմ ուտում, նորից տաքացրու: Վեր կաց, քանի դեռ չի սառել: Լցնում եմ: Դե վեր կաց: (Գնում է):

(Մենը դեմքից հեռացնում է թերթը՝ նայելով կնոջ ետևից):

Նորից ծածկում է դեմքը):

ԿԻՆ – (Գալով, հանդիմանաճքով) Վարդգես, քեզ հետ եմ... (Թերթը մեկից քաշում, հեռացնում է Մենի դեմքից՝ ձեռքերը վեր պարզած, սարսափահար ետ-ետ գնալով) Մա-մա՛... (Կորցնելով խոսելու ընդունակությունը) Մա, մա, մա, մա, մա, մա, մա, մա... (Մենը ցատկում է՝ բռնելով վայր ընկնող կնոջը):

ՄԵՆ – Տիկին, հանգստացեք, խնդրում եմ: Տանը մարդ չկար, հոգնած էի, պառկեցի մի փոքր հանգստանամ: Ես ներողություն եմ խնդրում, ես ստիպված եմ մտել ձեզ մոտ, ինձ հետապնդում եմ: Տիկին, հանգստացեք, խնդրում եմ: Եթե ձեզ մի բան պատահի՝ ինձ պիտի մեղադրեն: Տիկին... Այ, տեսեք, տեսեք, ես գնում եմ: Մի անհանգստացեք:

ԿԻՆ – (Տիրապետալով իրեն) Ո՞ր եք գնում, դուռն այս կողմն է:

ՄԵՆ – Գիտեմ, բայց եթե դռնից դուրս գամ՝ ինձ կբռնեն, հետապնդում եմ:

ԿԻՆ – Իսկ ի՞նչ եք արել, որ հետապնդում եմ:

ՄԵՆ – Ոչ մի բան: Մերոնք Ամերիկա են գնում, ես չեմ գնում: Կնոջս եղբայրն ասում է՝ եթե դու չգաս, երեխաներդ չեն գա, քրոջս էլ չեն թողնի, որ գա: Ընկել է իմ ետևից, որ ինձ սպանի: Ինչպե՞ս եք, հիմա արդեն լա՞վ եք: (Հուսադրելով) Լա՞վ եք, լա՞վ եք... Տիկին, շնորհակալություն, որ լավ եք:

ԿԻՆ – Բայց դուռն այս կողմն է:

ՄԵՆ – Գիտե՞մ, գիտե՞մ, ես ձեզ արդեն ասացի. եթե դռնից դուրս գամ՝ ինձ կբռնեն: Ես պատշգամբներից եմ օգտվում: Փառք Աստծո, այս շենքի ճարտարապետն այնպես է նախագծել, որ մեկից մյուսն անցնելը առանձնապես դժվար չլինի: (Ցույց է տալիս անցնելու ճևր) Աջ ոտքդ բարձրացնում, դնում ես մյուս պատշգամբում, հետո բարձրացնում ես ձախ ոտքդ՝ հո՛ւյ, արդեն մյուս պատշգամբում ես: Հո՛ւյ, հետո մյուս պատշգամբում ես:

ԿԻՆ – Տեր իմ Աստված, զգույշ եղեք, բազմահարկ շենք է, հանկարծ ձեզ մի բան չպատահի:

ՄԵՆ – Ինձ համար մի անհանգստացեք: Մինչև ինձ չսպանեն, ես չեմ մեռնի: Ցտեսություն...

(Մտնում են երկու երիտասարդ գող՝ կապրոնե գուլպաներ հագրած դեմքերից):

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – (Հանելով ատրճաճակը, փողոն ուղղելով Մենին) Չշարժվես:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂ – (Հանելով ատրճաճակը) Դու էլ...

ԿԻՆ – (Մարսափած) Մա՛... (Փոփում է հատակին, երկրորդ գողը շոր է խցկում կնոջ բերանը՝ կապելով ձեռքերն ու ոտքերը):

ՄԵՆ – (Տազնապած) Ի՞նչ եք անում... Բայց նա կին է...

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – Սո՛ւս... (Հարվածում, տապալում է գետին: Գողերը կապկալում են Մենի ձեռքերն ու ոտքերը՝ դիմադրության

հանդիպելով: Երկրորդ գողը շոր է խցկում Սենի բերանը: Սենը թափահարում է գլուխը՝ փորձելով խանգարել):

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂ – Հորս արև, սա արդեն համը հանում է:

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – (Ատրճանակի փողը սեղմելով Սենի դեմքին)

Քեզ կարգին պահիր: (Ոտքով հարվածում է) Կնոջից օրինակ վերցրու: (Երկրորդ գողին) Ապեր, մաքուր աշխատիր:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂ – (Մի պահ հանելով կնոջ բերանի շորը)

Ոսկեղենիդ տեղն ասա:

ԿԻՆ – Պահարանում...

(Երկրորդ գողը տակնուվրա է անում պահարանը):

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – Կանաչներիդ տեղն ասա... Դուլա՛ր, դուլա՛ր...

ԿԻՆ – Պահարանում:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂ – Հորս արև, չեմ գտնում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – (Կնոջը) Պահարանում... որտե՞ղ...

ԿԻՆ – Շորերի տակ...

ԱՌԱՋԻՆ ԳՈՂ – (Նորից փակելով կնոջ բերանը) Մարդ ու կին եք, քաղաքի կենտրոնում երեք տեղ բնակարաններ եք առել գնացողներից, երեխա էլ չունեք, ո՞ւմ համար... (Երկրորդ գողին)

Ապեր, մաքուր աշխատիր: (Լցնում են ճամպրուկները) Էս գործը շտապել չի սիրում: (Ընկածներին) Մարդ ու կին կգնաք, մոմ կվառեք, որ կենդանի եք մնացել: Երկիրը թալանեցիք, կերաք: Գիտեն, թե մե՜նակ իրենք են մարդ, մենք մարդ չենք: (Սենին) Չշարժվես, թե չէ ճակատիդ կշարեն: Կնոջից օրինակ վերցրու: Ապեր, մաքուր աշխատիր: Էն մազնիտոֆոնը միացրու, թող նվագի, չտխրեն: (Երկրորդ գողը միացնում է) Ցե՛...

(Ճամպրուկներն առած դուրս են գնում):

(Սենը թավալվում է, փորձելով ազատվել կապկալած վիճակից: Գլորվելով մերձենում է կնոջը: Կինը նույն կերպ հեռանում է նրանից: Կրկնվում է նույն տեսարանը: Անշարժանում են՝ փրկվելու ելք չգտնելով):

Մուտքի զանգ: Հնչում է զանգ-զանգի հետևից: Մտնում է կնոջ ամուսինը. ընկրկում է՝ տեսնելով հատակին ընկած կնոջն ու անձանոթ տղամարդուն:

ԱՍՈՒՄԻՆ – (Տազնապած) Լալա՛... (Մղվում է դեպի կինը, հանելով բերանը խցկած շորը, արձակելով կապերը) Ի՞նչ է եղել: (Կինը բացուխուսի է անում բերանը, փորձում է խոսել, չի կարողանում: Ամուսինը ջրով լի բաժակը մոտեցնում է կնոջը՝

քարձրացնելով գլուխը): Խմիր: **(Կինը կում է անում) Գո՞ղ է մտել տուն:**

(Կինը գլխով հաստատական նշան է անում):

(Ակնարկելով Մեհին) Մա ո՞վ է: **(Կինը թոթվում է ուսերը)** Դու որ չգիտես, բա ո՞վ գիտի:

ԿԻՆ – (Շնչասպառ) Իրեն հետապնդում են, մտել էր մեր տուն, որ պատսպարվի: Ինքը գող չի:

ԱՍՈՒՄԻՆ – (Մեհի քերանից հանում է շորը, արձակում է ձեռքերն ու ոտքերը) Դուք ո՞վ եք:

ՄԵՆ – (Հևալով) Ոչ մեկը, կողմնակի մարդ եմ: Ինձ հետապնդում են:

ԱՍՈՒՄԻՆ – (Հեռախոսի համար է հավաքում) Ալո՛, ոստիկանություն...

(Դռան զանգ):

(Մեհը ծլկում է):

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Բնակարան: Մտնում է Մեհը՝ թափ տալով փոշոտված շորերը: Ջգալ է տալիս անկանոն շնչառությունը: Հեռախոսի զանգ: Ցնցվում է՝ անշարժանալով հայացքը զամած հեռախոսին: Լսափողը վերցնող չկա: Ջանգերը դադարելուն պես՝ շարունակում է թափ տալ:

ՄԵՆ – (Կասկածանքով նայելով շորջը) Ներեցեք, սա ո՞ւմ բնակարանն է: Մարդ չկա՞ տանը: **(Ջգուշանալով թիկունքից, ինքն իրեն)** Չկա, մարդ չկա: **(Հեռախոսի զանգ: Վեր է թռչում: Հայացքը հեռախոսին՝ չգիտի վերցնի, թե չվերցնի լսափողը: Բարձրացնում, դնում է տեղը: Նորից է հնչում զանգը: Էլի քարձրացնում, դնում է: Ջանգերը շարունակվում են: Համարձակություն գտնելով իր մեջ՝ վերցնում է լսափողը)** Ալո... Բարև ձեզ... Վանուշը չի... Ջարիկի՞ն... Խնդրեմ... Բայց... տանը մարդ չկա: Ոչ ոք չկա: Ե՞ս... Ոչ մեկը... Կողմնակի մարդ եմ: Ես էլ չգիտեմ՝ ում տանն են, ձեզ ի՞նչ ասեմ... Ասեմ՝ սխալ եք զանգահարել՝ կարող է պարզվի, որ ճիշտ եք զանգահարել: Ասեմ՝ ճիշտ եք զանգահարել՝ կարող է պարզվի, որ սխալ եք զանգահարել: Ինչո՞ւ եք վիրավորում, տիկին... **(Ինքն իրեն)** Անջատվեց... **(Դնում է լսափողը: Ջուգարանի կարիք զգալով արագ դուրս է գալիս սենյակից):**

(Հեռախոսի զանգերը նորից հնչում են: Բացվում է մուտքի դուռը):

ՁԱՐԻԿ – (Մտնում է՝ շտապ մտտեմալով հեռախոսին, վերցնում է լսափոդը) Այո... Այո... Չանգահարել եք՝ խոսեք... Չի լսվում... Չի լսվում... Այո... (Մտնում է Վանուշը՝ պարենամթերքի պայուսակը ձեռքին): Այո... Ասում եմ՝ չի լսվում... նորից զանգահարեք... (Լսափոդը դնելուց հետո, Վանուշին) Եկա՞ր:

ՎԱՆՈՒԸ – (Դժգոհ, ինքն իրենից հոգնած) Հա՛, եկա: (Փաթեթներ է հանում, դնում մի կողմ):

ՁԱՐԻԿ – Կարագն առա՞ր:

ՎԱՆՈՒԸ – Փող մնա՞ց, որ առնեի:

ՁԱՐԻԿ – Ո՞նց թե՛ տանը մի գրամ կարագ չկա:

ՎԱՆՈՒԸ – Չզվեցի արդեն... Չկա՛ չենք ուտի:

ՁԱՐԻԿ – Դո՛ւ չես ուտի, բա երեխանե՞րդ...

ՎԱՆՈՒԸ – (Դառը հեզմանքով) Երեխաներդ... Թող ինձ ուտեն: Որ չկա՛ ի՞նչ անեն:

ՁԱՐԻԿ – Ես նրանց մասին եմ մտածում, է՛, մեր մասին չեմ մտածում: (Գնում է, անմիջապես վերադառնալով) Ջուգարանում մարդ կա՞:

ՎԱՆՈՒԸ – Դու ինձնից առաջ ես եկել, ո՞վ կար տանը:

ՁԱՐԻԿ – Բանալիով բացել եմ, մտել ներս, մարդ չկար: Ոչ որ չկար:

ՎԱՆՈՒԸ – Դե որ չկար, գուգարանում ինչո՞ւ պիտի լինի:

ՁԱՐԻԿ – (Ձարմացած) Կա:

ՎԱՆՈՒԸ – Ո՞վ է:

ՁԱՐԻԿ – Ինչ իմանամ...

ՎԱՆՈՒԸ – Դե սպասիր, թող դուրս գա:

ՁԱՐԻԿ – (Թեթևակի դողալով, ծնկները քսելով իրար) Ախր վատ եմ զգում:

ՎԱՆՈՒԸ – Երևի երեխաներից մեկնումեկն է, հիմա դուրս կգա:

ՁԱՐԻԿ – (Ծնկները շարունակ քսելով իրար) Ո՞ր է, բա ինչո՞ւ չի դուրս գալիս:

ՎԱՆՈՒԸ – Համբերիր, վա՛հ...

ՁԱՐԻԿ – Ո՞նց համբերեմ, որ չեմ համբերում:

ՎԱՆՈՒԸ – Եթե զբաղված է, չհամբերես՝ ի՞նչ պիտի անես:

ՁԱՐԻԿ – Շատ գիտե՞մ...

ՎԱՆՈՒԸ – Համբերիր, ասում եմ... Ես էլ եմ ուզում... Հիմա դուրս կգա:

ՁԱՐԻԿ – (Մրտնեղած, անհամբեր) Հիմա՛ ե՞րբ...

ՎԱՆՈՒՇ – Կարո՞ղ է՝ Վահիկն է... Էլի գիրքը ձեռքի՞ն է մտել:
Թխկացրու, թող դուրս գա, մնացածն էլ դրսում կարդա:

ՁԱՐԻԿ – (Գնում է, ձայնը դրսից) Վահիկ, դուրս արի, շուտ արա: Էդտեղ գիրք կարդալու տե՞ղ է, այ տղա: Վահիկ... (Վերադառնալով, լացակումած) Հիմա ես ի՞նչ անեմ, է՛... Դուրս չի գալիս: Արի, դու ասա...

ՎԱՆՈՒՇ – (Գնում, թակում է դուռը, ձայնը դրսից) Վահիկ, դուրս արի: Լսո՞ւմ ես, քեզ հետ եմ, այ տղա, շուտ արա: Մայրդ ուզում է մտնի: (Վերադառնում է):

ՁԱՐԻԿ – Դուրս չեկա՞վ:

ՎԱՆՈՒՇ – Ասում է՝ հիմա... Գնա մտիք:

ՁԱՐԻԿ – (Ավելի ու ավելի վատ զգալով) Թող դուրս գա, որ գնամ, վա՛յ...

ՎԱՆՈՒՇ – Գնա, ասում եմ, դուրս է գալիս:

ՁԱՐԻԿ – (Ֆիզիկական ցավ զգալով) Ո՛ւֆ... (Գնում է, դրսից լսվում է ճիչը):

ՎԱՆՈՒՇ – (Ցնցվելով) Ի՞նչ պատահեց:

ՁԱՐԻԿ – (Լեղասպասառ, ընդառաջ վազելով ամուսնուն, ընկնում է գիրկը) Ուրիշ մարդ է:

ՄԵՆ – (Մտնելով, մեղավորի կերպարանքով) Ներողություն:

ՎԱՆՈՒՇ – (Ապշանքից քարանալով) Էս ո՞վ է:

ՁԱՐԻԿ – Շատ գիտե՞մ՝ ով է...

ՎԱՆՈՒՇ – (Շաղված) Դուռը բանալիով փակ, ո՞նց եք մտել ներս:

ՄԵՆ – Պատշգամքից... Ինձ հետապնդում եմ:

ՎԱՆՈՒՇ – Հետապնդում եմ՝ ուրիշի տուն մտնեիք, ինչո՞ւ եք իմ տուն մտել:

ՄԵՆ – Պիտի մեկնումեկի տուն մտնեի՝ ձեր տուն մտա՝ առանց իմանալու, թե ում տուն եմ մտնում:

ՎԱՆՈՒՇ – (Տարակուսանքով, ինքն իրեն) Էս ի՞նչ է ասում: (Չարիկին, հարևանցի) Դու գնա...

ՁԱՐԻԿ – Էլ չեմ ուզում...

ՄԵՆ – Չանգահարեցի՞ն, ձեզ էի՞ն ուզում:

ՎԱՆՈՒՇ – Ո՞վ...

ՄԵՆ – Մի կին...

ՎԱՆՈՒՇ – Ի՞նչ կին...

ՄԵՆ – Չիմացա:

ՎԱՆՈՒՇ – (Չարիկին, շշուկով) Դու գնա...

ՁԱՐԻԿ – Չէ, ասացի... Էլ չեմ ուզում...

ՎԱՆՈՒԸ – Բայց դուք ո՞վ եք:

ՄԵՆ – Շենքի բնակիչներից եմ... Ընկել է իմ ետևից, որ ինձ սպանի:

ՎԱՆՈՒԸ – Ո՞վ...

ՄԵՆ – Կնոջս եղբայրը:

ՎԱՆՈՒԸ – Ի՞նչ եք արել, որ ուզում է սպանի:

ՄԵՆ – Ոչ մի բան: Իրենք գնում են Ամերիկա մշտական, ես չեմ գնում, ասում է՝ դու էլ պիտի գաս, եթե դու չգաս՝ երեխաներդ էլ չեն գա, քրոջս չեն թողնի, որ գա: Այսինքն՝ կնոջս՝ իր քրոջը...

ՁԱՐԻԿ – Տեր իմ Աստված, բա այդպիսի հնարավորությունը բաց կթողնե՞ն: Վանուշ, լսեցի՞ր:

ՎԱՆՈՒԸ – Որտե՞ղ եք աշխատում:

ՄԵՆ – Ոչ մի տեղ: Արխիվում եմ աշխատել, հաստիքս կրճատել են: Ուր գնում եմ՝ գործ չեն տալիս:

ՎԱՆՈՒԸ – Բա էլ մնում ես, որ ի՞նչ անես:

ՄԵՆ – Ուրիշ տեղ չեմ կարող ապրել:

ՎԱՆՈՒԸ – Իբր էստեղ կարողանո՞ւմ ենք: Գնացել էի շուկա, առածս ի՞նչ է, որ ավտոբուսի փող էլ չմնաց, ոտքով եմ եկել տուն: Ես էլ չեմ աշխատում:

ՄԵՆ – (Թոթվելով ուսերը) Ի՞նչ ասեմ...

ՁԱՐԻԿ – (Դեռևս լսածի տպավորության տակ) Այ քեզ բան...

Ոչ որ չի հավատա, գիտե՞ք... Վանուշ, լսեցի՞ր...

ՎԱՆՈՒԸ – Չեր թևի փոշին թափ տվեք:

ՄԵՆ – (Ջաշվելով կողմ, թափ տալով) Շնորհակալություն:

ՎԱՆՈՒԸ – Բա որ ընկնեիք, մեռնեի՞ք:

ՄԵՆ – Ի՞նչ տարբերություն, սպանելու էր:

ՎԱՆՈՒԸ – Փողոցին նայող պատշգամբից եք մտե՞լ:

ՄԵՆ – Այո:

ՎԱՆՈՒԸ – Դե որ եղպես է, կողքի բնակարանը մտնեիք, ինչո՞ւ մերը մտաք:

ՄԵՆ – Նրանց դուռը փակ էր:

ՎԱՆՈՒԸ – (Չարիկիմ) Լսո՞ւմ ես... Քանի՞ անգամ եմ ասել, որ տնից դուրս եք գնում, պատշգամբի վրա բացվող դուռը բանալիով փակեք: Ասա, չե՞մ ասել:

ՁԱՐԻԿ – Ե՞ս եմ բաց թողել, որ ինձ ես ասում, երեխաներն են բաց թողել:

(Դռան զանգ):

ՄԵՆ – (Թափահարվում է կանգնած տեղում) Չբացեք, խընդ-
րում եմ:

ՎԱՆՈՒԸ – Հեռու գնա... Ո՞նց թե՛ չբացեք:

ՄԵՆ – (Տազնապով) Ի՛նքն է, ի՛նքն է...

ՋԱՐԻԿ – Ինքն ո՞վ է, ի՞նչ է նշանակում՝ չբացեք: Իմ տան
դուռն էլ դո՞ւք պիտի ասեք՝ բացեմ, թե չբացեմ: (Վաճառվում)

ՄԵՆ – (Ուռուձեռ ընկած) Չբացեք, էլի, չբացեք, խնդրում եմ:

ՎԱՆՈՒԸ – Ի՞նչ եք խնդրում, ինչի՞ համար եք խնդրում: Իսկ
որտեղի՞ց իմացաք ով է, որ ասում եք չբացեք: Եթե ձեր տան զանգը
տան, դուք մի բացեք: Այս տան տերը առայժմ ես եմ: Չանգ տվողի
առաջ դուռս ո՞նց չբացեմ: (Շրջվելով, Չարիկին) Գնա, բաց արա
դուռը:

(Մենք ետ-ետ գնալով իրեն դուրս է գցում):

(Չարիկը վերադառնում է):

ՎԱՆՈՒԸ – Ո՞վ էր:

ՋԱՐԻԿ – Մուրացկան:

ՎԱՆՈՒԸ – Ի՞նչ էր ուզում:

ՋԱՐԻԿ – Փող...

ՎԱՆՈՒԸ – Դու իրենից ուզեիր: (Անակնկալի եկած, մայելով
շուրջը) Սա ի՞նչ եղավ: Ո՞ր է, որտե՞ղ մտավ:

ՋԱՐԻԿ – Ո՞ր է...

ՎԱՆՈՒԸ – Ո՞ր է...

*(Բնակարանով մեկ որոնում են Մենին աչք ածելով չորս
բուլբուլ):*

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

*Ննջասենյակ: Փոքրիկ միջանցքով բաժանված է խոհա-
նոցը: Ննջասենյակը լուսավորված է գիշերային աղոտ լույ-
սով: Խոհանոցը մթության մեջ է: Ննջասենյակում մարդ ու կին
քնած են կողք-կողքի:*

*Քիչ անց ամուսինը երկարում է ձեռքը՝ վառելով պատին
ամրացված ջահը:*

ԿԻՆ – (Բացում է աչքերը) Ինչո՞ւ վառեցիր, հազիվ էի աչքս
փակել:

ԱՍՈՒՄԻՆ – (Նստում է անկողնում) Տանը մուկ կա՞:

ԿԻՆ – (Զնաթաթախ) Չէ, ի՞նչ մուկ:

ԱՍՈՒՄԻՆ – (Պառկում է) Չայն լսեցի:

ԿԻՆ – Հանգցրու:

ԱՄՈՒՄԻՆ – Բա ինչո՞ւ ինձ թվաց:

ԿԻՆ – Լույսն աչքերիս է ընկնում, հանգցրու:

ԱՄՈՒՄԻՆ – (Ականջը ձայնի, սպասողական) Սուս, մի
 րոպե...

ԿԻՆ – (Դժգոհելով) Վա՛յ, հանգցրու, ոչ մի ձայն էլ չկա:

ԱՄՈՒՄԻՆ – Բա որ չկա, ես ինչո՞ւ եմ լսում:

ԿԻՆ – Եթե լիներ, ես էլ կլսեի:

ԱՄՈՒՄԻՆ – (Լույսը մարելուց հետո) Թերթում գրել էին, որ
 Միքիլիում մի փոսից սատանա է դուրս եկել:

ԿԻՆ – Իսկակա՞ն...

ԱՄՈՒՄԻՆ – Սատանայի իսկականը ո՞րն է, որ դու էլ հարց-
 նում ես:

ԿԻՆ – Եթե իսկական չլիներ, թերթում ինչո՞ւ պիտի գրեին:

ԱՄՈՒՄԻՆ – Մարդ եղած կլինի, սատանաս ո՞րն է...

ԿԻՆ – Չէ՛, չէ՛, ասում են՝ սատանա է եղել: Ես էլ եմ լսել: Բըռ-
 նե՞լ են:

ԱՄՈՒՄԻՆ – Բռնել են, երևի էլի բաց են թողել, ի՞նչ իմանամ:

ԿԻՆ – Եթե մարդ լիներ, բաց չէին թողնի: Էլ ինչո՞ւ են իզուր
 տեղը Միքիլի տանում, որ բաց թողնեն: Կամ էլ մարդ է եղել, սատանա
 է դառել, բաց են թողել:

ԱՄՈՒՄԻՆ – Մինչև սատանա չդարձնեն, բաց չեն թողնի,
 երբեք:

ԿԻՆ – Ասում են՝ մարդ է եղել, հետո է սատանա դառել:

ԱՄՈՒՄԻՆ – Որ չդառնար էլ՝ կդարձնեին: Դե որ տեսել է չեն
 թողնում մարդ մնա, նա էլ ստիպված սատանա է դառել, բա ի՞նչ
 աներ: Իբր մենք ի՞նչ ենք, որ սատանա չենք: Եթե սատանա
 չլինեինք, մարդ լինեինք՝ էս ամեն ինչին ո՞նց կդիմանայինք:

ԿԻՆ – Զուհու լրիվ փախցրիք: (Կարճատև դադարից հետո)

Ասում են՝ մարդ է իջել շենքի վրա:

ԱՄՈՒՄԻՆ – Ո՞ր շենքի:

ԿԻՆ – Մեր:

ԱՄՈՒՄԻՆ – Ի՞նչ մարդ:

ԿԻՆ – Այլմտլորակային: Ասում են՝ հիմա Հայաստանի վրա են
 իջնում, որ իրենց հետ հայ տանեն:

ԱՄՈՒՄԻՆ – Հայ տանեն, որ ի՞նչ անեն:

ԿԻՆ – Ասում են՝ տանում են, որ իրենց մոտ ուսումնասիրեն,
 տեսնեն էդ ոնց ենք դիմանում էս ամեն ինչին:

ԱՄՈՒՄԻՆ – Ո՞վ է ասում:
 ԿԻՆ – Հարևաններն էին ասում: Մտել է Հռիփսիկենց տուն:
 ԱՄՈՒՄԻՆ – Է՛հ, հեքիաթներ մի պատմիր: Ուրիշի տուն ինչո՞ւ պիտի մտներ:
 ԿԻՆ – Վա՛յ, դե մտել է, էլի՛:
 ԱՄՈՒՄԻՆ – Նրանք ասացին, դու էլ հավատացի՞ր: Որտեղի՞ց է մտել:
 ԿԻՆ – Երևի դռնից, էլ որտեղի՞ց պիտի մտներ:
 ԱՄՈՒՄԻՆ – Դռնից ո՞նց կմտներ, ներսից բանալիով չե՞ն փակել:
 ԿԻՆ – Եսիմ... Ասում են՝ նրանց առաջ փակ դռները բացվում են:
 ԱՄՈՒՄԻՆ – Ո՞վ է ասում:
 ԿԻՆ – Հարևանները:
 ԱՄՈՒՄԻՆ – Իրենց աչքով տեսե՞լ են, որ ասում են:
 ԿԻՆ – Եսիմ... Երևի տեսնող է եղել: Ասում են՝ գալիս են, իրենց հետ մարդ են տանում:
 ԱՄՈՒՄԻՆ – Թող գան, ինձ տանեն:
 ԿԻՆ – Ո՞ր տանեն:
 ԱՄՈՒՄԻՆ – Ուր ուզում են տանեն, մենակ թե տանեն:
 ԿԻՆ – Ինձ թողնեն, քեզ տանե՞ն:
 ԱՄՈՒՄԻՆ – Հա, ինձ տանեն:
 ԿԻՆ – Ինձնից ես փախչո՞ւմ:
 ԱՄՈՒՄԻՆ – Չէ, ինձնից: Մենակ թե տանեն, էս ամեն ինչից պրծնեն: Լույսի վարձից պրծնեն, տան վարձից պրծնեն, պրծնե՛մ, պրծնե՛մ, պրծնե՛մ...
 ԿԻՆ – Ասում են՝ տանում են, բայց մի քսան-երեսուն տարի հետո էլի հետ են բերում: Բայց դու էլ դու չես լինում, ուրիշ մարդ ես լինում: Այսինքն՝ նույն մարդն ես լինում, բայց լրիվ նույն մարդը չես լինում, ասում են՝ ուրիշ մարդ ես լինում:
 ԱՄՈՒՄԻՆ – Ավելի լավ: Ինչքա՞ն կարելի է նույն մարդը լինել, բավական չեղա՞վ: Հոգնեցի, զգվեցի, հիմա էլ թող ուրիշ մարդ լինեմ, ես էլ չեմ ուզում ես լինեմ:
 ԿԻՆ – Իբր ես ուզո՞ւմ եմ, ես էլ չեմ ուզում: Տան հոգսը դու չես քաշում, ես եմ տանում էս բեռը: Գիտես, թե ես չե՞մ հոգնել: Հենց քո՞ չափ եմ հոգնել: (Փղձկում է) Կին լինեիր, նոր կզգայիր:
 ԱՄՈՒՄԻՆ – Մուս... Մի բռպե սպասիր, չխոսես:
 ԿԻՆ – Չեմ խոսի, ականջդ էլի ձայն ընկա՞վ:

ԱՍՈՒՄԻՆ – Համբերիր:

ԿԻՆ – Ո՛ւֆ, դու էլ... Նյարդերդ լրիվ քայքայվել են: **(Գիշերանցով վեր է կենում, գնում, վառում է խոհանոցի լույսը, փորձում է մտնել ներս՝ վարանում է՝ տեսնելով պատառաքաղը ձեռքին նստած Սենիմ, որ դադարեցնում է ուտելը) Վարո՛ւ...**

(Մենք զգուշությամբ ցած է դնում պատառաքաղը):

ԱՍՈՒՄԻՆ – **(Ննջասենյակից)** Ասա:

ԿԻՆ – **(Քարացած խոհանոցի շեմին)** Աչքիս մարդ է երևում:

ԱՍՈՒՄԻՆ – Մուկ չե՞ր:

ԿԻՆ – Չէ, մարդ է:

ԱՍՈՒՄԻՆ – **(Վեր կենալով անկողնուց)** Երա՞զ ես տեսել, մարդն ի՞նչ գործ ունի խոհանոցում: **(Գնում է կնոջ ետևից, տեսնելով Սենիմ ընկրկում է):**

ԿԻՆ – Մարդ չի՞:

ԱՍՈՒՄԻՆ – Մարդ է, բա ինչ է...

ԿԻՆ – **(Կառչելով ամուսնուն)** Չմոտենաս:

ԱՍՈՒՄԻՆ – Քաղաքացի, ի՞նչ եք անում այստեղ:

ՍԵՆ – **(Հնազանդ)** Ներողություն: Երկու օր է՝ մի կտոր բան չէի դրել բերանս: Ինձ հետապնդում են:

ԿԻՆ – **(Ավելի ու ավելի փարվելով ամուսնուն)** Չմոտենաս:

ԱՍՈՒՄԻՆ – Դուռը փակ է, դուք ո՞նց եք ներս մտել:

ՍԵՆ – Պատշգամբից:

ԱՍՈՒՄԻՆ – Ո՞ր...

ՍԵՆ – Փողոցի կողմի...

ԿԻՆ – Չմոտենաս:

ԱՍՈՒՄԻՆ – Սպասիր, իմանանք ով է, հետո... Դուք ո՞վ եք:

ՍԵՆ – Ոչ մեկը, կողմնակի մարդ եմ: Մտեք իմ դրությամբ մեջ, խնդրում եմ:

ԿԻՆ – **(Դողալով)** Նա՛ է, նա՛ է... Չմոտենաս, կտանի...

ՍԵՆ – Ո՞ւմ պիտի տանեմ, ինչո՞ւ պիտի տանեմ: Ներողություն, ես ստիպված եմ մտել ձեզ մոտ:

ԿԻՆ – Չմոտենաս:

ԱՍՈՒՄԻՆ – Եկել եք, որ ձեզ հետ մարդ տանե՞ք վերև:

ՍԵՆ – Ի՞նչ մարդ... Ես չեմ հասկանում, թե դուք ինչ եք ասում:

ԱՍՈՒՄԻՆ – Բա էդ ո՞նց եք հայերեն խոսում, որ չեք հասկանում, թե ինչ եմ ասում:

ՍԵՆ – Ազնիվ խոսք, չեմ հասկանում:

ԿԻՆ – **(Ամուսնուն)** Տեսնո՞ւմ ես, ասում է՝ չեմ հասկանում:

ԱՍՈՒՄԻՆ – Թող, դու մի խառնվիր, բա ո՞նց է խոսում, որ չի հասկանում:

ՄԵՆ – Ինչով ուզում եք երդվեմ, չեմ հասկանում:

ԱՍՈՒՄԻՆ – Չե՞ք հասկանո՞ւմ, թե ինչ եմ ասում:

ՄԵՆ – Չէ, չեմ հասկանում:

ԱՍՈՒՄԻՆ – Բա որ չեք հասկանում, ո՞նց եք հասկանում, որ չեք հասկանում: Ախր հայերեն եք խոսում:

ՄԵՆ – Խոսում եմ, բայց չեմ հասկանում, թե ինչ եք ասում:

ԿԻՆ – Կարո՞ղ է ինքը չգիտի, որ հայերեն է խոսում:

ՄԵՆ – Եղա՞վ...

ԱՍՈՒՄԻՆ – Բա որ հայերեն գիտեք, ինչո՞ւ չեք հասկանում, թե ինչ եմ ասում:

ՄԵՆ – Չեմ հասկանում:

ԱՍՈՒՄԻՆ – Ես էլ քեզ չեմ հասկանում, գիշերվա կեսին ի՞նչ գործ ունես իմ տանը, դա ասա:

ՄԵՆ – Գնա՞մ:

ԱՍՈՒՄԻՆ – Ո՞ր գնաք:

ՄԵՆ – Չգիտեմ:

ԿԻՆ – (Ամուսնուն) Հեռու կանգնիր, դուռը բացեմ, թող գնա:

(Գնում բացում է մուտքի դուռը):

ԱՍՈՒՄԻՆ – Բա չիմանա՞նք ով է:

ԿԻՆ – Մենք իրեն հասկանում ենք, ինքը մեզ չի հասկանում, պարզ չի՞ ով է: (Սենիմ) Անցեք: (Ամուսնուն կառչած) Հեռու կանգնիր, թող գնա: Հեռո՞ւ, հեռո՞ւ...

ԱՍՈՒՄԻՆ – Զաղաքացի, դուռն այս կողմն է:

(Մենը գնում է հակառակ ուղղությամբ):

ԿԻՆ – (Խուճապահար) Ո՞ր գնաց, ո՞ր կողմը գնաց, հիմա երեխաներին լեղաճաք կանի քնած տեղը:

ԱՍՈՒՄԻՆ – Թող, թևս թող, ինձ ինչո՞ւ ես բռնել:

ԿԻՆ – Չգնա՞ս, չգնաս ետևից, կտանի: (Նայում է Սենի գնացած ուղղությամբ):

ԱՍՈՒՄԻՆ – Այ կի՛ն, կարո՞ղ է՝ երազում ենք:

ԿԻՆ – Չէ՛, չէ՛, մարդ էր, պատշգամբից դուրս եկավ, գնաց:

(Կանգնել-մնացել են անշարժացած):

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Շենքի բակը: Գեանին ընկած է Սենը. շուրջը՝ շենքի ծանոթ բնակիչները:

Յուրաքանչյուրի խոսքի վրա մյուսները կտրուկ շրջում են գլուխները՝ նայելով խոսողի կողմը:

ՎԱՆՈՒՇ – Ի՞նչ է եղել:

ՀԱԿՈՔ – Ոչ մի բան, մարդ է ընկել:

ՋԱՐԻԿ – Խմա՞ծ է:

ԿԱՐԻՆԵ – Ի՞նչ իմանամ...

ՄԻՋԱՀԱՍԱԿ ԿԻՆ – «Շտապ օգնությունը» չի՞ եկել: Կարո՞ղ է երկրորդ հարկից է ընկել:

ՆՐԱ ԱՍՈՒՄԻՆԸ – Բախտը բերել է, որ իններորդ հարկից չի ընկել:

ԳԻՇԵՐԱՆՈՑՈՎ ԿԻՆ – (**Չեոքը պարզելով դեպի Սենը, անակրկալի եկած, ճչալով**) Նա՛ է... Վերևից է իջել... Ուրիշ մոլորակներից զալիս են, իրենց հետ մարդ են տանում:

ՆՐԱ ԱՍՈՒՄԻՆԸ – Թող ինձ տանեն:

ԳԻՇԵՐԱՆՈՑՈՎ ԿԻՆ – Ինձ թողնեն, քեզ տանե՞ն:

ՋԱՐԻԿ – Թող զան տանեն, թող տանեն, զոնե մեր երեխաները փրկվեն:

ՍՈՒԿՈՒՉ – (**Փնջացնելով**) Տեղն է, տեղն է, ում ինչ որ լինում է, իր խելքից է լինում:

ԿԱՐԻՆԵ – Գո՞ղ է:

ՍՈՒԿՈՒՉ – Չէ, զող չի, բայց մարդ էլ չի:

ԱՐՈՒՄ – (**Գալով լացակումած**) Սե՛ն, Սենեքերի՛մ, Սե՛ն... Սենի՛կ...

ՏԱՐԵՑ ԿԻՆ – (**Խունացած հովանոցից անբաժան**) Սենե՞լ է:

ՍԵՆ – (**Բարձրանալով ընկած տեղից**) Որ մեռնեմ էլ, չեմ գնա: (**Իջնում է դահլիճ՝ կանգնելով հանդիսատեսին դեմ-հանդիման**) Ծանրը գործ է հայ լինելը բանից պարզվեց... Արդեն որերո՞րդ անգամ... Կարո՞ղ է՝ լրացել է մեր ապրելու հերթական ժամանակը, հը՞... Էլի պիտի կռվե՞նք մեր բաժին արևի տակ ապրելու իրավունքի համար... Էլի՞... Տեր, մի՛ թող մեզ անտեր... (**Դուրս է գնում**):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք
3

Տաքսի, տաքսի	7
Ընդունելությունը՝ երկուսից մինչև վեցը	
53	
Կարուսել	
99	
Սրբապատկեր	
139	
Շաբաթն ուրբաթից շուտ եկավ	
173	
Լույս քսանյոթի գիշերը	
207	
Բեմի պարծանք, փա՛ռք, փա՛ռք	
247	
Մեր տան տերերը կամ ես չեմ ուզում դառնալ միլիոնատեր	
285	
Լույս քեզ տեսնողին	
339	
Տե՛ր, մի՛ թող մեզ անտեր	
381	

ԱՆԱՆՅԱՆ ԺԻՐԱՅԻ ՀՐԱՅՐԻ

ՊԻԵՄՆԵՐ

ԸՆՏՐԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ **Մ. Գ. Յավրյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բղոյան**
Կազմի ձևավորումը՝ **Կ. Հ. Ավագյանի**

Ստորագրված է տպագրության՝ 09.06.2008 թ.:

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:

Հրատ. 24.5 մամուլ, տպագր. 27.0 մամուլ = 25.1 պայմ. մամուլի:

Պատվեր՝ 37:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52

2-37

3-37

4-37

5-37

6-37

7-37

8-37

9-37

9-37

10-37

11-37

12-37

13-37

14-37

15-37

16-37

17-37

18-37

19-37

20-37

21-37

22-37

23-37

24-37

25-37

26-37

27-37

